ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային

Դր. Յոհաննես Լեփսիուս

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային

Թարգմանեցին՝ Աշոտ Հայրունին և Մարիամ Մարտիրոսյանը

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Լ 396

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի
գիտական խորհուրդը:

Գերմաներենից թարգմանեցին՝ Աշոտ Հայրունին և Մարիամ Մարտիրոսյանը:

Լեփսիուս Յոհաննես
Լ 396 Հայաստանը և Եվրոպան: Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային / Դր. Յոհաննես Լեփսիուս.- Եր.: ԵՊՀ հրատ., 2022.- 374 էջ:

Յոհ. Լեփսիուսի սույն աշխատությունը 1890-ական թթ. համիդյան կոտորածների վերաբերյալ ամենաընդգրկուն և ամբողջական ուսումնասիրությունն է: Այն նախատեսված է ցեղասպանագետների, պատմաբանների, մտավորականության, ուսանողության և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(47925)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2536-1

© ԵՊՀ հրատ., 2022
© Թարգմ. համար, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Դր. Յոհաննես Լեփսիուսի սույն աշխատությունը, որն առաջին անգամ է հայերեն թարգմանությամբ ներկայացվում ընթերցողին, 1890-ական թթ. հայերի զանգվածային կոտորածների վերաբերյալ ամենաընդգրկուն և ամբողջական ուսումնասիրությունն է: Նախ համառոտ անդրադառնանք նրա ստեղծման պատմությանը:

Յոհ. Լեփսիուսը, որը Գերմանիայի Ֆրիզդորֆ գյուղի ծխական քահանան էր, մի շարք բարեկամների և ընկերների հետ միասին 1895 թ. սեպտեմբերի 29-ին հիմնադրեց «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպությունը՝ Արևելքի մահմեդական շրջաններում քրիստոնեական քարոզչության իրականացման նպատակով: Ուշագրավ զուգադիպությամբ մեկ օր անց՝ սեպտեմբերի 30-ին, Կ. Պոլսում տեղի ունեցավ հայերի հայտնի կոտորածը, որին հաջորդեցին նոր պարբերական կոտորածներ երկրի գրեթե բոլոր հայաշատ բնակավայրերում:

Կոտորածների վերաբերյալ լուրերը թափանցեցին տարբեր երկրներ՝ հասնելով նաև Ֆրիզդորֆ: Գերմանական արևելյան առաքելության սկզբնական ծրագիրն այդ իրադարձությունների թելադրանքով մղվեց հետին պլան, և կազմակերպությունն իր առաջնահերթ խնդիրը դարձրեց վտանգված հայ ժողովրդին օգնության ցուցաբերումը: «Կարելի էր ճակատագրի ցուցումը համարել,– նշում էր Յ. Լեփսիուսը,– որ «Գերմանական արևելյան առաքելություն» կազմակերպության հիմնադրման հաջորդ օրը՝ սեպտեմբերի 30-ին, մեզ համար միանգամայն անակնկալ Կ. Պոլսում սկսվեց հայերի առաջին կոտորածը, որին հաջորդեցին նոր ջարդեր: Դրանց հրահրողն անձամբ Աբդուլ Համիդ II-ն էր: 1895 և 1896 թվականներին նրա նստավայրից էին դուրս գալիս քրիստոնյաների կոտորածները սկսելու հրամանները, որոնք աննկարագրելի ցասում առաջ բերեցին ողջ Եվրոպայի ու Ամերիկայի քրիստոնյաների մեջ: Գերմանական արևելյան առաքելության ծրա-

գիրը, որ սկզբնապես վերաբերում էր մահմեդականների շրջանում քարոզչության կազմակերպմանը, փաստերի տրամաբանությամբ կանգնեց մի այլ առաջադրանքի առջև՝ օգնության կազմակերպում հարյուր-հազարավոր մորթված հայերի այրիներին և որբերին»[1]:

Իրադրությունը նորաստեղծ ընկերությունից պահանջում էր ժամ առաջ ձեռնամուխ լինել օգնության կազմակերպմանը, մինչդեռ Գերմանիայում և Եվրոպայում դրա համար դեռ բավարար նախադրյալներ չկային: Տերությունները բավականաչափ իրազեկ էին հայերի հանդեպ իրագործվող նախճիրին: Դրա պերճախոս վկայությունն էր 1896 թ. փետրվարին Բարձր դռանը ներկայացված՝ «Վեց մեծ տերությունների կոլեկտիվ նոտան», որտեղ կար ծավալուն վիճակագրություն կոտորածների վերաբերյալ: Չնայած այդ վիճակագրությունն ամբողջապես չէր արտացոլում իրականությունը, բայց և այնպես լիովին բավական էր զանգվածային սպանդի պատկերը պարզ դարձնելու համար: Ըստ այդմ՝ կոտորածներին զոհ էին դարձել 88 243 հայեր, ավերվել ու թալանվել էին 2493 գյուղեր և 568 եկեղեցիներ, բռնի մահմեդականացվել 646 գյուղեր, իսկ 328 եկեղեցիներ վերածվել էին մզկիթների: Արձանագրված էր նաև 12 բարձրաստիճան հայ հոգևորականների և 179 քահանաների ու քարոզիչների սպանությունը, իսկ անօթևանների և հրատապ օգնության կարիք ունեցողների թիվը, համաձայն վիճակագրության, հասնում էր 546 000-ի[2]:

Տերությունները, սակայն, ոչ միայն ազդու միջամտություն կատարելու մտադրություն չունեին, այլև ձգտում էին մինչև իսկ այդ նոտան գաղտնի պահել իրենց հասարակություններից: Դա նպաստավոր պայմաններ էր ստեղծում թուրքական քարոզչամիջոցների համար, որոնք իրենց հերթին փորձում էին խոչընդոտել իրադարձությունների հրապարակայնացումը և ապակողմնորոշել

---

[1] J. Lepsius, 30 Jahre Deutscher Orient-Mission, „Der Orient“, 1925, S. 111.

[2] Այդ նոտան և վիճակագրական տեղեկագիրը Յոհ. Լեփսիուսը հայտնաբերեց և հրատարակեց իր սույն աշխատությունում:

միջազգային հանրությանը՝ կատարվածը ներկայացնելով որպես հայ հեղափոխականների «ծրագրված ապստամբության» կանխման միջոցառում: «Այն, ինչ Կ. Պոլսի դեսպանությունում և Բեռլինի ԱԳՆ-ում գիտեին,– այդ կապակցությամբ գրում էր Լեփսիուսը,– գերմանական հասարակությունը դեռ երկար ժամանակ չգիտեր: Անգլիայում և Ֆրանսիայում ևս երբևէ լիարժեք հասարակական կարծիք չստեղծվեց: Ոչ մի տեղ դիվանագետներին ճշմարտությունը հաճելի չէր: Թուրքիայի մամլո գործակալությունները տենդագին աշխատում էին ճշմարտությունը կոծկել, և «հայկական հեղափոխության» հեքիաթն ըստ հնարավորին շահարկվում էր»[3]:

1896 թ. սկզբին, սակայն, ճշմարտությունը սկսեց տեղ-տեղ երևան գալ: Շվեյցարական և անգլիական լրագրերում ի հայտ եկան հրապարակումներ, որտեղ տեղեկություններ էին հաղորդվում կոտորածների մասին: Գերմանիայում նույնպես առանձին կիրակնօրյա եկեղեցական պարբերականներ սկսեցին տեղեկություններ արտատպել անգլիական մամուլից: Ինչ վերաբերում էր գերմանական պաշտոնական մամուլին ու զանգվածային լրատվությանը, ապա նրանք զբաղված էին թուրքական լրատվության արտատպմամբ, իսկ անգլիական աղբյուրների տեղեկությունները բնութագրում էին որպես «անգլիական կեղծիք»՝ պնդելով, որ չի կարելի աջակցել բարեկամ կառավարության «ներքին թշնամիներին», և որ հայերին օգնելը կնշանակեր սատարել անգլիական քաղաքականության «մեքենայություններին»:

Ակնհայտ էր, որ այդ պայմաններում ցանկացած հայանպաստ շարժում թշնամաբար կընդունվեր գերմանական զանգվածային լրատվամիջոցների կողմից և չվայելելով հասարակության աջակցությունը՝ կձախողվեր, իսկ կառավարությունն էլ իր թուրքամետ քաղաքականության հիման վրա ոչ միայն իրավունք, այլև պարտականություն կհամարեր այն ճնշելը: Այդ խոչընդ-

[3] Lepsius, 30 Jahre, S. 130.

դոտները հաղթահարելու, թուրքական ապատեղեկատվությունը չեզոքացնելու, հայանպաստ մեծամասշտաբ շարժում առաջ բերելու և հասարակության աջակցությունն այդ հարցում ապահովելու համար անհրաժեշտ էր նախնառաջ կատարել եղերական իրադարձությունների փաստացի և համոզիչ լուսաբանում, որի հանդեպ թերահավատություն չէր կարող դրսևորվել:

Լեփսիուսը որոշեց անձամբ ստանձնել այդ գործը և այդ նպատակով կատարել մի հետազոտական ճանապարհորդություն: Նա 1896 թ. մայիսին հայազգի Ջեյմս Գրինֆիլդի հետ, որը տիրապետում էր գերմաներենին և մի շարք արևելյան լեզուների, մեկնեց Կ. Պոլիս: Քանի որ Լեփսիուսը Ֆրիզդորֆում մի գորգագործական ֆաբրիկա ուներ, ճանապարհորդության համար պատրվակ էին ծառայում գորգի արդյունագործության խնդիրները: Օսմանյան պետությունում գորգարդյունաբերության կենտրոնները հիմնականում նույնանում էին այն շրջանների հետ, որտեղ կատարվել էին ամենաեղերական իրադարձությունները, և գորգարդյունաբերության ղեկավարի համար ավելի դյուրին էր մուտք գործել այնտեղ, քան քահանայի, որի ճանապարհին կարող էին արգելքներ հարուցվել: Բոլոր դեպքերում նրանք չկարողացան խուսափել խոչընդոտներից՝ ուղևորության ընթացքում մշտապես զգալով թուրքական ոստիկանության և լրտեսների հսկողությունը:

Կ. Պոլսից նրանք մեկնեցին Անկարա, որտեղից նպատակ ունեին հասնելու Ջեյթուն: Այնտեղ գնալ, սակայն, չկարողացան, քանի որ իշխանությունները նրանց արգելեցին ճանապարհը շարունակել դեպի արևելք: Կեսարիայում նրանք հարկադրված փոխեցին իրենց ուղղությունը, ուղևորվեցին հարավ, Կիլիկիայի դարպասներով իջնելով կիլիկյան դաշտավայր՝ այցելեցին Ադանա ու Տարսոն, որից հետո վերադարձան Կ. Պոլիս: Ուղևորության ընթացքում Լեփսիուսը և Գրինֆլիդը կատարեցին արժեքավոր հետազոտական աշխատանք՝ այն ամբողջացնելով բազմաթիվ

ականատեսների վկայություններով: Նրանք հնարավորություն ունեցան նաև ծանոթանալու ամերիկացի քարոզիչների մոտ գտնվող մեծաքանակ փաստաթղթերի, որոնցում հանգամանալից նկարագրված էին մի շարք վայրերում տեղի ունեցած եղերական իրադարձությունները: «Մենք կարողանում էինք ամենուրեք քրիստոնյաներից և մուսուլմաններից տեղեկություններ քաղել կոտորածների սոսկալի մանրամասների մասին,– գրում էր հետագայում Լեփսիուսն՝ ի մի բերելով իր տպավորությունները,– և շարունակ հաստատված տեսանք այն փաստը, որ ոչ մի տեղ հայերի կողմից ապստամբություն կամ սադրանք տեղի չի ունեցել, այլ ջարդերի ողջ պատասխանատվությունը ծանրանում է բացառապես թուրքական իշխանությունների աղմինիստրատիվ միջոցառումների վրա»[4]:

Վեցշաբաթյա ճանապարհորդությունից վերադառնալուց հետո Լեփսիուսը, խորհրդակցելով ընկերների հետ, վճռեց իր տեղեկություններն անմիջապես չհարապարակել, այլ ուղարկել միայն մերձավորագույն շրջաններին՝ պահպանելով գաղտնիությունը, ինչն անշուշտ խորապես կշռադատված էր: «Նախքան նոր շրջանների մերձենալը կամ օրաթերթերի հետ կապ հաստատելը,– նշում էր այդ առնչությամբ նրա հավատարիմ աշխատակից Ռիխարդ Շեֆերը,– անհրաժեշտ էր բացառել թուրքամետ շրջանների հակագործողությունների հնարավորությունը և իրազեկել ու գրավել մի շարք հեղինակավոր անձանց, որոնք օգնության գործին նեցուկ կդառնային և կկարողանային հասարակության առջև ներկայացուցչական դեր խաղալ»[5]:

Օգնության աշխատանքներն արդյունավետ վարելու համար նախ հարկավոր էր դրանք դնել կազմակերպական հիմքերի վրա: Ուստի Լեփսիուսը ճանապարհորդությունից վերադառնալուց հետո պաստոր Էռնստ Լոհմանի հետ միասին ձեռնամուխ եղավ

---

[4] R. Schäfer, Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam 1932, S. 5.
[5] Նույն տեղում, էջ 8-9:

Հայաստանի օգնության գերմանական միության հիմնադրմանը, որի հիմնադիր նիստը տեղի ունեցավ 1896 թ. հուլիսի 2-ին, և որն այնուհետև պետք է ստանձներ օգնության աշխատանքների կազմակերպումը, համակարգումն ու իրականացումը:

Վերոնշյալ նիստում, մինչև հետագա քայլերի ձեռնարկումը, վճռվեց հրատարակել Լեփսիուսի տեղեկությունները և սպասել արձագանքներին: 1896 թ. օգոստոսին Բեռլինի «Der Reichsbote» օրաթերթում լույս տեսավ Լեփսիուսի կողմից հեղինակված մի հոդվածաշար («Ճշմարտությունը Հայաստանի մասին» խորագրով), որն այլ տեղեկությունների և նյութերի հետ միասին սեպտեմբերին հրատարակվեց նաև առանձին գրքով՝ «Հայաստանը և Եվրոպան. մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» վերնագրով:

Գիրքը, որ հայտնվեց բազմաթիվ գրախանութներում, հետագայում բազմիցս վերահրատարակվեց և թարգմանվեց նաև անգլերեն ու ֆրանսերեն, ռումբի ազդեցություն գործեց ոչ միայն Գերմանիայի, այլև Եվրոպայի և ԱՄՆ հասարակական կարծիքի վրա՝ խորտակելով թուրքական ապատեղեկատվության պատը և ի ցույց հանելով թուրքական կառավարության կողմից հայ ժողովրդի հանդեպ իրականացվող պետական ոճրագործ քաղաքականությունը: Այն դարձավ կարևորագույն սկզբնաղբյուր հարցով զբաղվող լրատվամիջոցների ու հեղինակների համար և միաժամանակ ձևավորեց հայասիրական հոծ շարժում տարբեր երկրներում, որն արդյունավորվեց, մի կողմից, բազմահազար հայ որբերի և այրիների փրկությանն ուղղված մեծանշանակ աշխատանքներով, մյուս կողմից՝ տերություններին ի նպաստ վտանգված հայ ժողովրդի գործուն միջամտության դրդելու՝ հասարակական նախաձեռնություններով:

Աշխատությունը ոչ միայն համիդյան կոտորածների վերաբերյալ հիմնարար սկզբնաղբյուր է, որն աչքի է ընկնում փաստական անօրինակ հագեցվածությամբ, այլև հարցի վերաբերյալ ծանրակշիռ ուսումնասիրություն, որում քննական հայացքի ներքո

համակողմանիորեն լուսաբանվում են եղերական իրադարձությունների նախապատմությունը, քաղաքական շարժառիթները, նախապատրաստվածությունը, ծրագրայնությունը, ընթացքը և հետևանքները: Լեփսիուսի՝ որպես կոտորածներին ժամանակակից բազմահմուտ հետազոտողի կողմից լիովին պարզաբանում են ստանում նաև մեղքի և պատասխանատվության խնդիրները:

Թարգմանությունը կատարվել է՝ ըստ աշխատության 1897 թ. երրորդ, ընդլայնված հրատարակության:

Շնորհակալություն եմ հայտնում ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ Հրանուշ Սահակյանին, որը նշանակալից ավանդ ունեցավ գրքում հիշատակվող բազմաթիվ տեղանունների մեծագույն մասը նույնականացնելու հարցում, ինչպես և ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժնի աշխատակից, պատմ. գիտ. թեկնածու Ռոբերտ Սուքիասյանին, որի աջակցությունն էապես կարևորվեց գրքի հայերեն թարգմանության և հրատարակության գաղափարը գործի վերածելու հարցում:

Չնույնականացված տեղանունների առաջին հիշատակման դեպքում կոշտ փակագծերում կից ներկայացված են նաև դրանց բնագրային անվանաձևերը:

Բնագրին հավատարիմ մնալու համար Լեփսիուսի կողմից օգտագործված թուրքերեն եզրույթները, որոնք գերազանցապես ունեն տեղանվանային իմաստ, չեն թարգմանվել: Տեքստում, որպես կանոն, շեղատառերով կատարված ընդգծումները հեղինակինն են:

Որպես «թարգմանչի ծանոթագրություն» մատնանշված տողատակային հղումների դեպքում խոսքն ակնհայտորեն վերաբերում է Լեփսիուսին թարգմանական օգնություն ցուցաբերող Ջեյմս Գրինֆիլդին:

Աշոտ Հայրունի

պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.

Armenien und Europa.

Eine Anklageschrift

wider

die christlichen Großmächte

und

ein Aufruf

an

das christliche Deutschland.

Von

Dr. Johannes Lepsius.

3. vermehrte Auflage. 6. und 7. Tausend.

Berlin-Westend.

Verlag der Akademischen Buchhandlung W. Faber & Co.

1897.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային

Դր. Յոհաննես Լեփսիուս

3-րդ ընդլայնված հրատարակություն. 6 և 7 հազար
Բեռլին-Վեսթենդ

«W. Faber & Co.» ակադեմիական գրատան
հրատարակչություն
1897

ԱՌԱՋԱԲԱՆ

Անցյալ տարվա մայիսին Անատոլիայով և Սիրիայով ձեռնարկած իմ ճանապարհորդության ընթացքում ես անցա նաև երկու նահանգներով, որոնք նախորդ ամիսներին զերծ չէին մնացել հայկական հուզումներից ու կոտորածներից: Տակավին անապահով երկրում շաբաթներ տևած ձիով ճամփորդության ընթացքում՝ «Հայկական հարցի» գնահատման առնչությամբ գյուղական և քաղաքային թուրք բնակչության հետ իմ ունեցած շփումների ժամանակ, ես ավելի ու ավելի էի համակվում մի համոզմունքով, որը հակասում է Գերմանիայում նաև մամուլի կողմից գրեթե ամենուր ընդունված տեսակետին: Անատոլիայով ողջ ճամփորդության ընթացքում ես այդպես էլ չհանդիպեցի որևէ մահմեդականի, որը վերջին ամիսների իրադարձությունների վերաբերյալ իր դատողությունը կատարելիս չմատնանշեր այն ինքնին հասկանալի իրողությունը, որ հայ ժողովրդի կոտորածն ու կողոպուտը կարգադրված էին կառավարության կողմից և համապատասխանում էին սուլթանի ցանկությանը: Բացի դրանից՝ թուրք գյուղական բնակչությունը միանգամայն բացահայտորեն վկայում էր, որ մոլլաները մզկիթներում հայտարարել էին՝ Շեյխ ուլ Իսլամը՝ մահմեդական աշխարհի հոգևոր առաջնորդն էր տվել հայերի բնաջնջման հրամանը: Քանի որ իշխանություններն առնվազն քաղաքներում սկզբից ևեթ կոտորածների և կողոպուտի համար միայն մի քանի ժամ կամ մի քանի օր տևող սահմանափակ ժամանակահատվածով էին ազատություն տվել, ապա՝ դադարեցրել դրանք, թուրք բնակչության համար այդ առնչությամբ միայն մի բան էր անորոշ մնում. ընդհանրապես ինչո՞ւ են թեկուզ մեկ հայի ողջ թողել: Դրա հետևանքով ժողովրդի շրջանում ծնունդ էր առել մի արտառոց լեգենդ: Մեզ ամենայն լրջությամբ պատմում էին, թե գերմանական կայսրը կոտորածները սկսվելուց հետո սուլթանին գրել էր, որ արդեն բավական է, և նա կարող է դրանք դադարեց-

նել, ու դրա հիման վրա սուլթանը հրամայել էր դադարեցնել սպանդը:

Համոզմունքները, որոնց ես հանգել էի ճանապարհորդության արդյունքում, դրդեցին ինձ հենց Արևելքում հնարավորինս շատ նյութեր հավաքել կոտորածների սկզբնավորման ու ընթացքի վերաբերյալ. մի աշխատանք, որը հայրենիք վերադառնալուց հետո ես շարունակում եմ՝ իմ սեփական դիտարկումներն ականատեսների հնարավորինս շատ հաղորդումներով ստուգելու համար: Ցանկացած անվստահություն կանխելու համար ես ընդգծում եմ (մեր մամուլի՝ հիվանդագին աստիճանի հասած անգլաֆոբիան է հարկադրում սա ասել), որ այս գրքի շարադրանքում օգտագործված նյութերը, բացի Գ. Հ. Ֆիցմորիսի (II) և Է. Ի. Դիլոնի (II) երկու զեկույցներից, ո՛չ անգլիական, եզակի բացառություններով ո՛չ էլ հայկական աղբյուրներից են սերում: Թուրքիայի բոլոր երկրամասերում ապրում են ամեն ազգության պատկանող օտարերկրացիներ (գերմանացիները նույնպես քիչ չեն), որոնք՝ որպես եղելության ականատեսներ, կարողանում էին ամենավստահելի տեղեկությունները հաղորդել: Ինքնին հասկանալի է, որ անգլիական հյուպատոսական տեղեկագրերը, որոնք Կապույտ գրքերում (Թուրքիա, թիվ 1, մաս I և II, 1895 թ. սեպտեմբեր, Թուրքիա, թիվ 1 և 2, 1896 թ. փետրվար, թիվ 3, 1896 թ. մայիս) հասանելի են յուրաքանչյուրին, նույնպես հարուստ և վստահելի աղբյուր են՝ Հայաստանում տիրող իրավիճակն ուսումնասիրելու համար: Ամենից առաջ, սակայն, ի դեմս 6 մեծ տերությունների դեսպանների՝ «Փոքր Ասիայում 1895 թ. իրադարձությունները» զեկուցագրի (այս գրքի 5-րդ մաս), որը 1896 թ. փետրվարի 4-ին մի կոլեկտիվ նոտայի հետ ներկայացվել է սուլթանին, մենք ունենք անվիճելի հավաստիություն ունեցող մի փաստաթուղթ: Այդ զեկուցագիրը, որը դեռ վաղուց պիտանի կլիներ՝ Հայաստանում կոտորածների սկզբնավորման ու բնույթի վերաբերյալ հասարակական կարծիք ձևավորելու համար, չնայած նույն տարվա փետրվարին հրատա-

ռակվել է անգլիական Կապույտ գրքում (Թուրքիա, թիվ 2, 1896 թ., փետրվար, էջ 298-338), գերմանական մամուլի կողմից բացարձակապես որևէ ուշադրության չի արժանացել: Կարևոր է նաև մատնանշել այն փաստը, որ Անգլիան, Ամերիկան և Ֆրանսիան արդեն վաղուց չափազանց հիմնավոր գրականություն ունեն Հայկական հարցի վերաբերյալ, որը Գերմանիան ամբողջովին անտեսում է: Մեջբերում եմ. L. I. Dillon, The condition of Armenia. Contemporary Review, Aug. 1895 – Նույն հեղինակի, Armenia, an Appeal. Cont. Rev., Jan. 1896. – Fr. D. Greene, The Armenian Crisis in Turkey, New York-London, März 1895. – Նույն հեղինակի, The Rule of the Turk, New York-London, März 1895. – Rev. Malcolm MacColl, Englands Responsibility towards Armenia, London, Jan. 1896. – P. Fr. Charmetant, Martyrologe Armenien, März 1896. – G. Godet, Les Souffrances de 1'Arménie, Neuchatel 1896. – G. Clemenceau, Les Massacres d'Arménie, Paris, Juli 1896: «Ճշմարտությունը՝ Հայաստանի մասին» վերնագրի ներքո ի մի բերված հոդվածները հրատարակվեցին սույն թ. օգոստոսին «Reichsbote»-ում: Վերջապես ես կարող եմ միայն ցանկություն հայտնել, որ այս գրքում ներկայացված փաստագրական նյութը ընթերցողների կողմից օգտագործվի՝ Հայկական հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը լրացուցիչ քննության ենթարկելու համար: Այդպիսով իրականացված կլինի իմ՝ այս գրքի շարադրման ընթացքում աչքիս առաջ ունեցած նպատակը, որն այլ բան չէր, քան նպաստել, որ Գերմանիայում հասարակական կարծիքն այլևս այնպես անտարբեր չլինի Արևելքի քրիստոնյաների տառապանքների նկատմամբ, ինչպես մինչև հիմա էր:

Ֆրիզդորֆ, Վիպրայի մոտ
օգոստոս, 1896 թ. Յ. Լ.

I
Ճշմարտությունը՝ Հայաստանի մասին

1. Չոր թվեր

Անհրաժեշտ է, որ Հայաստանի մասին ճշմարտությունը վերջապես ջրի երես դուրս գա: Երեք քառորդ տարի ի վեր գերմանական մամուլը հեղեղվում է մի աղբյուրից ծագող տեղեկություններով, որը ոչ միայն պղտորված է դատողությունների միակողմանիությամբ, այլև, ինչպես մենք կապացուցենք, չտեսնված խեղաթյուրումներով նպատակ է հետապնդում մոլորեցնելու Եվրոպային: Այդ իսկ պատճառով բնավ զարմանալի չէ, որ մի մեծ քրիստոնյա ժողովրդի զանգվածային կոտորածի, կողոպուտի և հարկադիր կրոնափոխման նախապատմության, ընթացքի ու հետևանքների վերաբերյալ փաստերը Գերմանիայում մինչ օրս հայտնի չեն դարձել, մինչդեռ հոգ է տարվել, որ գերմանական մամուլում, առանձին բացառություններով հանդերձ, «խռովարար» հայերի՝ որպես բոլոր չարիքները սադրողների մեղքը բենգալյան լուսավորության մեջ ներկայացվի:

Երբ 1895 թ. հունվարի 26-ին Սասունի կոտորածը (1894 թ. աշուն) հետաքննող թուրքական հանձնաժողովը Մուշում իր երկրորդ նիստը գումարեց, անգլիական, ֆրանսիական և ռուսական հյուպատոսությունների՝ նրան կցված պատվիրակները արդարադատության եվրոպական գաղափարների տեսանկյունից ինքնին հասկանալիորեն առաջարկեցին սկզբում պարզել միայն կոտորածի *փաստը*, որի ընթացքում թուրքական զորամասերի մասնակցությամբ պետք է 27 քրիստոնյա գյուղեր ավերված ու հազարավոր քրիստոնյաներ սպանված լինեին, և ապա՝ միայն անցնել մեղքի խնդրի ուսումնասիրությանը: Թուրքական հանձնաժողովը, սակայն, որը կոտորածի փաստը առաջնահերթորեն ժխտեց և ըստ Բարձր դռան նախապես հրապարակված մի պաշտոնական

հայտարարության՝ առաջադրանք ուներ միայն «քննելու հայ ավազակների հանցավոր գործողությունները», կտրականապես մերժեց այդ առաջարկը, նիստեր գումարեց հունվարի 24-ից մինչև հուլիսի 21-ը Մուշում՝ կոտորածի վայրից հինգից տասը ժամվա հեռավորության վրա և «իմաստուն սահմանափակմամբ» բավարարվեց նրանով, որ մերժելով պատվիրակների կողմից ներկայացված քրիստոնյա վկաներին՝ իր հարյուր և ութ նիստերի ընթացքում հարցաքննեց թուրք վկաների, որոնք նախապես իրենց ցուցմունքների առնչությամբ հրահանգներ էին ստացել, և այդկերպ հաստատեց «հայ ավազակների» մեղքը: Այն վկաները, որոնք փոքր-ինչ հակասող վկայություն էին տալիս, իրենց անզգուշության համար ապաշխարում էին՝ անմիջապես բանտ ուղարկվելով: Հյուպատոսական պատվիրակներն ի վերջո հրաժարվեցին շարունակել մասնակից դառնալ այդ խեղկատակությանը. ուղևորվեցին Սասունի շրջան և անձամբ համոզվեցին բավականաչափ հայտնի զարհուրելի փաստերի և խաղաղ հայ բնակչության անմեղության հարցում:

Մենք մտադիր ենք ձեռնամուխ լինել ոչ թե *մեկ*, այլ *հարյուրավոր* կոտորածների ուսումնասիրությանը, որոնք անցած տարվա հոկտեմբերից մինչ օրս անընդմեջ Հայաստանում տեղի են ունեցել: Գերադասում ենք, սակայն, ոչ թե հետևել թուրքական հանձնաժողովի «գովելի» օրինակին, այլ միանալ եվրոպական ավանդույթին: Այդ իսկ պատճառով մենք նախ կանդրադառնանք փաստերին, իսկ իրավական առումով հարցի մեջ խորամուխ կլինենք այն ժամանակ, երբ մեր ընթերցողներն ի վիճակի կլինեն փաստերի վերաբերյալ որոշակի պատկերացում կազմել: Այժմ՝ փաստերը:

Քրիստոնյա մեծ տերությունների, հատկապես Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի՝ հայկական նահանգներում տասնյոթ տարի ի վեր խոստացված բարեփոխումները վերջապես իրականացնելու բազմամյա պնդումներից հետո՝ անցած տարվա

աշնանը, սուլթանը որոշեց տեղի տալ տերությունների համատեղ ճնշմանը և ընդունել տերությունների կողմից հայկական վեց նահանգների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդի), Դիարբեքիրի և Սվազի համար իրեն պարտադրված բարեփոխումների ծրագիրը: Անգլիայի սպառնալիքները մեղմելու համար սուլթանը, բացի դրանից, լորդ Սոլսբերիին գրավոր խոստացավ, որ բարեփոխումները տառացիորեն ու անհապաղ իրականացվելու էին:

1895 թ. սեպտեմբերի 30-ին մայրաքաղաք Կոստանդնուպոլսի հայերը ցանկանում էին աջակցել Բեռլինի պայմանագրի խոստումների կատարմանը՝ ուղղված մեծ տերությունների ճնշմանը՝ մեծ վեզիրին ներկայացնելով մի խնդրագիր, որում շարադրված էին հայ ժողովրդի գանգատներն ու առաջարկները: Հայերի 2000-անոց մի շարասյուն Ստամբուլի փողոցներով շարժվում էր դեպի Բարձր դուռ: Ոստիկանությանը հանձնարարված էր խոչընդոտել խնդրագրի հանձնումը, իսկ իշխանությունները հոգ էին տարել, որ ձողերով զինված թուրքերի ու իսլամական կրթօջախների ուսանողների միջոցով հակահանրահավաք կազմակերպվեր: Բանը հասավ ծեծկռտուքի, սկսվեց փոխհրաձգություն, իսկ ոստիկանությունը հետապնդում էր հայերին: Նրանցից ոմանք, որոնց ամբոխը գետնին էր տապալել, գնդակահարվեցին ժանդարմների կողմից, ձերբակալվածները սվիններով սրախողխող էի արվում ոստիկանատան մեջ, իսկ հայկական իջևանատները գիշերը հարձակման ենթարկվեցին: Հետին թվով 500 հայ ձերբակալվեց, և ընդհանուր խուճապը հայ բնակչությանը մղեց դեպի իր եկեղեցիների ապաստարանները:

Այս աղետալի իրադարձությունը հարյուրավոր կոտորածների ազդանշանն էր, որոնք, հարված հարվածի հետևից ազդարարվելով և եզրափակվելով շեփորի թնդյուններով բոլոր 6 նահանգներում, որոնք պետք է երջանկանային բարեփոխումներով, և դրանցից բացի՝ ևս 4 այլ նահանգներում քրիստոնյա բնակչությանը ա-

մենասարսափելի կերպով սպանդի ենթարկեցին, իսկ վերապրածներին մատնեցին սովամահության կամ բռնի հավատափոխման: Օսմանյան պետության ամենաբերրի նահանգներում, չափերով Գերմանիային հասնող երկրով մեկ տարածվեց արյան ու ավերումի մի հոսանք՝ նախատեսված մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի իր հորձանուտում թաղելու համար:

Հետևյալ տեղեկագրի վիճակագրական նյութը, որի բացարձակ ամբողջականության մասին կասկած անգամ լինել չի կարող, առաջին հերթին վերցվել է դեսպանական այն զեկույցից, որը վեց մեծ տերությունները 1896 թ. փետրվարի 4-ին ի գիտություն ներկայացրել են Նորին մեծություն սուլթանին, և ամբողջացվել է եվրոպացի ականատեսների, հյուպատոսների, ճանապարհորդների, վաճառականների և ուրիշների՝ մեր տրամադրության տակ գտնվող զեկուցագրերից շատերի միջոցով:

Կոտորածները Տրապիզոնի վիլայեթում

Հոկտեմբերի 8: Նրանից հետո, երբ հոկտեմբերի 4-ին և 5-ին 3000 զինված մահմեդականներ քաղաքից ու գյուղերից հարձակվել էին Տրապիզոն *քաղաքի* քրիստոնյա թաղամասի վրա, հոկտեմբերի 8-ին կազմակերպվեց կոտորած, որի ժամանակ սպանվեց մոտ 600 հայ: Սպանված մահմեդականների թիվը հասավ 20-ի: Կոտորածը սկսվեց կեսօրին շեփորի ազդանշանով և ավարտվեց ժամը 3-ին դարձյալ շեփորի ազդանշանով: Ծուկան և հայկական թաղամասը կողոպտվել էին: Կորուստը՝ գրեթե 4 միլիոն մարկ: Հյուպատոսներն արձանագրեցին, որ «*հայերի կողմից որևէ սադրանք* տեղի չի ունեցել», մինչդեռ առկա են պարզ ապացույցներ, որ ամբողջը նախապատրաստվել էր իշխանությունների ամենաթողության պայմաններում մահմեդականների կողմից, որոնք նախորդ օրը շուկայում զենքի նշանակալի առնտուր էին անում և փորձում էին տիրանալ մի զինանոցի: Իշխանությունները կողոպուտը թույլատրեցին մինչև երեկո: Միայն *Տրապիզոնում և*

շրջակայքում չքավորների թիվը, որոնցից կողոպտվել են նրանց գոյության բոլոր միջոցները, կազմում էր 3000-4000:

Տրապիզոնի, *Գյումուշխանեի* (հոկտեմբերի 25 և 26), *Սամսունի* (դեկտեմբերի 7) և *Աղջաքալաքի* (դեկտեմբերի 14 և 15) գյուղական շրջաններում, որքան հայտնի է, ավերվել են 34 գյուղեր, և սպանվել են մոտ 2100 քրիստոնյաներ:

Կոտորածներն Էրզրումի վիլայեթում

Մահմեդական բնակչության միանգամայն ակնհայտ նախապատրաստություններից հետո, որոնք, չնայած հյուպատոսների ջանքերին, իշխանությունների կողմից չխոչընդոտվեցին, զինված ամբոխը հոկտեմբերի 30-ին սպաների ու զինվորների մասնակցությամբ, ինչպես հաղորդել են հյուպատոսները, հարձակվեց Էրզրում քաղաքի հայկական թաղամասի ու շուկայի վրա: Կողոպտվեցին 1500 խանութներ և մի քանի հարյուր տներ: Կոտորածների ընթացքում քաղաքում և շրջակայքում սպանվեցին 1200 քրիստոնյաներ և 12 թուրքեր: Իշխանությունները չմիջամտեցին, մինչև խանութներն ամբողջովին թալանված, իսկ դրանց տերերը սպանված էին: Կոտորածն ու թալանը շարունակվեցին գիշերը, իսկ մեկուսի թաղամասերում՝ նաև հաջորդ գիշեր:

Դերջանի շրջանում թալանվեց ու ավերվեց 40 գյուղ, և անհաշիվ քրիստոնյաներ սպանվեցին: Բասենի շրջանում կողոպտվեց 14 գյուղ, և սպանվեց 140 հայ, Օվայի գավառակում ավերվեց ու կողոպտվեց 23 գյուղ, Քղիի շրջանում՝ 9 գյուղ: Ամենուրեք՝ մեծաթիվ սպանվածներ:

Երզնկա քաղաքում հոկտեմբերի 21-ի կոտորածի ժամանակ սպանվեց 700 քրիստոնյա, վիրավորվեց 400-ը, մինչդեռ միևնույն ժամանակ սպանվեց 7 թուրք:

Բաբերդ քաղաքում հոկտեմբերի 27-ին մինչև 20 տարեկան բոլոր տղամարդիկ կա՛մ սպանվեցին, կա՛մ բանտարկվեցին: Մա-

հացածների թիվը հասնում էր 1060-ի: *Բաբերդի* շրջակայքում 165 գյուղ ամբողջովին թալանվեց ու ավերվեց:

Վարզահանում սպանվեց 100, *Քսանթայում*՝ 400, *Բայազետում*՝ 500 հայ, թուրքերը մարդկային որևէ կորուստ չունեցան:

Փոքր-ինչ մանրամասնելու համար նշենք միայն, որ *Բաբերդում* 14 կանայք իրենց ծծկեր երեխաների հետ ողջակիզվեցին, 100 կանայք կտոր-կտոր արվեցին, իսկ 50 երիտասարդ կանայք ինքնասպան եղան՝ պատվազրկումից խուսափելու համար: Մենք չենք ցանկանում այստեղ ավելի մանրամասն խոսել այն մասին, որ կոտորածների ժամանակ անհամար կանայք ու աղջիկներ պատվազրկվեցին, քանի որ այդ խնդրին մենք դեռ կանդրադառնանք: Որոշ գյուղեր խնայվել են այն բանից հետո, երբ մեծ փրկագին էին վճարել՝ մինչև 120 թուրքական ֆունտ (2400 մարկ): Գավառի մյուս բոլոր հայկական գյուղերը կա՛մ կողոպտվեցին, կա՛մ ավերվեցին: Իշխանություններն ամենուրեք գործողությունների ազատություն էին տալիս խռովարարներին: Զինվորականությունը մասնակցում էր կոտորածներին ու թալանին, և վերապրածներն ամենուր հարկադրվեցին զանգվածաբար իսլամ ընդունել:

Կոտորածները Բիթլիսի վիլայեթում

Հոկտեմբերի 25-ին՝ մզկիթից դուրս գալիս, թուրքերը հարձակվեցին հայերի վրա, այն էլ, ինչպես տեղեկացնում է դեսպանի զեկույցը, *առանց վերջինների կողմից որևէ սադրանք ի հայտ գալու*: Կոտորածը սկսվեց և ավարտվեց շեփորի ազդանշանով: Սպանվածների թիվը կազմում էր 900, թուրքական իշխանությունների տվյալների համաձայն՝ միևնույն ժամանակ սպանվել են նաև 39 մահմեդական:

Սասունի, Տալվորիկի, Մուշի, Սերթի, Էրզունի, Շիրվանի, Գյոզալդարայի, Սղերդի, Գենջի և *Ճապաղջրի* շրջաններում անհամար գյուղեր՝ բնակեցված ոչ միայն հայերով, այլև ասորիներով,

քաղդեացիներով և յակոբիտյաններով, կողոպտվեցին մահմեդական զինված հրոսակախմբերի կողմից, իսկ բնակիչները կոտորվեցին: Ջարդերի պատասխանատվությունը կրում են իշխանությունները:

Կոտորածները Վանի վիլայեթում

25 շրջաններում 543 գյուղեր, որոնց անունների և ավերված տների, եկեղեցիների ու վանքերի թվաքանակի վերաբերյալ մեզ մոտ ընդարձակ ցուցակներ կան, ամբողջովին կողոպտվեցին և մեծ մասամբ ավերվեցին: Վանի վիլայեթում, ի տարբերություն մյուս վիլայեթների, սպանվածները միայն հարյուրներով էին հաշվվում, որովհետև այնտեղ ոչ թե թուրքերը, այլ գերազանցապես քրդերն էին բնաջնջման գործիք ծառայում, որոնք, իշխանությունների ցանկությանը հակառակ, միայն կողոպտում էին, մինչդեռ առաջինները (և դա վերաբերում է բոլոր նահանգներին) ավելի շատ ջանում էին սպանել: Այդ բացթողումը լրացվեց նորագույն մեծ կոտորածներով: Դրանց ժամանակ, ըստ «Frankfurter Zeitung»-ի՝ օգոստոսի 15-ի ամենաթարմ տեղեկության (տե՛ս թիվ II-ը), այս տարվա հունիսի 14-22-ը հենց Վանում սպանվեց շուրջ 1000 մարդ: Գյուղական շրջաններում կոտորվածների թիվը նվազագույնը 20 000 է հաշվվում:

Կարիքավորների թիվը, որոնք առանց օգնության սովամահ կլինեն, մայիսին Վան քաղաքում հասնում էր 13 000-ի, գյուղական շրջաններում՝ 70 000-ի: Հարևանցի նկատենք նաև, որ Վանի վիլայեթում և *Բիթլիսի* երկու շրջաններում 236 եկեղեցի և 53 վանք կողոպտվեցին և մեծ մասամբ ամբողջովին ավերվեցին, մինչդեռ 245 գյուղ բռնի իսլամ ընդունեց, և 116 եկեղեցի վերածվեց մզկիթների: Մեր ունեցած ցուցակները, սակայն, դրանցում նշված բոլոր գյուղերի և եկեղեցիների անուններով հանդերձ, չեն ընդգրկում նույնիսկ վիլայեթի բոլոր շրջանները: Կարիք չկա անգամ հիշատակելու, որ վիլայեթում թալանին առաջին հերթին մասնակցում

էին նոր կազմավորված համիդիե ջոկատները (քրդական անկանոն հեծելազոր):

Կոտորածները Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթում

Խարբերդում նոյեմբերի 10-ին և 11-ին թուրքերը, *առանց հայերի կողմից որևէ սադրանք ի հայտ գալու*, հարձակվեցին հայկական թաղամասի վրա և կոտորեցին բնակիչներին: Դեսպանների զեկույցի միջոցով հաստատվում է սպաների և զինվորների մասնակցությունը թալանին, բայց զինվորականությունը մասնակցում էր նաև բուն կոտորածին հրազենային համազարկերով և թնդանոթային կրակոցներով: Մի նռնակ պայթեց բողոքական առաքելության շինություններից մեկում: Առաքելության ողջ սեփականությունը՝ վեց շինություն ու դպրոց, ավերվեց: Խարբերդի կոտորածի ժամանակ սպանվեց 900 հայ, մինչդեռ Էրզրումի վալիի հաղորդման համաձայն՝ միևնույն ժամանակ միայն 12 մահմեդական սպանվեց: Վիրավորվածների թիվն ահռելի մեծ է: Քրդերը պնդում են, ինչպես փաստում է դեսպանների զեկույցը, որ իրենք գործել են իշխանությունների հետ համաձայնեցված:

Խարբերդի *շրջակայքում* ամայացվեց ավելի քան 60 գյուղ: Մարդկային կյանքերի կորուստն անհաշվելի է, քանի որ քրիստոնյա բնակչությունն այդ շրջանում շատ մեծաքանակ է: Հայերի 200-հոգանոց մի քարավան, որն Ադանայից ետ էր ուղարկվել հայրենի Խարբերդ, հարձակման ենթարկվեց քրդերի կողմից, որոնք նրանցից 193-ին սպանեցին, իսկ նրանց ուղեկցող ժանդարմները նրանց պաշտպանելու փոխարեն մասնակցեցին թալանին: Խարբերդի շուրջ գտնվող 60 գյուղում այլևս ոչ մի քրիստոնեական եկեղեցի կամ դպրոց չկա: Մնացել է միայն մեկ քրիստոնյա քահանա, մյուս բոլորը սպանվել կամ կրոնափոխ են արվել: Հենց Խարբերդում 200 ընտանիքի հարկադրեցին իսլամ ընդունել:

Արաբկիրում քրդերն ու թուրքերը զինված հարձակում էին գործում քրիստոնյաների վրա և կողոպտում քաղաքը: Հյուպատո-

սական հաղորդումների համաձայն՝ թալանն ու հրկիզումները տևեցին տասն օր: Մոտավորապես 3700 տուն ու 500 խանութ ամբողջովին դատարկվեցին, և 4000 հայ սպանվեց: Թուրքական պաշտոնական վիճակագրության համաձայն՝ մահմեդականներից սպանվեցին 60-ը: Հրկիզումներն ավարտելուց հետո ոստիկանությունը «հետաքննություն սկսեց, և բոլոր տղամարդիկ, որոնք խուսափել էին կոտորածից, բանտ նետվեցին» (դեսպանների զեկույց):

Փրկված կանանց ու երեխաների չքավորությունը սարսափելի է: Իշխանությունները «մի քանի օր շարունակ» հաց բաժանեցին, այնուհետև օգնությունը դադարեց:

Ակն քաղաքը խնայվեց այն բանից հետո միայն, երբ այն վճարել էր 1500 թուրքական ֆունտ (շուրջ 30.000 մարկ) փրկագին: Բացթողումը լրացվեց հետին թվով՝ 1896 թ. սեպտեմբերի կոտորածով, որի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ դեռևս չկան:

Մալաթիա քաղաքում նոյեմբերի 4-ին զինված քրդերն ու թուրքերը հարձակվեցին քրիստոնյաների թաղամասի վրա, որոնք դեռ հոկտեմբերի 29-ին ի հայտ եկած մի խուճապից ի վեր իրենց տներից դուրս չէին եկել: «24 ժամ շարունակ մութեսարիֆը (գավառապետը) թալանին ու կոտորածներին ազատ ընթացք տվեց», իսկ հետո պաշտպանություն ցուցաբերեց միայն իրենց եկեղեցում ապաստան գտած կաթոլիկ հայերին: Դրան հակառակ՝ լուսավորչական հայերի կոտորածն առանց իշխանությունների միջամտության շարունակվեց վեց օր, մինչև 5000 հայ, որոնց թվում՝ բազմաթիվ կանայք ու երեխաներ, սպանվել էին, և բոլոր (մոտ 1000) հայկական տները հրկիզվելով հողին էին հավասարեցվել:

Վիլայեթի բոլոր *գյուղական շրջաններում* գյուղերը թալանվեցին, և անհամար հայեր սպանվեցին: Մեզ մոտ առկա մի ցուցակ տեղեկացնում է վիլայեթի ավերված 176 գյուղի և քաղաքի մասին, որոնցում 7542 տուն ավերվել էր, 512 խանութ՝ կողոպտվել: Վի-

լայեթում սպանված քրիստոնյաների ընդհանուր քանակը, եղած տեղեկությունների համաձայն, հաշվվում է 15 845: Կարիքավորների թիվը, որոնք առանց աջակցության սարսափելի թշվառության և մեծ մասամբ սովամահության են մատնվել, առանց չափազանցելու գնահատվում է 100 000: Մինչև այս տարվա մարտ ամիսը եվրոպական օգնության կոմիտեները 60 000 մարդու ապահովել են սնունդով, մինչև մարտ բաժանվել է 11.000 թուրքական ֆունտ (220.000 մարկ): Մինչև ձմեռ առնվազն 100.000 թուրքական ֆունտ է անհրաժեշտ՝ ամբողջությամբ կողոպտված բնակչությանը կենդանի պահելու համար: Ավելորդ է ասել, որ այս վիլայեթում փրկված բնակչության մեծ մասը հարկադրված իսլամ ընդունեց՝ հետագա կոտորածներից խուսափելու համար:

Կոտորածները Դիարբեքիրի վիլայեթում

«Քրդերը նոյեմբերի 1-ի առավոտյան գյուղից գալիս են քաղաք, մահմեդականների հետ միասին թալանում շուկան, կրակի են մատնում այն, ապա կոտորում են հայերին՝ անկախ դավանանքից: Չինվորները, ոստիկաններն ու քրդերը միավորվում են՝ քրիստոնյաներին գնդակահարելու համար: Սպանդը շարունակվում է երեք օր, չնայած վալին (գլխավոր նահանգապետ) կոտորածից առաջ ֆրանսիական հյուպատոսին վստահեցրել էր, թե ինքը խաղաղության կողմնակից է» (դեսպանների զեկույց): *Այն պնդումը, թե քրիստոնյաներն էին հրահրել կոտորածը, հյուպատոսների կողմից որակվեց կեղծ*: Դրան հակառակ՝ հաստատվեց մահմեդականների կողմից կոտորածի խնամքով նախապատրաստությունը: Նույնիսկ հյուպատոսարանի շենքը քրդերի կողմից հինգ անգամ հարձակման ենթարկվեց, սակայն ապարդյուն: Կարգուկանոնը վերականգնելու համար վալին զինաթափեց քրիստոնյաներին, իսկ մահմեդականներին թողեց զինված: Միայն Դիարբեքիրում սպանվեց 2000 քրիստոնյա, թալանվեց 1701 տուն, և հրկիզվեց 2448 խանութ: Նյութական կորուստը կազ-

մում է 2 միլիոն թուրքական ֆունտ (40 միլիոն մարկ): Շրջակա բոլոր գավառներն ամայացվեցին քրդերի կողմից, իսկ այն վերապրածների թիվը, որոնց ընտանիքները սպանդի են ենթարկվել, և գյուղերն ավերվել են, գնահատվում է 30 000: Հայտնապես սպանվածներից բացի՝ ևս 1000 քաղաքաբնակ քրիստոնյա և 1000 գյուղաբնակ, որոնք աշխատում էին քաղաքում, անհետ կորել են: *Սանջակի* 119 գյուղ թալանվեց ու հրդեհվեց: Նույն ճակատագրին արժանացան նաև վիլայեթի մյուս գավառները: Միայն *Սևերեկի* գավառակում ավերվեց 176 գյուղ: *Մաղափայեցոց* վանքում սպանվեց 300 փախստական: *Միլվանի*, *Հայնիի* գավառներում և մերձակայքում 105 եկեղեցի կողոպտվեց և վերածվեց մզկիթի: Ինչպես ընդհանրապես ամբողջ վիլայեթում, լուսավորչական գյուղերի և նաև մի հունական ուղղափառ գյուղի վերապրած բնակչությունը բռնի դավանափոխ արվեց: Հայ կաթոլիկական *Թելարմեն* մեծ գյուղը նույնպես ամբողջապես թալանվեց: *Մարդին* քաղաքը, չնայած գտնվում է մեծ վտանգի ներքո, բայց մինչ օրս խնայվել է: Չքավորների շրջանում տարածվել է խոլերան:

Կոտորածները Սվազի վիլայեթում

Սվազի վիլայեթում նոյեմբերի սկզբից շրջում են քրդական զինված հրոսակներ և մահմեդականների հետ միասին հրդեհում ու կրակի են մատնում: «*Վալին Բարչր դռնից չի կարողանում ազդեցիկ միջոցառումներ իրականացնելու լիազորություն ստանալ*» (դեսպանների զեկույց): Կոտորածը Սվազ քաղաքում սկսվում է նոյեմբերի 12-ի կեսօրին և տևում 3 ժամ, ապա շարունակվում է 14-ին: Հայերին պատկանող բոլոր խանութները թալանվել են, և մանրածախ առևտուրը ոչնչացվել է: Զոհերի թիվը հասնում է 2000-ի: Կոտորածի երեկոյան մուեզինները մինարեթների բարձունքից Ալլահի օրհնությունն էին խնդրում սպանդի համար: Քաղաքից 10 կմ շառավղային հեռավորությամբ հայկական բոլոր գյուղերն ամայացած են: *Կյուրին* քաղաքը նոյեմբերի 12-ին շրջա-

պատվեց 2000 քրդերի կամ, ինչպես պնդում են, ծպտյալ պահեստազորայինների կողմից, քառօրյա դիմադրությունից հետո գրավվեց ու վերածվեց ավերակների կույտի: Հազար հայկական տներ հրի մատնվեցին (զոհերի թիվը՝ շուրջ 2000): «Նոյեմբերի 28-ին, այսինքն՝ կոտորածից 14 օր անց, դեռ 1200 մարմին անթաղ փռված էր ճանապարհներին» (դեսպանների զեկույց): Այն, որ քրդերի կողմից 150 կանայք և դեռատի աղջիկներ են առևանգվել, բոլոր կոտորածների բաղկացուցիչ մասն է կազմում: 5075 մարդ Կյուրինում հանապազօրյա հացի կարոտ է:

Շապին Գարահիսար-Շարքիում կոտորածը և թալանը տեղի ունեցան հոկտեմբերի 27-29-ին: Նոյեմբերի 1-ին սպանվեցին 2000 անձինք՝ մեծ մասամբ կանայք և երեխաներ, որոնք ապաստանել էին հայկական եկեղեցում: Զոհերի թիվը քաղաքի շրջակայքում հասնում է ավելի քան 3000-ի: 30 գյուղ կողոպտվեց, և սպանդի ենթարկվեց բնակչության 40-50 տոկոսը: Հիշատակության ենթակա մյուս քաղաքներն են *Ամասիան* 1000 սպանվածով (բոլոր խանութներն ու վաճառատները՝ կողոպտված), *Մարզվանը*՝ 500 զոհ (400 տուն և խանութ՝ կողոպտված), *Վեզիր Քյուփրուն*՝ 200 սպանված (300 տուն՝ կողոպտված), *Զեյան*՝ 200 սպանված (300 տուն և 200 խանութ՝ կողոպտված): Վիլայեթի բոլոր գյուղական շրջաններն անապատացել են, փրկվածները զանգվածաբար հարկադրվեցին իսլամ ընդունել, օրինակ՝ Կասմայում 655-ը: Վստահելի աղբյուրների համաձայն՝ վիլայեթում կարիքավորների թիվը հասնում է 180 000-ի: Խոսք լինել չի կարող այն մասին, որ օգնության կոմիտեների օգնությամբ զրկանքը կարող է հաղթահարվել:

Վերոնշյալ 6 վիլայեթները նրանք էին, որոնցում բարեփոխումների իրականացման մասին սուլթանը կոտորածներից առաջ իր պատվով էր երդվել: Զարդերը, սակայն, տարածվեցին նաև հարևան *Հալեպի*, *Ադանայի* և *Անգորայի* վիլայեթներում: *Իզմիթի* վիլայեթում՝ Կոստանդնուպոլսի դիմաց, արդեն հոկտեմբերի 3-ին տեղի էր ունեցել *Ակ-Հիսարի* հայ բնակչության կոտորած (50

սպանված, 15.000 թուրքական ֆունտի չափով նյութական վնաս [300.000 մարկ]):

Կոտորածները Հալեպի վիլայեթում

Այնթապում, *Ուրֆայում*, *Բիրեջիքում*, *Մարաշում* և այլ քաղաքներում տեղի ունեցած զանգվածային սպանդներից հետո Հալեպի վիլայեթը դասվում է մարդկային կյանքերի ամենամեծ կորուստներն ունեցածների թվին: Թվարկենք՝ ըստ սպանվածների թվաքանակի՝ *Բիրեջիք*՝ 96, *Քիլիս*՝ 216, *Էլօղլու*՝ 250, *Էլբիստան*՝ 300, *Եմիռեկալե*՝ 600, *Այնթապ*՝ 1000, *Մարաշ*՝ 1390, *Ուրֆա*՝ 10 000 սպանված քրիստոնյաներ: *Զեյթունը* հայկական կոտորածների ամբողջ տարածաշրջանում միակ քաղաքն է, որը ողջ ձմեռվա ընթացքում հուսահատ և ի վերջո հաղթանակով պսակված դիմադրություն ցուցաբերեց: 20 000 մարդ փախել էր քաղաք, և թուրքական բազմաթիվ զորամասերը, որոնք մեկը մյուսի հետևից այնտեղ էին ուղարկվում, չկարողացան հաղթահարել նրանց: Ի վերջո միջամտեցին եվրոպացի հյուպատոսները, և Զեյթունի հայերին համաներում շնորհվեց: Այնուամենայնիվ, շրջափակման ընթացքում քաղաքի համար մղվող մարտերում և սովից մահացավ 6000 մարդ՝ չհաշված հարյուրավորները, որոնք լեռներում մահացան: Մի աննախադեպ բարբարոսության մասին անգամ զորամասերի կողմից է հաղորդվում, որոնք Զեյթունի և Մարաշի միջև ընկած տարածքում 4000 հայ փախստականի մի քարավան շրջափակեցին և 3720 տղամարդկանց, կանանց ու երեխաների սպանեցին:

Ըստ հյուպատոսների հաղորդման՝ *Ուրֆայում*, *Բիրեջիքում*, *Սևերեկում* և *Ադիամանում* 5900 անձ հարկադրաբար իսլամացվել է: Բիրեջիքում այլևս ոչ մի քրիստոնյա չկա: Կարիքավորների թիվը, որոնք եվրոպական օգնության կոմիտեների կողմից պետք է փրկվեն սովամահ լինելուց, այս վիլայեթում հասնում է 47 000-ի: Գավառներից, այնուհանդերձ, դեռևս համեմատաբար քիչ բան է հայտնի: Ջարդերի ընթացքն ամենուր նույնն է. կա՛մ քրիստոնյա-

ները, ոչինչ չկռահելով, հարձակման են ենթարկվում զինված հրոսակախմբերի կողմից՝ զինվորականների մասնակցությամբ, կա՛մ իշխանությունների կողմից նենգաբար զրկվում են բոլոր զենքերից ու պաշտպանության միջոցներից և ոչխարների հոտի պես մորթվում: Կոտորածները կանխելու ուղղությամբ հյուպատոսների ձեռնարկած քայլերը ձախողվում են՝ հանդիպելով կառավարական մարմինների դիմադրությանը: Ըստ դեսպանի հաղորդման՝ զինվորները, պահեստազորն ու համիդեականները նույնպես ամենաեռանդուն մասնակցությունն են ունենում կոտորածներին ու թալանին և հարձակումների ժամանակ իրենց սպաների կողմից են ուղղորդվում քրիստոնյաների դեմ:

Կոտորածներն Ադանայի վիլայեթում

Ադանայի վիլայեթում ամերիկյան և ֆրանսիական ռազմանավերի առկայության շնորհիվ *Մերսին*, *Տարսոն* և *Ադանա* քաղաքները խուսափեցին կոտորածներից: Չնայած դրանք արդեն երեք անգամ հայտարարվել էին, բայց վալին նավերի ղեկավարների անձնական միջամտության հետևանքով չհամարձակվեց թույլատրել դրանց բռնկումը: Դրան հակառակ՝ Ադանայի *գյուղական շրջանները*՝ 20 կողոպտված գյուղերով ու ագարակներով, և Բայասը՝ 16 գյուղերով ու 1809 ավերված տներով ու ագարակներով, էլ ավելի հիմնովին ամայացվեցին: Վալին շրջագայություն կատարեց վիլայեթում, և հենց նա գյուղերից հեռանում էր, տեղի էր ունենում թալանը: Այնուամենայնիվ, նա ֆրանսիական «Le Linois» հածանավի հրամանատարին վստահեցրեց, որ վիլայեթի տարածքում ոչ մի տեղ կարգուկանոնը չի խաթարվել: Ամենուրեք քրիստոնյաները զինաթափվեցին, մինչդեռ մահմեդականներն իրավունք ունեին պահելու իրենց զենքերը: *Բայասի* շրջանում նյութական կորուստները հաշվվում են 50.000 թուրքական ֆունտ (1.000.000 մարկ): Տավրոսում բազում (անգլ.) քառակուսի մղոններ կազմող խաղողի այգիներ մահմեդականների կողմից արմատա-

խիլ արվեցին: Կարիքավորների քանակը, ներառյալ նաև այլ գավառներից 7000 փախստականներինը, հասնում է 17 000-ի:

Կոտորածներն Անգորայի վիլայեթում

Անգորայի վիլայեթում նոյեմբերի 30-ին *առանց հայերի կողմից որևէ սադրանք ի հայտ գալու* տեղի ունեցավ մեծ կոտորած, որի ժամանակ սպանվեցին 1000 և վիրավորվեցին 600 հայեր: Շուկայի 200 կրպակներ ամբողջովին թալանվեցին, կանանց բաղնիքի վրա նույնպես հարձակում կատարվեց: *Յոզղաթում*, *Չորումում* և *Հաջիքյոյում* տեղի ունեցան կոտորածներ. Յոզղաթում սպանվեցին բոլոր բնակիչները, Հաջիքյոյում՝ 90-ը: Վիլայեթի 45 գյուղ թալանվեց: *Էքրեկ* և *Մունճուսուն* գյուղերը՝ համապատասխանաբար 800 և 1000 տներով, բոլոր բնակիչների սպանությունից հետո հիմնահատակ ավերվեցին: Իշխանությունների կողմից հրով ու սրով ոչնչացնող չերքեզների վրա որևէ լուրջ հսկողություն չիրականացվեց, ընդհակառակը, նրանց ներկայությունը հանդուրժում էին: 12 մոբիլիզացված գումարտակներից 8-ը խռովություն բարձրացրեց, և զինվորները դասալքեցին: Կեսարիայի կայազորի մի բարձրաստիճան սպա տեղեկացրեց, որ, եթե իշանություններն իրեն չխոչընդոտեին, նա մի ակնթարթում կճնշեր խռովությունը՝ վերջ տալով կոտորածին: Մեկ ուրիշն ափսոսանք էր հայտնում իշխանությունների հետագա միջամտության համար՝ տեղեկացնելով, որ եթե իրենց չխանգարեին, ապա իրենք բոլոր հայերին մինչև վերջին մարդը կբնաջնջեին: Բոլոր վիլայեթներում զինվորականության ապացուցված մասնակցությունը նաև ամենաբարձրաստիճան պաշտոնյաների հրամանատարության ներքո անառարկելիորեն բացահայտում է կոտորածների շարժառիթը, առավել ևս, որ բոլոր վիլայեթներից հյուպատոսների հաղորդումները փաստում են, *որ հայերի կողմից որևէ սադրանք չի եղել, ուր մնաց՝ ապստամբություն կամ հեղափոխական շարժում*: Միայն Զեյթունում մի բացառիկ դեպքի ավելի մանրամասն քննությունը հայերի վարքագիծն արդարացնում է:

Ամփոփելով մեր վիճակագրական տեղեկատվությունը, որը հիմնված է բացառապես ստույգ աղբյուրների վրա, և քանի որ բազմաթիվ գավառներից թվական տվյալները բացակայում են, ամենևին ավարտուն պատկեր չի ներկայացնում, տեսնում ենք հետևյալը. ջարդերի ժամանակ սպանվածներ՝ մոտավորապես 88 000, ամայացված քաղաքներ և գյուղեր՝ մոտ 2.500, ավերված եկեղեցիներ ու վանքեր՝ 645, բռնի իսլամացված 559 գյուղեր՝ վերապրած բոլոր բնակիչներով, և հարյուրավոր քաղաքաբնակ ընտանիքներ, մզկիթների վերածված եկեղեցիներ՝ 328, կարիքավորների թվաքանակը՝ մոտ 546 000: Այս թվերը ներկայացնում են միայն *մեր վիճակագրական տեղեկությունների ծավալը, այլ ոչ թե հենց փաստերը*, որոնք շատ ու շատ ավելի սարսափահարույց են լինելու:

Եթե նկատի առնվեն նաև այն բոլոր հազարավորները, որոնք դեռևս չցուցակագրված գյուղերում սպանվել, վերքերից մահացել են, փախուստի ճանապարհին անհետ կորել են, սովամահ եղել, համաճարակի զոհ դարձել և լեռներում թաղվել ձմռան ձյան տակ, ապա հայկական կոտորածների զոհերի թիվը **100 000** համարելիս չափազանց թերագնահատված կլինի:

2. Ուժեղ նյարդերի համար

Մեր առաջին զեկույցը հիմնականում միայն վիճակագրական պատկերն էր ներկայացնում: Չոր թվեր են: Ընթերցողի աչքը հեշտությամբ սահում է մի քանի հարյուր կամ հազար սպանվածների, մի քանի տասնյակ կամ հարյուր հազար կարիքավորների վրայով, և ավելի կամ պակաս մի զրոն այնքան էլ չի ազդում տպավորության վերջնարդյունքի վրա: Դրա համար անհրաժեշտ է կենդանացնել նյութը և գոնե մի քանի օրինակներով ցույց տալ, թե ինչ տեսք են ստանում չոր թվերը դաժան իրականության մեջ: Ինչ-որ մեկը կարող է զայրանալ մեզ վրա նրա համար, որ մենք

իրողություններ ենք ջրի երես հանում, որոնց առջև աչքը կնախընտրեր փակվել, և որ ինքներս էլ չենք խուսափում ամենազարհուրելին ներկայացնելուց, սակայն հոգեկան հանգստության զոհաբերումը, որ ակնկալում ենք ընթերցողից, միայն նյարդերի թեթև ցնցում է, մինչդեռ արյան, չարչարանքի, ճիչերի ու արցունքների հեղեղները, որոնց մասին մենք կուզենայինք իրականությանն առավել մոտ պատկերացում ստեղծել, հարյուր հազարավորները ճաշակել են մարդկային տառապանքի առավելագույն սահմաններում: Իհարկե, եթե այնպես լիներ, որ, ինչպես ստիպված ես մեր պաշտոնական մամուլի որոշ արտահայտություններից եզրակացնել, երկինք աղաղակող այդ ոճրագործություններն ու զանգվածային սպանդները ոչ այլ ինչ լինեին, քան անգլիական դիվանագետների ու լրագրողների երևակայության անպետք արգասիք՝ հորինված միայն ժամանակ առ ժամանակ «Եվրոպային հայկական սարսափների մի նոր չափաքանակ հյուրասիրելու նպատակով», ապա մեր շարադրանքը ևս կլիներ սոսկ մի այնպիսի չարամիտ դիտավորության ապացույց, որպիսին վերագրվում է անգլիական պետական գործիչներին ու հրապարակախոսներին: Բայց եթե իրողությունները, անկախ նաև այն բանից, թե ինչ օգուտ կամ վնաս կպատճառեն մեծ կամ փոքր քաղաքականության հաշվարկներին, ամենից առաջ ոչ այլ ինչ են, քան ճշմարտություն, ապա, անշուշտ, պետք է ընդունել, որ ավելի համոզիչ լինելու իրավունքը նրանց կողմն է, ովքեր ճշմարտությունն են ասում, այլ ոչ թե նրանց, ովքեր ճշմարտությունը թաքցնում են:

Մենք խնդրում ենք մեր ընթերցողներին հետևյալ շարադրանքի պարագայում նկատի ունենալ, որ հայկական կոտորածները, որոնց զոհ դարձան 100 000 անմեղ մարդիկ, իրականացվեցին մի խաղաղ ու անպաշտպան ժողովրդի դեմ, քանի որ այն ամենը, ինչ կարելի էր կարդալ մեր թերթերում հայերի կողմից թուրքական կառավարության կամ բնակչության դեմ իրականացված ապստամբությունների, հեղափոխական դավադրությունների կամ

նաև միայն սադրանքների մասին՝ բացառությամբ Զեյթունի միակ դեպքի՝ այն չափով, որչափ այն վերաբերում է հայ ժողովրդին, այլ ոչ թե Լոնդոնում, Փարիզում, Աթենքում կամ Կոստանդնուպոլսում գտնվող մի քանի տաքգլուխների, պետք է միանգամից ասվի, որ սկզբից մինչև վերջ կեղծիք է: Դրան դեռ կվերադառնանք: Առայժմ բավական է վկայակոչել դեսպանների զեկույցի անկաշառ արձանագրումը: Ում փաստերը հայտնի չեն, նա կարող է իրազեկվել թվերի միջոցով: Այլապես ինչպե՞ս կարելի է բացատրել, որ դեսպանների զեկույցում հարյուրավոր և հազարավոր մորթված հայերի համեմատ՝ մեռած մահմեդականները միայն աննշան թվեր են կազմում: Վերջինները, բացի այդ, վերցվել են պաշտոնական թուրքական վիճակագրությունից, որը, անկասկած, որևէ մահմեդականի չի պակասեցնի: Մեզ մնում է միայն թուրքական ծագման այդ թվերը առաջրել հայերի՝ մեր տեղեկությունների միջոցով ամբողջացված կորուստներին և հետագա եզրահանգումները առայժմ թողնել մեր ընթերցողներին:

	Մահմեդականներ †	Հայեր †
Տրապիզոն	20	800
Էրզրում	12	900
Երզնկա	7	1000
Բիթլիս	39	900
Խարբերդ	12	900
Արաբկիր	60	4000
Սվազ	(10)	1400
Այնթապ	50	1000

Իսկապես տարօրինակ է, որ երբ մի օր ոչխարները հարձակվեցին գայլերի վրա, ոչխարների այսպիսի հոտեր սպանվեցին, և կատաղի ոչխարները միայն այսքան սակավաթիվ գայլեր հո-

շոտեցին: Այս հարցն ակնհայտորեն դեռևս պարզաբանման կարիք ունի:

Այժմ, սակայն, կոտորածների մասին: Կասկած չկա, որ հայերին մորթելը թուրքերի համար տոնակատարություն էր: Ամբողջն իրականացվեց հիացմունքի արժանի կարգուկանոնով՝ սկսվելով շեփորի ազդանշաններով, ավարտվելով երթերով, սպանդի համար մինարեթների բարձունքից Ալլահի օրհնությունը կանչող մոլլաների աղոթքի ներքո, նախապես մշակված հստակ ծրագրի համաձայն: Զինվորականության, ռեդիֆների (պահեստազոր), զապթիեների (ժանդարմներ) և կառավարող սուլթանի անունով «համիդեական գնդեր» կոչվող, նոր կազմավորված քրդական անկանոն զորամասերի հետ եղբայրական համերաշխությամբ իշխանությունների կողմից զենքերով զինված ամբոխը ձեռնամուխ եղավ սպանդի տոնական գործին: Լավագույն տրամադրություն էր տիրում: Թուրք կանայք իրենց «զիլգիթ»-ով՝ կոկորդային մարտակոչերով, խրախուսում էին իրենց քաջերին ու խլացնում զոհերի ճիչերն իրենց հարսանեկան երգերի ռռնոցով: Ազնվաբարո խուժանը համակվել էր մի վայրի, մարդակերային հումորով: Իսկ ինչո՞ւ ոչ, երբ այստեղ մի սպա քաջալերում էր. «Սպանե՛լ հայերին, դա սուլթանի կամքն է», երբ այնտեղ մի վալի հորդորում էր. «Աշխուժացե՛ք, չդադարե՛ք սպանել, թալանել և սուլթանի համար աղոթել»: Ինչո՞ւ պետք է նրանք բավարարվեին աղոթելով և հրաժարվեին սպանելուց: Չէ՞ որ բարեպաշտության վարձատրությունն իրենց աչքերի առջև էր. հայ վաճառականների խանութներում դիզված ապրանքները և տներում գտնվող նրանց ողջ ունեցվածքը՝ այնքան, որքան իրենք կարող էին հափշտակել ու տանել: Բացի դրանից՝ չէ՞ որ նրանց ցանկացած անիրավության համար ապահովված էր բացարձակ անպատժելիություն, և հոգատար կառավարության կողմից իր հավատարիմ հպատակների համար բոլոր՝ միայն ցանկալի միջոցառումները ձեռնարկված էին՝ սպանդի գործը ողջ արյունահեղության ընթացքում բոլոր

մասնակիցների համար հնարավորինս անվտանգ դարձնելու համար, այնպես անվտանգ, ինչպես խոյերի մորթը սպանդանոցում:

Արի ամբոխի և քաջ զինվորների երևակայությունը որևէ կերպ կասկածի տակ չէր առնում սեփական կյանքի անվտանգությունը: Նրանք կարող էին սանձարձակորեն տրվել կոտորածների զինապարին և դրան հաջորդող անարգանքի հեշտանքներին:

Միօրինակ զբաղմունքը՝ հարյուրավոր անզեն և անպաշտպան հայերին իրենց տներից ու կացարաններից հրելով դուրս բերելը, հատ առ հատ գլխատելը, մորթելը, խեղդամահ անելը, կախաղան հանելը, մահակներով, կացիններով և երկաթյա ձողերով սպանելը, շուտով հոգնեցրեց: Խանդավառ ամբոխը փոփոխություն պահանջեց: Միօրինակ սպանդը չափազանց ձանձրալի էր, անհրաժեշտ էր գործն ավելի հետաքրքիր դարձնել: Ի՞նչ կլինի, եթե խարույկ վառեն և վիրավորներին խորովեն դրա մեջ, մի քանիսին գլխիվայր կախեն ցցերից, մյուսներին մեխերով գամեն կամ նրանցից հիսուն հոգու կապեն միմյանց և կրակեն մարդակույտի վրա: Հայն ինչի՞ համար ունի այդքան անդամներ, եթե ոչ այն բանի, որ դրանք առանձին-առանձին պոկեն և արյունոտ մնացորդները նրա բերանը խոթեն: Աչքերը հանելը, քթերն ու ականջները կտրելը դառնում են մասնագիտություն: Հատկապես քահանաները, որոնք հրաժարվում են իսլամ ընդունել, ավելի լավ ճակատագիր չեն վաստակում: Կարիք կա՞ ներկայացնելու այն խեղճերի ցուցակը, որոնք այդ ձևով սպանվեցին: Մենք այն ունենք:

Այդ ամենը, սակայն, դեռ պարզունակ մեթոդներ են, որոնք չեն կարող հավակնել՝ ձեռք բերելու նորույթի համբավը. այստեղ կա նավթ ու կերոսին: Չնայած կառավարությունն այն բաժանել է միայն տները հրկիզելու և սննդամթերքի ու հացահատիկի պաշարները փչացնելու համար, սակայն նա դեմ չի լինի, եթե դա ավելի օգտավետ կիրառություն գտնի: Տեսե՛ք այս տղամարդուն, լուսանկարիչ է, անունը՝ Մարտիրոս, ի՜նչ վայելչատես մորուք ու-

նի: Նավթ լցրե՛ք վրան և վառե՛ք: Հավաքե՛ք քրիստոնյաներին, կերոսին լցրե՛ք նրանց վրա, և երբ նրանք կբոցավառվեն, մյուսներին նետե՛ք ծխի մեջ, որպեսզի շնչահեղձ լինեն: Ի՞նչ փարթամ վարսեր ունի այս կինը: Վառող լցնե՛լ դրանց մեջ (կառավարությունը դեռ մեծ պաշար ունի) և պայթեցնե՛լ գլուխը: Այո՛, վարժանքն է վարպետ դարձնում: Ահա մի էֆենդի, անունը՝ Աբդուլա, Քաղձորհայաց վանքում նա մի երիտասարդ տղամարդու և մի երիտասարդ կնոջ պառկեցնում է իրար վրա և ավարտին հասցնում աճպարարությունը՝ գլխատելով երկուսին սրի մի հարվածով: Բանը հաջողվում է, սակայն, նաև առանց հրի ու սրի: Գաբարսի քուրդ շեյխ Ջևհերն ապացուցում է դա. պարաններով կապել է տալիս երկու եղբայրների և ցցերով շամփրում նրանց գետնին: Մրցակցությունը խթանում է ծույլերին, իսկ փառասիրությունը սկսում է հաշվել այն գլուխները, որոնք մի ձեռքով են կտրվել: Քեսրիկի այն հացթուխը, որն արդեն 97 հայի է սպանել, ինչն ապացուցում են նրանց կտրված քթերն ու ականջները, վստահեցնում է, որ չի հանգստանա, մինչև հարյուրը չբոլորի: Ի դեմս Դատեմի հաճի Բեգոսի, սակայն, նա բացահայտում է մի վարպետի, որն արդեն հատել է հարյուրի սահմանագիծը և որպես իր քաջագործությունների հաղթանշան քառատում է մի կնոջ և նրա մարմնի՝ ցցերի վրա հանված մասերը հրապարակավ ի ցույց է դնում: Այնթապի մսագործը, որը վեց հայերի գլուխներ է իր շամփուրների վրա անցկացնում, պարտվում է Սուբաշիգուլպի [Subaschigulp] թուրքերի կողմից, որոնք հայերին մորթում են ինչպես ոչխարների և շուրջանակի կախում մսի կախիչներից: Տրապիզոնի ամբոխը, սակայն, հումոր է ներմուծում գործի մեջ: Հայ մսագործ Ադամն ու իր որդին գնդակահարվում են, կտոր-կտոր արվում, մարմնի մասերն առանձին շամփրվում և վաճառքի են հանվում. «Ո՞վ կգնի ձեռք, ոտք, ոտնաթաթեր, գլուխներ, էժան կտամ, գնե՛ք»:

Անմեղությունը, սակայն, պետք է խնայվեր: Երեխաներին ողջ թողե՛ք: «Սուլթանը հրամայել է միայն յոթ տարեկանից բարձր

քրիստոնյաներին սպանել»: Բայց ո՞վ է լսում ավելի շրջահայացների ձայնը: Ո՞ւմ են պետք անպետք լակոտները, որոնք, վախի ու շփոթության մեջ սարսափելի շտապողականությամբ փախուստի դիմած ծնողների կողմից լքված, թափառում են Մուշի շրջակա լեռների մեկուսի կիրճերում կամ մերկ, սառած ու մուրալով շրջում են քաղաքներում փողոցային շների ոհմակների պես: Մարաշի մեծ գյուղերից մեկում մահմեդականները զերծ պահեցին մի մեկամյա երեխայի այդ տխուր ճակատագրից և նետեցին կրակի մեջ: Բաբերդում նրանք բավականաչափ բարեսիրտ գտնվեցին՝ նորածիններին մայրերի հետ անմիջապես 14 տներում հրկիզելով: Տրապիզոնցի մեծահարուստ Հովհաննես Ավագյանը հարձակվող ամբոխին խոստանում է իր ողջ ունեցվածքը, միայն թե խնայեն իր ու մերձավորների կյանքը: Նա իր գրկում պահում է երեք տարեկան տղային: Ունեցվածքը, սակայն, չարագործներից չի փախչի, սկզբում կսպանեն տղային, որպեսզի կարողանան ծերունու հետ հաշվեհարդար տեսնել, և երկուսն էլ սպանվում են մոր ու քույրերի աչքի առաջ: Երեխաներին մայրերի գրկում խեղդելը քաջարի թուրքին բնավ չի անհանգստացնում, և մի փոքրիկի որպես գնդակ օգտագործելով խաղալն ու նրան մոր աչքերի առջև մի սվինից մյուսի վրա նետելը Բիթլիսի զինվորներին ուրախ մարտախաղ է թվում: Հոր այլանդակված դիակի վրա, որի մարմնի միսը նախապես կտոր կտորի ետևից կտրել և վերքերի մեջ քացախ էին լցրել, նրա որդուն ևս մի արյունոտ խաղալիքով սպանելը ուրախացրեց Էրզրումի ամբոխին:

Եթե նաև յուրաքանչյուր կոտորածի ժամանակ տասնյակ կանայք ու երեխաներ սպանվեցին, Քսանթայում և Լուսոնքում հարյուր կանայք կտոր-կտոր արվեցին, եթե նաև Բիթլիսի զոհերի թվում Սուրբ Սարգսի վանական դպրոցի հինգից տասներկու տարեկան սաներն էին, այնուհանդերձ, թուրքերի նկատմամբ պետք է արդարացի լինել՝ նշելով, որ նման ոճրագործությունները բարձրագույն իշխանությունների կողմից միշտ չէ, որ ցանկալի էին հա-

մարվում: Եվ երբ մի շարք գյուղերից ու քաղաքներից հաղորդվում է, որ նույնիսկ մանուկներին մոր արգանդում չէին խնայում, ուժով նրանց անժամանակ լույս աշխարհ էին հանում, մասնատում ու ջրհորներն էին նետում կամ խաչաձև կտրտելով՝ կրկին թաղում իրենց մայրերի գրկում, ապա դա, ընդհանուր առմամբ, կարելի է վերագրել միայն առաձին ճիվաղների անմարդկային դաժանությանը: Նաև այն, որ 450 դիերի մեջ, որոնց թաղեցին Սվազի գերեզմանատանը, բոլոր կանանց փորերը բաց էին արվել, դուրս է այն հրահանգների սահմաններից, որոնք տրվել էին ամբոխին: Ընդհանուր առմամբ, սակայն, զանգվածների՝ սպանելու մոլուցքն իշխանությունների կողմից որևէ կերպ չսահմանափակվեց, և այնտեղ, որտեղ կատարվելիք առաջադրանքի համար ամբոխի ուժերը չէին բավականացնում, շուտով արագորեն ներգրավված զինվորականությունն էր օգնում հասնել ցանկալի հաջողությանը: Փախչող տղամարդկանց, կանանց և երեխաների միամիտ բազմությունները հաճախ հավատում էին, թե եկեղեցիները կպաշտպանեին իրենց, և որ սրբավայրում իրենց կյանքը կխնայեին: Սակայն երբ հարյուրավոր եկեղեցիներ ու վանքեր պետք է ավերակ ու փոշի դառնային, երբ ցանկանում էին ջնջել ատելի քրիստոնեության հետքը, ինչպե՞ս կարող էին ուշադրություն դարձնել այն մանրուքին, որ դրանցում հարյուրավոր տղամարդիկ, կանայք ու երեխաներ էին ապաստանել: Նաև ի՞նչն էր խանգարում, որ ջարդեին Ռազանի եկեղեցու դռները և սպանեին ներսում գտնվող փախստականներին: Ինչո՞ւ 300 հայեր փախան դեպի Մաղափայեցոց վանքը, եթե ոչ՝ միաբանության անդամների հետ մահ գտնելու: Եվ ո՞վ կարող է հանդիմանել ամբոխին, որ Էնդիզում (Սուշեհիրի գավառակ), Հաբուսիում և Բուսուում (Խարբերդի գավառ) եկեղեցիները կրակի մատնվեցին քրիստոնյաների գլխավերևում, եթե նախևառաջ զինվորականությունն էր լավ օրինակ ծառայում: Շապին Գարահիսարում ավելի մեծ հարգանք ցուցաբերեցին սրբավայրի հանդեպ, և եկեղեցում ապաստանած 2000

տղամարդկանց, կանանց ու երեխաներին գոնե դրսում՝ եկեղեցու դռան առջև սպանեցին: Անարգանքի սյունը, սակայն, որն Ուրֆայի կոտորածի ժամանակ կանգնեցվեց որպես իսլամի հավերժական հիշողություն, ընթերցողը կարող է սեփական աչքերով տեսնել II մասում:

Ամբոխի արյունարբու երևակայության համար կրկին մի անսահմանափակ խաղադաշտ էր բացվում, երբ հարցը վերաբերում էր նրան, թե ինչ պիտի արվեր հազարավոր սպանվածների դիակների հետ: Հարկ չկա ասելու, որ այստեղ ոչ մի ամոթի զգացում, ոչ մի երկյուղ մահվան վեհության հանդեպ չխոչընդոտեց ցանկացած խայտառակ արարքի: Այնուամենայնիվ, պատմության տարեգրքերում արժի արձանագրել, որ բոլոր քաղաքներում ու գյուղերում քրիստոնյաների դիերը՝ մերկացված, ամենանողկալի կերպով այլանդակված և անպատկառորեն խեղված, կույտերով թափված էին ճանապարհներին, աղբակույտերի վրա, ջրհորներում կամ աղբահորերում, մինչև հավաքագրվեցին ավանակներ և հրեաներ՝ դիերը, ինչպես սատկած կենդանիների լեշեր, քաղաքից հեռացնելու համար: Ոչ ոք չէր կարողանում իրար վրա կիտված ու խեղված մարդկային մսի զանգվածների մեջ ճանաչել իր հարազատներին: Այնտեղ, որտեղ նախապատվություն չէին տալիս դիերը՝ որպես շների կեր, փռված թողնելուն կամ հանրաճանաչ կերոսինով խարույկի բաժին դարձնելուն, շուտով փոս էր փորվում, և դիերը կիտվում էին դրա մեջ:

Հեղինակավոր մարդկանց, սակայն, թաղման հատուկ ծիսակարգեր էին վիճակվում: Բուսեյիդի քահանա Մաթևոսի հատված գլուխը դրվեց ազդրերի արանքում, և տեղի երիտասարդ թուրքերը զվարճանում էին՝ նրա դիակը ճիպոտներով ճաղկելով: Դիարբեքիրի քահանա տեր Հարությունին և Ալիփունարի եկեղեցու նրա գործընկերոջը, ինչպես նաև Դատեմ գավառի տասը այլ քահանաների վիճակվեց այն պատիվը, որ նրանց դիերը մորթազերծ արվեցին: Խիզան գավառի Սուրբ Խաչ վանքի առաջնորդ վանա-

հայր Սահակի և նրա երիտասարդ օգնականի համար յուրահատուկ հուշարձան կանգնեցվեց. նրանց տիկ հանված մորթը ծղոտով լցրին և կախեցին ծառերից: Ներոնի երևակայությանն է միայն հարիր այն, որ Արաբկիրի թուրքերը հայերի կտրված գլուխները շամփրում էին երկար ձողերի վրա, իսկ Բաբերդի ժանդարմերիայի հրամանատարը, որը հոկտեմբերի 26-ին Քսանթա գյուղի կանանցից 500 թուրքական ֆունտի համարժեք գումար ու զարդեր վերցրեց՝ խոստանալով խնայել նրանց ամուսիններին, իսկ այնուհետև՝ մի քանի օր անց, այլ բան մտահղացավ. հավաքեց նույն գյուղի բոլոր կանանց ու երեխաներին մի դաշտում և անխղճորեն սրի քաշել տվեց., վստահաբար արժանի է նշանակվելու Լենկթեմուրի թիկնազորի պարագլուխը:

Մարաշի հյուսիսում և արևմուտքում տասներկու գյուղերի բնակիչներ անկարգությունների սկզբից ի վեր տեղափոխվել էին Թուրնուս գյուղը՝ այնտեղից Զեյթունի լեռները փախչելու նպատակով: Այդպիսով հավաքվել էր մոտ 4000 մարդ, երբ նրանք մի առավոտ հանկարծ նկատեցին, որ շրջապատված են զինվորներով: Սկսվեց մի սարսափելի սպանդ, որից փրկվեցին միայն 380 կանայք ու երեխաներ, որոնք, արյունահեղությունից հետո ժողովվելով զինվորների կողմից, ինչպես ոչխարների հոտ, երկու օր շարունակ քշվեցին դեպի Մարաշ: Ինչո՞ւ նրանց ևս չսպանել. հարկ էր ապահովագրել սուլթանի կառավարության մեծահոգության համբավը, որը պաշտպանում է անմեղությունը: Այնուամենայնիվ, այն, որ խեղճ ժողովրդին դեկտեմբերյան սառնամանիքին անասունների պես քշում էին լեռների ձյան միջով, մայրերը հյուծված երեխաներին ստիպված ճամփեզրին պառկած էին թողնում, քանի որ հանգստանալու կամ կանգ առնելու համար ժամանակ չկար, բնավ չի վնասում այդպիսի բարեգործությանը: Երանի՜ թե այնքան գթասիրտ գտնվեին, որ բոլորին կոտորեին, քանի որ այլևս կյանքում ինչո՞վ պիտի ուրախանա այն մայրը, որը պատմում էր, որ, երբ իր երկու երեխաներին այլևս չէր կարողա-

նում տանել, երջանիկ էր, որ կարողացավ երկուսին էլ զինվորներին պատկանող կենդանիներից մեկի վրա նստեցնել: Երբ, սակայն, նրանք հասան մի գետի, ճիվաղները փոքրիկներին նետեցին ջուրը:

Արդյո՞ք բավականաչափ արյուն ու արցունք չի հոսել: Խոշտանգված ժողովրդի ցավագար ճիչը վերջապես ե՞րբ պետք է հասնի քրիստոնյաների ականջին: Եվ ի՞նչ են ասում այն քրիստոնյա մեծ տերություններն այդ մասին, որոնք 18 տարի ի վեր իրենց հովանավոր ձեռքը պահում են Հայաստանի վրա և «Ամենակարողի անունից» մի ստրկացված ժողովրդի համար թղթե բարենորոգումներ են վավերացրել ու ստորագրել: Բայց բավ է խոսել այդ մասին, քանի որ դեռ մի թուղթ էլ պետք է գրվի, գրվի անարգանքով, արյամբ ու արցունքներով: «Սպանե՛ք տղամարդկանց: Նրանց ունեցվածքը, *նրանց կանայք ու աղջիկները մերն են*»: Սա էր Կեսարիայում այն կարգախոսը, որով զինվորները զինված ամբոխին սպանդի, թալանի և անարգումի կոչ էին անում: Եվ նրանք հետևեցին այս կարգախոսին այն հարյուրավոր քաղաքներից ու հազարավոր գյուղերից յուրաքանչյուրում, որոնց վրա տարածվեց ավերումի սարսափելի ալիքը: Դեռ կոտորածներից առաջ զինվորներն անամոթաբար քրիստոնյա մայրերին կոչ էին անում իրենց դուստրերին պահուստավորել իրենց համար, քանի որ, ասում էին նրանք, շուտով երկրում բոլոր քրիստոնյա աղջիկներն իրենց էին պատկանելու:

85 000 սպանվածների թիվը մենք կարող ենք վերահաշվարկել, որչափ մեր տվյալները թույլ են տալիս, և նրանց ցուցակը դեռ հեռու է վերջնականապես փակված լինելուց: Ո՞վ է, սակայն, հաշվում հսկայաքանակ բռնաբարությունները ու անարգումները, հազարավորների ու բազմահազարավորների արցունքները, որոնք քարշ տրվեցին դեպի լեռները, վաճառվեցին հարեմներին, ստրուկների շուկայում էժան գնով տրվեցին կամ ցանկություններ-

րի բավարարումից հետո ինչ-որ մի անկյունում սպանվեցին ու հողածածկ արվեցին:

Ես պե՞տք է գաղափար տամ անարգանքի և անպատվության այն չափի մասին, որոնց այսօր էլ հազարավոր կանայք ու աղջիկներ օրավուր մատնվում են:

Այն սրիկան՝ հաճի Բեգոսը, որը պարծենում էր սեփական ձեռքերով հարյուր հայերի սպանելու համար, մի քրիստոնյա աղջկա հագուստն ամբողջությամբ հանեց և լիովին մերկ հալածեց քաղաքի փողոցներով: Կեսարիայի ամբոխը, որ հայերի 30 տներ՝ իրենց բնակիչներով հանդերձ, հրկիզեց, մասնակցեց նաև լոգանքի ժամին կանանց բաղնիքի վրա հարձակվելու «մաքուր» գործին: Իսկ ի՞նչ ընդունելության գտան Խոշմաթի երեսուն կանայք, որոնք՝ ամբողջովին մերկ, թափառում էին լեռներում, մինչև հասան Ճինակ և զորանոցի զինվորների ձեռքն ընկան: Դա, սակայն, որևէ առանձնահատուկ բան չէ: Չկար մի կոտորած, որի ժամանակ՝ տղամարդկանց սպանդից հետո, չհետևեց կանանց ու աղջիկներին անարգումը, չկար մի թալան, որի ժամանակ կանայք ու աղջիկները վաճառքի չհանվեցին, չառևանգվեցին, ձիերի կամ ավանակների հետ չփոխանակվեցին կամ ստրուկների շուկա չտարվեցին: Չկար բնակիչների պաշտպանության (՞) կամ սպանդի նպատակով որևէ գյուղում զորամասերի մի տեղակայում, երբ աղաների կամ սպաների կողմից քրիստոնյա աղջիկները չբաժանվեցին զապթիեներին և զինվորներին:

Վտանգված իրենց սեփական տներում, անարգված իրենց՝ դռների դրանդիներին կապված տղամարդկանց աչքի առջև կամ զրկված նույնիսկ ամենաանզոր պաշտպանությունից, քշվելով տնից տուն՝ մինչև անպատվության զոհ կդառնան. սա է Հայաստանում ձեր քույրերի ճակատագիրը, ձեր, Գերմանիայի՛ տիկնայք: Ո՞ւմ համար ավելի շատ կցավեք. նրա՞նց, ովքեր, այրիացած կամ որբացած, իրենց ավերակված տների մի անկյունում մի կերպ իրենց մերկությունը ծածկած, կուչ են եկել լաթերի վրա՝ դո-

ղալով ճանապարհով անցնող որևէ տղամարդու՝ թուրքի կամ քուրդի ամեն մի քայլից, որը տուն է ներխուժում՝ նրանց իրենց երեխաների և քույրերի աչքերի առաջ պատվազրկելու համար, թե՞ այն մյուսների, ովքեր, հավանաբար կազմվածքով կամ գեղեցկությամբ ուրիշներից տարբերվելով, ձեռք բերեցին ինչ-որ մի թուրք աղայի բարեհաճությունը, ճիչ ու աղաղակի և արցունքների ներքո քարշ տրվեցին նրա հարեմը և ստիպված եղան իրենց պատվի հետ միաժամանակ զոհաբերել իրենց քրիստոնեական հավատը:

Արդյո՞ք այժմ հասկանալի է, թե ինչը Հայաստանում հարյուրավոր կանանց մղեց ինքնակամ մահվան, ինչը Լուսոնքի ու Քսանթայի այն հիսուն կանանց ստիպեց նետվել ջրհորները կամ ցատկել անդունդների մեջ, ինչ սարսափով էր համակված այն ազնվական հայուհու հոգին, որը կանանց, երեխաների և սակավաթիվ տղամարդկանց մի բազմության հետ Ուզուն Օբայից (Խարբերդից 24 մղոն դեպի արևելք) տեղահանվեց և Եփրատի ափին հասնելով՝ իր ուղեկիցներին ասաց, որ նետվում է գետը և ցատկեց ալիքների մեջ: Այն, որ 55 կանայք և երեխաներ նրան հետևեցին ու իրենց մահն ալիքների մեջ գտան, բավարար ապացույց է, որ մահն ավելի գերադասելի է, քան անարգանքը:

Կամ արդյո՞ք կա մարդկային որևէ սիրտ, որն ի զորու լինի չկիսել ծեր, դժբախտ հոր անսահման ցավը, որն ի հայտ է գալիս օտարության մեջ գտնվող իր որդուն ուղղված հետևյալ նամակում. «Օ՜, ես չեմ համարձակվում քեզ ասել... Նրանք եկան և սպառնացին ինձ սպանել, եթե ես նրանց չհանձնեի քո քրոջը: Նրանք ամբողջն արդեն թալանել-տարել էին՝ վերմակները, անկողինները, հագուստը, սննդամթերքն ու նույնիսկ վառելիքը, երբ վերադարձան՝ պահանջելու նաև մեր դստերը: Ես նրանց դիմադրեցի՝ պատրաստ ամենածայրահեղին: Երբ, սակայն, նա սուրը կոկորդիս մեկնած և իմ մահն իր աչքի առաջ տեսավ, ինքնակամ թուրքերի ոտքն ընկավ և բացականչեց. «Խնայե՛ք հորս. ես այստեղ եմ: Եվ նրանք տարան նրան»»:

Այն, սակայն, որ քրդական հորդաների անողոքությունն ու քաղաքային ամբոխի ցինիզմը մեծապես սպաների և զինվորների չարագործությունների ստվերում էին մնում, չպետք է թաքցված մնա թուրքական բանակի երկրպագուներից ու մահմեդական քաղաքակրթության ջատագովներից: Չնայած ինձ նողկանք է պատճառում գրիչս թաթախել խայտառակության այդ ճահճի մեջ, բայց այն, թե ինչի են ընդունակ կարգուկանոնի ու օրենքի հսկիչները «հայկական բարենորոգումների» երկրում, պետք է ամրագրվի:

Հետևյալ համառոտ տեղեկագրի հավաստիությունը երաշխավորվում է երկու՝ միմյանցից անկախ վկաների միջոցով. «Հյուսեյնիկ գյուղում (Խարբերդի վիլայեթ) մոտավորապես 600 զինվորներ (իսկ որտեղ զինվորները, այնտեղ նաև սպաներն են) ռազմական զինանոցում հավաքել էին նույնաթիվ՝ մոտ 600 հայ կանանց ու երիտասարդ աղջիկների, և այն բանից հետո, երբ նրանք հրապարակայնորեն բավարարել էին իրենց ստոր ցանկությունները նրանց նկատմամբ, մորթեցին իրենց նողկալի բռնաբարությունների տարաբախտ զոհերին»:

Մի՞թե թափված արյունը չպետք է առ երկինք աղաղակեր: Մի՞թե այս կանանց ու աղջիկների աղեկտուր ճիչերը չպետք է հասնեին Ամենազորի ականջին, եթե նույնիսկ այս երկրագնդի զորեղների ականջը խուլ է մնում: Կհասնեն, եթե իսկապես երկնքում Աստված կա:

3. Կրոնական ազատությունը թուրքական պետությունում

Թուրքական պետությունում պայմանագրերի հիման վրա կրոնական ազատություն է տիրում: Ղրիմի պատերազմից հետ սուլթան Աբդուլ Մեջիդը հանդիսավորությամբ խոստացավ բարելավել իր քրիստոնյա հպատակների դրությունը և 1856 թ փետրվարի 18-ի՝ Հաթթի Հումայի հիման վրա Բարձր դուռն ընդունվեց եվրոպական մեծ տերությունների համերգի մեջ: Բոլոր

հպատակներին խոստացված կրոնական ազատությունը տերությունների երաշխավորության ներքո վերցնելու համար 1856 թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրում ներառվեց Բարձր դռան հետևյալ հրամանագիրը. *«Կրոնի բոլոր ֆևերն իմ երկրում պետք է թուլատրվեն ազատորեն ու անխախտորեն, և իմ պետության ոչ մի հպատակ չպետք է խոչընդոտվի իր հավատին դավանելու հարցում: Ոչ ոք չպետք է հարկադրվի հրաժարվել իր հավատից»*:

Այս կերպ երաշխավորված կրոնի ազատությունը Բեռլինի պայմանագրի 62-րդ հոդվածում նորովի հաստատվեց այժմ դեռ կառավարող սուլթան Աբդուլ Համիդ II-ի լիազոր ներկայացուցչի կողմից. «Քանի որ Բարձր դուռն իր պատրաստակամությունն է հայտնել պահպանել և հնարավորինս տարածել կրոնական ազատության հիմնարար սկզբունքը, պայմանագիր ստորագրող տերությունները այդ ինքնակամ հայտարարությունն ընդունում են ի գիտություն: ... Անկախ կրոնական պատկանելությունից՝ բոլորին պետք է թույլատրվի դատարանում ցուցմունք տալ, բոլոր կրոնների բացահայտ և հրապարակային կիրարկումը պետք է ամբողջովին ազատ լինի, և չպետք է խոչընդոտներ հարուցվեն տարբեր կրոնական համայնքների հիերարխիկ հաստատություններին կամ իրենց հոգևոր առաջնորդների հետ նրանց հարաբերություններին: Բոլոր ազգությունների հոգևորականները, ուխտագնացներն ու վականաները, որոնք շրջագայում են Թուրքիայի եվրոպական կամ ասիական հատվածներում, պետք է օգտվեն նույն իրավունքներից, առավելություններից և արտոնություններից: Պաշտոնական պաշտպանության իրավունքը տրամադրվում է Թուրքիայում տերությունների դիվանագիտական և հյուպատոսական գործակալներին՝ վերաբերելով ոչ միայն վերոնշյալ անձանց՝ իրենց կրոնական և բարեգործական հաստատություններով հանդերձ, այլև ուրիշներին՝ սրբավայրերում և այլուր»:

Մի հայտնի գերմանական օրաթերթ՝ «Die Post»-ը, անցյալ տարի Սասունի կոտորածների շուրջ կատարվող քննարկումների առիթով գրեց. «Եվրոպական միջամտության համար այլ պատճառների բացակայության պայմաններում անգլիական և ամերիկյան մամուլի կողմից պետք է օգտագործվեր հայերի քրիստոնեական կրոնը: Այո՛, Գլադստոնը չվարանեց Սասունի պատվիրակության ընդունելության այն կոմեդիայի առիթով խոսել «իրենց քրիստոնեական հավատի պատճառով հետապնդվող հայերի» մասին: Դա ակնհայտ անճշտություն է: Ի՞նչ հիմք պետք է ունենար Բարձր դուռը, որ հանկարծ զարկ տար կրոնական հալածանքների այն բանից հետո, երբ նրան հայերի կրոնը դարեր շարունակ չի անհանգստացրել: Ընդհանրապես թուրքական տերությունում երբե՛ք քրիստոնյաների իսկական հետապնդում տեղի չի ունեցել: Եվ դա կլիներ ամենաանմիտ բանը, որ կարող էր անել Բարձր դուռը՝ իր դրության տարատեսակ դժվարությունները քրիստոնյաների հալածանքներով մեծացնելու համար: Յուրաքանչյուրին, ով գոնե մի փոքր իրազեկվել է Թուրքիայի պատմությանը, պետք է հայտնի լինի, որ նրա կողմից, որպես կանոն (առանձին խախտումները նկատի չեն առնվում), համատարած կրոնական հանդուրժողականություն է ցուցաբերվում, ինչը լայնածավալ տերության բազում կրոնների, դավանանքների և աղանդների ինքնապահպանման հնարավորություն է ընձեռում»:

Արժի վերարտադրել լայնորեն տարածված, որևէ փորձաքննությամբ չխոչընդոտված տեսակետի այդ հակիրճ ձևակերպումը, քանի որ դեռ ամեն օր նույն թելն է թելվում մեր գերմանական մամուլում: Մենք ձեռնպահ ենք մնում այն հարցին անդրադառնալուց, թե թուրքական պետությունում դարեր ի վեր տիրող «համատարած կրոնական հանդուրժողականությունը» մահմեդականների կրոնական օրենքի հետ համերաշխությամբ ինչ իրադրության է հանգեցրել, և Արևելքի կրոնների ու առաքելությունների պատմության, նաև Թուրքիայում կրոնի այժմյան դրության բոլոր գի-

տակներին ենք թողնում իրենց գիտելիքն ու փորձառությունը համաձայնեցնել վերոնշյալ անառարկելի պնդումներին: Մենք կսահմանափակվենք Հայաստանով, և այստեղ, արդարև, համաձայն ենք, որ Բարձր դռան կողմից ոչ միայն ամենաանմիտ բանը կարող էր լինել, այլև եղավ, երբ նա բեմադրեց քրիստոնյաների հալածանքները: Նորին մեծություն սուլթանի քրիստոնյա հպատակները թվաքանակով կազմում են թուրքական պետության ամբողջ բնակչության մեկ երրորդը, իսկ մտավորականության, կրթության, տնտեսական ջանասիրության և բարոյական էներգիայի կշռով՝ ոչ թվաքանակային առումով՝ երկու երրորդը: Մի հրապարակախոսի, որը սովոր է համաշխարհային պատմության տեղաշարժերը սոսկ առօրյա քաղաքական իրադարձությունների հետ մակերեսային պատճառական կապի մեջ տեսնելու և կրոնական ու բարոյական ուժերին ոչ միայն որպես անկշռելի, այլև որպես անհշան գործոնի վերաբերվելու, չես կարող հանդիմանել նրա համար, որ բացարձակապես տեղյակ չէ, որ Օսմանյան պետության քայքայումն ու նրա «դրության տարատեսակ դժվարությունները» իրենց բոլոր կետերով պայմանավորված են իսլամի և քրիստոնեության հակադրությամբ, որ իսլամի կրոնական օրենքը, որը վերջին տասնամյակներում առավել քան երբևէ օսմանյան քաղաքականության ուղենիշն էր, չի թույլատրում մահմեդական և քրիստոնյա հպատակների քաղաքացիական իրավահավասարություն, և որ Բարձր դռան՝ այդ ուղղությամբ կատարած բոլոր զիջումները միայն «տեսականորեն», այսինքն՝ թղթի վրա կարող են իրականանալ: Հավանաբար Մոլթկեի գրվածքների ուսումնասիրությունը այս առումով կարող է դեռ այսօր էլ լավ ծառայություններ մատուցել:

Ի՞նչ են հայկական կոտորածները, ռասայական պայքա՞ր. ո՛չ, քանի որ դարեր շարունակ թուրքերն իրենց հայ հպատակների հետ, լավ թե վատ, գոյատևել են: Ազգային ապստամբությո՞ւն. ո՛չ, քանի որ Հայաստանում հայ ժողովուրդը ոչինչ չգիտի և չի էլ ցան-

կանում իմանալ մի քանի մոլեռանդների քաղաքական քարոզչության մասին, որոնք Լոնդոնում, Փարիզում կամ Կոստանդնուպոլսում հեղափոխական ակումբներ են հիմնում և քաղաքական պարսավագրեր հրատարակում: Քրիստոնյաների հետապնդո՞ւմ. առանց այլևայլի ոչ, քանի որ որևէ անմիջական սադրանք չկար: Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ են նշանակում հայկական կոտորածները: Անկասկած, ըստ իրենց ծագման՝ զուտ քաղաքական եղելություն, ավելի ստույգ ասած՝ վարչական բնույթի միջոցառում: Փաստերը, սակայն, ապացուցում են, որ մահմեդական ժողովրդի խառնվածքի պարագայում, որը քաղաքական իրողություններում ևս մատչելի է միայն կրոնական շարժառիթներին, այդ վարչական միջոցառումը քրիստոնյաների հսկայամասշտաբ հետապնդման ձևը պետք է ընդուներ և ընդունել է: Արդյո՞ք այս կրոնական հետապնդման քաղաքական ակունքների պատճառով մեզ պետք է արգելված լինի խոսել «իրենց քրիստոնեական հավատի պատճառով հալածվող հայերի մասին»: Այդ դեպքում աշխարհում երբեք կրոնական հալածանքներ չեն եղել, քանի որ բոլորն էլ, առանց բացառության, քաղաքական զարգացումների հետ փոխազդեցության մեջ են գտնվել, և նույնիսկ Քրիստոսի մահը ոչ այլ ինչ էր, քան քաղաքական եղելություն, քանի որ նրա դատավճռի համար որոշիչ դեր ունեցան քաղաքական շարժառիթները:

Գերմանական մամուլի կողմից մինչ այժմ բացարձակապես չարժևորված հետևյալ փաստերը, սակայն, հավանաբար կբավարարեն՝ ողջ Հայկական հարցը այլ լույսի ներքո պարզաբանելու համար:

Դեսպանների զեկույցն իսկ արդեն կարողացավ հաստատագրել, որ մոտ 20 քաղաքներում ու գյուղերում, այդ թվում՝ նաև Բիթլիս, Խարբերդ, Ակն, Մալաթիա, Կեսարիա և Ուրֆա խոշոր քաղաքներում տեղի են ունեցել քրիստոնյաների զանգվածային կրոնափոխություններ, և այդ կրոնափոխությունների դրդապատճառն ամենուր եղել է նոր կոտորածների սպառնալիքը: Սակայն

բռնի կրոնափոխությունների անասելի մեծ չափը, որոնց կոտորածների ողջ տարածքում մազապուրծ եղածները ենթարկվեցին և դեռ ամեն օր ենթարկվում են հարյուրավոր քաղաքներում ու գյուղերում, կարող է միայն այժմ մոտավորապես հստակեցվել, երբ տեղեկություններ ունենք բոլոր շրջաններից: Նրանց թիվը, ովքեր վերջին տասն ամիսներին մահմեդական ամբոխի ահաբեկչությունների, մուսուլմանական հոգևորականության սադրանքների, կառավարական մարմինների բացահայտ կամ գաղտնի աջակցության ներքո բռնի կրոնափոխվել են, առաջին հարյուր հազարի սահմանն արդեն անցած կլինի և կհասնի երկրորդ հարյուր հազարին, եթե քրիստոնյա մեծ տերությունների անզոր քաղաքականության պատճառով մահմեդական մոլեռանդությունը շարունակի այնպես հրահրվել, ինչպես մինչ այժմ: Մեզ մոտ կան ցուցակներ 646 գյուղերի, որոնցում փրկված բնակիչները հրով ու սրով իսլամացվեցին, 568 եկեղեցիների և 77 վանքերի, որոնք ամբողջապես կողոպտվեցին, ավերվեցին կամ հիմնահատակ հողին հավասարվեցին, 328 քրիստոնեական եկեղեցիների, որոնք մզկիթների վերածվեցին, 21 բողոքական քարոզիչների և 170 լուսավորչական քահանաների, որոնք իսլամ ընդունելուց հրաժարվելու պատճառով հաճախ չլսված կտտանքների ենթարկվելուց հետո սպանվեցին: Մենք, սակայն, կրկնում ենք, որ այս թվերը համապատասխանում են միայն մեր տեղեկությունների ծավալին, բայց հեռու են փաստերի ողջ ծավալը պատկերելուց: Արդյո՞ք դա քրիստոնյաների հալածանք է, թե՞ ոչ, կամ դեռ անհրաժե՞շտ են այլ ապացույցներ «թուրքական պետությունում համատարած կրոնական հանդուրժողականության» վերաբերյալ:

Մեծ թվերն ավելի տպավորիչ են դառնում, երբ դրանք փոքր մասերի են բաժանվում: Էրզրումի վիլայեթում շուրջ 15 000 քրիստոնյաներ մահվան սպառնալիքի ներքո իսլամ ընդունեցին: Խարբերդի վիլայեթում բռնի կրոնափոխությունների թիվը հաշվվում է շուրջ 15 000, Վանում՝ 10 000: Խարբերդի շրջանի մոտ 60 քրիս-

տոնյա գյուղերում այլևս ոչ մի քրիստոնեական եկեղեցի, ոչ մի դպրոց չի ծառայում իր կոչմանը, և այդ գյուղերի բոլոր քահանաներից, որոնք կա՛մ մարտիրոս, կա՛մ հավատուրաց դարձան, միայն մեկն է մնացել մի բուռ քրիստոնյաների հոգևոր սպասարկման համար, որոնք դեռ կարող են տարածքում ցրված լինել:

Բաբերդի ողջ շրջակայքում խաչի կրոնը լիովին անհետացել է, իսկ բարձրադիր շրջանների մեկուսի լեռնային գյուղերում մշտապես շարունակվում է կրոնափոխությունը մերկացված սրերի և նոր կոտորածների սարսափելի սպառնալիքների ներքո: Այդ ամոթալի քարոզչությունը հանրության առջև հանդիսավորությամբ կատարվող զանգվածային թլպատումներով հասնում է իր անվերադարձ հանգուցալուծմանը: Բոլոր վիլայեթներից, բոլոր կողմերից մեզ տեղեկացնում են. 20, 40, 60 գյուղեր մահվան սպառնալիքի ներքո կրոնափոխ են արվել, եկեղեցիներն ու վանքերն ավերվել են, քահանաներն ու վանականները՝ սպանվել: Դեռևս կանգուն մնացած բոլոր եկեղեցիների բեմերում բազմած են մոլլաները և նոր կրոնափոխվածներին ուսուցանում են մահմեդական կրոնի կանոնները: Զանգակատներից զանգերը վայր են իջեցվել, և մուեզինները «հավատացյալներին» աղոթքի են կանչում: Սվազի, Բիթլիսի, Վանի և Դիարբեքիրի նահանգներում կրոնափոխ արված գյուղերի թիվը հարյուրներով է հաշվվում. Ակնի շրջանում՝ 40 գյուղ, Բալուի շրջանում՝ 43 գյուղ, Սիլվանի, Բշերիկի, Զըռկանի և Փարավանի շրջաններում՝ 105 գյուղ, Դիարբեքիրի շրջանում՝ 106, Բիթլիսի շրջանում՝ 119 և Վանի նահանգում՝ շուրջ 176 գյուղեր: «Իսլամ կամ մահ». այս էր կարգախոսն այն ամենի, ինչ մնաց առաջին կոտորածներից հետո: Դիարբեքիրի ողջ վիլայեթում միայն մի քրիստոնեական եկեղեցի է դեռ իր կոչմանը ծառայում՝ Դիարբեքիրի Սուրբ Սարգիս եկեղեցին: Միայն չորս քաղաքներում՝ Ուրֆայում, Բիրեջիքում, Սևերեկում և Ադիամանում, փոխհյուպատոս Ֆիզմորիսի տեղեկությունների համաձայն, 5 900 քրիստոնյաներ բռնի կրոնափոխ են արվել, Բիրեջիքում, որ

240 քրիստոնյա ընտանիք ուներ, այլևս ոչ մի քրիստոնյա չի մնացել:

Այն, որ եկեղեցիներն ամենուր ամենախայտառակ կերպով պղծվում են, սուրբ անոթները ապականվում, սրբապատկերները պատառոտվում կամ կղկղանքով են պատվում, սուրբ մեռոնը և մասունքները կոխկորտվում են, խաչերը վայր են նետվում, Ավետարանների և Աստվածաշնչի վրա թքում են և դրանք, հազար մասի բաժանելով, նետում են փողոցային կղկղանքի կամ արտաքնոցների մեջ, վանդալիզմի դրսևորման արտաքին կողմն է միայն:

Բռնի կրոնափոխության համար գործածվող մեթոդն ամենուր նույնն էր: Միայն ժամանակահատվածն էր թողնված առաջնորդների, իշխանավորների, սպաների, թուրք աղաների և էֆենդիների հայեցողությանը կամ մահմեդական ամբոխի կամայականությանը: Մի քանի քաղաքներում և գյուղերում դեռ կոտորածների բռնկումից առաջ ընտրության հնարավորություն էր տրվել՝ իսլամ ընդունելու միջոցով կանխելու սպառնացող ճակատագիրը: Այդպես էր Ուրֆայում, որտեղ հայերին կոչ էր արվել կրոնափոխ լինելու պատրաստակամության դեպքում իրենց տանիքներին սպիտակ դրոշներ բարձրացնել, այդպես էր ուրիշ վայրերում ևս, որտեղ ձեռքը կամ մի մատը բարձրացնելով՝ իսլամին հնազանդության առաջարկ էր տրվում և փրկում մահից: Բավական հաճախ նման առաջարկները նաև խաբկանք էին, և ունևոր ու ազդեցիկ հայերին նույնիսկ կրոնափոխության դեպքում չխնայեցին: Շատ դեպքերում բռնի կրոնափոխությունները տեղի ունեցան հենց կոտորածների ժամանակ. մեծ մասամբ դրանք զանգվածային կոտորածների անխուսափելի վերջաբանն էին կազմում: Հազվադեպ էին, սակայն, սահմանափակվում միայն մահվան սպառնալիքով, սվինները սեղմում էին կրծքին, թրերը՝ կոկորդին. այնտեղ, որտեղ դա չէր օգնում, ավելացվում էին խոշտանգումները: Հատկապես այն քահանաներն ու քարոզիչները, որոնք հրաժարվում էին ուրա-

նալ իրենց հավատը, հարկադրված էին ենթարկվել աներևակայելի խոշտանգումների, մինչև կհասցվեր գթության մահացու հարվածը: Խարբերդի տեր Հակոբ քահանան խելագարվեց, երբ, նա, մինչև շապիկը մերկացված, տեսավ հիսուն զինվորների՝ իր վրա ուղղված թրերը: Ի՞նչ անել նրա հետ: Քանի որ մոլլաները բացատրեցին, թե խելագարի՝ իսլամ ընդունելը թույլատրելի չէ, նրան անհնազանդության պատճառով ժամանակավորապես նետեցին բանտ:

Երբ Դատեմի վանքի տարեց վարդապետ Հովհաննես Փափազյանը հրաժարվեց իսլամ ընդունել, սկզբում կտրեցին նրա ձեռքերը, ապա թևերը՝ մինչև արմունկները: Երբ նա դարձյալ տեղի չտվեց, եկեղեցու սալահատակի վրա կտրեցին նրա գլուխը: Բիրեջիքում մի ծերունու, որը հրաժարվեց ուրանալ իր հավատը, գետնի վրա նետեցին, նրա մարմնի վրա լցրին շիկացած ածուխներ, և երբ նա տանջանքների մեջ գալարվում էր, ճիվաղները նրա դեմքի առջև պահեցին մի Աստվածաշունչ և ծաղրելով խնդրեցին իրենց համար կարդալ մի քանի մարգարեություններ, որոնց նա ապավինել էր:

Դիարբեքիրում ասորի յակոբիտյանների մեծ քարաշեն եկեղեցին, որտեղ ապաստանել էին փախստականների բազմությունները, շրջապատվեց քրդերի կողմից, հրազենային կրակի տակ վերցվեց, տանիքը խորտակեցին, վառելիք ու այրվող ջահեր վար նետեցին, մինչև ի վերջո հաջողվեց կոտրել դուռը: Ամբոխի ցնծության ներքո ներսում գտնվողները հոծ խմբերով դուրս քշվեցին, որտեղ նրանց վրա գնդակների տարափ տեղաց: Երբ Եգիպտոսից իր ազգականներին այցելության եկած քահանա Ջինջիս Քաթերջյանին՝ որպես հոգևորականի, ճանաչեցին, նրան գետնին տապալեցին և մահակներով հարվածեցին մինչև գիտակցությունը կորցնելը: Ծուրջն ընկած սուրբ գրքերից մեկը խոթեցին նրա բերանը և ծանակելով պահանջեցին քարոզ կարդալ: Նրա վրա կրակ նետեցին, և երբ ուժգին ցավը նրան ուշքի բերեց, և նա փոր-

ձեց սողալով հեռանալ, նրան բռնեցին ու նետեցին բոցավառվող կրակի մեջ, որտեղ նա ողջակիզվեց: Արդյո՞ք մակաբայեցիների հերոսության մասին չի հիշեցնում այն, որ Ուրֆայում մի մայր, երբ նրա որդիներին ուզում էին ստիպել կրոնափոխ լինել, առաջ վազեց ու աղերսեց նրանց. «Թո՛ղ ձեզ սպանեն, բայց Տեր Հիսուսին մի՛ ուրացեք», և աննկունները թողեցին, որ թրով խեղդեն իրենց: Կանայք ու երեխաները հետևում էին տղամարդկանց մարտիրոսությանը: Բիթլիսում զինվորները 100 կանանց, որոնց ամուսիններն արդեն սպանված էին, հավաքեցին մի հրապարակում: Ի՞նչ պատասխանեցին նրանք, երբ նրանց ասացին. «Հրաժարվե՛ք ձեր Հիսուսից և ողջ կմնաք»: «Ո՛չ, մեր ամուսինները նրա համար են մահացել, և մենք էլ ենք ուզում նույնն անել», ու բոլորը սպանվեցին:

Կեսարիայում նոյեմբերի 30-ի կոտորածի ժամանակ մի բողոքական և իր տասներկուամյա դուստրն էին տանը, որտեղից մայրը մինչ այդ դուրս էր եկել: Մի թուրք ներխուժեց այն սենյակը, որտեղ աղջիկն էր նստած: «Զավա՛կս,– ասաց նա,– հայրդ մահացել է, քանի որ նա չէր ցանկանում իսլամն ընդունել, այժմ ես քեզ պետք է մահմեդական դարձնեմ, ապա քեզ կտանեմ իմ տուն և կպահեմ քեզ, ինչպես դստերս: Ուզո՞ւմ ես»: «Ես հավատում եմ Հիսուսին,– պատասխանեց աղջիկը,– նա է իմ փրկիչը, և ես սիրում եմ նրան: Ես չեմ կարող անել այն, ինչ դու կամենում ես, նույնիսկ, եթե սպանես ինձ»: Նույն պահին հրեշը սրով հարձակվեց երեխայի վրա և կտրեց ու ծակեց նրա մարմինը 12 տարբեր տեղերում: Թե ինչ հետևեց դրան, հայտնի չէ: Տունը թալանվեց և հրկիզվեց հոր դիակի հետ մեկտեղ: Նույն երեկո, սակայն, քաղաքի այլ թաղամասում մի սայլ անցավ այն տան մոտով, որտեղ աղջկա մայրն էր: Մի հարևան՝ նրան մտերիմ մի թուրք, ներս մտավ ու ասաց. «Ես քեզ բերել եմ քո փոքրիկ դստեր դիակը: Դու իմ ընկերն ես, և ես չէի կարող նրան այնտեղ ընկած թողնել: Ես ցավում եմ, որ նման բան է կատարվել»: Մայրն իր ձեռքն առավ անգիտակից

մարմինն ու նկատեց, որ նրա մեջ դեռ կյանք կար: Կանչեցին մի վիրաբուժի: Նա գիտակցության բերեց երեխային, և նա այժմ ապաքինվել է: Նա հետագայում տեղափոխվեց Կոստանդնուպոլիս, իսկ այնուհետև՝ Գերմանիա, և ներկայումս ապրում է Մայնի Ֆրանկֆուրտում:

Ես կարող եմ դեռ բազմաթիվ նման պատմություններ պատմել, և արժի գրել հայ եկեղեցու մարտիրոսական գործողությունների մասին, որն այդքան հազարներ ավելացրեց բոլոր ժամանակների՝ արյան վկաների թվին:

Երբ հազարավոր հայեր իրենց հավատի համար գիտակցված մահվան էին գնում, ո՞վ կզարմանա, որ այլ հազարավորներ սոսկալի սպառնալիքների ներքո, արյունահեղությունների սարսափների միջով հասցվում էին այն հուսահատ վիճակին, որ փորձում էին առերևույթ կրոնափոխության միջոցով փրկել իրենց և մերձավորների կյանքն ու պատիվը: Այո՛, արդյո՞ք այդ տարաբախտները, որոնց թվում մեծամասնություն են կազմում այրիներն ու որբերը, ավելի արժանի չեն մեր կարեկցությանը, քան սպանվածները, որ իրենց մահով կարողացան Աստծուն փառաբանել: Կարդանք մի բարձրաստիճան հայ հոգևորականի հետևյալ նամակը՝ ուղղված իր ընկերոջը. «Շնորհակալությամբ և արցունքներով կարդացինք Ձեր հայրական նամակի մխիթարական բառերը: Այնուհանդերձ, մենք բոլորս այս պահին իսլամ ենք ընդունել՝ վախենալով տանջամահ լինելուց: Նաև ես՝ Ձեր նվաստ ծառան, 70 տարեկանում արեցի դա: Այն բանից հետո, երբ ես բազմիցս կարծես հրաշքով խուսափել էի մահից և այլևս ելք չէի գտնում, առերևույթ հնազանդվեցի ու ընդունեցի նրանց հավատը, սակայն խնդրեցի, որ, նկատի առնելով իմ մեծ տարիքը, ինձ չթլպատեն: Նրանք ստիպեցին ինձ դա անել՝ սպառնալով հրաժարվելու դեպքում գլուխս թռցնել: Նրանք, բացի այդ, սպառնացին ինձ նաև սարսափելի խոշտանգումների ենթարկել, եթե համաձակվեի քրիստոնեության վերադառնալ, և ինչպես ինձ հետ են վարվում,

նույն կերպ վարվում են բոլոր քրիստոնյաների հետ: Ես կարող եմ Ձեզ վստահեցնել, որ եթե շուտով որևէ կողմից օգնություն չգա, այստեղ այլևս քրիստոնեություն չի լինի»:

Այո՛, այդպես է: Բոլոր այդ թշվառների համար այլևս հնարավորություն չկա՝ վերադառնալու իրենց հայրենի հավատին: Այն տասնյակ հազարավորները, ովքեր այժմ իրենց նախկին քրիստոնեական եկեղեցիներում մահմեդական արարողություններ են կատարում, այն բոլոր քահանաները, որոնց, նախկին պաշտոնը ծաղրելու համար, հարկադրում էին որպես, մոլլա կամ մուեզին, Մահմեդի անունը հնչեցնել, նրանք բոլորը պետք է մոռանան Հիսուսի անունից ծնկի իջնելը: Նրանք չկարողացան նույնիսկ իրենց քրիստոնեական անունները պահպանել: Հովհաննեսները, Պետրոսներն ու Մատթեոսները վերածվեցին Մուստաֆաների, Ահմեդների, Աբդուլլաների: Խորամանկ թուրքերը լավ էին հասկանում, որ բռնի մահմեդականացվածներն ավելի նպաստավոր ժամանակներում դարձյալ կարող էին ուրանալ, և շրջահայացորեն իրենց ապահովում էին իսլամի սրբության հանդեպ նման դավաճանությունից: Ամենաճշգրիտ միջոցը գտան Այվոսի թուրքերը, որոնք քրիստոնյա քահանային, որին ստիպել էին բարձրանալ մինարեթը և որպես մուեզին հավատացյալներին աղոթքի կանչել, հենց նա ցած իջավ, գնդակահարեցին: Իրենց կրոնափոխվածների հոգու փրկության համար նմանապես մտահոգված էին նաև Խամուրիի թուրքերը, որոնք թլպատման համար ծնկի իջած քրիստոնյաներին այդ հանդիսավոր արարողության ժամանակ սպանեցին: Բլուր գյուղի (Բաբերդի գավառ) բնակիչները նույնպես իսլամն ընդունելուց հետո իսկույնևեթ դրախտ ուղարկվեցին: Մի՞թե գթասրտություն չէր նրանց սպանելը, քանի որ, ինչպես թուրքերն էին պնդում, վտանգ կար, որ նրանք կարող էին սրտի խորքում քրիստոնյա մնալ, հետագայում նորից վերադառնալ իրենց հավատին և զրկվել դրախտային երանությունից:

Կատարված կրոնափոխությունն անշրջելի դարձնելու մի նվազ արմատական, բայց ավելի սրամիտ մեթոդի մասին է հաղորդվում բազմաթիվ գյուղերից ու քաղաքներից, որտեղ նորաթուխ մահմեդական ընտանիքներին ստիպում են իրենց նոր հավատակիցների հետ ազգակցական կապեր հաստատել: Քրիստոնյա քահանաներին պետք է միայն երկու կամ երեք թրքուհու հետ ամուսնացնել՝ նրանց իրենց նախկին մասնագիտության ոլորտում մեկընդմիշտ անպիտան դարձնելու համար: Արդյոք հիմք ունե՞ն նրանք բողոքելու, երբ դրա փոխարեն մոլլաները սիրալիրաբար նրանց կանանց իրենցից զատում են և տանում սեփական հարեմը: Երբ իրենց հավատակիցների կողմից հոգ էր տարվում այն մասին, որ իրենք, բազմություններով, չալմաներով ծածկված, տարվեն մզկիթներ և ամենաբծախնդիր կերպով խստությամբ վարժեցվեն նամազի (աղոթք) բոլոր կանոններին, էլ ո՞վ կարող էր կասկածել նրանց կրոնական նախանձախնդրությանը: Վա՜յ նրան, ով իր ծիսական պարտականություններում մի բացթողման պատճառով մեղք է գործում: Այլ պատրվակի կարիք չկա՝ նրան՝ որպես ծպտյալ հավատուրացի, մահվան գիրկն ուղարկելու համար: Դանդաղկոտների և կասկածյալների մոտ պահակներ են կարգվում, որոնք զօրուգիշեր պետք է վերահսկեն նրանց հոգու փրկությունը:

Իշխանությունների վարքագիծը պակաս մարդասիրական չէր, քան ամբոխինը: Իսկ ուրիշ ի՞նչ պետք է նրանք անեին, երբ մնում էր ընտրել միայն մահվան և իսլամի միջև, եթե ոչ՝ հնարավորինս հետևողականորեն խորհուրդ տալ ընտրել երկրորդը, գումարած դրան, որ ներկա համաշխարհային իրադրության՝ նրանց քաղաքական ընկալումը նրանց այն համոզմանն էր բերում, որ քրիստոնյաներն արտաքին որևէ ուժի կողմից ոչ մի պաշտպանություն չէին կարող ակնկալել: «Մի՛ ապավինեք քրիստոնյաներին,– ասում էին Զելայի թուրք իշխանավորները հայ երևելիներին, որոնց կառավարություն էին կանչել՝ հավատափոխման դրդելու

համար,– մի՛ ապավինեք Եվրոպայի քրիստոնյաներին: Անգլիացիներն իրենց նավատորմի հետ փախել են, իսկ ռուսներն իսլամ են ընդունել» (անկասկած, ռուս-թուրքական դաշինքի կեղծ ըմբռնում): Արդյո՞ք Այնքապի նահանգապետը սոսկ իր պարտականությունը չի կատարել, երբ կարգադրեց քրիստոնյաներին ասել, որ այժմ կյանքի և ունեցվածքի ապահովության միակ երաշխիքը մահմեդականություն ընդունելն է: Եվ ո՞վ Արաբկիրի կառավարական մարմիններին պատասխանատու կդարձնի տասնութժամյա կոտորածի համար, որի ժամանակ 4 000 քրիստոնյաներ սպանվեցին, 3700 տուն և 500 խանութ թալանվեց: Չէ՞ որ նրանք երկու օր առաջ հայ երևելիներին կանչել էին կառավարություն և ասել. «Եթե ցանկանում եք ողջ մնալ, պետք է իսլամն ընդունեք»: Հայ երևելիները հարցում կատարեցին իրենց քրիստոնյա համաքաղաքացիներին, և նրանք հայտարարեցին. «Մենք չենք ցանկանում մեր հավատը փոխել, թող կառավարությունը մեզ հետ վարվի այնպես, ինչպես ուզում է»: Երբ հաջորդ օրը սկսվեց կոտորածը, արդյո՞ք ով էր դրա համար մեղավոր, եթե ոչ հայերը՝ կրոնի հարցում իրենց խռովարար համառությամբ: Կարելի է կասկած տածել՝ արդյոք Թուրքիայի նահանգային իշխանություններին ծանոթ է փարիզյան պայմանագրի վերը հղված հատվածը՝ «*ոչ ոք չպետք է հարկադրվի հրաժարվել իր հավատից*», քանի որ Կոստանդնուպոլսի կենտրոնական կառավարությունը նույնպես կարծես թե այլևս չի հիշում դա: Բայց մի բան հստակ է, որ ինչպես նահանգային իշխանավորները, այնպես էլ մայրաքաղաքի փաշաները միանշանակ գիտեն, որ քրիստոնյա մեծ տերությունների դեսպանների մոտ որոշ ավելորդ գրքեր կան, որոնցում կարելի է կարդալ որոշ ավելորդ պայմանագրերի հոդվածներ: Այժմ նորին մեծություն սուլթանի կառավարությանը ցանկացած հնարավոր դժվարությունից զերծ պահելու համար (քանի որ գավառներում ևս լավ հոտառություն ունեն պալատի ցանկությունների նկատմամբ) այդ հավատարիմ և հեռատես իշխանավորներն արդեն վաղուց

իրենց կրոնափոխված հավատակիցներին ստիպել են զանգվածաբար ստորագրել տեղեկանքներ այն մասին, որ կրոնափոխությունը նույնքան օրինական է ընթացել, որքան այդ տեղեկանքների ստորագրումը, և որ քրիստոնյաները բոլորը միասին ինքնակամ են իսլամն ընդունել, քանի որ գիտակցել են մահմեդական կրոնի առավելությունները:

Ի՞նչ կկամենան այժմ քրիստոնյա մեծ տերություններն անել իրենց հավերժական դիվանագիտական նոտաներով: Եվ ո՞վ կարող է դեռ կասկածի տակ առնել Բարձր դռան հավատարմությունը պայմանագրին:

4. Կոտորածների կազմակերպումը քաղաքացիական և զինվորական իշխանությունների կողմից

Ութ մեծ նահանգներով տարածվող կոտորածների կազմակերպումը, գրեթե անմնացորդ կողոպուտի իրականացումը, բացի այդ՝ մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի բռնի կրոնափոխությունը (եթե նկատի առնվի, որ խնդիրն ընդսմին ոչ թե բացահայտ պատերազմի վարման մասին է, այլ ամենախաղաղ իրադրությունում իրագործված զանգվածային թալանի ու կոտորածի, որոնց մտադրվածությունը պետք է գաղտնի մնար, և որոնց հետքերը պետք է հնարավորինս արագ անհետացվեին) հարցեր են, որոնք եթե պետք է հաջողվեն, ապա հաշվարկեն, շրջահայեցության և կազմակերպչական տաղանդի ավելի մեծ չափաքանակ կպահանջի, քան նույնիսկ պատերազմի համար կատարվող մոբիլիզացիան: Պետք է ընդունել, որ հայկական կոտորածների մտահղացողներն ու ռեժիսորները իրենց ունակությունների մի փայլուն ապացույց են ներկայացրել և գործի դրել նույնիսկ թուրքական պետության պատմության մեջ հազվադեպ հասանելի դարձած «չար հանճարին»:

Ովքե՞ր էին մտահղացողները. այս հարցը մեր սույն հետազոտության այս փուլում դեռ վերջնական պարզաբանում չի ստացել: Ովքե՞ր էին ռեժիսորները. այս հարցին ընթերցողն ինքն արդեն պետք է պատասխանած լինի առաջին գլխում փաստական նյութի ներկայացումից հետո: Այն, որ քաղաքացիական և զինվորական իշխանությունները կոտորածների նախապատրաստման, սկսելու և անցկացնելու ժամանակ բոլոր թելերն իրենց ձեռքում էին պահում, և որ չտեսնված չափերի հասնող չարագործությունների ու ոճիրներից ոչինչ առանց նրանց թույլտվության, կարգադրության, մասնակցության կամ հետին թվով տրված հավանության չէր կատարվում, յուրաքանչյուրի համար, ով հայացք է նետել փաստերին, այնքան ակնհայտ է, որ դա վիճարկելը կնշանակեր չցանկանալ ծառերից առաջ անտառը տեսնել: Իրենց ընթերցողների անգիտության անպատկառ չարաշահում կամ լիովին անբավարար տեղեկությունների ապացույց է, երբ եվրոպական մամուլի հայտնի պարբերականները ձևացնում են, թե իբր հայերի հեղափոխության մասին հեքիաթը կամ կոտորածներու տարածքում տեղի ունեցած հայկական սադրանքների մասին առասպելները դեռ կարող են պահպանվել, և թե իբր իշխանությունների կողմից կոտորածների ծրագրված նախապատրաստման ու իրագործման փաստի հանդեպ դեռ ավելի երկար կարելի է աչք փակել:

Ցավալի է, որ գերմանական մամուլը մանրամասն գիտելիքներ չի քաղել դեռ այս տարվա փետրվարին անգլիական «Կապույտ գրքում» (Turkey № 2, 1896) հրապարակված՝ դեսպանների զեկույցի բավականաչափ ծավալուն տեղեկություններից և պարզաբանումներից: Դրանց ուշադիր ընթերցումն արդեն իսկ վաղուց կարող էր վերացնել հայկական կոտորածների սանձազերծման մասին տարակարծությունները:

Քաղաքացիական և զինվորական իշխանությունների առաջադրանքները կոտորածների կազմակերպման ժամանակ տար-

բեր էին: Զինվորական իշխանությունների առաջադրանքը պարզ էր: Նրանք սկզբում գաղտնի պետք է զինեին ամբոխին, հրավիրված պահեստազորայիններին, քրդական և չերքեզական հրոսակախմբերին, որչափ վերջիններս դեռ չէին սպառազինվել, հրահանգների ուղարկման միջոցով պետք է նպաստեին զինված թուրք բնակչության հետ անկանոն զորքերի, քրդական համիդեական գնդերի ու ժանդարմերիայի համերաշխ գործելակերպին և կանոնավոր զորքերով միջամտեին միայն այնտեղ, որտեղ կա՛մ հայերի կողմից դիմադրության հանդիպելու վտանգ կար, կա՛մ ամբոխի սկզբնական երկչոտության պատճառով կոտորածը հունի մեջ չէր ընկնում, կա՛մ այն ձախողվում էր հարձակվողների թուլության և պաշտպանվող հայերի ուժերի գերազանցության պատճառով: Այնտեղ, որտեղ հայերն իրենց գյուղերի և թաղամասերի բարիկադավորմամբ որոշում էին ինքնապաշտպանության դիմել, ինչը միայն հազվադեպ էր լինում և հարձակումների հանկարծակիության պատճառով հազվադեպ էլ հնարավոր էր, հետագայում նրանց հետ էլ ավելի վատ էին վարվում, ինչպես Կյուրինում ու Դիարբեքիրում: Առանձին դեպքերում, երբ վախենում էին, որ զինվորականությունն արդեն չափազանց համերաշխ հարաբերություններ ուներ քրիստոնյա բնակչության հետ, կոտորածներից անմիջապես առաջ զորամասերի վերաբաշխումներ էին ձեռնարկվում, կամ, որտեղ կայազորը շատ թույլ էր, համալրումներ էին կատարվում: Նույնիսկ կոտորածների սանձազերծման ժամանակ դարձյալ կարգուկանոն հաստատելու անհրաժեշտությունը լավագույն պատրվակներն էր ընձեռում՝ հայկական թաղամասերը գրավելու, գյուղերում զորք տեղակայելու, պահեստազորը (ռեդիֆներ) ոտքի հանելու և անկանոն զորախմբերը այս ու այն կողմ տեղաշարժելու համար, որպեսզի հետո հարմար պահին հարձակման հրամանը տրվեր: Առերևույթ բնակչության պաշտպանության նպատակով մի որևէ վայրում նրանց տեղակայումից մինչև կոնկրետ հարձակումն ընկած ժամանակամիջոցում զինվո-

ռականությունը ռեդիֆներին և զապթիեներին օգտագործում էր իրենց պաշտպանյալներից ամենաշահավետ կորզումների և վերջիններիս շարունակական պատվազրկումների համար: Ավերածությունների և կողոպուտի ավարտից հետո զինվորականությունը միայն այս ու այնտեղ հետքերի վերացման աշխատանքներում էր ներգրավվում:

Քաղաքական իշխանությունների առաջադրանքն անհամեմատ ավելի բարդ էր, քանի որ նրանք երկու ճակատով պետք է գործեին: Մահմեդական բնակչության հանդեպ նրանք պետք է ստանձնեին կոտորածների հրահրումը, դրանց սանձազերծման նախապատրաստումը և բոլոր չարագործությունների համար անպատժելիության երաշխավորումը, մինչդեռ քրիստոնյա բնակչության և հատկապես հյուպատոսությունների հանդեպ, որքանով կարող էին հաջողեցնել, անձամբ անմեղ էին ձևանում, իրենց պաշտպանության կեղծ խոստումներով զոհերին կասկածներից զերծ էին պահում մինչև արյունահեղության՝ նախապես որոշված օրը և ենթգ միջոցներով փորձում էին նրանց անակնկալի բերել մի իրավիճակում, որում հարվածը նրանց հնարավորինս հանկարծակի, հուսալի և սաստկորեն կհասցվեր: Թուրքական պաշտոնական վիճակագրությամբ հաստատված այն փաստը, որ մորթված հայերի բազմությունների համեմատ միայն շատ չնչին կորուստներ կան թուրքերի կողմում (փաստ, որի վերաբերյալ դեսպաններին զեկույցն արդեն իսկ կասկած չէր թողնում) կլիներ բացարձակ հանելուկ, եթե անիծյալ լուծումն այնքան պարզ չլիներ:

Կոտորածների ամբողջ տարածքում, որտեղ հայերի կողմից դիմադրության վտանգ կար, իշխանությունները դիմեցին շատ պարզ դեղատոմսի. իշխանության կողմից ամեն տեսակի պաշտպանությունից զրկելու սպառնալիքի ներքո ամբողջովին զինաթափեցին հայերին: Չնայած պետական օրենքով քրիստոնյաներին և հենց միայն քրիստոնյաներին արդեն իսկ արգելված էր զենք կրել, բայց մի երկրում, որտեղ կառավարությունը ոչ մի կերպ չի

ապահովում իր քրիստոնյա հպատակների անվտանգությունը, իսկ կարգուկանոնի պահապանները բավական հաճախ ավազակների ու բանդիտների հետ միաբան են, իշխանությունների կողմից պետք է հանդուրժվեր զենք պահելը (բացառությամբ լիցքավորված հրացանների): Եթե ցանկանում էին հարձակվող մահմեդական բնակչությանը զերծ պահել արյունահեղությունից, ինչը իշխանություններն իրենց բոլոր միջոցառումների ժամանակ մեծ բարեխղճությամբ աչքի առաջ ունեին, ապա, մի կողմից, քրիստոնյա բնակչությունը պետք է զինաթափվեր, մյուս կողմից՝ հոգ տարվեր մահմեդական բնակչության բավարար զինման համար: Երկուսն էլ տեղի ունեցան համակարգված և հիմնովին: Իշխանությունների ձեռքով հայերի զենքերը փոխանցվեցին թուրքերին, իսկ որտեղ դրանք չէին բավականացնում, բնակչության զինման համար օգտագործվեցին նաև զինանոցները: Ըստ հանգամանքների՝ պարզապես տեղեկացվում էր, որ յուրաքանչյուր մահմեդական, որը քրիստոնյայի մոտ զենք կհայտնաբերեր, իրավունք ուներ այն վերցնելու իրեն: Ընդհանուր առմամբ հայերը հենց միայն երկյուղի պատճառով անհապաղ հնազանդվում էին իշխանությունների կարգադրություններին և հանձնում իրենց զենքերը: Չնայած նրանք, որպես կանոն, դա անում էին այն պայմանով, որ մահմեդականները նույնպես պետք է զինաթափվեն, և նրանց թեպետ մեծ մասամբ այդ խոստանում էին, բայց ոչ մի եզակի դեպքում անգամ դա չկատարեցին: Մենք տեղյակ ենք միայն մի բնակավայրի՝ Գերմուշի մասին, որի բնակիչները հրաժարվեցին հանձնել իրենց զենքերը, և որտեղ նրանք նախընտրեցին իրենց գլուխները միանգամից կառավարության ոտքերի առջև դնել՝ կտրելու:

Երբ այսպես իշխանությունների իմաստուն միջոցառումների շնորհիվ առաջիկա կոտորածների հնարավորություններն այնպես էին բաշխվել, որ հարձակվող մահմեդականների կողմում նվազագույն ռիսկի դիմաց հարձակման ենթարկվող հայերի կող-

մում առկա էր առավելագույն անպաշտպանությունը, իշխանավորներին մնում էր միայն կոտորածների մեկնարկի համար ամենանպաստավոր պահն ընտրելու պարտականությունը: Այն բանից հետո, երբ անկարգությունների սկզբում իշխանությունները շատ ջանքեր էին թափել կոտորածների նախապատրաստմանն իրենց մասնակցությունը հատկապես հյուպատոսներից քողարկելու համար (դրա շնորհիվ է, որ դրանում մեծ դերակատարություն ունեցած մի քանի պաշտոնյաների մասին դեսպանների զեկույցում լավ ցուցմունք է տրվում), հետագայում նրանք համարձակորեն ասպարեզ եկան և կոտորածների ղեկավարումն անձամբ իրենց ձեռքն առան: Քանի որ հայերի կողմից սաղրանքներ չկային, առանձին դեպքերում, ինչպես օրինակ՝ Սվազում, որտեղ մի քանի երևելի թուրքերի պատուհանների ապակիները կոտրել տվեցին, անհրաժեշտ են համարել այդպիսիք ի հայտ բերել: Բավարարվում էին՝ կեղծ լուրեր տարածելով, որոնք, չնայած իրենց միօրինակ կրկնումներով և ծիծաղելի անհավանականությամբ չէին կարողանում հավատ ներշնչել, բայց պատրվակ էին ընձեռում՝ հայերի հետ դաժանորեն վարվելու, ձեռնարկելու մարդկանց ձերբակալություններ, որոնց նախապես ցանկանում էին մաքրել ճանապարհից, և կտրուկ միջոցառումներով հասնելու քրիստոնյաների զինաթափմանը: Այն ուղղակի խելառ պնդումը, որ տարածվեց տարբեր քաղաքներում, թե հայերը ուրբաթօրյա աղոթքի ժամանակ կրակել են մզկիթների վրա, շատ պարզորեն բացատրվում է նրանով, որ մզկիթներում հենց իրենք՝ մահմեդականները, հրահրվելով մոլլաների կողմից, կրակոցներ են արձակել՝ այդպիսի ասեկոսեները հիմնավորելու համար: Որպես կանոն, հենց ուրբաթօրյա աղոթքից անմիջապես հետո էլ կոտորածների մեկնարկը տրվում էր, երբ հայերը, որևէ հարձակման չսպասելով, հանգիստ նստած էին շուկայի իրենց խանութներում: Խորամանկության ու նենգության չափը, որն իշխանությունների կողմից գործադրվեց հայերին, որոնք առաջին խուճապից հետո մեծ մա-

սամբ վերադարձել էին իրենց թաղամասերը և փակել իրենց խանութներն ու կրպակները, առևտրի վերսկսմանը և խանութների վերաբացմանը դրդելու համար, իր ստորությամբ հաճախ գերազանցում է նույնիսկ բիրտ սպանդը: Միայն այն ժամանակ, երբ բացարձակապես վստահ էին լինում, որ հայերը հարձակման դեպքում լիովին անպատրաստ և անպաշտպան էին, տրվում էր հարձակման երկար սպասված ազդանշանը հաճախ անմիջապես այն բանից հետո, երբ հայերը, խաբվելով կառավարության պաշտոնյաների հորդորներից և շողոքորթ կեղծիքներից, վերսկսել էին առևտուրը: Կոտորածի համար հաճույքով ընտրվում էր մի՝ շուկայի օր, որպեսզի այնտեղ մտած թուրք գյուղական բնակչությունը կարողանար մասնակցել թալանին: Չնայած դրան՝ շրջակայքում բնակվող քրդական և չերքեզական ցեղերը ժամանակին համապատասխան հրահանգներ էին ստանում:

Շուկայի տարբեր կետերում և քրիստոնեական թաղամասերում հարձակման միաժամանակությունը հնարավոր դարձնելու համար մի շարք քաղաքներում, ինչպես օրինակ՝ Տրապիզոնում, Բիթլիսում, Գյումուշխանեում, Էրզրումում, Խարբերդում և այլն, հարձակման ազդանշանը տրվում էր շեփորի կանչով, Ուրֆայում՝ մինարեթից կանաչ դրոշի ծածանումով:

Կոտորածներին և թալանին կանոնավոր զորքերի մասնակցությունը ապացուցվել է Տրապիզոնում, Էրզրումում, Բաբերդում, Խարբերդում, Մալաթիայում, Արաբկիրում, Երզնկայում, Սղերդում, Քենքյոյում, Մեզրեում, Սվազում, Թոքատում, Մարզվանում, Ամասիայում, Դիարբեքիրում, Ուրֆայում, Մարաշում, Ենիճեկալեում, Բիրեջիքում և բազմաթիվ այլ երկրամասերում: Կոտորածների ղեկավարումը մեծ մասամբ ստանձնում էր զինվորականությունը: Իշխանությունների կողմից կարգուկանոնի պահպանման համար (՞) ներգրավված ռեդիֆները (պահեստազորայիններ) նույնպես ամենուր ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում թալանին ու կոտորածներին: Զապթիեները (ժանդարմներ) չէին թե-

բանում հետևել նրանց օրինակին: Բայց ոչ միայն շարքայինները, նաև նույնիսկ ամենաբարձր կոչում ունեցող սպաներն էին մասնակցում բնակչության հրահրելուն և ամենից առաջ՝ թալանին ու ավարառության, ինչպես դա արդեն իսկ տեղեկացվել է դեսպանների զեկույցի միջոցով:

Որպես իշխանությունների՝ մեր կողմից մատնանշված վարքագծի ապացույց արդեն իսկ մեր առաջին գլուխներում բավականաչափ նյութ է ներկայացվել: Մեղադրական նյութն ընդարձակ ներկայացնելու համար մենք պետք է պատմեինք բոլոր հիմնական կոտորածների մանրամասն պատմությունը, ինչը, սակայն, նվազ նպատակային կլիներ, քանի որ դրանք բոլորն իրականացվեցին միօրինակ մեթոդով և իրար այնքան նման էին, ինչպես մի ձուն մյուսին: Այդ պատճառով մենք սահմանափակվում ենք՝ մեր վերոնշյալ շարադրանքին մի շարք բնորոշ պատկերներ ավելացնելով: Դեսպանների զեկույցից հղումները ներկայացնում ենք չակերտներով:

Տրապիզոնում հայ արքեպիսկոպոսը կոտորածների մեկնարկից առաջ պատգամավորներ ուղարկեց *վալի Քադրի բեյի* մոտ՝ պաշտպանություն խնդրելու համար: Վերջինս երդվեց, որ ոչ ոք չի համարձակվի հայերի վրա հարձակվել՝ ասելով՝ ով ցանկանա հարձակվել ձեզ վրա, նախ պետք է անցնի իմ դիակի վրայով: Այնուամենայնիվ, նա հանդուրժում էր այն, որ մահմեդականները երեք օր շարունակ զենքի մեծաքանակ գնումներ էին կատարում, մինչդեռ ոստիկանությունը խանգարում էր հայերին նույնն անել: Կրկնվող ներկայացումներով վալին դարձյալ հանգստացնում էր հայերին, սակայն հետո՝ կոտորածի մեկնարկից կարճ ժամանակ առաջ, նրանց հայտարարեց, որ եթե իրենք երկու փաշաների վրա հարձակման մեջ մեղադրվող երկու անձանց չհայտնաբերեին, նրանց համար անվտանգ չէր լինելու: Կոտորածի ժամանակ իսկ վալին հրահանգներ էր տալիս՝ մատնանշելով առանձին երևելի հայերի, որոնց պետք է առաջին հերթին սպանեին: Կոտորածի

եզրափակումից հետո նա հրամայեց դատարկել հայերի խանութներն ու տները ձայնեկով. «Լավ, իմ ռազմիկներ, հիմա սկսվում է մեծ թալանը»: Մինչ թուրք բնակչությունն *Էրզրումում* միանգամայն բացահայտորեն կոտորածին էր նախապատրաստվում, «իշխանությունը, հակառակ հյուպատոսների՝ նրան կանխիչ միջոցառումների մղելու ջանքերին, զբաղված էր բացառապես հայերին ձերբակալելով»:

Մարշալ Զեքի փաշան Երզնկայում ամբոխին քաջալերում էր կատարել ամենամեծ ոճրագործությունները՝ հայ երևելիներին միանգամայն պարզորոշ հայտարարելով. միայն Ռուսաստանը կարող էր օգնել ձեզ՝ հայերիդ, սակայն այժմ Թուրքիայի բարեկամն է: Մյուս տերությունները՝ Անգլիայի հետ միասին չեն կարող ձեզ իրական օգնություն ցույց տալ: Ռուսաստանի բարեկամության շնորհիվ մենք կարող ենք ձեզ առանց որևէ մտահոգության ոչնչացնել, և կարող եք վստահ լինել, որ մենք չենք թերանա անել դա:

Նույն քաղաքի իշխանությունները կոտորածի մեկնարկից քիչ առաջ հայերին դրդեցին կրկին բացել իրենց խանութները: Օրը նախապես հաստատված էր, հարձակումը սկսվեց բարձրաստիճան պաշտոնյաների ղեկավարության ներքո, որոնք ամբոխին կոչ էին անում սպանել գյավուրներին և չվախենալ ոչնչից:

Խարբերդում և շրջակայքում *վալի Մուստաֆա փաշան* և *զինվորական հրամանատար Ռագիբ փաշան* կազմակերպեցին կոտորածը՝ թուրքերին զենք բաժանելով: Նրանց աչքերի առջև Խարբերդի կայազորը նռնակահարումով և հրաձգությամբ մասնակցեց հայկական թաղամասը մոխրի վերածելուն: «*Դիարբեքիրի վալի Անիզ փաշան* բացահայտ թշնամանք էր ցուցաբերում քրիստոնյաների նկատմամբ և Ֆրանսիայի հյուպատոսին, որը նրա ուշադրությունը հրավիրում էր մահմեդականների շրջանում անհանգստացնող լարվածության վրա, հայտարարեց, թե նրանց

կողմից ինքը վտանգ չի տեսնում, և որ ինքը երաշխավորում է կարգուկանոնը:

Սվազի վալին վիլայեթում անկարգությունների մեկնարկի ժամանակ «չկարողացավ Բարձր դռան կողմից ազդեցիկ միջոցառումներ ձեռք առնելու լիազորություն ստանալ»:

Հալեպում «հյուպատոսների բողոքները իշխանությունների կողմից բացահայտ անտարբերությամբ ընդունվեցին, դրանք ձախողվեցին՝ հանդիպելով *վալի Հասան փաշայի*՝ ամեն ինչ հնարավորինս լավատեսորեն ներկայացնելու վճռականությանը»:

Ուրֆայում դեկտեմբերի 28-ի մեծ կոտորածի նախապատրաստությունները ղեկավարում էր *մութասերիֆ Հասան փաշան*, իսկ զինվորական հրամանատար *Նազիֆ փաշան* անձամբ տվեց հայկական թաղամասի վրա հարձակման ազդանշանը. նույն ինքը, ով հայտարարում էր, թե լինելով Բուլղարիայում՝ ինքը գիտի՝ ինչպես պետք է վարվել խռովարար հպատակների հետ:

«*Ադանայի վալին՝ Ֆալք փաշան*, կարգուկանոնը պահպանելու միջոցառումներ ձեռնարկելու փոխարեն շրջագայություն կատարեց վիլայեթում և ձևացնում էր, թե տեղյակ չէր այն ամենից, ինչ կատարվում էր: *Դեսթերդար Մեհմեդ Իդաղը*՝ նրա տեղակալը, անմեղ քրիստոնյաների հանդեպ անհիմն գործողություններով էլ ավելի էր բորբոքում գրգռվածությունը»: Չնայած ամենուրեք, որտեղով իր շրջագայության ժամանակ անցնում էր վալին, սկսվում էր կողոպուտը, նա ֆրանսիական ռազմանավի հրամանատարին վստահեցնում էր, որ իր վիլայեթում կարգուկանոնը ոչ մի տեղ չի խաթարվել: Նույն ինքը Մսիսի քահանային զնդան նետել տվեց, քանի որ նա իրեն հեռագրով գանգատվել էր եկեղեցու թալանի առնչությամբ:

Ամասիայում վալին՝ ծագումով *չերքեզ*, խուսափում էր կոտորածի կարգադրություն տալ: Թուրք զինվորական հրամատարն ու սպաները քիչ էր մնում նրան այդ պատճառով սպանեին և ստիպեցին կատարել հրամանը: Մի հայտնի թուրք ասաց մի բարձ-

բաշխարհիկ քրիստոնյա տիկնոջ՝ արյունահեղության հրամանն ավելի վաղ է տրվել, բայց այստեղի թուրքերը չէին համարձակվում հարձակվել, իրենց կարծիքով, լավ զինված հայերի վրա: Այս պատճառով նախնառաջ ավելացրին զորքը, որի աջակցությամբ այնուհետև թուրք բնակչությունը վճռեց հարձակվել:

Իզմիրի մութասերիֆը մեկնեց Ակ-Հիսարի կոտորածի վայրը և այնուհետև մի պաշտոնական զեկուցագրում հայտարարեց, թե տեղի ունեցածը աննշան բան է:

Հայկական բարեգործությունների հարցում քվեարության միջոցով լիազորված՝ *Բարձր դռան կոմիսար Շաքիր փաշան* ճամփորդեց *Տրապիզոնի* վիլայեթում, և որտեղով նա անցնում էր, սկսվում էին ջարդերը:

Վանում վերջին կոտորածը 1896 թ. հունիսի 14-22-ին բեմադրվեց սուլթանի հատուկ բանագնաց, *Բարձր դռան կոմիսար Սաադեդդին փաշայի* կողմից: Նա մեղադրեց վալի Նազիմ փաշային անտարբերության և անգործունեության մեջ և կապ հաստատեց տխրահռչակ քուրդ շեյխ Շեքիրի հետ, որը պետք է կազմակերպեր ջարդերը գյուղական շրջաններում: Սասունում իր գազանություններով հայտնի *Մայոր Հալիմ էֆենդիին* հանձնարարվեց, մի ուժեղ զորամիավորման գլուխ անցած, հարձակվել հայկական Այգեստան թաղամասի վրա, ընդ որում՝ քաղաքի վրա իշխող բլուրներից մեկից նրան աջակցում էին թնդանոթաձգությամբ: Ամբոխի բազմություններին նա ոգևորում էր՝ կանչելով. «Դե՛, զավակնե՛րս, նախ կոտորե՛ք բոլորին, ապա կարող եք հանգիստ կողոպտել ու թալանել»:

Երբ *Մալաթիայում* անկարգությունները սկսվեցին, բողոքական համայնքի երկու հեղինակավոր տղամարդիկ՝ դատարանի անդամներ, իրենց երկու որդիների հետ շտապեցին քաղաքի *մութասերիֆի* մոտ և պաշտպանություն խնդրեցին: Նա պատասխանեց. «Ես չեմ կարող ձեզ պաշտպանել»: Նրանք պաշտպանություն խնդրեցին իրենց որդիների համար, նա պատասխանեց՝

նրանց ուղարկեք զորանոց: Տղամարդիկ հեռացան, նույն պահին մութասերիֆը ծառայությունը կատարող զապթիեին մի նշան արեց, և երկուսն էլ գնդակահարվեցին կառավարական շենքի բակում: Երկու պատանիները խնդրում էին խնայել իրենց կյանքը: Երբ մեկը փախավ, գնդակահարվեց, մյուսը հանդիպեց մի քրդի, որը նրանից փող պահանջեց: Նա տվեց 65 պիաստր և այնուհետև նույնպես գնդակահարվեց:

Քենքյոյում զինվորական հրամանատարը տները հրկիզելու համար նավթ բերել տվեց: *Ենիճեկալեի* շրջանում զորքերը սպանների հրամանատարությամբ հարձակվեցին Մուջուկ-Դերեսիի հուրատան վրա, սպանեցին հայր Սալվադորին և Ենիճեկալեում հրի մատնեցին բոլոր տներն ու Ֆրանցիսկյան վանքը: Դեռ երեկոյան հայր Սալվադորը մի թուրք սպայի՝ կառավարության կողմից իր մոտ ուղարկված պահակախմբի ղեկավարի հետ էր, որին ինքը հյուրընկալել էր իր մոտ: Առավոտյան նա միաբանների հետ պետք է ներքև իջներ և կանգնեցվեց հետևյալ հարցի առաջ՝ մահմեդական դառնալ կամ մեռնել: Նա չցանկացավ ուրանալ իր հավատը և սվինահար արվեց, մասնատվեց ու հրկիզվեց:

«Փոքր-ինչ վարանելուց հետո *Սվազի* ֆրանսիական փոխհյուպատոսի մոտ որպես հսկիչներ ուղարկված զինվորները բարձրաձայն փնթփնթում էին, թե այդպիսով զրկվում են կոտորածին ու կողոպուտին մասնակցելու հնարավորությունից»:

«*Ալեքսանդրետի* նավահանգստով անցնող զինվորները բարձրաձայն պարծենում էին՝ կոտորածներին մասնակցելու համար»:

«*Էրզրումում* հավաքագրված ռեդիֆները, երբ պետք է մեկնեին՝ սուլթանի հրամանները կատարելու, հայտարարում էին, որ իրենք նախնառաջ պետք է երկիրը մաքրեին բոլոր քրիստոնյաներից»:

«*Հալեպում* նույնպես նրանք բացահայտ ասում էին, որ «եթե իրենց ստիպում էին հեռանալ իրենց տներից, ապա պետք է նաև

ազատություն տային՝ թալանելու և ոչնչացնելու քրիստոնյաներին»:

Տրապիզոնում տեսնում էին, թե ինչպես են *բարեշրջապտիճան սպաները* թալանված իրերը՝ սայլերի վրա բեռնված, տեղափոխում իրենց տները: Ժանդարմերիայի հրամանատարին տեսան արծաթով լի պարկերը ձիերով տանելիս:

Խարբերդում նույնիսկ վալի *Մուսրաֆա փաշան* իրեն ապահովեց ավարի մի մասով՝ չերքեզների մի ջոկատ քաղաքի շուրջ տեղակայելով և բռնագրավելով հատկապես արժեքավոր իրերը, որոնք ուզում էին թռցնել:

Զինվորական և քաղաքացիական իշխանությունների մեղքը վկայող այս բոլոր ապացույցները կարող են մինչև անսահմանություն բազմապատկվել: Մենք կարծում ենք, սակայն, որ մեր ընթերցողներին համոզելու համար այլևս հետագա քննության կարիք չկա, ուստի հայկական նահանգների թուրքական իշխանությունների դեմ մեղադրանքներն ամփոփում ենք հետևյալ կետերով.

I. *Քաղաքացիական և զինվորական իշխանությունները ոչ մի կերպ չեն խոչընդոտել մահմեդական բնակչության կողմից կոտորածների նախապատրաստումը՝ ոչ սեփական նախաձեռնությամբ, ոչ հայկական համայնքների ղեկավարների խնդրանքով, ոչ հյուպատոսների միջնորդությամբ:*

II. *Քաղաքացիական և զինվորական իշխանություններն անձամբ իրենց ձեռքն են վերցրել կոտորածների նախապատրաստումը՝ դրանց մեկնարկից առաջ ձեռնարկելով հետևյալ միջոցառումները.* 1) Նրանք հիմնավոր և համակարգված հարկադրում էին *հայ բնակչությանը զինաթափվել:* 2) Մահմեդական բնակչությանը *նրանք թույլատրում էին պահել իրենց զենքերը:* 3) *Նրանք,* բացի այդ, *թուրք և քուրդ բնակչությանն առատորեն զենք էին մատակարարում՝ մասամբ նաև ռազմական զինանոցներից:* 4) Մի քանի վալիներ և զինվորական հրամանատարներ

շրջագայություններ էին կատարում վիլայեթներում՝ բնակչությանը թալանի հրահրելու, զենքեր բաժանելու և քրդական ու չերքեզական ցեղերին հայկական գյուղերի ու քաղաքային թաղամասերի վրա հարձակման հրավիրելու և հրահանգավորելու համար: 5) Նրանք մոլորեցնում էին քրիստոնյա բնակչությանը՝ իրենց կողմից պաշտպանության հավաստիացմամբ, զորքերի տեղակայմամբ և ռեդիֆներին ոտքի հանելով, որոնք առերևույթ կարգուկանոնի պահպանման համար էին նախատեսված, իրականում, սակայն, հրահանգավորված էին մասնակցելու կոտորածներին և կողոպուտին: 6) Նրանք հնարավոր դարձրին շուկաների վրա հարձակումն ու թալանը՝ հայ քաղաքային բնակչությանը, երբ վերջինս սպառնացող կոտորածների երկյուղից իր խանութները փակել և տներն էր վերադարձել, կա՛մ վերահաստատված խաղաղության կեղծ պատրանքների ստեղծումով, կա՛մ կտրուկ հրամաններով և հարկադրական միջոցառումներով ստիպելով վերաբացել իր խանութներն ու կրպակները և վերսկսել առևտուրը:

III. *Քաղաքացիական և զինվորական իշխանությունները ամենաարդյունավետման պաշտոնյաների անձնական գործակցությամբ բազմիցս մասնակցում էին կոտորածներին, կողոպուտին և բռնի կրոնափոխությանը*՝ 1) կոտորածների մեկնարկի համար մի որոշակի օր և որոշակի ժամ սահմանելով, 2) ժամերի կամ օրերի մի հստակ միջակայք հաստատելով, որի ընթացքում ամբոխին, քրդերին և զինվորականությանը անպատիժ ազատություն կտրվեր սպանդի ու թալանի համար, 3) կոտորածները շեփորի ազդանշաններով կամ այլ նշաններով մեկնարկելով և եզրափակելով, 4) քրիստոնյա բնակչության՝ օգնության խնդրանքները մերժելով կամ խնդրատուներին ձերբակալելով, 5) ավելի բարձր իշխանություններին, մասնավորապես սուլթանին օգնության հայցերի և հեռագրային խնդրագրերի առաքումը խոչընդոտելով, 6) կոտորածներից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո հայերի բազմաթիվ ձերբակալություններ իրականացնելով, որոնք

առանց դատական վարույթի իրականացման մեծ մասամբ այժմ դեռ տառապում են բանտերում և հիմնականում սոսկալի խոշտանգումների են ենթարկվում, 7) զինվորականությանը, ռեդիֆներին, քրդերին և չերքեզներին կարգադրելով մասնակցել կոտորածներին, 8) իրենց ենթակա զորամասերի կամ ժանդարմների միջոցով ապահովելով ավարի իրենց բաժինը:

IV. *Եղելություններից հետո քաղաքացիական պաշտոնյաները փորձում էին քողարկել կամ արդարացնել կոտորածների և կողոպուտի փաստը՝* 1) հայերին սաղրանքների մեջ մեղադրելով, 2) կալանավորմամբ, մահվան կամ նոր ջարդերի սպառնալիքով հայ երևելիներից բացատրագրեր կորզելով այն բովանդակությամբ, որ հայերն էին մեղավոր անկարգությունների բռնկման մեջ, և որ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ վերահաստատվել է կարգուկանոնը, 3) կարգադրելով դիակների թաղումը և փորձելով հնարավորինս վերացնել ավերածությունների հետքերը, 4) խոչընդոտելով իրադրության մասին տեղեկությունների առաքումը՝ տուժածների նամակներն առգրավելու, հայերի մեկնումն արտերկիր խանգարելու և օտար թղթակիցների մուտքն արգելելու միջոցով, 5) այս ու այնտեղ կողոպտված ունեցվածքի առերևույթ վերադարձման կարգադրություններ անելով, ինչի արդյունքում միայն ամենաանարժեք իրերը՝ կորուստների հազիվ մեկ հարյուրերորդ մասն էր վերադարձվում, 6) չիրականացնելով կոտորածների, թալանի և բռնի կրոնափոխության դադարեցման հրամանները:

V. *Իշխանությունները ոչինչ չարեցին կոտորածների՝ ամբողջովին թալանված բնակչության համար ճակատագրական հետևանքները կանխելու համար*: 1) Կարիքավորներին կառավարության կողմից ցուցաբերվող աջակցությունը ոչ միայն ծիծաղելիորեն անբավարար էր, այլև, որպես կանոն, մի քանի օրից կրկին դադարում էր: 2) Եվրոպական օգնության կոմիտեների՝ զրկանքները մեղմելու ջանքերը բոլոր երևակայելի ձևերով խոչընդոտվում

կամ դժվարացվում էին, և միայն Անգլիայի դեսպանի՝ որպես Միջազգային օգնության կոմիտեի նախագահի եռանդուն միջամտության շնորհիվ հաջողվեց այդ հարցում փոփոխություն մտցնել: 3) Տների վերակառուցման, սերմացուների պատվիրման, վրա հասնող ձմեռնամուտին կարիքավորների պաշտպանության համար ոչինչ չարվեց: 4) Կարիքավորների արտագաղթը խոչընդոտվում էր: 5) Հարյուր հազարավոր այրիների, որբերի, հիվանդների և անօգնական մարդկանց համար ոչ մի կերպ հոգ չէր տարվում: 6) Հաճախ կարիքավորների ունեցվածքի վերջին մնացորդը խլվում էր խիստ հարկահավաքության միջոցով, այո, նույնիսկ նույն ճանապարհով օգնության գումարներն էին կրկին վերցվում:

VI. *Կուրորածների կրկնումը կամ դեռևս չտրուժած շրջաններում դրանց բռնկումը կանխելու համար իշխանությունների կողմից այժմ էլ դեռ ոչինչ չի արվում*: Ընդհակառակը, ինչպես 1896 թ. հունիսին Վանի վիլայեթում, Ակնում ու Նիքսարում իրագործված նոր կոտորածները, Տրապիզոնում օգոստոսյան վերջին անկարգությունները և բոլոր գյուղական շրջաններում անընդմեջ կատարվող բռնի կրոնափոխություններն ապացուցում են, հայ ժողովրդի բնաջնջումը անարգել նպատակին է հասցվում:

VII. *Զանգվածային սպանդների, կողոպուտների և բռնի կրոնափոխությունների հեղինակներն ու մեղսակիցները մնում են անպատիժ*:

5. Թուրքական կեղծիքների ֆաբրիկան

Մենք նախորդ գլխում թուրքական քաղաքացիական և զինվորական իշխանությունների դեմ մեր մեղադրանքները երկար շարքերով ի մի ենք բերել և մեր ընթերցողներին արդեն բավականաչափ նյութ ենք ներկայացրել, որպեսզի նրանք ի վիճակի լինեն համոզվելու մեր մեղադրանքների ճշմարտացիության մեջ: Այժմ մենք պետք է մի քայլ առաջ գնանք և հետևյալ հարցը բարձրաց-

ենք. արդյո՞ք այդ իշխանություններն իրենց նախաձեռնությամբ, թե՞ ավելի բարձր հրամանի ներքո են գործել:

Նախքան այս հարցին պատասխանելը անհրաժեշտ է ուսումնասիրել մի արտառոց փաստ, որի մասին միահամուռ հաղորդվում է բոլոր նահանգներից. *բոլոր քաղաքներում և երկրամասերում հայկական համայնքների առաջնորդները, երևելիներն ու հոգևորականները բանտարկության, խոշտանգումների, մահվան և նոր կուրորածների սպառնալիքների միջոցով հենց իշխանությունների կողմից էին հարկադրվում ստահող բացատրագրեր, կեղծ հաղորդումներ, շողոքորթ շնորհակալագրեր և ամեն տեսակի կեղծված փաստաթղթեր ստորագրել այն բովանդակությամբ, թե իրենք՝ հայերն են հեղափոխական ապստամբություններով խաթարել խաղաղությունը, ինչն այժմ վերականգնվել է կառավարական մարմինների ջանքերի շնորհիվ:*

Ո՞ւմ համար էին նախատեսված այդ հարկադիր բացատագրերը: Ո՞ւմ էին պետք, և ի՞նչ կիրառություն ստացան դրանք:

Այս հարցերի պարզաբանումն անհրաժեշտ է, նախքան մենք կկարողանանք մեղավորության հարցի քննության մեջ հաջորդ քայլն անել:

Նախ անդրադառնանք հարկադիր բացատրագրերի փաստին և այն մեթոդին, որով դրանք կորզվում էին: Ներկայացնում ենք զեկուցումների մի փոքր ընտրանի, որոնք այդ երկուսի վրա էլ բավականաչափ լույս են սփռում: Դեսպանների զեկույցից մեջբերումները ներկայացնում ենք չակերտներով:

Դիարբեքիր: «Երբ Անիզ փաշան 1895 թ. հոկտեմբերի սկզբին ստացել էր իր հաստատումը վալիի պաշտոնում, նա սկսեց հրահրել քրիստոնյաներին և երկպառակություն սերմանել համայնքների ու հոգևորականության միջև՝ վերջինիս ստիպելով վալիի պաշտոնում իր վերջնական նշանակման համար սուլթանին ուղղված մի շնորհակալական հեռագիր ստորագրել: Կոտորածից հետո նա հրաժարվում է հայ համայնքին, որը 400 ընտա-

նիք պիտի կերակրի, հատկացնել իշխանությունների կողմից թույլատրված չնչին օգնությունն այն պատճառով, քանի որ եպիսկոպոսը մերժել է *մեղավորությունը հայերին վերագրող մի հեռագիր ստորագրել*»:

Երգնկա: Կոտորածից երեք շաբաթ անց իշխանությունները եպիսկոպոսին են ներկայացնում մի հեռագիր, որը պետք է ուղարկվեր սուլթանին և կենտրոնական կառավարությանը, և որը *հայերին էր վերագրում կոտորածների սադրումն ու պատասխանատվությունը*: Հայերը հրաժարվում էին, բայց ճնշում գործադրվեց: Տեղի ունեցան ձերբակալություններ: Մուրացիկության հասցված հայ երեխաները հեծում են զնդանում:

Սվազ: «Օգտագործվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ քրիստոնյաներին հարկադրելու, որ *ստորագրեն բացատրագրեր, որոնցում հայերը մեղադրվում են սադրանքի մեջ, և բանսարկեն իրենց հավատակիցներին*»:

Սերբ: «Իշխանությունն օգտվում է բոլոր միջոցներից՝ հայերին հարկադրելու, որ ստորագրեն մի բացատրագիր այն մասին, որ իրենք անձամբ են հրահրել անկարգությունները»:

Արաբկիր: Հայ բանտարկյալներին ստիպում են *ստորագրել մի բացատրագիր* այն մասին, որ *հայերն են հրահրել անկարգությունները*:

Ակն գավառի իշխանությունները հայերից պահանջում են *իրենց ստորագրությամբ հաստատել, թե իրենք ինքնակամ են իսլամն ընդունել*: *Անջրդի* գյուղի բնակիչները նույնպես ստիպված եղան նույն բովանդակությամբ մի բացատրագիր ստորագրել:

Ոչ միայն հայերի, այլև այլ դավանանքների երեխի և հեղինակավոր տղամարդկանց, նույնիսկ եվրոպացիների վրա է նման ճնշում գործադրվում: «*Մարզվանում* կայմակամը (գավառապետ) փորձում էր եզվիտների հոգևոր հայրերին *ստիպել ստորագրել մի բացատրագիր այն մասին, թե հայերն են կոտորածները հրահրել*»:

Ուրֆայում իշխանությունները նման պահանջներով անհանգստացնում էին կրոնական տարբեր համայնքների ղեկավարներին, նույնիսկ՝ եվրոպացիներին:

Այդ հարկադիր բացատրագրերը, ինչպես երևում է, գրեթե ամենուրեք կորզվում են տեղական իշխանությունների սեփական նախաձեռնությամբ: Հայկական կոտորածների առաջացման հարցի շուրջ տիրող խավարը ցրելու համար, սակայն, առանձնահատուկ կարևորություն ունի այն հանգամանքը նկատի առնելը, որ սուլթանի գաղտնի գործակալներն ու հարցումը կազմակերպող հանձնաժողովները, որոնք կենտրոնական կառավարության կողմից կոտորածներից հետո գավառներն էին ուղարկվել, հոգ էին տանում նման հարկադրական բացատրագրերը անձամբ կամ տեղական իշխանությունների միջոցով ձեռք բերելու մասին այնպես, ինչպես այդ հանձնաժողովներն առհասարակ էին ամենաարտառոց կերպով կատարում իրենց առաջադրանքները:

Բաբերդ ու Մեզերե եկան երկու կոմիսարներ, իրենց մոտ կանչեցին առաջին իսկ հանդիպած հայերից մի քանիսին, ասացին նրանց, թե ինչքան բան է արվել ներկայիս տիրակալի կողմից իրենց ժողովրդի համար, անկարգությունների ողջ մեղքը բարդեցին նրանց վրա և սպառնացին, որ է՛լ ավելի մեծ խստություն կգործադրվի, եթե նրանք հետագա անկարգություններ հրահրեն: Այդ կոմիսարները, որ շրջագայում էին՝ ավերածությունների հետքերը ջնջելու համար, ստիպում էին հայերին բացել խանութներն ու շուկաները, չնայած նրանք վաճառելու ոչինչ չունեին: Հունվարի սկզբին բազմաթիվ կառավարական պաշտոնյաներ եկան *Խարբերդի* և *Դիարբեքիրի* նահանգները՝ վերջերս կրոնափոխ արված գյուղերն այցելելու և բնակիչներին թելադրելու համար, որ հարցնելու դեպքում *ոչ մի պարագայում չիսուրովանեն, որ իրենց ստիպել են իսլամ ընդունել: Այլապես նրանց մահապատիժ է սպասվում*:

Մուշ ժամանելուց հետո հարցումը կազմակերպող թուրքական հանձնաժողովը սկսեց մեղադրել տեղական իշխանություններին, *որ նրանց դեռևս չէր հաջողվել Մուշի հայերից սուլթանին ուղղված շնորհակալագրեր չեռք բերել*: Փաշան կանչեց թեմական տեսչության նախագահին և սպառնալիքների ներքո պահանջեց մի շնորհակալական հեռագիր ստորագրել: «Բայց ինչի՞ համար եք Դուք կամենում, որ մենք շնորհակալություն հայտնենք»,– հարցրեց առաջնորդը: «*Դա Ձեզ չի վերաբերում. արե՛ք այնպես, ինչպես բոլորը*»: Նա խնդրեց հեռագիրը թեմի առաջնորդին ստորագրել տալ և հեռացավ: Նաև բանտ ուղարկվեց: Այն բանից հետո, երբ բանտարկյալներին խոշտանգել, մտրակահարել, գլուխների վրա առատ սառցաջուր էին լցրել և մարմինները մեխերով ծակծկել էին, նրանցից կորզեցին *կենտրոնական իշխանություններին ուղղված մի հեռագիր, որում վերջիններս իրենց վրա էին վերցնում անկարգությունների պատասխանատվությունը և հայ բնակչությանը մեղադրում էին դրանց հրահրման մեջ*: Բանտարկյալների խնդրանքով քաղաքի երևելի բնակիչները նույնպես ստորագրեցին հեռագիրը՝ նոր կոտորածից խուսափելու համար: Այս առաջին հեռագրից հետո իշխանությունները ձևակերպեցին *երկրորդը, որը հայերին ավելի ծանր հանցանքներով էր ծանրաբեռնում*, և ամենասարսափելի սպառնալիքների ներքո *նրանց ստիպեցին* ստորագրել: Նրանք տեղի տվեցին՝ նոր կոտորածից խուսափելու համար:

Վանում 1896 թ. հունիսի 14-22-ին տեղի ունեցած վերջին կոտորածի ժամանակ Բարձր դռան կոմիսարը բռնության գործադրմամբ ստիպեց մի շարք ականավոր հայերի ստորագրել սուլթանին ուղղված մի գրություն, որում նրանք հայտնում էին, որ Վանում աննշան անկարգությունները (այնտեղ սպանվեցին միայն 20 000 հայեր) ի հայտ էին եկել մի քանի հայ հանցավոր ոճրագործների հրահրմամբ:

Հավանաբար կասեք, թե ինչու են հայերը ստորագրում նման ստերի ֆաբրիկատներ: Մենք պատասխանը տալիս ենք երկու փաստաթղթերով, որոնք, անշուշտ, կբավականացնեն՝ յուրաքանչյուր հետագա հարց հիմնովին լռեցնելու: Մեկը՝ 1895 թ. դեկտեմբերի 29-ի մի նամակ Արաբկիրից.

«Իմ սիրելի՛ եղբայր... Այս ամենի մեջ ամենացինիկն այն է, որ բոլոր տառապանքներից հետո, որ մենք ստիպված ենք եղել կրել, մեզ հարկադրում են *սուլթանին ուղղված շնորհակալագրեր ստորագրել*: Մեզ նույնիսկ ստիպում են ասել, թե *մենք՝ հայերս ենք արել այդ ամենը*: Բայց արդյո՞ք հայերը խենթացել են, որ իրենք իրենց՝ մեկը մյուսին, սպանեն և իրենց սեփական տները կրակի մատնեն: *Եվ մի՞թե Եվրոպան այդքան հիմար է, որ չեն ամաչում նրան նման գռեհիկ միջոցներով խաբել*: Օհ, տեղեկացրեք Եվրոպայում, թե ինչ է կատարվել այստեղ, որպեսզի գան՝ մեզ փրկելու. առանց օգնության մենք կորած ենք: Մեր թշվառությունը սոսկալի է: Ովքեր փրկվել են կոտորածներից՝ կանայք, ծերեր և երեխաներ, լեռներից, ուր նրանք փախել էին, վերադառնում են՝ հիվանդ, կիսամերկ, սովից ու ցրտից ուժասպառ, փողոցից փողոց են թափառում, թակում են այն տների դռները, որ հրդեհից հետո կանգուն են մնացել, և մուրում են: Բայց ոչ ոք ոչինչ չունի՝ նրանց տալու: Խոտ են ուտում»:

Արդյո՞ք մարդիկ, որոնք սովամահության եզրին են գտնվում, դեռ ունեն բարոյական ուժ՝ նաև խոշտանգումների և մահվան վտանգի ներքո խուսափելու իշխանության՝ կեղծիքների դիվային կորզումից: Հաջորդիվ մի հերոսական օրինակ այն բանի, որ դա, այնուհանդերձ, հնարավոր է: Հավանաբար մեր ընթերցողները պատկերացնում են, թե նույնիսկ միանգամայն չոր հեռագրերն ու տեղեկությունները, որոնք թուրքական կառավարության կողմից նետվում են մշտապես պատրաստակամ հեռագրական գործակալությունների և աշխարհի մեծ պարբերականների գրասենյակների մեջ, որքան արյուն ու արցունք են բովանդակում:

«Խարբերդի նահանգի Խոխ գյուղում աղաները խոստանում էին պաշտպանել քրիստոնյաներին, բայց երբ նրանք ամենուր հրկիզվող գյուղեր տեսան, հրաժարվեցին իրենց խոսքը պահել: Քրիստոնյաներին հավաքեցին մի մզկիթում, 80 երիտասարդ տղամարդիկ ընտրվեցին և գյուղից դուրս տարվեցին՝ այնտեղ մորթվելու համար: Հարյուրավոր հայ քրիստոնյաներ խոշտանգումների ենթարկվեցին, քանի որ *հրաժարվում էին սուլթանին ուղղված գրություններ ստորագրել, որոնցում իրենց հարազատներն ու հարևանները մեղադրվում էին պետական դավաճանության մեջ*: Մեկը, օրինակ, հրաժարվել էր *տալ երդում, որն իր գյուղի լավագույն մարդկանց դահճի կացնին կդատապարտեր*: Ի պատասխան դրա՝ նրա դատավորները հրամայեցին *խոշտանգել նրան*: *Դրա վրա ծախսվեց մի ամբողջ գիշեր*: Սկզբում նա հարվածներ ստացավ ոտքերի ներբաններին մի սենյակում, որի անմիջական հարևանությամբ իր՝ իգական սեռի հարազատներն էին գտնվում: Ապա նրան մերկացրին և մարմնին ամուր կապեցին երկու ձողեր, որոնք անութներից մինչև ոտքերն էին հասնում: Այնուհետև ձգեցին նրա թևերը, ձեռքերն ամրացրին ձողերին, և այս կենդանի խաչը կապվեց մի սյանը, որից հետո սկսվեց մտրակումը: Տարաբախտը չէր կարող գոնե մարմնի որևէ անդամ շարժել՝ իր ցավերը մեղմելու համար: Միայն նրա դիմագծերն էին սարսափելի կծկումներով մատնում, թե ինչ տանջանքներ էր կրում: Որքան ավելի բարձր էր նա գոռում, այնքան ավելի ուժեղ էին հարվածներն իջնում: Նրան շարունակ հարցնում էին, թե ցանկանում է երդում տալ: Բայց նա միշտ պատասխանում էր. «Ես չեմ կարող հոգիս անմեղ արյամբ պղծել, ես քրիստոնյա եմ»: Ապա բերեցին աքցաններ՝ նրա ատամները քաշելու համար, բայց հրաժարվեցին դրանից, քանի որ նա անսասան էր մնում: Մի պաշտոնյա իր ծառաներին հրամայեց հատ առ հատ արմատից հանել նրա մորուքի մազերը: Դա տեղի էր ունենում բարձրաձայն ծաղրուծանակի ներքո: Երբ դա նույնպես չօգնեց, մի շիկացած շամփուր դրեցին դժբախտի ձեռքերի մեջ, որի միսն այրվեց, և նա իր տանջանքնե-

րի մեջ կանչեց. «Աստծու սիրույն, հենց հիմա սպանե՛ք ինձ»: Այդ ժամանակ դահիճները նրա ձեռքերից հեռացրին շիկացած երկաթն ու այն դրեցին կրծքին, մեջքին, դեմքին և ոտքերին: Ապա ուժով բացեցին նրա բերանը և շիկացած աքցաններով այրեցին նրա լեզուն: Դժբախտը երեք անգամ ուշագնաց եղավ, բայց յուրաքանչյուր անգամ, երբ նա կրկին ուշքի էր գալիս, նրա որոշումը անբեկանելի էր մնում: Կից սենյակում կանայք և երեխաները խոշտանգվող տղամարդու տնքոցների և հեծեծանքների ժամանակ սարսափից ուշագնաց եղան: Երբ նրանք դարձյալ սթափվել էին, ցանկանում էին դուրս շտապել՝ օգնություն կանչելու: Բարձր դռան մոտ գտնվող ոստիկանության ծառայողները նրանց ետ՝ դեպի սենյակ հրեցին»:

Կարծում ենք, որ հարկադիր բացատրագրերի փաստն ու այն մեթոդը, որով դրանք կորզվում էին, բավականաչափ հաստատված և լուսաբանված են: Բացի այդ՝ դա վկայում է նաև դեսպանների զեկույցը: Սակայն, նախքան մենք կպատասխանենք վերը առաջադրված հարցերին, կցանկանայինք փոքր-ինչ լույս սփռել նաև թուրքական իշխանությունների պաշտոնական տեղեկատվության վրա: Դեսպանների զեկույցը ներկայացնում է տարբեր տեղերում թուրքական կառավարության տված վիճակագրությունը հայկական կողմի սպանվածների մասին: Մենք այդ թուրքական թվերը առերեսում ենք փաստերի հետ.

Հայեր †		
	Թուրքական կառավարության պաշտոնական վիճակագրությունը	Իրականում՝ ըստ եվրոպական աղբյուրների
Երզնկա	70	1000
Բիթլիս	130	900
Խարբերդ	80	900
Արաբկիր	200	4000

Ամասիա	80	1000
Վեզիր Քյոփրու	38	200
Այնթապ	100	1000
Մարաշ	30	1390

Մենք նախորդ պարբերություններից մեկում արդեն նշել ենք թուրքական կառավարության տվյալները սպանված մահմեդականների մասին: Նրանց թիվն ամեն դեպքում հաղորդվել է ամենայն մանրամասնությամբ, և, այնուամենայնիվ, այն աննշան է: Հարց է առաջանում՝ ինչպես են ձեռք բերվել սպանված հայերի թվական տվյալները: Եթե թեկուզ չնչին պատկերացում լիներ ճշմարտության մասին, ապա չէին կարողանա հայկական ապստամբությունների մասին հեքիաթը որևէ մեկի համար արժանահավատ դարձնել: Այդ պատճառով էլ հավանաբար բավարարվել են՝ սպանված թուրքերի թիվը 2 կամ 3 անգամ բազմապատկելով և այդ կերպ ստեղծված վիճակագրությունը դեսպաններին ներկայացնելով: Եթե նաև եվրոպացի տեղեկատուները հետո ստիպված եղան որոշ զրոներ ավելացնել, ապա այդ ընթացքում շատ ջուր հոսեց Բոսֆորում, և այնուհետև կարողանում էին դրանք շարունակ ժխտել:

Դեսպանների զեկույցից հաջորդիվ պարզ է դառնում, որ թուրքական կառավարությունը կոտորածների մասին բոլոր տեղեկությունների ժամանակ պատրաստ էր իսկույն նեթ հայերին մեղադրել սադրանքի մեջ, և նա նաև թերացած չի լինի՝ որպես ապացույց ներկայացնելու նահանգներից, բոլոր կողմերից եկող բացատրագրերը, որոնց առաջացման հանգամանքների մասին մենք արդեն համոզվել ենք: Ցավոք, միայն հյուպատոսների՝ միաժամանակ հասնող զեկույցներն էին ապացուցում, որ սադրանքների մասին խոսք անգամ լինել չէր կարող, և որ հայկական ապստամբությունների, մզկիթներում հրաձգություն իրականացնելու, պարեկների վրա հարձակվելու և այլնի մասին գեղեցիկ պատմու-

թյունները միայն ստոր կեղծիք են բովանդակում: Բայց բանը հաճախ այլ ելք գտնում է նույնիսկ դեսպանների հետ գործ ունենալու պարագայում, և ինչը դեսպանների վրա ազդեցություն չէր գործում, դեռևս կարող էր լավ ծառայություն մատուցել՝ ուղարկվելով հեռագրական գործակալություններին, եվրոպական ու ամերիկյան թերթերի թղթակիցներին ու բոլոր երկրներում գտնվող թուրքական դեսպաններին: Բացի այդ՝ հեռագրացանցը ևս ողողվեց հեղափոխական կոմիտեների, հայկական գաղտնի միությունների, թուրք փաշաների դեմ իրականացված ահաբեկչությունների, հայ ագիտատորների՝ մերթ Փարիզում, մերթ Լոնդոնում, մերթ Աթենքում, մերթ Կոստանդնուպոլսում, մերթ հենց Հայաստանում (որտեղ դա մշտապես որպես անհրաժեշտություն էր առարկայանում) հայտնվելու մասին անվերջ տեղեկություններով: Բարձր դուռը կարող էր երկրում և դրա սահմաններից դուրս այս առնչությամբ այնքան նորություններ ստանալ, որքան միայն կկամենար: Եվ ինչն էր ավելի դյուրին, քան այնտեղ, որտեղ երեք հայ միմյանց են հանդիպում, հեղափոխական կոմիտե բացահայտել, իսկ հանցագործները, որոնց Կոստանդնուպոլսում՝ բաց փողոցներում, տասնյակներով կախաղան էին հանում, հայերի դեմ ուղղված բոլոր մեղադրանքների ճշմարտացիության բավարար ապացույց էին: Անկասկած, եղել են մի քանի հեղափոխականներ, և արտերկրի մի քանի քաղաքներում էլ դեռ կան հեղափոխական կոմիտեներ, և մարդկային էությունը պետք է գլխիվայր փոխված լիներ, եթե նրանք չլինեին, քանի որ թուրքական կառավարումն է իրականում նրանց աճեցնում, և կարելի է միայն զարմանալ, որ նրանց թիվն այսքան չնչին, գործողություններն էլ այսքան անշանակ են: Այնուամենայնիվ, թուրքական կառավարությունը երախտապարտ է նրանց այն բանի համար, որ գոյություն ունեն, նրանց նաև ազատ է թողել, որպեսզի չվերանան, այլապես ո՞վ կմատակարարեր ճնճղուկներին, որոնց վրա կարելի է թնդանոթներով կրակել: Այն հարցին, թե հայ հեղափոխական կոմիտեների

և այլնի մասին լուրերով եվրոպական թերթերում ինչպիսի սաստիկ խառնակություններ են իրականացվել, «Die Christliche Welt»-ի հրատարակիչ դոկտոր Ռադեն արդեն պատշաճորեն անդրադարձել է և արդարամիտ վճիռ կայացրել մեր թերթերի ու դրանց ընթերցողների անհատակ դյուրահավատության մասին. «Անտարբերությունը հիմա ցանկանում է իր ապաստարանն ունենալ, որի մեջ կկարողանա սողոսկել»:

Արդ, ո՞ւմ համար են նախատեսված եղել այն հարկաղիր բացատրագրերը, որոնք ողջ մեղքը բարդում էին հայերի վրա: Ո՞ւմ համար էին այն շնորհակալագրերը, որոնք հաստատում էին նորին մեծություն սուլթանի հայրական կառավարումն ու նահանգային իշխանությունների մայրական հոգատարությունը: Ո՞ւմ համար էին նախատեսված այն հեռագրերը, որոնք կոտորածներից անմիջապես առաջ կամ հենց դրանց ընթացքում «լիակատար հանդարտության» մասին հաղորդումներ էին ուղարկում Կոստանդնուպոլիս, անկասկած, առաջին հերթին վախկոտ Եվրոպայի, որը դողում է փտած թուրքական տերության հոդերի ամեն մի ճարճատյունից, ինչպես համաշխարհային աղետից, մտահոգ դիվանագետների համար, որոնք հանուն համաշխարհային խաղաղության ցանկացած գնով հանդարտեցումը համարում են բարձրագույն քաղաքական իմաստություն և ոչ մի դեպքում, առնվազն, քրիստոնյա տերությունների անմաքուր խղճի դրսևորում, որն ամենից ավելի կուզենար քուն մտնել այդ հանդարտության բարձի վրա՝ իր քաղաքականության միջոցով խռովված Արևելյանի հարցի գլխավերևում: Ի սեր ամբողջ աշխարհի՝ հանդարտությո՛ւն: Սպանված հարյուր հազարավոր հայերն այսպես թե այնպես կլռեն: Կարող էր պատահել, սակայն, որ կեղծիքների գործարանի ֆաբրիկատները մեկ այլ նպատակ ևս հետապնդեին: Հավանաբար Յըլդըզի պալատում մի ժրաջան պալատական հանցախմբի անհրաժեշտ էին այդպիսի մեքենայությունները, ինչպես մենք դրանք բնորոշել ենք, իրենց տերերին և իշխողներին այնպի-

սի որոշումների մղելու համար, որոնց համար այլապես բավարար հիմքեր չէին լինի: Այս շղթան ավարտին հասցնելու համար, սակայն, մենք նախ պետք է առաջ գնանք:

6. Ո՞վ է մեղավորը

Մենք նախապես հարցենք՝ ո՞վ մեղավոր չէ: *Մեղավորները հայերը չեն*: Անշուշտ, զարմանալի չէր լինի, եթե հայ ժողովուրդը, որը տարիներ շարունակ Բարձր դռան համակարգված բնաջնջման քաղաքականության միջոցով մատնվել էր թուրք պաշտոնյաների ցանկացած անօրինականության, քուրդ առաջնորդների ցանկացած բռնարարքի, հարկահանների ցանկացած ճնշման և դատարաններում լիակատար իրավազրկման, իր վերջին ուժերը հավաքեր՝ բռնակալության երկաթյա լծի դեմ հուսահատ պայքարի դուրս գալու համար: Նա, սակայն, փաստացիորեն ի վիճակի չէր նույնիսկ մտածելու համազգային ապստամբության մասին, քանի որ նախ հայերը, նույնիսկ մեծ գավառներում համախմբված ապրելով, խնդրո առարկա նահանգներում երբեք ամենուրեք մեծամասնություն չէին կազմում, և երկրորդ՝ նրանք զենք կրելը քրիստոնյաներին արգելող, իսկ մահմեդականներին թույլատրող օրենքներով մի անպաշտպան և անզեն ժողովուրդ էին: Արդարև Հայաստանում նաև որևէ մեկը չի մտածել նույնիսկ ինքնավարության նման ինչ-որ մի բանի ձգտել: Միակ բանը, ինչի հույսը տածում էին, բարենորոգումները վերջապես իրականացնելն էր, որոնք, 18 տարի ի վեր երաշխավորված լինելով քրիստոնյա մեծ տերությունների կողմից, թվում էր, թե առնվազն տանելի, մարդավայել կեցության հնարավորություն էին տալու: Չնայած մեր ընդգրկուն տեղեկություններին՝ մեզ չհաջողվեց կոտորածների ամբողջ տարածքում, բացառությամբ Զեյթունի, հայտնաբերել ինչ-որ մի շարժում, որից կարելի էր ապստամբության մտադրության եզրահանգմանը գալ: Դեսպանների զեկույցը ևս չկարողացավ

որևէ վայրում հայերի կողմից նույնիսկ որևէ սադրանք արձանագրել, և ամենուր, որտեղ թուրքական իշխանությունները այդպիսիք հիշատակում էին, պարզվել է, որ պաշտոնական տեղեկատվությունը կեղծ է եղել:

Զեյթունում իրադրությունն այսպիսին էր. երբ հարևան գավառներում ջարդերի մասին լուրերը բոլոր կողմերից Անտիտավրոսի լեռնաբնակ հայերին սարսափի մատնեցին, հազարավոր հայ գյուղացիներ փախան լեռների բնական պաշտպանությամբ ամրացված Զեյթուն: Այդ քաղաքի շրջակայքում գտնվող ավելի քան հարյուր գյուղեր բնակեցված են բացառապես հայերով: Նրանք նույնպես շտապեցին Զեյթուն: Քաղաքին մոտ գտնվում էր մի թուրքական միջնաբերդ՝ մոտ 600-հոգանոց կայազորով: Հայերը տեղեկություն ստացան, որ այդ կայազորը պետք է նշանակալիորեն ուժեղացվի, և որ Զեյթունում հավաքված անպաշտպան ժողովրդի դեմ հարձակում էր նախապատրաստվում: Նրանք որոշեցին կանխել այն, զինվեցին, ինչպես կարող էին, շրջապատեցին միջնաբերդը և ստիպեցին կայազորին հանձնվել, նախքան համալրումը տեղ կհասներ: Ապա խրամատավորվեցին Զեյթունում և ողջ ձմեռ դիմակայեցին 80 000-անոց բանակին, որը մաս առ մաս նրանց դեմ էր ուղարկվում: Հաջողությունն ապացուցեց, որ Զեյթունի հայերը ճիշտ էին վարվել, եթե, իհարկե, ինքնապաշտպանության իրավունքը դեռ առհասարակ ընդունվում է: Մինչ ողջ հսկա տարածքում՝ հազարավոր գյուղերում ու քաղաքներում հայերն առանց նույնիսկ դիմադրություն ցուցաբերելու թույլ էին տալիս իրենց մորթել, միայն զեյթունցի քաջերը եվրոպական հյուպատոսների միջամտության շնորհիվ կարողացան ոչ միայն համաներմամբ ազատվել, այլև մի տեսակ ինքնավարության արտոնություն ստանալ Զեյթունի և շրջակայքի համար: *Դա իսկապես ճակատագրի հեգնանք է: Եվրոպական դիվանագիտությունը հանդիսատեսի իր դերը, որը նա խաղում է իր պաշտպանությանը հանձնված քրիստոնյա ժողովրդի սպանդի առնչությամբ, արդա-*

բացնում է նրանով, որ այն թուրքական կառավարության դեմ իր հեղափոխական պահվածքի պատճառով է զրկվել տերությունների պաշտպանությունից: Միակ կետում, սակայն, որտեղ հայերը, եթե ցանկանում եք, իսկապես ապստամբել են, ստանում են հենց այդ տերությունների լուրջ աջակցությունը և դեռ նրանց օգնությամբ էլ Բարձր դռան մոտ հաջողությամբ անցկացնում են իրենց բոլոր պահանջները, մինչդեռ հազարավոր այլ վայրերում, որտեղ նրանք, հրաժարվելով ցանկացած դիմադրությունից, իրենց թշնամու մահաբեր սրին էին հանձնում, մերժվեց նրանց որևէ օգնություն ցուցաբերել, և, ի լրումն դրա, դեռ նաև բարոյական քարոզ կարդացվեց այն մասին, որ նրանք դրանից ավելիին արժանի չէին: Այդ դեպքում կարելի էր իսկապես ցանկանալ, որ հայերն ամենուրեք ի վիճակի լինեին՝ հետևելու Զեյթունի քաղաքացիների օրինակին և համընդհանուր ազգային ապստամբություն բարձրացնեին: Անկասկած, քրիստոնյա մեծ տերությունների կողմից զենքը ձեռքին պահած ժողովրդին օգնություն կցուցաբերվեր, ինչն անպաշտպան ժողովրդին երեսպաշտ պատճառներով մերժվեց:

Մեղավորները հայերը չեն:

Իսկ գուցե դրանք անգլիացիներ՞ն են: Հայկական կոտորածների վերաբերյալ Եվրոպայի՝ հանգեր թխելու հասարակական կարծիքի ողջ շփոթությունն ի ցույց է բերում, որ հանգել են նույնիսկ «հայկական ապստամբությունները» «անգլիական խարդավանքներով» պայմանավորելու և մայրցամաքային բնակչության «անգլոֆոբ երևակայությունը» «անգլիական ոսկով», «զենքի անգլիական մաքսանենգությամբ» և «անգլիական սադրիչ առաքյալներով» բորբոքելու գռեհիկ մտահղացմանը: Այդ դեպքում որտե՞ղ էին անգլիական զենքերը: Որտե՞ղ էր անգլիական ոսկին: Կոտորածների ողջ տարածաշրջանում այն գոնե ինչ-որ մի տեղ պետք է երևան գար: Կարելի էր խաղաղրույթ կատարել «անգլիական խարդավանքները» Հայաստանում ապացուցելու վրա և վստահ լինել, որ ոչ մի երջանիկ շահող այն չէր ստանա: Կամ

արդյո՞ք «անգլիական խարդավանքներ» են, որ անգլիական հյուպատոսները զեկուցում են Հայաստանում տիրող իրադրության մասին: «Անգլիական խարդավանքնե՞ր» են, որ անգլիացի դիվանագետները 17 տարի անց մտաբերում են Բեռլինի պայմանագրի և Կիպրոսյան կոնվենցիայի որոշ պարբերություններ և ֆրանսիական ու ռուսական դիվանագիտության հետ մեկտեղ ցանկանում են զբաղվել բարեփոխումների հնաթուխ խոստումները, որոնք նախկինում տրվել են մի տարաբախտ ժողովրդի, կրկին ջերմացնելով: Համաշխարհային պատմության դատարանը Անգլիային և ավելի, քան Անգլիային, մյուս մեծ տերություններին կմեղադրի *ոչ թե սխալ քայլերի, այլ՝ անգործության մեղքի* համար:

Եթե մեղավորները ո՛չ հայերն են, ո՛չ անգլիացիները, *ո՞վ է մնում:* Իսկապես, ութ խոշոր նահանգների իշխանությունների՝ ոչնչով չպատճառաբանված գաղափա՞րն է եղել իրենց հայ հպատակներին ընդհուպ մինչև դանակի գործադրումը պատերազմ հայտարարելը: Ավելի քան անհավանական է, անհնա՛ր է: Թուրքական պետությունը բացարձակ և կենտրոնաձիգ կառավարում ունի: *Միապետի ցանկությունը գերագույն օրենք է*: Պալատն է կառավարում պետությունը, այլ ոչ թե վալիները:

Ով մեր մինչայժմյան փաստարկումներն ուշադիր է կարդացել, արդեն վաղուց եկած լինի այն եզրահանգմանը, որ *հայկական կուրորածները ոչ այլ ինչ են եղել, քան մի վարչական միջոցառում, որը սուլթանի անունից՝ կենտրոնական կառավարության կողմից, կարգադրվում և չափազանց մեծ պարբասպրակամությամբ իրականացվում էր նահանգային իշխանությունների կողմից*: Այդ մասին անառարկելի ապացույց ներկայացնելը դյուրին է փաստերին ծանոթ յուրաքանչյուրի համար:

Հայ ժողովրդի բնաջնջման հիմքում ընկած է *մի միասնական, արդեն տարիներ ի վեր մշակված պլան*, որն անցյալ տարվա վերջին ամիսներին տերությունների գործողություններով թելադրված մեծ շտապողականությամբ իրականացվեց: Մինչ կառավարու-

թյան կողմից պատվիրված ավերումի գործիքները, տարիներ ի վեր թաքուն և հնարավորինս քիչ աչքի ընկնելով, աշխատում էին, Բարձր դուռը սպառնացող հայկական բարենորոգումների պատճառով իրեն հարկադրված համարեց արագացնել գործընթացը և նույնիսկ անտեսելով ամբողջ Եվրոպային զայրացնելու վտանգը՝ մի հարվածով ոչնչացնել հայ ժողովրդին ու արագ վերջ դնել ատելի քրիստոնեությանը, որը հարուցում էր Եվրոպայի համակրանքը: Կոտորածների ամբողջության հիմքում ընկած էր *վայրին, ժամանակին, զոհերի ազգային պատկանելությանը և նույնիսկ սպանդի ու կողոպուտի մեթոդին* վերաբերող մի միասնական պլան:

1. *Վայրի տեսանկյունից* դրանք սկզբնապես սահմանափակված էին վեց նահանգների՝ *Էրզրումի*, *Բիթլիսի*, *Վանի*, *Խարբերդի*, *Սվազի*, *Դիարբեքիրի* տարածքով, որոնցում պետք է բարենորոգումներ իրականացվեին: Երբ հեծյալ քրդերի և չերքեզների 2000-3000-անոց մի հրոսակ սպառնաց հեռանալ այդ նահանգներից, Անգորայի նահանգի իշխանությունները նրանց ընդառաջ եկան և դրդեցին ետ դառնալ այն հիմնավորմամբ, թե նրանք Սվազի նահանգի սահմանը հատելու իրավասություն չունեն: Ամեն դեպքում անկարգությունների ընթացքում կոտորածները, եթե չհաշվենք Ակ-Հիսարում (Իզմիթի մութասերիֆություն) կատարված մի լիովին անտեղի հեղաշրջման փորձը, անարգել տարածվեցին նաև Հալեպի, Ադանայի և Անգորայի նահանգներում, սակայն պետք է նկատի ունենալ, որ տերությունների կողմից այս նահանգների համար, որքանով դրանց որոշակի շրջաններում համախումբ հայ բնակչություն կար, նույնպես բարենորոգումներ էին պահանջվել, որոնց կանխումը նմանապես անհրաժեշտ էր թվում: Ընդհանուր առմամբ *Անգորայի* (բացառությամբ Կեսարիայի և շրջակայքի) և *Ադանայի* (բացառությամբ Բայաս և Չրոք-Մարզվան գյուղական շրջանների) նահանգները նաև բավական խնայված են մնացել: Այն, որ *Տրապիզոնում* կոտորածներ սկսվե-

ցին, կարծես պայմանավորված էր նրանով, որ այնտեղ մի առանձնահատուկ միջադեպ՝ երկու փաշաների վրա կատարված մի դեռևս չպարզաբանված ահաբեկչություն նպաստավոր առիթ ընձեռեց դրանց համար: Հալեպի նահանգում այլ վիլայեթներից եկող լուրերից բորբոքված մահմեդական մոլեռանդության համար առիթ ծառայեց Զեյթունի լեռներում ընթացող շարժումը, իսկ Մարաշի, Այնթապի, Բիրեջիքի և Ուրֆայի դեպքում էլ ապացուցվել է, որ մահմեդական հավատակիցների սուրհանդակներն ու նամակներն էին բնակչությանը հրահրում՝ որպես մուսուլմաններ այնտեղ նույնպես իրենց պարտքը կատարելու: Իհարկե, այստեղ ևս իշխանությունների կողմից պատրաստակամության պակաս չզգացվեց՝ ցրիվ կայծերը սոսկալի հրդեհի վերածելու, ինչի համար, ինչպես ապացուցում են հյուպատոսական տեղեկագրերը, նաև կենտրոնական իշխանության երկիմաստ հրահանգներն էին ուղենիշ ծառայում:

2. *Ինչ վերաբերում է ժամանակին*, ապա ջարդերը սկսվեցին ոչ պատահաբար, այլ անմիջապես այն բանից առաջ, երբ սուլթանն ամիսներ տևած ամեն տեսակի դիմադրությունից հետո, ի վերջո, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից հարկադրվեց համաձայնել բարեփոխումների նախագծին՝ կարծես եվրոպական տերություններին նախազգուշացնելու համար, որ եթե նրանք համառում էին իրենց ցանկության հարցում, ապա հայ ժողովրդի բնաջնջման համար նախատեսված ականն արդեն դրված էր: Սպանդի և կողոպուտի ալիքը Տրապիզոնից տարածվեց վեց նահանգների (որոնցում հայերին օգնություն էր խոստացվել) յուրաքանչյուր քաղաքի և գյուղի վրա:

Պատկերացում կազմելու համար այն *պատրաստականության* մասին, որով նահանգային իշխանությունները հետևում էին կենտրոնական իշխանության կարգադրություններին, նշենք գլխավոր վայրերում կոտորածների թվական տվյալները՝ *սեպտեմբերի* 30՝ Կոստանդնուպոլիս, *հոկտեմբերի* 3՝ Ակ-Հիսար, 4՝ Տրապիզոն, 6՝ Էրզրում, 14՝ Քղի, 16՝ Հաճն, 20՝ Չորում և Մարաշ,

21՝ Երզնկա, 25-26՝ Գյումուշխանե, Բիթլիս, Ալբիստան, 27-29՝ Բաբերդ, Շապին Գարահիսար, Բայաս, Ուրֆա, 30՝ Էրզրում, 31՝ Մերսին, Ադանա, *նոյեմբերի* 1-9՝ Մալաթիա, 2-5՝ Սեերեկ, 3՝ Մարաշ, 1-20՝ Վանի վիլայեթ, 7՝ Ադիաման, Ալեքսանդրետ, 8՝ Ակն, 10՝ Խարբերդ, Տալվորիկ, Բայաս, 12՝ Սվազ, Կյուրին, Հավզա, 13՝ Չորք-Մարզվան, 14-17՝ Այնթապ, 15՝ Թոքատ, Մուշ, Մարզվան, 16՝ Ամասիա, 17՝ Ենիճեկալե, 18՝ Մարաշ, 19՝ Սերթ, 20՝ Վան, 27՝ Բասեն, Օվա, 28՝ Զելա, 30՝ Կեսարիա, *դեկտեմբերի* 3՝ Սվազ, 7՝ Սասուն, 13՝ Տարսոն, 14-15՝ Աղջագյունեյ, 24՝ Ակբաշ, 28-29՝ Ուրֆա, *հունվարի* 1 (1896)՝ Բիրեջիք. այստեղ ավարտվում է կոտորածների առաջին փուլը:

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ *վայրերի միջև որևէ կապի* առկայություն կարող է միայն ավելի նեղ սահմաններում ապացուցելի լինել: Ընդհանուր առմամբ կոտորածները ինը նահանգների ամբողջ տարածքով կամայականորեն այս ու այն կողմ են տեղափոխվում: Մեկնարկի պահն ամենուր կախված է նախապատրաստության համար անհրաժեշտ կարճ կամ երկար ժամկետներից: Կոստանդնուպոլսում ցույցը, որը կարողացան ի վնաս հայերի մեկնաբանել, լավ պատրվակ տվեց և թուրքական իշխանությունների կողմից ամբողջ երկրում լիառատ ուռճացվեց ու շահարկվեց՝ մահմեդական մոլեռանդությունը բորբոքելու համար: Հետագայում *բարեռորոգումների ծրագրի հրապարակումը, ինչն իշխանությունների կողմից հայերի լիակատար ինքնավարության տեսանկյունից կեղծ և միտումնավոր մեկնաբանվեց, օգտագործվեց մահմեդական բնակչությանը քրիստոնյաների դեմ գրգռելու համար*: Երբ առաջին կոտորածի մասին լուրը հասավ Կոստանդնուպոլիս, մի բարձրաստիճան թուրք պաշտոնյա դեսպաններից մեկին ասաց. «Կոտորածները ջրծաղիկի նման են. բոլորը պետք է կրեն դա, բայց ոչ ոք երկրորդ անգամ ձեռք չի բերում»: Դա մի թույլ, եթե ոչ չարամիտ ակնարկ էր այն մասին, թե ինչ էր սպասվում: Նույնիսկ սուլթանը, երբ ցանկանում էր խուսափել բարեռորոգումների ընդունումից, դեսպան-

ներին վախեցնելու համար ասում էր, որ դա կհանգեցնի անկարգությունների: Եվ արդյունքը ցույց է տալիս, որ նա գիտեր, թե ինչի մասին էր խոսում:

3. *Զոհերի ազգության առումով նույնպես* խիստ կարգադրություններ էին տրվել: Հարվածը պետք է **միայն հայերին** ուղղված լիներ: Շատ քաղաքներում, որտեղ կոտորածներ են եղել, կա մեծաքանակ հույն բնակչություն: Ոչ ոք նրանց ձեռք չի տվել: Եթե, չնայած իշխանությունների կողմից կատարված նախնական զգուշացմանը, մի քանի հույներ սպանվեցին, ապա դա պատահականություն էր: Դեռ կոտորածների ընթացքում հույներին պաշտպանելու խստագույն հրամաններ էին ուղարկվում: Կոստանդնուպոլսում գիտեին, որ հունական դավանանքի վրա հարձակվելու դեպքում անմիջապես Ռուսաստանի հետ գործ կունենային: Հենց միայն այդպիսի կարգադրությունները, որոնք իշխանությունների պաշտպանությունը սահմանափակում էին միայն մի դավանանքով, *մյուսը*՝ հայկականը, հռչակում էին օրենքից դուրս: Համենայն դեպս, Հալեպի և Դիարբեքիրի վիլայեթներում չհաջողվեց մահմեդական սանձարձակ մոլեռանդության առջև նման արգելագծեր դնել: *Ասորիների*, *յակոբիտյանների* և *քաղդեացիների* հետ, չնայած վերևից իջած հրամաններին, նույն կերպ էին վարվում, ինչպես հայերի հետ: Կենտրոնական կառավարությունը առանձնահատուկ բարեխղճությամբ խստորեն հրամայել էր, որ որևէ *օտար ազգության հպատակի*, անգամ ատելի միսիոներների նույնիսկ մի մազը չպետք է ծռվեր: Գիտեին, որ մի եվրոպացին Բարձր դռան համար ավելի թանկ կարժենա, քան 20 000 հայերը, և խորապես ձգտում էին խուսափել արտաքին բարդություններից ու փոխհատուցումների վճարումից: Նույնիսկ այնտեղ, որտեղ բողոքական կամ կաթոլիկ միսիոներների տները թալանում և ավերում էին, զորօրինակ՝ Խարբերդում, Մարաշում, Մարզվանում, Մալաթիայում, Ենիճեկալեում, ձգտում էին խնայել դրանց բնակիչների կյանքը: Հայր Սալվադորը կարծես թե միակ եվրոպացին

է եղել, որ զոհ դարձավ հայկական զանգվածային սպանդին: *Եթե մոլեռանդ մահմեդականները կաշկանդված չլինեին վերևից եկող խստագույն հրամաններով*, ապա հավանաբար սկզբում կհարձակվեին բողոքական ու կաթոլիկ առաքելությունների վրա և կսպանեին միսիոներներին ու քահանաներին, քանի որ իշխանությունների կողմից հենց նրանց՝ որպես կրթության գլխավոր գործիքներին է վերագրվում մարդկային արժանապատվության վերաբերյալ բարոյական գաղափարների սերմանումով հայերին իրենց հանդեպ կիրառվող բռնարարքների և անարգումների առնչությամբ գիտակից դարձնելու մեղքը, և եվրոպացի դիվանագետները կարծես միանում են այդ կարծիքին ու դրա մեջ քրիստոնեական առաքելություններից նրանց խորշանքի հիմք են տեսնում: Շատ ավելի լավ կլինի, որ հայերին թողնեին անգիտության ու ստրկության մեջ, իսկ Եվրոպան հանգիստ մնար:

4. *Սպանելու և կողոպտելու մեթոդը նույնպես* հրահանգված էր վերևից և նահանգների այնքան տարատեսակ պայմաններում զարմանալի համաչափությամբ ու ճշգրտությամբ էր գործադրվում: Մեթոդը չնչին բացառություններով հետևյալն էր՝ *հնարավորինս կարճ ժամանակահատվածում սպանել հնարավորինս շատ հայերի և ըստ հնարավորին զավթել նրանց ողջ ունեցվածքը, իսկ անշարժ գույքը՝ ոչնչացնել*: Միաժամանակ հանգամանալից հոգ տարվեց, որ ազդեցիկ, կրթված և ունևոր տղամարդկանցից (մասնավորապես նրանցից, որոնք բարեփոխումների իրականացման դեպքում կարող էին մասնակից դառնալ կառավարմանը կամ արդարադատությանը) ըստ հնարավորին ոչ ոք ողջ չմնար, իսկ նրանց ընտանիքները հասցվեին մուրացկանության: Քանի որ այս ընտրությունը բավարար վստահությամբ ամբոխին թողնել չէին կարող, վալիներն իրենք կազմեցին նման ցուցակներ և բաժանեցին զինվորներին: Հայ վաճառականներին, որոնց ձեռքում էր գտնվում քաղաքային առևտրի 9/10-ը, իրենց բոլոր ապրանքներից հնարավորինս մեկ հարվածով զրկելու համար բոլոր՝

առավել մեծ վայրերում կոտորածները տեղի ունեցան առևտրի ժամերին, երբ խանութներն ու կրպակները բաց էին, և հայերը հենց առևտրական սեղանի հետևում կարող էին սպանվել: Այնտեղ, որտեղ նրանք երկյուղից իրենց խանութներն ու կրպակները փակել էին, իշխանությունների խոստումները կամ սպառնալիքները նրանց դրդեցին կոտորածներից փոքր-ինչ առաջ վերաբացել դրանք: Սպանդի և կողոպուտի ազատության համար տրվող ժամանակահատվածը, որպես կանոն, *սկսվում և ավարտվում էր շեփորի ազդանշաններով*:

Եթե քաղաքացիական իշխանությունների համանման գործելակերպն առանց կենտրոնական իշխանության նույնաբովանդակ կարգադրությունների անբացատրելի կլիներ, ապա զինվորականության՝ քաղացիական իշխանությունների միջոցառումներին ամենուր համահունչ միջամտությունը լիովին անըմբռնելի կլիներ՝ առանց սերասկիարատից (ռազմական նախարարություն) անմիջական հրամանների, գումարած դրան, որ ամբոխին, քրդերին, չերքեզներին և լազերին, ինչպես նաև ռեդիֆներին զինելու համար ամենուրեք պետք է ռազմական զինանոցներն օգտագործվեին:

Ըստ կանխամտածված և հստակ սահմանագծված ծրագրի՝ կոտորածների միասնական նախապատրաստումն ու ճշգրիտ իրագործումը ոչ մի հնարավորություն չի թողնում՝ կենտրոնական իշխանությանն ազատելու գիտակցված կազմակերպման և բոլոր հետևանքները հաշվարկող կարգադրության մեղքից: Լիակատար մոլորություն է ընդունելը, ինչպես հաճախ կարելի է լսել, թե իշխանություններն ի վիճակի չէին լինի զսպել մոլեռանդ թուրք ամբոխին և ավազակ քրդերին: Փաստը է, որ ամենուր, որտեղ իշխանություններն անձամբ չէին մասնակցում, նրանք դիտում էին սպանդն ու թալանը՝ առանց նույնիսկ ձեռքը բարձրացնելու՝ դրանց վերջ դնելու հրաման տալու համար, և որ ամենուրեք, որտեղ իշխանությունները միջամտում էին, երբ նախապես որոշված ժամանակը, տեսեր դա ժամեր թե օրեր, սպառված էր, կոտորածն

անմիջապես դադարեցվում էր: Սպաները և պաշտոնյաները նույնպես հայտնել են, որ իրենք ի ի վիճակի կլինեին անմիջապես ցրել ամբոխը, եթե չխոչընդոտվեին իրենց ղեկավարների կողմից, և որտեղ որևէ կառավարական պաշտոնյա, ով պետք է որոշում կայացներ, չէր ցանկանում գործակցել կամ, ինչպես օրինակ Աղանայում, ռազմանավերից երկյուղելով, չէր համարձակվում ձեռնարկել, կոտորածներ չէին սանձազերծվում:

Եթե իշխանությունները նշանակված մեկ կամ մի քանի օրից հետո չմիջամտեին, ապա ամբողջ քրիստոնյա բնակչությունը մինչև վերջին մարդը բնաջնջված կլիներ: Արյունահեղությունը, սակայն, դադարեցվեց ոչ թե այն պատճառով, որ մահմեդականները չէին փափագել քրիստոնյաներին վերջ տալ և նրանց ամբողջ ունեցվածքը սեփականացնել, այլ որովհետև ջարդերի կազմակերպիչները մտածում էին, *որ մեկ, երկու կամ երեք օրվա սպանդը կբավականացներ, որպեսզի Եվրոպան միանգամից համակերպվեր*: Դիվանագիտության նյարդերի վերաբերյալ այդ նկատառումը լիովին դուրս էր *նահանգային իշխանությունների* տեսադաշտից և ուղղակիորեն մատնանշում է *պալատի* նուրբ քաղաքական բնազդը:

Ցանկացած կասկածի պարագայում ևս մի բան անվիճելի է. այն, որ ամբողջ թուրք բնակչությունը և նաև զինվորականությունն ու քրդերը տեղյակ էին, որ գործում են ոչ միայն ենթակա իշխանությունների հրամանով, որոնք ապահովել էին իրենց անպատժելիությունը, *այլև սուլթանի հրամանով և նրա անունից*: «Գյավուրների ունեցվածքը պետք է թալանել, իսկ նրանց գլուխները պատկանում են կառավարությանը»: Այս կարգախոսը, որ հնչեցվել էր ամենուր, *վերագրվում էր սուլթանի անձնական ցանկությանը* և բոլոր ոճրագործությունների պաշտոնական թույլտվություն էր նշանակում: Ամենուրեք մահմեդական բնակչությունն այս մասին էր խոսում, և նրա ընկալումը ոչ մի տեղ իշխանությունների կողմից չհերքվեց: Այս ամենին գումարվում է նաև այն, որ

մահմեդականները, ինչպես ապացուցված է, իրենց մզկիթներում նույն ոգով հրահանգավորվում էին մոլլաների կողմից, որտեղ նրանց տեղեկացվում էր, որ քրիստոնյաների դեմ կառավարության գործողությունները ստացել են նաև Շեյխ ուլ Իսլամի՝ մահմեդական աշխարհի անսխալական հոգևոր առաջնորդի հավանությունը, և որ *իսլամի կրոնական օրենքը (շարիաթ) պահանջում է բնաջնջել քրիստոնյաներին, քանի որ նրանք օտար տերությունների միջամտության են դիմել և փորձել են նույն օրենքով իրենց համար սահմանված հնազանդության ու ստրկության վիճակից ազատվել և մահմեդականների հետ անհանդուրժելի իրավահավասարության ձգտել*: Ինչպես բնակչությունը, այնպես էլ զինվորականությունն ու քրդերն ամենուրեք իրենց ոճրագործությունները միանգամայն բացահայտորեն հիմնավորում էին կառավարության հրամաններով, և նույնիսկ ամենաբարձրաստիճան պաշտոնյաները ո՛չ միմյանցից, ո՛չ էլ ուրիշներից չէին թաքցնում, որ իրենք գործում էին միասնական պլանի համաձայն և ունեին պալատի հրահանգները: Թե ինչպես էր արտահայտվել մարշալ Զեքի փաշան Երզնկայում, մենք արդեն տեղեկացրել ենք: Կյուրինի կայմակամը Սվազի վալիին հեռագրել էր. «Կարող ես վստահ լինել, որ Կյուրինում նույնիսկ մեկ հայ չի մնացել»: Արաբկիրում իշխանությունները հրապարակեցին հետևյալ հրամանները. «Բոլոր նրանք, ովքեր Մահմեդի զավակներն են, պե՛տք է այժմ իրենց պարտքը կատարեն, այսինքն՝ բոլոր հայերին սպանեն, նրանց տները թալանեն և կրակի մատնեն: Ոչ մի հայի չպե՛տք է խնայել: *Դա պալատի հրամանն* է: Նրանք, ովքեր չեն հնազանդվի, կդիտվեն որպես հայեր և նմանապես կսպանվեն: Ուստի յուրաքանչյուր մահմեդական իր հնազանդությունը կառավարությանը պե՛տք է ապացուցի ամենից առաջ նրանով, որ նախ կսպանի իր հետ բարեկամացած քրիստոնյաներին»:

Եթե մենք նույնիսկ մի կողմ թողնենք այն հարցը, թե արդյոք կոտորածների հրամանը սուլթանի անձնական նախաձեռնու-

թյամբ է տրվել, թե նա պալատի հանցախմբի նենգ դրդմամբ կեղծ տեղեկությունների և նահանգային իշխանություններից ստացված հարկադիր խնդրագրերի պատճառով է ի վիճակի դարձել՝ հրամաններ տալու, որոնք, այնուհետև ապահովվելով անհրաժեշտ սրացումներով և գործնական հրահանգներով, պալատից փոխանցվում էին նահանգներ, ամեն դեպքում ամեն մի ինքնիշխան միապետ *կրում է իր կառավարության գործողությունների ամբողջ պատասխանատվությունը, և իր սեփական ժողովրդի ձայնը կատեգորիկ նրան է մատնանշում* որպես գաղափարական հեղինակ բոլոր՝ հազարավոր զանգվածային սպանդների, կողոպուտների, անարգումների և բռնի կրոնափոխությունների՝ գործադրված մի անզեն քրիստոնյա ժողովրդի դեմ, որը նրա հպատակը լինելու դժբախտությունն ունի: Պատմության վճիռը նույնպես հազիվ թե մեկ այլ բան կարող է լինել, քանի որ այս միապետը չափազանց շատ գործողություններով է իրեն ներկայացրել *որպես հին թուրքական մոլեռանդության առաջին ներկայացուցիչ*: Համազգեստելով քրդական ավազակախմբերը, որոնք իր անունով համիդեական գնդեր կոչվեցին, նա ստեղծել է ամենաաառաջնակարգ գործիքները՝ իր քրիստոնյա հպատակներին բնաջնջելու համար: Իր կառավարության՝ կոտորածների ընթացքում ամենից շատ արատավորված պաշտոնյաներին շքանշաններով պարգևատրելով և նրանց պաշտոնները բարձրացնելով՝ նա մեծագույն խայտառակությունների հեղինակներին ներկայացրել է որպես իր քաղաքականության ընտրյալ գործիքներ և այն բոլորի ու ամենի անպատժելիությամբ, ինչ կատարվեց սարսափների այդ ժամանակահատվածում, իր կայսերական կնիքն է դրել նմանը չունեցող սպանդի և վանդալիզմի իշխանության ու քրիստոնյաների՝ բոլոր ժամանակների մեծագույն հալածանքների ներքո:

7. Տերությունների պատասխանատվությունը

Մինչ այժմ մեր նպատակը հայկական կոտորածների *փաստը*, ծավալը և հետևանքները պարզելն էր և ապա մի շարք առանցքային կետերով այն հարցին հետամուտ լինելը, թե ամենավերին ատյանում ում վրա է ծանրանում հայ ժողովրդի՝ մի միասնական պլանի համաձայն իրագործված բնաջնջման *մեղքը*: Մեր կողմից փաստաթղթերով ապացուցված *փաստը հերքելի է. հարյուր հազար անպաշտպան քրիստոնյաներ կոտորվել են, հարյուր հազարը կամ ավելին բռնի կրոնափոխ է արվել, և հինգ հարյուր հազար մարդ մատնված է սովամահության*: Այս փաստը սառնասիրտ հաշվարկով կարգադրված և անլուր դաժանությամբ իրականացված *վարչական միջոցառման* արդյունքն էր: *Այդ միջոցառման հեղինակները գտնվում են նորին մեծություն սուլթանի պալատում*:

Այսպիսով՝ կարող ենք մեր առաջադրանքը կատարված համարել: Մեր ողջ ուսումնասիրության մեջ, սակայն, մի հանելուկային հարց է մնում, որն ընթերցողին արդեն հավանաբար համակած կլինի, և որը, անպատասխան մնալու դեպքում, ձեռք բերված արդյունքի վրա այնպիսի վիթխարի անհավանականության կնիք կդնի, որի առջև նույնիսկ ամենակարևոր հիմքերը կկորցնեն իրենց արժանահավատությունը, և ամենաստույգ փաստերը հեքիաթ կհամարվեն: Արդարացիորեն հարց է առաջանում՝ *ինչպե՞ս կարող էր սուլթանի կառավարությունը մի այդպիսի խելագար արարքի ֆեռնամուխ լինել՝ իր սեփական մարմինների միջոցով պետության ամենահարուստ և հարկատու վեց կամ յոթ նահանգները հասցնելով ավերածության մի վիճակի, որպիսին ոչ մի պատերազմ իր հետևից չի թողնում*: Մի՞թե Բարձր դուռը տասնամյակներ շարունակ տնտեսական սնանկացման եզրին չի կանգնած, ինչը ֆինանսական ամենահամարձակ գործողություններով իսկ այլևս չի կարող քողարկվել: Արդյո՞ք Բարձր դուռը չպետք է եր-

կյուղեր այն բանից, որ բնաջնջման պատերազմը, որ նա սեփական հպատակների դեմ վարում էր, այսպես թե այնպես, արդեն տասնամյակներ շարունակվող անտնտեսվարության հետևանքով կառավարության դեմ զայրացած բնակչությանը նաև պետության մյուս հատվածներում չէր հեղափոխականացնի: Արդյոք առավել ևս այս հարյուրամյակի քաղաքական պատմությունը չսովորեցրե՞ց, որ տերության քրիստոնյա հպատակների դեմ նման սարսափելի հարվածը պետք է հանգեցներ այլ տերությունների ուղղակի միջամտությանը, որոնք այդ տեսանկյունից մինչև իսկ նաև պայմանագրային պարտավորություններ ունեին: Մի՞թե 1822 թ. Քիոսի արյունահեղությունը, որի ժամանակ նենգ Ալի փաշայի կողմից 23 000 հույներ կոտորվեցին, չհարուցեց Եվրոպայի հիացական համակրանքը հույն ազատամարտիկների նկատմամբ: Մի՞թե ֆրանսիական արշավանքը և Լիբանանի շրջանի ինքնավարությունը չէին, որ դարձան 1860 թ. Լիբանանում տեղի ունեցած կոտորածի հետևանքը, որին զոհ գնացին 6 000 քրիստոնյաներ: 25 000 բուլղարացիների կոտորածը չհանգեցրե՞ց ռուս-թուրքական պատերազմին և բալկանյան ժողովուրդների ազատագրմանը, իսկ Եգիպտոսում Արաբի փաշայի ընդվզումը՝ Ալեքսանդրիայի ռմբակոծմանն ու Նեղոսի վրա անգլիական իշխանության հաստատմանը: Կարո՞ղ էր Օսմանյան պետության պահպանման համար, ինչպես իր կյանքի համար մտահոգված եվրոպական դիվանագիտությունը մի ժամ ավելի երաշխավորել սուլթանին իր գահը, եթե Մակեդոնիայում, Արաբիայում և Սիրիայում պարբերական դարձած անկարգություններից զատ մի այդպիսի հանկարծակի նոպա տարածվեր նաև կայսրության մյուս՝ մինչ այդ անվնաս մնացած հատվածներում: Դեռ որքա՞ն պիտի եվրոպական կաբինետների հիացարժան համբերությունը մահվան մահճում դողացող հիվանդ մարդու զառանցանքներին պատասխանի դիվանագիտական նոտաներով և նրա բոլոր անդամների վրա տարածվող ժանտախտի վերքերի վրա իր թղթե պայմանագրերի սպեղանիներ-

ը փակցնի: Չէ՞ որ ում Աստված ցանկանում է կործանել, նրան նախապես կուրացնում է: Այնուամենայնիվ, նույնիսկ խելագարի գործողությունների համար մի տեսակ հոգեբանական շարժառիթ է անհրաժեշտ, և այն, որ հայկական կոտորածներին հանգեցրած քաղաքական խելագարությունը որոշակի մեթոդ ուներ, դրանում, այո, ցավոք բավականաչափ կարողացել ենք համոզվել: Մենք, սակայն, դեռ չենք գտել նույնիսկ ամենաաղճատված մտածելակերպի համար *բավարար այն շարժառիթը*, որը բացատրելի կդարձնի Հայաստանին վիճակված բնաջնջման միջոցառումը:

Անցյալ տարի, երբ Էրզրումում արտերկրյա հյուպատոսները վալիին տեղեկացրին անարդարության՝ մի առանձնակի աղաղակող դեպքի մասին, վերջինս ասաց՝ թուրքական կառավարությունն ու հայ ժողովուրդը ամուսնու և կնոջ հարաբերությունների մեջ են, և երրորդները, որոնք կարեկցանք են զգում ամուսնու կողմից պատժված կնոջ հանդեպ, ավելի լավ կանեն՝ չխառնվեն ամուսնական գժտությանը:

Արդարև, *սուլթանի կառավարության հետ քրիստոնյա տերությունների առնչությունը* չի կարող ավելի լավ արտահայտվել, քան այդ պատկերով: Սուլթանը, այդ պատկերում մնալու համար, ինչպես հայտնի է, ոչ թե մեկ, այլ բազմաթիվ կանայք ունի իր հարեմում՝ ոչ միայն թուրք, քուրդ, չերքեզ, արաբ, այլև քրիստոնյա՝ հայ, հույն, ասորի և այնքան ազգությունների, որքան հավաքված են իր գայիսոնի ներքո: Անշուշտ, նրան վրդովում է տեսնելը, որ հետաքրքրասեր աչքերը լրտեսում են իր պալատի ճաղապատ պատուհաններից, անգամ, եթե դրա պատերն էլ ականջներ ունեն՝ ընտանեկան պատերազմի մասին տեղեկանալու համար, իսկ ժրաջան լեզուները պալատի գաղտնիքներն աշխարհով մեկ են անում: Որպես տանտեր և թուրք՝ նա կարծում է, թե անօտարելի իրավունք ունի՝ իր հարեմի տիկնանց ֆիզիկական պատիժներ տալու, ոտնակոխ անելու, զնդանելու կամ նաև կախաղան հանելու, խեղդելու, ջրահեղձ անելու, և նա չի հանդուրժում քրիստոնեա-

կան բարոյականության կարեկցանքը, որի համար իր մահմեդական հավատը ոչ մի օրգան չունի:

Քաղաքակիրթ պետություններում, սակայն, պատահում է, որ օրենքի ձեռքով սահմանափակվում են նույնիսկ բռնակալ ամուսնու իրավունքներն իր կնոջ նկատմամբ, և որ կանխվում են խելագարի արարքները, նույնիսկ եթե դրանք նրա սեփական միսն ու արյունն են վտանգում: Քիստոնյա մեծ տերությունները առնվազն շատ տարիներ ի վեր արդարացի էին համարել նման միջոցառումներով սպառնալ հավատացյալների տիրակալին, եթե նա իրեն իր սեփական տանը քաղաքակիրթ մարդու նման չպահեր: Ցավոք այդ սպառնալիքները, եթե նաև դրանք, *ամենակարողի անունից* վճռվելով և ստորագրվելով, մի շարք պայմանագրերում հանձնվեցին սուլթանին, որևէ կիրառում չէին ունեցել: Խելացի խոստումներով նա կարողացել էր խուսափել պայմանագրերի կատարումից և վստահ էր, որ եվրոպական արդարադատությունն արդեն վաղուց անհրաժեշտ համարված միջոցառումների իրականացման դժվարության պարագայում իրեն բավականաչափ ժամանակ կտրամադրեր՝ ընտանեկան պատերազմն իր ձևով ավարտելու համար: Եվ նա օգտագործեց ժամանակը: Երբ տասնյոթամյա սպասումից հետո եվրոպական դիվանագիտությունը դարձյալ հիշեց Հայաստանում թուրքական բարբարոսության զոհերի հանդեպ նախկինում շքեղորեն ցուցադրված կարեկցանքը և անցյալ տարի իր փաստաբաններին սուլթանի մոտ ուղարկեց՝ նրա հպատակների հանդեպ մարդավայել վերաբերմունք ձեռք բերելու համար անվերջանալի ծանուցումներով, թուրք տանտերը, զահլատար շտապեցնողներին խոստումներով զսպելով, մոլեգին խանդով համակված՝ գործադրեց իր բարբարոսական իրավունքը և առանց այլևայլության խեղդեց եվրոպական կարեկցանքի դժբախտ զոհին: Քրիստոնյա մեծ տերությունների դեսպանները՝ հպարտ իրենց դիվանագիտության արդյունքներով, դեռ կանգնած էին կայսերական պալատի դռան առաջ՝ ազա-

տագրված Հայաստանը, ինչպես իրենք էին ողջ աշխարհին հայտարարել, իրենց ձեռքերի մեջ առնելու համար, երբ հանկարծ դռները բացվեցին, և նողկալիորեն խեղված մի դիակ շպրտվեց նրանց ոտքերի առաջ: Դիվանագետներն անմիջապես շուռ եկան, և ոչ ոք չկամեցավ ինչ-որ բան տեսած լինել: Նրանք առաջվա պես նստած են սուլթանի ճաշասեղանի մոտ և երջանիկ են՝ իրենց դիվանագիտության հաջողությունների համար բարձր պարգևատրումներ ստանալով:

Պատկերի լեզվից, սակայն, վերադառնանք քաղաքականության լեզվին. ի՞նչ բովանդակություն ունեին այն պայմանագրերը, որոնցով մարդասեր Եվրոպան նախկինում երաշխավորել էր հայ ժողովրդի բարօրությունը:

Ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտից հետո Ռուսաստանը *Սան Ստեֆանոյի պայմանագրում* պահանջել էր հաղթության պտուղներից մեկը՝ իրեն վերապահել տարաբախտ հայ ժողովրդի պաշտպանությունը: Պայմանագրի 16-րդ հոդվածը սահմանում էր. «Քանի որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված հայկական տարածքից, որը պետք է վերադարձվի Թուրքիային, կարող է բախումների և բարդություններին տեղիք տալ, ինչն անհնար կդարձնի երկու երկրների միջև լավ հարաբերությունների պահպանումը, Բարձր դուռը պարտավորվում է *հայաբնակ նահանգներում առանց հերթագա հապաղման իրականացնել տեղական կարիքների հիման վրա պահանջվող բարելավումները և բարենորոգումը և երաշխավորել հայերի անվտանգությունը քրդերից ու չեչեզներից»*:

Քրիստոնյա մեծ տերությունները, սակայն, որոնք չէին ցանկանում մարդասիրության դափնին Ռուսաստանին տալ՝ առանց նման բարձր պարգևի համար ազնվագույն համաշխարհային վեճում մրցամարտի մեջ մտնելու, *Բեռլինի պայմանագրում* Անգլիայի առաջարկով մի կողմ թողեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը և այն փոխարինեցին բարենորոգումների

իրականացման և հայ քրիստոնյաների պաշտպանության՝ պայմանագիրը ստորագրող բոլոր տերությունների համերաշխ երաշխավորությամբ: «*Բարձր դուռը*,– նշված է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում,– *ստանձնում է հայաբնակ նահանգներում առանց հետաձգա հապաղման տեղական կարիքներով պահանջվող բարելավումները և բարենորոգումներն իրականացնելու և քրդերից ու չերքեզներից հայերի անվտանգությունը երաշխավորելու պատասխանատվությունը*: Նա այդ ուղղությամբ կատարված քայլերի մասին պարբերաբար *կտեղեկացնի տերություններին, որոնք կվերահսկեն դրանց կենսագործումը*»: Անգլիան, սակայն, սրանով չբավարարվեց: Մարդասեր փառասիրությունը կամ մի այլ շահ դրդեց նրան դեռ Բեռլինի պայմանագրի բանակցությունների ընթացքում Բարձր դռան մոտ մյուս բոլոր տերությունների նկատմամբ գերազանցության հասնել և, այսպես կոչված, *Կիպրոսյան կոնվենցիայի* միջոցով Հայաստանի երջանկացման հարցում մի առանձնահատուկ առաջադրանք ստանալ: Դեռ դրա ստորագրումից առաջ լորդ Սոլսբերին 1878 թ. մայիսի 30-ի մի հեռագրում Կոստանդնուպոլսում բրիտանական դեսպանին տվեց հետևյալ հրահանգները. «Երաշխիքները, որոնք անհրաժեշտ են՝ Անգլիային իրավունք տալու պահանջել այս (բարեփոխումների) մտադրությունների իրականացման գոհացուցիչ միջոցառումներ, կլինեն կարևորագույն բաղկացուցիչ մաս ցանկացած համաձայնագրի, որին նորին մեծության կառավարությունը կարող է տալ իր համաձայնությունը»: Դրան համապատասխան՝ Անգլիան այնուհետև, ի դեմս կիպրոսյան կոնվենցիայի, Թուրքիային նրա ասիական տիրույթների համար տրվող երաշխիքի դիմաց ստացավ «կայսերական նորին մեծություն սուլթանի *խոստումը՝ Բարձր դռան՝ այդ տարածքներում ապրող քրիստոնյա և մյուս հպատակների պաշտպանության համար* կառավարման մեջ իրականացնելու *անհրաժեշտ վարչական բարեփոխումներ*,

որոնց վերաբերյալ երկու տերությունների միջև հետագայում համաձայնություն պետք է կայացվեր»:

Տրամաբանական ենթատեքստը, որի մեջ անգլիական դիվանագիտությունն այդ գործարքով տեղադրում էր Կիպրոսի զավթումը, պայմանագրի ձևակերպումներում մեծագույն խորաթափանցության դեպքում իսկ հնարավոր չէ հայտնաբերել: Հավանաբար, սակայն, Անգլիան այնպիսի վառ կռահում ուներ իր կողմից Բարձր դռան մոտ տարաբախտ Հայաստանի համար ձեռքբերվելիք բարեփոխումների վերաբերյալ, որ այլ կերպ չէր կարող, քան իր համար դեռ նախապես պատշաճ վարձք ապահովել: Երբ վեց մեծ տերությունները սուրբ պայմանագրերով (գերմանական կայսրության մայրաքաղաքը այդ վեհ ներկայացման վկան էր) երաշխավորում են մի ստրկացված ժողովրդի բարօրությունը, գրեթե կարելի է հավատալ, որ նույնիսկ Ամենակարողը չէր կարող իր անօգնական արարածներին ավելի լավ պաշտպանություն ուղարկել և վստահորեն երկրի վրա իր դատաստանի պատգամավորներին էր թողել իր արդարադատության ապահովումը: Բայց մեզ ասում են, որ, քանի որ, ինչպես պետք է խոստովանել, քաղաքականությունը բոլոր արվեստներից ամենաուխտադրուժն է, այն սուրբ պայմանագրերը ոչ այլ ինչ են եղել, քան մի գեղեցիկ բարոյական կուլիս, որի ետևում ուզում էր թաքնվել տերությունների քաղաքական ինտրիգախաղը, և որ, անկախ այն բանից՝ Հայաստանը կլիներ, թե չէր լինի, Բեռլինի պայմանագիրը ստորագրող կողմերից ոչ մեկը լրջորեն չի մտածել նույնիսկ մատը շարժել՝ գեղեցիկ խոստումները երբևէ իրականացնելու կամ Բարձր դռանը իր պարտավորությունների իրականացումը հրահանգելու համար: Այո, թղթե պայմանագրերի իրականացմանը նպաստելու այն փորձը, որն անցյալ տարի՝ 17 տարվա անգործությունից հետո, համաստորագրող տերություններից մեկը (էական չէ՝ ինչ շարժառիթներով) այս ուղղությամբ ձեռնարկեց, ամբողջ Եվրոպայի կողմից վանկարկվում է որպես խաղաղության դիվանագիտական կո-

պիտ խախտում, և քաղաքակիրթ աշխարհը սոսկում է տածում «նենգ» Անգլիայի հանդեպ, որը, քանի որ դա նրան ձեռնտու է, ուզում է դաղարել թուղթը՝ թուղթ և հայերին թուրքական տիրապետության ներքո երջանիկ ժողովուրդ համարել:

Հավանաբար, սակայն, կառարկեն՝ ասելով, թե դրությունը Հայաստանում այլևս բնավ էլ այնքան վատ չէր, և տերությունները այն պատճառով հրաժարված կլինեն պայմանագրային պարտավորությունների կատարումից, քանի որ ժամանակի ընթացքում տեղի ունեցած՝ պայմանների բարելավման պատճառով բարենորոգումների իրականացումն այլևս անհարկի էր դարձել: Այժմ տերությունները, որոնք ի վիճակի են իրենց հյուպատոսների միջոցով ստանալ Հայաստանում տիրող իրադրության մասին ցանկացած անհրաժեշտ տեղեկություն և արդարև, ինչպես դիվանագիտական տեղեկատվական նյութի հատորներն են ապացուցում, չեն կարող պատրվակել, թե անտեղյակ են եղել, կարող են անձամբ որոշում կայացնել այդ հարցում: Բեռլինի պայմանագրից հետո առաջին տարիներին դեռ քաղաքական պարկեշտության հարց էր համարվում Բարձր դռան կողմից պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող որոշումների բացարձակ արհամարումն առվազն դիվանագիտական նոտաներով քննադատելն ու ձևանալը, թե իրոք ուզում են ճնշում գործադրել հայկական նահանգներում բարենորոգումների իրականացման համար: 1880 թ. սեպտեմբերի 7-ին ստորագրող վեց տերությունների դեսպանների կողմից Բարձր դռանը ներկայացվեց մի *համատեղ նոտա*: Դրանում կարելի է կարդալ հետևյալը. «Ստորագրող տերությունները ստացել են այս տարվա հուլիսի 5-ի նոտան, ըստ որի՝ Բարձր դուռն իրականացրել է հունիսի 11-ի նրանց հաղորդագրության այն պարագրաֆը, որը վերաբերում էր բարելավումներին և վարչական բարեփոխումներին, որոնք օսմանյան կառավարությունը, *Բեռլինի պայմանագրի 61-րդ կետի համաձայն*, պարտավորվել է իրագործել հայաբնակ նահանգներում: Այդ փաստաթղթի ման-

բամասն ուսումնասիրությունը նրանց ապացուցել է, որ օսմանյան կառավարության ձևակերպած առաջարկները *ոչ ոգով, ոչ էլ տառով չեն համապատասխանում այդ հոդվածին*: ... Ոչինչ չի ապացուցում այն, որ արդարադատության բնագավառում որևէ բարելավում է կատարվել: Ընդհակառակը, հյուպատոսական բազմաթիվ զեկույցներ հաստատում են, որ, ինչ վերաբերում է քաղաքացիական և քրեական դատարանների անկախությանը, *ներկայիս դրությունը նույն կերպ չգոհացնող է, եթե ոչ՝ ավելի վատ, քան նախկինում:* Ինչ վերաբերում է ժանդարմերիային և ոստիկանությանը, ապա հուլիսի 5-ի նոտան վստահեցնում է, որ Բարձր դուռը բազմաթիվ հատուկ պաշտոնյաների հանձնարարել է այդ երկու կատեգորիաների համար բարեփոխումների առաջարկներ ներկայացնել: Տերությունները *ոչ մի տեղեկություն չեն ստացել* այդ առաջարկների մասին, և անգամ օսմանյան կառավարությունն ի վիճակի չէր հայտարարելու, որ դրանք նույնիսկ ներկայացվել են իրեն:

Ստորագրողները չեն կարող ընդունել, որ Ձերդ գերազանցության պատասխանը թեկուզ ամենաչնչին իսկ չափով բավարարում է տվել իրենց՝ հունիսի 11-ի նոտայում ձևակերպված բողոքներին: Նրանք առավել ևս այն պատճառով են իրենց իրավասու համարում մատնանշել այդ տեսանկյունից օսմանյան կառավարության փորձարկած ջանքերի իրական արժեքը, որպեսզի Բարձր դուռը, այս պատասխանից հետևություն կատարելով, *իրեն ոչ այլ կերպ, քան բացահայտորեն հաշիվ տա իրադրության և այն պարտավորությունների վերաբերյալ, որոնք նրա համար սահմանել է Բեռլինի պայմանագիրը*:

Նույնիսկ այն արտահայտությունները, որոնցով Բարձր դուռն անդրադառնում է հայաբնակ նահանգներում կատարված կամ հաղորդված հանցագործություններին, ապացուցում են, որ նա խուսափում է ընդունել *անարխիայի իրավիճակը, որն իշխում է այդ նահանգներում, մի իրադրության լրջությունը, որի շարու-*

նակականությունն ամենայն հավանականությամբ կհանգեցնի երկրի այդ ընդարձակ հարվածներում քրիստոնյա բնակչության բնաջնջմանը:

Հուլիսի 5-ի նոտան *ոչ մի լուրջ առաջարկ չի ներկայացնում, որն ուղղված կլիներ չերքեզների և քրդերի անկարգություններին վերջ դնելուն...*:

Տերությունները անկասկած գոհունակությամբ կողջունեին օսմանյան պետության բոլոր մասերում բարեփոխումների իրականացումը, բայց նրանք ամենից առաջ պնդում են Բեռլինի պայմանագրի լիարժեք իրագործումը և չեն կարող թույլ տալ, որ Բարձր դուռը *փորձի խուսափել այդ առումով իր ստանձնած պարտավորություններից՝* առաջարկելով մի նոր կարգավորում, որում ի հայտ չի գալիս *բուն բարեփոխումներից և ոչ մեկը*, որոնք վերապահված են՝ ի նպաստ անվանյալ նահանգների»:

Համատեղ նոտան հաջորդիվ Բարձր դռանը ներկայացնում է ամենամանրամասն առաջարկները պայմանագրով պահանջվող՝ կառավարման, արդարադատության և ոստիկանության վերակազմակերպման առնչությամբ և եզրափակվում է հետևյալով. «Ստորագրող կողմերը մեկ անգամ ևս Բարձր դռան ուշադրությունը հրավիրում են այն փաստի վրա, որ *բարեկորոգումները, որոնք պետք է իրականացնել հայաբնակ նահանգներում, պետք է իրագործվեն՝ ըստ այն պարտավորությունների բառի և տառի, որոնք նա ստանձնել է միջազգային իրավական գործընթացով* համապատասխան տեղական պահանջներին և *տերությունների հսկողության ներքո*:

Ստորագրողներ՝ Հացֆելդտ, Նովիկով, Գոշեն, Կորտի, Տիսոտ, Կալից»:

Սա *Բեռլինի պայմանագրից երկու տարի անց* վերջին լուրջ քայլն էր, որը ձեռնարկվեց տերությունների կողմից՝ տարաբախտ հայ ժողովրդին տրված խոստումներն իրականացնելու համար:

Կարլ Գրանվիլի՝ 1881 թ. հունվարի 12-ի շրջաբերական նոտան, որը մյուս 5 տերություններին ևս մեկ անգամ Բարձր դռան մոտ նոր առարկություններով հանդես գալու կոչ էր անում, նրանց կողմից ստացավ խուսափողական պատասխան: Անգլիան այլ բան չէր էլ սպասում, քանի որ Կոստանդնուպոլսում անգլիական դեսպանը՝ պրն. Գոշենը, Կարլ Գրանվիլին արդեն գրել էր. «Եթե նրանք (տերությունները) մերժեն կամ միայն թույլ աջակցություն ցուցաբերեն, նորին մեծության կառավարությունն այլևս ոչ մի պատասխանատվություն չի կրի»: Այսպես «Հայկական հարցը» մնաց դիվանագիտական փաստաթղթերում, իսկ Բարձր դուռը լվաց իր ձեռքերը:

Այսպիսով՝ քրիստոնյա մեծ տերությունների ներկայացուցիչները *լիովին տեղյակ էին*, որ հայկական նահանգներում «*տիրող անարխիայի շարունակականությունը ամենայն հավանականությամբ կհանգեցներ երկրի այդ ընդարձակ հատվածներում քրիստոնյա բնակչության բնաջնջմանը*», և, այնուհանդերձ, նրանք տասնհինգ տարի ևս համերաշխորեն հրաժարվեցին ինչ-ինչ դժվարություններ հարուցել Հայաստանում թուրքական կառավարչական մեքենայի՝ եռանդաբար գործող բնաջնջման քաղաքականության առջև, որը քրիստոնյա բնակչությանը, ինչպես կալում ծղոտը, կալսում էր: Եվ նաև ինչո՞ւ անեին: Չէ՞ որ այդ դիվանագետները, «ինչպես Բարձր դռան խելացի փաշաները, նմանապես լավ գիտեին, որ «միջազգային իրավական գործընթացով» երաշխավորված բարենորոգումները հավերժ մնալու էին թղթի վրա, և որ իրենց ողջ գրագրությունը իրենց բոլոր բանավոր առարկությունների հետ միասին այդ հարցում ոչինչ չէր փոխելու: Նրանք մինչև իսկ կարող էին 1880 թ. սեպտեմբերի 7-ի համատեղ նոտան բազմացնել և հաջորդ տասնհինգ տարիներին յուրաքանչյուր եռամսյակի վերջում դարձյալ ուղարկել Բարձր դռանը, բայց ո՞վ կարող է կրթված և պատվարժան մարդկանց մեղադրել, որ նրանք երկու կամ երեք անգամ խաբվելուց հետո հրաժարվեցին

մասնակցել այդ՝ ջահերով պարին, քանի որ սկզբից նեթ համոզված էին, որ ոչ մի կողմից, դիվանագիտական նոտաների ոճավարժանքից զատ, որևէ այլ բան չէր առաջարկվելու:

Այդ ընթացքում մեքենան շարունակում էր աշխատել: Այն մասին, թե ինչպես էր Հայաստանի քրիստոնյա բնակչությունը նրա երկաթյա ատամների տակ դանդաղ, բայց հաստատունորեն ճզմվում, կարելի է պատշաճ պատկերացում կազմել մի ականատեսի փաստավավերագրական տեղեկություններից, որն անցած տարվա աշնանն ահազանգում էր Անգլիայի քրիստոնյա հասարակայնությանը: Ստորև ներկայացնում ենք 1895 թ. օգոստոսին Է. Ջ. Դիլոնի «Contemporary Revie»-ում (թիվ III) հրատարակված «*Հայաստանի դրությունը*» հոդվածը: Գերմանական հասարակությանն արժեր ներկայացնել նաև Ֆ. Դ. Գրինի և պատվելի Մալկոլմ Մաքկոլի ուսանելի հրատարակությունները, քանի որ այդ մարդիկ նույնիսկ իրենց սեփական կառավարության քաղաքականության դեմ են համարձակորեն խոսում և այնպիսի պարզորոշությամբ, որ նույնիսկ թուրքին կամաչեցներ, մերկացնում են թուրք պաշտոնյաների, սպաների, դատավորների, հարկային և ոստիկանության ծառայողների խայտառակ գործելակերպը, որոնց ամոթալի արարքների կողքին քրդերի թալանն ու սպանությունները դպրոցականների անմեղ կատակներ են թվում:

«Ռուսաստանի դեմ 1878 թ. մեր կատարած քայլերի փաստացի հաջողությունը,– գրում է Դիլոնը,– զուտ մարդկային տեսանկյունից եղել է այն, որ մենք հայկական նահանգներում հավերժացրինք սարսափների մի համակարգ, որի համեմատությամբ ամերիկյան հարավային նահանգների սևամորթ ստրուկների տառապանքները թեթև անհարմարություններ էին: Մենք հանդիսավորությամբ փակեցինք քավարանը և թույլ տվեցինք, որ նրա տեղում դժոխք ստեղծվի: Մենք պարտավորվել էինք հոգ տանել, որ չարաշահումները … անմիջապես ու վերջնականապես վերացվեն, իսկ հետո մենք ոչ միայն թերացանք կատարել … այս

ինքնակամ ստանձնած պարտավորությունը, այլև թույլ տվեցինք, որ մի անկարգ կառավարչության տեղական անառակ համակարգը հետզհետե վերածվի բնաջնջման մի դիվային քաղաքականության՝ առանց համարձակվելու զգացնել տալ մեր ուժը կամ ընդունել մեր անզորությունը»:

Տասնյոթ տարի շարունակ մեքենան լուռ և անձայն աշխատում էր: Եթե նույնիսկ դիվանագետների կողմից, որոնց պարտականությունն էր «վերահսկել» Բարձր դռան միջոցառումները, երբեմն մի փոքրիկ քար էր նետվում նրա անիվների արանքը, ապա Բարձր դուռը դա բացառապես որպես անմեղ կատակ էր ընդունում: Հանկարծ ահա 1894 թ. օգոստոսին մեքենան, քանի որ չափազանց կտրուկ էր աշխատում, մի լսելի ցնցում ունեցավ, և սարսափած Եվրոպան *Սասունի կուրորածի միջոցով* անհաճելիորեն հիշեցվեց Հայաստանի գոյության մասին: Մեծ քաղաքականության մեջ ծայր առավ մի խառնիփնթոր բզզոց, ինչպես խառնակված մեղվափեթակում: Նշանակվեց հետաքննիչ հանձնաժողով, և կազմվեց 108 *արձանագրություն*: Էլ չենք խոսում դիվանագիտական նոտաների հատորների մասին, որոնք համատեղ էին գրվել: Բարձր դուռն ամենևին չկարողացավ ըմբռնել, թե ինչ էր կատարվում, քանի որ այն, ինչ Սասունում պատահեց, սովորական կառավարման մեթոդի միայն փոքր-ինչ ավելի ցայտուն դրսևորում էր և, բացի այդ, *դիմացկունության թեսի այն բանի, ինչը Հայաստանում եվրոպական դիվանագիտությունը համբերությամբ տրանելու էր*:

Կասկած չկա, որ այն շփոթությունը, որը Բարձր դռան՝ նաև չափազանց անզգույշ ներքին քաղաքականության միջոցով պատճառվեց մայրցամաքային կաբինետներին, ձեռնտու էր Լոնդոնի արտգործնախարարությանը, և *1895 թ. փետրվարին հայկական բարեկարգումների շուրջ բանակցությունների վերսկսումը* ամենևին էլ միայն լիբերալ կառավարության մարդասիրական պահանջներից չէր բխում: Սակայն պատմության ժամանակագ-

թությունը երկու կամ երեք պտույտով հետ տալը, ինչը Լոնդոնի, Պետերբուրգի և Փարիզի կաբինետներում է արվում շատ թե քիչ մաքուր ձեռքերով, և արևելյան ճգնաժամի տարերային բռնկումը, որը հավանաբար միայն թուրքական տերության փլուզմամբ կարող է ավարտվել, սոսկ մի քանի շատ թե քիչ խելացի դիվանագետների մեքենայությունների վրա բարդելը կնշանակի համաշխարհային պատմության դրաման տիկնիկային թատրոնի պատերի ներսից ըմբռնել:

Սասունի կոտորածն այնքան վառ լույս էր նետել Հայաստանում Բարձր դռան՝ բնաջնջման քաղաքանության վրա, որ, չհաշված նաև այն օգուտը, որ Արևելքում ավելի կտրուկ գործողությունները ընդհանուր քաղաքական իրադրության մեջ Անգլիային կբերեին, լիբերալ կաբինետը չէր կարող հաշվի չնստել անգլիական հասարակության վրդովմունքի հետ և վերջապես չմտածել Կիպրոսյան կոնվենցիայի պարտավորությունների կատարման մասին: Հայաստանում բարենորոգումների իրականացման վերաբերյալ բանակցություններին, որոնք Անգլիան 1895 թ. մարտին սկսեց ձեռնարկել Բարձր դռան հետ, *ապրիլին պաշտոնապես միացան Ռուսաստանն ու Ֆրանսիան*: Անգլիական, ֆրանսիական և ռուսական դեսպանությունների գլխավոր թարգմանները մայիսի 11-ին Բարձր դռանը ներկայացրին երեք դեսպանությունների կողմից Փոքր Ասիայի արևելյան շրջանների համար մշակված բարենորոգումների ծրագիրը, որը ստացել էր երեք տերությունների հավանությունը: Այն տարածվում էր Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սվազի, Խարբերդի, Դիարբեքիրի վեց նահանգների վրա և պահանջում էր կառավարման, արդարադատության և ոստիկանության համակարգերի, բանտային և հարկային բնագավառների արմատական բարեփոխում և ազդեցիկ միջոցառումներ համիդեական զորքերի ոտնձգությունների ու քրդերի ավազակային հարձակումների դեմ: Կառավարման, արդարադատության և ոստիկանության համակարգերը, ըստ, բնակչության հարաբե-

ռակցության, պետք է բաղկացած լինեին մահմեդական և քրիստոնյա պաշտոնյաներից: 1880 թ. մի վիճակագրություն խնդրո առարկա վեց վիլայեթների համար հետևյալ թվերն է ներկայացնում. քրիստոնյաներ՝ 1 054 800 (հայեր՝ 780 800, ասորիներ՝ 251 000, հույներ՝ 23 000), մահմեդականներ՝ 776 500 (թուրքեր՝ 220 000, չերքեզներ՝ 100 000, քրդեր՝ 380 000 և այլք՝ 76 500):

Այդ ծրագիրը, որի հետևում կանգնած էին Արևելքում շահագրգռություններ ունեցող երեք մեծ տերությունները, Բարձր դռանը ծայրահեղ անելանելի դրության մեջ գցեց, առավել ևս, որ մյուս տերությունները, *ներառյալ Գերմանիան*, Բարձր դռանը դրդում էին համաձայնել դրան: *Մահմեդական կրոնական օրենքը ոչ մի դեպքում չի հանդուրժում և երբեք չի հանդուրժի* քրիստոնյաների քաղաքացիական իրավահավասարությունը, թեկուզ միայն դատարանում, և էլ ավելի՝ կառավարման մեջ: Այն քրիստոնյային չի թույլատրում նույնիսկ դատարանի առջև մահմեդականի դեմ ցուցմունք տալ: Այնուամենայնիվ, այն ամենը, ինչ պահանջում էր բարենորոգումների ծրագիրը, *թղթի վրա* հիմնականում թույլատրում է դեռ 1856 թ. Հաթթի Հումայը ողջ թուրքական պետության համար, բայց այն մնացել էր որպես մեռած տառ հենց արդեն այն պարզ պատճառով, որ երբեք չստացավ և չէր էլ կարող ստանալ Շեյխ ուլ Իսլամի հաստատումը: Որքան էլ Բարձր դռան դիվանագետները շուռումուռ էին գալիս և ամիսներ տևող բանակցություններով փորձում էին խուսափել բարենորոգումների ծրագրի ընդունումից, սուլթանին, ի վերջո, այլ բան չէր մնում, քան չիրականացված խոստումների երկար շարքին ավելացնել նաև դա և *ստորագրել* բարենորոգումների ծրագիրը: Արդեն սեպտեմբերի 14-ին Բարձր դուռը Ռուստամ փաշային՝ Լոնդոնում Թուրքիայի դեսպանին ուղարկված հեռագրում, ըստ էության, հայտնել էր իր համաձայնությունը բարենորոգումների վերաբերյալ, և հետագա բանակցություններից հետո հայկական բարենորոգումների խնդիրը հոկտեմբերի 22-ին մեծ վեզիր Սաիդ

փաշայի՝ չստորագրված գաղտնի նոտայով գտավ իր դիվանագիտական լուծումը: *Բացի այդ՝ լորդ Սոլսբերիին ուղղված մի գրության մեջ սուլթանն իր պատվով երդվեց, որ բարեկարգումներն անհապաղ և փառացիորեն պիտի իրագործվեին*: Այս անգամ, սակայն, Բարձր դուռը տերությունների հետ բանակցություններից համոզվել էր, որ բարեկարգումներն ավելին պետք է լինեին, քան թուղթն էր, և, որ, եթե ինքը ցանկանում էր խափանել դրանց փաստացի իրականացումը, ապա նահանգներում պետք է ինչ-որ բան կատարվեր, *ինչը դե ֆակտո անհնար կդարձներ բարեկարգումները*: Հոկտեմբերի սկզբին՝ այն բանից հետո, երբ Կոստանդնուպոլսում հայկական ցույցը լավ հնարավորություն էր ընձեռել, նահանգներում քաղաքացիական և զինվորական իշխանությունները պալատից արդեն ստացել էին իրենց հրահանգները: *Թուրքական կառավարչության ոչնչացման մեքենան գործի դրվեց ամբողջ թափով, և երեք ամսվա ընթացքում հիմնականում ավարտվել էր հայ բնակչության՝ փշրումն այն բոլոր նահանգներում, որտեղ բարեկարգումներ պիտի իրականացվեին, և նաև դրանցից դուրս*:

Դարձյալ հարցնենք. ի՞նչ են հայկական կոտորածները: Դրանք Բարձր դռան վարչական միջոցառում էին, որի միակ շարժառիթն ու նպատակը մեծ տերությունների հարկադրած հայկական բարեկարգումները հայ ժողովրդի բնաջնջման միջոցով վերջնականապես անիրագործելի դարձնելն էր:

Թուրքիայում մի բարձրաստիճան պաշտոնյա, որն իրազեկվելու մի բացառիկ առիթ էր ունեցել, հետևյալ կերպ էր արտահայտվում հայկական կոտորածների մասին. «Մի՛ խաբվեք կառավարության անհեթեթ տեղեկություններով, որոնք ձգտում են այդ բոլոր կոտորածների մեղքը հայերի վրա բարդել: Հայերին պատժելը կառավարության կանխամտածված ծրագիրն էր. սուլթանը զայրացած էր, քանի որ ստիպված էր եղել նրանց բարեկարգումներ խոստանալ, և այն բանից հետո, երբ նա բարեկարգումների ծրագիրը ստորագրել էր, կարգադրեց սպանել հայերին՝

իր ուժը ցուցադրելու համար»: Վերջերս մամուլում մի տեղեկություն էր շրջանառվում, որի համաձայն՝ ցարը այս աշխատությունը տպագրելու ժամանակ վախճանված իշխան Լոբանովին ասել է. *«Թուրքիան կարծես ցանկանում է խաբել մեզ: Ես, սակայն, չեմ կարող և չեմ ուզում թույլ տալ, որ ոճրագործություններն այնքան շարունակվեն, մինչև սուլթանի՝ թերևս վերջին քրիստոնյա հպատակը սպանված կլինի: Դրան պետք է վերջ դնել»*:

Հանելուկի լուծումը գտնված է, սակայն հողի տակ գտնվող 100 000 հայերի համար՝ ցավոք, չափազանց ուշ:

Իրոք, եթե բանը պետք է հասնի նրան, որ եվրոպական քաղաքականությունը հետ դառնա տարիներ ի վեր իր անցած աղետալի ճանապարհից, ապա նախևառաջ պետք է համընդհանուր գիտակցում ստանա այն ցավալի ճշմարտությունը, որ *հայ ժողովրդի սարսափելի բնաջնջումը ոչ այլ ոք, քան հենց քրիստոնյա մեծ տերությունների քաղաքականությունն է առաջ բերել*: Եթե տերությունների հետաքրքրության կենտրոնում հայտնվեին ոչ թե Փոքր Ասիայի՝ հայերով բնակեցված արևելյան, այլ հույներով բնակեցված արևմտյան նահանգները, ապա *վստահաբար կարելի է պնդել, որ դրանք կարժանանային նույն ճակատագրին, ինչ՝ Հայաստանը*: Հայաստանում չկար նույնիսկ որևէ պատճառ, որը կարող էր հայերի վրա ուղղել թուրքական կառավարության բնաջնջիչ ատելությունը: «Հայ ժողովուրդը խաղաղասեր է եղել,– դեռևս սեպտեմբերին վկայում էր արտաքին գործերի նախարար Թուրխան փաշան Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի գլխավոր թարգմաններին,– մինչև մեծ տերությունների համակրանքը շահելը»: Եթե տերությունները Հայաստանն իր հույսին թողնեին, հայերը չնայած դեռ այսօր էլ երջանիկ չէին լինի, բայց չէին լինի նաև երկրագնդի վրա ամենադժբախտ ժողովուրդը:

Չի կարելի, սակայն, պախարակել այն, որ եվրոպացի դիվանագետները հանձն էին առել մի թշվառ, ոտնահարված ժողովրդի պաշտպանությունը, մյուս կողմից, այնուհանդերձ, նրանք դա

այնպես արեցին, որ իրենց քաղաքականության գինը այդ ժողովուրդը ստիպված եղավ իր արյամբ վճարել:

Ամեն դեպքում ավելի լավ է կործանվել ոչ թե քաղաքակիրթ ժողովուրդների կարեկցության, այլ բարբարոս կառավարության վայրագության պատճառով: Այդ դեպքում այս խեղճ ժողովուրդը գոնե զերծ կմնար անտեղյակ լրագրողների բարոյական խրատներից և եվրոպացի դիվանագետների՝ կոկորդիլոսի արցունքներից ու չէր զրկվի մի ազնիվ մահախոսականից: Կամ միգուցե ես անարդարացի՞ եմ դիվանագետների նկատմամբ: Ասում են, որ կոկորդիլոսը որսին դարանակալելիս արտասվող երեխայի ձայն է արձակում: Մի՞թե համեմատությունը տեղին չէ: Այլապես ո՞րն էր այն պայմանագրերի իմաստը, որոնք, ինչպես պարզվում է, մարդասիրության պատրվակի ներքո միայն բիրտ շահերի քաղաքականությանը պիտի ծառայեին: Կամ միգուցե քրիստոնյա Եվրոպայում քաղաքականության այլ իդեա՞լ կա: Իրոք ժամանակն է՝ դա փաստելու:

Իսկ ի՞նչ առնչություն ունի այս ամենի հետ Գերմանիան: Իրականում գերմանական դիվանագիտությունը Բեռլինի պայմանագրից ի վեր այս բոլոր տարիների ընթացքում ոչ մի պատժելի արարքով չի մեղանչել հայ ժողովրդի հանդեպ: Նա նախընտրել է սուլթանի հետ բարեկամությունն անգամ նրա քաղաքականության զոհի նկատմամբ համակրանքի դրսևորումներով չվտանգել: Նրա ուղենիշը նրան նախանշվել էր «պոմերական հետևակայինի ոսկորների» մասին ասույթով, որոնց չարժի ոչ մի բուլղարացի, էլ ուր մնաց՝ հայ: Հավանաբար երբեք իր ժամանակին ոչ մի դիպուկ, լավ խոսք այնքան տնական քաղաքական իշխանություն չի ունեցել, որքան այդ երջանիկ նախադասությունը: Իսկ բռնակալության հարցում, որը մի ուժեղ, պատկերավոր արտահայտություն կարող է գործադրել տրամաբանական հիմքերի ուղղամիտ շարադրանքի վրա, կարող է համոզվել յուրաքանչյուրը, ով այսօր կամ վաղը մի անմեղ զրույցի ժամանակ մեր արևելյան քաղաքա-

կանության վերափոխման համար նիզակ կճոճի և ստիպված կլինի փաստել, որ նույնիսկ ամենաամուր նիզակը պիտի կոտրվի այդ նախադասության զրահի վրա: Մի՞թե խոսքն առհասարակ այն մասին է, որ պետք է գերմանական արյուն թափվի Բոսֆորի ափերին: Բարեկիրթ դիվանագիտական նոտաների և պատերազմ հայտարարելու միջև եվրոպական դիվանագիտության համար, եթե, իհարկե, նա լուրջ ցանկություն ունի, իրապես կա բավականաչափ խաղահրապարակ՝ անզոր Բարձր դռանը ինչ-որ բան պարտադրելու համար: Կամ արդյո՞ք արժանավայել է, երբ մի քրիստոնյա մեծ տերություն կարծում է, թե ինքն այնքան քնքուշ նրբանկատություն պետք է տածի Յըլդըզի պալատի իշխանավորների նյարդերի հանդեպ, որ կայսերական պալատում այլևս առհասարակ չարտաբերի Հայաստան բառը: Այդ դեպքում, հիրավի, փոքր-ինչ տարբեր պահանջներ են ներկայացվում Ոսկեղջյուրի մոտ բազմոցների վրա հարմարավետ մեկնված թուրքերի նյարդերին և հայ քրիստոնյաների նյարդերին, որոնք նույն թուրքերի կողմից, ամենաընտրյալ չարչարանքների ներքո, դուրս են հանվում նրանց մարմնից՝ այն թրատելով:

Եթե, ինչպես հավաստվել է մի հեղինակավոր կողմից, գերմանական դիվանագիտությանը վերջին 10 ամիսների քարոզարշավի ընթացքում միայն այն ղեկավար սկզբունքն է նախանշվել, որ պետք է «*խուսափել Հայկական հարցի հետ ցանկացած առնչությունից, ինչպես դժոխքի կրակից*», ապա, իհարկե, ոչ ոք չի պահանջի, որ նա կպցված կրակից իր մատներն այրի: Հարցն էլ, սակայն հենց այդ է, թե արդյոք մայրցամաքի ամենաուժեղ ժողովրդի համար ավելի արժանավայել չէ՞ր լինի, որ նա մյուսների հետ միասին մարեր դժոխային կրակը՝ փոխանակ միայն ճգտելու լավ հարաբերությունների մեջ մնալ այն վառողների հետ: Այո՛, դա, հիրավի, դժոխային կրակ է, և եթե այն կարճ ժամանակում շուրջ բոլորն ամեն ինչ լափի և Արևելքի բոլոր քրիստոնյաներին առնի իր բոցերի մեջ, ապա դրանում գերմանական քաղաքականությու-

նը նույնպես անմեղ չի լինի: Այնուհետև, համենայն դեպս, դեռ ժամանակ կլինի, որ Ոսկեղջյուրի մոտ գտնվող դիվանագետները փրկվեն այնտեղ տեղակայված երկու ռազմանավերից մեկով, որոնք նրանք, խիստ մտահոգ լինելով, դիվանագիտական նոտաների ծավալուն փոխանակությամբ ձեռք են բերել՝ իրենց տրամադրության տակ ունենալու համար:

8. Սատիրախաղ

Պետք է նշել, որ թուրքական կառավարությունն ամենուր չէ, որ անտարբեր է եղել 500 000 մարդկանց ողբալի դրության հանդեպ, որոնք, իր միջոցառումների միջոցով իրենց ողջ ունեցվածքից, տներից, սերմացուից, սննդի պաշարներից, հագուստներից և անկողիններից ու հանապազօրյա ապրուստից զրկված, մատնվել էին սովամահության: Մենք, արդարև, անորոշ ենք թողնում այն հարցը՝ արդյոք կարեկցության զգացումն էր, որ այս ու այնտեղ իշխանություններին դրդում էր հոգ տանել կարիքավորների համար, թե կառավարությունը միայն կարիք ուներ՝ բնակչության բարբարոսական կոտորածից ու թալանից հետո մարդասիրության համբավ ձեռք բերելու և ի պատասխան դեսպանների շարունակական խայթոցների՝ որպես իր բարի խղճի ապացույց մատնացույց անելու իր «մեծաշուք աջակցությունը»: Մենք ցանկանում ենք լռության չմատնել *կառավարության կողմից կարգադրված բարեգործական միջոցառումները*՝ չթաքցնելու համար ոչինչ, ինչը խոսում է ի նպաստ նրա, և հայտնի դարձնել այն ամենը, ինչ մենք այդ մասին կարողացել ենք իմանալ:

Սկզբում իշխանությունների կողմից կարիքավորների համար լայնորեն հոգ տարվեց՝ հարյուրավոր և հազարավոր հայերի *բանտ նետելով* նախ, ինչպես բացահայտորեն ասվում էր, նրանց թուրքական ամբոխի բռնություններից պաշտպանելու, ապա՝ իրենց տների ավերումից հետո ապահով կացարան տրամադրելու

համար: Արաբկիրում, օրինակ, 4000 հայերի սպանդից հետո ոստիկանության կողմից անցկացվեց մանրամասն քննություն, և կենդանի մնացած բոլոր հայ տղամարդիկ, առանց բացառության, բանտ ուղարկվեցին: Նույն օրինակին հետևեցին ամենուր, որտեղ բանտեր կային:

Այն մասին, թե մարդասիրության որ աստիճանի վրա է գտնվում թուրքական բանտային համակարգը, կարելի է տեղեկանալ Դիլոնի զեկուցներից կամ այս հատվածի վերջում ներկայացվող փաստաթղթից: Այնուհետև *լեռնային գավառներից զինվորական պահակախմբերի ուղեկցությամբ հայ փախստականների մեծ բազմություններ տեղափոխվեցին քաղաքներ*: Երբ Մարաշի մութասերիֆին տեղեկացրին, որ այդ տեղափոխությունների ժամանակ զինվորներն ու բաշիբոզուկները ամենաբիրտ կերպով են վարվում փախստականների հետ, նա պատասխանեց. *«Թողե՛ք՝ մեռնեն»*: Փախստականները *դարձյալ քաղաքներից հետ ուղարկվեցին գյուղեր*: Վանից, որտեղ 30 000 փախստական կար ողջ վիլայեթից, կառավարության հանձնարարությամբ 3000-ը կրկին հետ ուղարկվեցին գյուղեր: Բոլոր գյուղերը, սակայն, ուր նրանք վերադարձել էին, դարձյալ հարձակման ենթարկվեցին և թալանվեցին, այնպես որ խլվեց այն ամենը, ինչ դեռ մնացել էր աշնան կողոպուտից հետո: Բարձր դռան կոմիսարը, ում հավաստիացումներով այդ մարդիկ հետ էին ուղարկվել, իր խոր ափսոսանքն արտահայտեց այդ դժբախտ պատահարի համար և ոստիկանապետին անմիջապես ուղարկեց մոտակա գյուղերը: Տասը մարդուց բաղկացած մի ստորաբաժանում ժամանեց անկարգությունների վայր, երբ քրդերը դեռ տեսադաշտում էին, քանի որ ճանապարհների վատ վիճակի պատճառով նրանց համար անհնար էր արագ առաջանալ գողացված ոչխարների հոտերի հետ միասին: Ժանդարմերիան մի քանի կրակոց արձակեց օդ, և այնուհետև բանակցեցին ավազակների հետ, որից հետո սրանք անարգել հեռացան, իսկ ոստիկանությունը մտավ թալանված գյուղ:

Այնտեղ նրանք մնացին այնքան, մինչև վերջին հավերն ու դեռ ամբարված ամբողջ սննդամթերքը խժռված կլիներ:

Քաղաքներում սովյալ ժողովրդին *այս ու այնտեղ հաց բաժանվեց*, ինչը, արդարև, *հազվադեպ էր մի քանի օրից ավելի տևում*: Սվազում նույնիսկ հայտարարվեց, որ կառավարությունը 4000 կգ սերմացու հացահատիկ կբաժանի: Մանրամասն քննությունը, սակայն, ցույց տվեց, որ միայն գյուղերից մեկում էր *մի փոքր հացահատիկ տրվել* և այստեղ էլ՝ չափազանց ուշ ցանքի համար:

Զապթիեների միջոցով այս ու այնտեղ նաև օգնության գումարներ տրվեցին որոշ գյուղերի: Էրզրումի մոտ գտնվող գյուղերից մեկում դրանք կազմում էին ընդամենը 2 մեջիդիե (7,20 մարկ), որոնց դիմաց հինգ հեծյալ զինվորներ, որոնք պետք է գումարը հանձնեին, իրենց ձիերի հետ միասին այնտեղ տեղավորվեցին և պարենավորվեցին 12 օր շարունակ: Արաբկիրում իշխանությունը կանանց և որբերին 14 օրվա հացահատիկ բաժանել տվեց (յուրաքանչյուրին 2 օկա՝ մոտ 5 թուրքական ֆունտ): Դա այրված պաշարներից մնացած ամբողջ մնացորդն էր: Բայց նույնիսկ այդ աջակցությունը վիճակվում էր միայն ամենագեղեցիկ այրիներին ու դեռատի աղջիկներին, այն էլ՝ ամենազազրելի պահանջների պայմանով: *Անչամք սուլթանի կողմից նվիրաբերված բարիքները* նույնպես բաժանվում էին բռնի կրոնափոխության վայրերում, ընդ որում՝ իրավացիորեն նրանց էին առավելություն տալիս, ովքեր իսլամն ընդունելու վերաբերյալ ամենալավ ապացույցներ էին ներկայացնում:

Ոչ միայն կառավարությունը, այլև *թուրք բնակչությունն* էր այստեղ-այնտեղ կարեկցության զգացում ցուցաբերում հայերի նկատմամբ: Սեբաստիայում, օրինակ, կոտորածի ժամանակ մի քանի քրիստոնյաներ ընդունելություն գտան մտերիմ թուրքերի մոտ, և մինչ տանտերերը եռանդաբար մասնակցում էին իրենց տների թալանին, այնտեղ կերակրվում էին: Այնուհետև, երբ նրանք վե-

ռադառնում էին իրենց դատարկ տները, իրենց բարեգործ բարեկամները նրանց տվեցին անկողնային պարագաներից և հագուստներից ամենաանհրաժեշտը, որի կարիքը նրանք ունեին, նաև այնքան քարսիրտ չէին, որ հրաժարվեին նրանց ողորմություն տալ և իրենց տներում մի քանի գրոշով մանր ծառայություններ էին անել տալիս: Այնթապում երևելի մուսուլմանները նույնիսկ հայերին առաջարկում էին իրենց ի պահ թողնել այն, ինչ մնացել էր նրանց ունեցվածքից, մինչև ավելի լավ ժամանակներ կգային:

Քանի որ կառավարությունն ինքն էր կարգադրել հայերի կողոպուտը, ուստի նրան առավել ևս զարդարում էր այն, որ նա մի քանի տեղերում իր՝ արդարության զգացումի հրապարակային ապացույց ներկայացրեց՝ անմիջապես ձեռնարկելով *գողացված ունեցվածքի վերադարձումը*: Իհարկե, այն դրա հարյուրերորդ մասն էլ չէր կազմում և իրենից միայն ամենաանարժեք հնոտիներ էր ներկայացնում, որոնք թուրք ամբոխի զվարճանքի ներքո նրանց էր տրվում, ովքեր հակված էին, ի լրումն իրենց կորուստի, նաև ծաղրուծանակի ենթարկվել: Կառավարությունը, սակայն, ամբողջ աշխարհի աչքի առջև ևս մեկ անգամ ապացուցեց արդարադատության պահպանման իր անկողմնակալությունը: Ըստ այն փորձառության, որ գողերը լավագույն դետեկտիվ ծառայողներն են, իշխանությունները կողոպուտի ժամանակ առանձնապես աչքի ընկածներին պատվիրում էին կրկին փնտրել-գտնել կորսված ունեցվածքը, ինչի արդյունքում, ըստ հանգամանքների, գողոնն այլ ձեռք էր ընկնում, բայց վստահաբար՝ ոչ իրական տերերի:

Տարբեր վայրերից հաղորդվում է, որ ժանդարմները, որոնց կառավարությունը հանձնարարել էր գողացված ունեցվածքը հետ վերադարձնել, ոչ միայն ոչինչ չէին հանձնում, այլև կանգուն մնացած տները հրկիզելու սպառնալիքների ներքո մարդկանցից *նշանակալի գումարներ էին կորզում*: Ո՞վ կարող է նաև մեղադրել

խեղճ սատանաներին, երբ նրանք ինչ-որ մեկից խլած զարդերը կամ թանկարժեք իրերը պահում էին որպես կանխավճար իրենց ռոճիկի, որը նրանք ամիսներ շարունակ չէին ստացել, և ո՞վ կարող է նրանցից այնպիսի խորը հոգեբանական ըմբռնում պահանջել, որ իրենք պետք է լուրջ ընդունեին նախապես իրենց կողոպուտի կարգած վերադասների հրամանները, երբ նույն սրանք իրենց կարգադրում էին որոնել-գտնել գողերին: Արդյունքը եղավ դրան համապատասխան, ինչպես ապացուցում է Էրզրումի այն գյուղը, որից 12.000 ոչխար գողացվեց, և կառավարության միջամտության շնորհիվ ամբողջ երկու ոչխար վերադարձվեց՝ մի խոյ և մի մաքի, անկասկած, այն հեռանկարով, որ դրանք տարիների ընթացքում պատշաճ բազմացումից հետո կհատուցեին կորուստը: Իշխանությունը ժամանակ առ ժամանակ հոգ էր տանում նաև քրդերից ավարի մի մասը կրկին խլելու մասին, ինչի հետևանքով կրկնապատկվում էր քրդերի թշնամանքը քրիստոնյաների դեմ, չնայած վերջիններս ոչինչ հետ չէին ստանում:

Ութ մեծ նահանգների բարօրության հիմնահատակ կործանման հետևանքը չէր կարող այլ բան լինել, քան այն, որ տնտեսության և առևտրի լիովին անկումով *կառավարության դրամարկղերում ի հայտ եկավ սարսափելի դատարկություն*, և ոչ ոք չի կարող մեղադրել իշխանություններին, որ նրանք *հարկային պաշտոնյաներին* կարգադրում էին կրնկակոխ հետևել օգնության գումարները բաժանողներին. հանգամանք, որը նպաստեց այն բանին, որ վերջապես նաև եվրոպական օգնության կոմիտեներին թույլատրեցին գումարների և նվերների բաշխումը: Չէ՞ որ առնվազն հարկերի բարձրացմամբ կարելի էր դրանց մի մասը կրկին վերադարձնել իշխանության դրամարկղերը: Կոտորածների ժամանակ հարկային պաշտոնյաները նույնպես հասկացել էին՝ ինչպես գումար ձեռք բերել: Մի աղքատ հայ երիտասարդի, որը նույնիսկ մի փարա չէր կարող տալ, խոշտանգեցին՝ բերելով մի շղթա և այն այնպես փաթաթելով նրա բարակ մեջքին, որ քա-

շելիս օղակը ձգվում էր: Նրանք շղթան անցկացրին մի բարձր գերանի վրա և դրանով պատանուն օդ բարձրացրին՝ միաժամանակ նրան ցույց տալով հարկային ստացականը: Նա ցավ հայտնեց, որ փող չունի և չի կարող ճարել: Նրանք, սակայն, այնքան երկար ձգեցին, մինչև նրա բերանից ու քթից արյուն հորդաց, և քանի որ նրանից ոչինչ հնարավոր չէր ստանալ, դեռ որոշ ժամանակ նրան կախված թողեցին:

Իշխանությունների *հայերի զրկանքների մեղմացումն իրենց ձեռքում պահելու* փառասիրությունը նույնքան մեծ էր, որքան մի ժամանակ մեծ տերությունների՝ հայ ժողովրդին երջանկացնելու եռանդը: Ուստի, երբ կոտորածներին հաջորդող ամիսներին կազմվեցին եվրոպական օգնության կոմիտեներ՝ հարյուր հազարավոր կարիքավորների սովամահությունից փրկելու համար, սկզբնապես Բարձր դռան և վալիների կողմից ուղղակիորեն արգելվեց սննդամթերքի բաժանումը, իսկ այնտեղ, որտեղ դա առանց թույլտվության արդեն սկսել էին, դադարեցվեց: Երկար ժամանակ օգնության կոմիտեների գործակալները, երբ բռնվում էին մարդասիրության անթույլատրելի ցուցաբերման մեջ, պարզապես ձերբակալվում էին, այնպես որ ոչ ոք այլևս չէր ցանկանում զբաղվել կյանքի համար վտանգավոր այդ մասնագիտությամբ: Պետք է երախտապարտ լինել միայն անգլիական դեսպանի աննկուն եռանդին, որ այդ առնչությամբ Բարձր դուռը հետզհետե հարմարվեց եվրոպական տեսակետներին: Այդ ընթացքում, սակայն, հարյուրավոր մարդիկ սովամահ էին եղել: Մի առանձնապես ուսանելի միջադեպ տեղի ունեցավ Բիրեջիքում: Հայտնի էր, որ այնտեղ 200 ընտանիքներ, որոնք բռնի իսլամ էին ընդունել, իրենց նոր հավատակիցների կողմից պարզապես սովամահության էին մատնվել. նրանց նույնիսկ իրենց անկողինն ու հագուստը չէին վերադարձրել: Անգլիացի միսիոներ դոկտոր Քրիստին սննդամթերքով և հագուստով բեռնված մի քանի սայլերով ճանապարհ ընկավ՝ ունենալով նաև Հալեպի վալիի հանձնարարակա-

նը: Վալիի գրությունը պետք է արտառոց բովանդակություն ունեցած լինի, քանի որ, երբ դոկտոր Քրիստին ժամանեց Բիրեջիք և կայմակամին իր քաղաքավարական այցելությունը կատարեց, չնայած սկզբից նեթ հեղեղվեց հաճոյախոսություններով, բայց թիկունքից վիժեցվեց նրա ճամփորդության նպատակը: Ոստիկանությունը սովյալներին չթույլատրեց հանդիպել նրա հետ, և նրանք պետք է բավարարվեին տանիքների վրայից նրան խաչանման նշաններ անելով՝ հասկացնելու համար, որ կցանկանային նորից քրիստոնյա դառնալ: Հայկական մեծ եկեղեցին ծառայում էր որպես մզկիթ, իսկ ավելի փոքր բողոքական եկեղեցին, որը, ըստ լուրերի, որպես արտաքնոց էր օգտագործվում, չնայած հենց նոր մաքրվել էր, այնուամենայնիվ դեռ մի հին Աստվածաշնչի պատառոտված թերթեր էին ընկած շուրջ բոլորը՝ չափազանց կասկածելի տեսքով: Դոկտոր Քրիստիի այցելությունը, քանի որ նաև նրա շուրջ էին հրացաններով կրակում, օրեցօր ավելի արկածային էր դառնում, այնպես որ նա չորրորդ օրը որոշեց իր՝ նվիրատվությունների ողջ ուղեբեռով ձեռնունայն վերադառնալ Հալեպ: Երբ հեռանալիս նա գանգատվեց կայմակամին, վերջինս նրան լկտիաբար հայտնեց, որ, իր կարծիքով, հայերը ոչինչ չէին ցանկանում լսել նրա մասին, քանի որ նրանք՝ որպես նորադարձ մահմեդականներ, այսուհետ չափազանց հպարտ են՝ քրիստոնյայից ինչ-որ բան ընդունելու համար, բայց ինքը կարող է նրա համար Հալեպից մի կարգադրություն բերել, որով նրան թույլ կտրվեր նվերները բաժանել անխտիր բոլոր կարիքավոր մահմեդականներին, և այդ դեպքում ինքը նրանից կվերցնի դրանք: Այս է ամենը, ինչ մենք կարողացել ենք արձանագրել թուրքական կառավարության՝ ծայրահեղ զրկանքների մեղմացման համար ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ:

Քանի որ Բարձր դուռը՝ որպես եվրոպական համերգում իրենց տեղն ու ձայնն ունեցող մեծ տերություններից մեկը, նաև արդարադատությանն պահպանման առումով ոչ մի քաղաքա-

կիրթ պետությունից հետ չմնալու փառասիրությունն ունի, ապա արդարացիորեն հարց է առաջանում, թե ինչ է արել նա՝ իր սեփական պաշտոնյաների, սպաների և զինվորների, քուրդ ավազակների և թուրք ամբոխի կողմից կատարված աննկարագրելի չափի ոճրագործությունների դեմ դատավորի իր պարտականությունները կատարելու համար: Մենք մեզ պարտավորված ենք համարում մեջբերել այն, ինչ այդ մասին հաղորդում է դեսպանների զեկույցը. «Տրապիզոնում դատական ատյանը, որը ստեղծվեց հոկտեմբերի 8-ի ոճրագործության հեղինակներին բացահայտելու համար, *սահմանափակվեց մահմեդականներին խորհուրդներ տալով*, մինչդեռ հայերը զանգվածաբար ձերբակալվեցին՝ նրանց մահմեդականների հարձակումներից պաշտպանելու պատրվակով: Նրանցից 8-ը դատապարտվեցին մահվան, իսկ 25-ը՝ շատ տարիների բանտարկության»:

«Էրզրումում քրդերի շեյխ Հուսեին փաշա Հայդերանլին թեպետ կանչվեց՝ իր արարքների համար հաշվետվություն ներկայացնելու, այնուհանդերձ, ռազմական դատարանի առջև չկանգնեցվեց, չնայած իր դեմ առկա ծանրագույն մեղադրանքներին»: «Խարբերդում, քանի որ սպաները, զինվորները և ոստիկանները մասնակցել էին կողոպուտին, իշխանությունները չհամարձակվեցին *որևէ մեկին պատասխանատվության կանչել*»: «Հանձնաժողովը, որը Հալեպում կցվեց կառավարման խորհրդին՝ անկարգությունները հրահրողներին դատապարտելու համար, խղճալիորեն է գործում»: «Ակ-Հիսարում կոտորածից հետո կատարվեցին որոշ ձերբակալություններ, սակայն բազմաթիվ ջերքեզներ, այն էլ՝ ամենից շատ անվանարկվածները, խուսափեցին բանտարկությունից և չպատժվեցին»:

Սա է այն ամենը, ինչ ջարդերից հետո թուրքական իշխանությունների պահվածքի մասին հանգամանալից գրառումներ կատարող դեսպանները կարողացել են հայտնել թուրքական արդարադատության գործադրման և մեղավորների պատժման վերաբե-

րյալ: Բայց ոչ, քիչ էր մնում մի արտակարգ դեպք բաց թողնեինք: «Էրզրումում ձերբակալվեցին 200 ավազակներ՝ թուրքեր ու լազեր, որոնցից հարյուրին, ինչպես նշվում է դեսպանների զեկույցում, իշխանությունները, ըստ իրենց *պնդման*, մահապատժի են ենթարկել»: Ափսոս, որ մի քանի հյուպատոսներ՝ որպես վկաներ, չեն հրավիրվել այդ արտակարգ ներկայացմանը, առավել ևս, երբ հայտնի է, որ թուրքական բանտերը քրիստոնյաների հանդեպ մեղք գործած բոլոր մահմեդականների համար ունեն այն արտասովոր կառուցվածքը, որ երբ առջևում բանտի դուռը փակվում է, մեկ այլ դուռ հետևում բացվում է: Ի միջի այլոց, իրավական գիտակցությանը հրապարակային բավարարում տալու համար *բոլոր հայ հանցագործները*, նույնիսկ Կոստանդնուպոլսում, կախաղան են բարձրացվում փողոցում՝ բոլորի աչքի առաջ:

Այն, որ կոտորածներին առանձնապես աչքի ընկնող մասնակցություն ցուցաբերած բարձրաստիճան պաշտոնյաների և սպաների մեծ մասը շուտով իրենց ծառայություններից ազատվում և այլ՝ ավելի բարձր պաշտոնների էին նշանակվում, որքան անարդար, նույնքան և իմաստուն մի քաղաքականություն է, քանի որ այդպիսով կանխվում էր տեղի ունեցածի վերաբերյալ ցանկացած հետագա քննություն: Այնուհանդերձ, Բարձր դուռը չէր կարող թույլ տալ իր մասին ասել, թե ինքն ամենաեռանդուն ջանքերը չէր գործադրել՝ բոլոր չարագործությունների հեղինակներին բացահայտելու և պատժելու համար: Եվ դա նաև հաջողվել է նրան, ինչպես փաստում է «Frankfurter Zeitung»-ի հետևյալ տեղեկությունը. «Կոստանդնուպոլիս, օգոստոսի 12: Այն բանից հետո, ինչ Բարձր դուռը հայկական պատրիարքարանի հոգևոր խորհրդին ավելի քան տարօրինակ պահանջ էր ներկայացրել՝ *այսուհետ լիովին ստանձնել այն բոլոր անկարգությունների պատասխանատվությունը*, որոնք տեղի կունենային հայկական շրջաններում, կանխատեսելի էր, որ ո՛չ մոնսենյոր Իզմիրլյանը և ո՛չ էլ իր խորհուրդը չէին համաձայնի նման անհեթեթ պահանջին և կնա-

խընտրեին ազատվել: Կառավարությունը, որն ի սկզբանէ հենց այդ նպատակն էր հետապնդում, հաղթող դուրս եկավ իրավիճակից և հիմա իր ձեռքում ունի բոլոր լծակները՝ Հայկական հարցն ըստ իր հայեցողության կարգավորելու: Պատրիարքի տեղապահի ընտրության ժամանակ պալատում սկզբում կանգ առան եպիսկոպոս Կիրակոս Հովհաննիսյանի՝ արքունական հանցախմբի մի խամաճիկի վրա: Թե վերջին պահին ինչ գաղտնի դավեր կարող էին նյութված լինել, կամ էլ միգուցե նա ներկա իշխանավորներից ոմանց լիովին վստահելի չէր թվացել, համենայն դեպս, վերջին պահին ընտրեցին Բրուսայի նախկին առաջնորդ, արքեպիսկոպոս Բարդուղիմեոս Չամչյանին, որի մինչ այդ ցուցաբերած դիրքորոշումը ցրում է բոլոր կասկածները, քանի որ նա՝ որպես ոստիկանության երկարամյա լրտես, ամսական 30 թուրքական ֆունտ վարձատրություն էր ստանում, և այդպիսով նա նշանակվեց տեղապահ:

Թուրքական բանտ

Բանտարկյալի տեղեկագիր

«Ես այս տողերը գրում եմ Գ.-ի բանտից: Մենք՝ մոտավորապես 500 հոգի Մ.ից, Յ.-ից, Օ.-ից և այլ վայրերից, քաղբանտարկյալներ էինք: Մեզնից մի մասն ազատ արձակվեց, քանի որ նույնիսկ թուրքական դատարանն իր ողջ ճարտարությամբ ի վիճակի չեղավ նրանց ինչ-որ մտացածին հանցանքի մեջ մեղադրելու:

Մեղադրական ակտերի համար փաստաթղթեր պատրաստելու նպատակով սկզբում գործադրվեցին ամենազարհուրելի միջոցները, որոնք պիտի ծառայեին ցուցմունքներ կորզելուն. խոշտանգումները, գանահարումը, պատվազրկումը, մերկացնելը, սովն և ծարավն էին փոխարինելու եկել սովորական հետաքննությանը: Ցուրտ ձմեռը պիտի նպաստեր այդ հարկադրանքի միջոցներն էլ ավելի անտանելի դարձնելուն: Մի քանի լաթեր՝ որպես

անկողին, նույնիսկ մկներին տանջող հացի փշրանքներ՝ որպես սնունդ, և կեղտոտ տարաներով հոտած ջուր՝ որպես խմիչք. ամեն բան այնպես էր մտածված, որ բանտարկյալների կարիքները, քաղցն ու ծարավը հնարավորինս խղճալիորեն բավարարվեին: Հայտնվում էին հին, ժանգոտված, գնդակներից ու ռումբերից վնասված շղթաներ, երկաթե ձեռնաշղթաներ և մահակներ: Դրանցով շղթայում էին ոմանց պարանոցները, մյուսների ոտքերը, մեծ մասամբ ձեռքերը, որպեսզի նրանց հարկադրեն այն վկայությունները տալ, որ ցանկանում էին լսել կառավարությունն ու բանտային պաշտոնյաները: Առավել նպատակահարմար էին համարում այդպիսի հետաքննությունների համար ընտրել ձմեռվա երկար, սարսափելի գիշերները: Երբեմն ժամը երեքին, երբեմն կեսգիշերին, երբեմն առավոտվա կողմ բանտի բոլոր անկյուններից լսվում էին լացակումած և հառաչող հեծեծանք կամ սրտակեղեք ճիչեր. «Ես չգիտեմ», «Ես չեմ տեսել», «Մեռնում եմ» և այլն, որոնց միախառնվում էին թուրք բանտարկյալների սոսկալի բղավոցներն ու հայհոյանքները: Լացն ու ողբը գանակոծության ներքո, որն ամեն գիշեր թուրքական բանտերում մատուցվում է յուրաքանչյուրին, մյուսների ճիչերը, որոնք մերկ վիճակում պառկեցված են ձնակույտերին, ուրիշներինը, որոնք այրվում են շիկացած երկաթաձողերով՝ «Բավակա՛ն է, հրեշնե՛ր», «Ցրտահարվում եմ», «Այրվում եմ», «Սպանե՛ք ինձ և փրկե՛ք տանջանքներից», խլացվում են բանտապահների կողմից կազմակերպված երգեցողությամբ ու աղմուկով: Նման կերպ շատերին տանջահար արեցին: Ես հիշատակեցի միայն այն խոշտանգումները, որոնք գրչիս եկան, սակայն ինչպես երիտասարդների, այնպես էլ՝ ծերերի նկատմամբ այնպիսի չլսված միջոցներ էին գործադրվում, որ գրիչս հրաժարվում է նկարագրել: Այդ գազանային անարգումները պաշտոնյաների հրամանով իրականացվում էին բանտերում գտնվող թուրք մարդասպանների և ավազակների միջոցով: Հենց Ծննդյան տոնի օրերն ու Ամանորի գիշերը լեփ-լեցուն էին նման

բարբարոսական չարչարանքներով: Քանի որ շարունակ ձերբակալվածների նորանոր խմբեր էին բերվում բանտ, նույնիսկ ապականված արտաքնոցները պիտի ծառայեին որպես ննջարան, իսկ բանտերի բակերը, չնայած ձմռան սառնամանիքին, որպես պատուհաններին շղթայված նորեկների ապաստարան:

Յուրաքանչյուր բանտարկյալ հարկադրվում էր հանձնել այն ամենը, ինչ իր մոտ ուներ, և ինչը նրա վիճակը փոքրիշատե կարող էր թեթևացնել: Ձերբակալվածներից շատերը պահվում էին ածխի պահեստներում: Օրվա ընթացքում գնված ածուխը շաղ էր տրվում նրանց վրա, և դրան էլ ջրի շիթերն էին հաջորդում: Հարուստ երիտասարդներն ու անվանի վաճառականներն այդ կերպ այնպես էին այլանդակվում, որ նմանվում էին ուրվականների և կեղտոտվում, ինչպես խոզերը:

Ես կթվարկեմ այն բանտարկյալների անունները, որոնք մեծագույն չարչարանքների ենթարկվեցին.

1. Անուն: Վայր: 40 տարեկան, ուսուցիչ: Երեկոյան ժամը 7-ին նրա մոտ էին եկել երկու վաճառականներ երեսուն զինված ժանդարմների հետ՝ տան խուզարկության պատրվակով նրա բոլոր իրերը, սնդուկներն ու արկղերը ջարդուխուրդ անելու, նրա գրվածքներն ու գրքերն իրենց հետ վերցնելու և իրենց անձամբ բանտ նետելու համար: 48 ժամ նրան սոված և ծարավ թողեցին, վեց օր՝ լերկ ու խոնավ հողի վրա, ընդ որում՝ ենթարկելով մտրակահարության:

2. Անուն: Վայր: 41 տարեկան: Դաժան ծեծից հետո նրան նետում են աղբի մեջ և մեծ թաղարներով սառը ջուր են լցնում գլխին (Ձմեռ էր): Հետո քաշում են նրա բեղերի կեսը, ապա ձեռքերը կապելով՝ գլխիվայր կախում են: Հաջորդող պրոցեդուրաները նկարագրության ենթակա չեն: Կարելի է միայն նշել, որ մյուս բանտարկյալները պետք է այդ բանտարկյալի արտաթորանքով ամենանողկալի կերպով ապականվեին, և արդեն գրեթե տանջամահ արվածին վերջում շիկացած երկաթաձողով քարահեռացման

վիրահատության պես սարսափելի կտտանքի ենթարկեցին: Թշվառը ութ օր շարունակ նման խոշտանգումների ենթարկվեց:

3. Անուն: Վայր: 23 տարեկան, ուսուցիչ: Ենթարկվում է դաժան մտրակահարության և չորս ժամ շարունակ գլխիվայր կախված մնում: Այնուհետև նրան ամբողջ գիշեր պահում են ծնկած վիճակում խոնավ գետնի վրա: Ի վերջո նրա վզին պարան են կապում և մի մեծ տարածություն քարշ են տալիս գետնի վրայով, այնպես որ քիչ էր մնում՝ խեղդվեր:

4. Անուն: Վայր: 30 տարեկան: Սխալմամբ ձերբակալել էին մեկ ուրիշ նույնանուն մարդու փոխարեն: Հարկադրված է 24 ժամ շարունակ նստած մնալ աղբի մեջ, և այդ ընթացքում դույլերով սառցաջուր են լցնում նրա վրա: Այնուհետև շիկացած երկաթ են դնում նրա մարմնի վրա և խոշտանգում են նույն ոչ նկարագրելի եղանակով, ինչպես նշված է 2-րդ կետում: Երբ նահանգապետը տեղեկանում է, որ նա ճիշտ մարդը չէր, հրամայում է նրան բերել իր մոտ և ասում է. «Որդի՛ս, փառք տուր բախտիդ, քեզ շփոթմամբ են բերել»:

5. Անուն: Վայր: 18 տարեկան: Նոր էր ավարտել ուսումը: Նախ մերկացվում է, ապա անմարդկայնորեն խարազանվում, գլխիվայր կախվում և այդ դիրքում կրկին ճիպոտահարվում: Ի վերջո նա ստիպված է օրեր շարունակ սոված-ծարավ ընկած մնալ աղբի մեջ: Նույնիսկ նահանգապետն է այդ խեղճին մտրակահարում բանտի շենքում:

6. Անուն: Վայր: 45 տարեկան: Չնայած սխալմամբ է ձերբակալվել, տասն օր շարունակ ամենասոսկալի չարչարանքների և անարգանքների է մատնվում, ապա չորս օր շարունակ կախված է մնում բարձրացից մեխերից: Մահամերձ վիճակում նա ջուր է խնդրում: Ժանդարմը ջրով լի մի կճուճ է բերում, մոտեցնում նրա բերանին և ապա կճուճով հարվածում է նրա գլխին, այնպես, որ արյուն է հոսում: Վերակացուին տեղեկացնում են, որ նա մահամերձ է: Արձակում են նրա շղթաները և, ինչպես մեռածի, մերկ վի-

ճակում թաղում են ձյան մեջ: Մի քանի ժամ նա մնում է այդ դրությյան մեջ, մինչև տեղեկանում են, որ թշվառը սխալմամբ է ձերբակալվել: Վախենալով, որ կմեռնի, անմիջապես ազատ են արձակում»:

7. Հաջորդում են ևս տասնյոթ նման դեպքեր: Կարծում ենք, սակայն, որ բավական է և ավելի քան բավական: Միայն նկատենք, որ ներկայումս բանտերն այնքան լցված են, որ բանտարկյալների միայն մի մասը կարող է գիշերը մեկնվել: Ընդհանրապես՝ բանտերն այն աստիճան են աղտոտված մարդկային արտաթորանքի կույտերով և ամեն տեսակի զեռուններով, որ նույնիսկ որևէ կենդանու նման կացարան չէին տա: Երբ ինչ-որ մեկը համարձակվում է բողոքել իր հանդեպ ցուցաբերված վերաբերմունքից, անմիջապես ավելի մութ զնդան է նետվում և մատնվում դրա անմարդկային պահակների ցանկացած կամայականության:

9. Սով

Այն մասին, որ անցած տարեվերջին և ներկայումս էլ Հայաստանում ամենաահռելի ընդգրկումներն ունեցող սով է տիրում, և որ այնտեղ 500 000 մարդիկ սովամահ չլինելու համար փաստացիորեն *ապավինել են արևմուտքի քրիստոնյաների պաշտպանությանը*, ոչինչ գիտեն Գերմանիայում՝ այն երկրում, որն արդեն պարծեցել է, թե մարդասիրության առաջամարտիկն է:

Մեծ քաղաքականությունը պահանջում է ժխտել ինչպես այն, որ Հայաստանում կոտորածներ են տեղի ունեցել, այնպես էլ այն, որ սով է տիրում, և հնազանդ պաշտոնական մամուլը (և էլ ով ասես, որ խառնված չէ Արևելյան հարցին) արիաբար լռության է մատնում այն ամենը, ինչ Հայաստանի մասին հայտնի է և կարող է հայտնի դառնալ, քանի որ քրիստոնեական քաղաքականությունը լավ բարեկամի՝ թուրքի պարագայում պետք է հետևի կաթե-

խիզմի պատվիրանին՝ «այլ ներել նրան, նրա մասին լավն ասել և ամեն ինչ դեպի լավը շրջել»:

Երբ աշխարհում ինչ-որ տեղ տեղեկություն է ստացվում մի մեծ հրդեհի, ջրհեղեղի կամ համաճարակի մասին, և մեր բարեխիղճ մամուլն այդ մասին թերացում հանդես չի բերում, կարիքավորների համար դրամահավաքներ են կազմակերպվում, բարեգործական համերգներ և ներկայացումներ են տրվում, մարդասիրական վաճառակենտրոններ են կազմակերպվում, եկեղեցական հանգանակությունների ծանուցում է արվում, բարձրաստիճան կամ ամենաբարձրաստիճան այրերը գլխավորում են օգնության կոմիտեները, և ոչինչ բաց չի թողնվում, մինչև հանրության խիղճը զրկանքի հաղթահարումով չհանգստանա: *Հայաստանի պարագայում, սակայն, փոքր-ինչ այլ է*: Մեծ քաղաքականությունն այս դեպքում հրամայում է կարեկցանքին լռել, և քաղաքականապես լավ դաստիարակված մի հասարակություն այն ամենի հետ, ինչ պաշտոնական է, լինի դա մամուլ թե եկեղեցի, հնազանդվում է: Հայաստանում տիրող սովին հակազդելը թողնում են «նենգ» Անգլիային և աշխարհի մյուս ծայրում գտնվող՝ Ամերիկայի քրիստոնյաներին: Փաստորեն, եթե Անգլիայում և Ամերիկայում մեծ քրիստոնյա հանրություն չլիներ, որը ոչ միայն իր անկախ մամուլի շնորհիվ քաղաքական դիրքորոշում, այլև սիրտ ուներ մի թշվառ, ոտնահարված ժողովրդի համար, ապա բոլոր նրանք, ովքեր կոտորածներից հետո դեռ մնացել են՝ հարյուր հազարավոր հազարավոր մարդիկ՝ զրկված ողջ ունեցվածքից, հագուստից, անկողնուց, տներից և հանապազօրյա հացից, հարյուր հազարավոր այրիներ և որբեր սովամահ կլինեին:

Թուրքական բնաջնջման քաղաքականության վերջնանպատակը կիրականանար, Հայկական հարցը կջնջվեր աշխարհի երեսից, և եվրոպական համերգին կմնար միայն մահվան քայլերթ կատարել: Բայց, փառք Աստծո, Անգլիան ու Ամերիկան հոյակապ զոհաբերումով, որը միլիոններ ի հայտ բերեց, հայ ժո-

ղովրդին փրկեցին այն բանից, որ սրից պրծածները սովամահության չենթարկվեն, ինչը ցանկանում էր Բարձր դուռը: Գերմանիան, սակայն, նույնպես ինչ-որ բան արել է Հայաստանի համար: Հյուսիսային և հարավային Գերմանիայի, այսպես կոչված, պիեթիստական շրջանակներում քրիստոնեական թերթերի միջոցով, որոնցից քաղաքական մամուլը դարձյալ անտեղյակ է, հասարակ մարդկանց կողմից 100.000 մարկ հավաքվեց: Ավետարանական միությունը քրիստոնեական շրջաններում իր կոչի միջոցով հանգանակել է ևս 60.000 մարկ: Մի քանի օրաթերթեր, ինչպես, օրինակ, «Reichbote»-ն, մասնակցել են դրան, և «Die Christliche Welt»-ի ընթերցողները, թերթի հրատարակչի արի ճշմարտասիրության շնորհիվ լավագույնս տեղեկացվելով Հայաստանի մասին, դրան մեծապես աջակցել են: «Kaiserswerth»-ը նույնպես հայ որբ երեխաների համար մոտ 80.000 մարկ է ստացել: Սա մոտավորապես այն ամենն է, ինչ Գերմանիան արել է Հայաստանի համար: Այսինքն՝ միայն ամենավճռական քրիստոնեական շրջաններում եվրոպական քաղաքականության զոհերի հանդեպ կարեկցանքը թույլ չտվեց նույն այդ քաղաքականության միջոցով իրեն լռեցնել: Ուշագրավ փաստ է, որ Մայնի Ֆրանկֆուրտը գրեթե միակ քաղաքն է եղել Գերմանիայում, որն իր քաղաքական և քրիստոնեական մամուլով իրապես հոգ է տարել հայ ժողովրդի համար: Ի պատիվ «Frankfurter Zeitung»-ի՝ պետք է ասել, որ այն Հայաստանի մասին ամենալավ և ամենաանկողմնակալ տեղեկություններն է ներկայացրել ու դեռ ներկայացնում է: Անկախ վերջինից՝ դր. Ռադեի «Die Christliche Welt»-ը և քահանա Լոհմանի կողմից 90.000 օրինակով տարածված «Բոլորի համար» սթափեցնող թռուցիկը, երկուսն էլ արդեն տարեսկզբից անդրդվելիորեն հանդես եկան հօգուտ Հայաստանի: Միայն քահանա Լոհմանը հավաքեց Գերմանիայում հանգանակված բոլոր գումարների գրեթե կեսը: Վերջերս ձևավորվել է «*Հայաստանում զրկանքների մեղմացման գերմանական օգնության ակցիան*»՝ բեռլինյան

կենտրոնական կոմիտեով և Գերմանիայի բոլոր մասերում գտնվող ենթակոմիտեներով, և մեծածավալ օգնության աշխատանքներ է կազմակերպել Հայաստանում զրկանքների մեղմացման համար:

Ինչո՞ւ, սակայն, պաշտոնական Գերմանիան ոչինչ չգիտի Հայաստանում տիրող սովի մասին: Հավանաբար դեռ շարունակ հավատ չի ցուցաբերվում այն փաստի հանդեպ, որ 100 000 սպանվածները մոտ 400 000 այրիներ ու որբեր են թողել, և որ ամբողջովին կողոպտված մի ժողովուրդ, որի հագից նույնիսկ հագուստներն են հանել, անկողինները թալանել, պահուստները հրկիզել և բնակատեղիներն ավերել են, սովամահության ամենօրյա վտանգի առջև է կանգնած: Կարելի էր կռահել, որ օգնության կոմիտեները, որոնք այդ թշվառ, մերկ, անօթևան և սովյալ ժողովրդին տասն ամիս շարունակ կերակրել են, պետք է իմանան, թե ինչ վիճակում է նա: Հավանաբար մեր մեծ օրաթերթերի՝ ողջ աշխարհից հաճույքով հարցազրույց վերցնող մի եռանդուն լրագրող մի անգամ կդիմի Միջազգային օգնության կոմիտեի նախագահին, որում միայն Գերմանիան ներկայացված չէ, և այդ մասին տեղեկություն կխնդրի:

Մինչ այդ, սակայն, ցանկանում ենք մի քանի թվեր ներկայացնել: Վերջերս Հայաստանի ողջ տարածքում տեղակայված քսան օգնության կայաններում հարցում անցկացվեց, թե քանի մարդ սովամահ կլիներ, եթե օգնությունը դադարեցվեր: Տեղեկատվություն է ստացվել ութ կայանից: Թվերը, որ նրանք կազմել են իրենց կողմից աջակցություն ստացող բոլոր գավառների և գյուղերի ճշգրիտ ցուցակների համաձայն, միասին վերցրած՝ կազմեցին 270 000: Ընդհանուր առմամբ զրկյալների թիվը կազմում է, որչափ մենք որոշակի տվյալներ ունենք.

Տրապիզոնի վիլայեթում	մոտ 4000
Էրզրումի "	" 40000

Բիթլիսի "	" 20 000
Վանի "	" 97 000
Խարբերդի "	" 100 000
Սվազի "	" 180 000
Դիարբեքիրի "	" 30 000
Հալեպի "	" 50 000
Ադանայի "	" 17 000
Անգորայի "	" 8 000
Ընդհանուր	" 540 000

Բոլոր վիլայեթներում, սակայն, կան մեկուսի շրջաններ, ուր դեռ ոչ ոք չի գնացել՝ ուսումնասիրություններ կատարելու:

Սոսկալի թշվառության վերաբերյալ ավելի վառ պատկերացում հաղորդելու համար հաջորդիվ ներկայացնում ենք առանց ընտրության առանձնացված մի քանի տեղեկագրեր աղետի գոտուց:

Խարբերդ: Սակավաթիվ հայեր են ի վիճակի եղել գարնանացան անելու, և բնակչությունը մնացել է առանց բերքի: Նունիսկ տեղական իշխանություններն են կառավարությունից անհապաղ օգնություն խնդրել՝ առաջիկա ձմռանը համատարած սովը կանխելու համար:

Միայն *Ուրֆա* քաղաքում 12 000 կարիքավորներ, այդ թվում 10 000 այրիներ ու որբեր՝ զրկված իրենց կերակրողներից, մատնված են ծայրահեղ թշվառության:

Մալաթիա: Կոտորածին հաջորդող օրերին բոլոր հայերը դուրս փախան իրենց այրվող տներից՝ միայն իրենց կյանքը փրկելու համար, և ոչինչ չունեին՝ բացի իրենց հագի հաճախ ամենախղճուկ զգեստից, այնպես որ շատերը ստիպված էին սպանվածների արյունոտ հագուստները հագնել: Թալանված 2000 ընտանիքների (8000 հոգի) շարքում միայն հիսուն ընտանիքներ կան, որոնք ամենածայրահեղ հուսահատության մեջ չեն: Նուրբ

տիկնայք, որոնց ամուսիններն ու չափահաս որդիները սպանվել են, որոնց տները հրկիզվել են, որոնց ամբողջ ունեցվածքը կողոպտվել է, ապրում են հյուղերում, հեղձուցիչ նկուղներում. նախկին ունևորները՝ այժմ լաթեր հագած, ուտելու հաց չունեն: Նրանցից շատերը մուրալով դռնեդուռ են գնում կամ կանգնած են շուկայում՝ հայցելով ողորմություն: Այնտեղ՝ իրենց խանութներում, նստած են նրանք, որոնք իրենց այրիացրել և իրենց երկրային ամբողջ ունեցվածքը խլել են, նրանց մի բուռ պղնձե դրամներ են շպրտում և ծաղրում խեղճ կանանց, թե նրանք շների պես փորձում են փշրանքներ բռնել: Անհրաժեշտ են 2750 անկողիններ, քանի որ կոտորածից հետո խեղճ մարդիկ հարդի ու լաթերի վրա են քնում, ամբողջ ընտանիքներ տաքանալու համար քնելիս մի կույտ են դառնում, որտեղ ավագները հաճախ փոքրերին որպես գլխատակի բարձ են օգտագործում: Անհրաժեշտ է 2000 կտոր զգեստ, եթե ամեն ընտանիք գոնե մեկը պետք է ստանա, քանի որ միայն քչերը մի ձեռք հագուստից ավելի ունեն, և որևէ միջոցից զուրկ 7 500 անձերից յուրաքանչյուրին միայն հացի համար օրական 40 փարա (18 պֆենինգ) է հարկավոր: Շատերը մահանում են ցրտից ու սովից: Եթե այդ հազարավոր այրիներն ու որբերն այս վիճակում թողնվեն, նրանք ստիպված կլինեն թշվառության և հուսահատության մեջ մեռնել: Չկա հաց, չկա հագուստ, չկա անկողին, չկա աշխատանք, այլ միայն հիվանդություն գրեթե յուրաքանչյուր ընտանիքում: Այս դրությունը մահից էլ վատ է:

Արաբկիր: Ավելի քան 400 քրիստոնյա տներից միայն 30 ընտանիքներ են փրկվել, որոնք մարդկային կորուստ չունեին, բայց բոլորը տառապում են սովից ու գունատ են: Մի կտոր հաց հայթայթելու ոչ մի միջոց չկա: Փոքրիկ երեխաները, ամբողջովին մերկ և առանց ուտելիքի, թափառում են ու կանչում. «Հա՜ց, հա՜ց»:

Սվազ: Գյուղերից ստացվող տեղեկությունները գրեթե ամենուր նույնն են: Տների մեծ մասը հրկիզվել է, ողջ հագուստեղենը,

անկողինը և մնացյալը՝ հափշտակվել: Վերապրածներն իրենց ծածկում են հարդով, երեխաները մեռնում են ցրտից ու սովից: Շատերը վիրավորված են և զուրկ որևէ խնամքից:

Մի սպա ասում է, որ կանանց է ճանաչել, որոնք մի թուրքական գյուղ էին գնացել՝ հաց մուրալու, բայց ճանապարհին մահացել էին սովից ու ցրտից:

Էրզրումի նահանգում այժմ շուրջ 50 000 մարդկանց աջակցություն է ցուցաբերվում: Աղքատությունը հաղթահարելու ոչ մի փորձ չի արվում. միակ մտածումը մարդկանց ողջ պահելն է:

Մի երիտասարդ, որը վտանգավոր տեղանքներով 90 մղոն ոտքով կտրել-անցել էր, օգնություն էր խնդրում: Նրա տեղեկությունները հետևյալն են. 85 հայկական տներ կան այն գյուղում, որտեղ նա ապրում էր: Բոլոր տները թալանվեցին, և շատերը սպանվեցին: Սպանդը սկսվեց, երբ բերքը դաշտերում հասել էր: Ոչ ոք չէր համարձակվում դուրս գալ գյուղից՝ բերքը հավաքելու: Քրդերը եկան, բաժանեցին դաշտերն իրար մեջ, հավաքեցին հացահատիկը և տարան: Այժմ թշվառությունն անկարագրելի է: Բազմաթիվ մարդիկ են սովամահ եղել: Երիտասարդի հայրն ու եղբայրը սպանվել են, և նա իր կնոջն ու մի քանի փոքրիկ երեխաներին թողել է ծայրահեղ թշվառության մեջ՝ գալու և իր գյուղի ու նմանապես երեք կարիքավոր գյուղերի մասին տեղեկացնելու համար:

Խարբերդի նահանգում աջակցություն էին ստանում 300 գյուղերի 60 000 բնակիչներ: Մենք մի նամակից հետևյալն ենք ներկայացնում այնտեղ տիրող զրկանքների վերաբերյալ. «Կուզենայի մի քանի բառով տեղեկացնել իրադրության մասին: Ես փորձեցի ապագան հուսառատ պատկերացնել և հավատալ, որ մարդիկ դարձյալ ոտքի կկանգնեն: Ես մանրամասն հաշվարկներ կատարեցի այն օգնության մասին, որն անհրաժեշտ կլինի՝ ժողովրդին սովահարությունից պաշտպանելու համար, բայց տեսնում եմ, որ

այն հարցն է ի հայտ գալիս, թե դեռ որքան կդիմանանք, իսկ սովը գնալով ավելի զարհուրելի կերպարանք է ստանում:

Ես երկու շաբաթ առաջ դր. Հուբելի և անգլիական փոխհյուպատոսի՝ պրն. Ֆոնտանայի հետ այցելեցի գյուղերից մի քանիսը:

Առաջին գյուղը Սուրսուրին էր՝ Մեզրեից՝ նախկինում մեծ և բարեկեցիկ մի գյուղից կես մղոն հեռավորության վրա: 160 տներից 155-ը հրկիզվել են, բայց գյուղն այնքան մոտ է կառավարության նստավայրին, որ այստեղ պակաս վտանգավոր է թվում, քան ավելի հեռու վայրերում: Ծառեր նույնպես կան, և շատերի բակերում մենք փայտանյութ տեսանք, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ նրանց տները վերակառուցվում են: Դա մեզ ուրախացրեց, և մենք եկանք այն համոզման, որ այս գյուղը թեթև աջակցությամբ կամ նույնիսկ առանց դրա դուրս կգա այդ վիճակից: Մենք անցանք Սուրսուրին ու Բանիկը, որտեղ վանքը, եկեղեցին ու բոլոր տներն ավերակների են վերածվել, և եկանք Դատեմ: Այստեղ մենք ձիով բարձրացանք մի բարձր բլրի վրա, որն իշխում է գյուղի վրա, և ողջ ավերածությունը մեզ տեսանելի դարձավ: Գյուղում նախկինում 250 տուն կար, որոնցից 200-ն այժմ ավերակների սև կույտեր են: Միակ փայտանյութը, որ տեսանք, գտնվում էր աղաների տների մոտ, որոնք հարկադիր աշխատանքի միջոցով շքեղ դղյակ էին կառուցում:

Ոչ մի քրիստոնյա չի փորձել իր համար կացարան կառուցել: Նրանք ապրում են իրենց տների ավերակներում, և տիֆը գրեթե յուրաքանչյուր ընտանիքում զոհեր է պահանջել:

Այդտեղից մենք գնացինք Խույլու: Նախկինում դա Խարբերդի դաշտավայրի ամենամեծ և հարուստ գյուղն էր: Այստեղ դարձյալ նկատեցինք այն ջանքերը, որոնք գործադրվել են տներն ավերելու համար: Դրանք սվաղված են կավով և ունեն կավե կտուրներ, այնպես որ դրանք դրսից հրկիզելը հեշտ չէ, բայց հարձակվողները վառելիք էին բերում, որով նրանք տները մեկը մյուսի հետևից ներսից հրդեհում էին: Գործն այնքան հիմնովին է արվել,

որ մարդկանց բնակության համար մնում են միայն իրենց հրկիզված տների ախոռները, նկուղներն ու անկյունները:

Մենք փորձեցինք մարդկանց դրդել վերաշինել իրենց տները, բայց նրանք մեզ պատասխանեցին այն բառով, որը երկրում ամենաշատն է հնչում՝ վախ: Իրավիճակը բնութագրում են «վախը և հուսալքությունը»: Նրանք ասում են. «Մենք վախենում ենք ինչ-որ բան ձեռնարկել, քանի որ կարող ենք կրկին հարձակման ենթարկվել»: Մի թուրք տղա ասել է քրիստոնյաներին. «Անցած աշնանը ես ձեզ ասացի, թե ինչ կպատահի, իսկ դուք ինձ չհավատացիք: Այժմ սկսում եք աշխատել դաշտերում, բայց ձեզ ասում եմ՝ ձեր աշխատանքն անտեղի կլինի»:

Բոլոր կողմերից նույն տեղեկություններն են ստացվում: Բալուի շրջանից լուրեր են գալիս նոր՝ շարունակ ահագնացող սարսափի մասին: Արղնի գյուղերում թուրքերը դարձյալ սպառնում են բնակիչներին: Քրիստոնյաները զգում են, որ անվտանգություն չկա իրենց համար, և չեն համարձակվում ինչ-որ բան ձեռնարկել: Ես հարցրի. «Ի՞նչ եք անելու ձմռանը, եթե ձեզ համար ամռանը կացարան չեք պատրաստում»: Նրանք պատասխանեցին. «Կմեռնենք: Մենք վաճառել ենք այն ամենը, ինչ մեզ մնացել էր: Մեզ տրված օգնությունն արդեն վերջացել է: Եթե մեզ չօգնեն, կմեռնենք»: Նույնիսկ Խարբերդի մոտ գտնվող գյուղերում՝ Քեսրիկում, Մորենիկում և այլուր, ոչ մի կառուցում չի արվում: Մարդիկ ասում են. «Եթե մեզ օգնություն չհասցվի, ապա կփորձենք փախչել երկրից»: Մենք փորձում ենք նրանց խրախուսել կառուցել, բայց չենք կարողանում փայտանյութի համար գումար տալ նրանց, մենք քաջալերում ենք նրանց մշակել դաշտերը, բայց չենք կարող կենդանիներ տալ: Աշնանացանի շրջանն աննկատ անցավ, իսկ գարնանացանը դեռ չի արվել: Որչափ կարելի է նկատել, հավանական է, որ նրանք, ովքեր անցյալ ձմեռ մահից խուսափեցին, եկող ձմռանը կմեռնեն, եթե նրանց տնական օգնություն չցուցաբերվի:

Մեր աջակցությունը պարզապես օգնել է ժողովրդին ողջ մնալ: Թե նրանք որքան են մոտեցել սովամահության եզրին, կարող եք իմանալ մեկ ուրիշ գյուղից՝ Քեորբեից, ուր այսօր եմ այցելել:

Այն նախկինում բաղկացած էր 150 տներից, որոնցից հավանաբար միայն 15-ն են կանգուն մնացել, մյուսները հիմնովին ավերվել են: Միայն պատերն են հուշում, թե այն ժամանակին ինչ գեղեցիկ գյուղ է եղել: Բացի 12 տներից՝ մյուսներում անկողիններ չկան: Մարդիկ ցնցոտիներով են շրջում: Ամբողջ ձմեռ նրանք քնել են հատակին՝ առանց վերմակների: Գյուղի շուրջ բոլոր ծառերի կատարները կտրված են, այնպես, որ միայն մերկ բներն են մնացել: Գյուղի բնակիչները ձմռանը կտրել են ճյուղերը՝ դրանք քաղաքում սննդամթերքի հետ փոխանակելու համար: Ո՛չ ոչխարներ, ո՛չ էլ առհասարակ կենդանիներ կան այստեղ, միայն երկու շուն է դեռ մնացել: Տներում ես ո՛չ հացահատիկ, ո՛չ էլ այլ սննդամթերք գտա: Մի քանի տներում մի քիչ հաց կար, բոլորում՝ խոտերի փոքր կապեր, որոնք այժմ նրանց հիմնական ուտելիքն են: Կանանց և երեխաների դեմքերը դեղնած ու հյուծված էին: Ես մի փոքրիկ տղայի հարցրի՝ արդյոք նա այդ օրը հաց կերե՞լ է, և նա պատասխանեց՝ «ո՛չ». նա միայն խոտ էր կերել: Մյուս երեխաներն ասում էին, որ ձեռքիս մեծության հացի կտորներ էին կերել: Երբ մենք գետնին էինք նստում՝ գյուղաբնակների մեծ մասով շրջապատված, մի քանի երեխաներ շարունակ խոտ էին պոկում և ուտում արմատների հետ մեկտեղ: Ինչքանով կարող եմ դատել, այս մարդկանց միայն մի քանի օր է բաժանում սովամահությունից: Հուսամ, որ մինչ այդ կկարողանամ օգնել նրանց: Հացահատիկ կգնեմ, որ նրանց տամ: Ամենից ավելի, սակայն, ինձ ապագան է վախեցնում: Այստեղ կարելի է պատկերացում կազմել հուսալքության աստիճանի մասին: Նրանք մեզ նաև ասում են, որ տրամադրվող աջակցությունը շարունակ ավելի չնչին է դառնում: Դա թերևս ցույց է տալիս, որ այս ժողովրդին, դանդաղ մահից բացի,

ոչինչ չի սպասվում: Ես նվիրատվությունների խնայողություն եմ անում՝ չնայած զրկանքների՝ անընդհատ մեծացող ճնշմանը, և կազմում եմ այն գյուղերի ցուցակը, որոնց առնվազն ամռանն օգնություն չպետք է ցուցաբերվի, հրաժարվում եմ հագուստ ու անկողիններ տալ, որքան էլ դրանք անհրաժեշտ են, բայց, չնայած այդ ամենին, շուտով մեր ամբողջ գումարը կսպառվի, և ի՞նչ պիտի լինի հետո:

Կարո՞ղ եք մեզ հույս տալ: Մարդիկ աղերսագին մեզ են նայում և հարցնում. «Հույս չկա՞ մեզ համար»: Ես այդ հարցը շարունակում եմ փոխանցել: Հավանաբար լույս կծագի, սակայն հիմա շատ մթին է՝ բացի այն դեպքից, երբ վեր ենք նայում: ... Արաբկիրից, Բալուից և Փերիից եկող խնդրանքները ստիպողական են: Մեզ 100.000 ֆունտ է անհրաժեշտ այդ շրջանի համար, բայց մենք չենք համարձակվել դա խնդրել: Այո՛, մենք ինքներս չենք կարող ամբողջովին անտեսել իրադրությունը: Սոսկալի կարիքը մեզ ընբռնելի է դառնում այն ժամանակ, երբ այն մեզ է պատում: Մի՛ դադարեք մեզ համար օգնություն փնտրել:

Երեկ ես այցելեցի մի ուրիշ գյուղ՝ Աշվան: 13 ժամ ես ձիավարում էի՝ չհաշված այն ժամանակը, որն անհրաժեշտ էր գյուղ հասնելու համար: Այս գյուղն ուներ 75 տներ, որոնց կեսը հրի է մատնվել: Լավագույն տները հրկիզվել են: Դա արել են հարևան թուրքերն ու քրդերը Դերսիմի քրդերի կողմից գյուղը կողոպտելուց գրեթե ութ օր անց: Այստեղ մարդիկ ավելի շատ բնակելի սենյակներ ունեն, քան Խույլուլում կամ Քեորբեռում: Խիստ ցավալի է տնից տուն անցնել և անկողին, խոհանոցային պարագաներ չգտնել (մի տեղ տեսա, որ մի հին նավթաման որպես կաթսա էր օգտագործվում), տները դատարկ էին: Աշվանում ես գրեթե յուրաքանչյուր տանը մի քիչ ուտելիք, մի քանի բուռ ալյուր կամ եգիպտացորեն տեսա, բայց միայն այնքան, որ առավելագույնը երկու օր կբավականացներ: Մենք կարողացանք նրանց ձմռան ընթացքում կենդանի պահել: Եթե Դուք մեզ օգնություն չուղարկեիք, հազարա-

վորները մահացած կլինեին: Բայց այն, ինչն ինձ ավելի խորն է հուզում, քան փաստացի կարիքը, նրանց դրության անհուսալիությունն է, եթե տեսական օգնություն չցուցաբերվի: Հատկապես անասուններ են անհրաժեշտ: Աշնանացանի համար դաշտերի հերկումը պետք է այժմ ձեռնարկել, քանի դեռ հողը խոնավ է: Եթե հողը չորացած ու կարծր լինի, չեն կարող հերկել: Եթե չհերկեն, հաջորդ տարի բերք չեն ունենա, և շատ գյուղերում հողը կխլվի քրիստոնյաներից: Աշվան գյուղում տեսա, որ թուրքերն ու քրդերը հարևան գյուղերից գալիս և դաշտերը հերկում էին: Ոմանք հողը բռնի խլում էին, մյուսներն հողը վերցրել էին դրա տերերի համաձայնությամբ, որոնք այն անասուններ ունեցողներին էին թողնում՝ հերկելու համար: Երբ քրիստոնյաները կորցնում են իրենց ունեցվածքը, ապա միայն ժամանակի հարց է, թե երբ իրենց տները ևս քրդերին ու թուրքերին պիտի տան, որպեսզի քաղաք տեղափոխվեն, որտեղ ողորմություններով կապրեն կամ կմեռնեն:

Չարսանջաքի շրջանում մեծաթիվ քրիստոնյաներ զրկվում են հողի սեփականությունից: Աստծու սիրույն, Կոմիտեին հորդորեք մտածել այդ մասին, և, եթե հնարավոր է, մեզ օգնություն ուղարկել:

Երբեմն ես տարվել եմ այն մտքով, որ ամեն բան թողնեմ և մեկնեմ Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից՝ Եվրոպա՝ մարդկանց պարզ դարձնելու, թե որքան հուսահատեցուցիչ է դրությունը: Ես ութ գյուղ եմ այցելել, և աչքերս բացվել են, բայց ինչպե՞ս կարող են դա հասկանալ մարդիկ, որոնք հազարավոր մղոններով հեռու են մեզնից: Արդյո՞ք պետք չէ այդ հարցը վերջապես լրջորեն կշռադատել: Իմ սիրտը թույլ է, և ես չեմ կարող տանել զրկանքների ու թշվառության ճնշումը, որին դարմանել չեմ կարողանում: Երբ վերջերս անցնում էի մի գյուղով, բոլոր բնակիչները դուրս եկան ճանապարհին, ու երբ հեռանում էինք, լացագին կանչում էին. «Սոված ենք, սոված, սոված»: Այդ կանչը հետապնդում է ինձ: Ես նրանց մի քիչ օգնություն եմ ուղարկել՝ սովամահության

օրը հետաձգելու համար, բայց նրանց դաշտերը մնում են անմշակ, տներն ավերված են, և ոչ մի ձեռք չի մեկնվել՝ նրանց ոտքի կանգնեցնելու ու քաջալերելու համար: Ի՞նչ պիտի լինի վերջը:

Այսօր օգնություն հայցելու համար այստեղ եկան գյուղացիներ Դերջանից, որը մի խումբ գյուղերի կենտրոնն է: Նրանց տեսքը կարեկցանքին ուղղված խոսուն ուղերձ էր: Նրանք 18 ժամվա ճանապարհ էին անցել՝ երկու ձյունապատ լեռնաշղթաների վրայով: Մի տղամարդ, որն այնքան բարեկեցիկ էր ապրել, որ իր տանը կարող էր 18 կամ 20 հյուրերի ընդունել և հարմարավետ օթևան տրամադրել, այժմ փաթաթված էր ցնցոտիների մեջ, և այն էլ այնքան խղճուկ, որ դրանք նրան նույնիսկ ամռանը բավականաչափ չէին պաշտպանի: Մեկ ուրիշի՝ մի հսկա տղամարդու երկու ձեռքերն էլ խեղված էին՝ զինվորների դաժան հարվածների հետևանքով: Գյուղերի բնակիչները, որոնց կողմից այս պատվիրակներն ուղարկվել էին, զուրկ էին այն ամենից, ինչ պետք է մարդ արարածին. ոչ մի ներքնակ կամ վերմակ չէր մնացել նրանց, և ձմռան ամիսներին նրանք բոլորը ծղոտի և խոտի մեջ են քնել: Նրանք հետևյալ կերպ են պատրաստվել գիշերելու. նախ ծղոտ էին լցնում գետնին, և ապա բոլորը, բացի մեկից, որքան հնարավոր է մոտ պառկում էին կողք կողքի, ապա այդ մեկը ծածկում էր նրանց խոտով, և ինքն էլ հնարավորինս սողոսկում խոտի տակ: Այս գյուղերից մի քանիսն ընդմիջումներով 40 օր շարունակ թալանվում էին քրդերի կողմից:

Մի գյուղից բոլորը, ովքեր փրկվել էին յաթաղանից, փախել էին լեռները, որտեղ մնացել են երեք շաբաթ՝ չհամարձակվելով վերադառնալ իրենց տները: Այդ ընթացքում նրանք այլ հագուստ չունեին, քան այն, որը հենց հարձակման ժամանակ իրենց հագին ունեին: Ցրտաշունչ եղանակ էր: Լեռներում 20 երեխա ծնվեց, բայց նորածիններից և ոչ մեկը չկարողացավ հաղթահարել փախուստի այդ օրերը: Այդ գյուղերից առևանգեցին 10 աղջիկների, և նրանցից ոչ ոք չվերադարձավ: Թուրքերն ու քրդերը հատկապես

կույս աղջիկներին են հետապնդում: Հարսներն ավելի քիչ են ենթարկվում նրանց բռնաբարություններին: Այդ պատճառով գյուղացիները սկսեցին իրենց բոլոր աղջիկներին, ութ տարեկանից սկսած, ամուսնացնել՝ ամուսնությունը դիտարկելով որպես պաշտպանական միջոց դիվային հրեշներից: Դերջանի խումբը կազմող 32 գյուղերում հնարավոր չէ գտնել ութ տարեկանից մեծ չամուսնացած աղջկա: Եթե միայն այդ աղետն ավարտվեր, թշվառ, համբերատար այս ժողովուրդը դարձյալ իր ձեռքը կառներ կյանքի կտրված թելն ու այն նորովի կսկսեր, սակայն նրանք դեռ ապրում են ամենօրյա մահվան վախի ու սարսափի ներքո: Նրանք պառկելիս երբեք համոզված չեն, որ մինչև առավոտ ապահով կլինեն, և վեր կենալիս երբեք չունեն այն վստահությունը, որ կտեսնեն հաջորդ գիշերը: Նրանք չեն համարձակվում մի գյուղից մյուսը գնալ, նրանց կանայք չեն համարձակվում նույնիսկ դռնից դուրս ելնել, նրանք մատնված են դժնի բանտարկության: Չնայած իրենց կանանց պաշտպանելու բոլոր ջանքերին՝ ոչ մի տղամարդ չի համարձակվում իր կնոջը իրենը ներկայացնել կամ իր աղջկան պաշտպանել, երբ անպատիժ մնացող, չարագործ զինվորներն են գալիս: Նորին մեծության կանոնավոր զորամասերի զինվորներն ու քրդերը գալիս են գյուղ ու օրերով մնում այնտեղ, պահանջում են այն ամենը, ինչ ցանկանում են, և դա անհապաղ պետք է կատարվի: Այդ կերպ են հաճախ աղքատանում այն գյուղացիները, որոնց սովորական եղանակով չեն թալանվել:

Միայն այն, թե ինչպես են այդ խեղճ մարդիկ նայում դեմքիդ ու հարցնում, թե ինչ է լինելու իրենց հետ, բավական է, որ նույնիսկ ամենակարծր սիրտը հալվի: Երբ նայում են մեկին՝ օգնության հույսի մի նվազ շող հայտնաբերելու համար, աղերսանքը, որ նրանց դիմագծերում պատկերվում է, այնքան հուզիչ է, որ ցանկանում ես փախչել՝ զգացմունքներդ արցունքների մեջ խեղդելու: Այս խեղճ գյուղացիների պատմությունները լսելիս նյարդերի լա-

ռումը հաճախ այնքան ուժգին է, որ ստիպված ես լինում հետ քաշվել՝ նման խոսակցությունից լիովին ուժասպառ: Միայն մի բան կա, որն օգնում է թեթևացնել այդ լարվածությունը, և դա այդ մարդկանց ակնհայտորեն անկեղծ երախտագիտությունն է՝ ցուցաբերված նվազագույն իսկ կարեկցանքի համար: Աստծո օրհնությունը թող լինի բոլոր նրանց վրա, ովքեր գոնե մի բաժակ սառը ջուր են մեկնել՝ նրանց կազդուրելու համար:

Այցելություն Կյուրին: Վերջերս այցելեցի այդ վայրը: Այդտեղի բնակչության դրությունն անհնար է նկարագրել: Նախկին հիասքանչ և ծաղկուն բնակավայրի փոխարեն այժմ, որքան աչքդ կտրի, ավերված, թանաքի պես սև զանգվածից բացի ոչինչ չես կարող տեսնել. մի պատկեր, որը մի սոսկալի պատերազմի կրակն է զորու ստեղծել: 1500-1600 տների փլատակ պատերը, որոնք նախկինում հարմարավետորեն ծվարել էին լավ խնամված պտղատու այգիների կենտրոնում, ոչնչացված երջանկության ու բարեկեցության վկայությունն են: Երբ ես մի ավերված տնից մյուսն էի գնում, լսում էի միայն վախի սրտակեղեք ճիչը կանանց կամ մայրերի շուրթերից, որոնցից ամեն բան խլել էին: Վերապրած ժողովուրդը հոծ խմբերով կուտակվել էր մեկուսի ախոռներում, երբեմնի բնակելի տների՝ այստեղ-այնտեղ կանգուն մնացած առանձին սենյակներում: Թշվառ ժողովուրդը ցնցոտիներ էր կրում, որոնք միայն մի պարանով ամրացված էին ազդրերին. դա նրանց ամբողջ հագուստն էր, որ հազիվ էր հերիքում՝ նրանց մերկությունը ծածկելու համար: Մայրերն իրենց առևանգված աղջիկների փրկության համար ինձնից օգնություն էին հայցում: Ամբողջն ի մի բերելիս դժվար է ավելի սրտակեղեք տեսարան պատկերացնել, քան այն, ինչ տեսա: Ճշգրիտ հաշվարկով Կյուրինում 5075 մարդիկ ամենօրյա օգնության կարիք ունեն, եթե չպետք է սովամահ լինեն: Երկուսուկես ամիս ի վեր նրանք կառավարությունից ոչ մի աջակցություն, նույնիսկ մի հատիկ ցորեն չեն ստացել, և այն դրությունը, որն առկա է Կյուրինում, առկա է նաև շատ

ուրիշ գյուղերում, որտեղ, այդ ամենից զատ, պիտի նաև շատ հիվանդություններ և հատկապես տիֆ տարածված լինեն:

Կեսարիայի մոտ գտնվող Գիգի գյուղը միայն 35 տուն և 250 բնակիչ ուներ: Երբ կողոպտիչները մոտենում էին, մարդիկ փախան ու այդպիսով փրկեցին այն հագուստները, որ կրում էին: Երբ նրանք վերադարձան, դատարկ պատերից բացի՝ ուրիշ ոչինչ չգտան: Շարժական ողջ գույքը թալանվել էր, նույնիսկ՝ ջուլհակագործական հաստոցները: Ես մտա ամեն մի տուն, բացեցի ալյուրի արկղերը և ճրագով լուսավորեցի բոլոր մութ անկյունները: Երկու ժամը բավականացրեց այդ դիտարկման համար: Տների մեծ մասը բաղկացած էին սոսկ երկու սենյակից: Առաջին սենյակն ուներ էր միայն չորս կավե պատ և կավե հատակ, որի կենտրոնում բացված խոռոչ կար: Այդ խոռոչում կրակ էր վառվում, որի շուրջը խմբված էին հինգից տասը երեխաներ կամ չափահասներ, որոնք իրենց ժամանակն անցկացնում էին տաքանալով: Բազմաթիվ տներում ալյուրի արկղերը կոտրատված էին, և զննելու ոչինչ չկար: Երբ ես հարցնում էի, թե ինչ են ուտելու հաջորդ օրը, նրանք պատասխանում էին. «Աստված գիտի, այսօր փոխ ենք առել, հավանաբար կկարողանանք վաղն էլ ինչ-որ բան փոխ առնել»: Ամբողջ գյուղում նույնիսկ մի անկողին չկար, անգամ որևէ բան, որը կարելի էր վերմակ անվանել, ոչինչ՝ բացի լաթերի փոքրիկ կույտերից, որոնք նրանք հոգածությամբ պահպանում էին որպես միակ բան, որով գիշերը կարող էին ծածկվել: Մենք ուզում ենք նրանց օգնություն ուղարկել՝ նրանց կյանքը պահպանելու համար:

Գեմերեկի շրջանից մենք լուրեր ենք ստացել սկսվող սովահարության մասին և պետք է անհապաղ բաժանենք հացահատիկը, որ այստեղ գնել ենք:

Հաղորդում *Հուլաքեշից* [Hulakesch]: Մարդիկ իրենց կյանքը երկարաձգում են՝ փոքրիկ սերմնաձիլերը պոկելով, որպեսզի ուտեն ցանված սերմերը, խոտ ուտելով և այլն: Կառավարությունը

նրանց մի քիչ հացահատիկ էր տվել, որը քրդերը նրանցից դարձյալ հափշտակեցին:

Վանի շրջանի սարսափելի թալանն աշնանը (այս ընթացքում տեղի է ունեցել ևս մեկը հունիսին) զրկել է բնակչությանն ամեն ինչից: Ամենուր կարելի է տեսնել մարդկանց, որոնք իրենց մերկությունը խոտերի խրձերով են ծածկում և ապրում են նրանով, ինչ դաշտերում գտնում են: Հազարավոր սովյալներ ամեն օր աննկարագրելի վիճակում գալիս են քաղաք և հաց ու հագուստ են խնդրում: Հազարավոր կանայք և աղջիկներ անօթևան ու սովահար թափառում են ձյունածածկ ճանապարհներին: Կողոպտիչները նրանցից խլել են բոլոր հագուստները՝ մինչև վերջին շապիկը, և երբեմն նրանց միայն մի կարկատան է թողնվել՝ մերկությունը ծածկելու համար: Օգնության կոմիտեները բացարձակապես ի վիճակի չեն կարիքը մեղմել: Ալյուրի գինը գրեթե կրկնակի ավելի բարձր է, քան առաջ, և ժողովուրդը ո՛չ սերմացու ունի, ո՛չ կենդանիներ՝ դաշտային աշխատանքները վերսկսելու համար:

Սկզբից նեթ մեծագույն դժվարություններից մեկը կապված էր հիվանդների խնամքի հետ: Հազարավորները, որոնք կոտորածի ու թալանի հետևանքով աշնանը գյուղերից քաղաք էին փախել, քաղաքի տներում մի տեսակ ապաստան էին ստանում, բայց ձեռք բերված կացարանները մեծ մասամբ ախոռներ էին կամ մութ, խոնավ ամբարներ, որոնց հատակը լերկ գետինն էր: Այսպիսի բնակարաններում շատ դժվար է առողջ մնալ, իսկ հիվանդների վիճակը ծայրաստիճան խղճուկ է: Պարզապես զավեշտ էր այդպիսի վիճակում գտնվող հիվանդների համար դեղորայք հայթայթելը: Հավանականությունը, որ դրանք կօգտագործվեն կամ ճիշտ կօգտագործվեն, շատ աննշան կլիներ: Նույնիսկ ճիշտ օգտագործելու դեպքում, սակայն, դեղերն առանց սննդի կամ խնամքի քիչ նշանակություն կունենային: Նման հիվանդների մոտ կատարած մի քանի այցելություններն ինձ ապացուցեցին, որ պետք է բոլորովին այլ պայմաններ ստեղծվեն, հատկապես, քանի որ այս պայ-

մանները տիֆի պատճառ են դառնում, որն ավելի ու ավելի է տարածվում:

Հալեպը ողողված է փախստականներով, որոնք այլևս ոչինչ, *բացարձակապես ոչինչ* չունեն՝ բացի իրենց վերքերով պատված ու խեղված մարմիններից: Սպանդի վայրերում, իհարկե, ոչինչ չի ցանվել, և հետևաբար հավաքելու բերք էլ չկա, կարիքն այստեղ սոսկալի է: Թուրք զինվորները վերցնում և իրենց հետ տանում էին այն սննդամթերքն ու մնացյալը, որ գտնում էին, իսկ այն, ինչ չէին կարող տանել, հողին էր հավասարեցվում կամ հրի մատնվում, տները՝ նույնպես: Երկիրն անապատ է դարձել: Դիակներն այժմ էլ մեծ մասամբ անթաղ են մնում և տարածում վարակիչ գարշահոտություն, այնպես որ հետևանքը համաճարակներն էին լինելու, որոնք արդեն սկսում են ի հայտ գալ: Մեկը մյուսի հետևից սայլեր են գալիս՝ լի արյունոտ հագուստներով, որոնք խլվել են քրիստոնյաներից: Կանայք ու երեխաներն ամբողջովին մերկացվում են, երբ նրանց առևանգելու ցանկություն ի հայտ չի գալիս. նույնիսկ ամենաչնչին զգեստը չի թողնվում նրանց:

Զեյթունում տիֆ ու սև ծաղկախտ են տարածվել և սպառնում են համաճարակի վերածվել:

Սուրբ Կիրակոսի վանքում՝ Դիարբեքիրից Սերթ տանող ճանապարհից փոքր-ինչ ձախ, բռնկվեց խոլերա, այնպես որ օրական մահվան 50 դեպք էր լինում: Շրջակա վայրերից դեպի այդ վանքը և տարածքն էին փախել 1500 ընտանիքներ, որոնցից 2000-3000 մարդիկ կուտակվել էին հենց վանքի շինություններում: Սերթում նույնպես խոլերա բռնկվեց: Երկրամասի աղքատացման և ընդհանուր անապահովության հետևանքով քաղաքաբնակ արաբներն ու քրդերը ևս, հատկապես արհեստավորներն ու սնագործ աշխատողները, սկսում են կարիքի մեջ հայտնվել, քանի որ զբաղմունք չունեն:

29 այրիների կողմից ստորագրված մի նամակ՝ օգնության խնդրանքներով, ստացվել է Ա...-ի մոտ գտնվող գյուղերից մեկից:

Այդ այրիներն ասում են. «Մեր ամուսինները սպանվել էին ջարդի ժամանակ, և մենք աղքատ էինք, բայց աշխատանք ունեինք, ու մեր հարուստ հարևանները մեզ ժամանակ առ ժամանակ օգնում էին: Քրդերը եկան, նրանք չխնայեցին ո՛չ հարուստին, ո՛չ աղքատին և վերցրին այն ամենը, ինչ գտան: Այժմ մեզ ոչինչ չի մնացել, և գյուղում մենք չենք կարող ո՛չ աշխատանք, ո՛չ էլ ողորմություն ստանալ: Մեզնից ոմանք չափահաս որդիներ ունեն, սակայն նրանք էլ ո՛չ աշխատանք և ո՛չ էլ աշխատանքային գործիքներ ունեն»: Այս խեղճ կանայք իրենց նամակը եզրափակում են իրենց ցուցաբերված չնչին օգնության համար երախտագիտության արտահայտություններով: Նրանք ասում են. «Թող Ամենակարողը Ձեզ բոլոր երկնային պարգևներով ողողի և այժմ ու հավիտյանս երջանկություն շնորհի»: Փառք Աստծո, Միջազգային օգնության կոմիտեի միջոցով ձմեռվանից ամառ մեծանշանակ օգնություն ցուցաբերվեց: Կոստանդնուպոլսում գտնվող կոմիտեն՝ անգլիական դեսպանի նախագահության ներքո, Անգլիայից և Միացյալ Նահանգներից ու չնչին մասով նաև այլ երկրներից ստացվող գումարները, նաև նշանակալից գումարներ հայոց պատրիարքին տրամադրելով, օգտագործել է լայնածավալ օգնության կազմակերպման համար: Բաշխումը կատարվում է ամերիկացի միսիոներների կողմից հայ եպիսկոպոսների հետ ղեկավարվող 22 կենտրոնակայանների միջոցով, որոնք իրենց շրջաններում օգնության կայանների ցանց են ստեղծել: Ամենուր կազմվում են ամենաչքավոր մարդկանց ցուցակներ և մանրակրկիտ ստուգվում բողոքականների ու լուսավորչականների կոմիտեների կողմից: Յուրաքանչյուր անձ, ում պարագայում կարծում են, որ կարող է, սովամահ չլինելով, իր դրությունը հաղթահարել, հեռացվում է ցուցակից: Գումարը մեծ խնամքով է բաժանվում և փոքրիկ չափաբաժիններով տրվում առանձին մարդկանց միայն այն չափով, որ բավարար լինի ողջ մնալու համար: Մինչ այժմ շուրջ 300 000 մարդ է օգնություն ստացել և սովամահությունից փրկվել:

Անգլիայից և Ամերիկայից ստացված նվիրատվությունները, սակայն, ամռան ընթացքում սարսափելիորեն պակասել են: Այստեղ ևս զգալի են դարձել եվրոպական քաղաքականության հետևանքները, որի կարծիքով Հայաստանում չի կարող սով տիրել: Չնայած օգնության կոմիտեները մեծագույն մտահոգությամբ են եկող ձմռանն ընդառաջ նայում (սովահարության պայմաններում հագուստի և անկողինների բաժանման առումով դեռևս քիչ բան է հնարավոր եղել անել, իսկ հարյուր հազարավոր ավերված տների վերականգնման համար՝ ոչինչ), չնայած նրանք անօգնական ու հուսահատ են կարիքի անասելի չափերից, այնուամենայնիվ քրիստոնյա Անգլիայում և Ամերիկայում նույնպես թուլանում է մինչայժմյան՝ զոհաբերման պատրաստակամությունը:

Ժամանակն է, որ ավետարանական Գերմանիան իր պարտքը կատարի և լրացնի բացը: Արդարությունը պահանջում է ասել, որ Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրիայում և նաև Գերմանիայում կաթոլիկ եկեղեցին ու իրենց ժողովուրդը կաթոլիկ մամուլի դիրքորոշման շնորհիվ ոչինչ չեն խնայել կաթոլիկ հայերին և Հայաստանի՝ նշանակալիորեն վնասված կաթոլիկ առաքելություններին աջակցելու համար: Պապը 50.000 լիրա է նվիրաբերել, Ֆրանսիայում «Oeuvre d'Orient»-ի գլխավոր տնօրեն, պաստոր Ֆելիքս Շարմետանտն արդեն այս տարվա մարտին «Նահատակ Հայաստանը» գրքի հրատարակությամբ ուղերձ է հղել ֆրանսիացի կաթոլիկներին: Ավստրիայում հայ Մխիթարյան եղբայրները Ֆրանց Յոզեֆ կայսեր հովանավորությամբ կոչ են հեռարձակել: Ավետարանական եկեղեցիներն այլ երկրներում, ինչպես օրինակ, Հոլանդիայում և Շվեյցարիայում, նույնպես իրենց տեղից շարժվեցին: Ֆրանսիական Շվեյցարիան պրոֆեսոր Գոդեթի (Նոյենբուրգ), իսկ գերմանական Շվեյցարիան Բեռնի կոմիտեի միջոցով շարժման մեջ դրվեցին: Առանձին եկեղեցիներ, ինչպես Ֆրանկֆուրտինն ու Բազելինը, բեմից իրենց համայնքներին հիշեցրել են իրենց քրիստոնեական պարտքը: Ահավասիկ մենք հարցնում ենք,

և ցավալի է, որ այս հարցը պետք է հնչի. *ի՞նչ են արել ավետարանական երկրամասային մեծ եկեղեցիները Գերմանիայում, ի՞նչ է արել պրուսական պետական եկեղեցին*: Մի՞թե գերմանական մամուլի դիրքորոշման հետևանքով նրանց անհայտ է մնացել, որ Հայաստան անունով երկիր գոյություն ունի: Մի՞թե նրանք չգիտեն, որ մեր այս ժամանակն ապրում է քրիստոնյաների՝ բոլոր դարերի մեծագույն հալածանքներից մեկը: Կամ մի՞թե նաև նրանց ձեռքը չեն ընկել քրիստոնեական թերթեր, որոնք փոքրիշատե տեղեկացնում էին այդ մասին: Եվ եթե այո, ինչպե՞ս են Գերմանիայի ավետարանական եկեղեցին գլխավորող այրերը կարողանում ականատես լինել Արևելքի քրիստոնյա ժողովրդի տառապանքներին՝ առանց նույնիսկ իրենց շուրթերից կարեկցանքի մի խոսք արտաբերելու: Մեծ քաղաքականությունը նրանց է՞լ է պահանջում լռել: Եվ արդյո՞ք նրանք ոչինչ չգիտեն Աստծո արքայության ավելի մեծ քաղաքականության մասին, որն այս աշխարհի տերությունների եսակենտրոն շահերից վեր է գտնվում: Անկասկած, եկեղեցական իշխանություններն ակնկալում են, որ յուրաքանչյուր քահանա ի վիճակի կլինի հուզված սրտով և տպավորիչ խոսքով քարոզել առաջին հարյուրամյակներում քրիստոնյաների հետապնդումների մասին: Արդյո՞ք պետք է միակ տեքստը, որով այսօր նրանք դեռ իրավասու են քարոզել, հետևյալը լինի. «Եթե մենք մեր հայրերի ժամանակներում ապրեինք, ապա չէինք ցանկանա նրանց հետ մասնակից լինել մարգարեի արյան թափվելուն»: Մի՞թե նրանք պետք է նաև միայն գերեզմաններ կառուցեն մարգարեների համար և արդարների գերեզմանները զարդարեն ու ոչինչ չհարցնեն այն մասին, թե ինչ է կատարվում մեր օրերում: Արդ, կարծում ենք, որ անտեղյակությունն է, որ կծառայի նրանց արդարացմանը, և որ ավետարանական եկեղեցին, թեև ուշացումով, վերջապես կշարժվի տեղից՝ Արևելքի՝ ավազակների մեջ ընկած քրիստոնյաների նկատմամբ իր պարտքը կատարելու համար: Վերջին ամիսներն ապացուցեցին, որ այն բանից հետո, երբ բա-

ցահայտվել է Հայաստանի մասին իրականությունը, Գերմանիայի ավետարանական եկեղեցին մտադիր է միահամուռ ուժերով հանդես գալ հայ ժողովրդի զրկանքները մեղմելու համար: Հմմտ. հավելվածում ներկայացված հայտարարությունները:

10. Ի՞նչ է հետևելու

Սկզբում ասենք՝ *ի՞նչ է հետևել*: Ութ մեծ նահանգների ամայացումը և զանգվածային սպանդը, որին զոհ դարձավ 100 000 մարդ, չէին կարող անմիջական հետևանքներ չունենալ: Առաջին հետևանքն ինքնըստինքյան պարզ է. *ամբողջ արևելյան Փոքր Ասիայի և հյուսիսային Միջագետքի հիմնահատակ տնտեսական փլուզումը*, ինչից, բնականաբար, ոչ առաջավոր Փոքր Ասիան և Սիրիան նույնպես անմասն չեն մնում: Առնվազն տասնամյակներ են անհրաժեշտ, մինչև այդ ընդարձակ երկրամասերը, որոնք թուրքական պետության փաստացի հիմքն են կազմում, դարձյալ ոտքի կանգնեն: Տուժած բոլոր նահանգների քաղաքներում գրեթե ամենուրեք շուկաների 9/10-ը փակ է: Արտահանումն ու ներկրումը, որ գրեթե ամբողջությամբ քրիստոնյաների ձեռքում էին, ինչն արդեն իսկ խոսում է թուրքերի՝ օտար լեզուներին չտիրապետելու մասին, ամբողջովին դադարեցվել են: Հողի մշակումն ընդհանուր անվտանգության բացակայության, նաև նրա համար, որ թուրքերն ամենուր փորձում են սեփականացնել քրիստոնյաների հողատարածքները, սեփականության պայմանների այլակերպման պատճառով ծայրահեղ անբավարար է: Աշնան բերքը դեռ մեծ մասամբ չի հավաքվել, այլ կա՛մ չորացել է դաշտերում, կա՛մ հափշտակվել քրդերի կողմից: Գարնանացանը, քանի որ ոչ ոք չէր համարձակվում դուրս գալ գյուղերից ու քաղաքներից, մեծ մասամբ չի կատարվել: *Ավերված ու կողոպտված ունեցվածքի արժեքը միլիարդներով է թվագրվում*: Թալանված ունեցվածքը, սակայն, որ թուրքերի և քրդերի ձեռքում է գտնվում, նույնպես նա-

խանձելի վիճակում չէ: Ո՞վ պիտի հոգ տաներ ոչխարների ու այծերի մեծ հոտերի կերի համար, որոնք գյուղական բնակչության ամենաարժեքավոր ունեցվածքն են, և որոնց կերակրումը ձմռանը գրեթե բացառապես հայ գյուղացիների պարտականությունն էր, որոնց մոտ նաև քուրդ աղաներն էին իրենց ահռելի հոտերը ձմռանը թողնում՝ դրանք գարնանը, առանց ներդրված աշխատանքն ու ծախսերը հատուցելու, դարձյալ տանելու համար: Զարմանալի չէ, որ խստաշունչ ձմեռը մեծապես կրճատել է հոտերը: Որոշ քրդեր կամ թուրքեր, որոնք հավանաբար իրենց 2000 ոչխարների համար արոտավայր ունեին, ուրախ էին՝ կողոպուտից հետո դրանց թիվը 8000-ի կամ 10.000-ի հասցնելու համար: Իրենց 2000-ին նրանք կարող էին մի կերպ պահել, բայց 8000-ը կամ 10.000-ը՝ բոլորը միասին սատկում են: Քաղաքներում թուրքերի խանութներն ու կրպակները հեղեղված են հայերի ապրանքներով, բայց ո՞վ գողացված ապրանքի համար ամբողջ գինը կվճարի: Գնորդները մեկ հինգերորդ կամ տասներորդ մասն են առաջարկում, և թուրքը դեռ ուրախանում է, երբ ազատվում է ապրանքներից մեկից, որոնց վրա դեռ սպանվածների արյունը չի չորացել: Ո՞վ է, սակայն, առհասարակ, ինչ-որ բան գնում, քանի որ նա, որը դեռ փող ունի, նախընտրում է այն ցույց չտալ. քրիստոնյան՝ ավարառու թուրքերից, իսկ թուրքը՝ հարկային պաշտոնյաների սրատես աչքերից թաքցնելու համար: Հայաստանում աշխատող եվրոպական ընկերությունների կորուստները թվագրվում են միլիոններով, և վերջին տարվա պարտքային մնացորդները պարզապես պիտի կորչեն, քանի որ քրիստոնյաներն այլևս ոչինչ չունեն, իսկ թուրքերի համար համընդհանուր վատ դրությունը լավ պատրվակ է՝ չվճարելու համար: Հյուսիսային Փոքր Ասիայում և Սիրիայում գերմանական ընների կորուստները, որոնք ապրանքների ներկրման մեծ մասն իրենց ձեռքում են պահում, ինչպես ամեն կողմից ինձ հավաստվում է, նույնպես հսկայական չափերի են հասնում: Երբ, սակայն, տուժածները հյուպատոսների մոտ են գալիս,

նրանք ուսերն են թոթվում: Ո՞վ այժմ կցանկանա Բարձր դռանը վնասների փոխհատուցման հայց ներկայացնել: Գերմանա-անատոլիական երկաթուղին ևս դեռ տարիներ շարունակ ամենազգայուն կերպով առերեսվելու է Փոքր Ասիայի տնտեսական փլուզմանը:

Զարմանալի չէ, որ Բարձր դուռն այժմ ամենահուսահատ ջանքերն է գործադրում՝ նոր փոխառություններ ձեռք բերելու համար: Երկրում հարկատվությունը ծայրահեղորեն նվազել է՝ չնայած հարկային համակարգի խիստ ճնշումներին: Ո՞վ պիտի այնքան խենթ լինի, որ Բարձր դռանը, քանի դեռ քաղաքացիական պատերազմը մոլեգնում է պետության բոլոր մասերում, օգնի՝ ֆինանսական ճգնաժամից դուրս գալու համար: *Տնտեսական սնանկությունն արդեն իսկ բավական է՝ Թուրքիայի փլուզումն անիծուսափելի դարձնելու համար*:

Այժմ արդեն, սակայն, դրան նպաստում են շատ այլ գործոններ ևս: *Նախ՝ ոչ միայն քրիստոնյա, այլև թուրք բնակչությունն է մեծապես տուժում համընդհանուր տնտեսական անկման պատճառով*: Բանիմաց թուրքերը, որոնք պարզապես չեն տարվել մոլեռանդությամբ և ավարառության մոլուցքով, բացահայտորեն խոսում են այդ մասին և խստագույնս պարսավում իրենց սեփական կառավարության գործելակերպն՝ աչքի առաջ ունենալով սպասվող սնանկությունը: Թուրք և քրիստոնյա բնակչության տնտեսական հարաբերությունները նույնպես այն աստիճան սերտ էին, որ թուրքերը ստիպված կլինեն սեփական մաշկի վրա զգալ քրիստոնյաների կրած կորուստը: Առևտրի լճացումը հարվածում է բարձր դասերին, իսկ քրիստոնյաների հողատարածքների ամայացումը՝ թուրքական մեծաքանակ պրոլետարիատին: Գյուղերում ամենուր գյուղաբնակները բողոքում են, որ այն ապրանքները, որոնք իրենք նախկինում կարող էին էժան գնով գնել ամբողջ երկրով ճամփորդող հայ վաճառականներից, այժմ դժվարությամբ են

ձեռք բերում և, դրանից բացի, ստիպված են չորս-հինգ անգամ ավելի վճարել, քան առաջ:

Վատ տնտեսավարման և ընդհանուր ամայացման բնական հետևանք է, որ *երիտթուրքական կուսակցությունը*, որ մինչ այժմ հիմնականում բաղկացած էր թուրք բնակչության բարձր խավի երիտասարդ և արդեն եվրոպական կրթություն ստացած անդամներից, շարունակ նաև հին թուրքերի շրջանակներից է համալրվում: Այդ երիտթուրքական կուսակցությունը բնավ հեղափոխական չէ սովորական իմաստով, ինչպես պաշտոնապես ներկայացվում է: Սահմանադրական պետության մեջ այն կդառնար առողջ ռեֆորմիստական կուսակցություն և մեծ ազդեցություն կունենար պայմանների բարելավման հարցում, քանի որ բաղկացած է նոր թուրքական մտավորականության լավագույն տարրերից: Այնուամենայնիվ, երիտթուրքերի վրա ևս չի կարելի հույս դնել, քանի որ նրանց իդեալներն իրենց ծագումնաբանությամբ այնքան եվրոպական են, որ դրանց իրականացման փորձի դեպքում պիտի կործանեն թուրքական պետական ողջ պատմական համակարգը և մահմեդական մոլեռանդության պատճառով ի սկզբանէ ձախողման են դատապարտված: *Այդպիսով՝ նրանք միայն քայքայման ևս մեկ միջոց են*: Բարձր դուռը գիտի, թե ինչ վտանգ է իրեն այդ կողմից սպառնում, և հենց այդ առումով սուլթանի ունեցած երկյուղին պետք է վերագրել այն, որ նա, չնայած իր պալատը, հսկայական զորանոցներով շրջափակված, արդեն իսկ ավելի շատ զորանոցային պալատի է նմանվում, բոլորովին վերջերս վայրի Քրդստանի իր սիրելի համիդեական գնդերից (անկանոն քրդական գնդեր) երկուսին հանձնարարեց իր անձնական պաշտպանությունը, և Կոստանդնուպոլսում նրանց ափիանումը մայրաքաղաքի եվրոպական բնակչության շրջանում չնչին իսկ անհանգստություն չառաջացրեց: Եթե պաշտոնապես հայտնի դարձվեց, որ այդ գնդերի շեյխերը պետք է պատանդներ դառնային Փոքր Ասիայի խորքերում քրդական ցեղերի լավ վարքի համար,

ապա դա այն սիրված պատրվակներից մեկն է, որոնցով Բարձր դուռը երբեմն մոլորեցնում է եվրոպական դիվանագիտությանը: Ընդհակառակը՝ քրդերը, որոնք լավ գիտեն, թե հավատացյալների տիրակալի սիրտը որքան բարեհաճ է իրենց նկատմամբ, իրենց ընկերների այդ պարգևատրման մեջ կտեսնեն միայն վերջին ամիսներին իրենց մատուցած ծառայությունների վարձատրություն և քաջալերում՝ իրենց բարբարոսությունները շարունակելու համար:

Այն բանի համար, սակայն, որ Հայաստանում իրավիճակը չխաղաղվի, քրդերն այսպես թե այնպես հոգ կտանեն: Միայն թե այժմ, երբ քրիստոնյա բնակչությունից այլևս խլելու բան չկա, հերթը հասնելու է թուրքերին: Եզոպոսյան մի գեղեցիկ առակ կա. մի հովիվ օրերից մի օր գայլի ձագ է գտնում, մեծացնում է նրան և շատ չանցած՝ սովորեցնում գողանալ հարևան հոտերի գառները: Գայլն իրեն դրսևորում է որպես ընդունակ աշակերտ և ասում հովվին. «Այն ժամանակից, ինչ դու ինձ սովորեցրել ես գողանալ, պետք է աչքդ քո հոտի վրա պահես, որ նրանից ոչինչ չպակասի»: Թուրքական կառավարությունը պետք է մշտապես աչքը քրդերի վրա պահի, որոնց պատվիրել է թալանել քրիստոնյաներին: Բայց քանի որ այդ ընդունակ գայլերը, դրա հետ մեկտեղ, նաև բավականաչափ խելացի են՝ հովվաշների՝ թուրք զինվորների և ժանդարմների հետ համախորհուրդ գործելու համար, նա հավանաբար անախորժ դրության մեջ կհայտնվի: *Բարձր դռան բնաջնջման քաղաքականության ամենավարթար արդյունքը, սակայն, մահմեդական մոլեռանդության զրգռումն է*, որը վերջին ամիսների իրադարձություններից սովորել է, որ կարող է անպատիժ լողալ քրիստոնյաների արյան մեջ, և որ քրիստոնյա Եվրոպան Արևելքում քրիստոնյաների հետապնդմանը մոտավորապես այնքան է ուշադրություն դարձնում, որքան լուսնի փոփոխությանը: Հիմա նաև թուրքը գիտի, որ խաչակրաց արշավանքների դարաշրջանները վաղուց անցել են, և որ դիվանագետների սրտերն

այլևս ոչ մի ռոմանտիկ զգացումով չեն ոգեշնչվում: «Մենք՝ մահմեդականներս,– ասաց մի մուսուլման,– աշխարհի աչքերին փչված թոզ ենք: Սուլթանը կոտորել է տալիս բոլոր հայերին, իսկ Եվրոպան չի համարձակվում նույնիսկ մատը բարձրացնել»: Ով վերջին ամիսներին ճամփորդել է Արևելքում, եթե շոշափել է մահմեդական բնակչության տրամադրությունը, համոզված կլինի այն բանում, որ մուսուլմանների ամբարտավանությունն այլևս սահմաններ չի ճանաչում և երազում է մոտ ապագայում ազատվել մահմեդական տիրապետության տակ գտնվող բոլոր քրիստոնյաներից: «Ե՞րբ է սուլթանը անգլիացիներին դուրս շպրտելու Եգիպտոսից». սա հարց է, որը հաճախ ես լսում մահմեդականներից: Ծաղրալի կատակները, ինչպես այն մեկը, թե անգլիական նավատորմը փախել է Միջերկրական ծովից, իսկ ռուսները իսլամն են ընդունել, սոսկ անվտանգության զգացումի պարզունակ արգասիքն են, որի մեջ ճոճվում են թուրքերը:

Էլ ավելի լրջագին պետք է ընդունել անապահովության զգացումը, որը համակել է քրիստոնյա բնակչությանն ու բոլոր դավանանքների քրիստոնեական առաքելություններին թուրքական պետության բոլոր մասերում: Սիրված մահմեդական հայհոյանքները՝ ուղղված քրիստոնյա շներին, որ արդեն նվազել էին, դարձյալ լսվում են փողոցներում: Մուսուլմանների կողմից քրիստոնյաների դեմ կատարվող առանձին հարձակումները և սպանությունները կրկին օրակարգային են դարձել, իսկ ճնշումներն ու գլխացավանքները, որոնք այժմյան սուլթանի ֆանատիկ իշխանության ներքո արդեն տարիներ ի վեր պատճառվում են քրիստոնեական առաքելություններին, ավելի սուր երանգ են ստանում: Զարմանալի չէ նաև, որ քրիստոնյա բնակչությունը ներկայիս իրադրությանը ապագայի հանդեպ մեծագույն մտահոգությամբ է նայում: Չէ՞ որ տրվել է այն բանի ապացույցը, որ հնարավոր եղավ մի քանի շաբաթվա ընթացքում մեծ նահանգների քրիստոնյաների հաջորդական սպանդ բեմադրել, մինչդեռ քրիստոնյա

մեծ տերությունները դա չկանխեցին կամ գոնե չկասեցրին, այո՛, որ թուրքական մամուլի ազդեցությամբ հանրային կարծիքի խեղաթյուրման շնորհիվ փաստերը միայն ամիսներ անց հայտնի դարձան: Ո՞վ կերաշխավորի, որ այն բանից հետո, երբ արևելյան Փոքր Ասիայում քրիստոնյաների բնաջնջման փորձը հաջողվել է, հերթը չի հասնի նաև արևմտյան Փոքր Ասիային, Սիրիային և Պաղեստինին: Դրա պատեհ առիթը կարող է այսօր կամ վաղը առկա չլինել, բայց մեծ տերությունների գործելակերպը Հայաստանի և Կրետեի նկատմամբ հուշում է, որ երբ ժամը խփի, տերությունների միջամտությունն ամեն պարագայում չափազանց ուշ կլինի: Մահմեդականների բերանից կարելի է լսել. «Մենք լավ գիտենք, որ եվրոպացիները ցանկանում են ունենալ մեր երկիրը: Նրանք կստանան այն, բայց մենք հոգ կտանենք, որ նրանք այլևս ոչ մի քրիստոնյայի չգտնեն այնտեղ»:

Դրությունը, անշուշտ, համեմատաբար նպաստավոր է Թուրքիայի այն երկրամասերի համար, որտեղ քրիստոնյաները պարզ մեծամասնություն են կազմում, օրինակ՝ Մակեդոնիայի և Կրետեի, բայց արդյո՞ք այդ տարածքներում քրիստոնյա բնակչության հեղափոխականացումը, որը նույնպես տասնամյակներ ի վեր ստիպված է սպասել մեծ տերությունների կողմից երաշխավորված բարեփոխումներին, ներքին պատճառական կապ չունի Հայկական հարցի բարձրացման հետ: Այն ամենից հետո, ինչ կատարվեց և դեռ կատարվում է, արդյո՞ք կկարողանան մեծ տերությունները շարունակել իրենց ինքնախաբեության, իսկ Անգլիան, մասնավորապես, խոտի դեզի վրա հայտնված շան քաղաքականությունը: Չնայած ոմանք միամտաբար այն կարծիքին են, որ միայն այն դեպքում, երբ Ոսկեղջյուրի խելացի փաշաները, որոնք աշխարհի խաղաղության պահպանման համար նույնքան երկյուղած և մտահոգ են թվում, որքան եվրոպական դիվանագիտությունը, ավարտած կլինեն Կրետեում կարգուկանոնի հաստատման համար քրիստոնյա մեծ տերություններին որպես ոստիկանա-

խումբ կարգելու գործը, ապա կարճ ժամանակում Արևելյան հարցը, հարստացած մի քանի թղթե պայմանագրերով, դարձյալ մի կողմ կդրվի, իսկ պաշտոնական մամուլը կհոգա, որ Արևելքում կատարվող եղելությունների մեկնաբանության մեջ միամտությունը չմեռնի:

Մի բան են միայն մոռացել, այն, որ Հայաստանում, չնայած քրիստոնյաների արյան 1/8-ը առատորեն հեղելուն, *դեռ մոտ 700 000 հոգուց բաղկացած հայ ժողովուրդ կա*: Ի՞նչ պիտի լինի այդ ժողովրդի հետ: Հավանաբար եվրոպական դիվանագիտությունն իրեն թեթևացած է զգում այն բանից, որ նրանցից 500 000-ը սովահար են, և դրանով հայերի հեղափոխական ապստամբության վտանգն ու աշխարհի խաղաղության սպառնալիքը կոտորածներին նախորդող իրադրության համեմատ նշանակալիորեն թուլացել են: Արդարև, եթե այլ պատահականություններ ի հայտ չգան, այլևս պետք չէ աշխարհի խաղաղությանը սպառնացող վտանգ ակնկալել թալանված, մուրացիկ այդ ժողովրդից, որին Եվրոպան ևս կարող է մի բուռ պղնձե դրամներ նետել, ինչպես արդեն թուրքերն անում են: Բայց ինչո՞ւ այդ ժողովուրդը չպետք է ունակ լինի՝ մի հուսահատ քայլի դիմելու, քանի որ, այսպես թե այնպես, մահվան է դատապարտված: Հիրավի, հավանաբար չէր պակասի ուժերի վերջին լարումով իր դահիճներից վրեժ լուծելու ցանկությունը: Նախքան եվրոպական քաղաքականությունը «Հայկական հարց» երևան կբերեր, Հայաստանում իսկ նման բան չկար, և անգամ վերջին տարիներին՝ մինչև կոտորածների սկսվելը, բնակչության մեծամասնությանն անհաղորդ էր թուրքական լուծը թոթափելու ձգտումը, եթե նույնիսկ ինչ-որ բան լսել էր դրա բարձրաձայնվող, խոստացված ձևերի մասին: *Թուրքական կառավարությունը, սակայն, իր վերջին գործողություններով, ի վերջո, անհամբ է հոգ տարել այն մասին, որ այժմ Հայաստանում ևս, մինչև վերջին գյուղը, իմանան, թե ինչ է Հայկական հարցը*: Նա նրանց դիտողական ուսուցման միջոցով սովորեցրեց, որ Թուրքիայի և

նաև Եվրոպայի համար «Հայկական հարցը» ոչ այլ ինչ է նշանակում, քան հայ ժողովրդի բնաջնջումը: Մեկ անգամ ևս հարցնում ենք. գոյություն ունի՞ ինքնապաշտպանության իրավունք: Եվ եթե այո, ապա կշարունակե՞ն հայերին, եթե նրանք այժմ կարողանային ազգային ապստամբության մասին մտածել, համարել մերժված բանդիտների ավազակախումբ: Բայց, փառք Աստծո, կասի դիվանագետը, մենք հենց նոր լսեցինք, որ հայերն այլևս ի վիճակի չեն դրան, քանի որ պայքարելու համար երկու բան է անհրաժեշտ. նախ պետք է ուտելիք ունենալ, և երկրորդ՝ պետք է զենք ունենալ, իսկ նրանք, բարեբախտաբար, երկուսն էլ չունեն: Ի՞նչ կլիներ, սակայն, եթե ինչ-որ մեկը, ով ուներ այդ երկուսն էլ՝ զենք և փող, մտածեր հայերին տալ այն, ինչ նրանց պակասում է: Երրորդը, որ անհրաժեշտ կլիներ՝ հուսահատ համարձակությունը, նրանք կցուցաբերեին, քանի որ նրանց համար, ի վերջո, միևնույնը կլինի՝ արդյոք իրենք կմեռնեն՝ հացի վերջին փշրա՞նքը, թե՞ զենքերը ձեռքին ունենալով:

Մեր կարծիքով հույժ անհրաժեշտ է, որ Եվրոպան լրջորեն մտահոգվի հայերի հետապնդումների մոտակա վերսկսման հարցով, քանի որ այս անգամ հավանաբար այնպես կլինի, ինչպես Թուրքիան ցանկանում էր առաջին անգամ հավատացնել՝ պնդելով, թե խոսքը հայկական հեղափոխության մասին է, քանի որ այդ՝ «փողով և զենքով ինչ-որ մեկն» իրեն այլևս երկար սպասել չի տա, այո՛, եթե կարելի է հավատալ վերջին լուրերին, ապա նա արդեն իսկ տեղում է: Մենք չենք մեղադրի Ռուսաստանին, եթե նա վճռի հայ քրիստոնյաների պաշտպանությունն այժմ իր ձեռքը վերցնել, ինչի իրավունքը Բեռլինի վեհաժողովում Անգլիան խլել է նրանից՝ վերջին հաշվով նույնքան քիչ բան կամենալով անել, որքան մյուս երաշխավոր տերությունները: Արդարև, դաժան խաղ է եղել այն, որը վարում էր Ռուսաստանը, երբ վերջին ամիսներին վրեժ էր լուծում անգլիական քաղաքականությունից և նրան զգացնել տալիս իր անզորությունը, դաժան այն պատճառով, քա-

նի որ այդ դիվանագիտական հաղթանակի գինը ոչ թե Անգլիան, այլ Հայաստանը պետք է վճարեր:

Իսկական ցլամարտ է, որ իրականացվում է դիվանագիտական ցլամարտիկների կողմից: Նախ անգլիացի նիզակակիրը, որը ճոճվում էր հայկական նժույգի վրա, բարեփոխումների կարմիր թաշկինակով գրգռեց թուրքական ցլին: Մյուս տերությունները հարպունահարի և թիկնոցակրի դերն էին կատարում, որոնք պետք է իրենց դիվանագիտական կեռիկները նետեին դեպի ցուլը և ծածանվող պայմանագրերի ժապավեններով ու տրցակներով շփոթեցնեին նրան: Ինչպիսի՜ հրաշք, որ ցուլը կատաղեց, խոցեց նժույգին իր պոզերով և անգլիացի հեծյալին թամբից վայր նետեց: Այդ ամենը, սակայն, չի հուզում ռուս ցլամարտիկին: Նա սպասում է միայն, թե երբ է նիզակակիրն ավազի մեջ հայտնվելու, որպեսզի ցլին անսպասելիորեն սրախողխող անի: Մինչ մարտի ժամանակ անշնչացած ազնիվ նժույգի դին մրցահարթակից կհեռացնեն, ցլամարտի մասնակիցները՝ ցլամարտիկի գլխավորությամբ, կխոնարհվեն Եվրոպայի ծափահարող ամֆիթատրոնի առջև:

Անշուշտ, կատարելապես համաձայնեցված չէր ներկայացումը, որը տերություններն այդ կերպ կատարեցին: Դերերը, սակայն, ինքնըստինքյան բաժանվեցին, և ավարտը մոտավորապես նկարագրածի նման կլինի: Ռուսաստանը բավարար հիմքեր ուներ՝ սպասողական դիրք բռնելու, մինչև Հայաստանում անգլիական միջամտության դեմ գործելու ազատություն ստանար: Նա իր դիվանագիտական հանգստության մեջ այնքան հեռուն էր գնում, որ թվում է՝ երբեմն նույնիսկ Թուրքիայի ոխերիմ թշնամու դերը փոխանակում էր սուլթանի ընտանեկան բարեկամի դերի հետ: Սրտաբուխ համաձայնությունը, սակայն, արդեն կրկին իր ավարտին է հասել, և, իրոք, բավական երկար շարունակվեց այդ դաժան խաղը: Որքան շուտ այն իր վերջին հասնի, այնքան ավելի լավ, որպեսզի ուրիշ ազնիվ նժույգներ ևս զոհ չդառնան ցլամարտին:

Լավ կանենք, եթե «ի՞նչ է հետևելու» հարցը վերաձևակերպենք հետևյալ կերպ. «*ի՞նչ են մտադիր անել տերությունները*»: Կարծում ենք՝ քրիստոնյա Եվրոպան անքակտելի իրավունք ունի՝ ստանալու այս հարցի պատասխանը: Քրիստոնյա աշխարհում բավական մեծ է նրանց թիվը, որոնք հրճվանք չեն ապրում բարբարոսական մարտախաղերով և կարծում են, որ նման բիրտ բարքերը 19-րդ դարում պիտի վերացվեն: Ի՞նչ են մտադիր անել տերությունները: Քրիստոնյա աշխարհի պատիվն է միահյուսված այդ հարցին:

Նախ՝ *մի՞թե Բարձր դուռը պետք է շարունակի ցնծալ, որ վեց մեծ տերություններին հիմարացրել է հայկական բարենորոգումների հարցում*, քանի որ եվրոպական կառավարություններում այլևս չպետք է առնվազն տարակարծություն լիներ առ այն, որ հայկական բարենորոգումների վերաբերյալ ցանկացած դիվանագիտական գրագրություն կամ գրչի յուրաքանչյուր հարված ամոթալի անմտություն է *այն բանից հետո, երբ Բարձր դռան գործողությունները դրանց իրագործումը փաստացիորեն անհնար են դարձրել*: Կամ մի՞թե իրապես դեռ կարծում են, թե Բարձր դուռը մտադիր է Հայաստանում իրականացնել այն, ինչին համաձայնել է թղթի վրա: Ինչպե՞ս պիտի նա անի դա: Մի՞թե նույն պաշտոնյաները, որոնց մասնակցությամբ սպանվել են հայ ժողովրդի ամենաերևելի ներկայացուցիչները, պիտի վերապրած մուրացիկներին հրավիրեն՝ իրենց կողքին տեղ զբաղեցնելու վիլայեթների և սանջակների կառավարման խորհուրդներում ու նահիեների համայնքային խորհուրդներում: Մի՞թե դատարանների նախագահները, որոնք մի ընդհանրական դատավարությամբ հազարավոր հայերի նետել են բանտ և մահվան են դատապարտել, «հայ ավազակներին», ինչպես Բարձր դուռը նրանց սիրում է անվանել, դատական խորհուրդներում տեղ և ձայն պիտի հատկացնեն: Մի՞թե զապթիեները, որոնք նշանակված էին հայկական գյուղերի խաղաղ բնակչությանը ինչպես ավազակախմբերի վերացնելու և

նրանց ունեցվածքը ինչպես գողացված ունեցվածք սեփականացնելու համար, հիմա նույն հայերին՝ որպես իրենց գործընկերների, պետք է բարի գալուստ ասեն և նրանց սովորեցնեն կարգուկանոնի պաշտպանների պարտականությունները: Մի՞թե ցանկանում են քուրդ գայլերին, ինչպես ոչ վաղուց համիդեական գնդերի համազգեստ են հագցրել, այնպես էլ հիմա գառի մորթի հագցնել և սովորեցնել հայ ոչխարների հետ մի ախոռում ապրել: Այդ դեպքում ավելի լավ կանեն, քանի դեռ թուրք փաշաները կառավարում են կայսերական պալատում և նահանգներում, առնվազն սպասեն այն ժամանակին, երբ առյուծները կսկսեն ծղոտ ուտել, ինչպես եզները, իսկ կովերն ու արջերը միասին արոտավայր կգնան: Ո՛չ, քանի դեռ ներկայիս վարչակարգը կա, պետք է մեկընդմիշտ մոռանալ հայկական բարենորոգումների մասին, և այդ իսկ պատճառով ևս մի անգամ նույն հարցը. մի՞թե Բարձր դուռը պետք է շարունակի ցնծալ, որ միանգամից հիմարացրել է վեց մեծ տերությունների:

Երկրորդ՝ *ի՞նչ են պատրաստվում անել տերությունները, որպեսզի իրենց քաղաքականության զոհը՝ թշվառ, թալանված Հայաստանը, կրկին չեռք բերի իր ունեցվածքը և մարդավայել կյանք վարի*: Նրանք, այո կարող են այնպես վարվել, ինչպես անցյալ տարի Սասունի կոտորածից հետո՝ հանձնաժողովներ նշանակել, արձանագրություններ կազմել և դիվանագիտական նոտաներ գրել: Այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի դեսպանությունների և արտգործնախարարությունների համար փաստաթղթերի նոր պահարաններ ձեռք բերել: Նաև մեկ հանձնաժողովը, ինչպես Սասունի կոտորածի դեպքում էր, չի բավականացնի, այլ դրա համար առնվազն երկու հարյուրն է հարկավոր լինելու: 108 արձանագրությունների փոխարեն, որոնք նշված նախադեպի մասին կազմվել են, անհրաժեշտ կլինեն 21.600-ը, իսկ դիվանագիտական գրագրությունը, որն անգլիական «Կապույտ գրքում» Սասունի մասին միայն մի տերության կտրվածքով 267 փաստա-

թուղթ էր բովանդակում, վեց մեծ տերությունների համար, Բարձր դռան գրությունները չհաշված, պետք է հասնի 320.400-ի: Ինչո՞ւ պիտի բարեխիղճ ճշգրտությունը, որը մի կոտորածի ուսումնասիրման համար անհրաժեշտ համարվեց, տեղին չլինի մի քանի հարյուր կոտորածների համար: Թե՞ մեծ տերությունները մտադիր են Սասունի մոծակին մաղով զատելուց հետո հայկական կոտորածների ուղտաքարավանները կուլ տալ: Այսպիսով՝ ի՞նչ են մտադիր անել տերություններն իրենց քաղաքականության զոհերի համար:

Երրորդ՝ *ի՞նչ է լինելու այն վեց հարյուրից հազար գյուղերի հետ, որոնք բռնի իսլամացվեցին: Ի՞նչ է լինելու հարյուրավոր քրիստոնեական եկեղեցիների հետ, որոնք ներկայումս որպես մզկիթ են ծառայում*: Արդյո՞ք տերությունները, ինչպես նախկինում Բարձր դռանը եվրոպական մեծ տերությունների համերգի մեջ ներգրավեցին, այժմ էլ իսլամը պետք է որպես քրիստոնեական նոր կրոնական համայնք ճանաչեն: Այդ դեպքում այլևս խոսք չէր լինի բռնի կրոնափոխության մասին, և հարցն ինքնըստինքյան կլուծվեր: Բայց պետք է ընդունել, որ քրիստոնեական եկեղեցին կբողոքեր դրա դեմ: Եվ ի՞նչ կլիներ հետո: Մի՞թե իրոք կարծում են, որ Հայաստանի մահմեդական բնակչությունը դիվանագետների կողմից ձեռք բերված հրամաններից գեթ մեկին կհնազանդվի և թլպատման անջնջելի նշանը կրող նոր հավատակիցներին դարձյալ թույլ կտա հրապարակավ կատարել քրիստոնեության պաշտամունքի ծեսերը: Այդ դեպքում ավելի լավ կլինի, որ դիվանագետները մի մոլլայի մոտ դպրոց հաճախեն և Ղուրանի պատվիրանների վերաբերյալ դասախոսություն լսեն: Եթե փորձ կատարվի բռնի կրոնափոխված բնակչության վերադարձը քրիստոնեական հավատին և մզկիթների վերածված եկեղեցիների հանձնումը քրիստոնեական պաշտամունքին հարկադրելու՝ առանց նման գործողությունների եվրոպական վերահսկողության երաշխիքի, ապա դա կլինի ևս հարյուր հազարավոր հայերի մահ-

վան մատնելու ամենակարճ ճանապարհը: Այսպիսով, ի՞նչ են պատրաստվում անել տերությունները այս հարցում՝ քրիստոնեության պատիվն իսլամի ցնծության հանդեպ փրկելու համար:

Մեր անելիքը չէ այս հարցին պատասխանելը, այլ մենք դիմում ենք քրիստոնյա կայսրերի և թագավորների սրտին ու խղճին, որոնք Աստծո կողմից իրենց վստահված թուրը զուր տեղը չեն կրում և որպես երկրի վրա աստվածային արդարադատության ներկայացուցիչներ պարտավոր են հաշվետվություն տալ՝ արդյոք իրենց դժվարին ծառայության իրականացման ժամանակ աչքի առաջ ունեցե՞լ են Աստծո պատիվն ու Քրիստոսի արքայությունը: Մենք լավ գիտենք, որ ոչ թե քրիստոնյա մեծ տերությունները, այլ ավելի բարձր մեկն է տնօրինում աշխարհի ճակատագիրը, բայց նա հաճել է երկրի վրա իր կամքի իրագործման համար մարդկային գործիքներ ընտրել: Թո՛ղ դրանք անպիտան դուրս չգան:

II
Կոտորածներ
Առանձին զեկուցագրեր

1. Ուրֆայի կոտորածները

1895 թ. հոկտեմբերի 28-29 և դեկտեմբերի 28-29[6]

Փոխհյուպատոս Ֆիցմորիսը՝ պրն պ. Կուրիեին
Ուրֆա, 16 մարտի, 1896 թ.

Պարոն,

Ձերդ մեծության՝ մարտի 7-ի հեռագրային հրահանգների համաձայն՝ ես մարտի 10-ին եկա այստեղ: 1895 թ. վերջին երկու ամիսներին տեղի ունեցած սարսափելի իրադարձությունները սև ամպի պես դեռ պատել են քաղաքը, և առանձնապես հայկական թաղամասը, չնայած չարիքի հետքերը ջնջելու՝ վերջին տասը շաբաթներին թափված ջանքերին՝ ներկայացնում է մի քաղաքի պատկեր, որն ավերվել ու ամայացվել է մի դաժան դատաստանի միջոցով՝ ավելի սարսափելի, քան պատերազմի և նվաճման դեպքում: Կոտրված պատուհաններով և դռներով խանութները դատարկ էին ու լքված: Ոչ մի տղամարդ չէր երևում, կարելի էր միայն քրջոտ և թերսնված, սարսափ արտահայտող դեմքերով փոքրաթիվ երեխաների ու կանանց տեսնել այս ու այնտեղ սողոսկելիս՝ ակներևաբար իրենց ամենաանհրաժեշտ կենսապիտույքները՝ չոր հաց ու խղճուկ իրեր հավաքելու համար: Լուրեր են տարածվում առաջիկա բայրամ-տոնի ժամանակ նոր կոտորածների մասին, և մահմեդական բնակչությունը, ոգևորված այն բանից, որ անպատիժ կարողացել է իրականացնել նախորդ կոտորածները, բացահայտորեն սպառնում էր բայրամի տոնական օրերին իսպառ

[6] Անգլիական Կապույտ գիրք, Թուրքիա, թիվ 5, 1896, թղթակցություններ Թուրքիայի ասիական նահանգների վերաբերյալ:

ոչնչացնել հայ քրիստոնյաներին: Մինչ 1895 թ. դեկտեմբերի 25-ը Ուրֆայի բնակչությունը գրեթե 65 000 էր, որից մոտ 20 000-ը՝ հայեր, 3000-ը կամ 4000-ը՝ յակոբիտյաններ, քաղդեացիներ, ասորի կաթոլիկներ, հույն կաթոլիկներ, մարոնիտներ և հրեաներ էին, իսկ մնացած 40 000-ը՝ թուրք, քուրդ և արաբ մահմեդականներ:

Ինչպես Ձերդ գերազանցությունը տեղյակ է, երկու կոտորածներ են տեղի ունեցել Ուրֆայում. առաջինը՝ հոկտեմբերի 28-29-ը, իսկ երկրորդը կամ մեծ կոտորածը՝ նույն տարվա դեկտեմբերի 28-29-ը: Պատճառները, որոնք այդ կոտորածներին հանգեցրին, և՛ համեմատաբար հին են, և՛ նոր:

Վերջին ռուս-թուրքական պատերազմից ի վեր Հայկական հարցի վերաբերյալ թուրքական կառավարության դիրքորոշումը միտված էր՝ մի նման սարսափելի աղետով վերջացնելու, ինչպես այն վերջերս պատուհասեց հայ ժողովրդին և սուլթանի կառավարությանը: Պայմանագրերում հայկական նահանգների համար խոստացված բարեփոխումների իրականացման դեմ 12 կամ 15 տարի ի վեր վերջինիս ցուցաբերած դիմադրությունը մի շարք հայերի մղել է հուսահատության, այնպես որ նրանք դիմեցին հեղափոխական ծրագրերի օգնությանը: Մեղավորներին և անմեղներին զանազանելու փոխարեն օսմանյան իշխանավորները նախընտրեցին, մասամբ անտեղյակությունից, մեծ մասամբ, սակայն, անձնական նյութական շահերից ելնելով, բոլոր հայերին դիտել որպես դավաճաններ, որոնք այլ մտադրություն չունեին, քան օսմանյան լծի թոթափումը: Ինչպես սովորաբար Արևելքում տեղի է ունենում, երբ կենտրոնական կառավարությունը միանում է այդ տեսակետին, առանձին հայերի՝ ուղղակի ըմբոստության փաստը նենգափոխվեց և հեղեղվեց բազում չափազանցված մեղադրանքներով, շինծու խռովարարական փաստաթղթերով և երևակայածին զեկույցներով՝ հեղափոխական կոմիտեների ցուցակներով հանդերձ, որոնք տարափում էին բոլոր կողմերից, հենց որ կենտրոնական կառավարությունը այդպիսի ցանկություն էր

արտահայտում: Թուրք պաշտոնյաներն ու ազդեցիկ մահմեդականները հանցավոր կերպով նման պատկերացումներ ձևավորեցին տգետ և ոչ դատողունակ մահմեդական բնակչության շրջանում, որը, ընդհանուր առմամբ, իր գործելակերպի մեջ Շարիաթի օրենքի կանոններով էր առաջնորդվում: Այդ օրենքը սահմանում է, որ երբ ռայաները (քրիստոնյաները) փորձեն ձեռք բերել օտար տերությունների պաշտպանությունը (Dekhalet), մահմեդական տերերի կողմից իրենց տրված իրավունքների (Berat) սահմանն անցնել և ազատագրվել վերջիններիս հանդեպ իրենց կախվածությունից, ապա նրանք կզրկվեն իրենց կյանքից և ունեցվածքից ու կմատնվեն մահմեդականների ողորմածությանը: Թուրքերի կարծիքով հայերը, օտար տերություններին կանչելով, փորձել են այդ սահմանն անցնել: Այդ պատճառով նրանք իրենց կրոնական պարտքը և արդարացի համարեցին վերջ դնել հայերի կյանքին ու սեփականացնել նրանց ունեցվածքը:

Արդարև, որքան էլ տարօրինակ կարող է լինել, ըստ վերոնշյալի սահմանվեցին և բորբոքվեցին մահմեդականների համոզմունքն ու խիղճը, երբ անցած սեպտեմբերին տեղի ունեցավ Կոստանդնուպոլսի ցույցը:

Ես ամենայն ճշգրտությամբ ուսումնասիրել եմ, թե հեղափոխական քարոզչությունը Ուրֆայում ինչ չափի է եղել, և եկել եմ այն համոզման, որ եթե նույնիսկ հայերի շրջանում, իմ կարծիքով, բավականին հիմնավորված մեծ չափի դժգոհություն է տիրում այն կապակցությամբ, որ վերջին տարիներին իրենք ևս, ինչպես Անատոլիայի իրենց եղբայրները, փաստացիորեն օրենքից դուրս էին համարվում, բոլոր դեպքերում նրանց կողմից իրական անօրինականություններ միայն շատ չնչին չափով են տեղի ունեցել:

Ինչպես հայտնի է, Եվրոպայում գտնվող հայկական գաղտնի կազմակերպությունները փորձել են պայթուցիկ նյութեր, հրացաններ և հեղափոխական գրականություն ներմուծել Հալեպի տարածաշրջան, բայց Ուրֆայում նրանք չափազանց աննշան հաջողու-

թյուն են ունեցել: Թվում է, որ նրանք մի քանի հեղափոխական թռուցիկներ են գաղտնի այնտեղ տարել, բայց ո՛չ հրացաններ, ո՛չ էլ պայթուցիկ նյութեր: Ի դեպ, Ուրֆան չի մտնում Հայաստանի աշխարհագրական տարածքի մեջ, այլ ավելի շուտ Միջագետքին կամ Արաբստանին է պատկանում: Այդպիսին էր իրադրությունն Ուրֆայում, երբ Կոստանդնուպոլսում հայկական ցույցից հետո, ինչպես երևում է, այստեղ է հասել կենտրոնական կառավարության մի որոշում այն բովանդակությամբ, որ եթե հայերն անկարգություններ հրահրելու որևէ փորձ անեին, ապա դրանք պետք է անմիջապես խստագույնս ճնշվեին, և որ դիմադրություն ցուցաբերելու դեպքում նրանց սարսափելի դաս (terbiyye shedide) պետք է տրվեր: Կենտրոնական կառավարությունը պետք է իմանար, թե նման կարգադրությունները նահանգներում հայերի դեմ մահմեդականների թշնամական զգացումները նկատի առնելիս հաստատաբար ինչպիսի ճակատագրական հետևանքներ պետք է ունենային, և մեծ պատասխանատվություն է ծանրանում նրա վրա՝ դրանք ուղարկելու համար:

Մահմեդականներն այստեղ և այլուր դրանք մեկնաբանում են որպես միապետի ցանկությունն առ այն, որ շարիաթի օրենքի կանոնները պիտի իրականացվեին, և որ պետք էր ձեռնամուխ լինել՝ ապստամբ հայ ռայաներին կյանքից և ունեցվածքից զրկելուն: Կոստանդնուպոլսի ցույցը պաշտոնյաների կողմից ներկայացվեց որպես հայերի՝ Բարձր դռան վրա գրոհելու փորձ, այստեղ լուրեր հասան հայերի կոտորածների մասին, որոնք իրենց հավատակիցների կողմից իրականացվել են Անատոլիայի մյուս քաղաքներում: Պատմում էին, թե հայերը հարձակվել են մզկիթների վրա, դինամիտ են օգտագործել, իսկ այն քաղաքների իրենց մահմեդական եղբայրներից, որտեղ կոտորածներ էին տեղի ունեցել, տեղեկագրեր էին գալիս, որոնցում կոչ էր արվում որպես մուսուլմաններ կատարելու իրենց պարտքը: Բացի դրանից՝ կառավարությունը սկսեց զենք և փամփուշտներ բաժանել զապթիեներին ու մյուս ոս-

տիկանական ջոկատներին և հրամայեց զինաթափել հայկական թաղամասերը:

Պետք է նաև հավելեմ, որ բարենորոգման ընդունմանը վերաբերող հեռագրային տեղեկությունները մահմեդականներին այնպես են մեկնաբանվել, թե իբր դրանք հայերին ինքնավարություն էին տրամադրում. մի մեկնաբանություն, որը պետք է կառավարության պաշտոնյաներից ի հայտ եկած լիներ, և որն աղետալի ազդեցություն ունեցավ հայերի դեմ մուսուլմանների զգացումների վրա: Մինչ մահմեդականների տրամադրություններն Ուրֆայում այդ կերպ բորբոքվել էին, տեղի ունեցավ մի բան, որը քարը շարժեց: Ստիպված եմ փոքր-ինչ խորանալ մանրամասների մեջ, քանի որ խոսքը վերաբերում է ամենից շատ վիճարկված հարցին՝ հայկական նոր կոտորածներից ամենածավալունի շարժառիթին: Իսմայել Բիրիջիկլի անունով մի մահմեդական Պողոս անունով մի հայ դրամափոխից գնեց որոշ քանակությամբ հին ոսկեդրամներ, որոնք տեղացի կանանց կողմից գործածվում են որպես զարդ, և երբ նա փոքր-ինչ ուշացրեց վճարումը, հայ Պողոսը շաբաթ օրը՝ 1895 թ. հոկտեմբերի 26-ին, եկավ մահմեդականի տուն՝ իր փողը պահանջելու: Վերջինս, ակնհայտորեն վրդովված այն բանից, որ հայն իր տուն էր եկել՝ փողի համար շտապեցնելու, կտրականապես մերժեց դրամափոխին, վռնդեց նրան և ասաց, որ հաջորդ օրը կտեսնի նրան:

Հաջորդ օրը՝ կիրակի՝ հոկտեմբերի 27-ին, մահմեդականը, հավատարիմ իր խոսքին, մի քանի ընկերների հետ եկավ Պողոսի տուն, և քանի որ նրան ասացին, որ վերջինս դուրս էր եկել, սկսեց նրան փողոցներում փնտրել: Նա նրան գտավ հայկական տաճարի մոտ՝ հայկական թաղամասում, և մահացու հարվածով գետնին տապալեց: Քանի որ կիրակի էր, բազմաթիվ հայեր կային տաճարի մերձակայքում: Նրանք անմիջապես հարձակվեցին մահմեդականի վրա և նրան հանձնեցին հարևան պահակակետի զապթիեներին:

Հաջորդող դեպքերի թուրքական տարբերակն այն է, թե հայերը հարձակվել են պահակակետի վրա և սպանել մահմեդականին, մինչդեռ հայերը բացատրում են, որ երբ իրենք նկատել են, որ զապթիեները ցանկանում են թույլ տալ մահմեդական մարդասպանին ճողոպրել, ներխուժել են պահակակետ՝ պահանջելու, որ զապթիեները կա՛մ իրենց հանձնեն մարդասպանին, որպեսզի իրենք նրան կառավարության շենք տանեն, կա՛մ իրենք (հայերը) զապթիեներին ու ձերբակալվածին ուղեկցեն կառավարություն: Երբ զապթիեները, բնականաբար, նրանց մերժեցին և փորձեցին ցրել հայերին, սկսվեց ձեռնամարտ, որի ժամանակ ձերբակալվածը լուրջ վնասվածք ստացավ: Նա մահացավ ճանապարհին, երբ զապթիեները նրան կառավարություն էին տանում: Այնտեղ ժանդարմերիայի մայորը կանչեց Մելքոն անունով մի հայ բժշկի՝ բժշկական զեկույց ներկայացնելու համար, և նա պարզեց, որ վերքերը, որոնցից տղամարդը մահացել է, առաջացել են զապթիների սվիններից: Հաստատված է, որ մայորը հայ բժշկին մահով էր սպառնացել, եթե նա ասեր, որ վերքերը սվիններից են առաջացել: Մելքոնն ապաստանեց մի մահմեդականի տանը, բայց հաջորդ օրը մայորը և բազմաթիվ մարդիկ հայտնաբերեցին նրան: Նա առևանգվեց, մայորի կողմից գնդակահարվեց, և վերջինիս շքախումբը ետ ուղարկեց նրա դիակը: Այնուհետև այն ամեն տիպի անարգումներով քարշ տրվեց փողոցներով, կտոր-կտոր արվեց և շպրտվեց մի փոսի մեջ:

Մահմեդականների շրջանում գրգռվածությունը և հայերի շրջանում տագնապը կիրակի գիշերը՝ հոկտեմբերի 27-ին՝ մահմեդականի մահվանը հաջորդած գիշերը, շատ մեծ էին, և մի քանի հայեր հերթապահում էին իրենց թաղամասում՝ սպասելով հարձակման: Նրանք հանդիպեցին մի թուրքական պարեկախմբի, և կրակոցներ հնչեցին: Հայերն ասում են, որ երբ թուրք պարեկներից մեկը կանչել է հայերին, վերջիններս փախել են, և որ զապթիեներն են կրակել իրենց վրա, մինչդեռ թուրքական տարբերակն

այն է, որ «մարտինի» հրացաններով զինված հայերի մի հրոսակախումբ է հարձակվել պարեկախմբի վրա:

Քանի որ Կոստանդնուպոլսի ցույցերից հետո թուրքական իշխանությունների կողմից շրջանառության մեջ էր դրվել «հայերի հարձակում» վարկածը, և կոտորածների մեծ մասի բռնկման կարծրատիպը՝ պաշտոնական վարկածը, մատնանշում էր «ուրբաթօրյա աղոթքի ժամանակ հայերի կողմից կատարված հարձակումը մզկիթների վրա», ապա պարեկախմբի վերաբերյալ վերը ներկայացված պաշտոնական զեկույցը պետք է մեծագույն վերապահությամբ, եթե ոչ թերահավատությամբ, մի կողմ դրվի: Բացի այդ՝ տարօրինակ է, որ պարեկախմբի անդամները, որը պետք է հայերի կողմից հարձակման ենթարկված լինի, բացարձակապես որևէ վերք կամ քերծվածք չեն ստացել, և որ նրանց չի հաջողվել հայ հարձակվողներից որևէ մեկին ձերբակալել: Ցանկանում եմ հիշատակել հայկական ևս մի վարկած, որի համաձայն՝ հարձակումը կատարվել է որպես հայեր հանդերձավորված թուրքերի կողմից՝ կոտորածի համար պատրվակ ընձեռելու նպատակով:

Այն փոքրաթիվ հայերը, որոնք հաջորդ առավոտ համարձակվեցին շուկա գնալ, անմիջապես վերադարձան՝ մեծ մասը վիրավորված և արյունաթաթախ: Նրանց հետապնդում էր մահմեդական մի զինված ամբոխ, որը հարձակվեց հայկական թաղամասի վրա՝ «մահ անհավատներին» վանկարկումով:

Երբ հայերը, որոնց մեծ մասը տանն էր մնացել, նկատեցին, որ մահմեդականները համընդհանուր կոտորած էին նախատեսում, իրենց թաղամասի գլխավոր մուտքերի մոտ վճռական դիմադրություն ցույց տվեցին և ի վերջո ամբոխին հարկադրեցին նահանջել, որն ունեցավ 4 կամ 5 մահմեդականների կորուստ, մինչդեռ իրենց կողմից 27 հոգի էր սպանվել:

Ամբոխը, որն այդ ուղղությամբ իր մտադրությունը ձախողված էր համարում, իր ուշադրությունը կենտրոնացրեց թալանի

վրա: 700 հայկական խանութներ և 190 հայկական տներ ամբողջովին կողոպտվեցին և ավերվեցին:

Արագությունը, որով մեկը մյուսին հաջորդում էին վերոնշյալ իրադարձությունները, թույլ է տալիս եզրակացնել, որ եղել է կանխամտածված ծրագիր, և հաստատված է, որ Ուրֆայի ոմն երևելի մահմեդական Հուսեին փաշա, որը հետագայում Հալեպ տեղափոխվեց, եղել է գլխավոր կազմակերպիչը, և որ վերը հիշատակված Բիրիջիկլին, որն աղքատ մարդ էր ու ի վիճակի չէր մեծաքանակ ոսկեդրամներ գնել, գործում էր Հուսեին փաշայի հանձնարարությամբ՝ հայերին մի մահմեդականի դեմ հրապարակային բռնարարքի դրդելու դիտավորությամբ: Պետք է նկատի ունենալ, որ մահմեդական բնակչության շրջանում կեղծ տեղեկություններ են տարածվել Անատոլիայի հայերի կողմից թուրք կանանց բռնաբարությունների վերաբերյալ, և անհավանական է թվում, որ հայերի վրա ընդհանուր հարձակումն ու կոտորածը պլանավորված լինեն մի գիշերվա ընթացքում՝ կիրակի՝ հոկտեմբերի 27-ին:

Երկուշաբթիից հետո, երբ մահմեդականները հետ էին շպրտվել, հարձակման ենթարկվեցին հայկական թաղամասից դուրս՝ քաղաքում կամ արվարձաններում ապրող բոլոր հայերը, և տղամարդիկ սպանվեցին: Թաղամասը պաշարվեց, և ոչ մեկին հնարավորություն չտրվեց դուրս գալու: Ջրամատակարարումը դադարեցվեց, և թույլ չտրվեց որևէ սննդամթերք ներս տանել: Պաշարման այս դրությունը տևեց, փաստորեն, 2 ամիս՝ մինչև դեկտեմբերի 28-ը՝ վերջին մեծ կոտորածի օրը:

Հայ եպիսկոպոսը ցանկանում էր իրադրության մասին հեռագրով տեղեկացնել Նորին մեծություն սուլթանին, բայց իշխանությունները հրաժարվեցին ուղարկել հեռագիրը: Իր հոտի անելանելի վիճակից հուսահատության մեջ ընկած՝ նա հեռացավ քաղաքից դուրս գտնվող իր վանքը, որտեղ մինչև երկրորդ կոտորածը բանտարկված մնաց: Ոչ մի հայ, նույնիսկ նրա քարտուղարն իրավունք չստացան նրա հետ խոսելու, լավագույն դեպքում դա

պետք է լիներ թուրքերեն, այն էլ՝ պահակների ներկայությամբ: Երկուշաբթի գիշերը հայերը, նկատի առնելով իրենց անելանելի վիճակը, քանի որ փոստն ու հեռագիրն անհասանելի էին իրենց համար, սուրհանդակ ուղարկեցին Այնթապ՝ իրենց դրության մասին տեղեկացնելու և օգնություն ստանալու համար: Սուրհանդակը, սակայն, ձերբակալվեց և այժմ Ուրֆայի բանտում է՝ իր ծառայությամբ խռովարար գործունեություն իրականացնելու ծանր մեղադրանքի ներքո: Մեկ այլ սուրհանդակ, որը հաջորդ չորեքշաբթի գիշերն ուղարկվեց, նույն ճակատագիրն ունեցավ:

Հոկտեմբերի 29-ին՝ երեքշաբթի օրը, ամբոխը շարունակեց թալանել հայկական թաղամասի արվարձանները, ընդ որում՝ ստանալով զապթիեների պաշտպանությունը, որոնք կրակում էին հայերի բնակարանների վրա: Հետին թվով մահմեդականներն այնպես էին ներկայացնում, թե իբր հայերն էին կրակում թուրքերի վրա: Չորեքշաբթի՝ հոկտեմբերի 30-ին, մութեսարիֆ Հասան փաշան ժամանեց Սուրուճից, որտեղ նա մոտ տասն օր էր անցկացրել: Ավելի քան 1000 մահմեդականներ, որոնց մեծ մասը մասնակցել էր նախորդ օրերի հարձակմանն ու թալանին, հավաքագրվեցին որպես պահեստազորայիններ, և կառավարությունը պահանջեց հայերին հանձնել իրենց զենքերը, մասնավորապես 1800 «մարտինի» հրացանները, որոնք նրանք պետք է դրսից ստացած լինեին՝ խոստանալով, որ դրանից հետո մահմեդականները նույնպես պիտի զինաթափվեին: Հայերը պատասխանեցին, որ իրենք նման «մարտինի» հրացաններ չունեն և որ չեն վստահում իրենց մահմեդական համաքաղաքացիներին, քանի որ նրանք են եղել հարձակվողները, և հայտարարել են, թե սուլթանի կառավարությունը հրամայել է ոչնչացնել բոլոր հայերին, որ հետևապես նրանք չէին կարող հանձնել այն զենքերը, որ ունեին, դա կլիներ միայն այն դեպքում, եթե մահմեդականները նախապես զինաթափվեին: Կառավարությունը, այնուամենայնիվ, պնդեց, որ սկզբում պետք է հայերը զինաթափվեն՝ նրանց հասկացնելով, որ

չեն կարող որևէ պաշտպանության հույս ունենալ, եթե չհանձնեն իրենց «մարտինի» հրացանները:

Նորակոչիկ պահեստազորայինները տեղաբաշխվեցին հայկական թաղամասում՝ իբրև թե նրա պաշտպանության համար, սակայն նրանք չէին դադարում ասել հայերին, որ կառավարությունն է կայացրել նրանց ոչնչացման որոշումը: Նրանք նրանցից խոշոր գումարներ և թանկարժեք իրեր էին կորզում՝ խոստանալով նրանց պաշտպանել և ի վերջո հայտնեցին նրանց, որ միայն նրանք էին ողջ մնալու, ովքեր մահմեդական կդառնային: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում էին իսլամ ընդունել, պետք է իրենց կտուրների վրա սպիտակ դրոշներ բարձրացնեին: Հայերը ծայրահեղ հուսահատության մեջ զանգվածաբար դարձան մուսուլման, և հինգշաբթի գիշերը հայկական թաղամասում անհամար սպիտակ դրոշներ էին ծածանվում: Կառավարությունը, սակայն, հրաժարվեց պաշտոնապես ընդունել նրանց կրոնափոխությունը և շարունակեց պահանջել հանձնել զենքերը:

Միաժամանակ տարբեր կրոնական համայնքների առաջնորդների, նույնիսկ որոշ օտարազգիների տրվեց ստորագրելու մի գրություն՝ այն բովանդակությամբ, թե հայերը հարձակվել են պահակակետի վրա, գնդակոծել են այն և սպանել մահմեդականների ու զապթիեների, ժամանակակից հրազենային միջոցներով դիմադրություն են ցուցաբերել նաև կառավարության զորամասերին: Այդ գրությունը, ըստ երևույթին, ուղարկվել է կենտրոնական իշխանությանը՝ Կոստանդնուպոլիս: Հոկտեմբերի 12-ին 15 երևելի հայեր կանչվեցին կառավարության շենքը: Այստեղ նրանց հարցրին, թե ինչ էր նշանակում իրենց խռովարար պահվածքը. նրանք պետք է անհապաղ հանձնեին 1800 «մարտինի» հրացանները և 100 ատրճանակները, բացի այդ՝ նաև 10 տղամարդկանց՝ ընտրված 120 անուններից բաղկացած մի ցուցակից, որոնք կիրակի օրը՝ հոկտեմբերի 27-ին, պետք է հարձակված լինեին պահակակետի վրա, իսկ զորքերի հրամանատարը՝ Նացիս փաշան,

իր զայրալից խոսքն ավարտեց՝ ասելով, որ ինքը 1876 թ. եղել է Բուլղարիայում և գիտի, թե ինչպես պետք է վարվել խռովարար ռայաների հետ: Հայերն անմիջապես հանձնեցին պահանջված 10 մարդկանց և ժխտելով «մարտինի» հրացաններ ունենալը՝ պատրաստակամություն հայտնեցին հավաքել ու հանձնել իրենց ունեցած բոլոր զենքերը, ինչին էլ անմիջապես ձեռնամուխ եղան: Զենքերի հանձնման վերաբերյալ բանակցությունները տևեցին մի քանի շաբաթ, քանի որ հայերի կողմից սովորական զենքերի հանձնումից հետո կառավարությունը դարձյալ շարունակ պահանջում էր հանձնել «մարտինի» հրացանները և նույնիսկ հասկացնել տվեց հայերին, որ եթե նրանք նույնիսկ հրացաններ չունեին, ապա ունեին փող, որով կարող էին ձեռք բերել դրանք: Հիրավի, վերջիններս բարեկամ թուրքերից և ուրիշ քրիստոնյաներից գնեցին ատրճանակներ ու այլ զենքեր, որպեսզի հանձնեն կառավարությանը և հուսահատության մեջ փորձում էին լռեցնել ժամանակակից զենքերի վերաբերյալ անդադար հարցումները՝ մութեսարիֆին, Նացիս փաշային և այլ մահմեդականների խոշոր գումարներ տալով ու փորձելով իրենց, այսպես կոչված, պաշտպաններին՝ պահեստազորայիններին, նույնպես նման կերպով գոհացնել:

Նոյեմբերի 30-ին նրանք ունեին 240 կտոր զենքեր, մեծ մասամբ՝ հին հրացաններ, ատրճանակներ, դաշույններ և 15 տրամաչափի մի քանի ինքնաձիգներ: Ցանկանում եմ նշել, որ նույն օրը միսիոներուհի օրիորդ Շատուկը թույլտվություն և պահակախումբ խնդրեց՝ Այնթապ մեկնելու համար. թույլտվություն, որը նրան միայն դեկտեմբերի 28-ին՝ վերջին մեծ կոտորածից մեկ ժամ առաջ տրվեց:

Դեկտեմբերի 1-ին ամբոխը կրկին հարձակվեց հայկական թաղամասի վրա և գնդակոծեց այն: Կառավարությունը, սակայն, զսպեց նրան: Դեկտեմբերի 3-ին հանձնված էին տարբեր տեսակի 600 զենքեր, բայց մութեսարիֆն ու հրամանատարը շարունակ

թարմացնում էին իրենց պահանջները: Հայերն այժմ գիտակցեցին կանոնավոր պաշարման ողջ սարսափելիությունը: Չնայած նրանք կաշառել էին իրենց պահակներին, որպեսզի նրանք իրենց սնունդ բերեն՝ պատրվակելով, թե դա նախատեսված է զինվորների համար, չնայած նրանք բացել էին ջրի հին ակունքները, որոնք տարիներ ի վեր հողածածկ էին արվել, այնուամենայնիվ դրանց ջրի պաշարը սպառվեց, և մի քանի ֆունտ արժեցող բեռնակիր կենդանիները հանձնվեցին նույն քանակի շիլլինգի դիմաց: Այդ ժամանակ նրանք Հալեպի հետ կապ հաստատելու մի վերջին հուսահատ փորձ կատարեցին: Մի փոքրիկ կտորի վրա իրենց դրության մասին մի տեղեկություն գրելով՝ այն ներկարեցին մի երկար զգեստի (հավանաբար նկատի ունի այծենակաճը- Ա. Հ.) աստառի մեջ, որն այս կողմերում շատ է գործածվում, դա հագցրին մի հայ գյուղացու, որն այնպիսի տեսք չուներ, որ գրավեր աննպատակ թափառող քրդերի ուշադրությունը կամ գրգռեր նրանց ընչաքաղցությունը, և գիշերով նրան նվազ օգտագործվող մի ճանապարհով ուղարկեցին Հալեպ՝ հաջողության դեպքում խոստանալով մեծ վարձատրություն: Այդ սուրհանդակը, սակայն, նույնպես բռնվեց, և հափշտակեցին նրա զգեստը, որի մեջ տեղադրված էր գրությունը:

Դեկտեմբերի 13-ին զորքերի հրամանատարը, պատրվակելով, թե խաղաղությունը լիովին վերականգնվել է, այն սակավաթիվ հայերին, որոնց վաճառատները, փռերը և այլն դեռ օգտագործելի էին, հրամայեց գալ քաղաք և կրկին անցնել իրենց աշխատանքին: Երբ նրանք դա արեցին, հարձակման ենթարկվեցին և վերքեր ստացան ու ետ փախան դեպի իրենց բնակարանները: Հրամանատարը նրանց դարձյալ ստիպեց իրենց աշխատանքին գնալ, և հայերը պետք է հեծելազորի հսկողության ներքո, այդչափ անսովոր, երկյուղալի պայմաններում զբաղվեին իրենց գործերով: Այնուհետև կառավարությունը 25 երևելի հայերի հարկադրեց ստորագրել Կոստանդնուպոլիս ուղարկվող մի հեռագիր՝ այն բո-

վանդակությամբ, որ խաղաղությունը խաթարվել էր որոշ հայերի անհանգիստ վարքագծի պատճառով, բայց տեղական իշխանությունների ջանքերի շնորհիվ այժմ խաղաղությունը կրկին լիովին վերականգնվել էր: Այնուհանդերձ, հաջորդող շաբաթվա ընթացքում, չնայած իշխանությունները հայերին վստահեցնում էին, որ նրանք վախենալու ոչինչ չունեն, և որ կառավարությունն այժմ պիտի զբաղվի մահմեդականներին զինաթափելու գործով (հայերը մինչ այդ հանձնել էին ամեն տեսակի 1200 կտոր զենք, ներառյալ ատրճանակներ ու մեկ «մարտինի» հրացան, որոնց նշանակալի մասը իշխանությունների պահանջները գոհացնելու նպատակով էր գնվել), լուրեր տարածվեցին սպասվող մի սարսափելի կոտորածի մասին, քանի որ բարեկամաբար տրամադրված թուրքերը հայերին տեղեկություններ էին ուղարկում, որ զգույշ լինեն, իսկ ոչ հայ քրիստոնյաներին խորհուրդ էր տրվում անվտանգության համար սև գլխափաթթոց կրել:

Վերջապես շաբաթ օրը՝ դեկտեմբերի 28-ին, ժանդարմերիայի մի կապիտան եկավ օրիորդ Շատուկի մոտ՝ տեղեկացնելու, որ նա կարող է Այնթապ մեկնել, քանի որ ամեն ինչ խաղաղ է: Այնուհետև նա գնաց այն տաճարը, որտեղ հայկական ազգային ժողովն իր նիստն էր անցկացնում, և հենց նոր մութեսարիֆին մի տեղեկություն էր ուղարկել՝ նրա ուշադրությունը հրավիրելով իրենց մտահոգության վրա ու խնդրելով պաշտպանություն: Կապիտանը կառավարության անունից նրանց վստահեցրեց, որ ոչ մի անկարգություն չի լինի: Հազիվ էր, սակայն, նա դուրս եկել շենքից, երբ արհավիրքը վրա հասավ, և սկսվեց դեկտեմբերի 28-29-ի համատարած կոտորածը: Շաբաթ առավոտյան զորքերի հրամանատարը ոչ հայ քրիստոնյաներին տեղեկություն էր ուղարկել, որ նրանք հավաքվեն իրենց եկեղեցիներում, այնտեղից դուրս չգան և ոչ մի պայմանով նույնիսկ մեկ հայի ապաստան չտան:

Զինվորականությունը մի քանի հեծյալ ոստիկանների հետ տեղակայվել էր մի բլրի վրա, որի ստորոտին փռված է հայկական

թաղամասը, և գրոհեց թաղամասի գլխավոր ելքերի վրա: Նրանց թիկունքում զինված ամբոխն էր, միաժամանակ մինարեթները լի էին մահմեդականներով՝ ակնհայտորեն տարված առաջիկա մի իրադարձության սպասումով: Նաև թուրք կանայք էին խռնվել տանիքների վրա և բարձունքի զառիթափերին, որն իշխում է հայկական թաղամասի վրա: Ժամը 11-12-ի սահմաններում նույն ուղղությամբ հորդեց զինված մահմեդականների մի հոսանք՝ քաջալերվելով իրենց կանանց կողմից, որոնք հանրաճանաչ «զիլղիթը»՝ մի յուրատեսակ կոկորդային ձայն էին արձակում, որը նման առիթների դեպքում արևելյան կանանց կողմից օգտագործվում է՝ իրենց քաջերին ոգևորելու համար: Կեսօրին մուեզինը կեսօրվա աղոթքը հնչեցրեց միայն մի մինարեթից, իսկ մյուս բոլոր մինարեթներում լռություն էր տիրում: Բարձունքի գագաթից, որը մի կողմում ավելի բարձրադիր է հայկական թաղամասից, մի փայլատակող ապակիով կիսալուսնի պատկերով նշան տրվեց, մինչդեռ թաղամասի մյուս կողմում գտնվող մեկ այլ մինարեթից մի մոլլա կանաչ դրոշ էր ծածանում:

Հնչեցին մի քանի կրակոցներ, և զինվորների շարքերից շեփորի ազդաշնանով տրվեց հարձակման մեկնարկը: Տեսանելի էր, թե ինչպես են զինվորները բացում իրենց շարքերը՝ իրենց թիկունքում գտնվող ամբոխին թույլ տալով առաջանալ: Այնուհետև զինվորներն ու ամբոխը գրոհեցին հայկական թաղամասի վրա և սկսեցին համընդհանուր կոտորել մի որոշակի տարիքից բարձր բոլոր տղամարդկանց: Այն պահին, երբ հիշատակված կրակոցներն արձակվեցին, տեսանելի էր, թե ինչպես է հրամանատար Նացիս ֆաշան ետ քաշվում մի ժեստով, որը քաջալերում էր հոծ բազմությանը: Հետագայում հայտնի դարձավ, որ առաջին կրակոցները հնչելուն պես նա կանչել էր. «Հենց նոր մի մարտինի փամփուշտ անցավ գլխիս մոտով, հայերը կրակում են ինձ վրա: Գնացե՛ք և փոխհատուցե՛ք նրանց»: Մինչդեռ ինձ վստահելի մահմեդական

ականատեսները հավաստիացրել են, որ նշված կրակոցները ոչ թե հայերի, այլ մուսուլմանների կողմից են արձակվել:

Պահեստազորային ջոկատները, որոնք, անցած երկու ամիսներին պահակություն անելով հայկական թաղամասում, այն լավ ճանաչում էին, ծառայում էին թե՛ որպես առաջնորդողներ, թե՛ որպես առաջապահ զորք, որոնց ուղեկցում էր հարևան լեռների անտառներում աշխատողների մի ամբոխ՝ զինված կացիններով: Վերջիններս կոտրում էին դռները, իսկ զինվորները ներս էին խուժում՝ մարտինիներից կրակելով հայ տղամարդկանց վրա, որոնցից դիմադրություն էին ակնկալում: Նրանք, սակայն, հանձնել էին իրենց բոլոր զենքերը և իրենց սոսկալի դրության մեջ ուրիշ ոչինչ չէին կարող անել, քան ծայրահեղ սարսափի մեջ, ի սեր իրենց կանանց և երեխաների ու Հիսուս մարգարեի, գթություն հայցել: Հայհոյանքներ տեղալով՝ նրանց մեկը մյուսի հետևից դուրս էին հանում իրենց թաքստոցներից և վայրագորեն սպանում: Շատ դեպքերում 15-20 տղամարդիկ հավաքվել էին մեծ տներում, որոնք, թվում էր, ավելի հարմար էին պաշտպանություն գտնելու համար: Նրանք մեկը մյուսի հետևից դուրս էին տարվում և անմիջապես սպանվում մարդասպանների կողմից: Բողոքական քահանայի (վերջինս սպանվեց՝ թողնելով 6 որբերի) տան հարևանությամբ գտնվող տանը, որտեղ ես իջևանել եմ իմ այցելության ընթացքում, այդ կերպ 40 տղամարդիկ սպանվեցին: Մի ոմն շեյխ հրամայել էր իր շքախմբին հնարավորինս մեծաթիվ ամրակազմ, երիտասարդ հայերի հավաքել: Նրանց՝ թվով մոտ 100 հոգու, մեջքի վրա նետեցին գետնին՝ ամուր պահելով ձեռքերն ու ոտքերը, մինչ շեյխը, ֆանատիզմի և դաժանության տարերքի մեջ, Ղուրանից հատվածներ արտասանելով, գլխատում էր նրանց այն ծիսակարգով, որով Մեքքայում ոչխարներին են մորթում:

Բազմաթիվ հայ տղամարդիկ թաքնվում էին ջրհորների խորքում՝ հուսալով խուսափել իրենց հետապնդողներից: Վերջիններս, սակայն, կժեր և քարեր էին նետում դրանց մեջ, կրակում ատրճա-

նակներից, նավթի մեջ թաթախված խսիրներ էին այրում ու դրանց մեջ նետում: Շատ դեպքերում անողոքաբար սպանվեցին կանայք և աղջիկներ, որոնք փորձում էին պաշտպանել իրենց հարազատներին:

Երբ որևէ տան բոլոր տղամարդիկ սպանված էին, ամբոխը չափազանց մեծ խնամքով ձեռնամուխ էր լինում թալանին: Այնուհետև կերոսին էին լցնում, հրդեհում հացահատիկը, գարին, փայտաշեն կառույցները և այն ամենը, ինչը չէին կարող հափշտակել՝ թողնելով միայն դատարկ պատերը: Տնետուն անցնող այս սպանդի ընթացքում հայկական թաղամասին մերձակա բլրի գագաթից շարունակ կրակ էր տեղում այն բոլոր հայերի վրա, որոնք փորձում էին կտուրները բարձրանալ: Մայրամուտին մոտ, ինչպես կեսօրին, դարձյալ շեփոր հնչեցվեց, և ամբոխն անմիջապես դադարեցրեց իր գործունեությունը՝ բացառությամբ մի քանի ստահակների, որոնք շարունակում էին կողոպուտը:

Հաջորդ օրը՝ կիրակի՝ դեկտեմբերի 29-ի վաղ առավոտյան, կրկին հնչեցվեց շեփորը, և կոտորածը վերսկսվեց: Այժմ ամբոխին միացան մեծ բազմություններ, որոնք շաբաթ օրը չէին մասնակցել հարձակմանը՝ վախենալով հայերի դիմադրությունից: Նախորդ օրվա նողկալի կոտորածը շարունակվեց մինչև կեսօր, երբ հրի մատնվեց հայկական տաճարը. մի գործողություն, որն իր դժոխային բարբարոսությամբ գերազանցեց հայկական տնական կոտորածների ժամանակ տեղի ունեցած բոլոր սահմռկեցուցիչ իրադարձությունները, և որի նմանը պատմության տարեգրքերում հազվադեպ կհանդիպի կամ ամենևին չկա:

Շաբաթ օրը գիշերը հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների հոծ զանգվածներ ապաստանեցին այդ փառահեղ տաճարում, որը տեղավորում է ավելի քան 8000 մարդու, և քահանան կատարեց սուրբ հաղորդության արարողությունը՝ վերջինը, որը տեղի ունեցավ և, ինչպես վկայում է եկեղեցու սյուներից մեկի վրա կատարված մի գրություն, այն բաժանվել է 1800 հոգու: Նրանք

ողջ գիշերը մնացին տաճարում, և կիրակի օրը նրանց թիվն ավելացավ հարյուրավորներով, որոնք հույս ունեին, որ սուրբ տաճարի պաշտպանությունը մինչև իսկ մոլեռանդ մահմեդական ամբոխի բռնարարքներից կփրկեր իրենց: Ենթադրվում է, որ 3000 անձինք էին հավաքվել եկեղեցում, երբ ամբոխը հարձակվեց նրա վրա:

Նրանք սկզբում կրակում էին պատուհաններից, ապա կոտրեցին երկաթյա դռները և սկսեցին սպանել եկեղեցու սրահում գտնվող բոլորին, որոնք մեծ մասամբ տղամարդիկ էին: Նրանց վերջը տալուց և մի քանի երիտասարդ կանանց մի կողմ տանելուց հետո նրանք թալանեցին եկեղեցու գանձերը, պահարանները և սուրբ առարկաները՝ շուրջ 4000 թուրքական ֆունտ արժողությամբ, կոտրատեցին սրբապատկերներն ու մասունքները՝ ծաղրաբար ձայնելով Հիսուսին, որ նա ապացուցեր, թե ավելի մեծ մարգարե է, քան Մահմեդը: Տաճարի վերնամասում մասամբ քարից, մասամբ փայտից շուրջանակի կառուցված մի հսկայական օթյակ լեփ-լեցուն էր սարսափահար կանանցով և երեխաներով, որոնց մեջ միայն մի քանի տղամարդիկ կային: Ամբոխից ոմանք բարձրացան խորանի վրա և սկսեցին ատրճանակներով նրանց վրա կրակել: Երբ, սակայն, այդ գործընթացը չափազանց ձանձրալի դարձավ, նրանք մտաբերեցին այն գործնական մեթոդը, որն օգտագործվել էր հորերում թաքնվածների պարագայում. անկողինների և եկեղեցու խսիրների մի կույտ դիզեցին, մի քանի տասնյակ սրվակ կերոսին լցրին դրա, ինչպես նաև սրահում ընկած դիերի վրա և հրի մատնեցին ամբողջը: Գերաններն ու օթյակների փայտե շինվածքները շուտով բոցավառվեցին, որից հետո օթյակներ տանող աստիճանները ևս օղակվեցին նույն վառելանյութով և այնուհետև մարդկանց այս ու այն կողմ գալարվող ողջ բազմությունը կրակի ճարակ դարձավ: Ժամեր շարունակ մարդկային խորովվող մսի հոտը պատել էր քաղաքը, և դեռ այսօր էլ՝ կոտորածից երկուսուկես ամիս անց, անտանելի է եկեղեցում նեխող և ածխ-

խացած դիերի մնացորդների հոտը: Կեսօրից հետո, ժամը երեք անց կեսին՝ թողության նամազ-աղոթքի ժամին, դարձյալ հնչեց շեփորը, և ամբոխը հետ քաշվեց հայկական թաղամասից: Քիչ անց՝ երաժշտության հնչեցումից հետո, որի ժամանակ բանակի մեծաքանակ փողային գործիքներ էին օգտագործվում, մուֆթին և այլ երևելիներ թաղամասի շուրջ մի երթ կատարեցին՝ հայտարարելով, որ կոտորածն արդեն ավարտված էր («paydoss»), և այլևս ոչ մի քրիստոնյայի չէին սպանելու: Հաջորդ երեք օրը զբաղվեցին դիերը հեռացնելով, ինչի համար իշխանությունների կողմից բռնագրավվեցին հրեաներն ու ավանակները: Քրիստոնյաներին թույլ չտրվեց մտնել եկեղեցի, որն այժմ ավերակ է: Փլատակների հեռացումը կատարվեց զինվորականության միջոցով, որը, ինչպես տեղեկացնում են, հայտնաբերեց մեծաքանակ հալեցված ոսկի և թանկարժեք իրեր, որոնք հայերն էին թաքցրել՝ ապարդյուն հուսալով, թե տաճարը՝ որպես սրբատեղի, կխնայեն:

Կոտորածը բացառապես հայերի դեմ էր ուղղված. տարբերություն չէր դրվում լուսավորչականների, բողոքականների կամ հռոմեական կաթոլիկների միջև: Վերջինների եկեղեցին ամբողջապես կողոպտվեց: 300 յակոբիտյան ընտանիքներից սպանվեց միայն 40 անձ, բացի այդ՝ մեկ կաթոլիկ: Եվս երկու կամ երեք քաղդեացիներ վիրավորվեցին: Թե որչափ հիմնավոր է արվել գործը, կարելի է նկատել այն փաստից, որ 126 հայ ընտանիքներ ամբողջովին ոչնչացվեցին, նրանցից նույնիսկ մի կին կամ երեխա կենդանի չի մնացել: Դժվար է հաշվել կոտորածին զոհ դարձած հայերի քանակը, նախկին հայ բնակչության և այժմ մնացածների թուրքական պաշտոնական ցուցակները բացարձակապես անվստահելի են, քանի որ հարկատվությունից խուսափելու համար շատերը չէին հաշվառվել, մինչդեռ հայկական կորուստների որոշ թուրքական ոչ պաշտոնական գնահատումներ էապես գերազանցում են նույնիսկ հայկական կողմից տրված տվյալներն ու ակնհայտորեն չափազանցված են: Մանրակրկիտ և տանջալից

ուսումնասիրությունից հետո ես կարծում եմ, որ կոտորածի երկու օրերին՝ դեկտեմբերի 28-29-ը, մահացել են մոտ 8000 հայեր, որոնցից 2500-3000-ը տաճարում են սպանվել կամ ողջակիզվել: Չէի զարմանա, սակայն, եթե հետին թվով պարզվի, որ 9000 կամ 10 000 թիվը ավելի է համապատասխանում իրականությանը: Հազարավոր այրիները և բազմահազար որբ երեխաներն ու ողջ մնացած չափահաս տղամարդիկ ծայրահեղ թշվառության մեջ են գտնվում: Ներկայումս մահացության մակարդակը վիրավորներին անհրաժեշտ խնամքի բացակայության, սովի ու հիվանդությունների և ընդհանուր բարոյական ու հոգեբանական ընկճվածության հետևանքով շատ բարձր է և դեռ ավելի կբարձրանա: Ունեցվածքի կորստի չափը մակերեսորեն գնահատվում է 150.000-200.000 ֆունտ ստեռլինգ և ավելի դժվար է հաշվել: Մեծամասնությունը, փաստորեն, կորցրել է ամեն ինչ՝ բացառությամբ իրենց հագին ունեցած հագուստներից, և կառավարությունը ոչ մի լուրջ քայլ չի ձեռնարկել կողոպտված ունեցվածքը վերադարձնելու համար: Նախկին ունևոր ընտանիքներն այժմ մուրացիկի դրության են հասցվել և ամաչում են օգնություն խնդրել: Բազմաթիվ երեխաներ դեռ չափազանց փոքր են՝ իրենց սպանված ծնողների ունեցվածքը՝ տունն ու հողատարածքը ետ պահանջելու ու տնօրինելու համար, և դրանց մեծ մասը նրանց համար, անկասկած, կորսված է: Բացի դրանից՝ բազմաթիվ մահմեդականներ, առանձնապես գյուղացիներ, մեծաքանակ գումարներ են պարտք քաղաքաբնակ հայերին: Այժմ, սակայն, պարտքերն այլևս հնարավոր չէ գանձել, քանի որ մահմեդականն իրեն նմանապես իրավասու է համարում՝ իրեն պահելու խռովարար հայ հպատակների ունեցվածքը, ինչպես իրեն իրավասու էր համարում՝ նրանց կյանքն ու ունեցվածքը խլելու հարցում: Հիրավի, ինչ վերաբերում է հայերի հանդեպ մահմեդականների պարտքերին, ապա վերջին կոտորածների հետևանքներից և արդյունքներից մեկը պարտքերի մի իսկական մարում է:

Հայերի ընդհանուր դրությունն այստեղ և շրջակա վայրերում, եթե ոչ պետության բոլոր ասիական նահանգներում, ողբալի է: Նրանք փաստացիորեն օրենքից դուրս են դիտարկվում, և մահմեդականի աչքում հայ լինելն արդեն իսկ մեծ հանցագործություն է: Վստահությունը և տնական խաղաղությունը կարող են վերականգնվել միայն մահմեդականներին, որոնք ակնառու մասնակցություն են ցուցաբերել նոր կոտորածներին ու անկարգություններին, խստորեն պատժելու դեպքում, սակայն, խիստ կասկածելի է, որ նման խաղաղություն կվիճակվի սուլթանի կառավարությանը: Այս կառավարությունը ճակատագրական սխալ է թույլ տվել՝ մեղավորներին միախառնելով անմեղների հետ, նաև փոխանակ օգտվելու օրենքի ողջ խստությամբ այն հայերին պատժելու իրավունքից, որոնք իրոք դավաճանական գործողություններով մեղանչել են իրենց օրինավոր իշխանության դեմ, հաջորդ և անուղղելի սխալն է գործել՝ մահմեդական բնակչությանը թույլատրելով խլել կառավարության լիազորությունները, իր կույր և անմիտ կատաղությունը Նորին մեծության ամենամտավորական, ամենաաշխատասեր ու ամենաօգտակար հպատակների՝ մեծ մասամբ անմեղ հատվածի վրա թափել:

Երևում է, որ Ուրֆայում չարիքի մեծությունը, չնայած պաշտոնական սուտ տեղեկագրերին և ժխտումներին, նույնիսկ թուրքական կառավարությանն է վախեցրել: Պետք է, սակայն, պատասխանատու իշխանություններին անհապաղ հետաքննելու և պատժելու նրա ցանկությունը լրջորեն կասկածի ենթարկել՝ նկատի առնելով այն շտապողականությունը, որով նրա որոշ պաշտոնյաներ տեղափոխվել են պետության հեռավոր շրջաններ: Հասան բեյը՝ ժանդարմերիայի մայոր, հոկտեմբերի 1-ի առաջին կոտորածի գլխավոր կազմակերպիչը, ուղարկվեց Յանինա, իսկ Նացիս փաշան՝ բրիգադների և զորքերի գլխավոր հրամանատարը, որը ղեկավարում էր երկրորդ կոտորածը, տեղափոխվեց Կոր-

նա, որը գտնվում է Եփրատի և Տիգրիսի միախառնման վայրի մոտ:

Ինչպես ես կարծում եմ, անհնար է, որ Ուրֆայի և շրջակա մյուս քաղաքների տեղական իշխանությունները, որոնց ես այցելել եմ, չհաշված Զեյթունի դեպքը, որի վերաբերյալ ես ի վիճակի չեմ կարծիք հայտնելու, հանդուրժեին կամ կազմակերպեին այդ կոտորածները՝ առանց իրենց ձեռքում ունենալու հրահանգներ, որոնք կարդարացնեին նրանց գործողությունները: Այդ հրահանգները հայերի վերաբերյալ նրանց՝ Կոստանդնուպոլիս ուղարկած, լավ մտածված և անպատասխանատու չափով ստահոդ զեկուցագրերի արդյունքն են՝ այդ ամբողջ հարցում կենտրոնական կառավարության ցուցաբերած սխալ և պետական խելամտությունից զուրկ կեցվածքի հետ մեկտեղ: Դժվար է պատասխանատվությունը ճշգրտորեն բաժանել կենտրոնական և տեղական իշխանությունների միջև: Ես, սակայն, վստահ եմ, որ սուլթանի կառավարությունն այն զգացումն ունի, որ կյանքի և ունեցվածքի այդ լիակատար ոչնչացումներն իրականացրած գաղտնի մեքենան չպետք է բացահայտվի, և որ կառավարությունը երբեք, նույնիսկ արտաքին ուժերի ճնշման պարագայում, ոչ մի լուրջ քննություն չի ձեռնարկի, ինչպես 1861 թ.՝ Սիրիայում, այլ կնախընտրի հավատ ընծայել վերջին իրադարձությունների վերաբերյալ խեղաթյուրված զեկույցներին, որոնք նրան մատակարարվում էին անպատկառ տեղական իշխանությունների կողմից: Դիվանագիտական ճնշումը կարող է սուլթանին դրդել քննիչ հանձնաժողովներ ստեղծել, սակայն երբ նման հանձնաժողովի նկատառման պարագայում չկա այն երկյուղը, որ օտար տերությունները կդիմեն զինված միջամտության, նրա գործելակերպը, խիստ հեռու մնալով իրականությունը բացահայտելուց և չարիքը հատուցելուց, կլինի ոչ այլ ինչ, քան մի ծաղր, որը, քանի որ միտված կլինի խաբելու Եվրոպային, միայն ավելի կծանրացնի այդ նահանգների քրիստոնյա բնակչության ողբալի դրությունը:

Վերջին իրադարձությունների վերաբերյալ ի հայտ եկող վկայությունների և ժխտումների խառնաշփոթի մեջ, սակայն, մի փաստ անվիճելի է: Օսմանյան բնակչության բոլոր շերտերը, չնայած իրենց ընդհանուր անտեղյակությանը, ունեն նուրբ հոտառություն իրենց բռնակալ կառավարության բուն միտումների և ցանկությունների հանդեպ, և ինչպես մահմեդականները, այնպես էլ ոչ մահմեդականները միաբերան հաստատում են, որ կառավարությունն էր ցանկանում, որ կոտորածները տեղի ունենան, և որ, եթե նա չցանկանար, դրանք չէին կարող տեղի ունենալ: Այս կառավարությունը տեղյակ է երկու կողմերի տեսակետներին, բայց մինչ այժմ խուսափում է քննությունից և ամենևին տրամադրված չէ հատուցելու չարիքը: Քանի դեռ դա տեղի չունենա, բնակչության բոլոր հատվածները չեն կարողանա նրան ազատել այս կոտորածները խորը կշռադատվածությամբ սանձազերծելու մեղադրանքից:

Վայրագ ամայացման ու ավերումի ժամանակ, որը ողողել է այս տարածաշրջանը, խնայված է մնացել է մի մեծ հայկական գյուղ՝ Գերմուշը: Այդ արտասովոր փաստը բացատրվում է հետևյալ կերպ. երբ մահմեդականները հարձակվում էին Ուրֆայի հայերի վրա, զինված քրդերի և արաբների հեծյալ մի բազմություն գրոհեց Գերմուշի վրա: Հայերն իրենց գյուղի առջև մի քանի վրաններ խփեցին, որոնք ձեռքի տակ ունեին, այնտեղ պահակ կարգեցին այնքան զինյալների, որքան կարողացան հավաքել, կրակոցներ արձակեցին իրենց զենքերից և միաժամանակ լուր ուղարկեցին հարձակվողներին, թե վրանները զբաղեցված են զինվորների կողմից, որոնց կառավարությունն է ուղարկել գյուղի պաշտպանության համար: Արաբներն ու քրդերը, որոնց հրահրել էին գյուղն ավերել, ընկան շփոթության մեջ, մոլորվեցին և նահանջեցին՝ կարծելով, թե կառավարությունն իրոք ինչ-որ անհասկանալի պատճառով ցանկանում էր պաշտպանել Գերմուշի բնակչությանը: Կարճ ժամանակ անց Ուրֆայի իշխանությունները

Գերմուշի հայերից պահանջեցին հանձնել զենքերը, որոնցով նրանք հարձակվել էին մահմեդականների՝ արաբների և քրդերի վրա: Հայերը, սակայն, բոլորը միասին եկան Ուրֆա և կառավարությանը հայտարարեցին, որ եթե նա ցանկանում էր, որ իրենք սպանվեն, ապա ավելի լավ կլիներ՝ դա միանգամից Ուրֆայում անեին, քանի որ իրենք (հայերը) ամբողջովին հանձնված են նրանց ողորմածությանը, բայց երբեք չեն հանձնի զենքերը, որոնք իրենց միակ պաշտպանությունն են շրջակայքի զինված և թշնամի քրդական ու արաբական ցեղերի դեմ: Նրանց թույլ տվեցին հեռանալ և պահել իրենց զենքերը, և այդ արտոնության համար նրանք պետք է ոչ փոքր գումարներ վճարեին:

Ձերդ գերազանցությունը հանձնարարել էր ինձ հաջորդիվ պարզել, թե որքան է կազմում վերջին իրադարձությունների հետևանքով Ուրֆայում իսլամն ընդունած հայերի թիվը: Այդ թիվն Ուրֆայում հասնում է 400-500-ի, նրանցից ոմանք արդեն առաջին և երկրորդ կոտորածների միջև ընկած ժամանակահատվածում են մահմեդական դարձել, մյուսները՝ երկրորդ կոտորածի ընթացքում, իսկ մնացածը՝ դրանից հետո: Նրանք համաձայնում էին դրան սպառնալիքների կամ այն համոզմունքի պատճառով, որ ո՛չ կառավարության, ո՛չ էլ մահմեդական հարևանների կողմից ապահովված չէ բացահայտորեն իր քրիստոնեությունը դավանող որևէ հայի ո՛չ կյանքը, ո՛չ էլ ունեցվածքը:

Չնայած կառավարությունը չի թույլատրել իսլամն ընդունելու դեպքում անհրաժեշտ ձևականությունների իրականացումը և հետևաբար պաշտոնապես կարող է հայտարարել, որ չի ճանաչում նրանց կրոնափոխությունը, այնուհանդերձ պաշտոնյաներն ու մահմեդական բնակչությունն այդ հայերի հետ վարվում են որպես մահմեդականների:

Պարզաբանումներն ու փաստերը, որոնք շարադրված են Ուրֆայի կոտորածին վերաբերող նախընթաց զեկույցում, ամենածանր կերպով ծանրաբեռնում են օսմանյան կառավարությա-

նը, և ես լիովին կրում եմ դրանք պաշտոնական զեկույցում ներկայացնելու պատասխանատվությունը: Չնայած նենգության և ահաբեկման համակարգը, որից օգտվում է թուրքական վարչակազմը, միշտ չէ, որ թույլ է տալիս փաստերն ապացուցողական դարձնել, ինչպես պահանջվում է եվրոպական դատարանի պարագայում, բայց ես մեծ ջանք եմ գործադրել՝ իմ ստացած տեղեկությունները բարեխղճորեն ստուգելու համար: Դրանց մեծ մասը ես ուղղակիորեն ստացել եմ մահմեդական աղբյուրներից կամ դրանք հաստատել եմ տվել մահմեդական հեղինակությունների միջոցով:

Ստորագրյալ՝ Գ. Հ. Ֆիթցմորիս

2. Զելայի կոտորածը

1895 թ. հոկտեմբերի 28

Զելա քաղաքում 5000 տուն կա, որից 350-450-ը հայերին են պատկանում, 15-20-ը՝ հույներին, իսկ մնացածը՝ թուրքերին: Բարենորոգումների ծրագրի հրապարակումից հետո, երբ մյուս քաղաքներից եկան չարաբաստիկ լուրերը, զորակոչվեցին 1200 ռեդիֆներ: Նրանց կեսը տեղավորվեց մի իջևանատանը, մյուս մասը տեղակայվեց քաղաքում ու քաղաքից դուրս, այնպես որ հույս կար, որ Զելայում ամեն բան խաղաղ կմնար: Քանի որ, չնայած դրան, թուրք բնակչությունը շարունակ ավելի սպառնալի կեցվածք էր ընդունում, հայերը երկյուղած էին: Երբ ոմանք փորձեցին փակել իրենց խանութներն ու իրենց ապրանքները տուն տանել, սպաները խոչընդոտեցին նրանց: Վերջիններս հրավիրեցին ամենահեղինակավոր հայերին, վստահեցրին նրանց, որ վախենալու ոչինչ չունեն և դրդեցին վերսկսել առևտուրը:

Նոյեմբերի 26-ին՝ տոնավաճառի օրը, իշխանությունները քաղաք եկած չերքեզների ու գյուղացիների բազմությանը դուրս ուղարկեցին և թողեցին քաղաքն իր մշտական բնակիչներին: Քանի

որ հայերի երկյուղն աճում էր, նահանգապետը նրանց մի գրություն ուղարկեց՝ հետևյալ բովանդակությամբ. «Կառավարությունն այս բոլոր ծախսերն անում է՝ ձեզ պաշտպանելու համար: Եթե դուք շարունակեք վախ դրսևորել, ապա դա կլինի կառավարությանն ուղղված վիրավորանք, որի համար ես ձեզ հետ կվարվեմ որպես խռովարարների և կպատժեմ»: Դրա հետևանքով նոյեմբերի 28-ին հայ խանութպանների մեծ մասն իր տեղում էր, իսկ առանց խանութի առևտուր կատարողներից ամենաերևելիները՝ 50-60 հոգի, ոստիկանության կողմից տարվեցին շուկայում գտնվող մի խաղատուն հարկային հարցեր կարգավորելու պատրվակով:

Կեսօրին հանկարծ շեփորի ազդանշան հնչեց, և թուրք զինվորները ամբոխի հետ միասին հարձակվեցին հայերի վրա՝ գոչելով. «Սպանե՛լ հայերին. դա սուլթանի հրամանն է: Նրանց ունեցվածքը գահին է պատկանում: Թալանելու լավ առիթ է»: Հրամանատարը 50-60 զինվորների հրամայեց կրակ բացել: Խաղատանը հավաքված բոլորը սպանվեցին՝ բացի 20-ից. վերջիններս, չնայած վիրավոր վիճակում, կարողացան փախչել: 2 ժամում 200 խանութներ կողոպտված էին:

Նահանգապետը կոչ արեց բազմությանը. «Հանգիստ եղե՛ք, մի դադարեք սպանել, թալանել և սուլթանի համար աղոթել»: Մյուս սպաները մասնակցում էին սպանդին: Մի մայոր վերահսկում էր փամփուշտների բաշխումը, երբ դրանց պաշարը սպառվում էր: Սպաները հոգ էին տանում, որ իրենց մարդկանց կողմից ամենաթանկարժեք ավարն առանձնացվեր իրենց համար:

Հարձակումը բազմաթիվ կազմակերպված հրոսակախմբերի միջոցով շուկայից տարածվեց քաղաքի տարբեր թաղամասերի մեջ: Զինվորները պատերի վրայից կրակում էին պատուհանների մեջ և յուրաքանչյուրի վրա, ով կերևար: Նրանց հրաձգության ներքո ամբոխը կոտրում էր դռները, դուրս էր հանում տներում մնացած բնակիչներին և թալանում էր տները: Մի նշանավոր մար-

դու, որը երկար ժամանակ «Iraed Medjlisi»-ի (դատարանի) անդամ էր, սպանեցին իր երկու որդիների հետ և դուրս նետեցին վերին հարկի մի պատուհանից հետևյալ խոսքերով. «Գնա՛, նահանգապետը նիստում քեզ է սպասում»: Մի կին փորձեց պաշտպանել իր ամուսնուն և սպանվեց նրա հետ մեկտեղ, նրանց փոքրիկ երեխան ևս նույն բախտին արժանացավ: Մի ութսունամյա տղամարդ սպանվեց ամբոխի կողմից, և նրա գանգը կտոր-կտոր արվեց նմանապես մի զառամյալ ծերունու կողմից: Բազմությունը բռնեց մի երիտասարդ տղայի, մի թուրք իր ատրճանակը դրեց նրա՝ ութ կամ տասը տարեկան որդու ձեռքը և ասաց. «Կրակի՛ր, որդի՛ս, և սովորի՛ր, թե ինչպես են սպանում գյավուրներին»:

Սովորաբար ընտրության առաջ էին կանգնեցնում՝ մահ կամ իսլամ: Մեկը՝ մի քահանա, նախընտրեց Քրիստոսին ուրանալու փոխարեն իր կուրծքը զենքերին դեմ տալ: սպանվեց: Մեկ ուրիշն ասաց. «Ես իսլամին չեմ դավանի, բայց ուզում եմ մեռնել Քրիստոսի պատվի համար՝ հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու»: Նա սվինահարվեց: Ընդհանուր առմամբ 200 խանութ ու 300 տուն կողոպտվեցին, 150-200 հոգի սպանվեց, 50-60-ը՝ վիրավորվեց: Մայրամուտից մի ժամ առաջ հնչեց շեփորի երկրորդ ազդանշանը, և ամբոխը սկսեց հետ քաշվել: Ոմանք, որոնք չէին ուզում կտրվել թալանից, այն շարունակեցին, մինչև մայրամուտը վերջ դրեց իրենց աշխատանքին, և կենդանի մնացած հայերին ժամանակ տվեց շունչ քաշել իրենց սարսափելի դրության մեջ:

Մեռածները գիշերվա ընթացքում սայլերով դուրս բերվեցին և նետվեցին քաղաքի առջև գտնվող գոմաղբի կույտի վրա: Չնայած մի քանի վիրավորներ խնդրում էին, որ իրենց տուն տանեն, սակայն նրանց էլ սպանեցին և սայլով դուրս տարան: Դիերը պատուհաններից ցած էին նետում կամ, ոտքերից պարան կապելով, դուրս բերում տներից: Հաջորդ օրը 100-ը թաղվեցին մի փոսի մեջ՝ հայկական եկեղեցու բակում: Բոլորը, բացի երեքից, այն աստիճան մասնատված ու խեղված էին, որ, ինչպես վկայում էին ներ-

կա գտնված բժիշկն ու քահանան, ճանաչելն անհնար էր: Մյուսների թաղման վայրը մինչ այժմ անհայտ է:

Ամբողջ ունեցվածքի ընդհանուր կորուստը կազմում է 150.000-200.000 թուրքական ֆունտ (շուրջ 3-4 մլն մարկ): Սպանվածներից տասը կանայք էին, քսանը կամ երեսունը՝ երեխաներ: Վերապրածները ցրտաշունչ ձմռանը բոբիկ, գրեթե առանց անկողինների խռնված են տներում, որոնք, դատարկված ամեն ինչից, չունեն նաև դռներ ու պատուհաններ: 1500 մարդիկ իրենց քրիստոնյա եղբայրների անհապաղ աջակցության կարիքն ունեն:

3. Շեփիկի կոտորածը

1895 թ. նոյեմբերի 2

Արաբկիրի մոտ գտնվող Շեփիկը կողոպտվեց նոյեմբերի 2-ին: Սարու Շեխեղլի-Քուրդ-Օղլուի ղեկավարությամբ 400 զինյալներ հարձակվեցին գյուղի վրա և մինչև կեսօր կրակի տակ պահեցին այն: Երբ գյուղի ամենատարաբիքավորները փորձեցին նրանց հետ բանակցել, նրանք որպես փրկագին 100 թուրքական ֆունտ պահանջեցին: Դա վճարվեց, բայց հարձակվողները չէին ուզում հեռանալ: «Դուք պետք է մեզ ձեր ժամացույցները տաք»: Տվեցին, սակայն նրանք դարձյալ չհեռացան: «Պետք է մեզ հանձնեք նաև ձեր զենքերը»: Տվեցին, բայց նրանք դարձյալ չհեռացան: «Մենք վերցնելու ենք ձեր հացահատիկը, կովերն ու այծերը»: Նրանք վերցրին այդ ամենը, սակայն դարձյալ գոհ չէին: «Մենք անցնելու ենք ձեր տներով և վերցնելու ենք այն, ինչ մեզ դուր կգա»: Նրանք դա արեցին դա և հափշտակեցին ողջ արժեքավոր ունեցվածքը: Այդ ժամանակ մենք յոթ երիտասարդների ուղարկեցինք քաղաք՝ տեղեկացնելու կառավարությանը: Նրանք բանտարկվեցին և այլևս չվերադարձան: Մի քանի օր անց նրանցից մեկը փորձեց փախուստի դիմել և գնդակահարվեց: Առաջին հարձակմանը հաջորդող գիշերը մենք հույս էինք տածում, որ ա-

մեն բան ավարտվել է, բայց հաջորդ առավոտյան շրջակա գյուղերի թուրքերը եկան և սպառնացին մեզ սպանել, եթե չլքենք մեր տները: Այդպես մենք դուրս ելանք, իսկ նրանք ներս մտան՝ թալանելու: Ութ օր շարունակ նրանք հրի էին մատնում մեր տները՝ դրանք ամբողջությամբ դատարկելուց հետո: Միայն ամենաաղքատիկ տներից տասը մնացին կանգուն, սակայն նաև դրանց դռներն ու պատուհանները տարան, և նույնիսկ մի քանիսի տանիքների գերանները դուրս հանեցին: Այնուհետև նրանք հարձակվեցին կանանց վրա և հափշտակեցին նրանց կոշիկներն ու հագուստը: Ութերորդ օրը, երբ նրանք իրենց անելիքն ավարտել էին, եկան մեզ մոտ, երբ նստած էինք գետի ափին, մյուս ափին սպանեցին քահանա Մելքոնին ու եղբայր Բաղդոյի որդուն, քանի որ նրանք հրաժարվել էին կրոնափոխ լինել: Վրա հասավ գիշերը, մթնեց, սակայն նրանք եկան լապտերներով և ընտրեցին 45 երիտասարդների՝ ասելով, որ կառավարությունն էր պահանջել նրանց: Քանի որ երիտասարդները գիտեին, թե ինչ է սպասվում իրենց, խնդրեցին իրենց մեկ ժամ ժամանակ տալ: Նրանք աղոթում էին և երգում, մեկը մյուսից ներում էին հայցում, համբուրում էին իրենց ծնողների ձեռքերը և բաժանվում արտասվախառն աչքերով՝ այլևս չհանդիպելու գիտակցումով: Երբ նրանց կես ժամվա հեռավորության վրա գտնվող մի մեկուսի վայր էին տարել, զույգերով առանձնացրին և սպառնացին սպանել, եթե հավատափոխ չլինեին: Նրանք բոլորը միաձայն և աներկյուղ ասացին. «Մենք չենք ցանկանում ուրանալ մեր հավատը, պատրաստ ենք զոհվելու՝ ի սեր մեր Փրկչի»: Միայն հինգին հաջողվեց փախչել, բայց մյուս քառասունը մարտիրոսվեցին Քրիստոսի սիրույն: Հինգ փախստականները 12 օր անցկացրին մի քարանձավում:

Իրենց տներից զրկված գյուղացիները նախ մի քանի օր սոված թափառեցին լեռներում, մինչև համարձակվեցին Արաբկիր քաղաքը գալ՝ օգնություն փնտրելու, սակայն ապարդյուն: Մի մասը ցրվեց այլ բնակավայրերում: Մի մասը վերադարձավ և հիմա

խռնված ապրում է դեռ կանգուն մնացած 10 տներում, որոնք առանց դռների ու պատուհանների են: Նրանք ո՛չ փող ունեն, ո՛չ անկողիններ, ո՛չ էլ սնունդ: Մինչև մի փոքրիկ օգնություն ստացան, 10-ը սովամահ էին եղել, և շատերն էլ հիվանդացել էին ցրտից ու մերկությունից:

Շեփիկում կար 86 տուն՝ 470 բնակիչներով, 53 երիտասարդներ սպանվեցին, իսկ այրիների և որբերի թիվը մեծ է:

4. Վանի կոտորածը

1896 թ. հունիսի 14-22

«Frankfurter Zeitung»-ի՝ օգոստոսի 15-ի տեղեկագիրը

Այս տարվա հունիսի 14-22-ը Վանում տեղի ունեցած սոսկալի կոտորածների մասին, որոնց վերաբերյալ թուրքական պաշտոնական կոծկման համակարգի շնորհիվ միայն կցկտուր և խեղաթյուրված լուրեր են Եվրոպա հասել, և որոնց զոհ են դարձել անհաշիվ մարդկային կյանքեր, ինչպես նաև այն մասին, որ *Վանի* ամբողջ վիլայեթը (հայերեն՝ *Վասպուրական*) միաժամանակ ավերվել ու ամայացվել է, հենց նոր Վանից ստացել ենք մի վստահելի ականատեսի՝ հունիսի վերջին թվագրված մանրամասն տեղեկագիրը, որը գերմաներեն թարգմանությամբ հետևյալն է հաղորդում. «Մինչ վերջին տարիների ընթացքում բոլոր հայկական նահանգներում ամենասոսկալի կերպով մոլեգնում էին հուրն ու սուրը, և հարյուր հազարավոր հայեր մասամբ մորթվում, մասամբ աննկարագրելի թշվառության ու կործանման էին մատնվում, մեր նահանգում՝ Վասպուրականում, հարաբերական անդորր էր տիրում, չնայած հատկապես նախորդ աշնանից հայ բնակչությունն այս կամ այն չափով տառապում էր այստեղի թուրքական իշխանությունների ճնշման ու հետապնդման ներքո: Մեզնից ոչ ոք, այ-

նուհանդերձ, չէր էլ կարող կռահել, թե ինչ սարսափելի ճակատագիր էր վերապահված մեր ծաղկուն երկրին[7]:

Հայաստանի տարբեր շրջաններում իրականացված ոճրագործությունների մասին լուրերն այստեղ մեզ էլ համակեցին սարսափով և այն մեծագույն մտահոգությամբ, որ մենք մշտական վտանգի մեջ ենք, ու ամեն օր սպասում էինք մահմեդական ֆանատիզմի բռնկմանը: Մեր քաղաքի թուրք ամբոխի կողմից հայերի դեմ ընդհանուր խռովություն բարձրացնելու շարունակական փորձերը ձախողվում էին միայն եռանդուն նահանգապետ *Նազիմ* փաշայի՝ ժամանակին ձեռնարկած մեծածավալ նախազգուշական միջոցառումների շնորհիվ:

Այստեղի թուրքական շրջաններում ընդհանուր ֆանատիզմն է՛լ ավելի բորբոքվեց այս տարվա հունվարին այստեղ ժամանած կոմիսար *Սաադեդդին* փաշայի վարքագծի միջոցով, որը՝ որպես սուլթանի հատուկ բանագնաց, իբրև թե առաջադրանք ուներ որպես «խաղաղարար» հանդես գալ: Երբ նա նախորդ ամսին հետ կանչվեց Կոստանդնուպոլիս, քանի որ, ամենայն հավանականությամբ, այնտեղի անխիղճ իշխանավորների կարծիքով բավականաչափ կտրուկ և անխնա չէր գործել հայերի դեմ, փորձեց, իր չարամիտ պլանի իրականացումն արագացնելով, ապացուցել այդ պաշտոնում իր անփոխարինելիությունը, ինչպես նաև վճռականությունն ու հաճոյակատար եռանդը: Նա մինչև իսկ այնքան հեռու գնաց, որ տխրահռչակ քուրդ ավազակապետ Շեքիրին՝ նույնիսկ թուրքական դատարանի կողմից դատապարտված մի մարդու, հյուրընկալեց իր մոտ, երկու օր շարունակ հյուրասիրեց ու պատվեց բոլոր մեծարումներով: Սաադեդդին փաշան սկզբից ևեթ փորձում էր միջամտել քաղաքացիական ու զինվորական կառավարչության հարցերին և բոլոր գործերն աստիճանաբար կենտրո-

---

[7] *Վասպուրականը* հայ ազգի կարևոր կենտրոն է: Այստեղ հայ բնակչության թվաքանակը կազմում է մոտավորապես 200 000 (թարգմանչի ծանոթագրությունը):

նացնել իր ձեռքերում: Վալի Նազիմ փաշային նա մեղադրեց անվճռականության և անկարողության մեջ, որն իր անտարբեր, անգործունյա պահվածքով իբրև թե քաջալերում էր հայ «ֆիդայիներին» (սադրիչ, խռովարար) (թուրքական իշխանությունները գրեթե յուրաքանչյուր հայի այդ անունով էին բնորոշում) իրենց «սադրիչ գործողություններում»՝ փոխանակ հետապնդելու նրանց: Այդ նպատակով նա ինքը սկզբում ձեռնարկեց տարբեր տնային խուզարկություններ, այնուհետև կարգադրեց համընդհանուր խուզարկություն կատարել հայկական թաղամասերում՝ 3000-4000-անոց մի զորամասի գործադրմամբ: Այդ բոլոր խուզարկությունները, սակայն, անարդյունք եղան:

Բարեկամ թուրքերի միջոցով հայերը տեղեկացել էին, որ ծրագրված էր հունիսի 12-ին հարձակվել իրենց վրա, ինչի պատճառով էլ վերջիններս այդ օրը փակել էին իրենց խանութներն ու արհեստանոցները և վերահաս իրադարձությունների երկյուղած սպասումով փակվել իրենց տներում: Այստեղ հարկ է նշել, որ արդեն բավական ժամանակ ի վեր, մասնավորապես մոտ 14 օր առաջ ռուս հյուպատոս պարոն *Վլադիմիրի* մեկնումից հետո, որն իր արձակուրդն է անցկացնում Ռուսաստանում, գրեթե ամեն օր հայերի վրա հարձակումներ և սպանություններ էին տեղի ունենում: Օրական սպանվում էին 5-6 հայեր: Տեղական իշխանությունները բացարձակապես չէին հետաքրքրվում այդ դեպքերով: Այլոց թվում նաև պարոն *Յոլակը*՝ այստեղի հայկական հանրակրթական ավագ դպրոցի ուսուցիչը, գիշերը Նորաշեն փողոցում հարձակման ենթարկվեց, դաշունահարվեց և այնուհետև կացնով կտոր-կտոր արվեց:

Հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը հայկական *Կլոր դար* թաղամասից բազմաթիվ հրացանային կրակոցներ էին լսվում: Ինչպես հաջորդ օրը պարզվեց, թուրքական գիշերային մի պարեկախումբ հանդիպել էր աղի մաքսանենգությամբ զբաղվող քրդական մի ավազակախմբի, կռիվ էր սկսվել, որի ժամանակ միայն քրդերից

մեկի ձին էր սպանվել, իսկ մաքսանենգ ավազակախումբը ճողոպրել էր: Հայ բնակչությունը, տեղյակ չլինելով աղմուկի պատճառից, վայրկյան առ վայրկյան սպասում էր կոտորածի մեկնարկին: Հաջորդ առավոտյան տեղական իշխանությունների հրամանով վերոնշյալ գնդակահարված ձին շուկայի հրապարակում ի ցույց դրվեց բոլորին, և միաժամանակ հայտարարվեց, որ ավազակախումբը, որին հանդիպել էր թուրքական գիշերային պարեկախումբը, հայկական է եղել: Այդպիսով իշխանությունները փորձում էին առանց այն էլ բորբոքված թուրք բնակչությանն է՛լ ավելի գրգռել հայերի դեմ: Դա անմիջական խթան դարձավ թուրքերի կատաղության սանձազերծման և հայերի վրա երկար ժամանակ լավ նախապատրաստված հարձակումը սկսելու համար:

Երկուշաբթի էր՝ հունիսի 15-ը: Մայոր *Հալիմ* էֆենդին, որը դեռ նախկինում աչքի էր ընկել Սասունի կոտորածների ժամանակ իր կատարած ոճրագործություններով, և որին վստահվել էր «ոստիկանական վերահսկողությունը», ինչպես նաև հիմնականում հայերով բնակեցված *Այգեստան*[8] թաղամասում կարգուկանոնի պահպանման գործը, մի մեծ զորախմբի գլուխն անցած՝ եկավ Կլոր դար փողոց, ուր հասնելուն պես հրամայեց կանգ առնել և առանց այլևայլի կրակել փողոցում գտնվող, սարսափելի խուճապի մատնված բազմության վրա: Դա *կոտորածի մեկնարկի ազդանշանն* էր: Անմիջապես թուրքական թաղամասերից այստեղ շտապեցին վայրի ամբոխի բազմությունները՝ զինված հրացաններով, դանակներով, թրերով ու կացիններով: Նրանք սպանեցին բոլոր հայերին, որոնք հայտնվում էին իրենց ճանապարհին, ներխուժեցին նրանց տները և սկսեցին դրանք թալանել, ավերել ու հրի մատնել: Սպանդն ու ավերումը շարունակվեցին ամբողջ օրը:

---

[8] Վան քաղաքը բաղկացած է, այսպես կոչված, քաղաքամեջից, որը շրջապատված է մի պարսպով, որի հյուսիսային կողմում՝ մի լեռնագագաթի վրա, Շամիրամի աշտարակը՝ այժմյան թուրքական միջնաբերդն է վեր խոյանում, և հին պարիսպներից դուրս՝ արևելյան ուղղության վրա գտնվող լայնատարած Այգեստան արվարձանից (թարգմանչի ծանոթագրությունը):

Հայկական Կլոր դար, Արարք, Հայկավանք, Թորման [Thorman], Փոս-դաղ [Pos-Dagh], Չավուրմե, Սուրբ Հակոբ և Նորաշեն թաղամասերը *համարյա ամբողջությամբ ավերվեցին*: Զոհերի թիվը հասնում էր գրեթե 800-ի, և այն էլ, որպես կանոն, արական սեռի, մինչդեռ կանայք և աղջիկներն ամենագազանային ձևով պատվազրկվում էին և մեծ մասամբ տարվում հարեմները: Շատերը փախան ազդեցիկ թուրքերի տները՝ հուսալով փրկել իրենց կյանքը: Նման փախստականներից մոտ 100-ը, որոնք պաշտպանություն էին փնտրել այստեղի քաղաքապետ *Թեմուր-Զադե* Հալիլ փաշայի մոտ, երկու օր անց դուրս բերվեցին և մեկառմեկ մորթվեցին: Հոգևորականները՝ *դր. հայր Դանիելն* ու *Մեսրոպ քահանան*, նույնպես այս սոսկալի ջարդի ժամանակ զարհուրելի մահ ունեցան. վերջինը ողջ-ողջ *մորթազերծ արվեց*, իսկ առաջինը փողոցում սպանվեց, նրա դին քարշ տրվեց փողոցովներով և ի վերջո նետվեց մի աղբահորի մեջ:

Գիշերը խաղաղ անցավ: Հաջորդ առավոտյան՝ հունիսի 16-ին, սակայն, կրկին սկսվեց մոլեռանդ թուրք ամբոխի հարձակումը. այժմ հերթը Այգեստանի մյուս՝ նախորդ օրն անվնաս մնացած փողոցներինն էր: Այստեղ իրենց տներում բարկադավորված, հնարավոր ամեն բանով զինված հայերն ուժգին դիմադրություն ցուցաբերեցին: Գրոհող զանգվածները հետ շպրտվեցին: Մի խումբ կանանց և երեխաների, որոնք խուսափել էին նախորդ օրվա կոտորածից, մի քանի հյուպատոսների օգնությամբ նույնպես հաջողվեց ապաստանել հայերի կողմից պաշտպանվող թաղամասում: Միաժամանակ քաղաքը հետզհետե լցվում էր շրջակա տարածքների ավարառու քրդերով և թուրքական գնչուների հրոսակներով:

Չորեքշաբթի՝ հունիսի 17-ին, վերսկսվեց արդեն բոլոր հնարավոր մարդասպան և կողոպտիչ տարրերից բաղկացած զանգվածի հարձակումը հայկական դիրքերի վրա՝ համիդեական կանոնավոր հեծյալ ջոկատների համաժամանակյա աջակցության

ներքո: Հայերը պաշտպանվում էին ուժերի ներածին չափով. նրանց համար դա կյանքի ու մահու կռիվ էր: Միայն ժամանակավորապես ընդհատվելով՝ մարտը, շարունակ ավելի թեժանալով, շարունակվեց ամբողջ գիշեր՝ մինչ հունիսի 18-ի առավոտը: Պաշարված հայերի վիճակը դրությունը ավելի սարսափելի էր դառնում: *Կանոնավոր զորքը*, որը մինչ այժմ միայն առանձին դեպքերում էր մասնակցել մարտին, այժմ հրաման ստացավ փակ դասավորվածությամբ հարձակվել «ապստամբների» վրա: Միաժամանակ Այգեստանի բարձունքներից մեկում տեղադրված մի քանի *թնդանոթներից* մահաբեր կրակ բացվեց հայկական դիրքերի վրա: Կոմիսար *Սաադեդդին* փաշան հայտնեց դր. հայր Սահակին՝ տեղի հայերի հոգևոր առաջնորդին, ինչպես նաև հյուպատոսներին, որ եթե «ապստամբներն» անհապաղ վայր չդնեն զենքերը և անվերապահորեն անձնատուր չլինեն, ապա ինքը միջնաբերդից «կրուպ» թնդանոթներով կգնդակոծի և կավերի ամբողջ քաղաքը: Թուրքական կառավարության և հայերի միջև միջնորդի դերը ստանձնեց անգլիական հյուպատոս պարոն Վիլյամսը, որը՝ որպես իր ղեկավարի երկակի քաղաքականության արժանի ներկայացուցիչ, ձգտելով արժանանալ թուրքական կառավարության բարեհաճությանը, եռանդորեն ջանքեր գործադրեց՝ այդ իմաստով իր առաքելությունն իրականացնելու համար: Քաղաքական հիմքերից ելնելով՝ հյուպատոս Վիլյամսը, չնայած իր ավելի լավ տեղեկացվածությանը, նույնիսկ միացավ թուրքական այն տեսակետին, ըստ որի՝ հայերի հարկադրված ինքնապաշտպանությունը պարզապես որպես «*ապստամբություն*» էր որակվում: Իր այս նախաձեռնության մեջ նա մի օգնական գտավ՝ ի դեմս ամերիկացի միսիոներ պրն. *Ռեյնալսի*, որը չէր ցանկանում թուրքական իշխանություններին դարձյալ շողոքորթելու պատեհ առիթը բաց թողնել: Հյուպատոս Վիլյամսը միսիոներ Ռեյնալսի միջոցով հայերին տեղեկացրեց, որ նրանք իրադրությունը քննարկելու և խաղաղության ու կարգուկանոնի հնարավոր վերականգման համար

անհրաժեշտ պայմանները հստակեցնելու նպատակով պետք է մի քանի պատգամավորների ուղարկեին իր մոտ: Միաժամանակ նա պատվիրեց նրանց ծանուցել, որ իրեն հանձնարարված է նրանց հետ բանակցություններ վարել վեց մեծ տերությունների անունից: Հայերն առարկեցին՝ ասելով, որ իրենք նրա հետ կարող էին բանակցությունների մեջ մտնել միայն այնտեղ գտնվող մյուս հյուպատոսների ներկայության և մասնակցության պարագայում: Ուրբաթ օրը՝ հունիսի 19-ին, ինչպես նաև հաջորդ օրը տեղի ունեցան մեկական հանդիպումներ. ներկա էին մի կողմից, հյուպատոս Վիլիամսից բացի, պարսկական հյուպատոս *Միրզա Հուսեին* խանը և ռուսական հյուպատոսարանի ներկայիս ղեկավար, թարգման Կարապետ *Չիլինգարովը* (ռուս հյուպատոս Վլադիմիրը, ինչպես արդեն հիշատակվել է, մեկնել էր), իսկ հայերի կողմից՝ վերոնշյալ հայր Սահակը երեք պատգամավորների հետ միասին: Հյուպատոսները հայերից պահանջեցին ենթադրյալ երեք «պարագլուխներին», որոնք ղեկավարել էին պաշտպանությունը, վաթսուն այլ գլխավոր մասնակիցների հետ մեկտեղ հանձնել՝ առանձնապես վստահեցնելով, որ վերջիններս կարժանանային սուլթանի ողորմածությանը: Այդ հանձնումը պետք է տեղի ունենար անգլիական հյուպատոսի հատուկ երաշխավորության ներքո: Հայ պատգամավորները 24 ժամ ժամանակ խնդրեցին՝ իրենց լիազորած անձանց հետ խորհրդակցելու համար, իսկ մինչ իրենց վերջնական պատասխանը թուրքերի կողմից իրենց վրա չպետք է որևէ նոր հարձակում տեղի ունենար:

Չնայած այդ որոշակի հավաստիացմանը, սակայն, ամեն բան պետք է այլ ընթացք ստանար: Հունիսի 20-ի լույս 21-ի գիշերը՝ նշված բանակցությունների ավարտից ութ ժամ անց, թուրքերի կողմից մի նոր գրոհ ձեռնարկվեց դժբախտ հայերի դեմ: Ողջ այգեստանը՝ 6 *թնդանոթներով*, որոնք տեղակայված էին մերձակա Աքերվիքար բարձունքում, գնդակոծության ենթարկվեց: Միաժամանակ վերսկսվեցին թալանը, սպանդն ու ավերումը: Հուրն ու սու-

ը այդ կերպ մոլեգնեցին 12 ժամ շարունակ՝ մինչև հաջորդ օրվա երեկո: Քաղաքում ամենուր ահ ու սարսափ էր տիրում: Նահանգապետը հյուպատոսներին առաջարկեց իրենց աշխատակիցների և միսիոնորների հետ քաշվել միջնաբերդը՝ վտանգից ու մահից խուսափելու համար: Քանի որ, այնուհանդերձ, ռուսական հյուպատոսարանի ղեկավարը հայտարարեց, որ վճռել է մնալ իր պոստում և միայն ռուսական դրոշի ներքո սպանվել, առաջարկը մերժվեց նաև մյուս հյուպատոսների կողմից: Հազարավոր հայեր ապաստանեցին մասամբ հյուպատոսների բնակարաններում, մասամբ՝ բողոքական և հռոմեական-կաթոլիկ միսիոներների տներում ու հաստատություններում: Երբ պաշարված հայերը, որոնց դեմ էր գլխավորապես ուղղված թուրքական հարձակումը, այժմ ըմբռնեցին հետագա ցանկացած դիմադրության անհեռանկարայնությունը, նկատի առնելով ամբողջ քաղաքի կործանման վտանգը, իրենց հայրենակիցների մյուս՝ անպաշտպան հատվածին հետագա հետապնդումներից զերծ պահելու թյուր հույսով որոշեցին թողնել իրենց դիրքերն ու հեռանալ: Մոտ 1000 մարդ, որոնցից հազիվ մեկ քառորդն էր զինված, ճեղքեցին պաշարումն ու Վանից հեռացան արևելյան ուղղությամբ մոտ մեկուկես ժամվա հեռավորության վրա գտնվող Վարագա վանք[9]:

Այդ ընթացքում քաղաքը դարձավ տևական աննկարագրելի ոճրագործությունների և ավերումների թատերաբեմ: Զորաբանակը, որի թվակազմն, այլ տեղերից եկած ջոկատներով համալրվելով, հասել էր 7000-8000-ի, ամբոխային զանգվածների հետ մեկտեղ իրականացրեց թալանի և ավերման գործը: Այդ օրը՝ հունիսի 21-ին, գազազած ամբոխի մի բազմություն փորձեց գրոհել հյու-

[9] Վերոհիշյալ զեկուցագրի հետ միաժամանակ Պարսկաստանից ստացված մի գրավոր հաղորդման համաձայն՝ այդ բազմությունից շուրջ 850 հոգի, որոնք ուզում էին պարսկական տարածք անցնել, սահմանի մոտ հետապնդվեցին քրդական Համիդիեի կողմից և հուսահատ, հերոսական կռիվ մղելով՝ բոլորը սպանվեցին: Մյուս 150-ի հետագա ճակատագրի մասին, որոնք ավելի վաղ էին բաժանվել հիմնական զանգվածից, այլևս ոչինչ հայտնի չի դարձել (թարգմանչի ծանոթագրությունը):

պատոսների՝ հազարավոր հայերով (շուրջ 15 000) լցված տներն ու միսիոներական շենքերը, ինչպես նաև դրանց սահմանակից տները, որոնց բոլորի վրա ռուսական և անգլիական դրոշակներ էին ամրացված: Անգլիական հյուպատոսը՝ վախից ու սարսափից դողալով, մի թուրքական ֆես գլխին, հայտնվեց հյուպատոսարանի բակում և իրեն շրջապատած զինվորներին, որոնք նրա պաշտպանության համար էին այնտեղ ուղարկվել, հրամայեց կրակել հարձակվող բազմության վրա, որը դրանից հետո ետ քաշվեց հարևան փողոցները:

Այստեղ պետք է նաև հիշատակել, որ երկու օր առաջ՝ Այգեստանի գնդակոծության ժամանակ, մի ական ճեղքել էր անգլիական հյուպատոսարանի պարիսպը և հասել մինչև հյուպատոսի ննջասենյակը՝ առանց, սակայն, պայթելու: «Քաղաքի կենտրոնը համեմատաբար զերծ մնաց կոտորածից և ավերածությունից գործունյա մայոր *Էմիլ* աղայի շնորհիվ, որը կարողացավ զսպել իր զինվորներին ու ցրել հերթական գրոհը ձեռնարկող ամբոխային զանգվածները: (Այդ պատճառով այստեղ, ընդհանուր առմամբ, միայն 15 հայ սպանվեց, կողոպտվեց մոտ 150 խանութ:) Պետք է գովաբանումով ընդգծել այդ եռանդուն սպայի հանդես գալը: Մի լիակատար հակադրություն է կազմում մայոր *Հալիմ էֆենդիի*՝ Այգեստանում գտնվող զորքերի հրամանատարի վարքագիծը, որն *անչամք* էր ոգևորում ամբոխի բազմություններին՝ նրանց ձայնելով. «Դե՛, զավակներս, նախ սպանե՛ք բոլորին, ապա կարող եք հանգիստ կողոպտել ու հափշտակել»:

Երկուշաբթի՝ հունիսի 22-ին՝ կեսօրին մոտ, շեփորի մի ազդանշան վերջ դրեց ութօրյա սպանդին: Այգեստան արվարձանն օղակվեց զինվորական ուժերով: Փողոցներում ամենուր շրջում էին զինվորական պարեկախմբեր: Փախչելով իրար գլուխ հավաքված բոլոր հայերին կառավարության անունից կոչ արվեց վերադառնալու իրենց բնակարանները (որչափ որ դրանք կանգուն էին մնացել ավերումից հետո): Վերջիններս, սակայն, չհամար-

ձակվեցին թողնել իրենց ապաստարանները: Քաղաքից հեռացած քրդական հորդաներն ու համիդեական հեծելազորայիններն այժմ նետվեցին շրջակա գյուղերի, ինչպես նաև Վանի վիլայեթի բոլոր բնակավայրերի վրա՝ կոտորելով, թալանելով, հրի ու սրի մատնելով: Գյուղաբնակ դժբախտ հայ բնակչության վիճակը սարսափելի էր: Բազմաթիվ գյուղեր հողին են հավասարեցվել, և արական սեռի բնակիչները մեծ մասամբ սպանվել են, աղջիկներն ու երիտասարդ կանայք բռնի առևանգվել են[10]: Միայն քաղաքում շուրջ 200 կանայք և աղջիկներ զինվորների կողմից քարշ են տրվել զորանոց: Բազմաթիվ հայեր հարկադրվեցին իսլամ ընդունել: Մյուսները փախան բոլոր ուղղություններով: Վանքերն ու եկեղեցիները կողոպտվեցին և հրի մատնվեցին, դրանց թվում՝ նաև հինավուրց *Վարագա* վանքը[11], որը մի զորամասի կողմից թնդանոթներով գնդակոծվեց, գրոհի ենթարկվեց և այն բանից հետո, երբ վանահայր *Արիստակեսն* ու իր եղբայր Հայր *Վրթանեսը* դարպասի մուտքի մոտ գլխատվել էին, մյուս բոլոր վանականները 25 աշակերտների հետ մեկտեղ նույնպես սպանվել, կողոպտվեց ու վերջում հրկիզվեց:

Քաղաքում *սպանված հայերի թիվը անցնում է 1000-ը*, պատճառված նյութական վնասն անհաշվելի է: Ինչ վերաբերում է միայն շարժական գույքի վնասին, ապա դա կարող է կազմել ավելի քան 1 մլն թուրքական ֆունտ: Մոտավորապես 3000 տներ կողոպտվեցին, շուրջ 600-ը ամբողջովին հրկիզվեցին, հինգ եկեղեցիներ պղծվեցին և հրի մատնվելով՝ ավերվեցին, նույն կերպ վեց դպրոցներ վերածվեցին մոխրի: Գյուղերում սպանդն ու ավերածություններն է՛լ ավելի սոսկալի են եղել: Այդ մասին ճշգրիտ

---

[10] Պարսկաստանից մեզ ուղարկված նամակում հաղորդվում է, որ այդ առևանգված կանանցից ու աղջիկներից մոտավորապես 150-ը պարսկական շուկաներում հրապարակայնորեն վաճառվել են 8 գրանով (= 5 մարկ) որպես ստրկուհիներ (թարգմանչի ծանոթագրությունը):

[11] Վաղեմի հռչակ ունեցող Վարագա վանքը նույնանուն միաբանության մշտական բնակատեղին է, ունի հարուստ գրադարան և վանական դպրոց, որտեղ բազմաթիվ սաներ են ուսանում (թարգմանչի ծանոթագրությունը):

տվյալները դեռ բացակայում են: Ես, սակայն, ի վիճակի եմ նախնական հավաստի տեղեկությունների հիման վրա հաղորդել հետևյալ փաստերը. սպանված հայերի թիվը կարող է նվազագույնը *20 000 թվագրվել* (այլ լուրերի համաձայն՝ զոհերի թիվը պետք է դրա գրեթե կրկնակին կազմի)՝ չհաշված այն բազմահազարները, որոնք ցրիվ են եկել բոլոր ուղղություններով և անհետ կորել են: Առևանգված կանանց ու աղջիկների թիվը հազարներով է հաշվվում: Հիմա հնարավոր չէ հստակ գնահատել պատճառված նյութական վնասի չափը, բայց այն, իհարկե, անասելի մեծ է: Մեր ծաղկուն նահանգի ողջ բարօրությունը երկար, երկար տարիների հեռապատկերում լիովին ոչնչացված է, ոչ մի գյուղ չի խուսափել թալանից ու ավերածությունից, դաշտերն անապատի են վերածվել, ցանքերը՝ ոչնչացվել, անասունները, որչափ որ կենդանի մնացին, ընկան քրդական հորդաների ձեռքը: Հազարավոր ընտանիքներ քաղաքում և գյուղում զրկվել են իրենց կերակրողներից, բազմաթիվ ունևոր քաղաքացիներ ու գյուղացիներ այժմ մուրացիկի դրության են հասցվել: Ողջ շրջանում տարաբախտ սպանվածների դիերն են շուրջբոլորը փռված՝ որպես վայրի գազանների կեր. բերկրալից տեսարան արյունարբու թուրք ու քուրդ ելուզակների համար: Երբ երկու օր առաջ ռուս հյուպատոս պարոն *Վլադիմիրը* վերադարձավ իր արձակուրդից, քաղաքի շատ փողոցներ դեռ ծածկված էին սպանված հայերի բազմաթիվ դիերով, այնպես որ ժամանելուն պես նրա մեքենան պետք է ամբողջ փողոցներ անցներ՝ դրանցից որոշ հեռավորություն պահելով: Մի քանի օր է՝ փախստական կանանց և երեխաների ամբողջ բազմություններ են գալիս այստեղ: Նրանք խղճուկ ապաստան են գտնում հյուպատոսների բնակարաններում, ինչպես նաև բողոքական ու հռոմեական-կաթոլիկ առաքելությունների տներում ու հաստատություններում, մեծ մասամբ մեկնվում են բաց երկնքի տակ: Այդ *փախստականների* թիվը ներկայումս կազմում է մոտ 25 000 և նոր ներհոսքի միջոցով, անկասկած, ավելի կմեծանա: Բոլոր միջոցնե-

րից զուրկ այդ զանգվածների կերակրումն առկա պայմաններում հազիվ թե հնարավոր լինի գլուխ բերել. ներկայումս օրական կարող է ոչ ավելի, քան 15 000 հոգու հաց բաժանվել: Շատերը ստիպված են օրերով քաղցած մնալ: Այդ դժբախտների մեջ ամեն օր սովամահության մի շարք դեպքեր են ի հայտ գալիս, հիվանդությունները նույնպես սկսում են մեծ ավերածություններ պատճառել նրանց շարքերում, խոլերայի համաճարակի տարածման վտանգ կա:

Թուրքական կառավարությունը մեր նահանգում կոտորածի հրահանգավորմամբ երկու նպատակ էր հետապնդում. ամենից առաջ նա ցանկանում էր մյուս վիլայեթներում մեր ազգի դեմ արդեն հաջորդաբար գործարկված բնաջնջման ծրագրի հետևողական իրականացմամբ մի հարվածով ոչնչացնել նաև Վասպուրականի հայ բնակչությանը, ապա միաժամանակ լիակատար հագուրդ տալ թուրքերի ու քրդերի և հատկապես երկար ժամանակ վարձատրություն չստացող դժգոհ զինվորականության ընչաքաղցությանն ու ավարառության տենչին: Չնայած այդ ամենին՝ կոմիսար Սաադեդդին փաշան մի շարք աչքի ընկնող հայերի, բռնության գործադրմամբ, հարկադրեց սուլթանին ուղղված մի գրություն ստորագրել, որում նրանք հայտնում էին, որ Վանում «անտեղի խռովությունները» «որոշ հայ հանցավոր չարագործների հրահրմամբ էին տեղի ունեցել»:

Քաղաքացիական նահանգապետ *Նազիմ* փաշան այդ օրերին խնդրել է իրեն պաշտոնաթող անել, ինչն անմիջապես կատարվեց: Նրա փոխարեն նահանգապետ նշանակվեց կոմիսար *Սաադեդդին* փաշան: Նա իսկույն նեթ մի ռազմական դատարան հիմնեց, որի առաջադրանքն է հայտնաբերել ու դատապարտել «հեղափոխականներին»: Ներկայումս արտաքուստ հարաբերական անդորր է տիրում, արդարև, գերեզմանային անդորր: Մենք դեռ ապրում ենք վերջին՝ այնքան զարհուրելի օրերի տպավորության ներքո, մշտական վախի մեջ և հուսահատ մտահոգությամբ,

առանց հույսի և առանց վստահության ենք նայում մշուշոտ ապագային: Ուր նայում ես, ամենուրեք ողբ է, թշվառություն և սարսափելի զրկանքներ: Ամբողջ Վասպուրականը՝ այս օրհնյալ երկիրը, այսօր ավերակների, կրակի և արյան մեջ է: Ի՞նչ է լինելու մեզ հետ: Ինչպե՞ս պիտի ավարտվի այս սարսափելի դրությունը: Աստված գիտի: Թո՛ղ նա՝ ողորմած Տերը, շուտափույթ վերջ դնի մեր անպատմելի տառապանքներին»:

5. Ակնի կոտորածը

1896 թ. սեպտեմբերի 22

Ինձ համար խիստ ցավալի է Ձեզ տեղեկացնել այն մեծ դժբախտության մասին, որը վրա է հասել Ակն քաղաքին: Երկրի խորքում հազիվ թե ավելի բարեկեցիկ և ավելի լավ տներ ունեցող քաղաք լինի: Այնտեղ մոտ 1000 հայկական տներ կային և նույնչափ՝ թուրքական: Քրիստոնյաների տներից ավելի քան 600-ը հրի է մատնվել: Սպանվածների թիվը 800-1000 է հաշվվում: Ակնն այն փոքրաթիվ քաղաքներից է, որոնք անմասն էին մնացել անցյալ տարվա ավերածությունից: Այն ժամանակ քրդերին մեծ փրկագին վճարվեց, և թուրք ու քրիստոնյա բնակչությունները միացան՝ տարածքը պաշտպանելու համար: Այս տարվա սեպտեմբերի 15-16-ի արյունահեղության առաջացման պաշտոնական վարկածը հետևյալն է (ես այն ստացել եմ բարձրաստիճան պաշտոնյաներից). Քրիստոնյաները կիրակի առավոտյան և երկուշաբթի առավոտյան մեծ թվով հավաքվել են եկեղեցիներում և իրենց ժամերգություններն այնքան են ընդլայնել, որ դրանով գրգռվել է թուրքերի կասկածամտությունը: Երեքշաբթի օրը հայերը քաղաքի բարձրադիր մասում գտնվող իրենց սեփական տներից մի քանիսի մոտից կրակ են բացել, սկսել են կրակել թուրքական տների վրա և սպանել մի զինվորի: Իրականում, ըստ մեր տեղեկությունների, եղելությունը հետևյալն է. քաղաքի կառավարիչը՝ մի տեղաբնիկ, և

ևս երկուսը թե երեքը Խարբերդի նահանգապետին գանգատ են ներկայացրել, թե Ակնում կան խռովարարական նկարագիր ունեցող մի քանի անձինք՝ նաև պնդելով, թե Ակնից մի քանի հոգի մասնակցել են Կոստանդնուպոլսում տեղի ունեցած վերջին անկարգություններին: Խարբերդի նահանգապետն այդ մասին զրուցեց ակնեցի որոշ մարդկանց հետ, որոնք Խարբերդում են բնակվում: Վերջիններս գրեցին իրենց ընկերներին և, ի պատասխան, տեղեկացվեցին, որ այնտեղ եղել է միայն մի կասկածելի անձնավորություն, այն էլ՝ խարբերդցի, և արդեն վտարվել է: Ակնի, Խարբերդի և Կոստանդնուպոլսի իշխանությունների միջև այդ հարցի շուրջ գրագրությունը շարունակվեց մի քանի շաբաթ, և երևում է՝ Կոստանդնուպոլսում կառավարությանն այն համոզումն է ներշնչվել, թե Ակնում խռովարար տարրեր կան, և հրամաններ էին գալիս, որ դրանց պետք էր վերացնել: Մի քանի օր անց քրդերը, որոնք, այնուհանդերձ, մեծ թիվ չէին կազմում, սպառնացին բնակավայրին, սակայն զինվորների կողմից կրկին հետ ուղարկվեցին: Դա կրկնվեց երկու թե երեք անգամ: Երկուշաբթի՝ սեպտեմբերի 14-ին, նրանք դարձյալ հայտնվեցին: Քրիստոնյաներն անվստահությամբ համակվեցին իրենց թուրք համաքաղաքացիների նկատմամբ և փակեցին իրենց խանութները: Երեքշաբթի առավոտյան, երբ խանութները դեռ չէին բացվել, կառավարիչը մունետիկներ ուղարկեց քաղաքով մեկ, որոնք հայտնեցին, թե քրդերը ցիրուցան են արվել, որ կառավարությունը երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու լիակատար անվտանգությունը, և որ յուրաքանչյուրը դարձյալ պիտի բացի իր խանութն ու վերսկսի առևտուրը: Դրանից հետո խանութները բացվեցին, և առևտուրն իր սովորական ընթացքը ստացավ: Կեսօրին հնչեց մի կրակոց, և նույն րոպեին սկսվեց սպանդը: Ենթադրվում է, որ կրակոցն ազդանշան էր, չնայած դրան՝ թուրքերը պնդում են, որ այն հայի կողմից է արձակվել: Ըստ երևույթին, սպանդը միայն սկիզբն էր, իսկ թալանն ու տների հրկիզումը ավելի ուշ հաջորդեցին: Տե-

ղեկացրին, որ բազմաթիվ կանայք ու աղջիկներ ինքնակամ նետվում էին Եփրատը, որը քաղաքի մոտով է հոսում:

Կայմակամը հեռագրեց, որ 2000-3000 մարդիկ անօգնական են և մատնված են սովի, ու աջակցություն խնդրեց: Կառավարությունը հավանաբար ինչ-որ բան կձեռնարկի այս պահի համար, սակայն դա միայն ժամանակավոր ու անբավարար կլինի: Ակնը հավանաբար ավելի է տուժել, քան Արաբկիրն ու Մալաթիան: Որոշ անվանի թուրքեր հասկացրին, որ, ամենայն հավանականությամբ, այս տարածաշրջանին դեռ ավելի մեծ անկարգություններ են սպասվում, և ավելացնում էին, որ եթե դրանք տեղի ունենան, ապա ավելի վատթար են լինելու, քան անցյալ տարի էր:

1896 թ. սեպտեմբերի 29

Տեղեկությունները, որոնք ես անցյալ շաբաթ հաղորդեցի Ակնի վերաբերյալ, հիմնականում ձեռք են բերվել երկու անկողմնակալ թուրքերից, որոնք կոտորածի ժամանակ այնտեղ էին գտնվում: Բոլոր նամակները, որոնք տեսել եմ, համապատասխանում են միմյանց՝ սպանվածների թիվը գնահատելով մոտ 2000: (Հյուպատոսական պաշտոնական տեղեկագիրը նույն թիվն է հաղորդում): Այստեղ համեմատաբար ավելի շատ կանայք ու երեխաներ են այդ ճակատագիրն ունեցել, քան նախկին որևէ այլ կոտորածի ժամանակ, որի մասին ես տեղյակ եմ: Բազմաթիվ սպանվածներ օրեր շարունակ թողնվեցին ճանապարհներին որպես շների կեր, իսկ մի զգալի մասը նետվեց Եփրատը: Քաղաքից շատ մղոնների հեռավորության վրա կարելի էր նրանց տեսնել գետն ի վար քշվելիս: Որոշ դեպքերում ամբողջ ընտանիքներ են ոչնչացվել: Իհարկե, այժմ ճշգրիտ վիճակագրություններ դեռ չեն կարող ներկայացվել, սակայն մտավախություն կա, որ 2000-ը դեռ չափազանց չնչին թիվ է: Դա 5000-6000-ի հասնող քրիստոնյա բնակչության մի մեծ բեկորն է: Նամակներում տների թիվը 1100 է ներկայացվում, և դրանցից, ինչպես ասում են, միայն մոտ 150-ն է

կանգուն մնացել: Այդ արյունոտ սպանդն ու հրդեհումը տևեցին երեքշաբթիից՝ ամսի 15-ից մինչև հինգշաբթի՝ ամսի 17-ը: Բոլոր վկայությունները համապատասխանում են նրան, որ կոտորածը պաշտոնապես կազմակերպված էր, և որ դրա համար որևէ պատճառ չկար: Այնտեղ ոչ մի խանգարիչ տարր չկար՝ բացի որոշ պաշտոնյաների երևակայության մեջ գտնվողներից: Նրանք ահազանգել էին կենտրոնական կառավարությանը: Վալին և ռազմական հրամանատարը գրեթե ողջ ընթացքում՝ սկզբից մինչև վերջ, հեռագրատանն էին և գրագրության մեջ էին Կոստանդնուպոլսի հետ: Որքան ես տեղյակ եմ, ժողովուրդը նույնիսկ աննշան դիմադրություն չի ցուցաբերել, և ոչ մի թուրք չի սպանվել, բացի, հավանաբար, ավելի ուշ՝ ավարի բաշխման ժամանակ սպանվածներից: Տարածքում քրդեր չկային: Ամբողջն իրականացվեց բնակիչների և զինվորների կողմից: Կոտորածը տարածվեց Ակնի մերձակա բազմաթիվ գյուղերի վրա, բայց մանրամասներ չունենք: Տեղական իշխանությունը համառորեն պնդում է, որ այլևս ոչ մի ջարդ տեղի չի ունենա այդ շրջանում, և մեծ եռանդ կցուցաբերվի խանգարող տարրերի զսպման համար: Արղնի գյուղերում սպանվեցին հինգ անձինք, այդ թվում՝ մի քահանա, բայց զինվորների պատեհ ժամանումը խափանեց ընդհանուր արյունահեղությունը: Այն ամենից հետո, ինչ կատարվել է, զարմանալի չէ, որ քրիստոնյաներն այլևս անվտանգության զգացում չունեն, և որ վախը նրանց նյարդերն ուժասպառ է արել: Թշվառությունը սպառնում է եկող ձմռանը գրեթե նույնչափ անտանելի լինել, ինչպես նախորդ տարի:

III
Հայաստանը կոտորածներից առաջ
Է. Յ. Դիլոն[12]

Թուրքիայի իրական իշխանությունը Հայաստանում սկզբնավորվել է 1847 թվականից, երբ Օսման փաշան հարավարևմտյան հինգ նահանգներում (Վան, Բիթլիս, Մուշ, Բայազետ և Դիարբեքիր) վերջին հարվածը հասցրեց քուրդ ցեղապետերի աշխարհիկ իշխանությանը: 50 տարվա այդ երկար ժամանակամիջոցը կարող ենք բաժանել երկու փուլի՝ 1847-1891 թթ.՝ *խայտառակ կառավարման շրջան*, և 1892-1894՝ *բնաջնջման քաղաքականության շրջան*: Համոզելը կամ հորդորելը կարող են շատ բան անել՝ առաջին համակարգից եկող չարիքը մեղմելու համար, սակայն վերջինի դեմ ոչինչ, բացի ուժից, չի կարող ազդեցիկ լինել: Եվ այս իմաստով այն տեսակետը, որը լորդ Սոլսբերին է վերջերս արտահայտել, լիովին ճիշտ է:

Բարձր դուռը, որը վախենում էր, թե Հայաստանում բարենորոգումների խոստացած իրականացումը և ռուսական սահմանի մոտ բնակվող քրիստոնյաների թշնամական տրամադրությունը պատերազմի դեպքում կարող են լուրջ վտանգներ առաջացնել, 1891 թ. որոշեց մի քարով երկու բադ սպանել և *ստեղծեց, այսպես կոչված, համիդեական հեծելազորը*, որը բաղկացած է բացառապես քրդերից: Դա այն նույն սկզբունքի կիրառումն է, երբ խռովարարներն ու հեղափոխականները բացում են բանտերը և կալանավորներից պահանջում են սպանել բարձր դասերի պատկանյալներին: Ծրագիրը, որը ներկայացվեց պետության ամենաբարձրաստիճան պաշտոնյաներից մի քանիսի կողմից, նպատակ ուներ հայերին սահմանամերձ շրջաններից վտարելու և մահմեդականներին թույլ տալու տիրանալ նրանց հողին, այնուհետև

[12] Տե՛ս «The Condition of Armenia.» Contemporary Review, 1895 թ. օգոստոս, թույլտվությամբ՝ հրատարակիչներ Իզբիսթեր/Քո.-ի, Լոնդոն:

քրիստոնյաների թիվն այդ հինգ նահանգներում այնքան նվազեցնելու, որ հետագայում նրանց համար բարենորոգումների իրականացման անհրաժեշտություն այլևս չլիներ և, վերջապես, պատերազմի դեպքում քրդերին օգտագործել որպես հակակշիռ կազակների դեմ: Նրանք հետևողականորեն լծվեցին բնաջնջման այդ քաղաքականությանը, որն այդ ժամանակից ի վեր նաև նշանակալիորեն ընդլայնվել է, և եթե դրան անհապաղ վերջ չտրվի, ապա, անկասկած, կհանգեցնի Հայկական հարցի վերջնական լուծմանը. դա մի լուծում է, որը, անշուշտ, ծաղր կլինի՝ ուղղված համայն քաղաքակրթությանը, և հավերժ խայտառակություն քրիստոնյա աշխարհի համար: Հեծելազորում ընդգրկված քրդերը թողնվում են իրենց բնակության վայրերում, ազատվում զինվորական ծառայությունից, ապահովվում են զենքով, օժտվում են դեսպանորդների անձեռնմխելիությամբ և վարձատրվում Բարձր դռանը հատուկ կանոնավորությամբ: Եվ նրանք իրենց առաքելությունը ի կատար էին ածում ծայրաստիճան ճշգրտությամբ. թալանում էին հարուստ հայերին, հրի մատնում տները, հրկիզում հացահատիկն ու խոտը, կողոպտում էին գյուղերը, քշում-տանում էին անասունները, առևանգում երիտասարդ աղջիկների, պատվազկում ամուսնացած կանանց, ամբողջ շրջանների բնակչությանը տեղահանում էին ու սպանում բոլորին, ովքեր բավականաչափ արի կամ խենթ էին՝ դիմադրության փորձ կատարելու համար: Այժմ հայերը երկրագնդի ամենաընչազուրկ ու ամենաթշվառ մարդկանց թվին են դասվում:

Միգուցե, սակայն, թուրքական կառավարությունը չէ՞ր կանխատեսում այդ հետևանքները, կամ միգուցե դրանք հավանություն չէի՞ն ստանում թուրքական արդարադատության կողմից: Կառավարությունը ոչ միայն կանխատեսել է այդ հետևանքները, այլև նրանց, ովքեր դրանք փաստացիորեն առաջ են բերել, հնարավոր բոլոր ձևերով պաշտպանել է, աջակցել ու վարձատրել: Իսկ եթե երբևէ մի հայ համարձակվեր բողոքել, ապա նա ոչ միայն

ունկնդրություն չէր ստանում այն պաշտոնյաներից, որոնց վճարում էր իրեն՝ պաշտպանելու համար, այլև նետվում էր մի գարշելի բանտ, ենթարկվում կտտանքների և հրեշավոր ու զարհուրելի վերաբերմունքի՝ որպես պատիժ իր ամբարտավանության և հանդգնության:

Այժմ արդեն պարզվել է, որ *Սասունի կուրորածը* Բարձր դռան ներկայացուցիչների լավ կշռադատված գործողություն էր՝ նրանց կողմից խնամքով նախապատրաստված և անխնայորեն իրականացված՝ չնայած քուրդ ավազակների տարակուսանքներին և մարդկային զգացմունքի առանձին նշույլներին, որը նույնիսկ թուրք զինվորների սրտերում էր շարժվում:

Այդ պատճառով էլ, քանի դեռ Բարձր դուռը երկիրն առանց վերահսկողության է կառավարում, բողոքել, որ Հայաստանում կյանքն ու ունեցվածքը ապահովված չեն, մոտավորապես նույնքան ողջամիտ կլինի, որքան, եթե զինվորը մարտի ժամանակ բողոքի իր վերջույթները կորցնելու վտանգի մասին: *Հետևանքը, որից բողոքում են, հենց այն նպատակն է, որին ցանկանում են հասնել*, և այն, որ դա նման հիմնովին է իրագործվում, ապացուցում է միայն գործածված միջոցների արդյունավետությունը: Արտասահմանյան մի ականավոր պետական գործիչ, որը սովորաբար համարվում է թուրքերի անմնացորդ բարեկամ, վերջերս մի գաղտնի զրույցի ժամանակ ինձ ասաց, որ թուրքական կառավարումը Հայաստանում լավագույնս կարող է բնորոշվել որպես կազմակերպված գողություն, օրինականացված սպանդ և պարգևատրված անբարոյականություն: Այդպիսի մի համակարգի դեմ բողոքելը, իհարկե, արդարացի և լավ է, բայց հազիվ թե շատ օգնի: Որևէ մարդասեր, որը բանտ կայցելի, կարող է հավանաբար սարսափել՝ տեսնելով մի կալանավորի՝ ձեռքերն ու ոտքերը կապված, սակայն հազիվ թե երկար բողոքի, եթե իմանա, որ բանտարկյալը մահվան է դատապարտված և հաջորդ պահին կախաղան է հանվելու: «Բնաջնջման ծրագրի» իրագործման առաջին քայլը, որ

արվեց, այն էր, որ հաջորդաբար ձեռնամուխ եղան հայերին մուրացիկի դրության հասցնելու: Դա իրագործելի է մի երկրում, որի պաշտոնյաները ստիպված են ութ կամ տասն ամիս շարունակ սպասել իրենց աշխատավարձին և ապա բավարարվել իրենց հասանելիքի մի չնչին մասով: «20 շաբաթ ի վեր նույնիսկ մի փարա չեմ ստացել և չեմ կարող անգամ հագուստ գնել»,– ասում էր ծեր պաշտոնյան, որին կարգադրված էր ինձ Էրզրումում օրուգիշեր հսկել: «Ձեզ կանոնավոր աշխատավարձ տալի՞ս են»,– հարցրի ես Կուտեկի [Kutek] հեռագրատան պետին: «Ո՛չ, էֆենդի, ոչ կանոնավոր են տալիս»,– պատասխանեց նա:– «Ութ ամիս ի վեր ոչինչ չեմ ստացել: Չնայած, ինչպե՞ս չէ, Բայրամի տոնի ժամանակ ինձ մեկ ամսվա աշխատավարձ տրվեց»: «Այդ դեպքում ինչպե՞ս եք ծայրը ծայրին հասցնում»:

«Մի կերպ»: «Բայց չէ՞ որ Դուք պարտավոր եք փոքր-ինչ գումար ունենալ՝ հոգով-մարմնով դիմանալու համար»: «Մի քիչ, իհարկե, ունեմ, բայց դա բավական չէ: Ալլահը բարեգութ է: Ահա Դուք էլ հենց նոր մի քիչ փող տվեցիք»: «Այո՛, բայց չէ՞ որ դա Ձեզ համար չէ, դա հեռագրերի վճարն է, այդ փողը պետությանն է պատկանում»: «Օ՜,– ասաց նա,– ես ինձ եմ պահում ամբողջ փողը, որը հասարակության կողմից մուծվում է: Ես դա վերցնում եմ որպես իմ աշխատավարձի կանխավճար: Իհարկե, դա մեծ գումար չի կազմում, բայց ինչ էլ որ լինի՝ գրպանս եմ դնում»: Այդ մարդիկ, բնականաբար, մանր պաշտոնյաներ են, բայց նրանց դրությունն էականորեն չի տարբերվում ավելի բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասի դրությունից, և դատավորները, սպաները, շրջանային կառավարիչները, վալիներն ու մյուսները նմանապես խղճուկ քսակներ ունեն, սակայն անհամեմատ ավելի ընչաքաղց են:

Թասիե փաշան՝ Բիթլիսի վերջին նահանգապետը, կարող է դիտարկվել որպես *բարձրաստիճան թուրք պաշտոնյաների բնութագրական կերպար* բնաջնջման շրջանում: Նա մի ընչաքաղց

գծուծ էր և այնքան դաժան, որքան Ռուջերին՝ Ուգոլինոյի թշնամին, և այնքան սառը, որքան կապիտան Մալագարը Սպենսերի «Հավերժահարսերի թագուհին» երկում: Նա սովորություն ուներ մի շարք հարուստ հայերի բանտարկելու՝ առանց որևէ մեղադրանքի և առանց նույնիսկ փորձելու ինչ-որ պատրվակ գտնել: Ապա նրանց առաջարկվում էր հսկայական գումարներով, որոնք նրանց կարողության մեծ մասն էին կազմում, գնել իրենց ազատությունը: Եթե հրաժարվում էին վճարել, այն կերպ էին խոշտանգվում, որ միջնադարում հրեաների կտտանքները և այժմյան Հնդկաստանում Օդիշայի արքայադուստրերի ներքինիների չարչարանքները դրա համեմատ միայն թեթև պատիժներ էին: Որոշ տղամարդիկ պետք է օրուգիշեր ուղղաձիգ կանգնեին և իրավունք չունեին ո՛չ ուտելու, ո՛չ խմելու, ո՛չ էլ շարժվելու: Եթե ուժասպառ կամ ուշագնաց էին լինում, սառցաջուրը կամ շիկացած երկաթը նրանց կրկին ուշքի էին բերում, և ընթացակարգը շարունակվում էր: Քանի որ թուրքերն ընդսմին բավականաչափ ժամանակ և համբերատարություն ունեին, հարցը մեծ մասամբ ավարտվում էր նրանով, որ հայերը զոհաբերում էին արժեքավոր ամեն բան՝ միմիայն սոսկալի տանջանքներից խուսափելու համար: Նրանք ստիպված էին զոհաբերել կամ զոհաբերվում էին և, ի վերջո, որպես կանոն, ընտրում էին այն, ինչը նրանց չարյաց փոքրագույնն էր թվում:

Բիթլիսի վիլայեթում մի քանի հարյուր հայեր, որոնք փող կամ կամ անասուններ ունեին կամ հարուստ բերք էին հավաքել, միանգամայն կամայականորեն բանտ նետվեցին և մեծ գումարներ վճարելուց հետո դարձյալ ազատ արձակվեցին: Ոմանք, ովքեր չէին կարողանում միանգամից վճարել փողը, այնքան էին պահվում զազրելի բանտերում, մինչև հավաքեին պահանջվող գումարը կամ ազատագրվեին մահվան միջոցով: Միայն Բիթլիսի բանտում մահացան ավելի քան 100 հայեր: Հետևյալ խնդրագիրը, որ ստորագրվել է մի հանրաճանաչ մարդու կողմից, որի անունը

ես հրապարակում եմ, և, եթե չեմ սխալվում, ուղարկվել է նաև Մուշում գտնվող՝ արտասահմանական ներկայացուցիչներին, հավանաբար մի փոքր պատկերացում կտա այն մասին, թե Բիթլիսի վալին ինչպես էր կառավարում իր նահանգը. «Մենք, որ մեծագույն հավատարմությամբ ծառայել ենք թուրքական կառավարությանը, հատկապես մի քանի տարի է, ինչ վատ վերաբերմունքի ենք արժանանում և ենթարկվում ենք ճնշումների մե՛րթ հենց կառավարության, մե՛րթ քուրդ ավազակների կողմից: Այսպես, թուրքական ոստիկանության զինվորներն ու ժանդարմներն անցյալ տարի (1894 թ) լիովին անսպասելի ձերբակալեցին ինձ իմ սեփական տանը և տարան Բիթլիսի բանտը, որտեղ ինձ սոսկալիորեն խոշտանգեցին ու չարչարանքների ենթարկեցին: Չորս ամիս այնտեղ կալանավորված մնալուց հետո ես ազատ արձակվեցի՝ վճարելով 450 թուրքական ֆունտ (9000 մարկ): Այդ վարմունքի համար ոչ մի հիմք, նույնիսկ որևէ պատրվակ չմատնանշվեց: Երբ տուն վերադարձա, տունս անկարգ վիճակում էր, խանութս՝ ավերված, ունեցվածքս՝ կորսված: Առաջին միտքս եղավ բողոքել թուրքական կառավարությանը՝ պահանջելով վնասի փոխհատուցում, բայց հրաժարվեցի այդ մտքից՝ վախենալով կրկին դատապարտվելուց: Քանի որ լսել եմ, որ Դուք Հայաստան եք եկել՝ ժողովրդի վիճակն ուսումնասիրելու համար, համարձակվում եմ Ձեզ ի սեր Աստծո խնդրել նկատի առնել այս փաստերը»: Ստորագրված է՝ Պողոս Դարմանյան՝ Մանազկերտի Սկնախոջա գյուղից:

1890 թ. Բուլանըխում Ոտնչոր գյուղի գյուղապետը (նրա անունն Աբդալ էր) այնտեղի պայմաններում հարուստ մարդ էր: Նա ուներ 50 գոմեշ, 80 եզ, 600 ոչխար, բացի այդ՝ ձիեր և այլն: Նրա ընտանիքի տիկնայք իրենց մազերի մեջ ու կրծքի վրա ոսկե զարդեր էին կրում, և նա տարեկան 50 թուրքական ֆունտ հարկ էր վճարում պետական գանձարանին: Դա 1890 թվականն էր: 1894 թ. նա ամբողջովին աղքատացել էր, խորը թշվառության մեջ ընկել և հասել սովամահության շեմին: Նրա գյուղն ու ամբողջ շրջակայ-

քը թալանվել էին, և բնակիչները, այսպես ասած, մորեմերկ էին մնացել, մինչդեռ թուրքական իշխանությունները չարախինդ ժպիտով էին հետևում այդ ամենին: 1894 թ. քրդերի կողմից միայն Բուլանըխի ու Մուշի շրջաններում ոչ պակաս քան 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ ու ոչխարներ հափշտակվեցին: Դա այն մեթոդն էր, որ կիրառվում էր ամբողջ երկրում. առանձին դեպքերում, ըստ իրերի վիճակի, վայրերի և այլ հանգամանքների, որոշ տարբերություններ ի հայտ գալիս էին, սակայն միջոցներն ու նպատակը մշտապես նույնն էին: Հետևանքն ամբողջ հարստության լիակատար անհետացումն է և կատաղի արագությամբ տարածվող, ինտենսիվ ու անդարմանելի, հուսահատության ու խելագարության հասցնող թշվառությունը:

Վալիի կամ նահանգապետի և հարկահանների զապթիեի միջև կան *պաշտոնական հիերարխիայի բազմաթիվ աստիճաններ, բայց դրանցից յուրաքանչյուրում կուլ է տրվում ջանասեր հայերի ունեցվածքի մի մասը*: Անկասկած, ավելի վատ բաներ էլ կան, քան ունեցվածքի կորուստը (և սառնասիրտ անգլիացիներն ավելի շատ նախընտրում են իրենց համակրանքը խնայել նրանց համար, որոնք դրանց են մատնվել), սակայն այսպիսի կորուստն էլ բավականաչափ վատ է, երբ պատճառվում է ոչ թե մի հանցագործության կամ պատահականության կամ անփութության հետևանքով, այլ բացառապես անամոթ ու վրդովեցուցիչ անարդարության, հատկապես, երբ տանուլ տվողը պետք է 15-20 հոգանոց ընտանիք կերակրի: Իսկ այն, որ ունեցվածքի կորուստը շատ հաճախ շատ ավելի մեծ կորուստներ է իր մեջ միատեղում, մենք քիչ հետո կտեսնենք:

1892 թ. հուլիսին նորին մեծության համիդիե-հեծելազորի մի կապիտան՝ Իդրիս անունով, Հասանլու ցեղի մի «զարդանմուշ», իր եղբոր հետ եկավ Համզիսիայկ՝ բնակիչներից անասնակեր գանձելու: Նրանք դիմեցին երկու հայ երևելիների՝ Ալիին ու Խաչատուրին, և հրամայեցին բերել պահանջվող խոտը: «Մենք ամ-

բողջ գյուղում այդքան չունենք»,– պատասխանեցին նրանք: «Բերե՛ք խոտն առանց այլևայլի, թե չէ կգնդակահարեմ ձեզ»,– հայտարարեց Իդրիսը: «Բայց այդքան խոտ չկա, և մենք չենք կարող ճարել»: «Ուրեմն պետք է մեռնեք»,– ասաց ազնիվ կապիտանը և երկուսին էլ տեղում գնդակահարեց: Մի հանդիսավոր բողոք ներկայացվեց Իդրիսի դեմ, և կայմակամը, պետք է ի պատիվ նրա ասել, ձերբակալեց նրան ու չորս շաբաթ պահեց բանտում: Այնուհետև ազնվաբարո մարդը վճարեց սովորական փրկագինն ու ազատ արձակվեց: Նույն՝ Բուլանըխի շրջանում այդ ժամանակ նույնչափ բացահայտ և նույնչափ անպատիժ շուրջ երեսուն նման սպանություններ կատարվեցին: Սկզբում հայերը փորձում էին բողոքել, երբ սպանվում էին իրենց հարազատներն ու ազգականները՝ հուսալով, որ պատժիչ արդարադատության ձեռքը կբռնի մարդասպաններին և վախ կներշնչի մյուսներին, որոնք կարող էին գայթակղվել՝ գնալու և նույնն անելու: Շուտով, սակայն, նրանք դրանից ձեռք քաշեցին: Թե ինչպես դա տեղի ունեցավ, կարելի է եզրակացնել հետևյալ միջադեպից. 1892 թ. հուլիսին Ահմեդ Օղլոր Բադալ անունով մի քուրդ եկավ Գովանդուկ և առևանգեց 4 եզներ, որոնք Մորխո անունով մի հայի էին պատկանում: 1892 թ. դեռ խստորեն չէին հետևում այն օրենքին, որը քրիստոնյաներին արգելում է զենք կրել: Մորխոն, որն ատճանակ ուներ և տեսավ, որ քուրդը կրակելու մտադրություն ունի, կրակեց նրա վրա: Երկու կրակոցներն էլ միաժամանակ հնչեցին, ու երկու տղամարդիկ սպանված վայր ընկան: Ահա թե ինչ պատահեց հետո. գյուղից տասնինը հայեր, որոնցից ոչ ոք տեղյակ չէր, թե ինչ է կատարվել, ձերբակալվեցին և բանտարկվեցին: Այնուհետև նրանց տեղեկացրին, որ մեծ փրկագին վճարելով՝ կարող էին ազատ արձակվել: Նրանցից տասը վճարեցին և անմիջապես ազատ արձակվեցին: Մյուսները երկար պահվեցին բանտում: Քրդերից ոչ մեկի հետ ոչինչ տեղի չունեցավ: «Ինչո՞ւ պիտի մահմեդականը պատժվեր այն բանի համար, որ հայերի է սպանում»,– հարցրեց ինձ մի

քուրդ ավազակ, որը նույնպես համիդեական հեծելազորի սպա էր: «Դա չլսված բան կլիներ»: Այո՛, արդարև, ինչո՞ւ: Այն, որ սպանվածի ազգականները պատժվեն, նույնիսկ խստորեն պատժվեն, մահմեդականին միանգամայն արդարացի է թվում, քանի որ, հավանաբար, այդպես է ընդունված:

1893 թ. օգոստոսին Ջիբրանլիի քրդերը հարձակվեցին Կոփ գյուղի վրա, կողոպտեցին այն և վիրավորեցին Հովհաննես անունով մի վաճառականի, որն իր խանութում զբաղված էր գործերով: Հաջորդ օրը Հովհաննեսը գնաց նահանգապետի ենթակայի՝ Խնուսաբերդի կայմակամի մոտ և բողոք ներկայացրեց, որից հետո կայմակամը նրան սուտ վկայության պատճառով բանտ նետեց: Տառապանքները, որոնք նա կրեց տիֆի այդ որջում, դժվար թե երևակայության մեջ տեղավորվեն, բայց դա այլ թեմա է: Ութ օրից նրա հարևանները կայմակամի մոտ բերեցին մի քրդի, որը վկայեց, որ Հովհաննեսը, իրոք, իր կողմից հաղորդված էր վիրավորվել, հետևապես չէր ստել: Դրանից և միայն դրանից հետո իշխանությունը բարեհաճեց այդ մարդկանց ողորմածաբար թույլ տալ 10 ֆունտ փրկագին վճարել՝ վիրավորին ետ ստանալու համար:

Կոդաբազի (գյուղ Բասենում) բնակիչներն ինձ առասպելանման բաներ պատմեցին քրդերի արարքներից, որոնք նրանցից 23 եզ, 28 ձի, 60 կով ու 20 ոչխար էին հափշտակել, իսկ իրենք ստիպված էին եղել այդ ամենի հետ համակերպվել: Թե դա ինչպես է դա տեղի ունեցել, պարզաբանում է հետևյալ պատմությունը. «Անցած մայիսին (1894 թ.) 12 համիդեական ձիավորներ հարձակվեցին մեր գյուղի վրա և առևանգեցին մեր քահանա տեր Դավիթին: Նրանք խոստացան ազատ արձակել նրան, եթե 6 ֆունտ վճարեր: Նա փոխ առավ գումարը, վճարեց ավազակներին և ազատ արձակվեց: Հաջորդ օրը նա մեկնեց Հասանկալե՝ դատարանին բողոք ներկայացելու: Նրան հայհոյեցին, ստախոս անվանեցին ու բանտարկեցին: 40 օր գարշելի զնդանում անցկացնելուց հետո,

որն այնտեղ բանտ են անվանում, նրան թույլ տվեցին 7 ֆունտ փրկագին վճարել և տուն վերադառնալ: *Երբեք ապաշխարություն չի սահմանվում մի վնասի համար*, որ մահմեդականի կողմից հասցվում է քրիստոնյայի ունեցվածքին, ապրանքին, մարմնին կամ կյանքին, ոչ թե այն պատճառով, որ դատական պաշտոնյաները չափազանց ծույլ կամ անուշադիր են, այլ քանի որ նրանք իրավունք չունեն: Դրա ապացույցը, եթե առհասարակ որևէ ապացույց պահանջվում է, այն է, որ հայցվորներն իրենք են իսկույն ևեթ պատժվում այն բանի համար, որ բողոք են ներկայացրել իրենց նեղողների դեմ: Եթե, դրան հակառակ, երբևէ մի քուրդ կամ թուրք զոհ է դառնում մի «հանցագործության» կամ նաև սոսկ մի դիպվածի, ապա կառավարության պաշտոնյաների եռանդը սահմաններ չի ճանաչում: Անցյալ տարվա գարնանը մի քանի աղքատ քրդեր քայլում էին Հուսնահարի մերձակայքում հոսող գետի ափի երկայնքով, երբ ձյունն արդեն հալչում էր, և գետերն ու առուները խիստ վարարել էին: Նրանք չքավոր մուրացիկներ էին, որոնք մի կերպ կերակրվում էին ողորմություններով: Գետն անցնելու մի փորձի ժամանակ ջուրը նրանց քշեց, և խեղդվեցին: Անմիջապես գյուղի հայերը մեղադրվեցին նրանց սպանելու մեջ, և չորս անվանի տղամարդիկ այդ անհեթեթ պատրվակով բանտարկվեցին: Դժվար չէր իրական պատճառը հասկանալ: Յոթ թե ութ ամիս անցնելուց հետո գյուղի բնակիչներին տեղեկացվեց, որ կալանավորները 75 ֆունտ փրկագնի դիմաց կարող էին ազատ արձակվել: Գումարը հավաքվեց, վճարվեց իշխանություններին, և այնուհետև բանտարկյալներն ազատ էին: Ես անձամբ տեսել եմ նրանցից երկուսին՝ Ադամին և Դոնոյին:

Տուրքերը, որոնք հայերը պարտավոր են վճարել, արդեն ինքնին չափազանց բարձր են, թեյավճարները, որոնք գումարվում են դրանց և պահանջվում են զապթիեների կողմից, կարող են կամայական չափերի հասնել և ամենաարտառոց ձևերն ընդունել, մինչդեռ այն եղանակը, որով այդ երկուսն էլ գանձվում են, բավական

է՝ արդարացնելու այն պահանջը, որ թուրքական տնտեսությունը Հայաստանից պետք է ավելել-դուրս թափել:

Միայն որպես օրինակ բերելու համար, թե քաղաքներում մահմեդականներն ու քրիստոնյաները որքան տարբեր են գնահատվում, նշենք, որ Էրզրումում մահմեդականները, որոնք 8000 տուն ունեն, վճարում են սոսկ 395.000 պիաստր, մինչդեռ քրիստոնյաները, որոնց պատկանում է միայն 2000 տուն, 430.000 պիաստր են վճարում: Գյուղական շրջաններում առանց բացառության ամեն ինչի համար *բարձր հարկեր են սահմանված*, բայց ամենածանր օրինական հարկն ավելի թեթև է՝ համեմատած այն տուրքերի հետ, որ կորզում են կառավարական մարմինները, զապթիեները: Մի ընտանիք, օրինակ, պիտի 5 ֆունտ վճարի և կատարում է իր պարտքը: Զապթիեները, սակայն, 3 կամ 4 ֆունտ ավելի են պահանջում անձամբ իրենց համար: Նրանց դա մերժվում է: Այնուհետև սկզբում սակարկություն է կատարվում, և համաձայնության են գալիս 1 ֆունտի շուրջ: Զապթիեները, սակայն, վիրավորված են և մտադրվում են վրեժ լուծել: Մեկ շաբաթից նրանք դարձյալ գալիս են և կրկին պահանջում հարկերը: Հայերը բարկանում են և ցույց տալիս անդորրագիրը: Զապթիեները ծիծաղում են և պնդում, որ ներկայացված փաստաթուղթը ոչ թե անդորրագիր է, այլ պարզապես թուրքերեն մի գրքի թերթ: Գյուղացիները հիմա վկայակոչում են իրենց աղքատությունը և գթասրտություն հայցում: Ագահությունը, այլ ոչ թե գթասրտությունն է հարկահաններին համոզում ևս երեք ֆունտով բավարարվել: Այժմ գումարը, հավանաբար, անմիջապես չի վճարվում: Այդ դեպքում զապթիեները պահանջում են իրենց հանձնել ընտանիքի երիտասարդ կանանց ու աղջիկներին՝ իրենց անասնական կրքերը բավարարելու համար: Մերժումը պատժվում է մի շարք չարչարանքներով, որոնց մասին ամոթի զգացումն ու մարդկայնությունը թույլ չեն տալիս խոսել: Առևանգումներն ու ամեն տեսակի բիրտ անկարգությունները, որոնց միայն արևելյան հեշտասերների հի-

վանդ ուղեղը կարող է դիմել, հավանաբար նաև սպանդն ու հրկիզումը եզրափակում հարկահավաքումը:

Ես զրուցել եմ Բարձր դռան պաշտոնյաների այդպիսի զոհերի հետ, տեսել եմ նրանց վերքերը, հարցուփորձ եմ արել նրանց ընտանիքներին, նրանց քահանաներին, լսել եմ նրանց հետապնդողներին, նրանց բանտապահներին (քանի որ նրանցից ոմանք բողոքի պատճառով բանտարկվել էին) և առանց վարանելու պնդում եմ, որ այդ զարհուրելի իրողությունները ոչ միայն փաստեր են, այլև, որ դրանք հաճախ են տեղի ունենում: Հաջորդիվ թարգմանաբար ներկայացնում եմ ինձ մոտ գտնվող մի փաստաթուղթ՝ ստորագրված և կնքված Մելիքանի բնակիչների կողմից, որը 1895 թ. մարտի 21-ին է ուղարկվել Էրզրումի «նորին սուրբ օծություն» արքեպիսկոպոսին՝ մի բարձրաստիճան հոգևորականի, որ վայելում է բոլորի՝ թե՛ թշնամու, թե՛ բարեկամի հարգանքը:

«Երկար ժամանակ է, ինչ չորս կամ հինգ ոստիկաններ, որոնց հանձնարարված է կայսերական հարկերի հավաքումը, մեր գյուղը դարձրել են իրենց գլխավոր նստավայրը և շրջակա վայրերի բնակիչներին ստիպում են այստեղ գալ՝ իրենց հարկերը վճարելու համար: Նրանք ուտում, խմում և իրենց ձիերին կերակրում են մեր հաշվին և բացահայտորեն ցույց են տալիս, որ վճռել են մեզ մուրացկանի դրության հասցնել: Վերջերս մեր գյուղ եկան յոթ այլ ոստիկաններ, որոնք, նույնիսկ հարկեր հավաքելու պատրվակ չունենալով, ծեծի ենթարկեցին բնակիչներին, հայհոյեցին քրիստոնեական հավատը և պատվազրկեցին մեր կանանց ու աղջիկներին, այնուհետև բռնեցին երեք տղամարդկանց, որոնք բողոքում էին՝ Կոգլոյին, Մարտիկին և Գրիգորին, կապեցին նրանց կրկնակի շղթաներով ու գլխիվայր կախեցին գերաններից: Այնքան թոռեցին նրանց այդ վիճակում, մինչև արյունը նրանց քթից հորդաց: Խեղճ մարդիկ այդ խոշտանգման հետևանքով հիվանդացան: Ոստիկանները, սակայն, հրապարակավ հայտարարեցին, որ միայն

ոստիկանապետի հատուկ հրամանով էին այդ մարդկանց հետ այդպես վարվել: Այդ պատճառով մենք դիմում ենք կայսերական դատարաններին և խնդրում մեզ ազատել այս անտանելի վիճակից:

21 մարտի, 1895 թ.: Մելիքան գյուղի բնակիչներ:

Ստորագրյալ՝ Խաչեր»:

Այստեղ նույն կազա-շրջանից մեկ ուրիշ դիմում է՝ դարձյալ ուղղված Էրզրումի արքեպիսկոպոսին. «Երեկոյան ժամը տասին մի շարք ոստիկաններ հարկահանության պատրվակով ներխուժեցին մեր գյուղ՝ կոտրեցին մեր բնակարանների դռները, բռնեցին մեր կանանց ու երեխաներին և նրանց կիսամերկ փողոց նետեցին: Այնուհետև նրանք անգթորեն ծեծեցին ու չարչարեցին նրանց: Վերջում ընտրեցին մեր կանանցից շուրջ 30-ին, փակեցին նրանց մի մարագում ու բռնաբարեցին: Նախքան հեռանալը նրանք իրենց սովորության համաձայն հափշտակեցին մեր ունեցած ամբողջ անասնակերն ու պաշարները: Խնդրում ենք Ձեզ ի գիտություն ընդունել այդ իրադարձությունները և հայցել սուլթանի ողորմածությունը:

26 մարտի, 1895 թ.: Արաքի բնակիչներ:

Մուրադյան, Ռեսյան, Բերդոյան, Մելքոնյան»:

Ես Քյոփրիքյոյ գյուղում մի հայ գյուղացու տանն էի, երբ եկան մի քանի հեծյալ ոստիկաններ, տան բնակիչներին արթնացրին և անպատկառ տոնով իրենց համար սնունդ, ձիերի համար վարսակ ու գիշերելու համար կացարան պահանջեցին: Թե էլ ինչ կպահանջեին նրանք, չեմ կարող ասել, քանի որ ես տանտիրոջը դուրս բերեցի դժվարին դրությունից և մերժեցի ընդունել ոստիկաններին՝ տեղեկացնելով, որ ես տունը վարձել եմ գիշերվա ժամանակամիջոցի համար: Այսպիսով՝ զարմանալի չէ, որ Խնուսի գավառակի գյուղացիներն այն դիմումի մեջ, որն ինձ հանձնեցին՝

«Անգլիայի ազնիվ և մարդասեր ժողովրդին» ներկայացնելու խնդրանքով, բողոքում էին, որ «նախկին ծաղկուն ու արգասաբեր տարածքն այժմ ավերակված ու ամայացված է»:

Ուրեմն սրանք են այն զարհուրանքները, որոնց վերաբերյալ Անգլիայում որոշ լուսավորված մարդիկ հետևյալ կերպ են արտահայտվում. «Ա՜խ, այդ հայերն ու քրդերը հավերժական կռվի մեջ են, և մի քիչ ավել կամ պակաս արյունահեղությունը ոչինչ չի փոխում ընդհանուր իրադրության մեջ»: Որոշ իմաստով դա ճիշտ է, մասնավորապես, եթե կարելի է ասել, որ ոչխարներն ապրում են գայլերի հետ մշտական պատերազմի մեջ, այլապես, սակայն, ոչ: Մասնավորապես հայերը, առանց բացառության, խաղաղ մարդիկ են, գյուղում ամենաեռանդուն գյուղատնտեսները, իսկ քաղաքում՝ կրքոտ վաճառականներ: Այնուհանդերձ, այն դեպքում, եթե երբևէ նրանց պարտքի զգացումը կամ ինքնապահպանման բնազդը կամ իրենց խորապես արմատավորված սերն իրենց հարազատների նկատմամբ պետք է հաղթահարի ցանկացած արյունահեղության հանդեպ նողկանքին, ապա նրանց արգելված է զենք կրել, և այն քչերը, որոնք այդ արգելքին դեմ են գնում, այն կերպ են խոշտանգվում, որը պետք է նույնիսկ Կոնֆուցիուսի անզգա համախոհի դեմքը ամոթի կարմիրով պատի: Ո՛չ, հայերն իրենց պաշտպանության համար պետք է ապավինեն բացառապես թուրք զինվորներին և թուրքական օրենքներին:

Պաշտպանության այդ եղանակը, որը կրամադրվում է կայսերական զորքերի կողմից, ամենապարզ կերպով դրսևորվեց անցած օգոստոսին և սեպտեմբերին Թրֆեկարի [Trfekar] լանջերին ու Անդոկի լեռներում, Տալվորիկի հյուղակներում ու Գելիեգուզանի հովտում: Ոտնչոր, Համզաշեյխ, Քաքառլու, Կարաղըլ գյուղերը, որոնք 1890 և 1891 թվականներին ծաղկուն ու հարուստ բնակավայրեր էին, 1894 թ. նույնիսկ մեկ ոչխար չունեին, ոչ մի ձի, ոչ մի եզ: Ախոռներն ամայացել էին, շտեմարանները՝ դատարկվել, իսկ հացահատիկի 70 մեծ դեզերի մոխիրը պատմում էր մնացյալի

մասին: Դա քրդերի գործն էր, որոնց բարեկամները՝ թուրք զինվորները, տեղակայված էին այդ տարածքում, և այն էլ՝ 200 հեծյալներ Յոնջալուում՝ Ոտնչորից կես ժամվա հեռավորության վրա, 200-ը՝ Կոփում և 100-ը՝ Շեյխ Յաղուբում: Պաշտպանությունը, որ նրանք կարող էին տրամադրել, բաժին ընկավ քրդերին, իսկ նրանց վարձատրությունը կազմում էր ավարի մի մասը:

Պաշտպանությունը, որ տրամադրում են թուրքական օրենքները, ունի նմանատիպ բնույթ, միայն թե շատ ավելի աղետաբեր է այն հայերի համար, որոնք ապավինում են դրան: Որոշ փաստեր, որոնց ճշմարտացիությունը երաշխավորում է վկաների մի ողջ բանակ, որոնք արտասահմանյան հյուպատոսների կողմից երաշխավորված, պաշտոնական գրություններով հաստատված են, կարող են կանխավ բավականաչափ լույս սփռել այն յուրահատուկ ձևերի վրա, որոնք ընդունում է թուրքական արդարադատությունը Հայաստանում:

Մանկասար գյուղից Գևորգ Վարդանյանը, ի թիվս այլ բաների, վկայում է նաև հետևյալը. «1892 թ. Անդոն անունով մի քուրդ՝ Քերեվաշի որդին (Ջալալ ցեղից), իր ընկերների հետ եկավ իմ տուն ու 5 ֆունտ ոսկով, խլեց, որ հավաքել էի՝ սերմացու գնելու համար: Ես նրա դեմ բողոք ներկայացրի, բայց իշխանությունն ինձ արհամարհանքով մերժեց: Երբ Անդոնը լսեց, որ ես իր դեմ բողոքել եմ, մի գիշեր 12 տղամարդկանց հետ դարձյալ եկավ, դարանակալեց տանիքին ու երդիկից կրակ բացեց տան մեջ: Հարսս՝ Յեզեկոն, մի գնդակից խոցվեց ու մահացավ: Նրա երկու որդիներն ու իմ երկամյա զավակը՝ Միսաքը, նույնպես սպանվեցին: Այնուհետև քրդերը ներխուժեցին տուն և վերցրին իմ կահույքը, հագուստը, 4 եզներն ու 4 կովերը: Ես շտապեցի Կարաքիլիսե գյուղը և բողոքեցի Ռահիմ փաշային: Ինձ լսելուց հետո նա ասաց. «Համիդեականները սուլթանի մարտիկներն են: Նրանք իրավունք ունեն այդպես վարվելու: Դուք՝ հայերդ, ստախոսներ եք»: Եվ

մենք բանտ նետվեցինք: Մեզ ազատ չարձակեցին, մինչև ոսկով 2 ֆունտ չվճարեցինք:

Հաջորդ ձմռանը հենց իր՝ Ռահիմ փաշայի գլխավորությամբ 200 զինվորներ եկան մեր գյուղ: Նա մեզ անմիջապես ասաց, որ անօրինական է քրդերի արարքների դեմ բողոքելը: Ապա նա իր ջոկատների հետ միասին տեղավորվեց մեզ մոտ և օրական պահանջում էր ութ ոչխար, 10 պարկ վարսակ և, դրանից բացի, հավկիթ, հավեր ու կարագ: 40 օր շարունակ մեր գյուղն անվճար տրամադրում էր այդ ամբողջ սննդամթերքը: Որպես վարձատրություն՝ մենք ծեծ ու հայհոյանքներ ստացանք: Ռահիմ փաշան, որը բարկացավ իր տանտիրոջ՝ Փարեի վրա, քանի որ նա քրքմնջացել էր քթի տակ, հրամայեց խարույկի վրա մի պղնձյա կաթսա շիկացնել և հագցնել Փարեի գլխին: Այնուհետև նա ամբողջովին մերկացրեց նրան ու կարգադրեց աքցաններով ճմլել ձեռքերն ու ոտքերը:

Հազիվ էին այս ստորները հեռացել մեր գյուղից, երբ եկավ Աիփե փաշան՝ 60 հեծյալներով: Երբ նրանք տեսան, որ գյուղում այլևս հափշտակելու ոչխար չկար, մորթեցին և կերան մեր եզներն ու կովերը: Վեց օր շարունակ բոլոր հնարավոր եղանակներով մեզ ահաբեկելուց հետո նրանք ևս կրկին հեռացան: Ո՞ւմ կարող էինք ներկայացնել մեր բողոքները, երբ պաշտոնյաներն իրենք էին նման բաներ անում: Մեզ այլ բան չէր մնում անելու, քան հեռանալ երկրից, ինչը և արեցինք»:

Մեկ այլ դեպք, որի զոհը մի հայ բողոքական քարոզչի կինը՝ տիկին Սուքիասյանն էր՝ Տոտվերան գյուղից. ես անձամբ ճանաչում եմ այդ ընտանիքը և ունեմ նրա բոլոր անդամների լուսանկարները, նաև՝ տիկնոջ, որը հետագայում սպանվեց: «1894 թ. սեպտեմբերի 12-ին (պատմում է Արմենակ Սուքիասյանը՝ այդ կնոջ որդին) մենք իմ հայրական տանը նստած էինք սեղանի շուրջ, երբ մի տղա եկավ և մեզ ասաց, որ թուրքերն ու քրդերը եկել ու հարձակվում են քրիստոնյաների վրա: Եղբայրս դուրս եկավ փողոց և գնաց մեր խանութը՝ ատրճանակ բերելու: Այդ ընթաց-

քում 16 քրդեր ներխուժեցին փողոց, բարձրացան տանիքների վրա և սկսեցին կրակել: Մենք բարիկադավորեցինք դռները, բայց նրանք կոտրեցին դրանք: Մի գնդակ դիպավ մայրիկիս ուսին, սակայն առանց նրան լրջորեն վիրավորելու: Այժմ նա պաշտպանվում էր՝ տանիքից քարեր նետելով: Մի մահեղական վեր բարձրացրեց իր հրացանը, խնամքով նշան բռնեց ու սեղմեց ձգանը: Գնդակը խոցեց նրա այտն ու ականջի տակով կրկին դուրս եկավ՝ պատառոտելով դեմքի կեսը: Նա ընկավ, տուն բերվեց, ջուր ուզեց և հաջորդ առավոտ մահացավ: Մենք բողոքեցինք, բայց ոչ ոք չպատժվեց:

Եվս մի բնութագրական օրինակ, և այնուհետև ես կավարտեմ իմ փաստարկման այս հատվածը: Դեպքը, որի մասին այժմ պատմելու եմ, վերցված է ոչ թե սոսկ մասնակից անձանց վկայություններից, այլև պաշտոնական զեկույցներից՝ ստորագրված և կնքված կառավարական պաշտոնյաների կողմից, որոնց ես անձամբ հանդիպել եմ: Այն լույս է սփռում թուրքական արդարադատության վրա և մեծ դաս է բովանդակում այն մարդկանց համար, որոնք դեռ շարունակ հավատում են թուրքական խոստումներին, այլ ոչ թե ամենապերճախոս բացահայտումներին:

1890 թ. հունիսին Արուճագրակ գյուղում կրկնակի հանցագործություն կատարվեց: Հայ հովիվները, որ արածեցնում էին հոտերը, մեծագույն վրդովմունքի մեջ, վազելով եկան գյուղ և օգնություն կանչեցին. «Իբիլ-Օղլու Իբրահիմի քրդերն իրենց երամակներով եկել ու մեզ վռնդել են մեր արոտավայրից»: Սա Թուրքահայաստանում տեղի ունեցող սովորական միջադեպերից մեկն է: Չորս երիտասարդներ դուրս եկան՝ քրդերի հետ բանակցելու: Նրանք, սակայն, հազիվ էին տեղ հասել, երբ քրդերը կրակ բացեցին ու երիտասարդներից մեկին՝ Հովսեփ անունով, տեղում սպանեցին: Երկրորդը վիրավորվեց. նրա անունը Հարություն էր: Նրանց ընկերները, մահու չափ վախեցած, ետ փախան գյուղ: Մարդիկ սարսափի մեջ դադարեցրին իրենց աշխատանքը: Քա-

հանան և տեղի անվանի մարդկանցից մի քանիսը գնացին սպանության վայրը, մինչդեռ մյուսները սլացան՝ ժանդարմերիային տեղեկացնելու: Շուտով եկան զապթիեները (ժանդարմները)՝ կառավարության մի պաշտոնյայի ուղեկցությամբ: Նրանք Հովսեփին տեսան մեռած վիճակում, իսկ տեղի քահանա տեր Հովհաննեսին՝ մահացող Հարությունին՝ վերջին հաղորդությունը մեկնելիս: Նրանք իսկույն հրամայեցին դադարեցնել աղոթքը և սպառնալից տոնով հարցրին. «Որտե՞ղ են քուրդ մարդասպանները»: «Նրանք փախել են», եղավ պատասխանը: «Այդպե՜ս, հավանաբար դուք եք նրանց սպանել, դո՛ւք, շնե՛ր, և թաքուն թաղել եք: Դուք բոլորդ ձերբակալված եք»: Եվ դառնալով քահանային. «Դու նույնպես, առա՛ջ»: Նրանք բոլորին տարան Հասանկալե և նետեցին այնտեղի գարշելի բանտը: Որոշ ժամանակ անց նրանց տեղափոխեցին Էրզրումի բանտը: Տեղի քահանա տեր Հովհաննեսը ունևոր մարդ էր: Կողոպուտի համակարգն այն ժամանակ դեռ նոր-նոր էր մեկնարկում: Նրա եղբայր Կարապետը և 10 բախտակիցները նույնպես լավ պայմաններում էին ապրում, և այդ պատճառով պաշտոնյաներն ավելի ցանկալի համարեցին նրանց ունեցվածքն ուրիշ ձեռքերի փոխանցել: Այդ պատճառով նրանց թողեցին՝ փտելու արևելյան քայքայված բանտի գարշահոտի մեջ: Ժամանակը սողում էր՝ օր օրվա, շաբաթ շաբաթվա վրա, մինչև սկսեց թվալ, որ նրանք բոլորովին մոռացության են մատնվել: Նրանց հարազատներն անվերջ մահվան սարսափի մեջ էին, նրանց տնտեսությունը փլուզվեց, առողջությունը քայքայվեց: Այդ դժոխքում նրանք անցկացրին մի ամբողջ տարի՝ իրենց կյանքի ամենասարսափելի ժամանակահատվածը:

Ի վերջո նրանք խոնարհաբար աղերսեցին իրենց հետապնդողներին ազատ արձակել իրենց և որոշել փրկագնի չափը: Ձեռք բերվեց համաձայնություն, և նրանց առաջարկեցին քրդեր ուղարկել՝ դուրս գալու քուրդ մարդասպանների հետքի վրա, որոնք իրենց հերթին մեղադրվում էին վերոնշյալ սպանությունների հա-

մար: «Եթե նրանց գտնեն, դուք ազատ կարձակվեք»: Այդ առաջարկի և դրա իրականացման ծախսը կազմեց 400 ֆունտ, որի 40 %-ը նրանք ստիպված էին փոխ առնել: Բնականաբար, հետաքննությունը հաջողությամբ պսակվեց: Քուրդ և թուրք ավազակները, որ միայն քրիստոնյաների են սպանել, կարիք չունեն թաքնվելու կամ երկյուղելու: Ինչ նրանք անում են, լավ է արվում: Տվյալ հերոսները, հետևապես, ի վերջո գտնվեցին, և այն էլ՝ որպես նորին մեծության սիրելի զորախմբի՝ համիդեական հեծելազորի ծառայողներ Ալաշկերտում: Նրանք խոստովանեցին և չժխտեցին: Վկաների մի բանակ (իհարկե, բաղկացած թուրքերից ու քրդերից, քրիստոնյաները նպատակահարմար չեն նման գործողության համար) ցուցմունք տվեց ի նպաստ 12 բանտարկյալ հայերի, որոնք այնուհետև ազատ արձակվեցին, իհարկե, դատարկված քսակով և քայքայված առողջությամբ: Դատարանի վճռում նշվում էր, որ հայերը, որոնք մեղադրվել էին երկու հայի սպանած որոշ քրդերի սպանության մեջ, ապացուցել են իրենց անմեղությունը, քանի որ տվյալ քրդերը ողջ ու առողջ հայտնաբերվել են որպես համիդեական հեծելազորայիններ հավատացյալների տիրակալին ծառայելիս:

Քուրդ մարդասպանների, որոնց թանկագին կյանքի համար այդքան շատ նրբանկատություն էր ցուցաբերվել, նույնիսկ մի մազը չծռվեց: Նրանք, ինչպես նախկինում, նույն եռանդով և նույն հավատարմությամբ ծառայում են Նորին մեծությանը՝ սուլթանին:

Շունը հաչում է, երբ իր կողքին մեկ ուրիշ շան սպանում են: Այդ հայերը նույնիսկ չփնթփնթացին, նրանք միայն դիմեցին կայսերական արդարադատության ներկայացուցիչներին, իսկ սրանք այնուհետև նրանց հետ վարվեցին որպես մարդասպանների: Հայաստանում, սակայն, քրիստոնյաները չեն համարձակվում նույնիսկ իրենց հանդեպ այնպիսի վերաբերմունքի պահանջ ներկայացնել, որպիսին հնազանդ շներն են ստանում կարգին տերերի կողմից:

Պատմությունները, որոնք պտտվում էին ընդհանրապես այդ համիդեական սպաների և առանձնապես նրանցից մեկի՝ Մոսթիգոյի շուրջ, այն աստիճան անհավանական էին թվում, որ ես մեծ ջանք գործադրեցի՝ պարզելու, թե դրանցից որքանն է իրական: Երբ իմացա, որ այդ (որոշ չափով) սատանայի եղբայրը ձերբակալված է և որպես վտանգավոր հանցագործ Էրզրումի բանտում է գտնվում, որտեղ հավանաբար կախաղան կհանվի, որոշեցի, եթե հնարավոր լինի, նրա հետ հանդիպում ունենալ՝ ճշմարտությունը նրա բերանից լսելու համար: Սկզբում դա չէր ուզում հաջողվել, քանի որ մարդասպանը շատ խիստ հսկողության տակ էր գտնվում: Երեք շաբաթ շարունակված տնական ջանքերից հետո, երբ նաև բավականաչափ լցրել էի բանտի վերակացուի քսակը, ստացա նրա թույլտվությունը: Այնուհետև ես կաշառեցի հենց ավազակին, և արդյունքը եղավ այն, որ Մոսթիգոն թույլտվություն ստացավ բանտից ծածուկ դուրս գալ և վեց ժամ անցկացնել իմ սենյակում, որից հետո պետք է ետ տարվեր բանտ:

Երբ սահմանված օրը եկավ, բանտի վերակացուն հրաժարվեց կատարել իր հանձնառությունը՝ վախենալով, որ հանցագործը փախուստի փորձ կկատարեր: Ինձ, սակայն, հաջողվեց նրա համար երկու պատանդ վերցնել: Նրանցից մեկը մի քուրդ համերկրացի էր, որին ավազակը, պատվի իր հասկացողության համաձայն, երբեք չէր զոհաբերի՝ նույնիսկ իր սեփական կյանքը փրկելու համար: Վերջապես մի երեկո նա ինձ մոտ եկավ՝ տանիքների վրա մագլցելով, որպեսզի ոստիկանները, որոնք պահակ էին կարգված իմ դռան առաջ, իրեն չնկատեին: Ես ամբողջ գիշեր պահեցի նրան, ներկայացրի նրան քաղաքի ամենաանվանի եվրոպացիներից երկուսին և, վերջապես, հաջորդ առավոտյան լուսանկարվեցի նրա հետ՝ այս մասին որևէ կասկածի ի հայտ գալը բացառելու համար: Այդ պատվախնդիր քրդի հաղորդումը մի հրաշալի պարզաբանում է Հայաստանում թուրքական կառավարման համակարգի վերաբերյալ: Ցավոք, չեմ կարող այն այստեղ

ամբողջությամբ ներկայացնել: Պետք է բավարարվել որոշ հակիրճ հատվածներով:

Հարց. «Դե՛, Մոսթիգո՛, ես ցանկանում եմ քո սեփական բերանից լսել քո մեծագործություններից մի քանիսի մասին: Ես գրի կառնեմ դրանք՝ մեծամեծներին ներկայացնելու համար»:

Պատասխան. «Ճիշտ այդպես: Հաղորդի՛ր դրանք 12 տերություններին»: Նա ակներևաբար պատկերացում չուներ պատասխանատվության զգացումից, և նաև վախի ոչ մի նշույլ չկար դատական պատժից: Եվ, այնուամենայնիվ, նա պետք է պատժվեր, արդեն ասվել էր, որ նա մահվան է դատապարտվել: Ես ցանկացա պարզաբանել այդ կետն ու շարունակեցի:

Հարց. «Ցավում եմ՝ քեզ բանտում տեսնելու համար: Երկա՞ր ժամանակ է, ինչ այնտեղ ես»:

Պատասխան. «Ինքս էլ եմ ցավում: Հինգ ամիս, բայց մի ամբողջ կյանք է թվում:

Հարց. «Հավանաբար հայերն են դրանում մեղավոր»:

Պատասխան. «Իհարկե»:

Հարց. «Ինչպես լսել եմ, դու նրանցից շատ-շատերին ես այն աշխարհ ուղարկել, նրանց կանանց առնանգել, նրանց գյուղերը հրի մատնել և կյանքը դառնացրել»:

Պատասխան. «Դա իմ բանտարկության հետ կապ չունի: Ես հայերին թալանելու համար չէ, որ պատժվում եմ: Բոլորս էլ դա անում ենք: Ես հազվադեպ էի սպանում, միայն այն ժամանակ, երբ նրանք դիմադրություն էին ցուցաբերում: Բայց հայերը մատնեցին ինձ, և ես ձերբակալվեցի: Դա նկատի ունեմ: Եթե, սակայն, կախաղան հանվեմ, ապա դա կլինի միայն այն պատճառով, որ *թուրքական փոստն* եմ թալանել և պատվազրկել եմ մի *թուրք գնդապետի* կնոջը, որը հիմա այստեղ՝ Էրզրումում է: Սակայն ոչ հայերի պատճառով: Ի՞նչ են նրանք, որ ես նրանց պատճառով տառապեի»:

Այն բանից հետ, երբ նա մի քանի արկածներ պատմեց, թե ինչպես էր քրիստոնյա կանանց անարգել, հայ գյուղացիներին սպանել, փոստը թալանել և բանտից խուսափել, շարունակեց. «Մենք դրանից հետո մեծ գործեր կատարեցինք, գործեր, որոնք կզարմացնեն 12 տերություններին, եթե նրանք այդ մասին լսեն: Մենք հարձակվում էինք գյուղերի վրա, սպանում մարդկանց, որոնք կսպանեին մեզ, թալանում տները և հափշտակում փող, գորգեր, կանանց ու ոչխարներ: Մեծ էին մեր գործերը, և բոլորն էին խոսում դրանց մասին:

Երբ ես նրան այդ «մեծ գործերից» մի քանի մասին պատմել էի տվել, որոնց ժամանակ երբեմն մոտ 50 մարդիկ էին սպանվել, հարցրի.

Հարց. «Հայերը հաճա՞խ էին դիմադրություն ցույց տալիս, երբ դուք հափշտակում էիք նրանց անասուններն ու կանանց»:

Պատասխան. «Ոչ հաճախ: Նրանք չեն կարող: Նրանք զենք չունեն և չափազանց լավ գիտեն, որ դա անօգուտ կլիներ նույնիսկ, եթե մերոնցից մի քանիսին սպանեին, քանի որ մյուս քրդերը կգային և վրեժ կլուծեին: Թուրքերն ատում են նրանց, մենք՝ ոչ: Մենք միայն փող ու ավար ենք ուզում, իսկ որոշ քրդեր՝ նրանց հոները: Թուրքերը նրանց մահն են ուզում: Մի քանի ամիս առաջ ես հարձակվեցի հայկական Կարաքյոփրու գյուղի վրա և քշեցի-տարա բոլոր ոչխարները: Նույնիսկ մեկը չթողեցի: Հուսահատության մեջ ընկած՝ գյուղացիները հետապնդեցին մեզ և մի քանի անգամ կրակեցին մեզ վրա, բայց դրա մասին չարժի խոսել: Մենք ոչխարները քշեցինք Էրզրում՝ այնտեղ վաճառելու համար: Ճանապարհին, սակայն, Շեն գյուղի մերձակայքում մարտի բռնվեցինք: Գյուղացիները գիտեին, որ մենք խլել էինք իրենց հայրենակիցների ոչխարները, և հարձակվեցին մեզ վրա: Մենք՝ քրդերս, միայն հինգն էին, իսկ նրանք՝ մեծաթիվ, ամբողջ գյուղն էր մեր հետևից ընկել: Մեր մարդկանցից երկուսը (հասարակ ծառաներ) սպանվե-

ցին: Մենք սպանեցինք 15 հայի: Նրանց հաջողվեց մեզնից 40 ոչխար խլել: Մնացածին պահեցինք և վաճառեցինք Էրզրումում»:

Հարց. «Հաճա՞խ եք մեծ թվով հայերի սպանել»:

Պատասխան. «Այո՛, բայց մենք իրականում դա չէինք ցանկանում: Մենք միայն ավար ենք ուզում, ոչ թե մարդկային կյանքեր: Մարդկային կյանքը մեզ համար արժեք չունի: Երբեմն, սակայն, ստիպված էինք լինում նրանց վրա կրակել՝ լռեցնելու համար, նկատի ունեմ, երբ նրանք դիմադրություն էին ցուցաբերում»:

Հարց. «Հաճա՞խ էիք դաշույններ օգտագործում»:

Պատասխան. «Ո՛չ, սովորաբար մեր հրացաններն էինք գործի դնում: Մենք պետք է ապրենք: Աշնանը հոգում ենք այն մասին, որ բավականաչափ հացահատիկ և փող ձեռք բերենք՝ ձմեռն անցկացնելու համար: Մենք անասուններ էլ ունենք, բայց այնքան էլ չենք զբաղվում դրանցով: *Մենք պալիս ենք դրանք հայերին, որպեսզի նրանք խնամեն ու կերակրեն դրանց*»:

Հարց. «Իսկ եթե նրանք հրաժարվո՞ւմ են»:

Պատասխան. «Օ՜, այդ դեպքում մենք տանում ենք նրանց ոչխարները, հրկիզում նրանց տները, խոտն ու հացահատիկը: Եվ այդ դեպքում նրանք նախընտրում են չհրաժարվել: Գարնանը մենք մեր անասունները հետ ենք վերցնում, և հայերը պետք է տան այն քանակը, որը ստացել էին»:

Հարց. «Իսկ եթե անասունները սատկո՞ւմ են ինչ-որ համաճարակից»:

Պատասխան. «Դա հայերի խնդիրն է: Նրանք պետք է վերադարձնեն այն, ինչ ստացել են, կամ առնվազն նույն թվաքանակը: Նրանք դա լավ գիտեն: Մենք չենք կարող կորուստը հանդուրժել, իսկ նրանք՝ ինչո՞ւ ոչ: Մեր գրեթե բոլոր ոչխարները նրանց ունեցածից են»:

Նրա ասպատակությունների, սպանությունների, ավազակային հարձակումների, առևանգումների և այլնի մասին մի շարք պատմություններ լսելուց հետո դարձյալ հարցրի. «Մոսթիգո՛, կա-

րո՞ղ ես նման ուրիշ քաջագործությունների մասին ևս պատմել, որ ես այդ մասին տեղեկացնեմ 12 տերություններին»: Ես ստացա հետևյալ բնութագրական պատասխանը. «Մի անգամ գայլին խնդրեցին. պատմի՛ր մեզ մի քիչ այն ոչխարների մասին, որոնց դու հոշոտել ես: Եվ նա ասաց՝ ես հազարավոր ոչխարներ եմ կերել, դրանցից որո՞նց մասին պատմեմ: Այդպես է նաև իմ կատարած գործերի դեպքում: Եթե երկու օր շարունակ պատմեմ, մեկ է՝ շատ բան կմնա չհիշատակված»:

Այս ավազակը քուրդ է, իսկ նման քրդեր շատ կան: *Ex uno disce omnes* (ամբողջը սովորե՛ք մեկից): Հայերին հալածողների շարքում, սակայն, քրդերն իրենց դրսևորել են ամենամարդկային ձևով: Երբ այդ մարդը փողի կարիք էր ունենում, նա թալանում էր, հեշտասե՞ր էր, ուրեմն պատվազրկում էր կանանց ու աղջիկներին, երբ իր ավարն էր պաշտպանում, սպանում էր տղամարդկանց ու կանանց, և այդ ամենով հանդերձ, իրեն լիովին ապահով էր զգում երբևէ պատասխանատվության ենթարկվելուց, քանի դեռ իր զոհերը հայեր էին: Կարելի է հարցնել, բայց մի՞թե այնտեղ օրենքներ չկան: Օ՜, այո՛, կան օրենքներ և այնտեղի պայմանների համար՝ բավականին լավ, եթե միայն կիրառվեն, քանի որ նա այն պահին, երբ կայսերական փոստը թալանեց և պատվազրկեց մի թուրք կնոջ, դատապարտվեց մահվան:

Այսպիսով՝ *օրենքները, բարենորոգումների առաջարկները և սահմանադրությունը, նույնիսկ եթե դրանք ամենաիմաստուն օրենսգիրների և քաղաքական գործիչների կողմից ստեղծված լինեն, չեն ունենա այն թղթի արժեքը, որոնց վրա գրված են, քանի դեռ թուրքերն իրավունք ունեն դրանք առանց վերահսկողության կիրառելու*: Դրա անհերքելի ապացույցն են տալիս վերջին 50 տարվա ընթացքում ցանկացած պահի թուրք պաշտոնյաների վարած կյանքն ու կատարած գործողությունները:

Ես այստեղ ունեմ, օրինակի համար, մի թուրք պաշտոնյայի և օրենքի պահապանի, այն է՝ նորին գերազանցություն Հուսեին

փաշայի՝ նորին մեծություն սուլթանի բրիգադային գեներալի վերաբերյալ զեկուցագիրը: Այդ զեկուզագիրը միանգամայն վստահելի է: Հուսեինը գլխավորում էր քրդական մի ավազակախումբ, որը նա կարողացավ մինչև մոտ 2000 մարդկանցով համալրել, և ահա շարունակ պատուհասում էր նահանգի խաղաղ բնակիչներին սպանություններով, հրկիզումներով ու բռնաբարություններով, մինչև բանը հասավ նրան, որ անգամ միայն իր անունն ամենասրտոտ մարդկանց ահ ու սարսափով էր համակում: Պատնոցի հայերն այնքան տառապանքներ կրեցին նրա կողմից, որ լքեցին իրենց գյուղն ու զանգվածաբար գաղթեցին Կարաքիլիսե, որը կայմակամի նստավայրն էր: Դրանից հետո Հուսեինը մի մեծաքանակ զորախմբով շրջապատեց Կարաքիլիսեի եպիսկոպոսի տունը և ստիպեց նրան այդ մարդկանց դարձյալ հետ ուղարկել: Նույնիսկ մահմեդականներն այնքան վրդովված էին նրա խայտառակ արարքից, որ Պատնոցի մահմեդական առաջնորդը՝ շեյխ Նարին, նրա դեմ բողոք ներկայացրեց Էրզրումի վալիին: Ի պատասխան դրա՝ Հուսեինը մարդիկ ուղարկեց, որոնք սպանեցին շեյխ Նարիին, իսկ նրա հարսին այնպես վախեցրին, որ մահացավ: Միայն մեկ ավազակային հարձակման ժամանակ քշեց-տարավ 2600 ոչխար, բազմաթիվ ձիեր և այլն, հափշտակեց 500 ֆունտ, հրի մատնեց 9 գյուղեր, սպանեց 10 տղամարդկանց և կտրեց 11 ուրիշների քթերը, ականջներն ու ձեռքերը: 1890 թ. սկզբին նա Պատնոցից 5 քրիստոնյա աղջիկների առևանգեց, իսկ նույն տարվա սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին այդ շրջանի բնակչությունից գանձեց 300 ֆունտ ռազմատուգանք: Նա այդ հանցանքներից ոչ մեկի համար երբևէ պատասխանատվության չենթարկվեց: 1890 թ. դեկտեմբերին նա իր եղբորն ուղարկեց՝ էլ ավելի մեծ գումար գանձելու: Դա տեղի ունեցավ Այնթապի շրջանի 21 գյուղերի թալանով, իսկ ավարը կազմեց 350 ֆունտ և 200 բաթման:

Պատնոցից Հացո անունով մի հայի կնոջն ու 2 երեխաներին սպանեցին, քանի որ նա հրաժարվում էր մի կլորիկ գումար վճարել: Այդ ամբողջ ժամանակ ազնվաբարո Հուսեինը զբաղեցնում էր կայսերական թուրքական կառավարության մուդիրի կամ փոխկառավարչի պաշտոնը: Մի օր նա Պատնոցից ու Քիզիլոհից [Kiziloh] 1000 ոչխար և 7 լուծ եզներ հափշտակեց ու Էրզրումում վաճառեց մի վաճառականի: Այնուհետև նա բռնագրավեց մի գեղեցիկ նժույգ, որը պատկանում էր Մանուկ անունով մի հայի, և նվիրեց այն Էրզրումի դատավորներից մեկի որդուն: Մի գիշեր՝ 1891 թ. փետրվարի վերջին, Հուսեինը, իր զարմիկն ու ուրիշներ խուժեցին Գասպար անունով մի հայի տունը՝ նրա գեղեցկուհի հարսին առևանգելու մտադրությամբ: Այնուհանդերձ, երբ տան բնակիչները սկսեցին օգնություն կանչել, Հուսեինը բարձրացրեց ատրճանակն ու սպանեց կնոջը: Էրզրումի վալիին ներկայացվեց մի դիմում՝ Հուսեինին պատժելու խնդրանքով: Վալին, սակայն, հրաժարվեց ընդունել այն, իսկ Հուսեինը գործուղվեց Կոստանդնուպոլիս, այնտեղ հանդիսավոր ընդունելություն ստացավ, պարգևատրվեց նորին մեծության կողմից, արժանացավ փաշայի կոչման և նշանակվեց բրիգադային գեներալ: Երբ զորքերն անցած տարի շարժվեցին Մուշ ու Սասուն, Հուսեինը «հերոսներից» մեկն էր, և երբ «խաղաղությունը վերահաստատվել էր», նա վերադարձավ բազմաթիվ սասունցի աղջիկների հետ, որոնց առևանգել է, և այժմ ապրում է երջանիկ ու հարգված:

Անկասկած, կան առաջադրանքներ, որոնք կարող են վստահվել բրիգադային գեներալ Հուսեին փաշայի տեսակի՝ մի պատվավոր մարդու: Մի՞թե, սակայն, քրիստոնյա ժողովրդի կառավարությունն այդպիսին է: Եվ եթե նույնիսկ ընդունենք, որ Էրզրումի այն ժամանակվա վալին ու մյուս պաշտոնյաները նրա համեմատությամբ բարոյական ավելի բարձր մակարդակ ունեին, ապա ի՞նչ արժեք ունեն նրանց բարձր պատվախնդրությունը և ազնիվ ու սքանչելի մտադրությունները, երբ Հուսեինի նման մար-

դուն թույլ են տալիս անարգել թալանել, հրկիզել ու սպանել: Եվ արդյո՞ք խելամիտ է նրան մեղադրել այդպիսի արարքների համար, որոնց իրականացումից հետո նա բարձրագույն դատական և ոստիկանական իշխանության տիրոջ կողմից մեծարվում ու պարգևատրվում է:

Ոչ բոլոր պաշտոնյաներն ունեն նույն ճաշակն ու քաջության նույն աստիճանը, ինչ նորին գերազանցություն Հուսեին փաշան: Կան նաև այնպիսիները, ովքեր, ինչպիսին էլ լինեն իրենց հակումները, իրենց պաշտոնական դիրքի գիտակցումով պարտավորված են զգում իրենց, առնվազն պատրվակներ են փնտրում իրենց ծայրաստիճան արտառոց արդարադատության իրականացման համար: Եվ այն անմտությունները, որոնց նրանք դիմում են այդ ընթացքում, անհավատալի կթվային, եթե իրական չլինեին: Հետևյալ դեպքն ուսումնասիրվել և հաստատվել է արտասահմանյան տերությունների ներկայացուցիչների կողմից: 1893 թ. գարնանը Հասիբ փաշան՝ Մուշի գավառապետը, կարծում էր, որ Ավզուտում և հարևան գյուղերում հայերի անհնազանդության վերաբերյալ ապացույցների կարիք ուներ: Այդ պատճառով նա ոստիկանապետ Ռեշիդ էֆենդիին ուղարկեց՝ զենքեր փնտրելու: Ռեշիդը գործի անցավ և մանրազնին հետախուզություններ ձեռնարկեց տներում, տանիքների վրա, հողի տակ. ապարդյուն: Ոչ մի տեղ հնարավոր չեղավ հրազեն գտնել: Նա վերադարձավ և հայտնեց, որ մարդիկ բարեխղճորեն հետևել են այն օրենքին, որը նրանց արգելում է ցանկացած տեսակի զենք կրել: Հասիբ փաշան, սակայն, կատաղեց. «Ինչպե՞ս կարող ես համարձակվել և ինձ մի բան հաղորդել, որի մասին ես գիտեմ, որ ճիշտ չէ: Իսկույն ելեք ետ գնա՛ և գտի՛ր հրազենները: Չհամարձակվե՛ս առանց դրանց վերադառնալ»: Ոստիկանապետը գնաց այնտեղ և խուզարկեց տների բոլոր անկյուններն ու ոչինչ չգտավ: Այդ ժամանակ նա հրամայեց գյուղի ավագին իր մոտ գալ և ասաց. «Ես այստեղ եմ ուղարկվել՝ այստեղ թաքցված զենքերը հայտնաբերելու

համար: Ասա ինձ՝ որտե՞ղ են դրանք»: «Բայց այստեղ ոչ մի զենք չկա»: «Պետք է լինեն»: «Ես վստահեցնում եմ քեզ՝ դու մոլորությանմեջ ես»: «Լավ, լսի՛ր, ես պետք է այստեղ զենքեր գտնեմ՝ անկախ նրանից՝ դրանք այստեղ կա՞ն, թե՞ ոչ, և իրավունք չունեմ՝ առանց դրանց վերադառնալու: Այսպես, եթե դուք ինձ զենքեր չհանձնեք, ես իմ մարդկանց հետ կտեղավորվեմ ձեզ մոտ»: Քանի որ դա մոտավորապես այնպես հնչեց. «Ես ձեզ կբալանեմ»: Գյուղապետն ընկավ շվարած դրության մեջ: «Ի՞նչ պետք է անենք»,– հարցրեց նա,– «մենք զենքեր չունենք»: «Ուրեմն ճարե՛ք, գողացե՛ք, գնե՛ք, ինչպես ուզում եք, բայց բերել պարտավոր եք»: Այդպիսով՝ երկու-երեք հոգի ուղակվեցին ամենամոտիկ քրդական գյուղը: Այնտեղ նրանք գնեցին երեք լի սայլաբեռ հին դաշույններ, ժանգոտած թրեր և կայծքարավոր հրացաններ ու ամբողջն ամենայն բարեխղճությամբ հանձնեցին Ռեշիդին: Վերջինս դրանց հետ միասին հաղթականորեն վերադարձավ Մուշի գավառապետի մոտ: Երբ Հասիբ փաշան աչքի անցկացրեց զենքերը, մեծապես ուրախացավ ու ասաց. «Տեսնո՞ւմ ես, որ ես ճիշտ էի: Ես Քեզ ասում էի, որ այնտեղ թաքցված զենքեր կան: Դու պարզապես բավականաչափ լավ չէիր փնտրել: Հաջորդ անգամ ավելի խելամիտ կլինես»:

Վերթո Փոփաքյանը՝ Խալիլ-Չավուշ գյուղի մի բնակիչ, պատմեց հետևյալ պատմությունը, որը հետաքրքրականորեն լույս է սփռում թուրքական արդարադատության և հայ գյուղացիության կենսակերպի վրա. «Ջունդե անունով մի քուրդ փորձեց առևանգել զարմուհուս՝ Նազոյին: Մենք, սակայն, նրան տարանք Էրզրում և ամուսնացրինք մի հայի հետ: Մենք հաճախ ենք ստիպված լինում ամուսնացնել աղջիկներին, երբ նրանք դեռ 11-12 տարեկան երեխաներ են, կամ հագցնել տղայի պես՝ հետապնդումներից նրանց պաշտպանելու համար: Նազոյի ամուսինը Հերթն համայնքային քահանայի որդին էր: Քրդերը երդվեցին վրեժ լուծել՝ իրենց ձեռքից աղջկան խլելու համար: Ջունդեն եղբորս այնպես սարսափելի ծե-

ծեց, որ նա համարյա վեց ամիս հիվանդ վիճակում էր, և նա ու իր մարդիկ հափշտակեցին իմ անասունները, հրկիզեցին մեր հացահատիկն ու խոտը և լիովին ավերակեցին մեզ: Երբ աղջիկը մի անգամ հյուր էր եկել մեզ, քրդերը հարձակվեցին տան վրա և առևանգեցին նրան: Մենք բողոքեցինք տեղական և Էրզրումի բոլոր իշխանավորներին: Երբ նրանք վերջապես վճռեցին աղջկան հարցաքննել, նա քրդի համար արդեն երեխա էր ծնել և ամաչում էր վերադառնալ: Նա մնաց մահմեդական: Այնուհետև մենք հրացան գնեցինք՝ մեզ պաշտպանելու համար, քանի որ այն օրենքը, որն արգելում է հրազեն կրել, դեռ չկար: 1893 թ. մենք զենքը վաճառեցինք Հաջի Դահո անունով մի քրդի, բայց 1894 թ. ոստիկանությունը եկավ ու պահանջեց հանձնել զենքը: Մենք ասացինք, որ վաճառել ենք այն, և քուրդը հաստատեց մեր վկայությունը: Նա նույնիսկ ցույց տվեց այն, բայց նրանք ձերբակալեցին ինձ ու եղբորս և մեզ ստիպեցին իրենց հանձնել մեր երկու եզները՝ երկու հրացանների դիմաց, որոնք՝ որպես մեր դեմ մեղադրական ապացույց, այնուհետև նրանք պահեցին իրենց մոտ: Հետո մեզ տարան Էրզրումի բանտը: Այնտեղ մենք երկար ժամանակ մնացինք և շատ խոշտանգումների ենթարկվեցինք: Ութ ամիս անց եղբայրս մահացավ՝ ցուցաբերված վատ վարմունքի պատճառով: Այնուհետև ինձ խոստացան ազատություն այնպիսի բարձր փրկագնի դիմաց, որն ինձ հասցրեց մուրացկանության շեմին: Ես ընտրություն չունեի, նրանց տվեցի այն ամենը, ինչ պահանջում էին, մինչև որ ես ու իմ ընտանիքը, որը բաղկացած էր 19 հոգուց, այլևս բացարձակապես *ոչինչ* չունեինք, *իսկ դրանից հետո նրանք ինձ դատապարտեցին հինգ տարվա բանտարկության*»:

Յանկացած պարագայում ամենավճռական կերպով մերժվում է հայերին արդարացի մուրեցում ցուցաբերել: Եթե որևէ մեկը երբևէ համարձակվում է հանդես գալ մի քրդի կամ թուրքի դեմ, ինքն է անմիջապես հայտնվում մեղադրյալի կամ հանցագործի տեղում, սովորաբար՝ երկուսը միաժամանակ, և անպատճառ

բանտ է նետվում: Այդ դեպքում բանտարկությունը նախատեսված է որպես մի միջանկյալ հանգրվան հարաբերական բարեկեցության և լիակատար թշվառության միջև, քանի որ բանտարկյալները մատնված են իրենց ողջ ունեցվածքից զրկվելու և այնուհետև վռնդվելու ճակատագրին: Հազիվ թե, սակայն, որևէ մեկը կարողանա պատկերացնել, թե ինչ է իրականում բանտը: Եթե մտովի միմյանց հետ համաձուլվեն հին անգլիական աստղախուցը, իսպանական ինկվիզիցիան, օփիումի մի չինական որջ, խոլերայի հոսպիտալի մի անկյուն և Դանտեի դժոխքի ամենաստորին պարունակի խորքում գտնվող մի խորշ, ապա կստացվի մոտավորապես այն, ինչ է թուրքական վատ բանտը: Աղտեղություն, գարշահոտություն, համաճարակներ, այլանդակություն, ամեն տեսակի և աստիճանի ցավեր, որպիսիք Եվրոպայում բնավ հնարավոր չէ երևակայել. ահա բանտի՝ աչքի զարնող արտաքին բնութագրիչները: Հոգեբանական բնութագրիչներն են՝ ծայրահեղ, անմխիթար հուսահատություն, սատանայական չարություն, դժոխային հրճվանք մարդկային տառապանքների հանդեպ, համակ նվիրում ամենանողկալի ախտերին, բացարձակ բարոյալքվածություն, և այդ ամբողջը՝ մարմնավորված ճիվաղների մեջ, որոնց մարդկային կերպարանքը Աստծուն ուղղված հայհոյախոսություն է: Այդ զազրելի զնդաններում խոշտանգվող մարդկանց սարսափի ճիչերը մշտապես միախառնվում են սատանայական հիացումի խրխնջացող՝ արհամարհական քրքիջին: Որպես սրտակեղեք աղաղակների նվագակցություն՝ փողոցային երգեր են երգվում: Այդ ընթացքում մարմինները, որոնք վաղուց արդեն հոգին աստծուն են տվել, փչում են իրենց վերջին շունչը, և ոչ ոք չկա, որ նրանց համար սգա՝ բացի զնդանի խոնավ պարիսպներից, որոնց վրա աներևակայելի տանջանքների և զազրելի համաճարակների գոլորշին է խոշոր կաթիլներով իջնում ու պատերն ի վար հոսում: Դժոխքի մասին պատկերացումները, որոնք իրականություն են դարձել, թուրքական բանտերն են:

Անցած տարվա մարտ ամսին ես իմ ընկերներից մեկին ուղարկեցի՝ Բիթլիսի քաղբանտարկյալներին այցելելու և նրանց խնդրելու, որ իրենց դրության մասին ինձ մի հակիրճ տեղեկագիր տան: Նրանցից չորսը պատասխանեցին մի ընդհանուր նամակով, որը, անտարակույս, ամենահուզիչ գրառումներից մեկն է, որոնք ես երբևէ կարդացել եմ: Միայն ամենանվազ սենսացիոն հատվածներն են, որ կարելի է օտար լեզվի միջոցով ամոթխածորեն քողարկել և այդ կերպ երևան հանել: Այն թվագրված է՝ Բիթլիսի բանտ, դժոխք, մարտի 28 (ապրիլի 9), 1895 թ., և սկսվում է հետևյալ կերպ. «Բիթլիսի բանտում կան յոթ խցեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է տեղավորել 10-12 մարդկանց: Փաստացիորեն դրանցից ամեն մեկում կան 20-30-ը: Սանիտարական ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել: Ողջ աղտեղությունը, միջատներն ու աղբը, որը պետք է հեռացվեր, կուտակված են խցերում: Ջուրը խմելու ենթակա չէ: Հաճախ հայ կալանավորները ստիպված են լվացաջուր խմել, այսինքն՝ այն ջուրը, որում մահմեդականներն իրենց լվացումներն են կատարել»: Ապա հաջորդում է մի պարզ ու հակիրճ հաղորդում այն վերաբերմունքի մասին, որին ենթարկվել էին հեղինակների ընկերները, ու որի հետևանքով շատերը մահացել էին: Օրինակ՝ «Մալխաս Աղաջանյանն ու Սերոբ Մալխասյանը՝ Ուսուղից (Մուշ), այնքան ծեծվեցին, մինչև կորցրին գիտակցությունը: Առաջինին ութ տեղում, երկրորդին՝ տասներկու տեղում խարանեցին շիկացած երկաթով: Հակոբ Սերոբյանին՝ Ուսուղ գյուղից, մերկացրին և գանակոծեցին, մինչև ուշագնաց եղավ, ապա նրա վզին գոտի կապեցին, դրանով նրան քարշ տվեցին զապթիեների սենյակը և մարմինը տասնվեց տեղից խարանեցին հրացանի շիկացած շամփուրներով»: Այնուհետև նրանք նկարագրում են այլ կտտանքներ, որոնց նա ենթարկվել էր՝ մազափետում, անշարժ մի տեղում կանգնել՝ առանց ուտելու և խմելու, մինչև այլևս չկարողանար դիմանալ, և այլ հրեշավորություններ, որոնց պարագայում անգլիացու շուրթերը բառեր, իսկ քաղաքա-

կիրթ մարդիկ լսելու կարողություն չունեն: Ապա նրանք շարունակում են. «Սիրկո Մինասյանը, Կարապետ Մալխասյանը և Իսրո Աստվածատրյանը՝ նույն գյուղից, սկզբում ուժգին հարվածներ ստացան, հարկադրվեցին երկար անշարժ կանգնել մի տեղում, իսկ այնուհետև հայտնի տարողությունների պարունակությունը լցրին նրանց գլխին: Գորգի Մարդոյանին ուժգին ծեծի ենթարկեցին, մազերն արմատահան արեցին և ստիպեցին 24 ժամ անշարժ կանգնել: Այնուհետև Մուլազիմ-Հաջի Ալին ու բանտապահ Աբդուլ-Քադիրը նրան ենթարկեցին մի առանձնահատուկ կտտանքի՝ շեյթանթոպիին (սատանայի մատանի), ինչը հանգեցրեց նրա մահվանը: Նա 45 տարեկան էր: Մխիթար Սաֆոնյանը ու Խաչո Բալոյանը՝ Քաքառլուից, նույն բախտին արժանացան: Մխիթարը 15 տարեկան էր, իսկ Խաչոն՝ դեռ 13: Ալվառինջցի Սոդո Շառոյանը Մուշից շղթայակապ բերվեց Բիթլիսի բանտ: Նա դաժանորեն ծեծվեց և պետք է առանց սննդի ուղիղ կանգներ: Երբ նա ուշագնաց էր լինում, սառը ջրով կամ հարվածներով նրան դարձյալ ուշքի էին բերում: Նաև պոկեցին նրա մազերը և խարանեցին շիկացած երկաթով: Ի վերջո՝ նրան ...»: Թե ինչ արեցին նրա հետ, հնարավոր չէ պատմել: «Համբարձում Բոյաջյանին երեք օր շարունակ պահեցին արևի տապի ներքո: Այնուհետև նրան և իր ընկերներին տարան Սեմալ, այնտեղ նրանց ծեծեցին ու փակեցին մի եկեղեցում: Նրանց ոչ միայն թույլ չտվեցին եկեղեցուց դուրս գալ՝ իրենց բնական կարիքները հոգալու համար, այլև նույնիսկ ստիպեցին ապականել մկրտության ավազանն ու խորանը. *«Որտե՞ղ եք դուք՝ Եվրոպայի և Ամերիկայի քրիստոնյաներ»*: Չորս ստորագրություններից մեկը պատկանում է մի աստվածավախ ու անվանի հոգևորականի:

Ես ինքս ճանաչում եմ շատ մարդկանց, որոնք եղել են այդ բանտում: Պատմությունները, որ նրանք պատմում են այն մասին, թե ինչեր են այնտեղ տարել, սրտակեղեք են և հազիվ թե կարողանային հավատ ներշնչել, եթե բավականաչափ չփաստարկվեին

այն պատմություններով, որ պատմում են նրանց խոշտանգված մարմինը և խոր սպիներն ու նողկալի այլանդակումները, որոնք նրանք ստիպված են կրել, մինչև նրանց գերեզմանը կընդունի կամ անգղերը կհոշոտեն: Կտտանքներն ու կեղեքումները, որ նրանք տանում են, այն աստիճան դաժան, անհավատալի ու սահմռկեցուցիչ են, որ այդ մասին մի պարզ, ճշմարտացի հաղորդումը հիվանդ դիվագարի զառանցանք է թվում: Դա, սակայն, իրողություն է, որն անհնար է դարմանել: Մինչ այժմ շարադրվածից դժվար չէ հասկանալ, թե ինչը կարող է պատճառ դառնալ՝ Հայաստանում մարդուն բանտ նետելու համար: Փող, անասուններ, հացահատիկ, հող, բ կին կամ դուստր ունենալն արդեն իսկ լիովին բավական է: Մենք վրդովվում ենք՝ կարդալով բիրտ քրդերի դաժանության մասին, որոնք ներխուժում են մի գյուղ, հարձակվում տների վրա, հափշտակում են ոչխարները, կանանց անարգում և այնուհետև հանգիստ ետ են դառնում, կարծես ամենաազնիվ աշխատանքն են կատարել: Մենք ասում ենք՝ դա խայտառակություն է քաղաքակիրթ մարդկության համար, և կարող ենք նաև միանգամայն իրավացի լինել: Սակայն այն, ինչ քրդերն անում են, սոսկ բարեգթություն է՝ համեմատած թուրքական բարքերին, որոնք հենվում են օրենքի ուժի և բանտերի սարսափի վրա: Երբ մեկը չքավորության ու սովի պատճառով հրաժարվում է վճարել կամայական հարկերը՝ մեղադրվելով դրանում ետ մնալու մեջ, կամ չի ցանկանում իր կովը կամ եզը որպես թեյավճար տալ զապթիեներին, երբ մեկը նրանց խնդրում է խնայել իր կնոջ կամ դստեր պատիվը, ապա նա նետվում է այդ բանտերից մեկը, որտեղից դուրս չի գալիս, մինչև բանտի անջնջելի խարանը չդաջվի իր վրա: Վերցնենք այդպիսի սովորական դեպքերից մեկը:

Ուսուղ գյուղի (Մուշի գավառակ) մի երիտասարդ բնակիչ մեկնեց Ռուսաստան և այնտեղ աշխատանք գտավ: Նա նաև ամուսնացավ ու երկար տարիներ ապրեց այնտեղ: 1892 թ. վերջերին նա վերադարձավ իր հայրենի գյուղը, և ոստիկանությունը,

ստանալով տեղեկություն այն մասին, որ «Ռուսաստանում ապրած մի հայ վերադարձել է, իր մարդկանցից չորսին Իսահակ Չաուշի գլխավորությամբ ուղարկեց Ուսուդ: Նրանք մայրամուտից երկու ժամ անց հասան գյուղ, և մինչ նրանցից երեքը պահակ էին կանգնել, նրանց առաջնորդը մտավ երիտասարդի տուն: Անմիջապես կրակոցներ հնչեցին, և երիտասարդ հային ու Իսահակին գտան մեռած: Այժմ իշխանությունը Բիթլիսից այնտեղ ուղարկեց ոստիկանության մի գնդապետի՝ պատժիչ արդարադատությունն իրականացնելու համար: Դա տեղի ունեցավ առավելագույն արագությամբ: Գնդապետը հավաքեց գյուղի տղամարդկանց, որոնցից ոչ ոք կատարվածի հետ նույնիսկ ամենաչնչին առնչություն չուներ, և նրանց բանտ նետեց: Այնուհետև պաշտոնյաները կուսությունից զրկեցին այդտեղի բոլոր կույսերին ու պատվազրկեցին բոլոր երիտասարդ կանանց, որից հետո տղամարդկանց դարձյալ ազատ արձակեցին՝ բացառությամբ 20-ի, որոնց տարան Բիթլիսի բանտը: Նրանցից մի քանիսն այնտեղ մահացան, իսկ մյուս տասը շուտով ազատ արձակվեցին: Ի վերջո, որոշեցին Վարդենիս գյուղի ուսուցիչ Մարգարին մեղադրել Իսահակի սպանության մեջ, և քանի որ նրա դեմ ոչ մի փաստ չկար, մյուս բանտարկյալները պետք է նրա դեմ ցուցմունք տային: Հայերի մասին չարախոսում են, թե նրանք ստախոս են, բայց նրանք ստի մեջ, իհարկե, այնքան հեռուն չեն գնում, որ երդում տան՝ անմեղ մարդուն կախաղանի դատապարտելու համար: Եվ այդպիսով՝ նրանք հրաժարվեցին երդմնազանցության ու սպանության կրկնակի հանցանքը գործելուց: Եռանդուն փորձեր կատարվեցին՝ նրանց որոշումը փոխելու համար. նրանց մերկացրին և շիկացած երկաթներով խարանեցին, մինչև նրանք ցավից ոռնացին: Երկար գիշերներ նրանց չէին թողնում քնել և կրկին խոշտանգում էին, մինչև նրանք, ուժասպառ ու ընկճված, ողբալով խոստացան ամեն բան երդմամբ հաստատել, եթե միայն վերջ տային իրենց տանջանքներին: Կազմվեց մի արձանագրություն, որում նրանք հայտ-

նում էին, թե Մարգարը գյուղում էր, երբ Իսահակն այնտեղ ժամանեց, և որ վերջինիս նա իրենց աչքի առջև գնդակահարել էր: Նրանք ստորագրեցին դա: Այդ ընթացքում Մարգարը բանտի մեկ ուրիշ մասում էր խոշտանգվում:

Երբ դատաքննությունը սկսվեց, և արձանագրությունն ընթերցվեց, ստորագրյալները դատարանի առջև հանեցին իրենց հագուստները և ցույց տվեցին այն հետքերը, որ թողել էին շիկացած երկաթները, և Աստծուն վկայակոչելով՝ ասացին, որ այն վկայությունը, որն իրենցից կորզվել է անտանելի չարչարանքի միջոցով, սուտ է: Մարգարն էլ իր հերթին հայտարարեց, որ նա այդ գիշեր բնավ գյուղում չի եղել: Բայց այդ ամենն ապարդյուն էր. անցած տարի նա կախաղան հանվեց, իսկ վկաները դատապարտվեցին տարբեր պատիժների: Կանանցից ոմանք մահացան զապթիեների լլկումների հետևանքով: Բանտապահները հարստանում են այն փողերով, որոնք կորզում են խցերում գտնվողներից: Բիթլիսի բանտապահը՝ Աբդուլքադիսը՝ նմանը չունեցող մի սրիկա, այդ եղանակով հսկայական գումարներ է դիզում: Վերջերս նա իր տան համար ծախսեց 500 թուրքական ֆունտ, իսկ երկու թե երեք վաճառականների մասին ասում են, որ նրանք իրենց առևտուրն իր կապիտալով են վարում, չնայած իր աշխատավարձը ամսական միայն 50 շիլինգ է կազմում: Այս գումարները բանտարկյալները նրան տալիս են ոչ թե ինչ-որ ծառայության համար, որը նա նրանց մատուցում է, այլ միայն հերթական կտտանքներից իրենց ազատելու համար, որոնք նա բացառապես այդ նպատակով է իրականացնում: Հետևյալ դեպքը կարող է որոշակի պատկերացում տալ այդօրինակ ծառայությունների մասին, որոնց համար այդպես թանկ է վճարվում: Մոտավորապես հինգ ամիս առաջ Կողաբազ գյուղից երեք մարդ ձերբակալվեց ու բանտարկվեց: Այն փաստը, որ նրանք տասը շաբաթ անց առանց հարցաքննության ազատ արձակվեցին, բավական լավ ապացուցում է, որ նրանք լիովին անմեղ էին: Նրանց տարան Հա-

սանկալայի բանտը: Խուցը, որտեղ նրանց փակեցին, լեփ-լեցուն էր: Հայաստանում «լեփ-լեցուն» բառը նույն նշանակությունը չունի, ինչ Եվրոպայում: Նրանց ընդհանրապես պառկելու տեղ չունեին: Մի քանի քուրդ բանտարկյալներ, որոնք նույն խցում էին փակված և առանձնահատուկ արտոնություններ էին վայելում, միայն երկուսուկես ոտնաչափ տարածք ունեին քնելու համար: Խցի անկյունում պատի մեջ բացված մի անցք ծառայում էր որպես բանտի սանհանգույց, և հայերին ասացին, որ նրանք պետք է կանգնեին այդ անցքի մոտ և կարող էին քնել՝ պատին հենվելով: Նրանք այդպես արեցին 15 օր անընդմեջ: Գարշահոտությունը, աղտեղությունը, զեռունները դուրս էին ամեն տեսակի պատկերացումներից: 15 օր անց նրանք իրենց ուտելիքի մի մասը, որ պիտի կտրեին իրենց բերանից, տալիս էին քրդերին, և նրանցից մեկը թույլ էր տալիս օրվա ընթացքում փոխնիփոխ զբաղեցնել իր տեղը: Դա շատ չէր, քանի որ քրդերն իրենք էլ միայն երկուսուկես ոտնաչափ տարածք ունեին՝ նստելու համար, բայց էլի ինչ-որ բան էր: Քուրդը, այնուհանդերձ, խստորեն պատժվեց իր բարեգործության, այսինքն՝ գործարքի համար: Նա զրկվեց ուտելիքի իր չափաբաժնից և օրեր շարունակ շղթայվեց: Նրանք, որոնց նա լավություն էր արել, և որոնք, ինչպես իրենք են ասում, իրենց կյանքի համար նրան են պարտական, իրենց գյուղում անվանի և, դրանից բացի, նաև անմեղ մարդիկ էին, որոնք մի քանի շաբաթ անց ազատ արձակվեցին, քանի որ «ոչ մի զանցանք չէին գործել»:

«*Հայերը կարող էին իրենք իրենց օգնել, եթե իրոք ցանկանային*,– վերջերս Բրուսթոնում [Bruston] լսեցի մեկից, որը դա ասում էր՝ խոր համոզմունքով,– *նրանց պետք է միայն մահմեդական դառնալ*: Աստված, անկասկած, նրանց չի պատժի դրա համար»: Այո՛, նրանց տառապանքները կավարտվեն, հենց որ նրանք իսլամ ընդունեն, և չէ՞ որ նրանք համարվում են սոսկ անարգ հանցագործներ, չնայած իսկական մարտիրոսներ են:

Նրանցից շատերը, որոնք մարմնապես թույլ էին, որքան էլ հոգեպես ամուր լինեին, ուրացել են իրենց հավատը, և ուրիշներն էլ պատրաստ են նույնն անել: Ոմանք, ում հետ ես շփվում էի, ինձ հարցնում էին՝ արդյոք ես իրենց խորհուրդ կտայի՞ իրենց ընտանիքն անարգանքից ու մահից փրկել այն դավանանքով, որ Աստված մեկն է, և Մահմեդն է նրա մարգարեն: Ես պատասխանում էի՝ հույս հայտնելով (դա իմ կողմից այդքան էլ արդարացի չէր), որ քրիստոնյա Եվրոպան նրանց ժամանակին օգնության կգա և նրանց կպաշտպանի այդպիսի անախորժ այլընտրանքի շուրջ որոշում կայացնելու հարկադրանքից: Մի բան, սակայն, հաստատ է. եթե նրանք իսլամ ընդունեն, ապա պետք է դա հիմնովին և առհավետ անեն: Հետին թվով հրաժարվելն անհնար է, քանի որ ամենասոսկալի պատիժներին կենթարկվեն նրանք, ովքեր կփորձեն դա անել: Հետևյալ պատմությունը պետք է ցույց տա, թե հայերի համար որքան ուժեղ կարող է լինել իրենց հավատն ուրանալու փորձությունը:

Մելիք Ափան Աբրի գյուղում անվանի, հարգված հայ էր, որին Աստված տվել էր որդիներ ու թոռներ, մեծաթիվ անասուններ, հողեր, առատ հացահատիկ ու խոտ. մի տեսակ՝ հայ Հոր Երանելի: Նույն գյուղի մի անվանի մահմեդական՝ Քյամիլ Շեյխ անունով, նախանձում էր նրան իր հարստության համար և տենչում էր յուրացնել այն, և քանի որ դա նրան չէր հաջողվում, որոշեց դրա տիրոջը ոչնչացնել: Այդ նպատակով նա անցած աշնանը հրկիզել տվեց Մելիքի խոտը, հացահատիկը և այլն: Ապա վրա հասան շեյխի մարդիկ, հափշտակեցին նրա ձիերից հինգն ու կոտորեցին 150 գլուխ ոչխար, որոնց լեշերը թողեցին տեղում՝ փտելու: Դա անիմաստ վատնում էր մի երկրում, որտեղ մարդիկ մեծ մասամբ աղքատ ու հաճախ նույնիսկ սոված են: Այդ պատճառով Մելիքը գնաց Կոփ, որը կայմակամի նստավայրն էր, և դիմեց օրենքների օգնությանը: Մինչ նա գտնվում էր Կոփում, իսկ որդիները բացակայում էին գործերի բերումով, Շեյխի մարդիկ ներխուժեցին նրա

տուն, սպանեցին Մելիքի ավագ որդու երկու երեխաներին և առևանգեցին նրա՝ հղիության վերջին շրջանում գտնվող կնոջը: Երբ Մելիքը լսեց այդ ոճրագործության մասին, մեկնեց Էրզրում՝ կատարվածը նահանգային կառավարությանը ներկայացնելու: Բողոքի արդյունքը եղավ այն, որ Սելիմ Փաշային հանձնարարվեց քննել հարցը և հետամուտ լինել կնոջ վերադարձմանը: Երեխաները, իհարկե, չէին կարող կենդանանալ, իսկ մարդասպանը չպատժվեց: Կնոջ առևանգիչը հայտարարեց, որ չի հանձնի նրան, քանի որ կինը պատրաստ է իսլամ ընդունել: Այդժամ Սելիմը դարձավ Մելիքին և հարցրեց. «Ի՞նչ կասես, եթե հարսդ հրապարակավ հայտարարի, որ ցանկանում է մահմեդական դառնալ»: «Կասեմ, որ ավելի լավ է՝ մենք նույնպես մահմեդական դառնանք, քան թույլ տանք, որ մեր կանայք ու աղջիկներն ուրիշների ձեռքն ընկնեն»: Ահա և բերեցին կնոջը: Երբ, սակայն, Մելիքը տեսավ, որ նա շրջապատված էր շեյխերով ու վախենում էր ճշմարտությունն ասել, նա փաշային ասաց. «Նա հիվանդ է: Մի քանի օրից նա մայրանալու է: Մինչ այդ նրան հանգիստ թո՛ղ և այդ ընթացքում տեղավորի՛ր նրան Էրզրումում՝ մի թուրքի տանը: 14 օրից կլսենք, թե նա ինչ կասի»: Ամենը համաձայնեցվեց, և փաշան հեռացավ: Երեք օր անց կնոջ ամուսինը (Մելիքի ավագ որդին) օրը ցերեկով սպանվեց Քյամիլի մարդկանց կողմից: Նույնիսկ թուրք ընտանիքը, որտեղ կնոջը տեղավորել էին, այնքան վախեցավ, որ շեյխերին խնդրեց կնոջը հեռացնել. նրանք այլևս չէին ցանկանում այդ հարցին առնչվել:

Դրանից հետո շուտով Մելիքի երկրորդ որդին՝ Մկրտիչը, դաշտում գնդակահարեց շեյխերից երկուսին: Դա, անշուշտ շատ սխալ էր ու ոչ քրիստոնեական, և այդպիսի դեպքերը Եվրոպայում նրբակիրթ մարդկանց պատրվակ են տալիս՝ հայերի վրեժխնդրությունից գանգատվելու: Դե, իհարկե, նա պետք է շեյխերին ճաշի հրավիրեր և սիրալիր զրուցեր նրանց հետ կամ առնվազն նրանց հանգիստ թողներ: Ինչ էլ լիներ, Մկրտիչն ու իր կրտսեր եղբայրը,

որոնք գիտեին, որ իրենց մահապատիժ է սպասվում, սլացան Մուսա բեյի տունը և իրենց մահմեդական հռչակեցին: Այնուհետև նրանք սուրհանդակներ ուղարկեցին իրենց հոր մոտ, նրան տեղեկացրին, թե ինչ են արել և խնդրեցին նրան նույնն անել: Եվ նա նույնն արեց: Մի մոլլայի հանձնարարվեց դարձի եկած ընտանիքին ուսուցանել իսլամի ուսմունքը: Պատահականության բերումով այդ մոլլան մեկն էր, որը երկար տարիներ եղել էր Մելիքի հավատարիմ ծառան և ավելի մեծ ցանկություն ուներ՝ քրիստոնյա դառնալու, քան իր նախկին տերը՝ մահմեդական: Մելիքն այդ բարեկամ մոլլայի հետ քննարկեց փախուստի՝ իր ծրագրերը և իր այրիացած դստերը երեխաների՝ չափահաս աղջկա ու երեք տղաների հետ ուղարկեց Ռուսաստան: Երբ նրանք մոտեցան սահմանին, նրանց վրա հարձակվեցին քրդերը, որոնք ուզում էին տիրանալ աղջկան: Նա, սակայն, կառչեց մոր ձեռքերից և հուսահատ դիմադրություն էր ցույց տալիս քրդերի՝ իրեն առնանգելու ջանքերին: Քրդերը, քանի որ իրենց մտադրությունը չէր իրականանում, հրազենով սպանեցին աղջկան: Նրա մայրը նրա դին առավ իր մեջքին ու տարավ Հայրավանք գյուղը, որտեղ Հայր Ռաֆայելը հուղարկավորեց նրան:

Որոշ ժամանակ անց Մելիքն ու նրա ընտանիքի մյուս անդամները փախան Ռուսաստան: Նա թողեց ամեն ինչ՝ իր տունը, իր արտերը, իր խոտը, հացահատիկը, անասուններն ու իր հետ վերցրեց միայն մի քիչ փող, և քրդերը ճանապարհին դա էլ խլեցին նրանից: Նա երախտապարտ էր, որ Աստված նրան հնարավորություն է տվել ողջ-առողջ հատելու սահմանը:

Հայերի մեջ շատ տարածված է այն համոզմունքը, որ դա միակ բարեհաճությունն է, որի համար նրանք երբևէ կարող են շնորհակալ լինել:

Հայի համար դյուրին չէ սահմանն անցնել և հասնել Ռուսաստան, եթե նրա մոտ միայն փոքր-ինչ ոսկի, արծաթ կամ զգեստներ են, իսկ եթե կին է ցանկանում սահմանն անցնել, ապա, որպես

կանոն, պետք է նախապես իր նկատմամբ որոշակի ոտնձգություններ թույլ տա, որոնց սոսկ հիշատակման դեպքում իսկ արյունը սառչում է երակներում: «Օ՜, այդ բաները հայերն այնպես դուրազգացորեն չեն տանում, որքան եվրոպացիները կտանեին»,– վերջերս ինձ ասաց մի կին,– «Դուք գիտեք, որ խուզած գառանը մինչև իսկ քամուց էլ են պաշտպանում»: «Հնարավոր է,– ասացի ես,– բայց ես վերջին շրջանում հարյուրավոր հայ կանանց հետ եմ զրուցել, և որևէ նշան չեմ տեսել այն բանի, թե կանացի պատվի՝ նրանց զգացումն ավելի նվազ նուրբ է, քան ուրիշ կանանց: Ինչպիսի արատներ և առաքինություններ էլ հայ կանայք այլապես ունենան, անկասկած է, որ ողջախոհությունը նրանց ամենացայտուն հատկանիշներից մեկն է: Շատ վայրերում հայ կինը, իր ամուսնուց զատ, ոչ մի այլ տղամարդու հետ չի խոսում, իսկ երբ դա անում է, ապա միայն իր ամուսնու ներկայությամբ, նույնիսկ իր ամենամերձ ազգականներին ու հարազատներին նա ասելու ոչինչ չունի, և նրա բարոյական մաքրությունը վեր է ամեն կասկածից ինչպես Էրզրումի մարդաշատ արվարձաններում, այնպես էլ Սասունի հովիտներում: Եվ հենց նրանք են, որ մշտապես լլկվում են բիրտ քրդերի և անասնաբարո թուրքերի կողմից հաճախ այնքան երկար, մինչև մահը նրանց ազատի իրենց տառապանքներից»:

Փողի, հագուստի և կանանց առկայությամբ արտագաղթելու դժվարությունը լավագույնս պարզ կդառնա մի քանի օրինակներով: Այնպես չէ, որ թուրքերը դեմ են նրանց մեկնելուն, ընդհակառակը, նրանք փաստացիորեն արտաքսում են նրանց սահմանից այն կողմ և համառորեն հրաժարվում են վերադարձի թույլտվություն տալ (դա լավագույն ապացույցն է այն բանի, որ թուրքերի կողմից կանխամտածված՝ բնաջնջման ծրագիր կա և ի կատար է ածվում):

Երբ Սահակ Կարոյանին հարցրին, թե ինչ պատճառով էր ընտանիքի հետ արտագաղթել իր հայրենի գյուղից՝ Խեթերից

[Kheter] (Բայազետի սանջակ), նա հետևյալ կերպ պատասխանեց. «Մենք չէինք կարող այլևս մնալ, քանի որ մեզ հետ վարվում էին, ինչպես անասունների հետ, և այն էլ Ռեզեքամ բեյը՝ Ջաֆար աղայի որդին, ու իր մարդիկ, որոնք ընդգրկված են նորին մեծության համիդեական հեծելազորի մեջ, և որոնք, հետևաբար, ո՛չ կարող են դատարան կանչվել, ո՛չ էլ՝ պատժվել: Ես արտագաղթեցի անցած տարվա վերջերին: Ռեզեքամն իր շքախմբով հարձակվել էր մեզ վրա, տիրացել էր հայերի տներին ու բնակիչներին վտարել: Միայն յոթ ընտանիքներ կարողացան մնալ իրենց տներում, մյուսները ստիպված էին եկեղեցում ապաստան փնտրել: Երեք ամիս շարունակ մենք պետք է կերակրեինք քրդերին, նրանց տայինք մեր հացահատիկը, մեր ոչխարներ և այլն ու կերակրեինք նրանց անասուններին, այո՛, նրանցից ոմանց մենք պետք է նաև ծառայեինք որպես բեռնակիր անասուններ (դա հազվադեպ չէ Հայաստանում): Ռեզեքամն ինքն ամեն շաբաթ այցելություն էր կատարում Կարաքիլիսե գյուղը ու այնտեղ 10 ֆունտ ռազմատուգանք էր գանձում՝ բացի խոտը, գարին ու մնացյալը: Երբ մենք այլևս անկարող էինք կրել այդ բեռը, բողոքեցինք իշխանություններին: Մեզ ասացին, որ պետք է հեռանանք, ինչից հետո մի քուրդ՝ Ղազազ Թամեր անունով, մեզնից պահանջեց, որ մի գրություն ստորագրենք, որում նշված էր, որ մենք մեզ երջանիկ ու լավ ենք զգում: Այն պետք է ուղարկվեր Կոստանդնուպոլիս, քանի որ նա ցանկանում էր համիդեական զորքում յուզբաշի դառնալ: Ոչ ոք չստորագրեց գրությունը, դա զայրացրեց Թամերին, և նա սպանեց Ավագին ու իր եղբորը: Հինգ ամիս անց նա սպանեց Մանկասար գյուղից Քրեի որդուն՝ Մինասին: Անցած տարվա ձմեռնամուտին Ռեզեքամ բեյը հրամայեց բանտ նետել մեր հարևան Սարգսին և նրա գլուխը սառը ջրի մեջ մտցնել: Չորանալուց հետո նրան նավթ խմեցրին ու մազերը խանձեցին: Այնուհետև նա փորձեց անարգել Սարգսի դստերը՝ Սառային, բայց կարողացան ժամանակին հեռացնել նրան: Ռեզեքամի ծառաներից մեկը՝ Խեթոն,

բռնաբարեց Մուրադ անունով մի հայի կնոջ: Մի քանի օր անց նույն Խեթոն ոտքով այնպես հարվածեց մի ուրիշ հայի հղի կնոջը, որ մոտ մի ժամից նա մահացած երեխային վիժեց: «Օ՜, մենք չէինք կարող այնտեղ մնալ, եթե նույնիսկ անասուններ լինեինք»:

Գուբկռան գյուղի (Բայազետի սանջակ) ութսունհինգամյա բնակիչ Մկրտիչ Մխոյանն ասաց. «1894 թ. ես արտագաղթեցի, քանի որ Այփա փաշան 40 քուրդ ընտանիքներով եկավ, ավերեց մեր եկեղեցին և մեզնից խլեց այն ամենը, ինչ ունեինք»: Նույն տեղեկությունը զանազան տարբերակներով ստացվում է հայկական հինգ նահանգների յուրաքանչյուր գավառից, այո՛, գրեթե յուրաքանչյուր գյուղից: Օրինակ՝ Արոգ գյուղի (Վանի սանջակ) հիսունհինգամյա բնակիչ Պետրոս Կոստյանը հետևյալ վկայությունը տվեց. «Ես անցած տարվա օգոստոսին ընտանիքիս հետ հեռացա իմ գյուղից ու երկրից, քանի որ քրդերը Թրիի՝ Չալոյի որդու գլխավորությամբ, որոնց սադրել էին թուրքական իշխանությունները, մեզ վտարեցին: Սկզբում նա եկավ և առևանգեց երեք աղջկա ու երկու երիտասարդ կանանց, որոնց իր հետ տարավ՝ չնայած նրանց արցունքներին ու թախանձալից խնդրանքներին: Երեք հայեր փորձեցին օգնել դժբախտ կանանց, որոնք խնդրում էին պաշտպանել իրենց, բայց քրդերը երեքին էլ սպանեցին: Նրանց անուններն էին՝ Սարգիս, Խաչո և Գևորգ: Հաջորդ օրը նրա մարդիկ քշեցին-տարան գյուղի բոլոր ոչխարները: Մենք բողոքեցինք Վանի նահանգապետին, սակայն նա ասաց, որ այդ հարցում ոչինչ չի կարող անել: Տասն օր անցած քրդերը վերադարձան, խլեցին մեր ցորենը, գարին, անասուններն ու հրի մատնեցին անասնակերը, որն իրենց հետ չէին կարող տանել: Այնուհետև նրանք փլուզեցին մեր եկեղեցու խորանը, որտեղ արծաթ և ոսկի գտնելու հույս ունեին: Մենք դարձյալ իշխանություններին աղերսեցինք պաշտպանել մեզ, բայց որոշումը հետևյալն էր. «Մենք կմորթենք ձեզ՝ ինչպես ոչխարների, եթե մի անգամ էլ համարձակվեք այստեղ գալ և բարի մահմեդականների դեմ բողոքել»: Այդ-

պիսով մենք մեր ունեցվածքից հավաքեցինք այնքան, որքան կարող էինք, և ճանապարհ ընկանք դեպի Ռուսաստան: Երբ արդեն Սինոպի մերձակայքում էինք, վեց զինված քրդեր հարձակվեցին մեզ վրա, կողոպտեցին այն ամենը, ինչ ունեինք, ոչինչ չթողեցին մեզ՝ բացի մեր հագին եղած հագուստից և քշեցին սահմանից այն կողմ»: Սարգիս Մարտիրոսյանը՝ Ուչքիլիսա գյուղից (Ալաշկերտի սանջակ), ասաց. «Ես հինգ անդամից բաղկացած ընտանիքիս հետ արտագաղթեցի, քանի որ իմ տանն այլևս չէի կարող ապրել: Քրդերը եկան և հրկիզեցին իմ ողջ անասնակերն ու մնացյալը, ապա գյուղից քշեցին-տարան 100 կով, 50 եզ ու 300 ոչխար: Մենք այլևս չէինք կարող վճարել հարկերը և քանի որ վախենում էինք զապթիեների կողմից խոշտանգվելուց ու փաստացի արդեն սովի էինք մատնվել, ստիպված էինք հեռանալ: Քյաթուկում քրդերը մեզնից խլեցին այն ամենը, ինչ ունեինք, և մեզ քշեցին մեզ դեպի սահմանից այն կողմ»: Խաչո Կարապետյանը՝ Քյավուրմի գյուղից (Խնուսի սանջակ), տվեց հետևյալ վկայությունը. «Ես 45 տարեկան եմ: Ընտանիքիս հետ արտագաղթելու պատճառն այն էր, որ թուրքական իշխանությունները թույլ տվեցին քրդերին՝ ինձնից խլել գրեթե իմ ողջ ունեցվածքը, և այնուհետև եկան թուրք զապթիեներն ու պահանջեցին հարկերը, որոնք ես չէի կարող վճարել: Հարկահանների գնդապետն ինձ ասաց. «Դու փող չունես, բայց գեղեցիկ կին ունես: Տուր նրան ինձ, և ես դրա դիմաց կստորագրեմ հարկերի ստացման մասին»: Ինձ հաջողվեց կնոջս այլ տուն տեղափոխել, և երբ թուրք պաշտոնյան տեսավ, որ չի կարող անարգել կնոջս, ինձ պատժեց: Նախ ինձ վրա սառը ջուր լցրին, ապա դեմքիս գոմաղբ ու այլ աղտեղություններ շպրտեցին, այնուհետև փոկով, որ կապել էին վզիս, քարշ տվեցին գյուղի միջով, վերջում էլ խլեցին իմ եզը, միակ բանը, որ մնացել էր իմ ունեցվածքից: Այդժամ ես փախուստի դիմեցի ընտանիքիս հետ միասին, մենք մեզ մոտ ունեինք միայն թուրքական 2 ֆունտ գումար: Զինվորները, սակայն, կանգնեցրին մեզ և խլեցին մեր ունեցած ամբողջ փո-

ղը: Այդպես մենք հասանք Ռուսաստան՝ այնքան անօգնական, որքան այն օրը, երբ ծնվել էինք»:

Բնաջնջման քաղաքականությունը, այսպիսով, հարթ ու սահուն առաջ է գնում: Քրիստոնյա բնակչությունը կրճատվում է, գյուղերի բնակչությունը փոխվում է նույն արագությամբ, ինչպես կատակերգության ժամանակ հետնաբեմն է փոխվում: Արտագաղթը դեպի Ռուսաստան և մահերթերը դեպի գերեզմանատներ շարունակ ավելի մեծ ծավալներ են ընդունում: Այստեղ տեղը չէ՝ ներկայացնելու այն գյուղերի ցուցակը, որոնք մահմեդականացվել են, բայց մի բնորոշ օրինակ կարող է գաղափար տալ այն մասին, թե դա ինչպես է արվում: «Բիթլիսի վիլայեթում կա մի գյուղ, որը կոչվում է Խաչլու, այսինքն՝ Խաչի գյուղ: Այժմ այն մահիկի գյուղ է: Այն միջոցները, որոնցով իրականացվել է հանկարծակի փոփոխությունը, նույնն են, որոնք մենք արդեն նկարագրել ենք: Մահմեդ Էմինը քրդերի մի հրոսակախմբի հետ արշավեց գյուղի դեմ, այն գրավեց, այսպես ասած, գրոհով և, ինչպես թուրքերն են պատկերավոր ասում, նստեց այնտեղ»: Բարեբախտաբար, գյուղը թուրք գավառապետի նստավայրից միայն երեք մղոն հեռավորության վրա է գտնվում, բայց, դժբախտաբար, առնվազն հայերի պարագայում, նա հրաժարվեց նրանց համար ինչ-որ բան անել: Նրանց այնպես էին քշում, ինչպես ոչխարների: Հավանաբար սա այն դեպքերից է, երբ խուզած գառանը քամուց պաշտպանում են: Այնուհետև զավթիչները սկսեցին թալանել հարևան գյուղերն ու հատկապես Փիրանը, որը գտնվում էր մոտ մեկ մղոն հեռավորության վրա: Այս գյուղի բնակչությունը նույնպես փոխված կլիներ, եթե բնակիչներից մեկի մոտ մի լուսավոր գաղափար չծնվեր: Դա այն էր, որ Ասադ Աղա անունով մի քրդի հրավիրեցին իր մարդկանց հետ տեղավորվել գյուղում: Սա բարեհաճեց անճամբ ստանալ հացահատիկի 20 դաշտ, 10 մարգագետին և մի ընդարձակ երկհարկանի տուն և որպես փոխհատուցում խոստացավ հայերին պաշտպանել Մուհամեդ Էմինից ու իր հանցակիցներից: Երբ

ես Հայաստանից հեռանում էի, Խնուս գավառի 300 անվանի հայեր ինձ իրենց ստորագրություններով մի խնդրագիր հանձնեցին և խնդրեցին այն ներկայացնել «Անգլիայի մարդասեր ու ազնիվ ժողովրդին»: Այդ գրության մեջ նրանք իրավացիորեն հայտարարում են. «Սույնով մենք հանդիսավոր հավաստիացնում ու հայտարարում ենք, որ Սասունի կոտորածը սոսկ մի կաթիլ է հայկական արյան օվկիանոսում, որը վերջին թուրք-ռուսական պատերազմից հետո թուրքական պետությունում ամենուրեք հետզհետե և թաքուն թափվում է: Ամեն տարի, ամեն ամիս, ամեն օր անմեղ տղամարդիկ, կանայք և երեխաներ են գնդակահարվել, դաշունահարվել ու ծեծով սպանվել իրենց սեփական տներում, իրենց սեփական դաշտերում: Զազրելի զնդաններում անգթաբար խոշտանգել են նրանց կամ թողել են, որ վտարանդիության մեջ՝ Արաբիայի կիզիչ արևի ներքո, դանդաղ մահանան: Այս երկարատև ու սարսափելի ողբերգության ողջ ընթացքում մեր նկատմամբ խղճահարության ոչ մի ձայն չհնչեց, ոչ մի ձեռք չմեկնվեց՝ մեզ օգնելու: Ողբերգությունը դեռ շարունակ իր արյունալի ընթացքի մեջ է և արդեն հասել է վերջին փուլին: Հայ ժողովուրդը հոգեվարքի վերջին ցնցումների մեջ է: Մի՞թե Եվրոպայի կարեկցանքը չի կարող այլ ձև ընդունել, քան մեր գերեզմանախաչն է»: Ես ստացել եմ նաև երկու հուզիչ գրություններ հայ կանացից: Դրանք կնքված են անձնական կնիքներով և ուղղված են իրենց անգլիացի քույրերին: Հիրավի, նրանց խնդրածը քիչ բան է, միայն այն, որ պաշտպանված լինեն (նողկալի պատվազրկումից), և, այնուամենայնիվ, մինչև այժմ այն տպավորությունն է, թե նրանք ամենաանհնար բանն են խնդրում: Մենք Եվրոպայում նվազագույն իսկ պատկերացում չունենք այն մասին, թե ինչ չափով են երիտասարդ կանայք և աղջիկները Հայաստանում թուրք զինվորների, կայսերական զապթիեների և քուրդ սպաների ու ավազակների կողմից լլկվում այնքան նողկալիորեն ու անասնաբար, որ նրանց չարչարանքները մահով են ավարտվում: Տասնմեկ, տասներկու, նույ-

նիսկ իննամյա աղջիկները խլվում են իրենց ընտանիքների գրկից և այդ կերպ լլկվում մարդկանց կողմից, որոնց անունները հայտնի են, իսկ հանցագործությունները՝ կառավարության պաշտոնական ներկայացուցիչների կողմից թույլատրված: Այո՛, հենց կառավարության այդ պաշտոնական ներկայացուցիչներն են այն հրեշները, որոնք իրենց նողկալի կրքի թույնով պղծում են ողջ մաքրությունն ու անմեղությունը: Թալանը, առևանգումն ու բռնաբարությունը Հայաստանում դարձել են միանգամայն սովորական իրողություններ: Եվ «ազնիվ թուրքն» այդ ամենին նայում է գոհունակ ժպիտով: Ես անձամբ հավաքել եմ այդպիսի դեպքերից ավելի քան 300-ը և անհամար նման դեպքերի մասին եմ լսել: Հետևյալ դեպքն ինձ առանձնապես շատ է հետաքրքրել, քանի որ դրա զոհի և իր ընտանիքի հետ լավ ծանոթ եմ: Նրա անունը Լուսինե Մուսեղ է՝ ծնունդով Խնուսաբերդ գյուղից: Ծնվել է 1878 թ. և դեռ դեռատի հասակում ուղարկվել Էրզրումի հայ միսիոներական դպրոցը, որտեղ ուսանել է ավետարանական հավատի ոգով: Հայ աղջիկներն ապրում են թուրքերի և քրդերի կողմից առևանգվելու մշտական վտանգի մեջ, և հայ ծնողները միշտ ստիպված են միջոցներ որոնել՝ նրանց այդ դժբախտությունից պահպանելու համար: Այն միջոցները, որ կիրառվում են, շատ վաղ ամուսնությունը կամ աղջիկներին տղաների հագուստով քողարկելու փորձերն են: Ես տեղյակ եմ երեխաների մասին, որոնց դպրոցից հանում և ամուսնացնում են, որոնք այնուհետև մի քանի ամիս ապրում են իրենց ամուսինների կամ կանանց հետ, այնուհետև նորից դպրոց են հաճախում: Այդպես Լուսինեին 14 տարեկան հասակում հանեցին դպրոցից, ամուսնացրին Միլիքյան անունով հասակակից մի տղայի հետ: Որոշ ժամանակ աղջիկը նրա հետ ապրեց իր հոր տանիքի տակ և հետո նորից սկսեց դպրոց հաճախել: Մի գիշեր, երբ նրա ամուսինը պատահաբար տանը չէր, նրա վրա հարձակվեցին մի քանի տղամարդիկ, քարշ տվեցին նրան մազերից, կապեցին բերանն ու տարան Հուսնի բեյի տուն: *Այդ մարդը գավառապետի որդին էր*:

Նա անարգեց երիտասարդ կնոջն ու հաջորդ օրը հետ ուղարկեց տուն, բայց նրա ամուսինը հրաժարվեց ետ ընդունել նրան, և այժմ նա այնտեղ միայնակ ու լքված է: Լուսինեի հայրը բողոք ներկայացրեց համիդեականների գնդապետին և մի խնդրագիր՝ քահանայապետին: Էրզրումի արքեպիսկոպոսը զբաղվեց հարցով և դիմեց գլխավոր նահանգապետին ու Խնուսի դատարանին: Ամեն ինչ ապարդյուն: Լուսինեն է և կմնա իրավազուրկ: Ես մի սրտառուչ կոչ եմ ստացել նաև Խնուսի շրջանի մի քանի հարյուր հայ կանանցից, որն ուղղված է Անգլիայի կանանց, և որում հայուհիները խնդրում են, որ հանուն Աստծո իրենց պաշտպանեն բիրտ վերաբերմունքից, որին իրենք բոլորը մատնված են: Կարիք չկա այն այստեղ հրապարակել, տպագրված կոչերը հազվադեպ են մեծ ազդեցություն գործում: Եթե, սակայն, ընթերցողներն այդ տարաբախտ կանանց անձամբ տեսած լինեին, այնպես, ինչպես ես տեսա, եթե լսած լինեին, թե ինչպես էին նրանք պատմում իրենց սրտառուչ պատմությունը ամենապարզ բառերով՝ միախառնված հոգոցներով ու հառաչանքներով, առավել պատկերավորված իրենց սրտակեղեք թշվառ դրությամբ, ապա կկարողանային պատկերացում կազմել Հայաստանում առկա իրադրության մասին, որն ավելի վաղ ժամանակներում երկնքից ամենակուլ կրակներ կիջեցներ: Բեգլի-Ահմեդ գյուղում ես հանդիպեցի մոտավորապես 28 տարեկան մի կնոջ՝ փաթաթված մի կեղտոտ գորգի խղճուկ ծվեններ մեջ՝ հյուծված ու դժգույն տասներկուամյա մի տղայի ուղեկցությամբ, որը սարսափելի հազում էր և տիֆով հիվանդ վեցամյա երեխայի տեսք ուներ: Ես խնդրեցի նրան պատմել ինձ իր պատմությունը, և նա ինձ հաղորդեց հետևյալը. «Անունս Ատլաս Մանքիմ է, Խեթ գյուղից եմ: Նախկինում մեր դրությունը շատ լավ էր, բայց քրդերը հափշտակեցին այն ամենը, ինչ ունեինք, ամեն ինչ, էֆենդի՛: Այնուամենայնիվ, իմ խեղճ ամուսինը շարունակում էր աշխատել իմ և այս երեխայի համար, չնայած նրանք մեզ ասում էին, որ մենք պետք է հեռանանք: Մի օր,

երբ ամուսնուս հաց էի տանում դաշտ, նրանք հարվածեցին գլխիս ու անարգեցին ինձ: Դա կատարվեց օրը ցերեկով...»: «Կեսօր էր, երբ հայրիկը հաց պիտի ուտեր: Այդ ժամանակ նրանք արեցին դա քեզ»,– միջամտեց խեղճ երեխան: Ես իմ կյանքում ավելի զարհուրելի բան չեմ տեսել, քան այդ երկու թշվառ կերպարանքները, թե ինչպես էին նրանք դողալով կանգնել ցրտին, և մահացող երեխան իր վկայությունն էր տալիս այն մասին, որ իր մայրը քրդերի կողմից բռնաբարվել էր դաշտում: Այնուհետև կինը շարունակեց. «Ես բողոքեցի գնդապետ Շեյխ Մուրադին, բայց բինբաշին սարսափելի հարվածներ հասցրեց գլխիս, ապա մեջքիս և ինձ գետին տապալեց: Այնուհետև անցած գարնանը, երբ ամուսինս զբաղված էր սերմեր ցանելով, Ալի Մեհմեդը վրա հասավ ու սպանեց նրան»: «Կացինով, մայրիկ»,– ասաց տղան: Կինը շարունակեց. «Այժմ մենք մեն-մենակ ենք աշխարհում, թափառում ենք այս ու այն կողմ և մուրում ենք, ու ոչ ոք մեզ չի ճանաչում»: Ես նրան մի քիչ փող տվեցի և շտապեցի հեռանալ, բայց զուր էի փորձում ազատվել այն սարսափելի տպավորությունից, որը հրեշադեմ ուրվականի պես դեռ շաբաթներ շարունակ հետապնդում էր ինձ:

Սասունի կոտորածը ցնցում է նույնիսկ ամենաանտարբերների սրտերը, բայց այդ կոտորածը գթասրտություն էր՝ համեմատած այն դիվային արարքների հետ, որոնք այնտեղ ամեն շաբաթ ու ամեն օր կատարվում են: Քաղցած երեխաների հեծեծանքը, հառաչանքներն այն ծերունիների, որոնք ստիպված են եղել այնպիսի բաներ ապրել, որոնց մասին հնարավոր չէ խոսել, լկված աղջիկների և փխրուն երեխաների ճիչերը, ոճիրների հետևանքով որդեկորույս դարձած մայրերի հառաչանքը, որոնց հետ համեմատած՝ սովորական սպանդը բարեգործություն կլիներ, կանանց սրտակեղեք ողբը, որոնք գալարվում են մտրակի հարվածների ներքո, և բոլոր այն թշվառ հնչյունները, որ մարում են այն տխուր անապատում՝ առանց որևէ արձագանք առաջ բերելու երկրի վրա

կամ երկնքում. այս ամենը միանում են՝ Սասունն իր բոլոր սարսափներով ստվերում թողնելու:

Սրանք եղելություններ են, որոնց համար մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում, և Աստված տա, որ եվրոպական տերությունները, չնայած բոլոր դժվարություններին, շուտով միջոցներ և ուղիներ գտնեն՝ հայկական *դժոխքին* շտապ վերջ դնելու համար:

IV

Ոճիրների ցուցակ

Վիճակագրական ակնարկ, ըստ ականատեսների վկայությունների,
եկեղեցիների պղծման, հոգևորականների սպանությունների, բռնի կրոնափոխությունների, կանանց ու երիտասարդ աղջիկների բռնաբարությունների մասին, որոնք հայկական կոտորածների ժամանակ տեղի են ունեցել տասնմեկ վիլայեթներում

I. Տրապիզոնի վիլայեթ

Կոտորածից հետո, որը հոկտեմբերի 4-10-ը տեղի ունեցավ Տրապիզոն քաղաքում, նույն տխուր ճակատագիրն են ունեցել նաև շրջակա գյուղերը: 13 գյուղերի՝ Վերանայի, Անիֆայի, Կռոպիի, Աբիոնի, Սյուրմենեի, Գաղրայի, Ջեֆանոզի, Սիֆթերի, Կռոմալիի, Սկաֆայի, Մայերի, Ալչաքդերեի, Մախթելայի եկեղեցիները կողոպտվել ու ավերվել, և վեց հոգևորականներ սպանվել են: Ալչաքդերե, Մախթելա, Կռոմալի և Քեթոնոց գյուղերի լուսավորչականները հարկադրաբար իսլամ են ընդունել, և անհամար կանայք անարգվել են:

II. Էրզրումի վիլայեթ

1. Էրզրումի կոտորածի ընթացքում, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 18-31-ը, իր տանը սպանվեց տեր Գարեգին քահանան, որը ծառայում էր քաղաքի հայկական եկեղեցիներից մեկում: Նրա դին կորցնել տվեցին: Դվնիկ գյուղի եկեղեցու քահանա տեր Եղիան, որը գործերով Էրզրումում էր գտնվում, սպանվեց *կառավարության շենքում* ուր այլ հայերի հետ միաժամանակ, ուր նա նրանց ուղեկցել էր մի դատավարության պատճառով: Քաղաքից դուրս գտնվող Թոփալ-Չավուշի եկեցեցին նախ կողոպտվեց, ա-

պա ապականվեց կեղտով: Ումուդա և Կակ գյուղերի եկեղեցիները հրկիզվեցին, իսկ քահանաները սպանվեցին: Դվնիկ, Օձնի և Գարար գյուղերի եկեղեցիները կիսով չափ ավերվեցին, Խաչկավանքին պատկանող եկեղեցին կողոպտվեց, իսկ նրա առաջնորդը վիրավորվեց:

2. *Բասենի գավառակում* վանքի կողոպուտից հետո նրա առաջնորդ վանահայր Դիմոթեոնը և եղբայրության վեց վանականներ սպանվել են: Վանքը հրի մատնվեց:

3. *Դերջանի գավառակում*, որտեղ կոտորածը տեղի ունեցավ հոկտեմբերի 7-20-ը, գյուղաբնակ բոլոր լուսավորչական հայերը, որոնք մազապուրծ էին եղել մարդասպանների սրից, հարկադրված են եղել քահանա տեր Հուսիկի՝ ժամանակավոր թեմակալի հետ միասին մահմեդական կրոնն ընդունել: Հաջորդ օրը կատարվեցին նախապատրաստություններ՝ նոր կրոնափոխների զանգվածային թլպատման արարողության համար:

4. *Բաբերդ* քաղաքում կոտորածի ժամանակ, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 12-ին, քաղաքի չորս եկեղեցիները կողոպտվել և պղծվել են: Առաջնորդ Խորեն Գուրոյանը՝ մի պատկառելի ծերունի, սպանվեց, իսկ թեմի առաջնորդի ժամանակավոր պաշտոնակատար տեր Աշոտ քահանան վիրավորվեց: Շատ դեռատի աղջիկներ առևանգվեցին և իրենց առևանգիչների կողմից տարվեցին Տրապիզոնի վիլայեթում գտնվող նրանց հայրենիքը: Կողոպուտի ժամանակ 14 հայ կանայք իրենց նորածինների հետ ողջ-ողջ այրվեցին իրենց տներում: Մի հղի կնոջ որովայնը ճեղքեցին և մանկանը, որին հանել էին նրա արգանդից, կտոր-կտոր արեցին: Բաբերդի շրջակայքում գտնվող գյուղերում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Սուրբ Քրիստափոր վանքերը թալանվեցին ու պղծվեցին: Սրբապատկերները պատառոտվեցին: Լուսոնք և Ալմշկա գյուղերի եկեղեցիները նախ թալանվեցին և այնուհետև ապականվեցին: Լուսոնք գյուղում սուրբ Ավետարանը հազար կտոր արվեց, շպրտվեց փողոց և ոտքերով կոխկռտվեց: Քսանթա գյուղում տեր

Հովհաննես և տեր Հարություն քահանաները սպանվեցին, եկեղեցին վերածվեց մզկիթի, մոտ 400 մարդիկ սպանվեցին, իսկ նրանք, ովքեր կենդանի մնացին (հիմնականում կանայք), ստիպված եղան իսլամն ընդունել: Ինչպես Քսանթա գյուղում, այնպես էլ Լուսոնքում ավելի քան հարյուր կանանց կտոր-կտոր արեցին: Մոտ 50 երիտասարդ կանայք իրենց նետեցին ջրհորների մեջ ու այդ կերպ մահացան՝ անարգումից խուսափելու համար: Վեց գյուղերի՝ Բլուրի, Բլուրակի, Բուխտիի, Սուրբ Թորոսի, Նիվի և Բալախոռի եկեղեցիները վերածվեցին մզկիթների, քահանաներ տեր Մարգարը և տեր Գրիգորն ու ևս մի երրորդ քահանա սպանվեցին: Երեք այլ քահանաներ անհետ կորել են: Ինչպես նշված գյուղերի, այնպես էլ Վարզահանի, Քարավերակի, Ջահմանքի, Ավերակի, Խուփսի, Օսեթի, Վերին Կերզի [Kers] և Վարին Կերզի [Kers] բնակիչները ստիպված եղան իսլամն ընդունել: Այն բանից հետո, երբ Բլուր գյուղի հայերին հարկադրել էին իսլամն ընդունել, նրանք գնդակահարվեցին մահմեդական հրոսակախմբերի կողմից այն պատճառաբանությամբ, որ եթե կենդանի մնային, ամեն դեպքում սրտի խորքում հավատարիմ կմնային քրիստոնեական կրոնին: Սպանդից մազապուրծ եղածներին՝ որպես նոր դարձի եկածների, չալմաներ հագցրին, տարան իրենց եկեղեցին և ստիպեցին այնտեղ, մահմեդական պաշտամունքի համաձայն, նամազ անել, ինչպես մզկիթում: Բաբերդում և ամբողջ շրջակայքում խաչի կրոնն ամբողջովին անհետացել է:

5. *Քղիի գավառակում*, որտեղ կոտորածը հոկտեմբերի 23-ին տեղի ունեցավ, քահանա տեր Խաթը՝ պատկառելի մի ծերունի, որը ծառայում էր Հանգստուն գյուղի հայկական եկեղեցում, սպանվեց, և 22 եկեղեցիներ ու երկու վանքեր, որոնց անունները ներկայացվում են ստորև, կողոպտվեցին:

	Եկեղեցիները	**Գյուղերը**
1.	Սուրբ Գևորգ	Դենեք
2.	Սուրբ Աստվածածին	Մելիքան
3.	Սուրբ Կարապետ	Ծեն
4.	Սուրբ Գևորգ	Չեթման
5.	Սուրբ Ամենափրկիչ	Առինձ
6.	Սուրբ Կաթ	Հանգստուն
7.	Սուրբ Խաչ	Սագաձոր
8.	Սուրբ Սարգիս	Ծուրուկ
9.	Սուրբ Աստվածածին	Կըզըլ Չիբուխ
10.	Սուրբ Աստվածածին	Չիֆթլիկ
11.	Սուրբ Մինաս	Չան
12.	Սուրբ Սարգիս	Քերբոս
13.	Սուրբ Աստվածածին	Օրոր
14.	Սուրբ Հովհաննես	Չարիբաշ
15.	Սուրբ Նիկողոս	Խոշքար
16.	Սուրբ Աստվածածին	Սերկելիկ
17.	Սուրբ Մինաս	Սեղանք
18.	Սուրբ Հակոբ	Ապուղնակ
19.	Սուրբ Սարգիս	Աստղաբերդ
20.	Սուրբ Սարգիս	Աղբզուտ
21.	Սուրբ Աստվածածին	Ջերրե
22.	Սուրբ Կարապետ	Խուփս
23.	Սուրբ Կարապետ (վանք)	Հանգստուն գյուղի մերձակայքում
24.	Սուրբ Կիրակոս (վանք)	Օսնակ գյուղի մերձակայքում

6. *Երգնկայի* կոտորածի ժամանակ, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 23-ին, թեմի ութ վանքեր թալանվել են: Սրբատեղիներն ավերել և քահանա տեր Ղևոնդին՝ Տաճրակի Սուրբ Լուսավորիչ

վանքի վանահորը, մի հայի հետ, որն ապաստանել էր վանքում, սպանել են: Խնձորիկ և Ղարաթուշ գյուղերի հայկական եկեղեցիների քահանաներն ու նրանցից մեկի երկու զավակները նույնպես սպանվեցին: Ռազան գյուղում հարձակվողները կոտրեցին եկեղեցու դուռը, ներս խուժեցին և սպանեցին 30 հոգու, որոնք թաքնվել էին եկեղեցում: Ջոհերի թվում կային բազմաթիվ կանայք ու երեխաներ: Մեղուցիկ գյուղում կոտորածը վերապրածներին ստիպեցին իսլամ ընդունել և թլպատվել:

Քահանա տեր Գևորգ Պեզեգյելյանը՝ Երզնկայի թեմի առաջնորդի ժամանակավոր պաշտոնակատարը, և տեր Կոնստանդին Էրիամջյանը, որը մի հայկական եկեղեցում էր ծառայում, մոտ 50 հայերի հետ ձերբակալվեցին և մինչև օրս հեծում են հանցագործների ու մարդասպանների համար նախատեսված բանտում՝ ենթարկվելով ամեն տեսակի կտտանքների:

7. *Գուրուչայի գավառակի* Մեծ և Փոքր Արմտան գյուղերում, որտեղ կոտորածը հոկտեմբերի 16-17-ին տեղի ունեցավ, Մեծ Արմտան գյուղի եկեղեցին ամբողջապես կողոպտվեց, և այդ գյուղի քահանա տեր Հակոբը գնդակահարվեց, իսկ տեր Կիրակոսի՝ Փոքր Արմտանի եկեղեցու քահանայի վիզը կտրեցին, և մի ուրիշ քահանա էլ վիրավորվեց:

8. Տանձի գյուղի հայերը հարկադրված եղան իսլամ ընդունել և բռնի թլպատվել:

III. Վանի վիլայեթ

1. Ձախող, Ծոկու, Տափ, Խրորտենց, Մճկանց, Մուլք, Կիճի, Արջի, Հաղթ գյուղերում, որոնք Ներքին Կարկառի գավառակին են պատկանում, սպանվեցին չորս քահանաներ: Այդ ինը գյուղերի բնակիչներին և երեք քահանաներին հարկադրեցին իսլամ ընդունել: Եկեղեցիներն ու վանքերը կողոպտվեցին, հրի մատնվեցին կամ ավերվեցին:

2. *Մոկսի գավառակում* Սուրբ Հակոբ և Կարմրավոր վանքերը թալանվեցին: Պատական գյուղի հայկական եկեղեցու քահանան սպանվեց: Փայխներ, Վարք, Սարե Վերին, Շանդոսենե [Shandossene], Վառենց, Փաշավանց, Պատականց, Տշող, Աթանանց գյուղերի բնակիչները մահվան սպառնալիքի ներքո ստիպված էին իրենց հավատը փոխել և իսլամն ընդունել:

3. *Բասենի* գավառակում քրդերն ամբողջովին թալանել են Կարաղերի վանքը, իսկ յոթ գյուղերի՝ Կաղազիսի, Շիդանի, Առեղի, Կայնեմերանի, Գոմերի, Դարենցի և Նառի բնակիչները բռնի իսլամացվեցին:

4. *Շատրախի գավառի* բոլոր հայկական գյուղերը կողոպտվեցին, դրանց բնակիչները մահվան սպառնալիքի ներքո ստիպված եղան իսլամն ընդունել ու թլպատվել:

5. *Հոգյաց գավառակի* Նորդուզի վանքն[13] ամբողջապես թալանվեց, իսկ գավառակի հայկական գյուղերի բնակիչները ստիպված եղան իսլամն ընդունել՝ իրենց կյանքը փրկելու համար:

6. *Հայոց չոր գավառում* կողոպտվեցին Անգղի Սուրբ Աստվածածին, Էրեմերիի Սուրբ Աստվածածին, Զարեքի [Sarekh] Սուրբ Աստվածածին և Խեքի Սուրբ Գևորգ՝ չորս վանքերը, ինչպես նաև 17 գյուղերի՝ Խոսպի, Կզըլդաշ, Բելդենցի, Գեղիսի, Աստվածաշենի, Գեմի, Խորգոմի, Կրելի, Իշխանիգոմի, Աթանանցի, Քերծի, Քյոյշկի, Սուրբ Վարդանի, Վարդանիսի, Ծվստանի, Բերդակի, Կենդրանց հայկական եկեղեցիները:

7. *Կարճկանի գավառակում* ավերվել ու կողոպտվել են հետևյալ վանքերը՝

Օրանցի Սուրբ Աստվածածին

Մրոսի Սուրբ Թովմաս

Գոմսի Սուրբ Գևորգ

Կենտրոնից

---

[13] Այստեղ ակնհայտորեն վրիպակ կա: Պետք է լինի՝ Նորդուզի գավառակի Հոգյաց վանք (Ա. Հ.):

Սորբի Սուրբ Կարապետ

Սմբատաշենի Սուրբ Աստվածածին

Սորբի վանքի վանահոր՝ հայր Պետրոսի լեզուն կտրեցին ու անդամահատեցին, որից հետո նա ենթարկվեց ամենասարսափելի կտտանքներին: Սմբոն, Ուզուց, Փիկանց և շատ այլ գյուղերի հայ բնակչությունն ու Սմբոնի հայկական եկեղեցու քահանան բռնի իսլամացվեցին, շատ կանայք առևանգվեցին:

8. *Գավաշի գավառակում* կողոպտվել և ավերվել են հետևյալ վանքերը՝

1. Չարահանի Սուրբ Նշան վանքը,
2. Սպիտակվանքի Սուրբ Աստվածածին վանքը,
3. Սուրբ Հարություն վանքը,
4. Սուրբ Թովմասի վանքը,
5. Մոխրաբերդի վանքը,
6. Լուսապտուղ Սուրբ Սահակ վանքը,
7. Նորգեղի վանքը:

9. *Աղիլցևազ գավառում* ավերվեցին և ամեն տեսակ պղծման ենթարկվեցին Սքանչելագործ վանքն և 16 գյուղերի՝ Գյազուխի, Վերին Սիփանի, Ներքին Սիփանի, Առեևի, Առնջկուսի, Կուզելի, Խոռանցի, Բարկատի, Արճրայի, Ղարաքեշիշի, Վիճկացռուկի, Այղրգյոլի, Ջիրաքլուի, Փշանգոմերի, Անուշաղբյուրի և Նորշենջուղի եկեղեցիները: Շատ վայրերում քրդերը, հագնելով եկեղեցիներից գողացված քահանայական հանդերձները, սուրբ խաչը, Ավետարանը կամ սուրբ գավաթը ձեռքերին, ամոթալի պարեր էին պարում ինչպես իրենց, այնպես էլ հայկական գյուղերում քրիստոնեական կրոնը ծաղրուծանակի ենթարկելու մտադրությամբ:

10. *Արճեշի գավառակում* կողոպտվեցին Արջունից, Կենափոր, Մատղա, Մեծոփ գյուղերի չորս վանքերը և նմանապես նաև ութ գյուղերի՝ Ջուղգյահի, Ծակծակի, Արմիզոնքի, Գանձակի, Դիլանի, Բանոնի, Հարությունի ու Ասպսնակի եկեղեցիները:

11. *Աղբակի* և *Բերկրիի* գավառակների բոլոր հայկական գյուղերի եկեղեցիներն ու վանքերն ավերվեցին:

12. *Թիմարի գավառում* թալանվեցին և ավերվեցին Էրերինի և Ամկուբերդի՝ Ալյուր, Սուրբ Էջմիածին վանքերը, ինչպես նաև ութ այլ գյուղեր՝ իրենց եկեղեցիներով:

IV. Բիթլիսի վիլայեթ

1. *Բիթլիսում* հոկտեմբերի 1-13-ը տեղի ունեցած կոտորածների զոհերի թվին են պատկանում բազմաթիվ քահանաներ, որոնցից երկուսը եկել էին Խուլփի գավառակից (Մուշի սանջակ), նաև 5-12 տարեկան երեխաներ՝ Սուրբ Սարգիս եկեղեցու վանական դպրոցի աշակերտներ: Դիերի մի մասն անհետ կորցնել տվեցին՝ նավթով այրելով, իսկ մոտ 80 դիակներ, այդ թվում՝ Խուլփի եկեղեցու քահանա տեր Մխիթարինը, թաղեցին մահմեդական գերեզմանատանը՝ նրանց հետ վարվելով որպես մահմեդականների դիերի: Այս քաղաքում տեղի ունեցան նաև բազմաթիվ բռնի կրոնափոխություններ: Քաղաքից դուրս՝ Վանիկ և Սասիկ գյուղերում, սպանեցին կանանց ու մի քահանայի:

2. *Էրզրումի գավառակում* հոկտեմբերի 13-25-ը տեղի ունեցած արյունահեղություններից հետո եկեղեցիները, որոնք արդեն պղծվել էին, վերածվեցին մզկիթների: Նրանք, ովքեր կարողացել էին մահից խուսափել, բռնի իսլամացվեցին և թլպատվեցին: Քահանաները պարտավոր էին չալմա կրել, նրանց կանանց ամուսնացրին մահմեդական մոլլաների հետ, իսկ իրենց՝ քահանաներին, ստիպեցին ամուսնանալ մոլլաների կանանց հետ՝ բաժանվելով իրենց առաջին կանանցից: Դրանից զատ՝ այդ քահանաներին տվեցին նաև մեկ կամ երկու քուրդ կանանց՝ «հավատի» այդպիսի կապերի հաստատմամբ նրանց կրոնափոխությունը վերջնական դարձնելու համար: Այն ընտանիքներում, որտեղ մի քանի եղբայրներ կային, նրանցից մեկին կամ երկուսին սպանեցին, որպեսզի

կարողանան նրանց կանանց ամուսնացնել կենդանի մնացած եղբայրների հետ՝ համաձայն շարիաթի օրենքի (մահմեդականների կրոնական օրենքը), որը սահմանում է այդօրինակ ամուսնությունները:

3. *Շիրվանի գավառակում*, որն ունի ավելի քան 20 քրիստոնյա գյուղեր, դրանց թվում՝ Սահրուսը, Ավինը, Ավավը, Նաբայինը, Սերմետն և Դերիկը, կոտորածը վերապրած հայերը հարկադրվեցին իսլամն ընդունել՝ իրենց եկեղեցիների քահանաների հետ մեկտեղ, որոնց մի մասը ավերվեց, իսկ մյուս մասը վերածվեց մզկիթների: Փաստացիորեն այդ եկեղեցիներում այժմ մոլլաներն են գահակալում և տիրաբար ուսուցանում են մահմեդական կրոնի կանոնները: Այս գավառում բազմաթիվ քրիստոնյա հոլի կանանց թրատեցին, երեխաներին դուրս ձգեցին արգանդից ու կտոր-կտոր արեցին: Գորինան գյուղի հայ լուսավորչական բնակչության կեսը սպանվեց, մյուս կեսին ստիպեցին զանգվածաբար իսլամ ընդունել և թլպատվել: Գնձիկ և Մաղան գյուղերից առևանգվեցին շատ կանայք ու երիտասարդ աղջիկներ, նրանց թվում՝ նաև Գնձիկի լուսավորչական եկեղեցու քահանայի կինը:

4. Դաշտոփ, Խարդ, Օհ, Սակ, Կարբ և Նել գյուղերի եկեղեցիները, որոնք Գյոզալդարայի գավառակին են պատկանում, կողոպտվեցին:

5. *Խիզանի* և *Սպարկերտի* գավառակներում հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղի ունեցած կոտորածի ժամանակ թալանվեցին հետևյալ 7 վանքերը՝

1. Սուրբ Խաչ՝ Խիզանում,
2. Սուրբ Խաչ՝ Կամախում,
3. Սուրբ Խաչ՝ Փալաճորում,
4. Սուրբ Աստվածածին՝ Բազենցում,
5. Սուրբ Կիրակոս՝ Գեղիսում,
6. Շիրնից Սուրբ Գևորգ կամ Սկառակ,
7. Սուրբ Աստվածածին՝ Սորիում:

Վանահայր Սահակը՝ Սուրբ Խաչ վանքի գլխավորը, և Պռոշենցի լուսավորչական եկեղեցու քահանան սպանվեցին: Նրանց դիերը մորթազերծ արեցին և հարդով լցնելով՝ կախեցին ծառերից: Այդպես սպանվեցին Կամախի վանքի առաջնորդը Փեղոնքի Սուրբ Կիրակոս վանքի տեսուչ Պողոս Խաչատրյանը: Վանահայր Հովհաննեսին՝ Կառավակի վանքի առաջնորդին, հարկադրեցին իսլամ ընդունել, ապա՝ կնության առնել երկու կանանց: Խիզանի շատ հայ բնակիչների բռնի քարշ տվեցին տեղի՝ Եղվիճինի վանքը և այնտեղ ստիպեցին իսլամ ընդունել: Նույն կերպ Խորորսի երեք քահանաների բռնի կրոնափոխ արեցին, ապա չալմա հագցնելով՝ պտտեցրին փողոցներում: Շենիձորի նահիեում 8 գյուղերի բնակիչները ստիպված եղան իսլամ ընդունել, եկեղեցիներն ու դպրոցները փակվեցին, և շատ կանայք առևանգվեցին: Հետևյալ 60 գյուղերի բնակիչները մահվան սպառնալիքի ներքո ստիպված եղան զանգվածաբար իսլամ ընդունել.

Խիզանի գավառ՝ Դարոնց, Ներքին Դարոնց, Կարասու, Վերինն Կարասու, Շեն, Ըրիթ, Խուփ, Թաղիկ [Taghik], Փալսոր-Խաչուկանց, Էգու, Անդենց, Գամաղիլ, Խիզանի Սուրբ Խաչ, Տի, Նորշեն, Եղոնց, Անապատ, Պռոշենց-Բարս, Մահմըդենց, Մանդենց, Կասր, Հագիր, Խարխոց, Նամ, Խաձուս, Կատինոք, Պախոր, Լի, Հյուջուկ:

Սպարկերտի գավառ՝ Վերին Հյուրուկ, Ստորին Հյուրուկ, Ճաժվան, Ստորին Կոտենց, Վերին Կոտենց, Ներբան, Օղանդ, Սնքար, Բազենց, Լվար, Թաղ, Գեղիս, Տանձիս, Տոսու, Արեգին, Թալորա, Բաղրանց, Հուսպ, Խութ, Սորի, Բաստ, Սուզանց, Առնջիկ, Դալարս, Կռան, Դաշտ, Մատ, Ձմեն:

6. *Վերին Կարկառի շրջանում* թալանվեցին հետևյալ հինգ վանքերը՝ Սուրբ Աստվածածնի, Խնձորուտի, Սուրբ Երաշխավոր, Ձկորի և Սեմպադի [Sempad]: Եղեգիսի եկեղեցու երկու քահանաներ սպանվեցին: Վանահայր Սարգիի՝ Ձկորի վանքի առաջնորդի աչքերը համեցին: Ալս գյուղի եկեղեցու քահանան և հետևյալ տա-

սը գյուղերի բնակիչները ստիպված եղան իսլամ ընդունել՝ Առղու, Թացու, Եղեգիս, Բերդակ, Ալս, Արբենց, Հոկորձու, Գոռ [Gor], Որիզ, Խնձորուտ:

7. *Մամուրանքի գավառակում* հայկական եկեղեցիները թալանվեցին և ավերվեցին կամ վերածվեցին մզկիթների: Քրիստոնյա բնակչության մեծ մասը ստիպված եղավ իսլամ ընդունել, մասնավորապես հետևյալ 17 գյուղերի բնակիչները՝ Օվ, Սեղ, Փերգանտո [Perganto], Ապարանք, Գթանց, Ավնդանց, Դնանց [Dnanz], Միլհոթի [Millhoti], Շենաղբյուր, Մութ, Գուգենց, Կոնիս, Հարաթ, Հարամուս, Հախանց, Կառնա, Բարկանց: Մզկիթների վերածվեցին նաև Ապարանքի, Սեղի և Դոյրուղի [Deuruchk] Սուրբ Խաչ վանքերը:

8. *Սղերդ* քաղաքում, որտեղ կոտորածը տեղի ունեցավ նոյեմբերի 3-16-ը, կողոպտվեցին եկեղեցին, եպիսկոպոսի տունը և դպրոցը, որի դռները կոտրվեցին: Վարդապետ Թեոդորոսը՝ թեմի փոխառաջնորդը, շատ ծանր վիրավորվեց, իսկ իր ծառան սպանվեց: Նույն քաղաքում սպանվեց ևս մեկ քահանա, և շատ կանայք ու երիտասարդ աղջիկներ անարգվեցին: Բնակչության մի մասը ստիպված եղավ իսլամ ընդունել:

9. *Մուշի սանջակում* թալանվեց Հերկետ գյուղի եկեղեցին: Մահմեդականները հափշտակեցին անոթը, որի մեջ պահվում էր սուրբ մյուռոնը, և օգտվեցին դրա պարունակությունից՝ իրենց հրացաններն ու սրերը մաքրելու համար: Մուշի շրջակա մենավոր հովիտներում կարելի էր տեսնել մատղաշ տարիքի երեխաների, որոնք կորցրել էին իրենց ընտանիքների հետքերը և հետ էին մնացել, մինչդեռ բնակիչները փախուստի էին դիմել՝ մահից խուսափելու համար: Խեյբիան և Ադելփոնար [Adelponnar] գյուղերի շատ կանայք առևանգվեցին:

10. Քահանա տեր Վարդանը՝ Բիթլիսից, սպանվեց Նազիկ գյուղի մոտ (Խլաթի գավառակ):

11. *Գենջի գավառի* Կոնոս, Թալ, Թառեփնիս [Tarepnis], Դուշմալան, Կոպար, Շամշ [Schamsch] գյուղերի բնակիչները, որոնք մազապուրծ էին եղել կոտորածից, ստիպված եղան իսլամ ընդունել:

12. *Ճապաղջրի գավառակի* Չնֆլիք, Մաղրակ, Սիմսոր, Քոխեմ [Kochem], գյուղերի, նաև Բեչարի նահիեին պատկանող Բեչար, Դիք, Նորշեն, Մուրդարիկ, Անտքի, Միղուք [Mighut] գյուղերի բոլոր քրիստոնյա բնակիչները, ինչպես և նրանց քահանաները բռնի կրոնափոխ արվեցին: Այդ գյուղերի եկեղեցիները, փաստորեն, ծառայում են որպես մզկիթներ, և դրանցում ղուրանն է ուսուցանվում: Այդ բնակավայրերում խաչի կրոնը դադարել է գոյություն ունենալ:

V. Սվազի վիլայեթ

1. Սվազում կոտորածի ժամանակ, որը տեղի ունեցավ նոյեմբերի 2-ին, շատ կանանց նկատմամբ չլսված զազրելիություններ կատարվեցին, որոնց մանրամասները նկարագրության ենթակա չեն: Բռնի իսլամացվածների մի հոծ զանգված հարկադրաբար թլպատվեց: Շրջակա գյուղերում ավելի քան 20 եկեղեցի թալանվեց: Սպանվեցին տեր Աստվածատուրը, տեր Ոսկին, տեր Գրոնիտեսը, Դուզասարի եկեղեցու քահանաները, նաև Դղմաճի, Գազի-Մաղարայի, Կարահաջիլի, Խորասանի, Կովտունի, Խանծառի ու Խավրազի եկեղեցիների 7 այլ քահանաներ ու տեր Ռեթեոսը՝ Սթանոսի եկեղեցու քահանան:

2. Հոկտեմբերի 28-ին Շապին Գարահիսարում տեղի ունեցած արյունահեղությունների ժամանակ ժանդարմները մզկիթների մինարեթներից կրակ բացեցին հայկական եկեղեցու պատուհանների վրա, և այդ կերպ նրանց հաջողվեց մի քանի մարդկանց վիրավորել, որոնք ապաստանել էին եկեղեցում: Սուրբ Փրկիչ եկեղեցու քահանա տեր Եղիան սպանվեց, քանի որ նա կոտորածի

զոհերի համար հուղարկավորության արարողություն էր կատարել:

Հոկտեմբերի 24-ին Աբանա գյուղում տեղի ունեցած կոտորածի ժամանակ հայ կանայք ու աղջիկները, որոնք ապահովության համար փախել էին շրջակա հունական գյուղերը, այնտեղ ամենախայտառակ անարգանքների ենթարկվեցին թուրքերի կողմից, իսկ նրանցից շատերն էլ առևանգվեցին: Թամզարա գյուղում հոկտեմբերի 27-ին և 30-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ Սուրբ Թագավոր եկեղեցին և Սուրբ Գևորգ վանքը թալանվեցին, և բոլոր պաշտամունքային առարկաները հափշտակվեցին: Գավիթներն ավերակվեցին ու սրբապատկերները պատվեցին կղկղանքով: Պատկառելի ծեր քահանա տեր Գրիգորը և նոր միայն ձեռնադրված երիտասարդ քահանա Քուդեն տարվեցին մզկիթների առաջ և կացիններով գլխատվեցին: Դպրոցի երկու ուսուցիչներ, որոնց ստիպել էին նամազ կարդալ, դրանից հետո սպանվեցին: Տեղի դպրոցահասակ բոլոր տղաները սպանդի ենթարկվեցին, իսկ աղջիկներն անարգվեցին: Բացի այդ՝ ևս 30 երեխաներ բաժանվեցին կողոպտիչների միջև՝ նրանց հարկադրաբար մահմեդականներ դարձնելու համար:

Ինչ վերաբերում է շրջակա գյուղերին, ապա Բուրգի եկեղեցին ու դպրոցը հրկիզվեցին, քահանա տեր Ահարոնը և Աղրավիսի, Սսի ու Անեղիի եկեղեցիների քահանաները սպանվեցին: Բուսեյիդում քահանա տեր Մաքնոսը գլխատվեց: Նրա գլուխը դրվեց ազդրերի արանքում որպես ծայրահեղ անպատվության նշան, իսկ տեղի թուրք երիտասարդներն իրենց արհամարհանքը Քրիստոսի ծառայի նկատմամբ ցուցադրելու համար զվարճանում էին՝ նրա դիակին հարվածելով:

Հոկտեմբերի 29-ին Անեղի ու Բուսեյիդ գյուղերում տեղի ունեցած կոտորածների ժամանակ սպանվեցին փոքրիկ երեխաներ իրենց մայրերի գրկում, կողոպտվեց Սսի մոտ գտնվող Առաքելոց վանքը:

3. Սու-Շեհրի գավառում հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ Էնդիզ բնակավայրի եկեղեցին, որտեղ ծերեր, կանայք և երեխաներ էին ապաստանել, հրդեհվեց, և այդ բոլոր դժբախտները հրո ճարակ դարձան: Տեղի հայկական դպրոցը նույնպես հրկիզվեց:

4. Սրի ու հրի սպառնալիքների ներքո Կոյլուհիսար գյուղի բնակիչներն իսլամացվեցին: Հայ աղջիկներին ստիպեցին ամուսնանալ թուրքերի հետ:

5. Տերիկի կոտորածի ժամանակ՝ նոյեմբերի 16-ին, հայկական Սուրբ Աստվածածին և Երրորդություն եկեղեցիները կողոպտվեցին, իսկ խորաններն ավերակվեցին: Սուրբ մյուռոնը թափեցին գետնի վրա և արհամարհաբար կոխկռտեցին: Հայ եպիսկոպոսարանն ու բողոքականների եկեղեցին հրդեհվեցին: Պատվելի Պետրոսը՝ բողոքական քահանան, սպանվեց:

Հայկական դպրոցը վերածվեց զինվորական պահակակետի, և շատ երիտասարդ կանայք ու աղջիկներ անարգվեցին: Ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում հայ բնակչությանը հարկադրեցին իսլամ ընդունել, իսկ բոլոր նրանք, ովքեր չցանկացան ուրանալ իրենց հավատը, սպանվեցին:

Ինչ վերաբերում է գյուղերին, ապա Կրասոնում սպանվեցին քահանաներ տեր Սարգիսն ու տեր Միքայելը, նաև Արմտանի եկեղեցու քահանան, իսկ Սուրբ Հակոբի վանքը վերածվեց ավերակների կույտի: Զմառայում և Կասմայում եկեղեցիները մասամբ ավերվեցին, շատերն էլ վերածվեցին մզկիթների: Սուրբ Նշխարը ոտնակոխ արվեց, իսկ Կասմայի շրջակայքում շուրջ 655 մարդկանց հարկադրեցին իսլամ ընդունել, տղամարդկանց չալմա հագցրին և ստիպեցին օրական հինգ անգամ մզկիթ գնալ՝ նամազ ասելու: Մի հայ՝ Գրիգոր Բալյանը, որը մահացավ, թաղվեց մահմեդական գերեզմանատանը, քանի որ իբրև թե իսլամ էր դավանում: Կրասոն և Ափուխան [Apuchan] գյուղերի բնակիչները կոտո-

ռածի սպառնալիքի ներքո բռնի իսլամացվեցին, նմանապես նաև Զմառայի բնակիչներն ու նրանց եկեղեցու քահանան:

6. Դարանդա և Աշոտի գյուղերում (Դարանդայի գավառակ) հոկտեմբերի 25-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ եկեղեցիները, դպրոցներն ու հարևան մի վանք հրդեհվեցին: Զոհերի թվում էին եպիսկոպոս Իսահակը և Աշոտիի եկեղեցու մի քահանա: Շատ կանայք անարգվեցին ամենանողկալի կերպով:

Զելայում նոյեմբերի 28-ի կոտորածի ժամանակ սպանվեցին երկու քահանաներ՝ Տեր Արիստակեսն ու Տեր Մկրտիչը, քանի որ նրանք հրաժարվում էին մահմեդական դառնալ: Նախապես հանեցին առաջինի աչքերը, երկրորդին մորթազերծ արեցին:

7. Ազիզիեի և Ագարակի քրդերը Կյուրինից առևանգեցին 400 կանանց և աղջիկների, մի մասը կարողացավ ետ վերադառնալ իրենց ընտանիքների մոտ, սակայն 140-ը դեռ գտնվում է առևանգիչների ձեռքում:

8. Վեզիր Քյոփրուի (Ամասիայի սանջակ) եկեղեցու քահանա տեր Վասիլը դեկտեմբերի 14-ին սպանվեց, եկեղեցին թալանվեց, իսկ Հաջիքյոյ գյուղի հայկական դպրոցը հրդեհվեց:

VI. Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթ

1. Նոյեմբերի 8-ին Խարբերդում տեղի ունեցած կոտորածի ժամանակ հայկական Սուրբ Կարապետ ու Սուրբ Ստեփանոս եկեղեցիները, բողոքական եկեղեցին և հայկական դպրոցներն ավերվեցին ու հրդեհվեցին: 200 ընտանիքներ մահվան սպառնալիքի ներքո ստիպված եղան իսլամ ընդունել: Հանեցին քահանա տեր Հակոբի հագուստը, որը հրաժարվեց իր հավատն ուրանալ, և նրան միայն մի շապիկ թողնելով, նրա գլխավերևում թրերը ճոճելով՝ սպառնացին սպանել: Դժբախտ քահանան սարսափից կորցրեց բանականությունը և բանտ տարվեց:

Իչմե գյուղի հայկական եկեղեցին վերածվեց մզկիթի, իսկ վերոնշյալ գյուղի բողոքական եկեղեցիները դարձրին ավերակների կույտ: Խույլու գյուղի բողոքական եկեղեցին ամայացվեց և ներկայումս որպես ախոռ է ծառայում: Իչմեում 40 հայ երևելիների ստիպում էին իսլամն ընդունել: Երբ նրանք հրաժարվեցին, նրանց մի կողմ տարան և մի շեյխի հրամանով գլխատեցին հենց եկեղեցու սալահատակի վրա: Եկեղեցու սպասավորը մարդասպանների դաժան հրամանով ստիպված եղավ դիերի ոտքերից պարան կապել և նրանց քարշ տալ մինչև գետի ափը:

Գյուղերում երեք եկեղեցիներ՝ Սուրսիի Սուրբ Գևորգը, Դատեմի Սուրբ Աստվածածինը և Զարդարիչի Ալթելմեսսեհը, թալանվեցին, այդ վանքերի սրբություններն ու շենքերը հրի ճարակ դարձվեցին, այնպես որ միայն ծխից սևացած պատերը մնացին: Երբ Դատեմի վանքում պատկառելի վարդապետ Հովհաննես Փափազյանը հրաժարվեց իսլամ ընդունել, ինչը նրանից պահանջում էին, նախ կտրեցին նրա ձեռքերը, ապա թևերը՝ մինչև արմունկները, որից հետո նրան կրկին առաջարկեցին ուրանալ իր հավատը: Երբ վարդապետը վերստին հրաժարվեց, եկեղեցու սալահատակի վրա կտրեցին նրա գլուխը, մինչ նա Հավատամքն էր արտասանում: Վարդապետի սպասավորը և վանքի երկու վերակացուները նույնպես սպանվեցին, իսկ նրանց դիերը վայրի շների կեր դարձան: Սպանվել և մորթազերծ են արվել նաև հետևյալ ութ քահանաները.

տեր Հարություն – Հաբուսիի եկեղեցու քահանա
տեր Սարգիս – Մուռիի եկեղեցու քահանա
տեր Սեթ – Գոմքի եկեղեցու քահանա
տեր Սարգիս – Խույլուի եկեղեցու քահանա
տեր Հակոբ – Դատեմի եկեղեցու քահանա
տեր Ահարոն – Դատեմի եկեղեցու քահանա
տեր Հակոբ – Քեսրիկի եկեղեցու քահանա
տեր Ղազար – Մորինիկի եկեղեցու քահանա

տեր Հովհաննես – Հյուսեյնիկի եկեղեցու քահանա

տեր Վահրամ – Հյուսեյնիկի եկեղեցու քահանա

Այս բոլոր քահանաները սպանվեցին, քանի որ հրաժարվեցին իսլամ ընդունել, մինչդեռ հետևյալ քահանաներն իրենց ծխականների հետ, համընդհանուր կոտորածի սպառնալիքի ներքո ստիպված եղան հավատուրաց լինել.

տեր Պողոս – Խույլուի եկեղեցու քահանա

տեր Սահակ – Քեսրիկի եկեղեցու քահանա

տեր Միքայել – Հյուսեյնիկի եկեղեցու քահանա

տեր Նշան – Քեորբեի եկեղեցու քահանա

տեր Կարապետ – Շենթիլի եկեղեցու քահանա

տեր Հովհաննես – Խոխի եկեղեցու քահանա

տեր Գրիգոր – Հնգարակի եկեղեցու քահանա

Այլ հոգևորականներ՝ քահանաներ Ստեփանն ու Գարեգին Վարդանյանը, անհետ կորել են:

Հյուսեյնիկի քահանա տեր Միքայելի հետ միաժամանակ գյուղի հայ բողոքական քահանան ևս ստիպված եղավ իսլամ ընդունել ու չալմա կրել: Նույն գյուղում զինվորները շուրջ 60 կանանց ու դեռատի աղջիկների հավաքեցին մի վայրում և իրենց ամենաստոր հաճույքներին հրապարակայնորեն հագուրդ տալուց հետո մորթեցին այդ նողկալի բռնաբարությունների դժբախտ զոհերին: 13 գյուղերի՝ Քեսրիկի, Մորենիկի, Փելթեի, Այուբաղիի, Հյուսեյնիկի, Խոխի, Հնագրակի, Շենթիլի, Քորփեի, Հարսեկի, Ծովքի, Ծառուկի և Բազմաշենի բոլոր հայերը հարկադրվեցին մահմեդականներ դառնալ: Եկեղեցիները թալանվեցին, ավերվեցին և այնուհետև հրդեհվեցին: Շատ կանայք ու երիտասարդ աղջիկներ առևանգվեցին և այդ չարագործությունների հեղինակների կողմից տարվեցին Խարբերդ ու շրջակա գյուղերը: Շատ վայրերում հայ աղջիկներին բռնի ամուսնացրին թուրքերի հետ:

Հաբուսի գյուղի վրա հարձակման ժամանակ զինվորները հրդեհեցին եկեղեցին: Բնակիչները, որոնք պատսպարվել էին

այնտեղ, ստիպված եղան լքել իրենց ապաստարանը՝ կրակի բաժին չդառնալու համար և շարվեշարան մորթվեցին: Վերապրողները կարողացան իրենց կյանքը փրկել միայն իրենց հավատն ուրանալու միջոցով: Առևանգված կանայք ու երիտասարդ աղջիկները ստիպված էին տանել ամենածայրահեղ զրկանքները, իսկ նրանցից ոմանք հարկադրվեցին ամուսնանալ թուրքերի հետ:

Խույլու գյուղում Հաջի Բեգո անունով մի թուրք մի հայ կնոջ ստիպեց ամբողջովին մերկանալ և այդպես մերկ քայլել փողոցներով:

Այվոսում, Ծենթիլում և շրջակա գյուղերում հայկական եկեղեցիների քահանաները սպանվեցին, և մի քանի հազարի հասնող ամբողջ հայ բնակչությունը ստիպված եղավ իսլամ ընդունել:

Խարբերդի ողջ գավառում, որտեղ մոտ 60 քրիստոնյա գյուղեր կային, այլևս ոչ մի եկեղեցի, ոչ մի դպրոց չի ծառայում իր կոչմանը. միայն մի քահանա է դեռ մնացել ամբողջ քրիստոնյա բնակչության համար: Բոլորը սպանվել են կամ բռնի հավատուրաց դարձել: Այդ տարածաշրջանում օրեցօր շարունակվում են կրոնափոխությունն ու թլպատումը: Եկեղեցիները վերածվել են մզկիթների, և թուրքերը, որոնք իրենց ձեռքն են առել բանալիները, այլևս չեն ցանկանում դրանք վերադարձնել:

2. *Ակնի* գյուղերում նոյեմբերի 8-ին տեղի ունեցած կոտորածների ժամանակ Սուրբ Փրկիչ վանքը թալանվեց, պղծվեց և ավերվեց: Լիճք, Նարվեր և Ազնի գյուղերի եկեղեցիները կողոպտվեցին ու ավերվեցին: Այդ գյուղերի ողջ հայ բնակչությանը պահանջեցին և ստիպեցին իսլամ ընդունել: Լիճք գյուղի բնակիչները ստիպված եղան իրենց քահանայի հետ միասին ենթարկվել նույն պահանջին:

3. *Աղինի գավառում* հայկական 14 գյուղերի բնակիչներին ստիպեցին մահմեդականներ դառնալ ու անմիջապես թլպատեցին: Նրանք թալանված եկեղեցիներն այժմ ծառայում են որպես մզկիթներ, և աշխատանքներ են տարվում դրանց ներքին կահա-

վորման վերափոխման ուղղությամբ: Այդ դժբախտ գյուղացիների կյանքը մեծապես վտանգվում է, եթե նոր կրոնի պահանջների կատարման հարցում նվազագույն թերացում կամ բացթողում են թույլ տալիս: Գավառի իշխանություններն այժմ նրանցից պահանջում են, որ նրանք իրենց ստորագրությամբ հաստատեն, թե ինքնակամ են իսլամն ընդունել: Անջրդի գյուղի բնակիչները նույնպես ստիպված եղան այդպիսի հայտարարագիր ստորագրել: Ավելորդ է հավելել, որ այդ կրոնափոխվածներին մահմեդական անուններ են տրվել, և որ ներկայումս նրանցից պահանջում են փոխադարձաբար ազգակցական կապեր հաստատել իրենց նոր հավատակիցների հետ:

Կամարկապ գյուղում Սուրբ Աստվածածին եկեղեցին և Սուրբ Գևորգ մատուռը զրկվեցին իրենց բոլոր հարստություններից՝ սուրբ պարագաներից, հոգևորականների զգեստներից և այլնից: Սուրբ կույսի և եկեղեցական այլ սրբերի պատկերները պատառոտվեցին, իսկ խորանն ավերակվեց: Այնուհետև կողոպտիչները, իրենց զենքերով սպառնալով, գյուղի բնակիչներին քշեցին եկեղեցի, որտեղ սրբատեղին ու սուրբ առարկաները պղծելուց հետո ոմն Ալի էֆենդի՝ տեղի թուրքական դպրոցի մի ուսուցիչ, բարձրացավ զանգակատուն՝ իսլամական աղոթականչ հնչեցնելու, և ամբողջ ժողովրդին ստիպեցին նամազ արտասանել: Կամարակապի ողջ բնակչությունը հարկադրվեց չալմա կրել, կանայք՝ իրենց դեմքը ծածկել քողով, ինչպես թուրք կանայք են դա անում:

25 հայ կույսերի ստիպեցին ամուսնանալ թուրքերի հետ: Տեղի եկեղեցու քահանա տեր Կարապետը, որին նույնպես ստիպեցին մզկիթ գնալ, հիվանդացավ այն ապրումների հետևանքով, որ հարուցել էին տեղացած սպառնալիքները:

Սեպտեմբեր ամսին *Չմշկածագի գավառի* գյուղերում տեղի ունեցած կոտորածի ժամանակ Միատուն ու Բազաբուն գյուղերի եկեղեցիները թալանվեցին ու հրի մատնվեցին: Միատունի եկեղեցու քահանա տեր Նշանը սպանվեց, իսկ նրա դին հրկիզվեց:

Գյուղի մի շարք քրիստոնյա կանայք անարգումից խուսափելու համար նետվեցին Եփրատը՝ իրենց դուստրերի հետ միասին նախընտրելով այդ կերպ մեռնել:

Կարմրի, Սինան, Մուռնայի, Մորշխա, Բաղրաթիլ, Բախչեջիկ, Մեզրե և Խարասար գյուղերում եկեղեցիները թալանվեցին և ավերվեցին: Գոմեր գյուղի բնակիչները սպառնալիքների ներքո ստիպված եղան իսլամ ընդունել ու իսկույն ևեթ թլպատվել: Վերջինների շարքում էր տեղի եկեղեցու քահանա տեր Տաճատը, որին հարկադրեցին ամուսնանալ մի երիտասարդ մահմեդական կնոջ հետ:

4. Արաբկիրի կոտորածի ժամանակ, որը սկսվեց նոյեմբերի 6-ին և տևեց ամբողջ 10 օր, երեք հրաշագեղ եկեղեցիները՝ Սուրբ Հակոբը, Սուրբ Գևորգն ու Սուրբ Լուսավորիչը, թալանվեցին, պղծվեցին և կրակի մատնվեցին: Նույն ճակատագիրն ունեցան մի մատուռ, չորս դպրոց և հայ բողոքականների երկու եկեղեցի, իսկ հայկական տաճարն ամբողջովին կողոպտվեց: Վեց հայ հոգևորականներ սպանվեցին, այդ թվում՝ վարդապետ Գրիգոր Աբրահամյանը, քահանա եղբայրներ տեր Մկրտիչը և տեր Գեղամ Խամլյանը, ինչպես և նմանապես հոգևորականության ներկայացուցիչներ՝ տեր Ներսես Բալթայանը, տեր Գուրգեն Յազիջյանը, տեր Թոռնիկ Բախտիկյանը: Քահանա տեր Հուսիկը՝ թեմի ժամանակավոր առաջնորդը, իր յոթ փոքրիկ երեխաների հետ ձերբակալվեց և դեռ բանտում է գտնվում: Շուրջ 20 քրիստոնյաներ վախից իսլամն են ընդունել: Մեծաթիվ կանայք և երիտասարդ աղջիկներ անարգվեցին, նրանց թվում էր նաև մի մանկամարդ հայուհի՝ հազիվ 12 տարեկան, որին Հասան էֆենդի անունով մի թուրք առևանգեց ու բռնությամբ ամուսնացավ նրա հետ:

Անջրդի գյուղի եկեղեցու քահանա տեր Հարությունը սպանվեց չլսված դաժանությամբ: Մահվան սպառնալիքի ներքո 20 քրիստոնյա գյուղերի բնակիչներն իրենց բոլոր քահանաների հետ ստիպված եղան իսլամն ընդունել, այդ թվում՝ Սաղմկայի, Մաշ-

կերտի, Էհնեցիքի, Վաղշենի, Ծապլվարի, Քուշնայի, Վաղավերի (Աղինի), Վանքի, Կռանի, Հացկնիի, Ծագի, Սինջանի և այլն: Այդ գյուղերի բոլոր բնակիչները բռնությամբ թլպատվեցին: Անհամար ոտնձգություններ կատարվեցին կույսերի և կանանց նկատմամբ, որոնցից շատերը քարշ տրվեցին տեղի թուրք երևելիների հարեմները:

5. Նոյեմբերի 4-ին Մալաթիայում տեղի ունեցած կոտորածի ժամանակ հրդեհվեցին հայկական եկեղեցիներն ու դպրոցները:

VII. Դիարբեքիրի վիլայեթ

1. Նոյեմբերի 1-ին Դիարբեքիրում տեղի ունեցած կոտորածի ժամանակ Սուրբ Սարգիս եկեղեցին կողոպտվեց, իսկ նրա խորաններն ավերվեցին: Այդ օրը հերթապահող քահանան՝ տեր Հարությունը, սպանվեց և մորթազերծ արվեց: Եկեղեցու սպասավորը ևս նույն ճակատագիրն ունեցավ: Քաղաքին մերձակա Սադու գեղի Սուրբ Խաչ եկեղեցին և Ալիփունար գյուղի Սուրբ Աստվածածին մատուռը նախ թալանվեցին և պղծվեցին, ապա, բնակելի բոլոր շինություններով հանդերձ, հրի մատնվեցին: Ալիփունարի եկեղեցու քահանան նույնպես սպանվեց ու մորթազերծ արվեց:

Կողոպտիչներն ավերեցին նաև Մաղափայեցոց վանքը, որի միաբանությունը և Դիարբեքիրի կոտորածի հետևանքով այնտեղ ապաստանած 300 հայ սրի քաշվեց:

Դիարբեքիրից 12 ժամվա հեռավորության վրա գտնվող նշանավոր Սուրբ Աստվածածին-Բարձրահայաց վանքը նույնպես ամբողջովին թալանվեց ու ավերվեց: Վանքի ողջ միաբանությունը սպանդի ենթարկվեց՝ բացառությամբ վանահայր տեր Հակոբի, որն այն բանից հետո, երբ նրա մի ականջը կտրեցին, ստիպված եղավ իսլամն ընդունել ու թլպատվել:

Արղնի գյուղում քրիստոնեական եկեղեցին կոտորածից հետո վերածվեց մզկիթի: Նրա քահանան սպանվեց:

2. Սիլվանի, Բշերիկի, Զըռկանի ու Փարավանի գավառակների 105 գյուղերի քրիստոնյաները և Հայնի ու Լճեի գավառակների հայ բնակչության մի մեծ հատված բռնի իսլամացվեցին:

3. Բալուում, որտեղ կոտորածները տեղի ունեցան նոյեմբերի 5-ին և 12-ին, քաղաքի 4 եկեղեցիները թալանվեցին ու վերածվեցին մզկիթների: Կանանց և դեռատի աղջիկների նկատմամբ անհամար ոտնձգություններ կատարվեցին: Շատ հայ կանայք իրենց դեռատի դուստրերի հետ նետվեցին Եփրատը՝ պատվազրկումից խուսափելու համար: Գյուղերում բոլոր նրանց, ովքեր մազապուրծ էին եղել կոտորածից, ստիպեցին իսլամ ընդունել, իսկ եկեղեցիները վերածվեցին մզկիթների: Հավավ գյուղի եկեղեցիները, որոնք թալանվել ու ավերվել էին, հրի մատնվեցին: Գյուղի հայ բնակչությունը, բռնի իսլամացվելով, եկեղեցու քահանաներից մեկի՝ տեր Պողոսի հետ մեկտեղ թլպատվեց: Երկու այլ քահանաներ՝ տեր Գրիգորն ու տեր Կարապետը, սպանվեցին, քանի որ հրաժարվեցին ուրանալ իրենց հավատը: Իսաբեկ գյուղի հայկական եկեղեցին հրկիզվեց, իսկ Չեթի եկեղեցու քահանա տեր Գևորգը և Խոմոդի [Khomod] եկեղեցու քահանա տեր Ներսեսը սպանվեցին:

VIII. Հալեպի վիլայեթ

1. Ուրֆայում առաջին կոտորածի ժամանակ՝ նոյեմբերի 9-ին, հղի կանանց որովայնները թրատեցին, երեխաները արգանդներից դուրս հանվեցին և նետվեցին ջրհորները, ոմանք՝ դեռևս ողջ վիճակում, մյուսները՝ խաչաձև թրատված:

2. Մարաշում հայ կանայք ու դեռատի աղջիկներն այն բանից հետո, երբ նրանց հրապարակայնորեն գազանաբար և անկարագրելի դաժանությամբ պատվազրկել էին, անպաշտպան թողնված էին ճանապարհներին՝ ձյան ու կեղտի մեջ ընկած: Ան-

համար փոքրիկ երեխաներ սովամահ եղան, նրանց դիերը մնացին ճանապարհներին ընկած ու շներին կեր դարձան:

3. *Ալբիստանի գավառակի Յարբուզ* գյուղում ու *Անտրունի գավառի Կոկիսոն* գյուղում երիտասարդ կանայք և աղջիկները ծայրահեղ անարգանքների ենթարկվեցին: Մեծ թվով բնակիչներ սպանվեցին, շատերը բռնի իսլամացվեցին, իսկ տեղի բնակչության ամենագեղեցիկ կանայք և աղջիկները տարվեցին Ալբիստանի և Յարբուզի բեյերի ու տեղի չերքեզների պարագլուխների հարեմներ, որոնք նրանց որպես ռազմավար բաժանեցին միմյանց միջև:

IX. Ադանայի վիլայեթ

1. Նոյեմբերի 9-ին պահեստազորի զինվորները ներխուժեցին Մսիս բնակավայրի եկեղեցի, ավերեցին եկեղեցին, երբ այնտեղ երեկոյան ժամերգություն էր տեղի ունենում, հափշտակեցին սրբավայրի պաշտամունքային անոթներն ու գանձերը, պղծեցին խորանը, ոտնատակ տվեցին սրբազան նշխարը, սուրբ մյուռոնը թափեցին գետնին և պատառոտեցին Ավետարանն ու մյուս սուրբ գրքերը: Այդ թալանի ընթացքում ծեծված քահանա տեր Հակոբը հետագայում տարվեց Ադանա, որտեղ բանտարկվեց այն հանցագործության պատճառով, որ վալիին հեռագրով բողոքել էր այդ չարագործությունների համար: Այդ քահանայի կինը, որը եկեղեցուն կից շինություններում էր բնակվում, անասելիորեն անարգվեց:

2. *Բայասի գավառակում* Չորք-Մարզվան քաղաքի Սուրբ Փրկիչ եկեղեցին կողոպտվեց, իսկ նրա վերակացուն՝ Հակոբ Վանսջիխյանը, սպանվեց եկեղեցու սալահատակի վրա:

Չորք-Մարզվանի շրջակայքում Ուզեյր և Օջախլի գյուղերի եկեղեցիները թալանվեցին ու հրդեհվեցին, իսկ Նաջարլու գյուղում կողոպտիչները ներխուժեցին եկեղեցի և պատառոտեցին ու

ոտնակոխ արեցին Ավետարանը: Սուրբ խաչը, որը զարդարում էր վարագույրը, պոծվեց: Քահանայի մորուքը պոկեցին, և, ի վերջո, կրակի մատնեցին եկեղեցին:

Հայ կույսերին, որոնց առևանգել էին Ֆռնուզից, Կոբանից և Մարաշից, ստիպեցին ամուսնանալ Բայասի թուրքերի հետ:

3. Հաճնի գավառում Ռումլու բնակավայրի եկեղեցին կողոպտվեց, իսկ քահանան գանակոծվեց:

V

Դեսպանների զեկույցը

(Թարգմանված անգլիական Կապույտ գրքում զետեղված ֆրանսերեն բնօրինակից. Թուրքիա, թիվ 2, (1896 թ.), *Նամակագրություն՝ կապված Հայկական հարցի հետ: Լոնդոն: Հարիսոն և որդիներ*) 6 մեծ տերությունների դեսպանների կոլեկտիվ նոտան Բարձր դռանը[14]:

«Մեծ տերությունների ներկայացուցիչները անհրաժեշտ են համարել կազմել մի ցուցակ, որն ամփոփում է իրենց տեղեկությունները Անատոլիայում վերջին իրադարձությունների վերաբերյալ:

Սույն տեղեկությունները, որոնց ճշմարտացիությունը հնարավորինս ստուգված է, սերում են եվրոպական աղբյուրներից կամ վերցված են հյուպատոսական զեկուցագրերից. դրանք սահմանափակվում են այն բնակավայրերով, որտեղից դեսպանները կարողացել են արժանահավատ տեղեկություններ ստանալ, և քաղված չեն շահագրգիռ աղբյուրներից:

Մեծ տերությունների ներկայացուցիչները կարծում են, որ անհրաժեշտ է այդ ցուցակի մեկ օրինակը տրամադրել Բարձր դռանը:

Փերա, փետրվարի 4, 1896 թ.

---

[14] Թուրքիա, թիվ 2, էջ 338:

1895 թ. իրադարձությունները Փոքր Ասիայում

Վայրը	Ամսաթիվը	Զոհերը	Վիրավորները	Հաղորդում իրադարձությունների և դրանց պատճառների վերաբերյալ	Իշխանությունների և բնակչության կեցվածքը
				Տրապիզոնի վիլայեթ	
Տրապիզոն	Հոկտեմբերի 2	…	…	Բահրի փաշան՝ Վանի նախկին վալին, և Համդի փաշան՝ հրամանատարող գեներալը և դիվիզիայի հրամանատարը, թեթևակի վիրավորվեցին երկու կրակոցից, որոնք հայերին էին վերագրում:	
	Հոկտեմբերի 4, 5	…	…	Սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած անկարգությունների մասին տեղեկության պատճառով մահմեդականների շրջանում առաջացավ բուռն գրգռվածություն: Ամսի 4-ի երեկոյան 3000 զինված մահմեդականներ՝ մասամբ հարևան գյուղերից, խուժեցին քաղաք և հարձակվեցին քրիստոնյաների թաղամասերի վրա: Ըստ վալիի տեղեկության՝ հուզումների շարժա-	Վալիի վերաբերմունքը գոհացուցիչ էր, զինվորական իշխանություններինը՝ դանդաղկոտ ու վարանոտ: Իրադարձությունների սկզբնավորման մասին իշխանությունների տեղեկությունը, ըստ երևույթին, ճիշտ չէ: Վիճաբանությունը տեղի է ունեցել միայն մուսուլմանների միջև:

				ռիթը հայերի և թուրքերի միջև մի մասնավոր վիճաբանություն էր, բայց այն հանգամանքը, որ մուսուլման ցուցարարների մի մասը եկել էր գյուղերից, որոնք Տրապիզոնից մի քանի ժամվա հեռավորության վրա են գտնվում, պարզ ապացույց է այն բանի, որ նրանց գործողությունները կանխամտածված էին: Բացի դրանից՝ քաղաքի մահմեդականներն օրվա ընթացքում զենքի նշանակալի գնումներ էին կատարել շուկայում և նաև փորձել էին գրավել մի զինապահեստ: Հյուպատոսներն անմիջականորեն ներկայացան վալիին, որը ցույցերի ժամանակ գյուղավայրերից վերադարձավ քաղաք:	
	Հոկտեմբերի 8	Շուրջ 600, որոնցից 20-ը՝ մահմե-	…	Կեսօրին քաղաքի բոլոր մասերում խուճապ առաջացավ, և բոլոր կողմերից կրակոցներ լսվեցին: Հյուպատոսների ուսումնասիրությունը պարզեց, որ հայերի կողմից որևէ հրա-	Ազդանշանից անմիջապես հետո նավահանգստում գտնվող Մահոնաջիսի [Mahonadjis] լազերը վազեցին դեպի իրենց մակույկնե-

		դական- ներ		հրում չէր եղել: Քաղաքում հանգիստ էր, երբ շեփորի ազդանշանով խռովությունը սկսվեց: Նմանապես այդպիսի մի ազդանշանով էլ ժամը երեքին այն դադարեց: Բոլոր հայերը, որոնց հանդիպում էին փողոցում, սպանվեցին: Մարդասպանները բռնությամբ ներխուժում էին նաև խանութները, սպանում էին վաճառականներին և հափշտակում նրանց ապրանքները: Միայն օտարազգիների տները խնայեցին, ակներևաբար՝ ըստ հրամանի: 150 մարդ ապաստանեց ռուսական հյուպատոսարանում, մյուս բոլոր հյուպատոսարանները նույնպես ապաստան տվեցին մարդասպանների կողմից հետապնդվողներին: Քրիստոնեական վարդապետության եղբայրների դաստակերտը մինչև հոկտեմբերի 15-ը ընդունեց ավելի քան 2000 մարդկանց:	ը՝ զենքերը վերցնելու: Շատ վայրերում նկատվել են զինվորներ, որոնք մարդասպաններին ու կողոպտիչներին աջակցություն էին ցուցաբերում: Նաև տեսել են բարձրաստիճան սպաների, որոնք թալանված իրերը բարձել էին տալիս սայլերին և ուղարկում իրենց բնակարանները: Մինչև երեկո կողոպուտը թույլատրվեց իշխանությունների կողմից: Ամսի 5-ին վալիի կողմից խոստացված 150 զինվորները Ռիզեից ժամանեցին միայն ամսի 10-ին: Ռազմական դատարանը, որը գործարկվեց հոկտեմբերի 8-ի հանցագործությունների հեղինակներին գտնելու համար, սահմանափակվեց միայն մահմեդականներին

				Ավելի քան 60 հայեր ապաստանեցին ռուսական փոստատար նավում և միայն մեծ ջանքերով կարողացան խուսափել հարձակվողների հետապնդումից, որոնք փորձում էին նրանց սպանել, նախքան նրանք տախտակամած կբարձրանային:	խորհուրդներ տալով: Հայերը, դրան հակառակ, զանգվածաբար ձերբակալվեցին՝ նրանց մահմեդականների հարձակումներից պաշտպանելու պատրվակով: 8-ը դատապարտվեցին մահվան, իսկ 25-ը՝ շատ տարիների բանտարկության:
	Նոյեմբերի 24	…	…	Անկարգությունների նոր ալիք առաջ բերելու փորձն իսկույն արգելվեց: Անկարգություններին հաջորդող ամսում ավելի քան 1500 հայեր նավերով փոխադրվեցին Ռուսաստան: Նյութական կորուստը գնահատվում է ավելի քան 200.000 թուրքական ֆունտ (մոտ 4 մլն մարկ): Այդ ամենից հետո վստահությունը դեռ չի վերականգնվել: Տնտեսական առումով քաղաքն ավերված է, իսկ քրիստոնյաների անհանգստությունը, որոշակի հիմքեր ունենալով, շարունակվում է: Մեծ թվով հույներ արտագաղթում են երկրից:	

Տրապիզոն	…	107	…	Տրապիզոնի շրջակայքում կողոպտված գյուղերից կարելի է վկայակոչել հետևյալ փաստերը՝ Մալա՝ 50 սպանված, Բույուք-Սամորուք-Սու [Bujuk-Samorouk-Sou]՝ 18 սպանված, Քուչուկ-Սամորուք-Սու [Kutchuk-Samorouk-Sou]՝ 8 սպանված, Բարիան՝ 18 սպանված և Ջեֆանոզ՝ 13 սպանված:	
Գյումուշխանե	Հոկտեմբերի 25	100 հայ, մի քանի հույն		Մահմեդականները կոտորում են տեղի և շրջակա գյուղերի հայերին: Նախքան կոտորածի սկսվելը հասարակական վայրերում հավաքված մահմեդականները զատում են հայերին այլ քրիստոնյաներից, վերջիններիս ստիպում են միանալ իրենց՝ նրանց նախապես որոշարկված զոհերի հետ չշփոթելու համար:	
	Հոկտեմբերի 25	…	…	Շրջակա՝ Հասովա [Hassova], Արմուդան [Armoudan], Զոմսրա (Zommsra), Փինգյան (Pingian), Ագովաննես (Agovannes), Իբան (Iban), Տորեզ	

				(Torez), Սարինդիկ (Sarindick), Էձբեդեր (Edzbeder), Ագրոկուզ (Agrokouz), Իլամլիկ (Ilamlik) գյուղերը կողոպտվում են:	
Սամսոն	Դեկտեմբերի 7	…	…	Քաբաջևիզ գյուղը հարձակման է ենթարկվում Քաիֆջիօղլու [Kaifdjioglou] ավազակի հրոսակախմբի կողմից: Մի քանի հայեր սպանվում են, մյուսները փախուստի են դիմում:	
	Դեկտեմբերի 13			Սամսոնում, հատկապես հույների շրջանում, խուճապ է առաջանում: Մութասերիֆն արագորեն վերականգնում է անդորրը:	
Աղջագյունեյ	Դոկտեմբերի 14, 15	…	…	Տարածքի գյուղերը ավազակային հարձակումներից պաշտպանելու համար ուղարկված ռեդիֆները (պահեստազոր) Չարշամբայի շրջանի (Սամսոնի սանջակ) Աղջագյունեյ բնակավայրում բնակիչների հանդեպ կատարում են ամեն տեսակի անկարգություններ, թալանում են նրանց	

				տները, կողոպտում են հայկական եկեղեցին, պղծում են սուրբ առարկաները քահանայի ներկայությամբ, որին պարաններով կապել են, և հայտարարում են, որ կշարունակեն հայերի հետ այդ կերպ վարվել, մինչև նրանք իսլամն ընդունեն:	
Էրզրումի վիլայեթ					
Էրզրում	Հոկտեմբերի 6	…	…	Քաղաքում երկու հայ սպանվեց: Այդ սպանություններն ու ամսի 5-ին և 8-ին Տրապիզոնում տեղի ունեցած անկարգությունների վերաբերյալ լուրերը մեծ անհանգստություն են առաջ բերում հայերի շրջանում: Ամսի 28-ին մահմեդականները կողոպտում են Էրզրումի մոտ գտնվող Դվնիկ գյուղը: Ամսվա վերջին օրերին Դերջանի գավառակի մոտ 40 հայկական գյուղեր կողոպտվում և հրի են մատնվում: Մեծ թվով բնակիչներ սպանդի են ենթարկվում: Մասնավորապես կարելի է վկայակոչել հետևյալը.	Թեև հոկտեմբերի սկզբին պարեկային պահակախմբերն ուժեղացվեցին, իշխանությունը զբաղված է բացառապես հայերին ձերբակալելով՝ չնայած հյուպատոսների՝ որոշակի միջոցառումների դրդելու ջանքերին, որոնք պիտանի կլինեին բնակչությանը հանդարտեցնելու և մահմեդականներին զինաթափելու համար: Թուրք բնակչությունն այդ ընթացքում միանգամայն

		15	…	Բագառիճ. 200 տներ կողոպտված են: Կոտորածից մազապուրծ եղած բնակիչները բռնությամբ իսլամացվում են:	բացահայտորեն սպառազինվում էր կոտորածի համար: Սպաների և զինվորների ակնհայտ մասնակցությունը կողոպուտին հաստատված է հյուպատոսների կողմից: Անկարգությունները չդադարեցվեցին, քանի դեռ խանութներն ամբողջապես թալանված, իսկ դրանց տերերը սպանված չէին: Կոտորածն ու կողոպուտը հոկտեմբերի 30-ի լույս 31-ի գիշերը և հաջորդող գիշերը շարունակվեցին մեկուսի թաղամասերում: Միայն այդ ամենից հետո իշխանությունները սկսեցին զբաղվել վիրավորվածների և լիովին ընչազուրկ դարձածների համար հոգ տանելու և կողոպտված իրերի որոնման հարցերով:
		8	…	Բուլք. 80 տներ կողոպտված են: Սպանդից զերծ մնացած բնակիչներին ստիպում են մահմեդական դառնալ:	
		30	…	Բրիչ. 120 տներ կողոպտված են: Այն բնակիչներին, որոնք չեն սպանվել, ստիպում են իսլամ ընդունել: Այս գավառի հայկական միակ գյուղերը, որոնք խնայվել են, Խարախուրախը, Մեղուսը, Հողակն են:	
		400, 12 թուրք	…	Կեսօրին սկսվում է Էրզրումի հայերի կոտորածը: Տների և խանութների թալանը շարունակվում է մինչև երեկո: Քաղաքի շրջակայքում բազմաթիվ գյուղեր կողոպտվում են: Բացի 400 զոհերից, որոնց թիվը հաստատվել է հյուպատոսների կողմից, մեծաթիվ ուրիշ հայեր էլ անհետացել	

				են: Բազմաթիվ վիրավորներ տեղավորվեցին զինվորական հիվանդանոցում, որը կառուցել են քրիստոնեական վարդապետության եղբայրները: Կողոպտվեցին 1500 խանութներ և մի քանի հարյուր տներ:	Հետագայում ձերբակալվեցին թալանին մասնակցած 200 թուրքեր ու լազեր, և իշխանությունները պնդում են, որ նրանցից ավելի քան 100-ին գնդակահարել են: Քրդերի պարագլուխ Հուսեին փաշա Հայդերանլին, սակայն, որը կանչվեց՝ իր արարքների համար հաշվետվություն տալու, չնայած նրա դեմ առկա էին ծանրագույն մեղադրանքները, չկանգնեցվեց ռազմական դատարանի առջև: Ինչ վերաբերում է ռեդիֆներին, որոնք հետագայում հավաքագրվեցին, նրանք լի էին ծայրահեղ չարությամբ և հայտարարում էին, որ եթե իրենք իրենց բնակավայրերից պետք է մեկնեին՝ կատարելու սուլթա-
	Նոյեմբերի 3	…	…	Նոր անկարգություններ, մի քանի հայեր սպանվել են:	
	Նոյեմբերի 25	…	…	Առաջանում է խուճապ, որի ընթացքում մի հայ սպանվել է և 10-ը՝ վիրավորվել:	
	Դեկտեմբերի 10	…	…	Նոր խուճապ, բայց առանց արյունահեղության:	

					նի հրամանները, ապա նախևառաջ պետք է երկիրը բոլոր քրիստոնյաներից մաքրեին:
Բասեն	Նոյեմբերի 27, 28	140	…	Հասանկալեի վանքը կողոպտվում և հրկիզվում է, եպիսկոպոսն ու բնակիչները՝ մինչև վերջին մարդը, սպանվում են: Կողոպտվում են գավառի 14 այլ գյուղեր: Անվնաս մնացին հետևյալ գյուղերը. Դելի Բաբան, որը դիմադրեց: Քամազարը [Kamazar], որը որպես փրկագին վճարեց 20 սոմար[15] հացահատիկ և 10 թուրքական ֆունտ: Տոտվերանը, որը որպես փրկագին վճարեց 16 սոմար հացահատիկ: Իշխանը, որը որպես փրկագին վճարեց 30 թուրքական ֆունտ: Այս շրջանի կողոպտված գյուղերից մենք հիշատակում ենք հետևյալնե-	

[15] Սոմարը հացահատիկի չափման միավոր է, որը կազմում է մոտ երեք ցենտներ:

				ը. Յուզվերան, Էգեպատ, Մեծ Դու, Կիրդաբազ, Եղան, Կամուրջ, Թորդան, Արտի:	
Օվա	Նոյեմբերի 27, 28	…	…	Այս գավառի հետևյալ գյուղերը կողոպտվեցին ու հրի մատնվեցին՝	
		2	…	Ճիփեկ՝ ամբողջովին կողոպտված: Արծաթ՝ ամբողջովին կողոպտված: Դինարիգոմ՝ ամբողջովին կողոպտված:	
		2	…	Ումուտում՝ ամբողջովին կողոպտված: Եկեղեցին հրկիզվում է, քահանան ու մեկ այլ հայ սպանվում են: Գեղախոր՝ ամբողջովին կողոպտված: Գրչիք՝ ամբողջովին կողոպտված:	
			բազմաթիվ	Կճնկոց՝ ամբողջովին կողոպտված:	
		4	…	Դվնիկ՝ ամբողջովին կողոպտված: Եկեղեցին թալանվում է, քահանան և երեք հայեր սպանվում են:	
		5	…	Օձնի՝ ամբողջովին կողոպտված: Եկեղեցին թալանվում է, քահանան ու	

				չորս հայեր սպանվում են: Պատիշեն՝ ամբողջովին կողոպտված:	
		…	բազմաթիվ	Բլուր՝ ամբողջովին կողոպտված: Իլիջա՝ հարուստ հայերի տները կողոպտվում են: Ապլինտի՝ ամբողջովին կողոպտված:	
		3	…	Սալաձոր՝ ամբողջովին կողոպտված:	
		2	…	Թարքունի՝ ամբողջովին կողոպտված:	
		1	…	Գոմք՝ ամբողջովին կողոպտված: Եկեղեցին թալանվում է, իսկ քահանան՝ սպանվում: Սնկառիճ՝ ամբողջովին կողոպտված: Գուեզ [Gueuz]՝ ամբողջովին կողոպտված: Ռաբատ՝ ամբողջովին կողոպտված: Ըղտաձոր՝ ամբողջովին կողոպտված:	
		1	1	Խաչկավանք՝ ամբողջովին կողոպտված: Վարդապետը վիրավորվել է, մեկ հայ՝ սպանվել:	
			բազմա-	Սոգյուտլու՝ ամբողջովին կողոպտ-	

			թիվ	ված: Սովուկ-Ջերմուկը խուսափել է կողոպուտից՝ որպես փրկագին վճարելով 120 թուրքական ֆունտ:	
Երզնկա	Հոկտեմբերի 21.	Մի քանի հարյուր, 7 մահմեդական	400	Ըստ իշխանությունների տեղեկության՝ անկարգություններն ու հայերի կոտորածները ծայր են առել հայերի կողմից մի մոլլայի սպանության հետևանքով: Պաշտոնական տվյալներով՝ սպանվել են միայն 75 հայեր: Հյուպատոսները զոհերի թիվը գնահատում են մի քանի հարյուր, որոնցից 7-ը՝ մահմեդական:	
Բաբերդ	Հոկտեմբերի 27	650 700	…	Հեծյալ մուսուլմանների մի զինյալ ավազակախումբ՝ Սյուրմենեից (Տրապիզոնի սանջակի շրջան) եկած դասալիք Չալդարօղլուի հրամանատարությամբ, ամբողջությամբ ավերում է Բաբերդի հարևանությամբ գտնվող գյուղերը: Քաղաքում սպանվեցին ավելի քան 650 հայեր, գյուղերում սպանդի ենթարկվեց ողջ արական	Իշխանությունները գործելու ազատություն տվեցին խռովարարներին, և նրանց պատասխանատվությունը խիստ ծանրաբեռն է: Պարզվել է, որ շատ մահմեդականներ կրում էին զենքեր, որոնք զորքերից էին վերցված: Զինվորները մասնակ-

				բնակչությունը, ավելի քան 165 գյուղեր ավերվեցին, առանձնապես տուժեցին Վարզահան և Լուսոնք գյուղերը: Մ. Բերգերոնը՝ Էրզրումում ֆրանսիական հյուպատոսը, որն արձակուրդին Ֆրանսիա մեկնելիս անցնում էր երկրով, Բաբերդի ու Գյումուշխանեի (Տրապիզոնի վիլայեթ) միջև ընկած ողջ տարածքն ամբողջապես ամայացած գտավ: Երբ նա անցնում էր Վարզահանով, տեսավ, թե ինչպես էին հայերի մոտ 100 դիեր թաղում մի փոսի մեջ: Փողոցները ծածկված էին կանանց և երեխաների խմբերով, որոնք թափառում էին՝ չունենալով օթևան, սնունդ ու հագուստ: Շատ գյուղեր ստիպված էին իսլամն ընդունել՝ ավերածությունից խուսափելու համար:	ցում էին կոտորածին և կողոպուտին:
Քղի	Հոկտեմբերի 14	…	…	Գավառում թալանվել է 9 գյուղ:	
	Հոկտեմ-			Քաղաքը պաշարվում է քրդերի կող-	

	բերի 16			մից:	
	Հոկտեմ-բերի 23			Քաղաքի հայերի կոտորած:	
Բայազետ	…	մոտ 500			
Բիթլիսի վիլայեթ					
Բիթլիս	Հոկտեմ-բերի 25.	շուրջ 800	…	Մզկիթից դուրս գալու ժամանակ թուրքերը հարձակվում են հայերի վրա՝ առանց վերջիններիս կողմից որևէ հրահրման: Ջարդը սկսվեց և ավարտվեց շեփորի ազդանշանով: Հյուպատոսների տվյալներով՝ սպանվածների թիվը մոտավորապես 800-ի է հասնում: Թուրքական իշխանությունների տվյալների համաձայն՝ նրանց թիվը չէր անցնում 169-ը, որից 39-ը մահմեդականներ էին: Վիրավորների թիվը պետք է 150 լիներ, որից 130-ը՝ մահմեդականներ: Հաղորդվում է քաղաքում և գյուղերում կրոնափոխության մեծաթիվ դեպքերի մասին:	
Սասուն ու	Նոյեմբե-	...	...	Շրջանի մի շարք հայկական գյուղեր	

Տալվորիկ	րի 10			կողոպտվեցին: Հատկապես հիշատակության է արժանի Իշխանաձոր գյուղը. այն ամբողջությամբ թալանվեց, իսկ բնակչությունը՝ կոտորվեց:	
Մուշ	Նոյեմբերի 15	20	...	Մոտ 20 հայեր սպանվեցին մահմեդականների կողմից: Անկարգություններն արագորեն ճնշվեցին Մուշի մութասերիֆ Ֆեհամ փաշայի կողմից:	Սպառնացող կոտորածների և տեղի ունեցած անկարգությունների պատասխանատվությունը ծանրանում է Մուշի քաղիի[16] վրա: Միայն մութեսարիֆի և մուֆթիի եռանդի ու նախաձեռնողության շնորհիվ քաղաքը զերծ մնաց կատարյալ աղետից:
Սերթ	Նոյեմբերի 19	...	...	Մերձակա մի գյուղ մահմեդականների կողմից հարձակման ենթարկվեց և հիմնահատակ ավերվեց:	
				Ճապաղջրում կոտորածը վերապրած բոլոր հայերը ստիպել եղան դառնալ մահմեդականներ:	Իշխանությունն օգտվում է բոլոր միջոցներից՝ հայերին ստիպելու, որ ստորագրեն մի հայտարարագիր այն մասին,

[16] Իսլամական երկրներում այդպես են անվանվում դատավորները (Խմբ.):

					որ իրենք են հրահրել ան-կարգությունները:
	Դեկտեմ-բեր	...	...	Մահմեդականները կոտորեցին զգալի թվով քաղդեացի և հայ քրիստոնյաների: Ասորիների և յակոբիտյանների կողմից բնակեցված շատ տներ թալանվեցին: Շրջակա մեծ թվով գյուղեր, որոնցում բնակվում են ասորիներ, քաղդեացիներ ու յակոբիտյաններ, ավերվեցին: Անվանապես կարելի է նշել Մարգորգ, Բերքենդ, Թելմեշար (Telmeshar), Բայնքոֆ (Beinkoff) գյուղերը:	
Վանի վիլայեթ					
Վան	Նոյեմբե-րի 1-20	...	...	Ադիլջևազ. 18 գյուղեր կողոպտվում են Հեյդարանլիի քրդերի կողմից՝ Էմին և Թամիր փաշաների հրամանատարության ներքո: Առեն գյուղում սպանվեցին 9 մարդիկ, Արճեշում Մեծոփա վանքը թալանվում է Հասան աղայի՝ Էմին փաշայի հոր կողմից: Բանիում սպանվում են երկու տղա-	

				մարդ ու մի կին, և շրջակա 10 գյուղեր կողոպտվում են: Նոյեմբերի 1-20-ը կողոպտվեցին Վանա լճի ափերին՝ Վանի ու Բիթլիսի վիլայեթներում գտնվող 160 գյուղ: Զոհերի թիվը, ըստ երևույթին, ավելի նվազ է, քան հարևան վիլայեթներում:	
	Հոկտեմբերի 25	...	...	Նոյեմբերի 12-ին քրդերի կողմից Հուսեին բեյ Թաքարի՝ Համիդիեի կայմակամի հրամանատարությամբ, մասնավորապես, կողոպտվեց Սարայը՝ Հաքարիի գավառում գտնվող Մահմուդի գավառակի կենտրոնաքաղաքը:	
			...	Բաշկալե, Գուրգան [Gurgan], Սպարկիրտ, Շատախ, Խոշաբ, Բերկրի, Աղբակ գյուղերը թալանվեցին: 10 000 մարդիկ գտնվում են ծայրահեղ աղքատ դրության մեջ: Խիզանում մի քանի հայեր կարողացան փրկել իրենց կյանքը՝ իսլամ ընդունելով: Ասում են, որ նրանց ստիպել են սպա-	Իշխանությունը չմիջամտեց՝ չնայած զորքերի ներկայությանը:

				նել իրենց ազգականներին, որոնք հրաժարվել են մահմեդականներ դառնալ:	
	Նոյեմբերի 10	...	...	Բողազքեսանն ու Հազարան թալանվեցին քրդերի կողմից, նմանապես նաև Էրմանը, որտեղ գրոհը ղեկավարվեց համիդեականների կողմից՝ Խեմսիկի [Chemsiki] Դեղիմ ցեղից սերող Ահմեդ խանի հրամանատարությամբ:	
	Նոյեմբերի 10	6	...	Հայոց ձորը կողոպտվեց: Աստվածաշենի թիվ մեկ հայ երևելին սպանվեց: Լամազկերտը չորս անգամ հարձակման ենթարկվեց քրդերի կողմից: Մխկներում սպանվեց վեց հայ:	
				Մարմիեդում առևանգվեց մի դեռատի օրիորդ: Մի հայ, որը համարձակվեց դրան ընդդիմանալ, սպանվեց: Արշագը հարձակման ենթարկվեց քրդերի կողմից, որոնց զինվորները ետ շպրտեցին: Մի քանի քրդեր սպանվեցին:	

Մամուրեթ-թիլ-Ազիզի վիլայեթ					
Խարբերդ	Նոյեմբերի 10, 11	Ավելի քան 500	...	Քրդերն ու մահմեդականները հարձակվում են հայկական թաղամասերի վրա և սպանում բնակիչներին: Կապուչինյան առաքելության ղեկավարը քիչ էր մնում՝ սպանվեր: Ամերիկյան առաքելության շենքն ավերվեց, և վերապրած քրիստոնյաների մի հոծ զանգված ստիպված եղավ իսլամ ընդունել:	Սպաներն ու զինվորները մասնակցում էին կողոպուտին:
				Խարբերդի շրջակայքում գտնվող ավելի քան 60 գյուղ ավերվեց: Էրզրումի վալիի կողմից հյուպատոսներին հաղորդված մի տեղեկության համաձայն՝ զոհերի թիվը կազմել է 92, որից 12-ը՝ մահմեդականներ: Կապուչինյանների կողմից ղեկավարվող հյուրատները լի են վիրավորներով: 200 հայերի մի քարավան, որն Ադանայից ետ էր ուղարկվել իրենց հայրենի Խարբերդ, հարձակման ենթարկվեց քրդերի կողմից, որոնք	Քրդերը պնդում են, որ գործում են իշխանությունների հետ փոխադարձ համաձայնությամբ: Վերջիններս, ի վերջո, հասկացան, որ պետք է ինչ-որ բան ձեռնարկեն, բայց չափազանց ուշ էր, և քանի որ սպաները, զինվորներն ու ժանդարմները մասնակցել են թալանին, նրանք չեն համարձակվում որևէ մեկին պատասխանատվու-

				սպանեցին նրանցից 193-ին: Ժանդարմները նրանց պաշտպանելու փոխարեն մասնակցեցին թալանին: Անհնար է ճշգրտորեն նշել ավերված գյուղերի և անհետ կորած հայերի թիվը, բայց հյուպատոսների ամբողջ տեղեկատվությունից պարզ է դառնում, որ ողջ տարածքն ամայացված է:	թյան կանչել:
				Քանի որ քրիստոնյա բնակչության թիվն այս տարածքում շատ մեծ է, մտահոգություն կա, որ զոհերի թիվը շատ մեծ պիտի լինի:	
Արաբկիր	Հոկտեմբերի 1-5	2800	մեծաթիվ	Քրդերն ու թուրքերը զինված նետվում են քրիստոնյաների վրա և կողոպտում քաղաքը: Ըստ պաշտոնական տեղեկությունների՝ զոհերի թիվը եղել է 260, որից 60-ը՝ մահմեդականներ: Հյուպատոսական հաղորդումների համաձայն՝ կողոպուտն ու հրկիզումը տևեցին 10 օր, շատ եկեղեցիներ պղծվեցին, մոտ 2400 տուն թալան-	Առաջին օրերին գյուղերից եկած մահմեդական հրոսակախմբերը միացան քաղաքայինների հետ: Կողոպուտի ավարտից հետո ոստիկանությունը հետաքննություններ սկսեց, և բոլոր տղամարդիկ, որոնք կոտորածից փրկվել էին, բանտ

				վեց, սպանվել են մոտ 2800 հայեր: Վերապրած կանայք և երեխաները ծայրահեղ թշվառության մեջ են: Հարևան Ամբրկա գյուղի բոլոր բնակիչները, բացառությամբ երեքի, սպանվեցին, կողոպտվեց 60 տուն: Շեն գյուղում ողջ է մնացել միայն 6 բնակիչ: Դաշտավայրի մյուս բոլոր գյուղերը ավելի կամ պակաս ավերվել են:	նետվեցին: Նրանց ճակատագրի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա: Իշխանությունները դժբախտներին մի քանի օր հաց բաժանեցին, այնուհետև օգնությունը դադարեց:
Ակն	Նոյեմբերի 8	...	...	Դերսիմի քրդերը հարձակվում են Կամարկապ գյուղի վրա: 300 տներ փլատակվեցին, իսկ 31 տնից բաղկացած մի թաղամաս ամբողջությամբ այրվեց: Բնակիչների մի մասը սպանվեց, մյուսները ստիպված եղան իսլամ ընդունել: Ակնը մնաց անվնաս՝ որպես փրկագին քրդերին վճարելով 1500 թուրքական ֆունտ (մոտ 30.000 մարկ): Աբու Շեյխը խնայվեց քրդերին 200 թուրքական ֆունտ (շուրջ 4000 մարկ)	

				կազմող փրկագին վճարելուց հետո: Փինգյանում թալանվեց 250 տուն, Արմաղանում [Armadan]՝ 130, Լիճքում՝ 220, Սիմուրուում [Simaru]՝ 80, Թեղուտում՝ 140, Մուշեղկայում՝ 160, Նարվերում՝ 60: Բոլոր այս բնակավայրերի բնակիչ-ները մասամբ սպանվեցին, իսկ նրանք, ովքեր կարողացան մահից խուսափել, ստիպված եղան իսլամ ընդունել:	
Մալաթիա	Հոկտեմ-բերի 29	...	...	Առաջին աղմուկի հետ հայերը փախ-չում են իրենց տները: Շրջակա բնա-կավայրերում կոտորածների մասին լուրերը նպաստում են նրան, որ ան-կարգությունները հաջորդ օրերի ըն-թացքում շարունակվեն:	
	Նոյեմբե-րի 4-9	3000	...	Քրդերն ու թուրքերը նետվում են քրիստոնյաների վրա: Կոտորածը և կողոպուտը շարունակվում են 6 օր:	24 ժամ շարունակ մութեսա-ռիֆը թույլ է տալիս, որ կոտոր-ածներն ու կողոպուտը շա-

				Հայերն ապաստանում են եկեղեցիներում՝ թալանից ու շորթումներից խուսափելու համար: Բիրտ վերաբերմունքի և ծեծի են ենթարկվում կաթոլիկ կապուչինյանները: Նրանց հաստատությունը, դպրոցն ու եկեղեցին հրի ճարակ են դարձվել: Հաջորդ օրվա երեկոյան նրանք հայ կաթոլիկների մի խմբի հետ տարվում են մի մեծ զորանոց, որտեղ նրանք 3 օր ու գիշեր անցկացրին մի սենյակում՝ առանց սննդի: Նրանց կորուստը կազմում է 120.000 ֆրանկ: Մահացածների թիվն առնվազն 3000 է գնահատվում, որոնց թվում՝ շատ կանայք ու երիտասարդներ: Մեծ թվով մարդիկ ստիպված եղան իսլամն ընդունել: Հայկական բոլոր տները հրկիզվել են: Գյումուշ-Մաղեն գյուղի տները և ուղղափառ եկեղեցին թալանված են: Մամաշ գյուղում կողոպտվեցին 30 տներ:	ռունակվեն: Միայն ամսի 5-ի երեկոյան նա հայ-կաթոլիկ եպիսկոպոսին հաղորդեց, որ եթե եկեղեցում ապաստանած նրա մարդիկ ցանկանում էին պաշտպանված լինել, պետք է հանձնեին իրենց զենքերը: Այն բանից հետո, երբ դա տեղի էր ունեցել, նա թույլատրեց նրանց տեղափոխվել զորանոց: Ամսի 6-ին նա նույն կերպ վարվեց 3000 լուսավորչական հայերի հետ, որոնք ապաստանել էին իրենց եկեղեցում: Միայն ամսի 9-ին նա թույլատրեց հայրերին տեղափոխվել մի մահմեդականի տունը:

Դիարբեքիրի վիլայեթ					
Դիարբեքիր	Նոյեմբերի 1	Առաքելական հայեր՝ 1000 Կաթոլիկ հայեր՝ 100 Ուղղափառ ասորիներ՝ 150 Կաթոլիկ ասորիներ՝ 3 Քաղդեացիներ՝ 14	250 11 11 1 9 3 1 286	Քրդերն առավոտյան գյուղից գալիս են քաղաք, մահմեդականների հետ միասին թալանում և հրկիզում են շուկան, ապա սպանում բոլոր դավանանքների քրիստոնյաներին: Զինվորները, զապթիեներն ու քրդերը միանում են՝ քրիստոնյաների վրա կրակ բացելու համար: Սպանդը տևում է 3 օր: Թուրքերը պնդում են, թե քրիստոնյաներն էին սադրել կոտորածը՝ ներխուժելով մզկիթներ և մահմեդականների սպանելով: Այդ պնդումը բացարձակապես սուտ է: Ֆրանսիայի հյուպատոսը հոկտեմբերի 30-ին հաղորդել է մի քանի հավաքույթների մասին, որոնք տեղի են ունեցել ոմն Զեմիլ փաշայի տանը, և որոնց մասնակցում էին նաև Զեյլանի շեյխն ու նրա որդին (որոնք դեռ Սասունի կոտորածում էին ներգրավված): Այդ հավաքույթներում էին	Անիզ փաշան՝ վալիի ժամանակավոր պաշտոնակատարը, բացահայտ թշնամանք է ցուցաբերում քրիստոնյաների հանդեպ: 1895 թ. հոկտեմբերի սկզբին վալիի պաշտոնում իր հաստատումը ստանալուց հետո նա սկսում է նրանց սադրել և երկպառակություն սերմանել համայնքների ու հոգևորականության միջև՝ վերջինիս ստիպելով սուլթանին ուղղված մի շնորհակալական հեռագիր ստորագրել վալիի պաշտոնում իր վերջնական հաստատման համար: Լուրջ անկարգություններ էին սպառնում ծագել քրիստոնյա համայնքների մեջ, քանի որ նրանք իրենց հոգևոր առաջ-

		Հույներ՝ 3 Բողոքականներ՝ 11 1191 Թալանված տներ՝ 1701 Թալանված և հրկիզված խանութներ՝ 244 Նյութական կորուստ՝ 2 մլն		քննարկվում քրիստոնյաների դեմ ուղղված ամենաաղետալի ծրագրերը: Պաստառներ էին փակցվում մզկիթների պատերին: Մահմեդականները, որոնց սխալ տեղեկություններ էին հաղորդել նորին մեծություն սուլթանի կողմից վճռված բարենորոգումների վերաբերյալ, բողոքի մի հեռագիր էին ուղարկել նրան և տեղեկացնում էին գոհացուցիչ պատասխան չստանալու դեպքում ուրբաթ օրը՝ նոյեմբերի 1-ին հայերից վրեժ լուծելու իրենց մտադրության մասին: Ակնհայտ է, որ նրանք կանխամտածված ծրագիր ունեին, և քրիստոնյաների խուճապն արդարացված էր: Բացի այդ՝ երկար ժամանակ է, ինչ անսովոր աշխուժություն էր նկատվում մահմեդականների շրջանում, որոնք զգալի քանակությամբ զենքեր ու զինամթերք էին գնում: Ավելի քան 700 քրիստոնյաներ ա-	նորդներին խստագույնս մեղադրում էին վալիի նկատմամբ իրենց դրսևորած թուլության համար: Ֆրանսիական հյուպատոսին, որը նրա ուշադրությունը հրավիրում էր մահմեդականների շրջանում մտահոգիչ հուզումների վրա, վալին հայտնում է, թե ինքը նրանց կողմից վտանգ չի տեսնում, և որ ինքը կարգուկանոնի համար երաշխավորում է: Կոտորածի ընթացքում նա անգամ 5-րդ օրը մերժում է ֆրանսիական հյուպատոսին Կապուչինյան վանքի ներսի ապահովության համար մի հսկիչ կարգելու հարցում:

		թուրք. ֆունտ		պաստանեցին ֆրանսիական հյուպատոսարանում: Քրդերը հինգ անգամ փորձեցին հարձակվել հյուպատոսարանի շենքի վրա՝ առանց, սակայն հաջողություն ունենալու:	
	Նոյեմբերի 28	...	...	Գիշերը սկսվեցին նոր անկարգություններ, բայց բավական արագ ճնշվեցին: Շրջակա բոլոր գավառներն ավերվել են քրդերի կողմից: Նրանց թիվը, որոնց ընտանիքների անդամների քանակը մեծապես կրճատված է, իսկ գյուղերն ավերված են, գնահատվում է 30 000: Բացի այն զոհերից, որոնց դիերը գտնվել են, շատ հայեր մահացել են կրակի բոցերի մեջ, նաև մեծ թվով դիեր իշխանությունների հրամանով կրակի մեջ են նետվել: Քաղաքաբնակ հազար քրիստոնյաներ և հազար գյուղաբնակներ, որոնք աշխատում էին քաղաքում, անհետ կորել են: Սանջակի 119 գյուղեր թալանվեցին և հրկիզվեցին:	Կարգուկանոնը վերականգնելու համար նա զինաթափում է քրիստոնյաներին, իսկ մահմեդականներին թույլատրում է պահել զենքերը: Նա հայ համայնքին, որը պետք է 400 ընտանիքների կերակրի, մերժում է տալ իշխանության կողմից տրամադրված չնչին օգնությունը այն պատճառով, քանի որ եպիսկոպոսը հրաժարվել է ստորագրել մի հեռագիր, որը մեղքը հայերին էր վերագրում:

	Դեկտեմ-բերի 31	...	...	Քրդերի շրջանում աշխուժությունը վերսկսվում է, իսկ հայերի շրջանում մեծ խուճապ է առաջանում:	Աբդուլլահ փաշան՝ կայսեր-ական հանձնակատարն ու զինվորական հրամանատարը, խաղաղեցնում է քրդերին:
Մարդին	Նոյեմբե-րի 7	...	...	Քաղաքը մեծ վտանգի մեջ է, բայց խուսափում է կոտորածից: Ողջ տարածաշրջանն ամայացված է: Հայ կաթոլիկ Թել-Արմեն մեծ գյուղն ամբողջովին թալանված է, նրա բնակիչները փախչում են Մարդին: Հույնուղղափառ Փակոզ [Pakoz] գյուղը, որտեղ քահանայի հետ միասին 100 ընտանիքներ կան, հարկադրվում է իսլամն ընդունել:	
Սվազի վիլայեթ					
Սվազ	...	...	...	Փոքր Ասիայում իրականացվելիք վարչական բարենորոգումների հարցն ուժգին վրդովմունք առաջացրեց հատկապես Սվազի վիլայեթում, որտեղ հայկական տարրը ազդեցիկ և ունևոր է: Նոյեմբերի սկզբից Տրապիզոնի վիլայեթի քոչվոր քրդերն աս-	Վալին հավաքագրում է 1000 պահեստազորայինների և 100 զապթիեների, բայց չի կարողանում Բարձր դռնից ազդու միջոցառումներ իրականացնելու լիազորություն ձեռք բերել:

				պատակում են Սվազի վիլայեթը և մահմեդականներին միացած՝ կողոպտում, ավերում ու հրկիզում են հայկական գյուղերը: Այդ ընթացքում Շապին Գարահիսարում, Զարայում, Տևրիկում, Դարանդայում և Սուշերիում [Susheri] մի շարք մարդիկ սպանվեցին:	
	Նոյեմբերի 12	1500	...	Կեսօրին քաղաքում ակտիվ հրաձգություն է սկսվում: Կոտորածներն ու թալանը տևում են մինչև ժամը 3-ը: Սպանդը, որն ամսի 13-ին փոքր-ինչ դադար էր առել, 14-ին վերսկսվեց: Զոհերի թիվը հասնում է 1500-ի: Հայերին պատկանող բոլոր խանութները թալանված են, իսկ մանրածախ առևտուրը, որն ամբողջովին նրանց ձեռքում է, իսպառ կործանված է: Կոտորածի երեկոյան մուեզինները մինարեթների բարձունքից սպանդի համար Ալլահի օրհնությունն էին կանչում: Նկատվել է, որ հատկապես	Որոշ ձգձգումից հետո Ֆրանսիայի փոխհյուպատոսին որպես պահակախումբ կարգված զինվորները բարձրաձայն փնթփնթում են, որ դրա պատճառով չեն կարողանում իրենց հավատակիցների նման մասնակցել կոտորածին ու թալանին:

				դերվիշները մահմեդականներին հրահրում էին կոտորածի: Հաջորդ օրերին քաղաքում բազում մեկուսի և գաղտնի սպանություններ կատարվեցին: Զոհերի մեծ մասը սպանվեց կացիններով և երկաթյա ձողերով:	
	Դեկտեմ-բերի 3	...	...	Նոր ահազանգ:	Վալին գնում է շուկա, նրան հաջողվում է մուսուլմանների վրդովմունքը մարել:
				Քաղաքի շրջակա՝ 10 կմ հեռավորության վրա գտնվող մեծաթիվ հայկական գյուղեր ավերվել, իսկ բնակիչները սպանվել են: Անհնար է զոհերի թվաքանակը մատնանշել:	
				Գործի դրվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ քրիստոնյաներին հարկադրելու, որ ստորագրեն բացատրագրեր, որոնցում հայերը մեղադրվում են սադրանքների մեջ, և այդպիսով վարկաբեկեն իրենց հավատակիցներին:	Իշխանությունը հրահանգում է գողացված իրերի առնչությամբ հետաքննություն կատարել մահմեդականների տներում, բայց այդ առաքելությունը հանձնարարում է ոմն Սելիմ Օղլուի, որն ա-

					ռանձնահատուկ աչքի էր ընկել հարևան գյուղերի կողոպուտի ժամանակ:
Կյուրին	Նոյեմբերի 12	Ավելի քան 1000	...	Շուրջ 4000 հայ բնակիչներ ունեցող քաղաքը պաշարվում է 2000 քրդերի կողմից, որոնք, ինչպես պնդում են, պարզապես զգեստափոխված պահեստազորայիններ էին: Քառօրյա դիմադրությունից հետո քաղաքը գրավվում է:	
				Հազար հայերի, որոնք ապաստանել են իրենց եկեղեցում ու իրենց զենքերը վայր են դրել, պետք է որ խնայած լինեն: Հնարավոր չէ պարզել սպանված հայերի թիվը: Այնուամենայնիվ, պաշտոնական տեղեկությունները, որոնք հասել են Սվազ, հիմք են տալիս եզրակացնելու, որ նրանց թիվը բավականին մեծ է: Նոյեմբերի 28-ին դեռ 1200 դիեր անթաղ ընկած էին փողոցներում:	

				Հազար հայկական տներ հրկիզվել են, 500-ը՝ թալանվել, նմանապես եկեղեցիները: 150 կանայք ու դեռատի աղջիկներ առևանգվել են քրդերի կողմից:	
Շապին Գարահիսար-Շարքի	Հոկտեմբերի 27-29 Նոյեմբերի 1	Շրջանում ավելի քան 3000	...	Կողոպուտն ու կոտորածները սկսվում են հոկտեմբերի վերջից: Նոյեմբերի 1-ին հայ լուսավորչական եկեղեցում գտնվում էին 2000 փախստականներ: Ստիպված լինելով հանձնվել՝ նրանք սպանվեցին, չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ էլ երեխաներին: Շապին Գարահիսար-Շարքիի շրջանում սպանվածների թիվը գնահատվում է ավելի քան 3000: Մեծ թվով կանայք, դեռատի աղջիկներ և երեխաներ են անարգվել ու սպանվել: 30 գյուղ կողոպտվել է: Ամենապատուհասվածների թվում են Էնդիզը, Բուսեյիդը, Աներոլին, Թամզարան, Ջրտակը, Բուրգը, Սիսը, Մշկանոցը,	

				Աֆսունդուն, Անեղին, Ծիպեռին, Դեղինը [Deghin], Արմուտդաղը [Armutdagh]: Բնակչության 40-50 %-ը սպանվել է:	
Թոքատ	Նոյեմբերի 15	...	...	Կողոպտիչների ավազակախմբերը փորձեցին ներխուժել Թոքատ: Նրանք հետ շպրտվեցին զորքերի կողմից, բայց 150 հայ ձերբակալվեց գաղտնի կոմիտեների անդամակցելու կասկածանքով:	Զինվորական հրամանատարը քաղաքի անվտանգությունն ապահովելու համար իրական եռանդ ցուցաբերելու ապացույցներ տվեց:
				Արդ-Օվայի [Ard-Owa] դաշտավայրում բոլոր շրջակա գյուղերը կողոպտվել են: Քանի որ կողոպտիչները հաճախ ի վիճակի չէին լինում հայերի տներում եղած ողջ պաշարները տանել, նրանք նավթ էին լցնում դրանց վրա՝ կոտորածները վերապրածների համար դրանք անօգտագործելի դարձնելու նպատակով:	Իմամները (բարձրաստիճան հոգևորականներ) և զորքը մասնակցում են կոտորածին: Մութեսարիֆ Բեքիր փաշան դրսևորեց մեծ եռանդ մահմեդականների կողմից սանձազերծված անկարգությունները ճնշելու համար՝ չնայած պահեստազորի հրամանատար Էդհեմ բեյի՝ իր հավատակիցների սպառնալիքների ներքո ցուցաբերած դի-

					մաղրությանը:
Զելա	Նոյեմբեր-ի 28	200	...	Տեղի ունեցավ կոտորած: 200 հայ սպանվեց, 300 տուն ավերվեց:	
Ամասիա	Նոյեմբեր-ի 15, 16	Շուրջ 1000	...	Մահմեդականները հարձակվում են հայերի վրա, թալանում տներն ու խանութները և սպանում քրիստոնյա-ներին: Նրանց բոլոր հաստատու-թյունները, ներառյալ ջրաղացներն ու շինանյութերը, կողոպտվեցին: Ըստ պաշտոնական տվյալների՝ եղել է միայն 80 զոհ, ըստ հյուպատոսների տեղեկությունների՝ նրանց թիվը հաս-նում է 1000-ի: Յեշիլ-Իրմակը քշեց-տարավ մեծ թվով դիակներ:	
Մարզվան	Նոյեմբեր-ի 15	150	500	Մուսուլմանների մի բազմություն հարձակվեց քրիստոնյաների վրա: 150 հայ սպանվել է, մոտ 500-ը՝ վի-րավորվել: Տներն ու խանութները՝ թվով 400, թալանվել են: Մարդաս-պանները հափշտակում էին նույնիսկ սպանվածների հագուստները, որոնց դիերը մերկ ընկած էին ճանապարհ-ին:	Զինվորները մասնակցում էին կոտորածին և թալանին: Կայմակամը փորձեց եզվիտ-ների տեր հորը հարկադրել ստորագրել մի հայտարարա-գիր այն մասին, թե հայերն են հրահրել կոտորածները:

				ներին՝ մնալով անքաղ:	
Խավսա	Նոյեմբե- րի 12	10	...	Տեղի են ունենում անկարգություններ, որոնց ընթացքում սպանվում է 10 հայ, և թալանվում են քրիստոնյաների խանութները:	
Վեզիր Քյոփրու	Դեկտեմ- բեր	200	...	Բնակավայրում անկարգություններ են սկսվում: Հայերի շրջանում զոհերի թիվը, որը, ըստ պաշտոնական տեղեկությունների, 38 է, ըստ հյուպատոսների տեղեկությունների՝ պետք է ավելի քան 200 եղած լինի: Կողոպտվեցին 300 տներ:	
Հալեպի վիլայեթ					
Հալեպ	...	...	...	Սեպտեմբեր ամսին վիլայեթում հայ պատվիրակների ներկայությունը հայտնի է դառնում և առաջ է բերում որոշակի հուզումներ մահմեդական և քրիստոնյա բնակչության շրջանում: Նրանց գործունեությունը, այնուամենայնիվ, մեծ տպավորություն չի գործում նրանց հայ հայրենակիցների վրա, որոնք նրանց ավելի շուտ	Մինչ հյուպատոսների կատարած քայլերը հայերի շրջանում նպաստում են հուզումները հանդարտեցնելուն, նրանց փաստարկումներն իշխանությունների կողմից բացահայտ անտարբերությամբ են ընդունվում: Դրանք ձախողվում են վալի Հասան

				խնդրում են հեռանալ երկրից: Բարենորոգումների ծանուցումը, որոնք հաստատվել էին նորին մեծություն սուլթանի կողմից, և որոնք հրատարակված չլինելու պատճառով հայերի կողմից այնպես էին մեկնաբանվում, թե դրանք իբր իրենց նոր արտոնություններ են շնորհում, իսկ մահմեդականների կողմից այնպես, թե դրանք իբր իրենց ստորադասում են քրիստոնյաներին և չեն տարածվում անձամբ իրենց վրա, գրգռում է մտքերն ու հոգիները և տարբեր կրոնների բնակչությանը հանում միմյանց դեմ: Մյուս կողմից՝ կարգուկանոնը պահպանելու համար հավաքագրված ռեդիֆների վարքագիծը նպաստում է կարգուկանոնի խանգարմանը: Նրանք բացահայտորեն ասում են, որ եթե իրենց հրամայել են թողնել իրենց տները, ապա պետք է նաև ազատություն տան՝ քրիստոնյա-	փաշայի՝ իրերին որքան հնարավոր է լավատեսորեն նայելու վճռականության, փոքրաթիվ բարեմիտ պաշտոնյաների անկարողության և մյուսների զիջողամտության կամ հանցակցության պատճառով: Միայն այն բանից հետո, երբ ամեն ինչ ավարտվել է, իշխանությունները մտածում են ամենաանհրաժեշտ միջոցները ձեռք առնելու մասին: Հալեպում կառավարման խորհրդին կցված հանձնաժողովը, որին հանձնարարվել է պատասխանատվության ենթարկել կարգազանցներին, խղճալիորեն է գործում:

				ներին թալանելու և բնաջնջելու: Հենց Հալեպում բազմիցս խուճապ է առաջացել, բայց բանը արյունահեղության չի հասել: Ցավոք, սակայն, վիլայեթի բոլոր գավառներում ամբողջ գյուղեր հիմնահատակ են արվել, և բազմահազար հայ բնակիչներ անօթևան են և մատնված են սովի ու թշվառության:	
Ալեքսանդրետ	Նոյեմբերի 7	...	...	Քաղաքի դեմ Բեյլան գյուղի հայերի կարծեցյալ գրոհի մասին կեղծ լուրի պատճառով առաջանում է խուճապ: Անհանգստությունը քաղաքում շարունակվում է: Օրեր շարունակ մաքսային պաշտոնյաները ճեպով շրջում են քաղաքի սրճարաններով և փողոցներով՝ զինված ատրճանակներով ու հրացաններով, որոնք պահվել էին մաքսատանը որպես մաքսանենգ ապրանքներ: Նահանգապետը ոչինչ չի ձեռնարկում՝ այդ պաշտոնյաներին իրենց պարտականություններին	Հաղորդում են նավահանգիստը հատող զինվորների գրգռիչ վարքագծի մասին, որոնք բարձրաձայն պարծենում են երկրի խորքում տեղի ունեցած կոտորածներին իրենց մասնակցությամբ:

				վերադարձնելու համար:	
Անտիոք	Նոյեմբերի 20	...	...	Անտիոքի մոտ գտնվող Քեսաբ բնակավայրը պաշարվել է զորքերի կողմից, որոնք սպառնում են սպանել հայերին, եթե նրանք չհանձնեն իրենց զենքերը:	
Այնթապ	Նոյեմբերի 15-17	1000	...	Մահմեդականները հարձակվում են քրիստոնյաների վրա և սպանում հազար հոգու: Ֆրանցիսկյանների վանքի վրա հարձակումը ձախողվում է: Այնթապից մինչև Ուզուն Յայլա մահմեդականները կատարում են ամենազզրելի չարագործությունները: Պաշտոնական տեղեկագրերը հաղորդում են միայն 150 սպանվածի մասին, որոնցից 50-ը՝ մահմեդական: Հյուպատոսների կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ մի հայ արվեստագետ առանց որևէ սադրանքի սպանվեց Բիրեջիքից եկած մի զինվորի կողմից, որից հետո թուրքերը շուկայի հրմշտոցի մեջ հար-	Ռեղիֆները վատ վարք են դրսևորում: Հալեպում տեսնում էին նրանցից բազմաթիվ դասալիքների՝ գողացված իրերով, սուրբ անոթներով և շուրջառներով: Համիդեականները նույնպես ամենագործուն մասնակցություն ունեցան թալանին ու կոտորածներին:

				ձակվեցին հայերի վրա և տեղնուտեղը սպանեցին 300 հոգու: Ամբոխն այժմ հարձակվում է հայկական թաղամասերի վրա, որտեղ, ի դեպ, որոշ դիմադրության է հանդիպում: Հաջորդ երկու օրերին թալանը շարունակվում է:	
	Դեկտեմբերի 25	...	...	Սկսվեց մի կոտորած, որը, սակայն, արագ դադարեցվեց:	
Բիրեջիք	...	...	...	Դեկտեմբերի վերջին օրերից ի վեր քաղաքը հրի ճարակ է դարձել:	
Ուրֆա	Հոկտեմբերի 27, 28	Մի քանի հարյուր	...	Քրդերն ու համիդեականները մեծ կոտորած են կազմակերպում քրիստոնյաների շրջանում: Վիրավորները շատ բազմաքանակ են, 1500 խանութներ թալանված են: Անկարգությունների դրդապատճառը վերագրվում է մի թուրքի և մի հայի միջև առաջացած վեճի: Հայը սպանվեց, ինչից հետո նրա հայրենակիցները սպանեցին մահմեդականին:	Մեծ թվով քրիստոնյաներ մահվան սպառնալիքի ներքո հարկադրված եղան իսլամ ընդունել: Նրանք, ովքեր դրան համաձայնում էին, սպիտակ դրոշներ էին բարձրացնում իրենց տների վրա և հագնում սպիտակ չալմաներ, որից հետո նրանց խնայում էին:
	Դեկտեմ-	...	...	Նոր կոտորած է տեղի ունենում: Իշ-	Կարգուկանոնի վերա-

	բերի 28			խանությունները ընդունում են, որ 900 սպանվածներ են եղել: Ըստ հյուպատոսների՝ նրանց թիվն անցնում է 2000-ը: Քրդերն ու բեդվիններն անօրինակ վայրագություններ են կատարում, իսկ զորքերն ի վիճակի չեն կարգուկանոնը վերականգնել: Վերջին կոտորածը տևեց դեկտեմբերի 28-ից մինչև հունվարի 1-ը:	կանգնման համար հավաքագրված ռեդիֆները մասնակցում են թալանին և կոտորածին:
Մարաշ	Հոկտեմբերի 23	40	...	Մի հայի և մի մահմեդականի միջև տեղի ունեցած վեճի հետևանքով թուրքերը հարձակվում են հայերի վրա և սպանում 40 հոգու:	Իշխանությունների թողտվությունն ու ռեդիֆների մասնակցությունը կոտորածին հաստատված են տարբեր հյուպատոսների ուսումնասիրություններով:
Մարաշ	Նոյեմբերի 3	350	...	Նոր հարձակում մահմեդականների կողմից հայերի վրա, որոնցից շուրջ 350-ը սպանվում է:	
	Նոյեմբերի 18	Ավելի քան 1000	...	Նոր կոտորած՝ նախապես ծանուցված մահմեդականների կողմից: Ավելի քան 1000 հայ սպանվում է: Իշխանությունը պնդում է, թե զոհերի թիվը	

				չի գերազանցում 30-ը: Ամերիկյան առաքելության շենքերը, աստվածաբանական ճեմարանը և գիշերօթիկ դպրոցը կողոպտվում են հենց զորքերի կողմից, ճեմարանը հրկիզվում է: Ֆրանցիսկյանների առաքելությունը խնայվեց, բայց նրանց գլխավոր թարգմանը սպանվեց նրանց շենքի առաջ՝ զինվորների ներկայությամբ, որոնք անտարբեր դիտում էին: Մարաշի շրջանում՝ Էլօղլու կոչվող վայրում, 250 քրիստոնյաների մի քարավան հարձակման է ենթարկվում քրդերի կողմից, կողոպտվում է, և բոլորը սպանվում են:	
Ենիճեկալե	...	...	...	Զինվորական մի ջոկատ գալիս է Ենիճեկալեին շատ մոտ գտնվող՝ Մուջուկ-Դերեսի և շեփորի ազդանշանով հարձակվում է քրիստոնյաների վրա, սպանում է նրանց, թալանում ու հրկիզում տները:	

	Նոյեմբե-ի 17	...	...	Հոկտեմբերի վերջից ֆրանցիսկյան միաբանության եղբայրները զուր պահանջում են Մարաշի իշխանությունների պաշտպանությունը:	Զորամասերն իրենք են իրենց սպաների գլխավորությամբ ձեռնամուխ եղել կոտորածին ու կողոպուտին:
	Նոյեմբե-ի 18	...	...	Զինվորները հարձակվում են Մուջուկ-Դերեսիի հյուրատան վրա և սպանում հայր Սալվադորին: Այնուհետև նրանք անցնում են Ենիճեկալե, որտեղ հրի են մատնում բոլոր տներն ու ֆրանցիսկյանների վանքը: Երեք եղբայրների և 15 որբ երեխաների հաջողվում է փրկվել՝ փախչելով Զեյթուն:	
Ենիճեկալե	...	600	...	Ենիճեկալե, Մուջուկ-Դերեսի, Կոտեկլի [Kotekli], (Dsurukli), Տաշ (Tash), Դեվեն (Deven), Բունդուք և Բանկ գյուղերում հաշվվում է 600 սպանված: Դոմ-Կալե գյուղը կողոպտվեց ու հրկիզվեց: Ֆրանցիսկյանների վանքը ավերվեց, և որևէ տեղեկություն չկա միաբաններից:	
Ադանայի վիլայեթ					

Մերսին և Ադանա	Հոկտեմբերի 31	...	...	Մահմեդականների կողմից հայերի վրա կատարված անհատական պարբերական հարձակումները, ճանապարհորդների ձերբակալությունները, որոնցից նախ փող էին կորզում, ապա կողոպտում, մեծաթիվ գյուղերի և մեկուսի ագարակների թալանն ու կողոպուտն առաջացնում են ընդհանուր խուճապ ինչպես Մերսինում, այնպես էլ ողջ տարածաշրջանում: Կողոպտված բնակավայրերի թվում կարելի է հիշատակել հետևյալները. Համզալի – ինը տներ և տասնվեց խանութներ՝ հրկիզված և վեց ագարակներ՝ թալանված: Թեմիրդաշ [Temirtasch] – վեց ագարակներ՝ թալանված: Քիմիրթլի [Kimirtli] – քառասուն տներ՝ թալանված: Ակփունար – երեսուն տներ՝ թալանված:	Ադանայի վալին՝ Ֆաիք փաշան, փոխանակ ձեռնարկելու կարգուկանոնի պահպանման համար պիտանի միջոցառումներ, շրջագայություն կատարեց վիլայեթում և ձևացրեց, թե ոչինչ չգիտի այն մասին՝ ինչ կատարվում է: Դևթերդար Մեհմեդ Միդհաղը, որը գործերի փոխհավատարմատարն է, անմեղ քրիստոնյաների դեմ անարդարացի միջոցառումներով մեծացնում է լարվածությունը: Իշխանությունները զինաթափում են քրիստոնյաներին և մյուս կողմից հանդուրժում են մահմեդականների անսովոր մեծ բազմության ներկայությունը քաղաքում:

				Կարա Մերիեմ [Kara Meriem] – քսան տներ՝ թալանված: Կարաքյոյ – տասը տներ՝ թալանված:	
Մերսին և Ադանա	Դեկտեմբերի 13	...	...	Մահմեդականների կողմից ծրագրված էր այդ օրը ինչպես Մերսինում, այնպես էլ Տարսոնում մի հակաքրիստոնեական շարժում սկսել, որի համար ակնհայտ նախապատրաստություններ էին կատարվել: Փոխգնդապետ Էֆադ բեյը ցրում է ամբոխի կուտակումները:	Նազիմ բեյը՝ Մերսինի մութեսարիֆը, արեց իր հնարավորը՝ մեղավորներին հետապնդելու համար:
Տարսոն	...	...	...	Մի մահմեդական ապտակում է մի հայ քահանայի:	
	Դեկտեմբերի 13	...	...	Քաղաքում մահմեդականների մի ավազակախումբ է շրջում՝ զինված երկաթյա ձողերով, դանակներով և փայտերով: Նազիմ բեյին հաջողվում է Տարսոնի կայմակամի, մուֆտիի և մի քանի հայ երևելիների աջակցությամբ նրանց ձերբակալել: Այնուհանդերձ մի քանի խանութներ թա-	Վալին վստահեցնում է ֆրանսիական Լե Լինոիս հածանավի հրամանատարին (նոյ. 22), որ վիլայեթում ոչ մի տեղ կարգուկանոնը խաթարված չէ, մինչդեռ կարելի է արձանագրել, որ ամենուրեք, որտեղով Ֆաիք փա-

				լանվել են, երկու հայեր՝ սպանվել: Շարժումը հրահրվել էր թուրքերի կողմից, որոնք եկել էին Կեսարիայից և հաղորդել էին այդ քաղաքում տեղի ունեցած կոտորածների մասին՝ Տարսոնի մահմեդականներին հանդիմանելով նույն կերպ չվարվելու համար:	շան անցնում էր իր շրջագայության ժամանակ, անկարգություններ էին սկսվում:
Մսիս	Նոյեմբերի կես	...	...	Հայկական եկեղեցին պղծվեց, քահանայի կինն անարգվեց, իսկ քահանային թուրքերը զապթիեների աջակցությամբ բանտ նետեցին: Հարձակումը ղեկավարվում էր մի սպայի կողմից:	
Հաճն	...	...	...	Քիչ էր մնում՝ քրիստոնյաների կոտորած տեղի ունենար:	
	Հոկտեմբերի 16	...	...	Հաճնից երկու ժամվա հեռավորության վրա գտնվող Շահր գյուղը հարձակման ենթարկվեց քրդերի կողմից: 800 բնակիչները փախան Հաճն:	Կայմակամը կոտորածի հրաման էր արձակել, ինչը միայն քաղիի և մուֆթիի միջամտությամբ կասեցվեց:
Բայաս	Հոկտեմբերի 27	...	...	Քաղաքում սկսվում են անկարգություններ՝ պատճառավորված ողջ տարածաշրջանում տեղի ունեցող կո-	Քրիստոնյաները պատրաստակամորեն վայր դրեցին իրենց զենքերը պայմանով, որ

				տորածների և թալանի վերաբերյալ լուրերի տարածմամբ:	թուրքերը ևս նույնն անեին: Պայմանը, սակայն, չիրականացվեց: Զինվորները դիտում են քրդերի և մահմեդականների հարձակումները քրիստոնյաների վրա՝ առանց միջամտելու: Մանկամարդ հայերը՝ տղաներն ու աղջիկները, վաճառվում են որպես ստրուկներ:
	Նոյեմբերի 11	...	...	Օջախլի և Ուզեյր (200 տուն) գյուղերը կողոպտվում ու հրի են մատնվում:	
	Նոյեմբերի 10	...	...	Ֆռնուզ բնակավայրը կողոպտվում և հրկիզվում է: Զոհերի թվում կա մի հույն:	
		300	...	Թալանված գյուղերից կարելի է հիշատակել Հաշցալի [Haschzali] գյուղը, որտեղից 400 գլուխ անասուններ և մեծաքանակ հացահատիկ են հափշտակվում, Քաչե (Kacze), Քուրդ-Կուլեք (Kurd-Kulek), Քեչեբեկ (Kecschebeg), Դաշիր-Դաղ Նաջալու գյուղերն ու չորս ագարակներ: Սպանվեցին 300 քրիստոնյաներ, նյութական կորուստները գնահատվում են 50.000 թուրքական ֆունտ (մոտ 2 մլն մարկ):	
Չորք-Մարզվան	Նոյեմբերի 13	...	...	Այս բնակավայրը հարձակման է ենթարկվում մահմեդական քրդերի և չերքեզների կողմից: Մոտ 6000 քրիս-	Զորամասերը՝ թվով նախ 200, ապա՝ 800, հարձակման ժամանակ ներկա են՝ առանց

				տոնյաներ, որոնք շրջակայքում տեղի ունեցած կոտորածներից մազապուրծ էին եղել, ապաստանել էին այնտեղ: Զոհերի և վիրավորների թիվը շատ մեծ է: Բնակիչները, որոնց պաշարման օղակը շարունակ ավելի էր սեղմվում, ի վերջո նոյեմբերի 21-ին հանձնում են իրենց զենքերը պայմանով, որ նմանապես նաև թուրքերը զինաթափվեն: Այդ պայմանը չկատարվեց: Ըստ պաշտոնական աղբյուրների՝ սպանվել է միայն 8 մահմեդական, իսկ 13-ը՝ վիրավորվել: Հայերի ունեցած զոհերի թվի վերաբերյալ որևէ հիշատակություն չկա: Ողջ տարածաշրջանում անհամար նեխող դիեր փռված են դաշտերում՝ առանց թաղվելու:	որևէ միջամտություն ցուցաբերելու:
Ակբաշ	Նոյեմբերի վերջ	...	...	Քրդերը Ակբաշի՝ լազարիստական եղբայրների և Շայքլեի (Խասսայի գավառակ, Զեբել-Բերեքեթ գավառ) տրապպիստների հաստատությունը	Մահմեդ Ալի էֆենդին՝ կայմակամի գործերի ժամանակավոր հավատարմատարը, չեզոքացնում է վտանգը:

				ներին սպառնում են կողոպուտով:	
	Դեկտեմ-բերի 24	...	...	Դեկտեմբերի վերջին լազարիստնե-րին դարձյալ սպառնում են կողոպու-տով: Դեկտեմբերի սկզբին մահմեդական-ները հարձակվում են հետևյալ բնա-կավայրերի վրա՝ Գեբեն, Դարանդա, Քիլիս, որտեղ սպառնալիք են դառ-նում մեծ թվով բնակչության համար: Երկիրը մատնվում է Թայաքի [Taiak] (Խասսա գավառակ)՝ երկու թուրք բեյերի՝ Ալիի և Յուսեֆի ահաբեկչու-թյուններին, որոնք չեն դադարում ոտնձգություններ կատարել քրիստոն-յաների նկատմամբ և արդեն կո-ղոպտել են տվել Ակբաշի ու Ալեք-սանդրետի միջև գտնվող Բաքդաշլի [Bakdaschli] գյուղում մի տուն, որը քարոզիչներին ծառայում էր որպես մատուռ, ընդ որում՝ պղծվել են սուրբ առարկաները:	
Անգորայի վիլայեթ					

Անգորա	Հոկտեմ-բեր/-նոյեմբեր	...	...	Կոստանդնուպոլսում սեպտեմբերի 30-ի իրադարձությունները մեծ հուզում են առաջացնում մահմեդականների շրջանում: Նոյեմբերին քարոզչությունը դարձյալ վերսկսվում է: Անգորայում և ամբողջ վիլայեթում մահմեդականները զինվում են, չնայած մահմեդականների հանդեպ հայերի պահվածքն ամենաչնչին իսկ չափով առիթ չի տալիս այդ նախապատրաստություններին: Քրիստոնյաների շրջանում նաև երկյուղն է օրեցօր աճում: Քանի որ Անգորան միայն 100 մարդկանցից բաղկացած կայազոր ունի, դրությունն անապահով է: Խոջաների քարոզները, որոնք ուղարկվում էին վիլայեթ՝ խաղաղության դրդելու, թվում է՝ հակառակ ազդեցությունն են գործում մահմեդականների շրջանում:	Իշխանությունները ձեռնարկում են որոշ ոստիկանական միջոցառումներ՝ կարգուկանոնը պահպանելու համար: Որևէ լուրջ վերահսկողություն չի իրականացվում ներգաղթած չերքեզների նկատմամբ, որոնք հոծ խմբերով շրջում են գյուղերով և ահաբեկում են քրիստոնյաներին ու մահմեդականներին:
	Դեկտեմ-բերի 20	...	...	Քաղաքում երկու օր է՝ մեծ խուճապ է տիրում: Կարծես որոշակի է, որ թուր-	Վալի՝ մարշալ Թեւֆիք փաշայի հրամանով քաղաքում

				քերը վճռականորեն տրամադրված են՝ քրիստոնյաների վրա հարձակվելու: Մզկիթներում իմամները մահմեդականներին խորհուրդ են տալիս զինվել և պատրաստ լինել: Քաղաքում նկատվում են անսովոր բազմաթիվ մահմեդական գյուղացիներ և չերքեզներ: Քրիստոնյաները փակում են իրենց խանութները: Այնուհանդերձ, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հանդարտությունը պահպանվում է:	բազմաթիվ պարեկներ են շրջում:
Կեսարիա	Հոկտեմբեր/-նոյեմբեր	...	...	Հոկտեմբերից ի վեր անկարգությունների երկյուղ կա: Նոյեմբերին համիդեական քրդերը սպառնում էին հարձակվել քաղաքի վրա: Սանջակի 45 քրիստոնեական գյուղեր կողոպտվում են, իսկ բնակիչները՝ սպանվում: Երկու զուտ հայաբնակ գյուղերը՝ Էքրեկն ու Մունճուսունը՝ համապատասխանաբար 800 և 1000 տներով, ավերվում են, և ամբողջ բնակչությու-	Իշխանությունները մոբիլիզացնում են տասներկու գումարտակների: Դրանցից 8-ի զինվորները ապստամբում և դասալքում են:

				նը, ներառյալ կանայք, սպանդի է ենթարկվում:	
	Նոյեմբերի 30	1000	300	Մահմեդականների կողմից օրեր ի վեր նախապատրաստված կոտորած է սկսվում: Թուրքերը զանգվածաբար հարձակվում են շուկաների և հայերի տների վրա: Ամբողջ ընտանիքներ սպանդի են ենթարկվում: Գրոհի են ենթարկվում բաղնիքները, երեխաներն ու կանայք անարգվում են, մերկ վիճակում քշվում փողոց, սպանվում ու խեղվում: Ծերերը ողջ-ողջ հրկիզվում են իրենց տներում: Վերապրածներին ստիպում են իսլամ ընդունել: Թալանն ու կողոպուտը տևում են երկու օր:	Իշխանությունները ցուցաբերում են մեծագույն անտարբերություն և միայն երկրորդ օրվա երեկոյան են միջամտում: Պաշտպանության տակ են վերցվում միայն ամերիկյան և եզվիտների առաքելությունները, սակայն դրանք էլ 24 ժամ շարունակ մնացին առանց հսկողության: Որոշ մահմեդականներ փրկեցին հայերի: Կայազորի մի բարձրաստիճան սպա հայտարարեց, որ եթե իշխանությունները նրան չխոչընդոտեին, նա մի ակնթարթում խռովությունը կճնշեր և այդպիսով կարգելեր կոտորածը:
Յոզղատ	Հոկտեմբեր,	...	...	Հոկտեմբերից ի վեր տարածաշրջանում անհանգիստ դրություն է: Ալդաղ	

	նոյեմ-բեր, դեկ-տեմբեր			Մաղեն [Aldagh Maden] գավառակի չորս գյուղեր և նաև այս բնակավայրը կողոպտվում են քրդերի ու չերքեզների կողմից, իսկ բնակիչները՝ սպանվում: Իրադրությունը Յոզղատում, որտեղ զինված չերքեզները թափառում են այս ու այն կողմ և ահ ու սարսափ են տարածում, շարունակում է մնալ ճգնաժամային:	
Չորում	Նոյեմբերի 20	4	12	Մի վեճի պատճառով որոշ անկարգություններ են տեղի ունենում:	
Հաջեյքենի [Hadjeikeni]	Նոյեմ-բեր	...	...	250 չերքեզներից բաղկացած մի ավազակախումբ կողոպտում է գյուղը և սպանում 90 քրիստոնյաների ու մահմեդականների:	Իշխանությունը հանդուրժում են նրանց ներկայությունը:
Իզմիթի մութասարիֆություն					
Ակ-Հիսար	Հոկտեմ-բերի 3	50	33	Այս վայրը բնակեցված է 50 հայ ընտանիքներով և շրջապատված է չերքեզներով ու մոհաջիրներով: Շուկայի սովորական մի օր Ակ-Հիսարի մուդիրը համոզեց հայերին հանձնել իրենց զենքերը՝ մահմեդականների հետ վե-	Կեյվեի կայմակամը, տեղեկացված լինելով Ակ-Հիսարում չերքեզների վատ մտադրությունների մասին, ապարդյուն փորձեր է կատարում՝ կոտորածն արգելելու:

				ճի որևէ շարժառիթից զերծ մնալու համար: Այնուհետև պատրվակ դարձնելով մի վեճ, որ տեղի էր ունենում մի չերքեզի և մի հայ վաճառականի միջև մի ապրանքի գնի շուրջ, չերքեզները հարձակվում են հայերի վրա, սպանում մոտ 50-ին, ծանր վիրավորում 33-ին և ավերում գյուղը: 50 ուրիշ հայեր անհետ կորած են: Դիերը՝ սոսկալիորեն խեղված, նետվեցին երկու ջրհորների մեջ, իսկ մի քանիսը՝ Սակարիա գետը: Ասոմպցիոնիստական միաբանության եղբայրներն իրենց ժամանումից հետո ջրհորներից 35 դիեր դուրս բերեցին: Նյութական կորուստը գնահատվում է 15.000 թուրքական ֆունտ (մոտ 300.000 մարկ): Կեյվեի շրջակայքում գտնվող շատ գյուղերում հայերը սպանվեցին: Թյուրքմենում 15 հայ երիտասարդներ, որոնք, իրենց սովորության համաձայն, թուրքերի հետ դուրս էին ե-	Իզմիթի մութեսարիֆը, տեղեկանալով տեղի ունեցածի մասին, ուղևորվում է դեպքերի վայրը և զեկուցագրում, որը գրում է վերադարձից հետո, հայտարարում է, որ կատարվածը մի աննշան բան է: Միայն ավելի ուշ հայ եպիսկոպոսների և օգոստինյանների խնդրանքով նա նրանց լիազորեց մեկնել Ակ-Հիսար՝ վիրավորներին հոգ տանելու և սպանվածներին թաղելու համար: Հետագայում կատարվեցին ձերբակալություններ, բայց շատ չերքեզներ, այն էլ՝ ամենավատահամբավները խուսափեցին բանտից, որևէ պատիժ չստացան:

				կել՝ անտառում փայտ կտրելու, վեր-ջիններիի կողմից հարձակման են-թարկվեցին ու կացնի հարվածներով սպանվեցին:	

VI

Վիճակագրություն

Վայր գ=գավառ	Ամսաթիվ	Սպանված			Թալանված ու ավերված					Սպանված հոգևորականներ		Բռնի կրոնափոխություններ			Մզկիթի վերածված եկեղեցիներ	Կարիքավորներ	
		Հայեր և այլ քրիստոնյաներ		Մահմեդականներ	Քաղաքներ ու գյուղեր		Տներ և խանութներ (խ.)	Եկեղեցիներ	Վանքեր	Վարդապետներ (վ.) Եպիսկոպոսներ (ե.) Վանահայրեր (վն.)	Քահանաներ ու բարոզիչներ	Գյուղեր	Ամենին	Քահանաներ		Ա-ռան-ձին տվյալներ	Ընդ-հա-նուր թվեր
		Ընդհանուր թվեր	Առանձին տվյալներ		Ընդհանուր թվեր	Առանձին տվյալներ											
Ա. Բարեկորոգում-ների ենթակա 6 նահանգներ																	
1. Էրզրումի վի-լայեթ																	40 000
Էրզրումն իր շրջա-կայքով	6.30.X. 25.XI.	—	1200	12	—	10	800 [illegible]	7	—	—	4	—	15 000	—	—	4000	
Գ. Դերջան	—	—	?	—	—	43	—	—	—	—	—	40	—	—	—	—	—
Գ. Բասեն	27.28. XI.	—	140	—	—	14	—	—	1	1 վ. 1 ե.	12	—	—	—	—	—	—
Գ. Օվա	27.28. XI.	—	20	—	—	23	—	4	—	1 վ.	4	—	—	—	—	—	—

Երզնկա	21.X.	—	1000	7	—	—	—	8	—	1 վն.	2	1	—	—	—	—	—
Բաբերդ	27.X.	—	1000	—	—	—	—	9	—	—	—	—	—	—	—	—	—
Բաբերդ			?	—	—	165	—	—	2	—	9	15	—	—	7	—	—
Գ. Վարզահան	—	—	100	—	—	—	—	—	—	—	—	4	—	—	—	—	—
Գ. Քըղի	14. 16.	—	?	—	—	10	—	22	2	—	1	—	—	—	—	—	—
Ռազան	23.X.	—	30	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Բայազետ	—	—	500	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Քսանթա	—	—	400	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Քուրուջ	—	—	?	—	—	2	—	1	—	—	—	—	—	—	—	—	—
Տանձի	—	—	?	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—
		4390	4390		267	267											
2. Բիթլիսի վիլայեթ																	20 000
Բիթլիսն իր շրջակայքով	25.X.	—	900	39	—	40	—	—	—	—	5	40	—	—	—	—	—
Գ. Սասուն	10.XI.	—	?	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Տալվորիկ	10.XI.	—	?	—	—	20	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Մուշ	15.XI.	—	100	—	—	20	—	1	—	—	1	—	—	—	—	—	—
Գ. Սերթ	19.XI.	—	?	—	—	10	—	—	—	—	—	10	—	—	—	—	—
Գ. Խիզան	—	—	300	—	—	31	648	16	3	1 վ.	1	31	—	3	16	—	—

Գ. Սպարկերտ	—	—	300	—	—	29	573	29	4	—	2	38	—	1 վ. 1 ե.	15	—	—
Գ. Երում	XI. և XII.	—	?	—	—	12	—	—	—	—	—	12	—	—	12	—	—
Գ. Շիրվան		—	?	—	—	21	—	20	—	—	—	21	—	20	10	—	—
Գ. Սղերդ	—	—	?	—	—	—	—	1	—	—	2	1	—	—	—	—	—
Գ. Գենջ	—	—	?	—	—	6	—	—	—	—	—	6	—	—	—	—	—
Գ. Գյոզալդարա	—	—	?	—	—	6	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Ճապաղջուր	—	—	?	—	—	—	—	—	—	—	—	10	—	10	10	—	—
		1600	1600	—	195	195	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Մամուրեթ ուլ-Ազիզի վիլայեթ	14 345 —	— —	——	— —	— 300	80 54 —	— 512 խ.	— —	— —	— —	— —	— —	— —	— —	— —	— —	100 000 —
Խարբերդն իր շրջակայքով	10. 11.XI.	—	1193	12	—	—	—	30	—	1 վ.	24	74	200 ոչ քրիստոնյա կին	9	32	—	—

Արաբկիրն իր շրջակայքով	1-5.XI.	—	4000	60	—	—	3700 / 800 խ.	5	3	1 Վ.	6	20	—	—	20	—	—
Շեփիկ	—	—	53	—	—	—	76	—	—	—	2	—	—	—	—	—	—
Գ. Ակն	8.XI.	—	?	—	—	8	1020 / 231 խ.	4	—	—	—	10	—	2	—	—	—
Գ. Աղբն	—	—	?	—	—	—		11	—	—	—	—	—	—	14	—	—
Մալաթիա	29.X. 4-9.XI.	—	5000	500	—	18	1000	2	—	—	2	1	—	—	—	8000	—
Աղբյաման	7-11.XI.	—	410	—	—	1	—	4	—	—	—	—	990	—	—	—	—
Չենից-Գուզեք [Cheniz-Guzek]	—	—	?	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2500	—
Իչմե	—	—	40	—	—	—	—	2	—	—	—	—	—	—	1	—	—
Գ. Այվոս	—	—	?	—	—	—	—	—	—	—	10	—	3000	—	—	—	—
4. Դիարբեքիրի վիլայեթ		6000			200												30 000
Դիարբեքիրն իր շրջակայքով	1.XI.	—	2000	—	—	—	1701 / 2448 խ.	8	1	—	19	—	—	—	—	—	—
Մարդին	—	—	?	—	†	†		—	—	—	—	1	—	—	—	—	—
Մաղափայասի վանք	—	—	300	—	†	†	—	—	—	—	15	—	—	—	—	—	—
Գ. Սիվան, Հայնի	—	—	?	—	—	—	—	10	—	—	—	105	—	—	105	—	—

և այլն								5									
Գ. Բալու	—	—	?	—	—	—	—	6	—	—	4	25	—	1	4	—	—
Սևերեկ	2.XI.	—	1500	—	†	†	—	—	—	—	—	—	200	3	—	—	—
5. Վանի վիլայեթ	1-20.XI.																70 000
Վանն իր շրջա-կայքով	—	—	35	—	—	146	—	—	—	—	—	—	—	—	—	43 000	—
Վանա լճի շրջա-կայքը	—	—	—	—	—	160	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Աղիլջնազ	—	—	9	—	—	18	467	17	—	—	—	12	—	—	—	—	—
Գ. Բանի	—	—	3	—	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Սարայ	25.X.	—	7	—	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Մոկս	10.XI.	—	?	—	—	3	—		2	—	1	—	—	—	—	—	—
Գ. Աղբակ	—	—	?	—	—	—	—	[illegible]	2	—	—	—	—	—	—	—	—
Գ. Բարկաթ	—	—	?	—	—	—	—		3	—	—	—	—	—	—	—	—
Գ. Թիմար	—	—	?	—	—	—	—	8	3	—	—	—	—	—	—	—	—
Գ. Մամռտանք	—	—	160	—	—	27	244	20	3	—	—	20	—	—	13	—	—
Գ. Վերին Կար-կառ	—	—	65	—	—	10	248	10	5	1 վն.	1	10	—	—	5	—	—
Գ. Ներքին Կար-կառ	—	—	8	—	—	10	164	10	3	—	4	10	—	3	5	—	—
Գ. Փասանթախտ	—	—	1	—	—	7	181	7	1	—	—	7	—	—	5	—	—
Գ. Խոդակ	—	—	?	—	—	10	150	9	—	—	—	10	—	—	—	—	—

[Chodakh]																	
Գ. Նորդուզ	—	—	?	—	—	10	150	10	4	—	—	10	—	—	5	—	—
Գ. Հավուսոր [Havusor]	—	—	10	—	—	37	854	30	6	—	—	30	—	—	15	—	—
Գ. Գարդիգան [Gardigan]	—	—	25	—		27	837	27	6	1 վ.	—	27	—	1	14	—	—
Գ. Մոկս, Ջիմե, Դեհ, Բոդան [Bodan] և այլն	—	—	? ?	—	—	40	600	40	7	1 վ. 2 վն.	8	40	—	—	20	—	—
Գ. Արճեշ	—	—	?	—	—	—	—	15	6	—	—	—	—	—	—	—	—
Ք. Վան	14-22. VI.1896	100 0	—	500	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	27 000
Վանի վիլայեթ		20 000?	—	—	—	300?	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		323	323		825	525											
6. Սվազի վիլայեթ					350												18 000
Սվազն իր շրջա-կայքով	12.XI. 3.XII.	—	2060	10	—	—	—	20	—	—	12	—	—	—	—	—	—
Կյուրին	12.XI.	—	3000	—	—	17	1500	—	—	—	—	—	—	—	—	5075	
Շապին Գարահի-սար	27.X.-1.XI.	—	500	—	—	30	—	5	2	—	8	1	—	—	—	—	—
Թոքատ	15.XI.	—	?	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—

Զելա	28.XI.	—	200	—	—	—	800 200 թ.	—	—	—	2	—	—	—	—	—	—
Տերիկ	16.XI.	—	?	—	—	—	—	2	4	—	3	—	—	—	—	—	—
Կասմա	—	—	?	—	—	—	—	—	—	—	—	—	655	—	—	—	—
Դարանդա	—	—	?	—	—	—	—	5	1	—	1	3	—	1	—	—	—
Ամասիա	15. 16. XI.	—	1000	—	—	—	—	2	—	—	1	—	—	—	—	—	—
Մարզվան	15.XI.	—	150	—	—	—	400	—	—	—	—	—	—	—	—	—	—
Հավզա	12.XI.	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Վեզիր Քյոփրու	XII.	—	200	—	—	—	300	—	—	—	—	—	—	—	—	—	—
Նիքսար	VI.1896	—	300	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		7420	7420														
Բ. Մյուս նահանգ-ները																	
7.Տրապիզոնի վի-լայեթ																	
Տրապիզոնն իր շր-ջակայքով	4.5.8.X.	—	2000	20	—	22	—	—	—	—	—	—	—	—	—	4000	4000
Գյումուշխանե	25.X.	—	100	—	—	11	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Սամսոն	7.XII.	—	30	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Աղջագյունեյ	14.15.XII.	—	?	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		2130	2130	—	34	34	—	—	—	—	—	—	—	—	—	—	—

8. Անգորայի վիլայեթ						45											8000
Կեսարիա	30.XI.	—	1000	—	—	—	200 խ.	—	—	—	—	—	—	—	—	—	—
Էբրեկ	—	—	400	—	—	—	800	—	—	—	—	—	—	—	—	—	—
Մունճուսուն	—	—	500	—	—	—	1000	—	—	—	—	—	—	—	—	—	—
Յոզղատ	X.XI.XII.	—	800	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Չորում	20.XI.	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Հաջիքյոյ	XI.	—	90	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		2794	2794	—	45	45	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
9. Ադանայի վիլայեթ																	17 000
Մեսինա, Ադանա	31.X. 13.XII.	—	2	—	—	6	125	—	—	—	—	—	—	—	—	800	
Տարսոնն իր շրջակայքով		—	—	—	—	—	17 խ.	2	—	—	—	—	—	—	—	†	—
Գ. Բայաս	27.X. 11.XII.	—	300	—	—	16	2209	1	—	—	—	—	—	—	—	10 000	—
Չորք-Մարզվան		—	50	—	—	—	—	3	—	—	—	—	—	—	—	6000	—
Ակբաշ	24.XII.	—	—	—	—	3	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		352	352	—	25	25	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
10. Հալեպի վիլայեթ																	
Հալեպ	—	—	—	—	250	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—

Այնթապ	15-17.XI.	—	1000	50	—	—	1226	—	†	—	—	—	—	—	—	3000	50 000
Մարաշ	23.X. 3.18.XI.	—	1390	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	8000	—
Գ. Մարաշ		—	3800	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	11 000	—
Էլողլու	—	—	250	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գ. Ենիճեկպե	17.18. XI.	—	600	—	—	10	—	2	—	—	1	—	—	—	—	—	—
Ալբիստան	25.X.	—	300	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Քիլիս	—	—	216	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Զեյթուն	—	—	6000	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	13 000	—
Ուրֆա	28.XI. 28.XII.	—	10 000	—	—	—	{ 2000 1500 ի.	—	—	—	12	—	1	—	—	12 000	—
Բիրեջիք	—	—	96	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	250	—
		23 652	23 652														
11. Մութ, Իզմիթ																	
Ակ-Հիսար	3.X.	—	50	33	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Թյուրքմեն	—	—	15	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
		65	65		2	2											

12. Կոստանդնու-պոլիս	30.XI. 1895 25-28.VIII 1896	417 2	4000? 4172	60?													
		88 243 սպան-ված հայեր		1293 † մահմե-դական-ներ	2493 կողոպտ-ված և ա-վերված գյուղեր		568 / 77 կողոպտված ու ավերված եկեղեցիներ/-վանքեր		7 վ., 1 ե., 1 քահանա, հոգևորա-կաններ †	179 քահանաներ †	646 կրո-նա-փոխ արված		55 կրո-նա-փոխ ված քա-հա-նաներ	328 մզկի-թի վե-րած-ված եկե-ղեցի-ներ		546 000 կարիքա-վորներ

ՎԵՐՋԱԲԱՆ

Մինչ սույն աշխատությունը տպագրության ընթացքում էր, տեղի է ունեցել Կոստանդնուպոլսի կոտորածը, որն ամբողջ աշխարհի աչքերը դարձյալ ուղղել է «Հայկական հարցի» վրա: *Այս պարվա հունիսին և սեպտեմբերին Վանի, Նիքսարի և Ակնի կոտորածները* (տե՛ս 70 և 189-204 էջերի տեղեկությունները) եվրոպական մամուլի վրա նույնիսկ չնչին տպավորություն չգործեցին, թեև դրանց ժամանակ դարձյալ 20 000 հայեր մորթվեցին: Դա կրթված կենտրոնական եվրոպացու համար չափազանց հեռու է՝ «Թուրքիայի խորքում»: Ամենից առաջ Կոստանդնուպոլսի սարսափելի դրաման է, որ դիվանագիտությանը և մամուլին կրկին հիշեցրել է հայերի գոյության մասին: Օգոստոսի 26-ին «Ճշմարտությունը Հայաստանի մասին»-ի վերջին գլխում ես գրեցի. «Մեզ հույժ անհրաժեշտ է թվում, որ Եվրոպան լրջորեն զբաղվի հայկական անկարգությունների մոտալուտ վերսկսման խնդրով, քանի որ այս անգամ հավանաբար այնպես կլինի, ինչպես Թուրքիան առաջին անգամ ցանկանում էր հավատացնել, այն է, թե հարցը վերաբերում է հայկական *հեղափոխության*»:

Այս խոսքերն ավելի արագ իրականացան, քան ես կանխատեսում էի, քանի որ նույն օրը տեղի ունեցավ Օսմանյան բանկի գրավումը *Ռուսաստանից* ժամանած մի բուռ հայերի կողմից: Թուրքական կառավարությունը նախապես տեղյակ էր ծրագրված խռովարարության մասին և այդ պատճառով ձեռնարկել էր համապատասխան միջոցառումները, բայց ոչ թե դրսից եկած մի քանի հայերի հեղափոխական գործողությունները խափանելու, այլ այդ ցանկալի առիթով քրիստոնյաների՝ Կոստանդնուպոլսի խաղաղ հայ բնակչության մի համընդհանուր կոտորած կազմակերպելու համար: Ուստի ամբոխը ևս միանգամայն անկաշկանդորեն հայտարարում էր, որ «սուլթանը 50 ժամ ժամանակ է տվել սպանելու և թալանելու համար»:

Այդ մասին հյուպատոսարանի մի աշխատակից՝ որպես ականատես, «Contemporary Review»-ում հաղորդում է հետևյալը

(«Reichsbote», 1896 թ. նոյեմբերի 4): Հեղինակն ընդունում է, որ որ հայ հեղափոխականներն են կույր հուսահատության մեջ անկարգություններն առաջ բերել, որոնք, սակայն, պարզապես չափազանց նպաստավոր եղան թուրքական կառավարության համար: Չնայած վերջինս, ըստ սուլթանի պաշտոնական հայտարարության, արդեն վաղուց տեղյակ էր օսմանյան բանկի վրա ծրագրված հարձակման մասին, ոչ միայն ոչինչ չարեց այն խափանելու համար, այլև բոլոր նախապատրաստություններն իրականացրեց կանխամտածված կոտորածի համար:

«Ստամբուլում, Գալաթայում և Փերայում քրդերից ու թուրքերից կազմեցին ավազակախմբեր, որոնք սպառազինվեցին մահակներով, դանակներով կամ հրազենով: Նախազգուշական միջոցառումներ ձեռնարկեցին այն բանի համար, որ ոչ ոք չսպաներ կամ չթալաներ այն թաղամասում, որտեղ ինքն ապրում էր, որպեսզի նրան չճանաչեին և այնուհետև չկարողանային նրա դեմ բողոք ներկայացնել դեսպանորդներին: Պատրաստ կանգնած էին մեծաթիվ սայլեր՝ դիերը հեռացնելու համար: Ոտքի էր հանվել բազմաքանակ զինվորականություն և ոստիկանություն՝ ցանկացած դիմադրություն ճնշելու և անհրաժեշտության դեպքում ամբոխին աջակցելու համար: Գեղեցիկ օր էր, փողոցները լի էին մարդկանցով, հազիվ թե որևէ մեկը տեղյակ էր բանկում կատարվածից: Ահա հանկարծ, առանց որևէ նախազգուշացական ազդանշանի, ամենուրեք միաժամանակ սկսվեցին կոտորածն ու կողոպուտը: Եվրոպացի կանայք, որոնք ուզում էին գնալ դեպի Բոսֆորում գտնվող շոգենավերը, հանկարծ տեսան, որ շրջապատված են մարդասպաններով, և որ վիրավորներ էին թավալագլոր մոտենում իրենց ոտքերին: Օտար վաճառականներն իրենց աշխատողներին գտան իրենց դռան առջև՝ կտոր-կտոր արված: Որոշ տեղերում փողոցները տառացիորեն հեղեղված էին արյունով: Յուրաքանչյուր ոք, ով ճանաչվում էր որպես հայ, անողոքաբար սպանվում էր: Սպանվածների թիվը երբեք չի պարզվի: Դեսպանորդներն այն գնահատում են 5000-6000, պալատին ներկայացված պաշտոնական զեկույցը՝ 8750, չհաշված

ծովը նետվածներին: Հազարավոր տներ, խանութներ և կրպակներ թալանվեցին, դրանց թվում նաև շատերը, որոնք պատկանում էին հույներին ու օտարերկրացիներին: Ամեն ինչ կատարվեց ըստ միասնական ծրագրի, ոչ մի ակնթարթ անարխիա չտիրեց, ոչ մի ակնթարթ զինվորականությունն ու ոստիկանությունը չկորցրին լիակատար վերահսկողությունը քաղաքի վրա:

Եվրոպացի պաշտոնյաները բազմիցս դիմեցին զորամասերին հրամանատարող սպաներին, որոնք հանգիստ դիտում էին, թե ինչպես էին անօգնական, անզեն մարդիկ սպանվում՝ խնդրելով միջամտել ու վերջ տալ այդ ամենին: Պատասխանը հետևյալն էր՝ մենք ունենք մեզ տրված հրամանը: Մի սպա սպանեց բրիտանական փոստային բաժանմունքի քարտուղարին դրա դռների առջև: Սարսափելի արյունահեղություններից շատերն էլ կատարվեցին կամրջի ասիական կողմի եզրակետի մոտ՝ հսկիչների կողմից, կայսերական պալատի պաշտոնյաների աչքի առաջ: Նրանք նույնպես իրենց տրված հրաման ունեին:

Ժողովուրդը, նաև ամբոխը չեն, որ պատասխանատու են այս սարսափելի հանցագործության համար: Կառավարությունն է այն ծրագրել ու կատարել: Վեց տերությունների դեսպանորդները Բարձր դռանն ուղղված իրենց համատեղ նոտայում դա նշել են որպես անկասկածելի փաստ:

Նույն կառավարությունը կոտորածից հետո նոր ռազմարշավ է ձեռնարկում հայերի դեմ, որ հազիվ թե պակաս անմարդկային է, քան գանակոծությամբ սպանելը: Նախկինում Կոստանդնուպոլսում ապրում էին 150 000 - 200 000 հայեր՝ վաճառականներ, կալվածատերեր, քարտուղարներ, բանկային պաշտոնյաներ և ամեն բնագավառի կառավարիչներ, կարճ ասած՝ որպես քաղաքի հիմնական գործարարներ: Նրանք էին հացթուխները, նրանք էին վերակացուները, ծառաներն ու բանվորները: Նրանցից հազարավորները սերում էին երկրի խորքից, գավառներից, որոնք վերջին երկու տարիների ընթացքում ամայացվել էին, և փորձում էին Կոստանդնուպոլսում փող վաստակել՝ իրենց հարկերը վճարելու և իրենց ընտանիքներին կերակրելու

համար: Այդ փողով տասնյակ հազարավոր ընտանիքներ են գոյատևել: Այժմ կառավարությունը որոշել է կործանել բնակչության այդ ամբողջ շերտը: Նրանց քաղաքում ու լեռներում հալածում են, ինչպես վայրի կենդանիների: Ամեն օր հոծ խմբեր են բերվում՝ խոշտանգված, սովահար, ծայրահեղ հուսատությունը դեմքերին: Բանկերից, պետական պարտքերի մարման հանձնաժողովից, տնօրեններից ու բոլոր հանրային կազմակերպություններից պահանջվել է ազատել իրենց հայ աշխատակիցներին:

Բայց ոչ միայն հայերը, ամբողջ քաղաքն է կործանվում: Ոչ ոք չկա, որ կկարողանար նրանց տեղը զբաղեցնել: Բանը, սակայն, միայն սա չէ: Հասարակության հիմքերը սասանված են: Սուլթանը, երևում է, պատկերացում չունի այն մասին, որ ինքն անձամբ է կործանում իր պետությունը: Ընդհակառակը, նա կարծում է և դեռ երկու տարի առաջ իր նախարարներին ասաց, թե ինքն ամենաիմաստուն ու ամենահզոր տիրակալն է աշխարհում: Որևէ շրջադարձ դեպ լավը անհնար է այնքան ժամանակ, քանի դեռ մեծ տերությունները մնում են իրենց ներկայիս դիրքորոշմանը և ձեռնպահ են ռազմական միջամտությունից: Այնինչ ոչնչացման քաղաքականությունը կշարունակվի, անարխիան կմեծանա և կընդգրկի բանակը: Նոր կոտորածներ տեղի կունենան՝ նաև այլ ազգերի, մինչև քաղաքի կործանումը կատարյալ կդառնա: Ես համոզված եմ՝ Կոստանդնուպոլսում չկա գեթ մի դեսպանորդ, որն այդ կարծիքին չլինի: Որևէ մեկը, որն ինչ-որ բան հասկանում է քաղաքականությունից, չի կարող կասկածել դրանում: Կոստանդնուպոլիսը դատապարտված է կործանման»:

Ի՞նչ արեցին մեծ տերությունների ներկայացուցիչները: Նրանց էր ուղղված հեղափոխական հայերի խռովարար գործողությունը, որոնք բանակցության ժամանակ օսմանյան բանկի պատուհաններից հայտարարում էին, որ իրենք ո՛չ բանկի և ո՛չ էլ Բարձր դռան դեմ էին ուզում ցույց անել, այլ՝ *քրիստոնյա տերությունների, որոնք Հայաստանը թողել էին բախտի քմահաճույքին*: Ի՞նչ արեցին մեծ տերությունների ներկայացուցիչները: Այս

անգամ նրանք ոչ միայն նոտաներ գրեցին, այլև նույնիսկ հեռագրեցին սուլթանին: Նրանք, սակայն, դա արեցին նույն կերպ, ինչպես Հայաստանում: Այնտեղ նրանք, առանց մատ շարժելու, թույլ տվեցին կոտորել 100 000 անպաշտպան և խաղաղասեր հայերի, բայց օգնության ձեռք մեկնեցին Զեյթունի ապստամբներին և նրանց համար համաներում ձեռք բերեցին: Այստեղ՝ Կոստանդնուպոլսում, նրանք նմանապես թույլ տվեցին երեք օր շարունակ մորթել մի քանի հազար անմեղ հայերի, բայց հեղափոխականները նրանց միջնորդությամբ ազատորեն հեռացան և փոխադրվեցին արտերկիր: Ի՞նչ դաս պիտի քաղեն հայերն այդ գործելակերպից:

***

Կոստանդնուպոլսում վերջին փորձառություններից հետո, որտեղ արյունահեղությունը մայրաքաղաքի եվրոպական բնակչության աչքի առջև կազմակերպվեց և հիմնականում նույն մեթոդով իրականացվեց, ինչպես Հայաստանում կատարված արյունահեղությունները, այս աշխատության լուսաբանումները հավանաբար ուշադրության կարժանանան նաև առնվազն այն շրջաններում, որոնք մինչ այժմ, հավատալով Բարձր դռան բարի կամքին, կարծում էին, թե պարտավոր են մերժել նրա դեմ որևէ գործուն միջոցառում:

Յ. Լ.

Հավելված

1. Ավետարանական եկեղեցու հայտարարություններ՝ ի նպաստ Հայաստանում տիրող աղետալի դրության հաղթահարման

*1. Ավետարանական միության 9-րդ համաժողովը (*սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1, Դարմշտադտում)

«Ավետարանական միության՝ Դարմշտադտում գումարված համաժողովն իր համերաշխությունն է հայտնում մի քրիստոնյա ժողովրդի (հայ ժողովրդի) դաժան հալածանքների, հատկապես բռնի զանգվածային կրոնափոխությունների և Աստծո քրիստոնեական տաճարները մզկիթների վերածելու դեմ քրիստոնեական և մարդկային զգացումներ ունեցող սրտերից այժմ բարձրացող բողոքին:

Մեր գերմանացի ժողովուրդը ավելի, քան մեկ ուրիշն աշխարհում, օրհնված է Ավետարանի կողմից և հետևաբար ավելի սրբորեն է պարտավորված նաև պաշտոնական գործերում տեղ հատկացնել նրա ոգուն:

Կայսերական կառավարությունն այդ պատճառով արդարացված կհամարի, եթե Ավետարանական միությունն արտահայտի իր հրատապ ցանկությունը, որ նա իր ազդեցությունը գործադրի՝ կանգ պահանջելու արնաթաթախ սրին, որը մեր քրիստոնյա եղբայրներից այնքան շատերի, այդ թվում՝ հազարավոր ավետարանական հայերի գլխին է ճոճվում:

Եթե նույնիսկ այդ դժբախտ ժողովրդի մի մասին չի կարելի ազատել Աստծո թողտվությամբ իրեն տրված իշխանության դեմ ըմբոստանալու մեղադրանքից, այնուամենայնիվ, անմեղ տառապյալներն ունեն քրիստոնեական գթասրտություն պահանջելու լիակատար իրավունք:

Մենք հիացմունքով ենք հիշում բազմաթիվ մարտիրոսներին, որոնք հավատի մեջ հաստատակամությունը պահպանեցին մինչև իրենց մահը:

Այն, որ գերմանական ավետարանական հաստատություններն Արևելքում շտապել են եռանդուն օգնություն ցուցաբերել հալածյալներին ու որբացածներին, մեզ առանձնակի գոհունակություն է պատճառում:

Մենք բոլոր գերմանական ավետարանական հավատակիցներին, առաջին հերթին մեր միության անդամներին թախանձագին խնդրում ենք աջակցել այդ հաստատություններին և զոհողության պատրաստ ուշադրություն ցուցաբերել ֆրանկֆուրտյան կոչին»:

2. *Գուստաֆ-Ադոլֆի հիմնադրամի՝ ավետարանական ընկերության 49-րդ համաժողով* (սեպտեմբերի 14 -17, Դեսսաուում)

«Գերմանական ավետարանական՝ Գուստաֆ-Ադոլֆ ընկերության 49-րդ ընդհանուր ժողովը հայտնում է իր խորը վրդովմունքը Արևելքում վերջին ոճրագործությունների առնչությամբ, ինչպես նաև իր սրտագին վշտակցությունը այնքան շատ, մասնավորապես Հայաստանում սպանված քրիստոնյաների համար: Նա հույսով է, որ խղճի ազատության և քրիստոնեության ընտրյալ պահապանների կողմից այդ ոճրագործություններին ուժգին և անսասան հետևողականությամբ հակազդում կցուցաբերվի, և միանում է բարեխոսող ու սատարող եղբայրական սիրո շարժմանը, որն այս օրերին համակել է ավետարանական Գերմանիայի լայն շրջանների: Նա խնդրում է կենտրոնական վարչությանը մի նշանակալի գումար հատկացնել ավետարանական հայ որբերի խնամքի համար որպես «Գուստաֆ-Ադոլֆ» ընկերության եղբայրական մասնակցության դրսևորում»:

3. *Գերմանական քահանայական միությունների 2-րդ համագումար (սեպտեմբերի 9-10, Բրաունշվայգում)*

«Նկատի առնելով Հայաստանում քրիստոնյաների հետապնդման սարսափները՝ մենք մեզ պարտավորված ենք համարում մեր խորին ցավակցությունը դրսևորել քրիստոնյա եղբայրական ոտնակոխ արված ժողովրդի համար: Մենք միանում ենք՝ Աստծո զորավոր ձեռքից հայցելու այն օգնությունը, որը մինչ այժմ չի տրվել այդ քրիստոնյաներին:

Քահանայական միությունների բոլոր անդամներին, նաև առհասարակ բոլոր ծառայակիցներին անհապաղ կոչ է արվում իրենց համայնքներին բոլոր հնարավոր և նպատակահարմար միջոցներով տեղեկացնել Հայաստանում կատարված ոճիրների և տիրող զրկանքների մասին, Հայաստանի համար աղոթել և քաջալերել՝ բարեխոսելու, որպեսզի կարիքավորների համար հանգանակություններ կատարվեն:

Ընկերակցության վարչությանը հանձնարարվում է Գերմանիայի բոլոր ավետարանական եկեղեցիների կառավարչություններին հարգալից խնդրել, որ նրանք ընդհանուր եկեղեցական աղոթքներում ներառեն հատուկ բարեխոսություն Հայաստանի համար և (ըստ հնարավորին՝ մի որոշակի կիրակի օր) Հայաստանի համար կազմակերպեն եկեղեցական հանգանակություն:

Ընկերակցության վարչությանը հանձնարարվում է անմիջաբար Նորին մեծություն գերմանական կայսերն ուղղված մի դիմումով մեր խորը վիշտն արտահայտել Հայաստանում կատարվող իրադարձությունների առնչությամբ և հարգալից խնդրել, որ Նորին մեծությունն իր առանձնահատուկ, զորեղ հովանու տակ վերցնի գերմանացի քրիստոնյաների՝ Հայաստանում օգնության ցուցաբերման ձգտումները, որպեսզի քրիստոնեական գթասրտությունը կարողանա զրկանքների հանդեպ իր գործառույթներն անարգել կատարել»:

4. Հռենոսի նահանգային սինոդը

Հռենոսի նահանգային սինոդը հետևյալ հայտարարությամբ ցուցաբերել է իր դիրքորոշումը Հայաստանում տեղի ունեցող ցավալի իրադարձությունների վերաբերյալ. «Հռենոսի նահանգային 23-րդ սինոդը, առաքելական այն խոսքի համաձայն, որ «*եթե մարմնի մի անդամ ցավ զգա, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները*» (Ա Կորնթ. 12, 26), իր մեծ ցավը միաժամանակ, սակայն, նաև իր խորը վրդովմունքն է արտահայտում այն անմարդկային, աննկարագրելի հետապնդումների առնչությամբ, որոնց, վստահելի աղբյուրների համաձայն, Հայաստանի քրիստոնյաներն են մատնվել թուրքերի կողմից: Մի քրիստոնյա եղբայրական ժողովուրդ ընկել է մարդասպանների մեջ: Մենք իրավունք չունենք և չենք ուզում քահանայի ու ղևտացու պես անցնել նրա կողքով: Մենք ուզում ենք անել այն, ինչ մեր ծառայողական պարտականությունն է, ուզում ենք բարեխոս սիրով մեր ձեռքերը երկինք պարզել և համայն գթասրտության Աստծուն խնդրել, որ նա ողորմածությամբ նայի դրան, արգելի դաժան սպանդը, ուզում ենք, սակայն, նաև ցավակից սիրով բացել մեր ձեռքերը՝ օգնելու մեղմել անասելի թշվառությունը, որին զոհ դառնալու վտանգին են մատնված այրիների ու որբերի անհաշիվ բազմությունները:

Այս սարսափելի չարիքի պատճառն ու նպատակը մեր աչքերից թաքցված են: Մենք կոչված չենք և ի վիճակի չենք՝ ուսումնասիրելու քաղաքական մեղավորության հնարավոր չափը և պարզելու, թե ինչն է, որ կարող է նախորդած լինել այս՝ իրապես ներոնական ոճիրներին: «Ա՜խ, Տե՛ր, ինչո՞ւ» վեհերոտ հարցի կապակցությամբ մենք համաձայնում ենք առաքյալի խոնարհ խոստովանությանը. որքա՜ն անըմբռնելի են Աստծո դատաստանն ու անմեկնելի՝ նրա ճանապարհները: Չնայած այդ ամենին, սակայն, մենք քրիստոնյաներին վայել անկեղծությամբ ընդունում ենք, որ միացյալ քրիստոնյա տերությունների անգործությունն ու անկարողությունը, որոնք դարեր ի վեր ստրկացված ու ոտնահարված

այդ ժողովրդի կյանքի և ֆիզիկական գոյության, ունեցվածքի, կանանց ու երեխաների ամենահասարակ պաշտպանությունն իսկ չեն կարողացել ապահովել, ամոթի խարան են մեր խղճի վրա: Միաժամանակ կարող ենք փառաբանել Աստծո ողորմածությունը, որը հալածյալների զրկալից դրության մեջ այնքան հրաշալիորեն ի տես եկավ. առաջին քրիստոնյաների՝ վկայելու արիությունն արթնացել է, և նրանցից շատերի համար, որոնք խաչ էին կրում, իրականացվել է մարգարեության խոսքը. հավատարի՛մ եղիր մինչև ի մահ, և կյանքի պսակը կտամ քեզ:

Ի՞նչ պետք է անենք մենք: Մենք մեր աչքերը վեր ենք հառում լեռներին, որոնցից մեզ օգնություն է գալիս: Նա, ով մարդկանց սրտերն ուղղորդում է, ինչպես առվակների հուները, պետք է նաև բացի այս աշխարհի մեծերի և հզորների աչքերն ու սրտերը, որոնք 18 տարի առաջ իրենց միացյալ հովանավորության տակ են առել հայ ժողովրդին, որպեսզի նրանք տեսնեն արյան գետերը, որոնք, ի հեճուկս մեզ, դեպի երկինք են շառաչում, և որպեսզի փրկություն բերեն նրան, ով աղերսագին մեզ ձայնում է. եկ այստեղ և օգնի՛ր մեզ:

Մենք, սակայն, նայում ենք նաև մեր Հռենոսյան նահանգային եկեղեցու բոլոր համայնքներին ու անդամներին: Արդարի աղոթքը շատ բան կարող է անել, եթե անկեղծ է: Այդ պատճառով էլ մենք բարձր ձայնում ենք. «Ծալե՛ք ձեր ձեռքերը մեզ հետ, մեզ հետ ծնկի իջե՛ք, եկե՛ք, միատեղված և այս ու այնտեղ գտնվող մեր եղբայրներին ոգով միացած, ամեն օր Աստծո գահի առաջ տանենք նրանց թշվառությունը, որոնք գոյատևում են այդպիսի մեծ վտանգի և հալածանքների մեջ, որպեսզի Աստված ողորմածությամբ պայթեցնի նրանց բանտը և շղթայվածներին ընծայի այնքան փափագված ազատությունը: Եկեք, սակայն, սիրենք ո՛չ բառերով, ո՛չ խոսքով, այլ գործով և իսկությամբ: Աննկարագրելի է մահից ճողոպրածների թշվառությունը: Հազարավորներն ու հարյուր հազարավորները սովամահության շեմին են: Խոտն է դար-

ձել նրանց կերակուրը: Կնմանվի՞ մեր ընծայաբերությունը մի կաթիլի՝ տառապյալների անասելի զրկանքների ծովում, Աստված կարող է օրհնել նաև չնչինը: Թող յուրաքանչյուր ոք բաժին հանի այն ունեցվածքից, որը նրան Աստված պարգևել է: Աղոթքի և գործուն սիրո եռանդը կապացուցի, որ այսօր էլ, չնայած կարծիքների և առանձնահատկությունների սահմանագծերին, որոնք, թվում է, հաճախ բաժանում են բոլոր նրանք, ովքեր անխախտորեն սիրում են Տեր Քրիստոսին, էապես կապված են միմյանց հետ: Թող նա՝ եկեղեցու Տիրակալը, թագավորի իր բոլոր քրիստոնյաների վրա այստեղ և համայն աշխարհում»:

5. *Վեստֆալիայի նահանգային սինոդը*

Վեստֆալիայի նահանգային սինոդն ընդունեց հետևյալ բանաձևը. «Սարսափելի չարչարանքները, որոնց անպաշտպան և անօգնական մատնված են Հայաստանի քրիստոնյաները մահմեդականների՝ քրիստոնյա աշխարհի՝ նոր սպանդի ելած ոխերիմ թշնամիների սոսկալի ոճրագործությունների պատճառով, մեր խղճի առաջ են: Խեղճ տանջահար զոհերի՝ տղամարդկանց, կանանց, պատանիների, կույսերի և երեխաների ողբն ու կականը, որոնք, ինչպես մենք, մկրտվել են Քրիստոսի անունով, շարունակ հասնում է մեր ականջներին, և մենք չենք կարող դրանց հանդեպ խուլ լինել: Խորապես ցնցված՝ կանգնած ենք անընմբռնելի դատաստանի առջև, որն Աստծո ձեռքը թույլ է տալիս, և այն վեհերոտ հարցի առջև, թե ինչպես մենք մեր համայնքների հետ միասին կգոյատևենք Աստծո նման դատաստանների դեպքում: Մենք չգիտենք, թե որոնք են այդ իրադարձությունների մոտավոր պատճառներն ու շարժառիթները, մենք նաև գիտակցում ենք, որ որևէ լիազորություն և իրավասություն չունենք՝ միջամտելու պետությունների քաղաքականությանը, բայց մենք այլ բան չենք կարող անել, քան խոր ամոթի մեջ կորանալ այն սարսափելի մեղադրանքի առաջ, որ Եվրոպայի և Ամերիայի ողջ քրիստոնյա աշ-

խարին այդպես էլ որևէ ուղի չի գտել՝ խեղճ, տանջահար քրիստոնյա եղբայրներին քրիստոնեական պարտապան գթասրտությամբ օգնության հասնելու: Մենք հայցում ենք մեծն Աստծո ողորմածությունը, որ նրա ամենազոր ձեռքը վերջ տա տառապանքներին, որ նրա գութը ուժ տա խեղճ հալածյալներին՝ հավատարիմ մնալու մինչ ի մահ: Մենք համակված ենք խոնարհ երախտագիտությամբ, որ սոսկալի չարչարանքների ամոթալի հանդուրժման պայմաններում գտնվել են նրա անվան հավատարիմ հետևորդներ: Մենք միանում ենք համայն քրիստոնյաներին՝ խնդրելով, որ Աստծո գթասրտությունը իր ոգով՝ ուժի և սիրո ոգով համակի քրիստոնյա աշխարհի կառավարողներին ու զորավորներին, որպեսզի նրանք իրենց պատասխանատվության գիտակցումով չվարանեն՝ հալածյալներին փրկություն և օգնություն հասցնելու: Մենք խնդրում ենք մեր համայնքներին և հոգևոր սպասավորներին չհոգնել Աստծո ողորմածությունը հայցող աղոթքի ժամանակ: Քրիստոնյա եկեղեցու բոլոր անդամներին, անկախ դավանանքների սահմանագծերից, մենք խնդրում ենք մեզ հետ լինել այդ աղոթքի ժամանակ, նաև, որքան թույլ կտան դրամական նվիրատվությունները, օգնության շտապել որբացածներին ու լքվածներին: Նահանգային եկեղեցու քահանաները սիրով հոգ կտանեն նեղյալների, մասնավորապես որբ երեխաների խնամքի համար նվիրատվություններ հանգանակելու մասին: Թո՛ղ եկեղեցու Տիրակալը ողորմածաբար փրկի իր ժողովրդին, գթասրտորեն թագավորի իր բոլոր քրիստոնյաների վրա:

6. *Սաքսոնիայի նահանգային սինոդը*

«Նահանգային սինոդը միանում է բարոյական վրդովմունքի և ցավակից վշտակցության ցույցերին, որոնք առաջ է բերել անասելի զրկանքը, առաջ է բերել՝ չհաշված հարաբերականորեն փոքրաթիվ մեղավորներին, հայ ժողովրդի հարյուր հազարավոր ան-

մեղ տղամարդկանց, կանանց և երեխաների հանդեպ մոլեգնող թուրքական մոլեռանդությունը:

Սինոդն իր նողկանքն է արտահայտում ինչպես այդ անմարդկային վայրագությունների վերաբերյալ, որոնք սրի և հրի, չարչարանքների և պատվազրկման միջոցով մի ամբողջ ժողովրդի անկարագրելի տառապանքներ են պատճառել, այնպես էլ, առաջին հերթին, սրով պարտադրված կրոնափոխությունների առնչությամբ, որոնց պատճառով տասը հազար քրիստոնյա հայեր հարկադրված են եղել իսլամ ընդունել և իրենց եկեղեցիները վերածել մզկիթների:

Միաժամանակ սինոդն իր հիացմունքն է արտահայտում քրիստոնեական արիության բազմաթիվ ապացույցների կապակցությամբ, որն ամենատանջալի մահը գերադասել է հավատուրացությունից:

Այն սարսափելի զրկանքների առնչությամբ, որոնց մատնվել են դաժան մոլեռանդության կես միլիոն դժբախտ զոհեր իրենց ունեցվածքի հափշտակման և իրենց կերակրողների սպանության հետևանքով, սինոդը նահանգային եկեղեցու անդամներին գործուն գթասրտության և եղբայրական բարեխոսության կոչ է անում»:

7. Բրանդենբուրգի նահանգային սինոդը

«Նահանգային սինոդը

1. իր խորը վշտակցությունն ու կարեկցանքն է հայտնում հայ քրիստոնյաների հետապնդման զոհերին՝ միաժամանակ մեր նահանգի ավետարանական համայնքներին խնդրելով բարեխոսությամբ և սիրո ընծայաբերումներով ավելի ջերմեռանդորեն հիշել հայ այրիներին ու որբերին, քան մինչ այժմ եղել է:

2. Նահանգային սինոդը եկեղեցու կառավարչությանը վերապահում է նպատակահարմար համարվող միջոցներով և ճանա-

պարհներով սիրո այդպիսի դրսևորումներին ավելի մեծ եռանդ հաղորդել:

2. Կաթոլիկ եկեղեցու հայտարարություններ

(«Rheinischer Merkur»-ի՝ 28.9.96-ի հոդվածը)

Հայաստանում թուրքական ոճիրների դեմ բողոքի հավաքույթը, որը կայացավ կիրակի երեկոյան Քյոլնի՝ Գյուրցենիխի մեծ դահլիճում, անկասկած, ամենատպավորիչներից էր երբևէ այդտեղ տեղի ունեցածների շարքում: Դեռ դրա մեկնարկից շատ առաջ ընդարձակ սրահը գլուխ գլխի սեղմվելու աստիճան լեփ-լեցուն էր առնվազն 2000 հաշվվող տղամարդկանց բազմությամբ, որում ներկայացված էին բոլոր դասակարգերն ու խավերը, մինչդեռ կանանց համար առանձնացված էր պատկերասրահը: Հավաքույթը, ինչպես հայտնի է, հրավիրվել էր Քյոլնի կաթոլիկների կոմիտեի կողմից: Բեմահարթակին՝ նախագահության սեղանի մոտ, տեղ էին զբաղեցրել, ի թիվս այլոց, մեծապատիվ պարոնայք՝ արքեպիսկոպոս *Դալհոֆը* Բոմբեյից, փոխթեմական եպիսկոպոս դր. *Շմիթցը*, պատգամավորներ դր. Կարլ Բախեմը և Կարլ Թրիմբորնը, արդարադատության խորհրդականներ Կուստոդիսը, լիազոր ներկայացուցիչ Յանսենն ու փաստաբան Յուլիուս Բախեմը: Արդարադատության խորհրդական պարոն *Կուստոդիսը*՝ կաթոլիկների կոմիտեի նախագահը, բացեց հանդիսավոր հավաքույթը և սկզբում շնորհակալություն հայտնեց բազմամարդ այցելության համար, որը լավագույնս վկայում է այն աշխույժ հետաքրքրությունը, որ Քյոլնի քաղաքացիները տածում են հետապնդվող հայերի ցավալի դրության հանդեպ: Այնուհետև խոսնակը հակիրճ մատնանշեց այն վայրագությունները, որոնց հանգեցրել է թուրքերի մոլեռանդ ատելությունը հայերի հետապնդման ժամանակ, և որոնք նույնիսկ ակնարկներով ներկայացնելու դեպքում գրիչը հրաժարվում է ենթարկվել: Եվրոպական կառավարությունների՝ Բարձր դռանն ուղղված բոլոր առարկությունները մնացել են

անարդյունք, այնպես որ ժամանակն է, որ *ժողովուրդն* իր ձայնը բարձրացնի՝ ի նպաստ արնաշաղախ հալածյալների, և փորձի հասնել նրան, ինչ մինչ այժմ դիվանագիտությանը չի հաջողվել: (Բրավո՛): Մեզ՝ կաթոլիկներիս, այդ ճգտման մեջ առաջնորդում է միայն մերձավորի հանդեպ քրիստոնեական սերը, և եթե կաթոլիկներին այլ դրդապատճառներ վերագրվեն, ապա դրանք վճռականորեն *մերժելի* են: (Բարձրագոչ բրավո՛):

Այնուհետև փաստաբան պարոն *Յուլ. Բախեմը* պատմական անդրադարձ կատարեց հայերի դրության և այս ցավալի իրադարձությունների շարժառիթի վերաբերյալ, որոնք պայմանավորված են գլխավորապես հայերի շրջանում տիրող դժգոհությամբ՝ իրենց ճնշված վիճակից, մահմեդականների ամբարտավանությամբ, սուլթանի բռնակալական տնտեսվարմամբ և սահմաններ չճանաչող հարկային ճնշմամբ: Թուրքիայի հայ բնակչությունը կազմում է շուրջ 2,5 միլիոն: Հայերը գերակշիռ մեծամասնությամբ քրիստոնյաներ են, մեծ մասամբ, սակայն, հերձվածողներ, մոտ 100 000-ը կաթոլիկներ են՝ միավորված Հռոմի հետ: Միայն վերջին տարիներին է նրանց շրջանում նկատվել հեղափոխական շարժում, որը, մասնավորապես, նպատակաուղղված է բարենորոգումների իրականացմանը՝ ճնշիչ թերությունների վերացման համար և արժանի է արևմտյան ժողովուրդների համակրանքին, առավել ևս, երբ Թուրքիան նվազագույն իսկ չափով չի կատարել հայերին տված իր խոստումները, մասնավորապես, Բեռլինի վեհաժողովի որոշումները: Հայաստանում որևէ հեղափոխական շարժում առիթ *չէր* ընձեռել անցյալ տարի տեղի ունեցած զարհուրելի արյունահեղությունների համար, որոնց զոհ են դարձել առնվազն 100 000 մարդիկ. վայրի մահմեդական քրդերը թուրքական զինվորականության բացահայտ աջակցությամբ և առանց որևէ պատճառի հարձակվել են հայ ժողովրդի վրա: Ակնբախորեն ի պատասխան դրա են հայ հեղափոխականները, երբ տերությունների առարկությունները չկարողացան արյունահեղությանը վերջ

դնել, երիտթուրքերի հետ համագործակցելով, իրականացրել օսմանյան բանկի վրա հարձակումը: Դրանից հետո մոլեռանդ մահմեդականների կողմից կրկին երկինք աղաղակող նոր ոճրագործություններ են իրականացվել հայ բնակչության դեմ, որոնց համար որևէ արդարացում չկա, և որոնք ողջ քրիստոնյա աշխարհում զայրույթի աղաղակ են բարձրացրել, և այսօրվա հավաքույթը նույնպես դրա դրսևորումն է (Աշխույժ ծափահարություններ): Պարոն պրոֆեսոր *Ֆոնքը*, *Բեյրութից* (Սիրիա), ջերմորեն ողջունվելով, իր դիտարկումների և կաթոլիկ հայ քարոզիչների տեղեկությունների հիման վրա ներկայացրեց մի հանգամանալից զեկույց հայերի՝ արդեն երեք տարի ի վեր շարունակվող հետապնդման վերաբերյալ: Այն *կրոնական բնույթի* է՝ *ծայրահեղ դաժան* և մասամբ *Բարձր դռան կողմից* անուղղակիորեն *պահանջված*, մասամբ ուղղակիորեն վերջինիս կողմից հրահրված կամ պարզապես հրամայված: (Լսե՛ք, լսե՛ք): 2,5 մլն հերձվածող և 100 000 կաթոլիկ հայերի կողքին կան ևս 60 000-ը, որոնք, հերձվածից անջատվելով, միացել են տարբեր բողոքական աղանդների: Փաստացի իրադրության վերաբերյալ որպիսի՞ անհիմն անտեղյակության մասին է մատնում այն, որ Փոզենից եկեղեցական կառավարչության մի ավագ անդամ համարձակվում է պնդել, թե բողոքականները «բարելավում են առաջ բերել Հայաստանում կաթոլիկական փտած պայմանների մեջ» (Շատ լա՛վ է ասված): Մեր ցավակցությունը վերաբերում է այդ բոլոր ճնշված հայ քրիստոնյաներին՝ առանց դավանանքի տարբերության: Եվ դա, անշուշտ, չի մերժվում նաև այն քչերին, որոնք, իրադրության ճնշման ներքո խռովարարական շարժմանը մասնակցելով, որոշակի մեղք են վերցրել իրենց ուսերին: Իսկ դա հայ ժողովրդի միայն մի շատ անչնչան մասնիկն է: Այդ շարժումը, սակայն, ցանկալի առիթ է ընձեռել Բարձր դռանը քրիստոնյաների արյունալի հետապնդման համար: Կա՛մ *հավատն ուրանալ*, կա՛մ *անխուսափելի մահն* ընդունել. սա է հայերի ճակատագիրը, որոնց վրա հասավ հետապնդու-

մը, և թուրք հորդաներն ամենաարյունալի կերպով իրականացրել են այդ նշանաբանը: Առանձին օրինակներով բանախոսը ներկայացրեց ամենափքրիկ ոտնձգությունները, որոնց նույնիսկ քրիստոնյա միսիոներներն են թուրքական իշխանությունների կողմից ենթարկվել: Շատ ավելի վատթար և համակարգված է թուրք պաշտոնյաների միջոցով հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ճնշումը, որոնք ձգտում են նրան լիովին բնաջնջել և հարկային ոլորտում ամենաանհավատալի ճնշումներն են գործադրում. տասանորդի փոխարեն գանձվում է բերքի կեսից ավելին, իսկ մյուս մասը մեծ մասամբ ոչնչացվում է: (Լսե՛ք, լսե՛ք): Այժմ այդ սոսկալի ճնշումներին գումարվել է նաև քրիստոնյաների բիրտ հետապնդումը, որին, ըստ վստահելի աղբյուրների, արդեն զոհ են դարձել ավելի քան 200 000 մարդիկ: (Մեծ հուզում): Այնուհետև բանախոսը հավաքույթի մեծացող վրդովմունքի ներքո ուղղակիորեն ներկայացրեց թուրք դահիճների դիվային վայրագությունների առանձին դեպքեր: Դրանց հետ մեկտեղ այն ամենը, ինչ քրիստոնյաների համար սուրբ և նվիրական է, աննկարագրելի քամահրանքի ու ծաղրի է ենթարկվում: Ամենավատթարը, սակայն, այն է, որ չեն ամաչել նույնիսկ քրիստոնյաներին ստիպել իսլամ ընդունել: (Թո՛ւ): Ցավոք, ոչ բոլոր քրիստոնյաներն են անհողդողդ մնացել այդ փորձության հանդեպ, հարյուրավոր գյուղեր այդ կերպ հարկադրվել են իսլամն ընդունել: Դա, սակայն, դեռ ամենը չէ. առանձին դեպքերում այդ խեղճերին բռնի «կրոնափոխությունից» անմիջապես հետո սպանդի են ենթարկել, որպեսզի այլևս չկարողանան իսլամին դավաճանել: (Լսե՛ք, լսե՛ք): Սարսափներն էլ ավելի սաստկացնելու համար թուրքերի կողմից երկիրն ավերելու և սննդամթերքը ոչնչացնելու հետևանքով Հայաստանում այժմ նաև *սարսափելի սով* է սկսվել՝ խլելով անհամար նոր զոհեր: Եվ այս ամենը՝ թուրքական իշխանությունների լռելյայն համաձայնության պայմաններում: (Լսե՛ք, լսե՛ք): Համընդհանուր է այն մեղադրանքը, որ հենց թուրք սպաներն ու զինվորներն են ամենից շատ

աչքի ընկել ոճրագործությունների ժամանակ, և միայն փոքրաթիվ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ են այդ կանոնից բացառություն կազմել: Իսկ այն, որ ոճրագործությունները մինչ օրս շարունակվում են, ցույց է տալիս Տրապիզոնից այսօր ստացված մի տեղեկություն: (Լսե՛ք, լսե՛ք) Նման իրավիճակում թուրք պաշտոնյաները համարձակվեցին հայ բնակչությանը ստիպել տրամադրված «պաշտպանության» համար սուլթանին ուղղված «շնորհակալական» հեռագրեր ստորագրել: (Լսե՛ք, լսե՛ք): Նման չհերքված տեղեկությունների պարագայում մի ոմն պարբերական (ներկաների միջից բազմիցս բացականչում են «Kölnische Zeitung»-ը)՝ համարձակվում է ոճրագործությունների ամբողջ մեղքը վերագրել հայերին և հավանություն տալ թուրքական վայրագություններին: (Զայրույթի բարձրաձայն բացականչություններ) Երևում է՝ մամուլի այդ տեսակը հավատ է ընծայում Բարձր դռան այն ծաղրական հավաստիացումներին, թե ամեն ինչ արվել է հայերի «պաշտպանության» համար: *Բավակա՛ն է.* այլև չի կարելի լռության մատնել Եվրոպայի այս խայտառակությունը: (Ցուցադրական ծափահարություններ): Այլևս չի կարելի լռելյայն դիտել Հայաստանում տեղի ունեցող ոճրագործությունները: Անհրաժեշտ է ձայն բարձրացնել և նաև բարեկամական ձեռք պարզել զրկանքների մեղմացման համար: Հռոմի պապ Լևոն XIII-ը այս առումով նույնպես մեզ մի լուսավոր օրինակ է տվել, մենք ցանկանում ենք հետևել դրան և աղոթքի ու նվիրատվության զենքով փորձել հակազդել զրկանքներին (Աղմկալի, տնական ծափահարություններ):

Պատգամավոր, փաստաբան *Կարլ Թրիմբորնը* մոտավորապես հետևյալը ասաց՝ այն, թե Թուրքիային ենթակա քրիստոնեական նահանգներում ինչ չափի ճնշում է գործադրվում, բավականաչափ հայտնի է: Մենք պաշտպանում ենք ոչ թե Հայաստանի հեղափոխական տարրերին, որոնք խախտել են հպատակների՝ իրենց պարտականությունը, այլ *անմեղների* այն հոծ զանգվա-

ծին, որոնք ենթարկվում են վայրագությունների: Ծայրահեղ ակնառու է, որ պաշտոնական հեռագրերը փորձում են ոճրագործությունները ներկայացնել որպես բացառապես Բարձր դռան դեմ կազմակերպված դավադրությունների և ահաբեկչությունների պատժման գործողություններ: Դա, սակայն, չի համապատասխանում իրականությանը, ինչպես այդ անառարկելիորեն պարզ է դառնում հյուպատոսական զեկուցագրերից, որոնք միանշանակորեն հաստատում են, որ խոսքը վերաբերում է քրիստոնյա բնակչության արյունալի սպանդին: Հայերի հետապնդման դրդապատճառը ոչ թե գաղտնի խարդավանքների պատժումն է, այլ *քրիստոնյաների հանդեպ դիվային ատելությունը*: Սա մեր համոզմունքն է, որը հիմնված է արժանահավատ զեկույցների վրա, և մենք ցանկանում ենք բարձրաձայնել մեր այդ համոզումը: (Ճռնդալից ծափահարություններ): Չէ՞ որ վայրագություններն ու անմարդկային գործողություններն ուղղված էին ոչ թե պաշտպանվող և զինված տղամարդկանց, այլ նույնքան ևս՝ անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի դեմ: Դա չէ՞ որ քաղաքական օրինազանցությունների պատժման հետ ոչ մի կապ չունի: (Շատ ճի՛շտ է): Այդ ոճրագործությունների պարագայում մենք իրավունք չունենք ձեռքներս ծալած մնալու, այլ պարտավոր ենք *գործել*: Առաջին հերթին պետք է բարձրաձայնենք մեր խորագույն ցավակցությունը. մենք թույլ չենք տա այդ իրավունքը մեզանից խլել, չէ՞ որ դա մեր հասարակ քրիստոնեական պարտքն է: Այնուհետև պետք է փորձենք նվիրատվություններով մեղմել Հայաստանում ներկայումս տիրող զրկանքները. այդ հարցում քրիստոնյա ժողովուրդն իրավունք չունի ձեռնպահ մնալու, և Քյոլնում այլևս ոչ մի կաթոլիկ սիրտ պարտավոր չի լինի բաբախել, եթե այս հարցում նախաձեռնություն չցուցաբերի: (Աշխույժ ծափահարություններ): Պետք է, սակայն, մտածել նաև Հայաստանում տիրող *տևական* կարիքների մասին և հոգ տանել անհամար *հայ* որբերի համար, որոնք կոտորածների ժամանակ կորցրել են իրենց հայրերին ու

մայրերին: Ինչպես 1860 թ.՝ Սիրիայում տեղի ունեցած կոտորածներից հետո, մի մեծ որբանոց հիմնվեց Լիբանանում, այնպես էլ այժմ պետք է մի ծրագիր կազմել՝ նման մի աջակցության խեղճ հայերին ցուցաբերելու մասին: Այդ դեպքում այսօրը կաթոլիկ Քյոլնի համար կդառնա պատվո օր: Դրա համար կատարվող նվիրատվությունները կընդունի Ավետյաց երկրի միության գլխամասային գրասենյակը (գանձապահ՝ բանկի տնօրեն Էլքան): Հայերի հանդեպ կատարվող ոճրագործությունները, սակայն, ունեն նաև քաղաքական կողմ: Այսօր՝ այս հավաքույթում, Քյոլնի կաթոլիկ բնակչությունը հրապարակավ հայտարարում է, որ պարտավորություն է Հայաստանում քրիստոնյա բնակչության համար գոնե տանելի դրություն ստեղծելը: Եթե մենք այդ ուղղությամբ շարժվենք, յուրաքանչյուր գերմանացի կաջակցի մեր ջանքերին, քանի որ մենք դրանով չենք խախտի մեծ քաղաքականության շրջագծերը և, ինչպես առաջ, կշարունակենք վստահություն ցուցաբերել կայսերական կառավարության քաղաքականության նկատմամբ: Հայերին պաշտպանելով՝ մենք ցանկանում ենք միայն *աջակցություն* և *հենարան* տրամադրել կառավարության քաղաքականությանը: Մենք ոչ ոքի թույլ չենք տա սահմանափակել մեր ազատ կարծիքն արտահայտելու իրավունքը (բարձրաձայն հավանություն): Ուստի և մենք հայտարարում ենք ի լուր երկրի. «Մենք *չենք կարող* լռել, մենք *իրավունք չունենք* լռելու, մենք *չենք ուզում* լռել: (Շոնդալից ծափահարություններ): Այս կերպ արտահայտելով մեր համոզմունքը՝ մենք պահպանում ենք նաև պատիվը մեր հայրենի քաղաքի, որը մշտապես աչքի է ընկել իր քրիստոնեականությամբ: Այնուհետև խոսք վերցրեց մեծապատիվ փոխեպիսկոպոս պրն դր. *Շմիթցը*, որին ներկաները դիմավորեցին աշխույժ ծափահարություններով, և հաղորդեց մոտավորապես հետևյալը. հայերի տառապանքները դեռ ավելի վաղ են զբաղեցրել մեր քաղաքի բնակչության առանձին շրջանների: Այս տարվա մարտի 8-ին հենց այստեղ նիստ գումարեց

Ավետյաց երկրի գերմանական միությունը: Ինչպես 60-ական թվականների սկզբին միությունը սրբազան շիրիմի մոտից օգնության է հասել քրիստոնյաներին, որոնցից շատերն այն ժամանակ սպանվեցին դրուզների ապստամբության ընթացքում, նույնպես և այժմ Ավետյաց երկրի գերմանական միության ընդհանուր ժողովն իր կոչն է ուղղում միության բազմաթիվ ընկերներին՝ նրանց քաջալերելու, որ քրիստոնյա հայերին նվիրաբերեն սիրո՝ իրենց ընծաները: Ընդհանուր ժողովը կարող է տեղեկացնել, որ նորին սրբազնություն մեծապատիվ պարոն կարդինալ-արքեպիսկոպոսի օգնությամբ արդեն 2000 մարկ ուղարկվել է այնտեղ: Դրանից կարճ ժամանակ անց մեր քաղաքի մի տիկին, Փոքր Ասիայից ուղարկված մի հյուպատոսական զեկուցագրի միջոցով տեղեկանալով զարհուրելի ոճրագործ տեսարանների մասին, հանրային լրագիրներին դրդել է Հայաստանի համար հանգանակություն կատարել: Ավետյաց երկրի միության կողմից ձեռնարկված համաժամանակյա հանգանակություններն ունեցան այն արդյունքը, որ 6006 մարկ ուղարկվեց Կոստանդնուպոլսում հայ-կաթոլիկ պատրիարք Ազարյանին: Դեռ անցյալ շաբաթ պատրիարքից ստացվեց մի նամակ, որում նա ներկայացնում է իր և իր հավատակիցների *սարսափելի զրկալից դրությունը*: Հայ քրիստոնյաները զանգվածաբար սովամահ են լինում ամայացված գավառներում: Դրությունը սոսկալի է: Ավետյաց երկրի միության վարչությունը մեծապատիվ կարդինալ-արքեպիսկոպոսի նախագահությամբ վճռեց պատրիարքին անհապաղ տալ 2000 մարկ դեռևս սպասվող նվիրաբերությունների հաշվին: (Բրավո՛): *Ֆուլդայում տեղի ունեցած խորհրդաժողովում* Գերմանիայի եպիսկոպոսաց ժողովը հանգամանորեն զբաղվեց հայերի զրկալից վիճակով: Նույն համոզումով, որով սկզբնական ժամանակների քրիստոնյաներն էին նվիրատվություններ ուղարկում Երուսաղեմի իրենց կարիքավոր եղբայրներին, Գերմանիայի եպիսկոպոսները հոգ տարան Հայաստանի հալածյալ եղբայրների համար: Նորին սրբազնություն-

ները հանձնարարել են ինձ տեղեկացնել, որ Ֆուլդայի եպիսկոպոսաց ժողովի որոշման համաձայն՝ մեր՝ առավել սեղմ հայրենիքի *բոլոր թեմերի բոլոր եկեղեցիներում* շուտով պետք է հանգանակություն կազմակերպվի հայ քրիստոնյաների համար (բրավո՛): Ես համոզված եմ, որ արքեպիսկոպոսության կաթոլիկներն իրենց առատ նվիրատվություններով կապացուցեն՝ որքան շատ է այդ հանգանակության կազմակերպումը համապատասխանում իրենց ցանկություններին: (Բրավո՛): Մասնակցության բոլոր այդ դրսևորումներն այս տպավորիչ հավաքույթով հասնում են իրենց գագաթնակետին: Այստեղ՝ Հռենոսյան երկրամասի մայրաքաղաքում, իր ողջ ուժով, ուժգին դրսևորվեց ժողովրդի քրիստոնեական գիտակցությունը թուրքական պետության մեջ կատարված ոճիրների հանդեպ, որոնք ընկալվում են որպես խայտառակություն քաղաքակիրթ աշխարհի համար: Համաշխարհային պատմությունը բոլոր ժամանակներում ազդվել է ոչ միայն դիվանագիտության, այլև *ժողովրդական գիտակցության* կողմից: (Շա՛տ ճիշտ է): Դա առավել մեծ նշանակություն է ստանում այս պահին, երբ բոլոր կողմերից դժգոհություն է ի հայտ գալիս, որ առաջին հերթին խնդրո առարկա դարձող քրիստոնյա տերությունները փոխադարձ կասկածի և անվստահության պայմաններում ցանկալի հաջողությամբ չեն ներկայացնում քրիստոնեական շահերը: Գերմանական պետությունը, որը Բոսֆորի մոտ անմիջական շահեր չի հետապնդում, ընդսմին առաջին հերթին խնդրո առարկա չի դառնում: Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի պարագայում, սակայն, ընդհանուր կարծիքի մեջ ամրակայվել է այն մեղադրանքը, որ այս տերությունների համար մինչ այժմ իրենց շահերի ռեալիզմը ավելի ուժեղ է եղել, քան քրիստոնեական մտածելակերպի իդեալիզմը, որ նրանց եսամոլությունն ավելի զորեղ է եղել, քան մարդասիրությունը: Խոսքը մարդու իրավունքների պաշտպանության մասին է: Խոսքը հասարակության միասնականության մասին է: Խոսքը քրիստոնեական աշխարհակարգի գոյության, նշա-

նակության և ազդեցության մասին է: Խոսքը մարդկության կարևորագույն արժեքներով ոգեշնչման մասին է (շատ ճիշտ է): Մահմեդի ուսմունքի համաձայն՝ միայն նրա հետևորդներն ունեն գոյության իրավունք. ով չի մեծարում մարգարեին, նա պետք է ջնջվի երկրի երեսից: Նրա համար, սակայն, ով, հրով ու սրով զրահով զինված, ընկնում է քրիստոնյաների դեմ մարտում, դրախտն ապահովված է: Սուրը, որն ուղված է քրիստոնյայի դեմ, երկնքի բանալին է: Իսլամի այդ հոգևոր ժառանգությունն այժմ թուրքերի ձեռքում է, և ոչ մի դիվանագիտություն չի կարող հերքել, որ իսլամի այդ հոգևոր ժառանգությունը նպաստել է Կոստանդնուպոլսում ոճրագործությունների կատարմանը և ոգևորել է մահակներով զինված մարդկանց՝ մոլեգնորեն ու գազանաբար սպանելու քրիստոնյաներին: Իսլամը չի ցանկանում, որ քրիստոնյաները մարդու իրավունքներ ունենան, սակայն մենք ցանկանում ենք: (Շա՛տ ճիշտ է): Իսլամը չի ցանկանում, որ լինի քրիստոնեական հասարակական կարգ, սակայն մենք ցանկանում ենք: Բարոյականության և բարօրության հիմքը եղբայրների, հարևանների, համայնքների և ժողովուրդների միասնականության գիտակցությունն է: Եսասիրությունը, որը միայն իր մասին է մտածում (իրավացիորեն այդպես է ասում մի փիլիսոփա հեթանոսության փլուզման ժամանակ) անասնական է և դիվային, դիվային՝ իր հպարտությամբ, հրեշավոր՝ իր հետևանքներով: Եթե հասարակական միասնականության և փոխադարձ պարտավորվածության գիտակցությունը մեր միջից վերանա, ապա եսամոլության հետևողական կերպարանագործմամբ նաև մեր մեջ կհառնի մի ժամանակակից իսլամ, որը հասարակության քայքայմամբ մեր բոլոր մշակութային ձեռքբերումները փոշի կդարձնի: Եթե եսամոլությունը մեզ այսօր օտարացնի հայերից, վաղը մեր մեջ է երկպառակություն առաջացնելու: Մարդու իրավունքների պաշտպանության, հասարակական կարգի պահպանման, փոխադարձ պարտավորվածության գիտակցությունը խնամելու համար հոգ տանելը տղա-

մարդու պարտքը և հպարտությունն է: Եթե մենք տոգորված ենք այդ հասարակական միասնականությամբ և մեր փոխադարձ պարտավորվածությամբ, որը մեզ բոլորիս կապում է միմյանց հետ, ապա մենք մեր ականջը չենք փակի այն աղաղակի հանդեպ, որը Հայաստանի արյունով ծծված դաշտերից հանրության միջով հասնում է երկինք՝ Գառան գահին. «Վրե՛ժ լուծեք մեր արյան համար, որը թափվել է հեղեղի նման»: (Բրավո՛): Մենք ուզում ենք մեր ձայնը բարձրացնել մարդու իրավունքների համար՝ հնչեղ և շարունակ ավելի հնչեղ: Ոտնահարված և լլկված իրավունքի սրբության մեջ կա անդիմակայելի ուժ: Մենք ուզում ենք գթասրտության մի հոգևոր, քրիստոնեական արշավանք ձեռնարկել դեպի Հայաստան: Մարդկային հասարակության համախմբման, ժողովուրդների՝ միմյանց հետ կապվածության միջոցով է քրիստոնեությունը պահպանել իր մեծ, աշխարհակալ ուժը և տոնել իր ամենափառահեղ հաղթանակները: Հեռավոր Հայաստանում ապրող մեր քրիստոնյա եղբայրների դժբախտությունը պետք է դառնա մեր ցավը և մեր արդյունաշատ ձեռքմեկնումը: Միասնականության քրիստոնեական մեծ գաղափարն է, որով համակված էին առաջին քրիստոնյաները, երբ քրիստոնյա դարձած սենատորն ագապեի ժամանակ ստրուկի հետ, ինչպես հավասարը հավասարի, ուտում էր նույն պնակից և նրան հաշտության համբույր էր տալիս: Մենք իրավունք ունենք լինելու այնպիսին, ինչպիսին առաքյալն է՝ հույն թե հռոմեացի, սկյութ թե բարբարոս, մենք ուզում ենք մեկ լինել Քրիստոսի հետ: Ուստի հայերի զրկանքը դառնում է մեր զրկանքը: Ուստի մենք մեր ձայնը բարձրացնում ենք: Ուստի մենք կատարում ենք մեր նվիրատվությունները: Ուստի մենք միմյանց մեկնում ենք մեր ձեռքերը քրիստոնեական գթասրտության հրաշալի գործի համար: Ինչպե՞ս էր անցյալում, երբ քրիստոնյա աշխարհը դեռ միասնական էր, քրիստոնյա անվան զորությունը՝ մեծ: Որքա՜ն աշխարհացունց էր քրիստոնյա հանրությունը, երբ դեռ առաքյալների Իշխանն էր

նրա առաջնորդը և պորտաբարը, երբ Պապը՝ մարդկության խղճի հովանավորը, աշխարհում բարոյական կարգի հսկիչն ու պահապան ոգին, ժողովուրդների միջև խաղաղության իշխանն ու խաղաղություն հաստատողն էր: Որքա՜ն հաճախ է համաշխարհային պատմության մեջ Պապը, ծնկաչոք խնդրելով, քրիստոնյա միավորված իշխանների հետ համատեղ Աստծո հրաշափառ զորությամբ հաղթահարել թուրքերի նկատմամբ ատելությունը, քրիստոնյա Եվրոպայից մեղմել թուրքերի կարիքները: Դա, ավելի քան որևէ մեկը, ընկալել է անմահ կայսր Վիլհելմ I-ը՝ ճակատամարտերում հաղթողը, երբ նա մեր Պապ Լևոն XIII-ին ընտրեց որպես խաղաղության միջնորդ ժողովուրդներին վերաբերող մի խիստ նշանակալից հարցում: Նրա ոտնահետքերով է քայլում իր կայսր թոռը՝ Վիլհելմ II-ը՝ արժանի իր մեծ նախնուն: Թո՛ղ նրա իմաստությանը հաջողվի նույն ճանապարհով Արևելքի քրիստոնյաներին խաղաղություն բերել: (Տևական ծափահարություններ):

Ապա ընթերցվեց և հավաքույթի մասնակիցների լիաբուռն հավանության ներքո ընդունվեց հետևյալ բանաձևը. *«Հավաքույթը խոր նողկանքով է լցված թուրքական պետությունում տեղի ունեցած ոճրագործությունների հանդեպ, որոնց ժամանակ անհամար քրիստոնյաներ անմեղ զոհ են դարձել մահմեդական մոլեռանդությանը: Նա համերաշխության մեջ է ողջ քաղաքակիրթ աշխարհի հետ՝ բարձրաձայն բողոք հնչեցնելով միջազգային և մարդու իրավունքների այդ վայրագ բռնաբարման դեմ: Հավաքույթը համարում է պարտիրան՝ առաջին հերթին մերձավորի հանդեպ քրիստոնեական սիրո, բոլոր այդ դժբախտներին, որոնք անօգնական մատնված են ճնշող զրկանքների և մեծագույն վտանգների, ուժերի ներածին չափով աջակցել ու նրանց զրկանքները մեղմել: Հավաքույթը խոր ցավով իր բողոքն է հայտնում, որ առաջին հերթին խնդրո առարկա դարձող քրիստոնյա տերություններին չի հաջողվել Արևելքում քրիստոնյա ժողովուրդներին և քրիստոնեական շահերն արդյունավետորեն*

պաշտպանել: Մենք լիովին այնպիսի քաղաքականության թիկունքին ենք, որը շարունակաբար կչգտի Արևելքում քրիստոնյաների համար տանելի պայմաններ ստեղծել, կանխել զայրացուցիչ վայրագությունների վերադարձը և երաշխավորել քրիստոնյայի անվան պատիվը»:

Վեհաշուք ընթացք ունեցող հավաքույթի վերջում Բոմբեյի մեծապատիվ պրն *արքեպիսկոպոս Դալհոֆը* հավաքույթին ընծայեց իր եպիսկոպոսական օրհնությունը:

Բովանդակություն

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....3
ԱՌԱՋԱԲԱՆ 12
I
Ճշմարտությունը՝ Հայաստանի մասին 15
1. Չոր թվեր.....15
2. Ուժեղ նյարդերի համար 30
3. Կրոնական ազատությունը թուրքական պետությունում 43
4. Կոտորածների կազմակերպումը քաղաքացիական և
զինվորական իշխանությունների կողմից 57
5. Թուրքական կեղծիքների ֆաբրիկան 72
6. Ո՞վ է մեղավորը.....83
7. Տերությունների պատասխանատվությունը.....96
8. Սատիրախաղ 115
9. Սով 128
10. Ի՞նչ է հետևելու 149
II
Կոտորածներ 163
Առանձին զեկուցագրեր.....163
1. Ուրֆայի կոտորածները 163
2. Զելայի կոտորածը.....186
3. Շեփիկի կոտորածը 189
4. Վանի կոտորածը.....191
5. Ակնի կոտորածը 203
III
Հայաստանը կոտորածներից առաջ
Է. Յ. Դիլոն 207
IV
Ոճիրների ցուցակ 256
I. Տրապիզոնի վիլայեթ.....256

II. Էրզրումի վիլայեթ 256
III. Վանի վիլայեթ 260
IV. Բիթլիսի վիլայեթ 263
V. Սվազի վիլայեթ 267
VI. Մամուրեթ-ուլ-Ազիզի վիլայեթ 270
VII. Դիարբեքիրի վիլայեթ 276
VIII. Հալեպի վիլայեթ 277
IX. Ադանայի վիլայեթ 278
V
Դեսպանների զեկույցը 280
VI
Վիճակագրություն 335
ՎԵՐՋԱԲԱՆ 345
Հավելված 350

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐՈՊԱՆ

Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային

Դր. Յոհաննես Լեփսիուս

3-րդ ընդլայնված հրատարակություն. 6 և 7 հազար
Բեռլին-Վեսթենդ

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 05.05.2022:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 23.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2022
publishing.ysu.am